4 Սահակ Արծրունեաց իշխանի թուղթը երանելի վարդապետ Մովսէս Խորենացուն
6 Ս. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ Սահակի թղթի պատասխանը, որի մէջ [գրուած] են մարգարէական խօսքեր, նաեւ՝ Աստուածածնի վերափոխման մասին, թէ ինչպէս եղաւ, կամ պատկերի անարատ կերպարանքն ինչպէս շնորհուեց փայտի վրայ եւ թէ՝ ում ձեռքով, եւ ինչը եղաւ խնդրի պատճառը, կամ էլ ում կողմից բերուեց Հայք
18 Ս. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ Վարդավառի խորհրդի մասին
28 ՅԱԿՈԲ ՔԵՌՍԷԵԱՆ Ս. Բարսեղ Կեսարացու՝ յունարէն բնագրով անյայտ «Մեծի աւուրն Տեառնընդառաջին» ճառի հայերէն թարգմանութիւնը
30 Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ Մեծի աւուրն Տեառնընդառաջին սրբոյն Բարսեղի եպիսկոպոսի Կեսարու Կապպադովկացւոց ի գալուստն Տեառն ի տաճար

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

48 ՍԵՊՈՒՀ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍԵԱՆ Հայոց Եկեղեցւոյ խորհուրդներն ու ծէսերը (շարունակութիւն)
68 ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՋԱՊԱՀԵԱՆ Աստուծոյ պատկերը Հին Կտակարանում
86 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ Հայ Եկեղեցու քրիստոնեական մտքի ուրուագծեր (Դ—Ը դդ.)
123 ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ Մեղքի գիտակցութեան եւ զղջման նշանակութիւնը քրիստոնեայի կյանքում

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

138 ՎԻԳԷՆ ՂԱՋԱՐԵԱՆ Արեոպագիտիկաները եւ նրանց նշանակութիւնը եկեղեցական վարդապետութեան մէջ
ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՑԻ
144 Աթենացիների Դիոնեսիոս Արիսպագացի եպիսկոպոսի [թուղթը] եփեսացիների Տիմոթէոս եպիսկոպոսին խորհրդական աստուածաբանութեան մասին
109 Գայիոս սպասաւորին
109 Դորոթէոս պաշտօնեայ սարկաւագին
151 ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ Խոսրով Անձեւացի
154 ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ Աստուծոյ կամքն ու երկիւղը

Գլխ. խմբագիր՝
Մեսրոպ քահանայ Արամեան

Պատ. քարտուղար՝
Տիգրան Խաչատրեան

Տեխ. խմբագիր՝
Յովհաննէս Կիզողեան

Նկարիչ՝
Արմէն Քիւրքչեան

Վերստուգող սրբագրիչ՝
Սեդա Ստամբոլցեան

ճշմարտութեամբ ծանուցող սուրբ հոգեկիր վարդապետ Խոսրովի յոյժ օգտակար եւ հոգեշահ խրատական պատգամները
168 ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ Անանիայի վարդապետի հայոց բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի հայոց վերադիտողի (շարունակութիւն)

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

220 ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՋԱՊԱՀԵԱՆ Պետրոս Բերդումեանի նորայայտ «Երգ երգոցի» մեկնութիւնը
222 ՊԵՏՐՈՍ ԲԵՐԴՈՒՄԵԱՆ Մեկնութիւն Երգ երգոցի

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

254 Սուրբ Յովհաննէս առաքելի եւ աստուածաբան աւետարանչի վարքը
260 Սուրբ Պօղոս անապատականի վարքը
266 Սուրբ Պօղոս Պարզամիտի վարքը
269 Մեր սուրբ հայր Ոնոփրիոս անապատականի վարքը, որ պատմեց հայր Պափնոտիոսը
281 Աստուծոյ աղախին Թէոդորայի վարքը
287 Պոռնիկ Թայիսի զղջումն ու ապաշխարութիւնը
289 Բարձրամիտ անապատականի մասին
291 Սուրբ Եպիփան Կիպրացի հայրապետի վարքը
302 Մեր երանելի հայր Ներսէս Լամբրոնացու վարքը

ՀՈԳԵՒՈՐ ՄՇԱԿՈՅԹ

ԽՈՐԷՆ ՊԱԼԵԱՆ Հայ հոգեւոր երգը Է—Ը դարերում
308 Կոմիտաս կաթողիկոս
319 Սահակ Զորափորեցի
328 ՎԻԳԷՆ ՂԱՋԱՐԵԱՆ Գոյնի ուսմունքը խորանների մեկնութիւններում
341 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ Խորհրդանշանը Յովհան Օձնեցու մատենագրութեան մէջ

ԳԱՆՁԱՍԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ,
375001 ԵՐԵՒԱՆ, ՍՈՍԿՈՎԵԱՆ 1՝
հեռ. 56-13-44

ԵՐԵՒԱՆ-1992

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՎԱՉԳԵՆԻ Ա.
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

ՍՈՅՆ ՀԱՏՈՐԸ ՏՊԱԳՐՈՒՈՒՄ Է
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԿԱՆԱԴԱՅԻ ԹԵՄԻ
ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ

Վերջերս մենք մէկ անգամ եւս առիթն ունեցանք առնչուելու ս. Մովսէս Խորենացու սրբազան աւանդի եւ ժառանգութեան հետ, երբ հայրենիքում պատշաճ մեծարանքով ու շուքով նշուեց «Հայոց Պատմութեան» 1500–ամեակը: Մէկ անգամ եւս շեշտուեց Խորենացու մշտական եւ անբեկանելի արժէքը որպէս հայ պատմագրութեան հայր, սակայն դարձեալ ստուերի մէջ մնաց նրա աստուածաբանական ժառանգութեան[1] դերն ու նշանակութիւնը հայ սերունդների ոգու կերտման գործում:

Խորենացին ոչ միայն մի մեծութիւն է, որը մեր ծագումնաբանական ակունքները հասցրեց մինչեւ աստուածային յաւիտենականութիւն, այլեւ աստուածաբանական անուրանալի հեղինակութիւն է հայ հոգեւոր ժառանգութեան մէջ:

«Գանձասար» հանդէսը գալիս է ամբողջացնելու մեծանուն վաստակաւորի լուսապսակի բոլորակը՝ ընթերցողին յանձնելով «Պատասխանի թղթոյն Սահակայ, յորում եւ բանք մարգարէականք եւ վասն փոխման Աստուածածնին, թէ որպէս եղեւ, կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի փայտն եւ թէ յոյր ձեռն, եւ զինչ եղեւ պատճառք խնդրոյն, կամ թէ յումմէ բերաւ ի Հայս» եւ «Յաղագս Վարդավառին խորհրդոյ»[2-3] երկերի արեւելահայերէն թարգմանութիւնը (միւս համարում լոյս կտեսնեն նրա «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» եւ «Ի յիշատակի սրբոյն Հռիփսիմեայ եւ նորուն վկայակցացն ներբողեան ի հանդէս նոցա հրաշազարդ յօրինուածովք»[2-3] երկերի արեւելահայերէն թարգմանութիւնը) եւ հայցելով սուրբի օրհնութիւնն ու հոգեւոր օժանդակութիւնը:

---

1 Տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք», Վենետիկ 1865:

2-3 Սոյն երկերը Մովսէս Խորենացու անուամբ ներկայացնելիս հանդէսը յենւում է եկեղեցական աւանդութեան վրայ եւ ձեռնպահ մնում բանասիրական քննութեան հարցերից:

ՍԱՀԱԿ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ ԻՇԽԱՆԻ ԹՈՒՂԹԸ ԵՐԱՆԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒՆ

Քրիստոսի մեծութիւնների հրեշտակ եւ սպասաւոր, երկրի վրայ երկնայինը ցուցադրող երկրակենցաղ այր եւ խաւարեալներիս լուսաւորիչ, մեր վերջին ժամանակներում եղած անհնուազ լոյս, ինչպէս որ Տէրն ասաց աշակերտներին. «Դուք էք աշխարհի լոյսը» [Մատթ. Ե 14]: Եւ միաժամակ կամենում ենք ցնծալ քո լոյսի մէջ, որ եղար մեզ համար երկրորդ Սահակ եւ Մեսրոպ՝ նրանց առ Աստուած գնալուց յետոյ:

Որի համար թող երկրպագութիւն հասնի սուրբիդ. Բազրատունեաց իշխանի համար քո կողմից գրուած գիրքը կարդացինք եւ ուսանեցինք Հայոց հայկական տոհմերի ուսմունքը եւ մեր նախնեաց գալն այս երկիր: Եւ յոյժ ուրախացանք շնորհակալութեամբ, որի համար երկնային երախտիքների հատուցողը թող հատուցի մաքրափայլ անձիդ, եւ մենք՝ քո երկրաւոր որդիները, տալիս ենք քեզ այն, ինչ հաճոյ է քո սրբութեանը: Միայն փութա՛ տեսնել մեզ. աշխատի՛ր եւ հանգստացի՛ր քո որդեակների մօտ, որ օրհնուենք քո կողմից:

Կամենում ենք նաեւ ուսանել քեզանից Տիրամօր անունով պատկերի սքանչելագործութիւնը, որ գտնւում է Հոգեաց վանքում, թէ որտեղից կամ ում կողմից բերուեց այնտեղ. որովհետեւ շատ բաներ ուրիշներ այլ կերպ են պատմում՝ իրար ոչ նման, եւ չհաւատացինք որեւէ մէկին, թէ ոնոյգ գիտի:

Իսկ թէ ունենամ ձեռքիդ սուրբ մատների գիրը, առաւել յուսով կընդունեմ, քան Բազրատունեաց գիրքը, որ ձեռքիս է: Ո՛ղջ եղիր ի Տէր, աղօթի՛ր մեզ համար եւ շտապի՛ր գալ, աղաչում եմ:

ՍԱՀԱԿԻ ԹՂԹԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ, ՈՐԻ ՄԷՋ [ԳՐՈՒԱԾ] ԵՆ ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ, ՆԱԵՒ՝ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ, ԹԷ ԻՆՉՊԷՍ ԵՂԱՒ, ԿԱՄ ՊԱՏԿԵՐԻ ԱՆԱՐԱՏ ԿԵՐՊԱՐԱՆՔՆ ԻՆՉՊԷՍ ՇՆՈՐՀՈՒԵՑ. ՓԱՅՏԻ ՎՐԱՅ ԵՒ ԹԷ՝ ՈՒՄ ՁԵՌՔՈՎ, ԵՒ ԻՆՉԸ ԵՂԱՒ ԽՆԴՐԻ ՊԱՏՃԱՌԸ, ԿԱՄ ԷԼ ՈՒՄ ԿՈՂՄԻՑ ԲԵՐՈՒԵՑ ՀԱՅՔ

Աստուածայինն Հոգու շնորհների առատ յորդութիւնը, որ քո անդուլ մտքի վրայ է՝ շնորհիւ Սուրբ Գրքի ծանօթութեան եւ առ Աստուած սիրոյ, մինչեւ տեսնելը, համբաւի միջոցով լսելով հզօր մեծիդ խոհականութեան մասին, ճանաչեցի. իսկ այժմ, այս արժանափայլ խնդրի միջոցով, նախքան պատկերիդ նկարագիրը եւ մարմնիդ տեսքը տեսնելը, հոգուդ վրէժխնդրութեան միջոցով իմացայ, որ դա վերին շնորհներից է: Որի համար էլ եւ Ինքը՝ Բանն Աստուած, մարդուն ստեղծելիս խօսքով զարդարեց՝ օրհնելու եւ ճանաչելու Երախտագործին, ինչի մասին [Աղմոսերգուն] ասում է. «Օրհնի՛ր, ա՛նձ իմ, Տիրոջը, եւ մի՛ մոռանա Նրա գործերը» [Սաղմ. ՃԲ 2]: Սրանով Տէրն ուրախանում է եւ երանի տալիս նրան, ով Տիրոջ օրէնքի մէջ կխորհի օր ու գիշեր. քանզի նա որպէս անթառամ ծառ կլինի ջրերի հոսքում, որն իր պտուղը ժամանակին կտայ [տե՛ս Սաղմ. Ա 3]: Քանի որ թէպէտ եւ հողն իրենը սիրում է, սակայն գովելի չէ, քանզի եղծանելի է. քանի որ Աստուած մարդուն անմահութեան մէջ ստեղծեց, ինչպէս ասաց, բայց [նա], ստեղծականով կերակրուելով, մահացաւ: Ուստի, խօսքի կայծակը վառ եւ բորբոք պահելով, անմահանում եմ: Շատ–շատերից երկու քոյրերի վարքի մասին միայն կասեմ քեզ, որովհետեւ երկուսն էլ ջերմութեամբ ընդունեցին Տիրոջը: Մարթան՝ կերակրելով, բայց Մարիամն է գովելի, որովհետեւ աստուածեղէն բերանով ասուեց. «Այստեղ քիչ բան է պէտք. Մարիամը բարի մասն ընտրեց, որ չի վերցուի նրանից» [Ղուկ. Ժ 42]:

Այս ամենից իմացայ, թէ ով ես, մեծ իշխա՛նդ Վասպուրականի, որ թէպէտ եւ նախարարների թւում ես, սակայն թագաւորական տնից ես եւ ազգով՝ քաջ ու հին, եւ արգասաւոր սերունդ ու զարմ ես. ո՛չ միայն խօսքով ես ճոխացած, այլ նաեւ պատերազմական գործի մէջ ես առաջինների թւում: Քանզի ինչպէս երկու մարդու լինելութեամբ այս

երկիրը հաստատուեց, այնպէս էլ երկու տներիդ՝ Արծրունիների եւ Բագրատունիների միջոցով են մեր այս աշխարհի սերունդները ապրում: Եւ ինչպէս երկու աչքերն են ողջ մարմինը զարդարում, այնպէս էլ երկու կողմերդ՝ արեւելեան եւ հիւսիսային, լուսաւորում էք [մեր երկիրը]. եւ ինչպէս երկու ձեռք միանալով են գործին պիտանի դառնում, այնպէս էլ մեր Հայոց երկիրը ձեզանից է գոյանում: Եւ ինչպէս ողջ մարմինը երկու ոտքի վրայ է հաստատուում, այնպէս էլ երկու տների միջոցով Հայոց բոլոր ազգերը հնազանդուելով լինում են որպէս մի կատարեալ մարդ ի Քրիստոս: Եւ դուք՝ երկու ցեղերդ, միմեանց միացած, անսասան էք:

Քե՛զ եմ դիմում, Արծրունեա՛ց իշխան, Տէրն ինձ ցոյց տուեց, որ քո զաւակներից երեք եղբայրներ Քրիստոսի համար մահուան են մատնուած, երկուսը Քրիստոսի վկաներն են արեամբ, իսկ մէկը վրիպել է նրանցից, եւ այս վայել չէ: Նրանց համար Աստուած Սեմերերիմ թագաւորի թագը, քո որդիներին վերադարձնելով, երկարաձգում է երկրի վրայ: Եւ Բագրատունո՛ւդ եմ դիմում. Տէրն յիշում է իր խօսքը, թէ քեզանից թագաւորներ կծնուեն, եւ թագաւորում էք Դուինում. եւ այլ ոչինչ չունեմ ձեզ ասելու, մինչեւ Տէրը տեսնել կտայ:

Իսկ գովասանական խօսքերիդ համար շնորհակալ եմ. եւ չեմ երկրպագում, քանզի մեղքերով հնացած ձեր մարդուն նմանեցնում էք հրեշտակների. երանի՜ թէ նրանց աշակերտն արժանի լինէի կոչուել, էլ չեմ ասում՝ փոխանորդ: Քանզի, նրանց վարքը հանապազ յիշելով, մաշւում եմ՝ ինձ անարժան համարելով, բայց քանի որ արժանի համարեցիք ինձ յիշել Հատուցողի մօտ, երկրպագեցի, եւ Աստուած ձեզ օրհնութիւն առատապէս թող հատուցի: Այլեւս չեմ ուզում ձեզ վրայ ծանրանալ երկրի վրայ, աստուածասէ՛ր իշխաններ. հոգով եւ մտքով միացէ՛ք ինձ ի Քրիստոս. քանզի ոչ թէ խնդրում եմ ձեզանից որեւէ բան, այլ՝ ձեզ:

Իսկ աստուածասէր իշխանիդ խնդիրը՝ Տիրամօր պատուական պատկերի մասին, քո անմահ ազգին եմ յիշատակ թողնում. քանզի զուարթանում եմ Տիրամօրը յիշելիս, որը ծագեցրեց արդարութեան Արեգակին երկրի վրայ՝ դառնալով արդարութեան Արեգակի ճշմարիտ արեւելքը. քանզի նրանից է փրկութիւնը, նրանից է կենդանութիւնը, նրանից է եւ Քրիստոսն ըստ մարմնի, որ օրհնեալ Աստուած է յաւիտեանս. ամէն:

Իսկ ինչ պատուիրել էիք ինձ՝ ձեր դռան քահանային, Բեթղեհեմի շինութեան մասին, թէ ով կամ ում կողմից [եղաւ], եւ ինչու Ղուկասը՝ Նաթանին, իսկ Մատթէոսը Սաղմոնին են յիշատակում որպէս Կոյսի նախնիներ, եւ ինչու ոմանք ցերեկուան, ոմանք էլ գիշերուան են առաջնութիւն տալիս, գրում եմ ձեզ, բայց այժմ տեսութեան չեմ գալիս հզօր իշխանիդ, մինչեւ որ կատարուի Իսկուհու տօնը. այժմ աստուածասէր անձիդ գրում եմ տեղի պատճառների մասին:

Բեթղեհեմը թարգմանւում է հացատուն, ինչպէս որ ասուեց Տիրոջ կողմից՝ «Ես եմ կեանքի հացը» [Յովհ. Զ 35]. եւ այս տեղը հեթանոսներինն էր եւ նահապետի կողմից գնուեց, որ հեթանոսների համար դէպի կենդանութիւն ճանապարհ լինի, որովհետեւ հեթանոսներինն էր այն երկիրը, ուր ծնուեց Քրիստոս: Բեթղեհեմը նահապետների տունն էր. որովհետեւ Փարէսը ծնուեց Յուդայից եւ Թամարից, Փարէսը ծնեց Եզրոնին, Եզրոնը՝ Արամին, Արամը՝ Ամինադաբին, որը Յուդայի զօրքի սպարապետն էր Մովսէսի՝ Իսրայէլի որդիներին Եգիպտոսից հանելու ժամանակ: Սա ծնում է Նաասոնին, որն անապատում Յուդայի բիւրաւորների իշխանն էր, իսկ Ամինադաբի դուստրը Եղիազարի կինը եղաւ՝ Ահարոն քահանայապետի որդու, որից ծնուեց Փենեհէսը: Ամինադաբից քահանայութեան եւ թագաւորութեան օրհնութիւնը բխեց. թագաւորութիւնը՝ Նաասոնից, եւ քահանայութիւնը՝ Նաասոնի քրոջ ծնունդից, որ ծնեց Փենեհէսին, ով, նախանձախնդիր լինելով, մեղմեց Աստուծոյ բարկութիւնը. եւ Նաասոնը ծնում է Սաղմոնին: Այս Սաղմոնը Յուդայի ցեղի իշխանն էր, երբ Յեսուն Իսրայէլի որդիներին՝ տասներկու ցեղերի բանակներին, անցկացրեց Յորդանանով: Եւ երբ Յեսուն կործանեց Երիքովը, Ռախաբ պոռնիկին փրկելով կնութեան տուեց Սաղմոնին. եւ սա իր համար Բեթղեհեմ քաղաքն էր կառուցում Յուդայի հողում. եւ նրանից, [այսինքն՝ Ռախաբից], ծնեց Բոոսին: Եւ Բոոսը կին առաւ մովաբացի Հռութին եւ նրանից ծնեց Ովբեդին, եւ Ովբեդը ծնում է Յեսսէին, Յեսսէն ծնում է Դաւթին: Սա մարգարէի հոգեխառն խոստովանութիւնն է. «Ընաւ կրտսեր չես Յուդայի իշխանների մէջ» [տե՛ս Միք. Ե 2]: Իսկ Եփրաթան թարգմանւում է բացումն, քանզի այստեղ Սամուէլը իւղով օծեց Դաւթին, որը նախաձառել էր մարգարէն. «Քեզանից իշխան կելնի Ինձ համար, որ կհովուի Իմ Իսրայէլի ժողովրդին» [տե՛ս նոյնը]:

Կատարուեց մեծ նահապետի օրհնութիւնը, [որն] ասաց, թէ իշխանն անպակաս է լինելու Յուդայից, մինչեւ Նրա գալը, Ումն է թագաւորութիւնը, եւ Նա՛ է հեթանոսների ակնկալութիւնը: Ո՛չ թէ Դաւթի՛ մասին ճառելով՝ այս մարգարէացաւ, այլ՝ [Նրա], Ով Դաւթի զաւակից ճշմարտապէս մարմնաւորուեց: Ծնուեց սուրբ Կոյսից Բեթղեհեմում, որ Դաւթի քաղաք կոչուեց: Այստեղ էր բացում տիեզերքի տեսութեան դուռն Արարիչ Բանի ճշմարիտ մարմնաւորման համար, որ Յուդայի զաւազանի առաջին եւ ոչ թէ կրտսեր քաղաքն է: «Քեզանից իշխան կելնի Ինձ համար». [սա] ոչ թէ Դաւթի կամ մաքուր թագաւորների մասին է ասուած, որոնք միայն Իսրայէլի վրայ տիրեցին, այլ՝ Բեթղեհեմում Կոյսից Ծնուելիքի, [Որն] աստուածաբար տիրեց նաեւ տիեզերքին: Եւ՝ որպէսզի հրեաները չպարծենան՝ միայն իրենց մարմնաւորութեանը հաւատալով, քանզի հեթանոս անմաքուր կանայք՝ Թամարը, Ռախաբը, Հռութը, նոյնպէս ժառանգեցին Իսրայէլի դուստրերի մաքրութիւնը. որպէսզի հեթանոսների ժողովարանն էլ պարծենայ՝ սուրբ Կոյսի՝ այսպիսի նախնիներ ունենալով: Որպէսզի ինչպէս հրեաներն են պարծենում թագաւորներով ու նահապետներով, այնպէս էլ սուրբ Եկեղեցին խնդայ տեղով, Թամարով, Ռախաբով, Հռութով: Եւ նրանց, իբրեւ մեծ եւ առաքինի կանանց, տեսանելի փրկութիւնն ինչպէս որ թագաւորներով եւ նահապետներով հաստատեց, այնպէս էլ՝ Բեթղեհեմի՝ հաստատակաբար աստուածընկալ այրով, հաւաստապէս՝ աստղով, անշատ–անշատ՝ մոգերով, եւ անբաժանելի մարմնացած Բանով: Երկկողմ մասերից՝ հեթանոս անառաքինի կանանցից [եւ] Իսրայէլի թագաւորներից ու նահապետներից ծնուած սուրբ Կոյսից անմուտ Արեգակը փայլեց եւ ջահաւորեց ողջ տիեզերքը:

Արդ, ոչ ոք թող մեզ անուսում չհամարի, որ կրկնաբանում ենք մեր իսկ կողմից ասուածը, այլ աստուածասէր անձիդ համար եմ գրում այս բոլորը սոյն գրուածքի մէջ: Այն պատճառով Բոոսը կին առաւ մովաբացի Հռութին, որպէսզի նրանով հաղորդակից լինի արդարների օրհնութեանը: Եւ Հռութից սերուեց Դաւթի տան ազգը, եւ նրա զաւակից ծնուեց Քրիստոս Աստուած: Կահաթը ծնեց Ամրամին, եւ Կահաթի կնոջ անունը Ովրաթ էր՝ Ղեւիի դուստրը, որ ծնեց Սաղային Եգիպտոսում, եւ Սաղան Ամրամից ծնեց Ահարոնին, Մովսէսին եւ նրանց քոյր Մարիամին: Մովսէսն ութսուն տարեկան էր, եւ նրա Ահարոն եղբայրը՝ ութսուն եւ երեք, երբ խօսեցին Փարաւոնի հետ: «Եւ Ահարոնն իր որդու համար,– ասում է,– կին

առաւ Ամինադաբի դուստր, Նաասոնի քոյր Եղիսաբեթին՝ Յուդայի ազգից», որտեղից էլ քահանայութեան եւ թագաւորութեան ցեղերը խնամութեամբ իրար խառնուեցին: Ուստի թէպէտ եւ Յիսուսի մայր Մարիամը Յուդայի ազգից էր, սակայն, քահանաների եւ թագաւորների՝ խնամութեամբ իրար խառնուելու պատճառով, ազգակից է Զաքարիայի կնոջը՝ Եղիսաբեթին: Որովհետեւ Նա, Ով նրանից ծնուելու էր, եւ՛ քահանայ էր, եւ՛ թագաւոր:

Իսկ Ղուկաս Աւետարանիչը ոչ թէ ըստ բնութեան է ազգահամարը դասակարգում, այլ՝ ըստ օրէնքի: Քանզի երբ եղբայրն անզաւակ մահանում էր, միւս եղբայրն էր առնում [նրա] կնոջը եւ զաւակ ունենում եղբօր անունով: Եւ ըստ բնութեան Միաւորուածը, երանքից ծնուող Քրիստոսն այն ժամանակուանից ի վեր այլեւս չէր բաժանւում. ուստի [Ղուկասը] թուարկում է մինչեւ Ադամ եւ Աստուած: Իսկ Մատթէոս աւետարանիչը թուարկում է Աբրահամից մինչեւ Քրիստոս, որովհետեւ Քրիստոս նրա զաւակներից էր ծնուելու եւ նրանց երանքից էր սերում: Մատթէոսը Սաղմոնին է յիշատակում, իսկ Ղուկասը՝ Նաթանին, որովհետեւ ազգը Նաթանից էր սերում մինչեւ Յովսէփ եւ Սաղմոնից սերում մինչեւ Մարիամ՝ ըստ հրեշտակապետի խօսքի. «Յովսէ՛փ, Դաւթի՛ որդի, մի՛ երկնչիր քեզ մօտ վերցնել Մարիամին» [Մատթ. Ա 20]: Եպիփան Կիպրացի մեծ վարդապետն էլ այսպէս է ասում. «Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածինը Յովակիմի եւ Աննայի դուստրն էր», իսկ Յովակիմը՝ որդին Քարիի, որ Պանթեռ է կոչւում եւ Մեղքիի եղբայրն է, ինչպէս որ հրեաների աւանդութիւնն է պատմում: [Սա] Ղեւիի որդին էր՝ Նաթանի զաւակից եւ Սաղմոնի [սերնդից], Դաւթի ցեղից, Յուդայի ազգից: Իսկ Ղեւիի որդի Մեղքին, Մատթանի՝ Յակոբի հօր վախճանուելուց յետոյ, առաւ Մատթանի կնոջը՝ Յակոբի մօրը, որն այրի էր. Յակոբը գնաց իր մօր հետ Մեղքիի մօտ եւ մեծացաւ նրա տանը. [Մեղքին] եղբայրն էր Յովակիմի հօր՝ Քարիի, որ Պանթեռ է կոչւում: Իսկ Մատթանի կնոջից երկու եղբայրներ ծնուեցին, Մատթանից՝ Յակոբը, եւ Մեղքիից՝ Հեղին: Եւ Յակոբն ու Հեղին եղբայրներ էին՝ համամայր տարբեր հայրերից: Իսկ երբ Հեղին վախճանուեց՝ անզաւակ մնալով, Յակոբն, ըստ օրէնքի, իր եղբօր կնոջն է առնում, որպէսզի նրա համար զաւակ ունենայ: Եւ այսպէս Յակոբը Հեղիի կնոջից ունեցաւ Յովսէփին եւ Կղէովպասին, որոնք ըստ բնութեան Յակոբի ծնունդներն էին, իսկ ըստ օրէնքի՝ Հեղիի որդիները: Իսկ Յովակիմը՝ Մարիամի հայրը, եւ նրա հայր Պանթեռը՝ Մեղքիի եղբայրը, Ղեւիի

որդիներն էին, Յակոբի ազգակիցները, ինչպէս որ ցոյց են տալիս եբրայեցիների աւանդութիւնները: Այսպիսով, Մարիամը դուստրն է Յովակիմի, թոռը Պանթեռի՝ Մեղքիի եղբօր, Ղեւիի որդու, որն առաւ Մատթանի կնոջը: Իսկ Հեղիի կինը, որ տրուեց Յակոբին, ծնեց Յովսէփին, ինչպէս նախապէս ասացինք: Այսպիսով, Մարիամը, որի այրը Յովսէփը եղաւ, երկու նահապետութիւններից էր [սերում]՝ Նաթանի եւ Սաղմոնի, հօր կողմից Դաւթի ազգից էր, իսկ մօր կողմից՝ Հեղիի՝ իր հայր Յովակիմի ազգակցի, եւ ըստ քահանայութեան՝ Եղիսաբեթին ազգակից:

Եւ ինքը՝ սուրբ Կոյսը, սքանչելի վարքով, սրբութեամբ գերազանցեց բոլորին՝ ըստ Սողոմոնի խօսքի. «Բազում դուստրեր մեծութիւն ստացան, բայց դու առաւել եղար» [Առակ. ԼԱ 29], ինչպէս Գաբրիէլն աւետարանեց Նազարեթում: Նրա կեանքի տարիների ընդհանուր գումարը վաթսուն տարի է: Տասնհինգ տարեկանում ծնեց աշխարհի Փրկչին, [ապրեց] եւս երեսուներեք տարի մինչեւ Փրկչի խաչելութիւնը, իսկ Փրկչի երկինք համբարձուելուց յետոյ՝ տասներկու տարի, որը նրա կեանքի սկզբից մինչեւ հրաշալի վերափոխումը վաթսուն տարի է [անում]:

Սուրբ Կոյսը, Եղիսաբեթը եւ Սողոմէն երեք քրոջ երեք դուստրեր էին. եւ Կղէովպասի կին Մարիամն [տե՛ս Յովհ. ԺԹ 25] Աստուածածնին քոյր է համարւում, որի մասին [Աւետարանում] ասւում է՝ Յիսուսի խաչի մօտ էր: Նաեւ Մարիամի այր Յովսէփը չորս որդի ունէր՝ Յակոբոսը, Սիմոնը, Յուդան եւ Յովսէսը. ունէր նաեւ երեք դուստր՝ Մարթան, Եսթերը, Սողոմէն, որը Յակոբի եւ Յովհաննէսի մայրն էր եւ Զեբեդէոսի կինը: Եւ Յոհաննէսը Փրկչի քրոջ որդի է անուանւում, քանզի ինչպէս որ Յովսէփի որդիները Փրկչի եղբայրներ են ասւում, այնպէս եւ դուստրերը՝ քոյրեր: Յովսէփը քառասունամեայ էր, երբ Կոյսը յանձնուեց նրան, եւ Կենարարի երեսունմէկ տարեկանում վախճանուեց Նազարեթում, իր տանը: Եւ սուրբ Կոյսին սպասաւորում էր Յակոբ արդարը, որին Յովսէփն էր պատուիրել, որովհետեւ Յովսէփի կենդանութեան ժամանակ էլ էր նա ծառայապէս հոգ տանում, [այդ] հեզ եւ արդար [մարդը], մինչեւ որ Քրիստոս [սպասաւորութիւնը] յանձնեց Յովհաննէսին:

Եւ սուրբ Կոյսը բազում չարչարանքներ եւ վանգներ կրեց Կայիափայից եւ հալածանքներ՝ հրեաների կողմից: Քանզի չէին

թողնում, որ նա գերեզման գնայ աղօթելու կամ յայտնապէս՝ Գեթսեմանի [պարտէզ] կամ Փրկչի այլ տնօրինական վայրերը, այլ միայն գաղտնի [էր գնում]: Եւ, հալածելով տեառնեղբայր Յակոբին, գնացին կրակի մատնեցին այն տունը, որտեղ գտնւում էր Սրբուհին, եւ հուրը, հրեաներին շրջապատելով, եօթ մարդ այրեց եւ Կայիափա, Աննա եւ Ղեւի քահանայապետերին՝ տանը ոչ մի վնաս չտալով: Եւ երկիւղելով՝ այլեւս չէին յանդգնում սուրբ անձին [վնասել]: Տիրոջ Մկրտութեան օրը հրեաների խաժամուժ ամբոխուած հրոսակները Յորդանան էին գնացել՝ բռնելու Տիրամօրն ու Յովհաննէսին: Բայց Աստուծոյ հրեշտակը նրանց գետի միւս ափը տեղափոխեց, եւ երբ հրեաները կամեցան անցնել, Յորդանանը նրանցից քսան մարդու ջրասոյզ արեց: Եւ Տիրոջ Համբարձման օրը հրեաները Զիթենեաց լեռան վրայ, քարերով յախուռն յարձակուելով Սրբուհու վրայ, իրենցից յիսուն այրի քարկոծելով սպանեցին: Բայց քանի որ, Տիրամօր բազում հալածանքների մասին գրելով, ճառս կարդալու համար ձանձրալի կդառնայ, այսուհետ կդառնամ սուրբ պատկերի խնդրին:

Երբ Սրբուհին հրաւիրուեց փոխուելու իր Որդու մօտ, աւետարանիչը, գտնելով կիպարիսից տախտակ, որից կենսաբեր խաչն էր, մեծ թախանձանքով կերպաձեւում է Տիրամօր պատկերը, որպէսզի նշխար մնայ մեր կեանքի համար. աւետարանչի անձկալից սրտին յոյժ բաղձալի էր դա: Քանզի մեր Փրկչի համբարձուելուց յետոյ նրանով էին աշակերտները մխիթարւում՝ Սուրբ Կոյսին տեսնելով որպէս նրա Որդուն. նաեւ Պետրոսն ու Պօղոսը բազում անգամ Երուսաղէմ էին գնում՝ սուրբ վայրերը տեսնելու եւ Իսկուհուն տեսակցելու:

Արդ, երբ աշակերտները համագումար միաբանութեամբ ժողովուեցին՝ իրենց Աստուածամօրը [Տիրոջ մօտ] ճանապարհելու համար, ըստ Տիրոջ խօսքի, թէ՝ «Ուր մարմինն է, այնտեղ արծիւները կժողովուեն» [Ղուկ. ԺԷ 37], որոնք թէպէտ եւ խաչելութեան ժամին ցրուեցին, բայց յարութեան ժամին համախմբուեցին. քանզի Տէրն ասել էր. «Քանդեցէ՛ք այս տաճարը, եւ Ես երեք օրում կշինեմ այն» [Յովհ. Բ 19]: Այս մասին մարգարէն ասում է. «Տէրը շինում է Երուսաղէմը եւ Իսրայէլի ցրուածներին ժողովում» [Սաղմ. ՃԽՋ 2]: Այնուհետեւ Յովհաննէսը միւս առաքելների հետ որոշեց աղաչել իրենց Տիրամօրը, որ փայտեղէն անօթ իր աստուածատիպ պատկերի վրայ դնի, այն օրհնի եւ Տիրոջից խնդրի երկրին բարիք գործել իր

փոխման ժամանակ, քանզի բորոտութեան ախտը մեծ ցասմամբ եռում էր երկրի վրայ, իսկ Երուսաղէմում՝ առաւել եւս: Երբ Պօղոսը եւ Յովհաննէսը միաբան գնդով գնում են աղաչելու Տիրամօրը, Պօղոսն ամենաօրհնեալ սուրբ Կոյսին ասում է. «Աստուծոյ Բանի անարա՛տ առագաստ, աղաչում ենք քեզ, վերցրո՛ Յովհաննէսի նկարած այս փայտեղէն պատկերը քո սուրբ ձեռքերի մէջ, օրհնի՛ր այն եւ տո՛ւր սա որպէս աշխարհի կեանքի նշան. եւ աղաչի՛ր քո Որդուն եւ մեր Աստծուն պատկերի միջոցով վերացնել բորոտութիւնը մարդկանց որդիներից, որոնք քո բարեխօսութեանն են ապաւինում»:

Ամենաօրհնեալ սուրբ Կոյսը պատասխանում եւ ասում է նրանց. «Եւ ինչո՞ւ էք ինձ՝ Տիրոջ աղախնին, ստիպում իմ անունով անել այն, ինչ արժան չէ ինձ: Դուք էք եղել մեր Արարիչ Քրիստոսի աշակերտները, ձեզ է շնորհել դեւերին հալածելու, ախտերն ու հիւանդութիւնները բժշկելու, աներեւոյթ գազանին ընդոտնելու եւ աշխարհից կռապաշտութիւնը վերացնելու իշխանութիւնը: Ինչ որ դուք կամենում էք՝ խնդրե՛ք ձեր Տիրոջն ու Աստծուն եւ կունենաք. քանզի եթէ երկինք փակելու իշխանութիւնն էք ստանձնել երկրի վրայ եւ իշխաններ կարգուել տիեզերքի ոլորտներում, ձեզ Տէրն Իր բարեկամներն է կոչել, եւ հրաշալի նշանները ձեզ համար են լինում, [ապա] ուր էլ որ ձեր ոտքերը հասնեն, ոչինչ ձեզ համար անհնար չի լինի: Այլ ինձ ձեր աղօթքներով [Տիրոջ մօտ] ճանապարհէք եւ, սիրով ու խաղաղութեամբ միաբանուելով ինձ հետ, անխռով նաւահանգի՛ստը հասցրէք»: Պօղոսն ասում է. «Սո՛ւրբ Կոյս եւ Մա՛յր Աստուծոյ, մենք անպիտան ծառաներն ենք աշխարհի Արարչի, Որն հաճեցաւ քեզանից մարմնանալ. քո Որդուց եւ մեր Աստծուց արժանացած ենք այս առաքելական շնորհին, որ ունենք. իսկ դու մեր Տիրամայրն ես, եւ մենք՝ աշխարհի հրովարտակները. դու Երրորդութեան հարսն ես, եւ մենք՝ փողեր, որ հնչեցնում են անճառ այն Սնունդը, որ քեզանից էր. աղաչում ենք քեզ, մեզ համար նշա՛ն դարձրու այս պատկերը, ինչպէս քո միածին Որդին, որ Իր մահուան փայտը որպէս անմահութեան գործիք, կեանքի գանձ եւ դեւերի հալածիչ տուեց աշխարհին: Իսկ այժմ շնո՛րհ արա, որ սա բժիշկ լինի վիրաւորուածներին եւ նշխար՝ հաւատացեալներին. որպէսզի երբ նրանք, ովքեր փափագում են տեսնել քեզ, այս տեսնեն, նրանց խնդրուածքներն իրագործուեն»:

Այնժամ ամենաօրհնեալ Սրբուհին, նկարուած պատկերն իր սուրբ

ձեռքերի մէջ վերցնելով, իր աստուածընկալ ձեռքերը տարածեց դէպի երկինք եւ ասաց. «Տէ՛ր Աստուած ամենակալ, Հա՛յր՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի, բարերար եւ բազումողորմ, որ աշխարհի կեանքի համար առաքեցիր Քո միածին Որդուն՝ մարմնանալու Քո անարժան ազախնուց, որ Իր մարմնով կատարեց օրէնքի եւ մարգարէների գրածները եւ դարձեալ համբարձուեց Քեզ մօտ, Քո հայրենի փառքի մէջ, այժմ աղաչում եմ Քեզ եւ խնդրում Քեզանից, վերացրո՛ւ, Տէ՛ր, բորոտութեան ախտը մարդկանց միջից այս նկարուած փայտեղէն պատկերի միջոցով Երրորդութեանդ զօրութիւնը սրա մէջ հաստատելով իմ այս աղաչանքի եւ խնդիրքի միջոցով. որ վերացրեցիր առաջին մարդու յանցանքը Քո միածին Որդու, մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, որ Իր մարմնով կատարեց առաքող Հօրդ կամքը, եւ այժմ կատարի՛ր այս ընտրեալ այրերի խնդիրը, որ Քո խօսքով առաքուեցին ի փրկութիւն աշխարհի՝ ուսուցանելու Սուրբ Երրորդութիւնդ, որպէսզի Քո երկրպագուները լինեն եւ փառաբանիչները Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգուդ յաւիտեանս. ամէն»:

Եւ երբ առաքեալները ասացին «ամէն», նոյն ժամին լուսեղէն կամար իջաւ Սրբուհու վրայ, եւ ամպեղէն լոյս խաչանման կաթեց սուրբ պատկերի վրայ: Եւ Սրբուհին պատկերն իր երեսին դրեց եւ այն թրջեց յորդառատ արտասուքներով, որ հեղում էր Տիրոջ առաջ: Եւ Պետրոս ու Պօղոս առաքեալները Սրբուհու ձեռքից պատկերը վերցրին, եւ բոլորը երկրպագեցին:

Իսկ երբ անարատ Կոյսն իր սուրբ հոգին Տիրոջ ձեռքն աւանդեց, հրեաների ամբոխի մէջ խռովութիւն մտաւ. եւ երբ յարձակուեցին առաքեալների վրայ՝ կամենալով յափշտակել Կոյսի մարմինը, ամէնքը կուրացան: Իսկ Սոփոնիա անունով մի մարդ բռնեց [մահճից], որն առաքեալները բարձրացրած տանում էին Գեթսեմանի կոչուող հանգստեան սուրբ վայրը, եւ Սոփոնիայի ձեռքերն, արմունկներից [պոկուելով], կախուած մնացին մահճի կողքից. այրն, իրեն վայ տալով, մինչեւ գերեզման լալիս եւ աղաչում էր: Պետրոսն ասաց. «Ո՛վ մոլորեալ հրեաներ, մինչեւ ե՞րբ էք մոլորուած մնալու եւ յամառելու, ինչո՞ւ չէք զղջում ձեր անզեղջ սրտերում, մնում եք անհնազանդ, ինչպէս ձեր հայրը՝ սատանան»: Եւ մեծ էր հրեաների լացուկոծը: Պօղոսն ասաց. «Դէպի Տէ՛րը դարձէք եւ խոստովանեցէ՛ք սուրբ Կոյս Աստուածածնին, եւ կզթայ ձեզ»: Ողջ ամբոխն աղաղակեց եւ ասաց.

«Խոստովանում ենք Հայր Աստուծոյ Որդի Քրիստոսին, Ով անճառապէս մարմին առաւ սուրբ Կոյսից, Ում մենք անգիտութեամբ խաչեցինք՝ Աստծուն հակառակ կարծելով. միայն թէ զթայ մեզ»: Եւ Պետրոսը, վերցնելով նրա ձեռքերի [մասերը], բերեց մօտեցրեց հատուած ձեռքերին, եւ [դրանք] միանալով առաջուայ պէս կենդանացան: Եւ խաւարեալները լուսաւորուեցին, եւ հրեաներն ու հեթանոսները մեծ–մեծ խմբերով մկրտուեցին. եւ քաղաքում եղած բորոտները գալիս էին առաքեալների մօտ, իւղով օծւում, սուրբ պատկերով տեսանգրւում եւ իսկոյն բժշկւում ախտերից. եւ, Տիրուհու ննջման լուրը [լսելով], բոլոր ախտաժէտները գալիս եւ անմիջապէս առողջանում էին, մինչեւ որ լուրը լոյսի ծագման պէս տարածուեց ողջ Հրէաստանում:

Արդ, Բարդուղիմէոս առաքեալը՝ տասներկուսից մէկը, նրանց հետ չէր Կոյսի [մօտ] համահաւաքման ժամանակ, քանզի Տիրոջ կամքն էր, որ սա այսպէս լինէր, քանի որ Թովմայի հետ Հնդկաստան էր գնացել: Եւ երբ յետոյ նա առաքեալների մօտ եկաւ, ստիպեց նրանց, որ ցոյց տան իրենց աստուածային գանձը՝ ամենաօրհնեալ Կոյսի մարմինը: Եւ նրանք, իրենց եղբօր փափագը կատարել յօժարելով, այնուհետեւ բացեցին սուրբ գերեզմանը եւ այն դատարկ գտան աստուածակիր մարմնից: Եւ հիանալով իմացան, թէ [ննջումից] երեք օր յետոյ, երբ հրեշտակների օրհնութիւնն ու սաղմոսերգութիւնները աւարտուեցին, սուրբ մարմինը փոխադրուել է նոյն հրեղէն դասերի միջոցով: Ապա Բարդուղիմէոսը յոյժ վշտացաւ, որ չհաջողեց տեսնել սուրբ Կոյսին եւ չլսեց վերջին օրհնութիւնները, ինչպէս միւս առաքեալներն ու Տիրոջ աշակերտները, եւ ոչ էլ գերեզմանի մէջ գտաւ. եւ նա աւելի ու աւելի էր տրտմում:

Երանելի առաքեալները, այս տեսնելով եւ իրենց եղբօրը մխիթարել կամենալով, տուեցին նրան փայտի վրայ նկարուած Տիրամօր պատկերը՝ հաստատուած [Աստուծոյ] զօրութեամբ: Բարդուղիմէոսն, այն վերցնելով, ուրախացաւ եւ կենդանի [հոգի] համարելով էր նայում: Ապա Սուրբ Հոգու հրամանով մեծ փութով Հայք ուղեւորուեց, որովհետեւ Թադէոս առաքեալը սպանուել էր Սանատրուկ արքայի կողմից Հայոց Արտազ գաւառում: Իսկ նա, Հայաստան գալիս, գնաց մոգերի եւ պարսիկների երկիրը եւ, հասնելով նրանց մայրաքաղաքը, որն այժմ նրանց լեզուով Խորասան է կոչւում, կրակարանի մէջ հրեղէն լոյսի սիւն կանգնեցրեց եւ, սուրբ պատկերն արեգակի դէմ

պահելով, կասեցրեց նրա ճառագայթները եւ վեց ժամ խաւարեցրեց. եւ [ոչ ոք] չհաւատաց, բացի այն ութ մոգերից, ովքեր երկրպագեցին Փրկչին եւ եկան մկրտուեցին առաքեալի կողմից, որը նրանց ամբարիշտների միջից հանեց եւ իր հետ Հայք բերեց: Եւ եկան Անձաւացեաց աշխարհը՝ մի քարի համբաւի մասին լսելով, քանզի բազում դեւեր էին բնակւում այնտեղ եւ խաբում տեղի մարդկանց՝ այնտեղից ախտական դեղեր տալով նրանց՝ ախտերի պղծութիւններ կատարելու համար, կառնաձայն դարբինների ահաւոր հրաշքներով արհաւիրքներ էին գործում, որոնց [այդ] աշխարհի մարդիկ սովորած լինելով՝ այնտեղ դեգերում էին քուրայի շուրջը՝ չաստուածներից պատրող ախտերի թարախածոր ծարաւներ վերցնելով, ինչպէս Կիպրիանոսի ծարաւները՝ Յուստինէ կոյսին պատրելու համար. եւ այն տեղի անունը կոչում էին Դարբնաց քար: Աստուծոյ սուրբ առաքեալը, այնտեղ հասնելով, հալածեց չարի գործակից դարբիններին եւ փշրեց կուռքերը, որոնք Անահիտի անունով էին: Եւ այս պատճառով դեւերի բազմութիւնը, հիւսիսային կողմի վրայ [գտնուող] բարձր լեռան վրայ ժողովուելով, անթիւ բազմութեամբ քարեր նետելով, սաստիկ ձայներ, ճիչեր եւ գոչիւն էր արձակում: Իսկ սուրբ առաքեալը մի փոքրիկ խաչ տեսնելով եւ կանգնեցրեց քարէ լեռան վրայ, եւ դեւերն իսկոյն չքացան: Հետագայում սուրբ հայրապետ Գրիգորիոսն այդ առաքելական խաչը շրջեցնում էր իր հետ մինչեւ իր՝ այս աշխարհը թողնելը: Իսկ որոշ ժամանակ անց [այն] դրուեց Հայոց Տրդատ թագաւորի գերեզմանին: Եւ այն տեղը, որտեղ դեւեր կային, [գտնւում է] վէմերի լեռնամիջում, Տիգրիս անունով մեծ գետի ափին, այն ամուր բերդի, որ կոչւում է Կանգուար, եւ Ագռաւաց քար անունով միւս [բերդի] մօտ, որտեղից՝ ամրոցի լեռներից, բազում ջրեր, գարնանը հոսելով, գալիս անցնում են Տիրուհու տաճարի հիմքի մօտով եւ խառնուելով օժանդակում մեծ Տիգրիս գետին: Այնտեղ սուրբ առաքեալը, իր իսկ ձեռքով դնելով Սրբուհու տաճարի հիմքը, շինեց մի փոքրիկ եկեղեցի, այն Սուրբ Աստուածածին անուանեց, նրա մէջ դրեց Տիրուհու պատկերը եւ այն տուեց սուրբ կանանց. եւ այնտեղ գլխաւոր նշանակեց Յուսիկի քրոջը եւ Ումզդատի ու Մաքովտրի քրոջը. եւ այլ կանանց էլ նրանց ձեռքի տակ է դնում. եւ վանքի խուցերն է շինում, [կանանց] հրամայում տեսուչ լինել հաւատացեալներին, այնտեղ քահանայ կարգում իր աշակերտներից մէկին եւ տեղն անուանում հոգեաց վանք՝ Տիրամօր եւ սուրբ Կոյսի անունով, որովհետեւ Աստուած բազում սքանչելիքներ

էր այնտեղ կատարում սուրբ Կոյսի միջոցով:

Եւ ինքը՝ սուրբ առաքեալը, ուղեւորուեց Հայքում աւետարանելու եւ նահատակուեց Ուրբանոս քաղաքում, առաքեալի անուամբ Բարմա կոչուող վայրում: Իսկ Յուսիկի քոյրը՝ Մարիամ անունով, անցաւ գետի միւս ափը, մի շատ փոքր քարաժայռի ստորոտում իր խուցը շինեց եւ առանձնանալով վախճանուեց: Եւ նոյն տեղում տեղի տեսուչներ կարգեց քոյր Աննային, Մարթային եւ Ումզդատի ու Մաքովտրի քրոջը: Իսկ Աննան իր խուցը շինեց ձորի միւս կողմում, որ Դարբնաքար են կոչում. այնտեղ առանձնանալով՝ վախճանուեց՝ տեղի տեսչութիւնը Մարթային տալով: Եւ Աստուած բազում նշաններ եւ սքանչելիքներ էր կատարում սուրբ կանանց ձեռքով: Ուր սուրբ Գրիգորը հետագայում գալով վանք հաստատեց, եկեղեցիներ շինեց. բայց Սրբուհու տաճարը չքանդեց, քանզի առաքելական ձեռքի գործ էր՝ թողնելով այն ի փառս եւ ի պատիւ Ամենասուրբ Երրորդութեան. եւ մինչեւ այսօր էլ կայ, որտեղ բազում բժշկութիւններ եւ ոչ սակաւ ուրախութիւններ են լինում: Եւ լուսաւորում է բոլոր ախտահարներին, որ հաւատքով ու յոյսով գալիս են այնտեղ՝ դիմելով Միածին Բանի ծնողի բարեխօսութեանը՝ իրենից ծնուած իր Տիրոջ եւ բոլորի Աստուծոյ առաջ: Լիանում են պարգեւներով եւ Սուրբ Հոգու ողորմութեամբ՝ փառաւորելով Ամենասուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գրաբարից փոխադրեց ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆԸ

ՏՕՆԱԿԱՆ

Ս. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՎԱՐԴԱՎԱՌԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Լուսաւոր եւ պայծառ է խորհուրդն այս մերձաւոր տօնի եւ տիեզերական ցնծութեան աւետիս է հնչեցնում երկնքով մէկ: Գերապայծառ ճառագայթող լոյսով պարուրուած՝ զուարթ եւ ուրախ եմ տեսնում Քրիստոսասէր հաւատացեալներիդ միասնական հաւաքը: Նորահրաշ արփիափայլ լոյսով պսակուած, տօնիս խորհուրդը պայծառ ձայնով ընդմիշտ հրաշացնելով՝ արթնանում են մեր մէջ ցնծութեան երգեր. եւ Առաջինից աղբիւրացած առաջին լուսաւոր բնութիւնների երկնագումար դասերը՝ Վերին Սիոնից, եւ վերիններին պարակցող երկրաւոր խմբեր, բոլորի փրկութեան համար համախմբուած, վայելչացնում են հրաշքը բերկրալից ձայնով:

Արդէն իսկ ոչ միայն մեր այս բանական բնութիւնը եւ առաջնամիտ ու մաքուր հրեշտակները են այս տօնի զովեստն հռչակում, այլ գրեթէ բոլոր տարերքները էլ միասնաբար, դարձած այս թագաւորական օրուայ ընծայաբերներ, պայծառակերպուած հրաշազարդում են նրա փառքը: Քանզի ամէն ինչ, այս բարի տօնի ժամանակ գեղեցկապէս միասին ընթանալով, զուարճացնում է ամբողջութեամբ միտքն ու զգայութիւնները, որոնց հետ նաեւ՝ բոլոր անշունչներին եւ անշարժներին: Որովհետեւ այսօր Նոր Սիոնի վրայ հրեշտակային դասերի օրհնութիւնները են քաղցրանուագ հնչում պայծառահրաշ լոյսով [պարուրուած]. եւ Քրիստոսի Գալստեան փայլումը հաւատացեալներիս է փարում: Ըստ մարգարէի՝ երկինքն ու երկիրն ամբողջապէս նորոգում են, եւ լեռները ցնծում Տիրոջ առաջ [տե՛ս Սաղմ. ՂԷ 9]: Ոչ միայն մեր էութեանը խառնուած կենդանի լոյսի յորդացող օրհնութիւններով տարամերժում են անէծքները, եւ տարրերը առաջին յոյսով նորոգում հրաշափառութեան մէջ, այլ գրեթէ ակնյայտորէն բոլորին երեւացող վայելչազարդուած բնութիւններն այս պայծառ տօնն իմանալի եւ զգալի փառքով են պսակում: Քանզի այժմ երկինքն ի վերուստ պայծառ զգեստներ է հագցրել իրենց ընթացքով շարժուող լուսաւորներին եւ ջահավառում է ընդհանուր այս աշխարհը վճիտ եւ մաքուր լոյսով զգալի: Իսկ հաւատքի բարձրացրած խորանը, երկնքի նման կամարաձեւ շրջապատելով հաւատացեալներին, անստուէր Լոյսի անապական ճառագայթն է բացափայլեցնում մեր բանական բնութեան հոգեւոր աշխարհում:

Այժմ պայծառալոյս արեգակը, վերին կամարին հասած, հրաբորբոք ճառագայթներով վանում է հիւսիսի [սառնութիւնը], ջերմութիւն տարածում երկնքով մէկ՝ կենդանածնելով մեր զգալի բնութիւնը: Իսկ արդարութեան Արեգակը, հաւատքի խորանի վրայ փայլելով, լուսաբորբոք հոգեոանդ լոյսով հրավառում է հաւատքի անթիւրելի տարփողներին՝ կենդանագրելով էական լոյսի կնիքով: Այժմ լուսնի լուսավառ բոլորակը եւ աստղերի մաքուր հոյլը հրաշազարդում են երկնային բուրաստանը եւ իրենց շարժման մէջ ճառագայթակերպում տիեզերքը լուսարշաւ ընթացքով: Իսկ հաւատքի լոյսի արմատն ու աղբիւրը՝ մեր բնութեան երկնքով մէկ բարեբանեալ պտուղ Աստուածածինն, իր կուսութեան մաքրապայծառ լոյսով, եւ իր հետ վառած մեծաջահ սուրբերին՝ Երրորդութեան լոյսի հոգեւոր աստղերին, տիեզերքով մէկ շրջափայլում է որպէս հրաշապայծառ ճառագայթ: Այժմ ամպերը, տերունական հրամանին սպասարկելով, արեւելքից՝ լուսատեսակները եւ հիւսիսից՝ ոսկեճաճանչները, իրար վրայ կուտակուած միագոյն թանձրութեան մէջ, փայլակնացայտ, որոտընդոստ, ցօղաբուխ առատութեամբ յագեցնում են տիեզերքը: Օդի հոսանքներն էլ, ողողուած մաքրագոյն բիւրակերպեան ծաղիկների եւ տունկերի երփներանգ զարդերով, պսակում են պայծառազարդուած աշխարհը: Իսկ առաքելական ամպերի երկնքով մէկ լեռնացած բազմաճառագայթ կուտակումներն Աւետարանի ահեղ որոտմամբ, փայլակնաբորբոք հրակէզ զօրութեամբ, Աստուծոյ գիտութեան ողորմութեան անձրեւն են մատուցա-

կում մեր բնութեան դաշտի հովիտներում. նաեւ Հոգու կենդանարար օդի շունչն են տարածում բանական բոյսերի բերրի ածի համար եւ քաղցր պտուղով վայելչացած անուշահոտ ծաղիկների վրայ:

Այժմ երկիրը վայելչացած պայծառակերպում է մեր Աստուծոյ երեւման ժամանակ՝ պսակակապ թագազարդարուած, տերեւազգեստ բոյսերով եւ տունկերով ծաղկազարդուած, եւ ծաղկաւէտուած լեռները ծիրաներփեան ցնծում են Տիրոջ առաջ: Անուշահոտ են դառնում նաեւ ճահիճները, եւ դալարավայրերում կենդանիների խմբերն են խայտում. եւ հաւքերն, օդում վայելչացած երեւալով, քաղցրանուագ հնչեցնում են անտառները: Իսկ մեր բանական բնութեան երկիրը լուսազարդուած ցնծում է Աստուծոյ գալստեամբ՝ զարդարուած մշտազուարճ առաքինութեան նորափետուր ծաղիկներով, եւ, բարձրանալով հաւատքի լեռը, տօնասէրներին պսակում է ոսկեճաճանչ իմաստութեան ծաղիկներով. եւ աստուածագիտութեան բուրումը երկնախոհների միտքն ամբողջապէս լցնում է անուշահոտութեամբ: Քաղում են նաեւ անմահութեան պտուղներ՝ սրբութեամբ քաղցրացնելու հոգու զգայարանները: Նաեւ պարում են մաքրազգեստների լուսատեսակ դասերը Եկեղեցու շուշանազարդ վայրերում եւ Աւետարանի քաղցրաձայնութեան նուագները հաւքերի երգերի պէս աւետալուր հնչեցնում բոլորի համար:

Այժմ ծովը, վրդովմունքի բարձրադէզ լեռնակուտակ ալիքներից հանդարտուած, տէրունի ոտքերի համար ընթացքի ասպարէզ է յարդարում կոհակների վրայ. եւ գետերի հոսանքներն առաւելապէս տարածում են տիեզերքով մէկ. եւ, ականակիտ աղբիւրների քաղցրաբուխ ծաւալմամբ զովացած, հրճւում են էակները, զի Աստուած է աշխարհ եկել: Իսկ մեր բնութեան ներքին իմաստութեան ծովը, երբեմնի չար հողմերի անդնդապտոյտ փրփրատեսակ ալիքներից հանդարտուած, ի վերուստ շողացող ճառագայթներով հոգու բնութեան ընթացքն է անվայրափակ յարդարում իր մէջ. եւ աւետարանական գետերի տիեզերաքանչաց ծաւալմամբ կենաց աղբիւրից անհատաբար յորդացող անմահութեան հոսանքները, Աստուծոյ՝ մեզ երեւալու պահին, պարածածկում են տիեզերքը խաղաղութեան ողջոյնով:

Այսպէս է նկարագրւում այս տօնի պայծառակերպութիւնը՝ այսպիսի հրաշքներով: Սա է, արդարեւ, ցնծութեան եւ ուրախութեան օրը, որ Տէրն արարեց. սա է Աստուծոյ մեծ փառքի ծագման օրը, որը նոր արքայութեան սկիզբն է եւ էական Լոյսի յայտնութիւնը եւ յաւիտենա-

կան յոյսի նկարագիրը: Սա է սուրբ Միաշաբաթի* օրը՝ տէրունական յարութեան լոյսով պսակուած, նոյն օրը նաեւ Սուրբ Հոգին իջաւ վերնատուն՝ պայծառ լոյսով շրջափայլելով, եւ հրաշազարդեց այնտեղ գտնուող երկնախմբերի դասերը:

Սա Մովսէսի կողմից անուանուեց Առաջին Օր, երբ Սկզբնածինը ցրեց խաւարը, եւ այս բնութիւնն ամբողջովին վայելչացաւ լոյսով, իսկ մարգարէի կողմից՝ Ութերորդ Օր, որ նշանակում է նոյն Առաջինը. եւ Ութերորդ է [անուանւում] մեծ եւ աներեկոյ Առաջին Օրուայ համար, երբ ճշմարիտ աշխարհի յարատեւ աստուածային լոյսով մաքրուածներին անլուծանելի կեանքն է ընձեռում, որի՝ այնտեղ [գտնուողներին] լուսաւորող պայծառ ճառագայթները փայլում են այսօր, երբ Փրկիչը մեր բնութեամբ ճառագայթեց Աստուածութեան Լոյսը Թաբոր լեռան վրայ՝ լոյսի փրկական փայլումը որպէս առհաւատչեայ [թողնելով] սուրբերի աստուածանմանակերպ յարութեան համար, որը եւ տօնում է Եկեղեցին հրաշափառ ցնծութեամբ:

Սա Տաղաւարահարաց տօնն է, որ օրինադրեց Մովսէսն Իսրայէլի ելքից յետոյ, եօթներորդ ամսի տասնհինգերորդ օրը, երբ եօթներորդ օրը, տաղաւարներում բնակուելով, համախմբուած տօնում էր Իսրայէլը՝ արմաւենեաց ճիւղեր, բարդիների ձողեր եւ սաղարթազուարճ ոստեր ու ընձիւղներ տանելով՝ ի յիշատակ իրենց՝ դէպի Սինա գնալու խորանաչու** ընթացքի եւ որպէս ընծայաբերութեան գոհութիւն աստուածային երախտիքի, որ վերցնելով կրեցին՝ հասնելու աստուածակերպ բուրաստանատեսակ աւետեաց աշխարհը: Սա նրանց օրինադրած ստուերակերպ տօնն է, որն Աւետարանի ճշմարտութիւնն էր նախագրում, քանզի հէնց որ լքում ենք մեր իմանալի Եգիպտոսը (ի նկատի ունեմ մարմինը ողողող խաւարաբնակ աղտեղի ախտերի տիղմը)՝ Աւետարանի լոյսի հրափայլ սիւնով առաջնորդուելու, որին հովանի է Հոգու ամպը, աստուածագիտութեան հոգեւոր լեռն ենք բարձրանում, ուր Աստուած է, որ ամենայն նիւթականն Իր մէջ բոցակիզում է հրով: Այնտեղ, ինչպէս հայելու մէջ, Տիրոջ փառքը տեսնելով՝ նոյն Լոյսից կենդանակերպւում ենք եւ, փառքից ի փառս ճառագայթուելով, օրինադրւում այս կենցաղի նիւթական շինուածը լքել եւ, դէպի անճիւթ յարկը փութալով, այս ապականուող մարմնի անդամներն առաքինութեան խորանի վերածել: Սա Տաղաւարահարաց տօնի պէս եօթնօրեայ շրջագայութեամբ տօնում ենք եօթներորդ ամսի տասնհին-

* միաշաբաթ— կիրակի

** հաւանաբար՝ անծածկ, թափառական, անտուն չու, երթ, ընթացք

գերորդ օրը՝ մեր զգայութիւնների մէջ եռակի մաքրութիւն ընդունելով՝ թէ՛ գայթակղութեամբ, թէ՛ պատերազմով ներս ընդունած մեղքերի խայթոցներից: Եւ այս եօթ օրը տօնում ենք տաղաւարներում՝ արմաւենեաց ճիւղեր եւ կանաչազգեստ ոստեր եւ ընձիւղներ բռնած. եւ այս եօթօրեայ շրջագայութեան ընթացքում, այս աշխարհին պատկանող կեանքի բոլոր հոլովումներն արտաքսելով, Աստուծոյ նման հոգով ենք ապրում եւ, անմարմնական առաքինութիւնների ոստերի աճմամբ դէպի հրեշտակային բարձունքը վերընձիւղուած, որպէս արմաւենիներ Աստուծոյ գաւթում, ծաղկում ենք՝ հրաւիրուելով դէպի Վերին Աւետեաց Երկիրը՝ Աստուծոյ Սիոն քաղաքը, դէպի մայրը կենդանի արարածների եւ անմահների բանակատեղը, դէպի լոյսի առագաստի անքակտելի խորանը, ուր յարազուարճ խնդութեամբ հնչում են տօնախմբուածների ձայները:

Այս ամէնը մեր մէջ, որպէս օրինակ, տպաւորուած էր նախապէս, որն Իրենով ամբողջացրեց Քրիստոս՝ Գրի լուծիչը եւ խորհուրդի կատարիչը, որն այս տօնի օրը լեռան վրայ աշակերտներին յայտնեց անմերձենալի Աստուածութեան նազելի փառքի ծայրագոյն լոյսի ծագումը՝ կենդանարար աղբիւրացած մարմնից փայլակնատարած ճառագայթարձակ փայլմամբ: Եւ դարձել էր Թաբորը որպէս նոր Սինա սուրբ լեռ եւ լուսեղեն աստուածաբնակ վայր՝ հրավառ եւ ամպով պատուած, նաեւ՝ նոր երկինք՝ Աստուածութեան ճառագայթներով բարձրացած երկրի վրայ եւ պայծառազգեստ պսակուած արփիափայլ հրաշքով: Այնտեղ են նաեւ հրեշտակների զօրքերը՝ սերովբէների բիւրաւոր բանակներ գումարած, որոնք, տէրունի ոտքերի ներքոյ սոսկացած, հրափայլ թեւերով պարփակում են արքայական աթոռը: Քանզի ուր Վերնստեալն է, այնտեղ էլ Նրա աթոռն է, այնտեղ էլ բարերջանիկների խմբերն են՝ առաքեալների եւ մարգարէների պայծառ եւ մեծ լուսազգեաց դասերը՝ անմերձենալի լոյսի հպատրութեամբ աստուածակերպուած եւ բացերես առ Աստուած հայելով աստուածացած. աւելի ճիշտ է ասելը՝ Աստուած միաւորուել է աստուածներին* եւ յայտնել [Իրեն]: Այնտեղ են նաեւ պայծառազգեստ Եկեղեցու սիւները՝ զարդարուած աստուածածագ հրի բորբոքմամբ եւ միաւորուած անշիջանելի Լոյսի հետ. սուրբեր, որոնք փայլում են տիեզերքում Աւետարանի լոյսի աշխարհարձակ ճառագայթներով: Այնտեղ Մովսէսը՝ կանխատեսը մեզ վրայ Աստուծոյ փառքի արեգակի անփոփոխ եւ անմատոյց լոյսի առաջին ծագման, իր տենչալի լոյսը տեսնելով, մարմինը վարագոյրով ծածկած, ցնծութեան մէջ յարութիւն առնելով, գալիս ողջունում էր նոյնահրաշ կերպարանքով՝ աւետելով մեզ, որ նոյնպէս պիտի կենդանակերպուենք եւ նորոգուենք Աստուածորդու յարութեամբ՝ Նրան վկայելով որպէս Տէր մահու եւ կենաց: Եւ Եղիան, հրէ կառքով վեր բարձրացած, կենդանի էակների աշխարհից ողջոյնի է եկել մերատիպ էական Լոյսին՝ վկայելով, թէ Տէրն է վերինների եւ ներքինների, խօսում էր փրկութեան դռան մասին, որ Երուսաղէմում է՝ աւետարանելով մեզ, որ յուսացած յարութեան ժամանակ ամպերով պիտի տարուենք եւ ելնենք դէպի Աստուածութեան հուրը: Այնտեղ մեծ հայրական խորքերի հազարապետը՝ խորանով առագաստուած վերին արքունական լոյսի փակողն ու բացողը, սարսափած վերառաձայնում էր Երրորդութեան խորհուրդը, եռակի տաղաւարներով եւ տիեզերագոչ փողով հրաւիրում բոլորին Վերին Երուսաղէմի լոյսի խորանը*: Այնտեղ էր, որ վերին Արքայի զօրութեան զօրքերը, ազգերի թագաւորները եւ աշխարհի իշխանները՝ Որոտման որդիները, որոնք, հովանի առած [Սուրբ] Հոգու ամպը, բարձունքներից ահեղ որոտմամբ հնչեցրին հայրական ձայնը տիեզերքով մէկ՝ օրհնութեան ցօղով արբեցնելու ծարաւիներին անմահութեան ջրերը: Արժէ՞ շարունակել. ասեմ աւելի համառօտ ձեւով՝ այնտեղ է Երրորդութեան բոլոր գերակայ փառքերի բացածագումը: Քանզի Հոգին լուսեղէն ամպերով հովանի եղաւ, եւ Հայր Աստուած փառքով որոտաց, եւ մարմնացեալ Բանը տնօրինուած կենդանարար մարմնով փայլեցրեց այնտեղ հայրաբուն փառքի էական ճառագայթը. քանզի Իրեն միաւորեց մարմինը, ինչպէս որ ասուած է՝ Բանն Աստուած Հօր մէջ է եւ Հօրից, Էն՝ Էականից, լոյս՝ լոյսից, կեանք՝ կեանքից, Նա է երանելին եւ միայն բարին, Ում նայում են բոլորը, Ում տենչում են բոլորը, Ում մէջ չկայ այլայլում եւ փոփոխում: Հօր նոյն բնութիւնն է, փառքի ճառագայթը, էութեան կերպարանքը եւ բարերարութեան պատկերը, որ Էն է եւ միշտ Էն՝ մտքից ու խօսքից վեր պատճառ ունենալով միշտ Էն: Գթածաբար կամենալով փրկագործել մեր բնութիւնը՝ մեզ կերպակից է դառնում՝ չբաժանուելով Աստուածութիւնից: Որովհետեւ իր բնութեամբ մարմնին միացաւ՝ նրան իր հետ խառնելով եւ աստուածացնելով, սակայն մնալով ինչպէս կար, ո՛չ շփոթուելով, ո՛չ էլ անխառն մնալով, այլ՝ ե՛ւ խառնուելով, ե՛ւ միաւորուելով բնութեամբ՝ անշփոթաբար եւ անբաժանելի, որ էերի մտածութիւնից վեր է: Որովհետեւ Կոյսի որովայնի մէջ անփոփոխելի լոյսի ճառագայ-

* Ի նկատի ունի շնորհով սրբագործուած եւ աստուածացած սուրբերին:

* Ի նկատի ունի Պետրոս առաքեալին (Մատթ. ԺԷ 4–5, Մարկ. Թ 4–6, Ղուկ. Թ 32–34):

թը փոփոխական նիւթով ճառագայթեց՝ որպէս մի կայծակ այնտեղից նոյնակերպ հրաշաբուսած, եւ մեր բովանդակ հոգին, մարմինը եւ միտքն անապական եւ աստուածախառնութեամբ միաբուն դարձնելով՝ Էմմանուէլը ծնուեց Կոյսից՝ չանջատուելով Հօրից՝ ամբողջապէս մնալով Երրորդութեան մէջ եւ անբաժան՝ երկրից. քանզի [միաժամանակ] ե՛ւ Կոյսի գրկում է աստուածացած մարմնով, ե՛ւ սրովբէական կառքն է իսպառ լցնում մարմնացեալ աստուածութեամբ: Քանզի Նա ամէն ինչի մէջ է, եւ լի են նրանով երկինք եւ երկիր. եւ Նա, որ անդին է ամէն ինչից, առանց մեղքի եւ ապականութեան մեր բոլոր հոգեկան եւ մարմնական կրքերի միջով ճանապարհորդեց մի դէմքով, մի կամքի շարժութեամբ՝ միեւնոյն Աստուած՝ մարմնաւորուած եւ բոլորից անդին: Նրա անբաժան միութիւնը գերակատար լրութեամբ բացածագեց այսօր, նոյն մերակերպ աստուածացած մարմնի մէջ եկած փայլատակող ճառագայթն աղբիւրացրած՝ լուսակերպելով մեր մթնած խաւարային բնութեան սեւ աղջամուղջը, մեզ Իր միջոցով Հօրը միացնելով, որի մասին էլ ասաց. «Որպէս Դո՛ւ, Հա՛յր, Իմ մէջ ես, եւ Ես՝ Քո մէջ, նոյնպէս եւ նրանք թող մեր մէջ լինեն» [Յովհ. ԺԷ 21]: Որովհետեւ, լեռը ելնելով, մեզ Իր հետ բարձրացնում էր դէպի հայրական աթոռը. եւ, մարդկային մարմնի դէմքն արեգակնափայլ լուսազարդելով, մեր նաստ մարմինն էր աստուածակերպում Իր փառաւոր մարմնի նմանութեամբ, որի հետ նաեւ լուսեղէն ամպի կամարաձեւ շրջափակմամբ Իր հետ առագաստում էր մեր [բնութիւնը] Սրբութիւն Սրբոցի մէջ՝ վարագոյրի ներքոյ, ինչպէս ասել էր, թէ՝ «Ուր ես եմ, այնտեղ եւ Իմ պաշտօնեան կլինի» [Յովհ. ԺԲ 26]: Եւ հայրական ձայնն, ի վերուստ սիրելի Որդի վկայելով Նրան, որպէս մեր որդեգրութեան առհաւատչեայ, դէպի լոյս հրաւիրուածներին աւետիս էր տալիս. նաեւ, առաքեալների եւ մարգարէների խմբերով իր ծայրագոյն լուսափառքը ճառագայթելով, բոլոր վերեւինների եւ ներքեւինների, կենդանիների ու մեռեալների ցոյց էր տալիս, թէ Վերջին Օրն ինչպէս են տեսնելու Իրեն՝ Աստծուն, աստուածացածների մէջ, ամպերի վրայով զօրութեամբ եւ փառքով գալիս [Մատթ. ԻԴ 30], այստեղ մաքրուածներին այնտեղի փառքը պարգեւելիս. որ այս մեծ ահաւոր օրը, պսակելով այս տօնը լուսահրաշ փառքով, արեգակնակերպ փայլում է երկնքով մէկ՝ Իր մէջ ունենալով եռապայծառ Լոյսի եզաբուն ճառագայթը: Երրորդութեան այս Լոյսը Միածինն այսօր Թաբոր լեռան վրայ Իր շուրջ փայլեցրեց՝ ճառագայթելով արարածներին, որով երկինքը ցնծաց, եւ երկիրը պայծառացաւ, երկնքի վերնայարկերը բացուեցին, եւ լոյս հոսեց դէպի ստորին խորանը, երկնքում հայրական ձայնը հնչեց, տիեզերքը որդեգրուեց, Հոգու ճառագայթը ծագեց, երկնածինները լուսազգեստ-

ուեցին, հրեշտակների խումբը պարեց երկրի վրայ, հողեղէնների դասերը երկնքի դռնով մտան, երկնքի օրհնութիւնները երկրի վրայ հընչեցին, երկիրը երկնանման զարդարուեց, դրախտի դռները բացուեցին, այնտեղից արտաքսուածը պարեց նրա մէջ, կենաց ծառի հոտը բուրեց, երկիրն անմահութեան ծաղիկ բուսեցրեց, կեանքի լոյսը ծագեց, մահու ստուերը փախաւ, արդարութիւնը թագաւորեց, մեղքերի իշխանութիւնը լուծարուեց, աւետարանական փողը գոչեց, տիեզերքը քնից զարթնեց, Աստծուն մարմնով եկած տեսան եւ Նրա հետ աստուածացան:

Այսպիսի բիւր բարիքների օրինակ է այս մեծ եւ պաշտելի տօնը: Ինչպէս նաեւ յոյժ վայելուչ է տօնիս անունը, որ տալիս է Եկեղեցին, քանզի Վարդավառ է կոչում, որ, արդ, աւար է նշանակում, նաեւ կոչում է վարժարան: Այլ ինչու՞ է յոյնը սա Պայծառակերպութեան եւ Պասկայ տօն անուանում, իսկ Հայաստանեայց ազգը՝ Վարդավառ. սրանք [երկուսն էլ] միեւնոյն հրաշափառ պայծառութիւնն են հնչեցնում, որ նախապէս Քանն էր արձանագրել: Այս տօնին բովանդակ երկիրը ծաղկաւետուել է. մեր բնութիւնն էլ փթթել է յաւիտենական ծաղիկներով եւ Քրիստոսի փառքի ճառագայթարձակ փայլմամբ, եկեղեցիները պայծառազգեստ վայելչութեամբ են պսակուել, եւ առաքինութեան լուսահրաշ վարդերով ու շուշաններով տօնասէրների ոսկեվարսեալ գլուխները են վայելչացնում: Ըստ այսմ՝ յիրաւի է Վարդավառ անուանում սա Եկեղեցին եւ Պայծառակերպութեան ու Պասկայ տօն: Իսկ արդ, աւարն ու վարժարանն այլ բարձրագոյն խորհուրդ են հաստատում, որը տրամախոհները հոգուց են ճանաչում: Քանզի մեր մէջ Քրիստոսի Յարութեան լոյսի ծագումից յետոյ, սուրբ Յիսնեկի վերջում, վերնատանն առաքեալների վրայ հոգու շնորհները զեղուեցին, նոյն օրը Սինայում աստուածագիծ Օրէնքի գիրը Մովսէսին ընձեռնուեց, որ տօնում էր Իսրայէլն ամէն տարի՝ այն կոչելով Պենտեկոստէ, նոյն օրը նաեւ առաքեալների մէջ իր հոգու շնորհները կենդանագրելով՝ գիրը տեղի էր տալիս, եւ, Աւետարանի բազմաձայն լեզուներով միասնաբար ձայն հնչեցնելով, լսողների հինգ հազարանոց խմբերի հոյլերին էր աշակերտում՝ նրանց մասին գրելով որպէս նոր Իսրայէլի. երկնատուր մշակի քրտինքի առաջին կաթիլները եւ առաքելական ոստերի ծաղիկները, որոնք, գրի ծածկոյթը մերկացնելով, հոգու լոյսով զգեստաւորուեցին՝ հնազանդ Աւետարանի օրինադրութիւններին, որով առաքելական հրամանն այս երկրորդ յիսնեակի մէջ, որպէս վարժարանի փակելով, վարժում էր նրանց հոգեւոր կրթութեան վարժութիւնների հրահանգներով, ըստ իսրայէլեան երբեմնի շրջացանական մաքրութեան, Աստուծոյ երեւման ժամանակ: Սայապէս նաեւ նրանք են արժանանում որդեգրութեան շնորհի՝ աղօթքի սրբութեամբ, մաքրութեան աւազանի

լոյսով. ըստ այսմ՝ սա վարժարան կոչելը բնաւ այպանելի չէ: Իսկ արդ, աւար է կոչւում, քանզի առաքելական օրինադրութիւնների վերջում՝ Տաղաւարահարաց տօնի նոյն այս օրը, Երուսաղէմում Եկեղեցու առաջին խորանը կանգնեցրին՝ այնտեղ աւազանի լուացմամբ նորընծաներին Լուսոյ Հօրը որդեգրելով եւ վերափոխելով ահարոնեան ծերացեալ պաշտամունքի հնութիւնը Քրիստոսի քահանայութեան նորոգութեան եւ գրի կերպը՝ հոգու շնորհների, եւ մարմնի թլպատութիւնը՝ մտքի մաքրութեան, եւ առօրեայ լուացումները՝ հոգեւոր լուացումների մշտնջենաւոր աւազանի մաքրութեան, եւ զոհերի եւ պատարագների ընծաները՝ հաւատացեալների բանաւոր պաշտօնի՝ անձերը վերնագոյն սեղանի վրայ բոլորապտուղ ընծայելով Բան Աստծուն: Ըստ այսմ՝ նաեւ այս տօնի օրինակն Աւետարանի լոյսով որպէս խորհուրդ պայծառակերպեցին՝ փոխակերպելով ստուերի տաղաւարը ճշմարտութեան առագաստի, եւ Իսրայէլի՝ լեռների գագաթներին տաղաւարուած անճշմարտութեան ոստասաղարթ եւ ծաղկազուարճ տօնախմբութեան [փոխարէն]՝ նորածնեալներին օրինադրեցին բարձրանալ հաւատքի լեռը՝ Երրորդութեան լոյսով պսակուած, Հոգու ճառագայթի ծիրանին հագած եւ երկնածաղիկ առաքինութեան լուսասաղարթ ոստերով քաջուղէշ եւ յարափթիթ պտղաւէտուած՝ նոր Սիոնի լուսոյ խորանում փրկութեան ելքը մշտապէս տօնելու, որպէս արդարութեամբ արդարեւ տղայացածներ եւ կատարեալ գութի հասած՝ պայծառ հաւատքով հոգիացածներ. եւ, որպէս հարսանեաց մանուկներ գալով եւ անմահ Փեսայի հետ ճաշի սեղան նստելով, լուսոյ հարսնարանում անմահութեան կեանքն են ճաշակում եւ, դասագրուած անմահների երամին, առագաստի երգերն են երգում՝ «Օրհնեալ է Տիրոջ անունով եկողը» [Մատթ. ԻԳ 39]. եւ թէ՝ «Մեր Տէր Աստուած երեւաց մեզ, ուրախութե՛մբ արէք այս տօնը» [տե՛ս Սաղմ. ՃԺԷ 27]:

Այսպէս, ըստ երկնային ակնարկութեան՝ սուրբ առաքելները, օրէնքի բոլոր ստուերատեսակ երեւմունքները քանդելով, պայծառ ճառագայթներով բացածագեցին այս տօնի ճշմարտութեան լուսոյ խորհուրդը. նոյն օրը հաւատացեալները յայտնապէս տեսան Սուրբ Հոգուն՝ խմբերով գալիս դէպի լոյսի աւազանը եւ սուրբ սեղանը՝ Աստուածորդու փրկական Մարմնի եւ Արեան աստուածային կենարար խորհրդի վրայ. սրա հետ եւ այլ աստուածաշնորհ առաքելահրաման պարգեւներ՝ նորընծայ պատարագների առի օրհնութեան եւ ողջ Երուսաղէմում բոլոր աստուածապարգեւ աւետիսների խորհուրդը կատարելու: Այս տօնի օրն իրենց մէջ բաժանեցին տիեզերքը՝ լինելու իշխաններ երկնքի ներքոյ՝ ըստ Սուրբ Հոգու կանխասացութեան՝ «Երկնատրի մօտ հաւաքել թագաւորներին» [տե՛ս Սաղմ. ԿԷ 15] եւ աւար առնել բոլորին: Ուստի միմեանց ձայնում էին միախումբ երկնատոր նահատակների աշխարհագոչ փողերով՝ ասելով. «Արդ, աւար է, ելէ՛ք տիեզերքով մէկ՝ գերութեամբ գերելու, աւար առնելու, պարգեւներ բաշխելու եւ տալու մարդու որդիներին». ինչպէս որ գրում է սրանց խորհրդապետ Պօղոսը, թէ՝ «Բոլոր մտքերը գերում ենք ի հնազանդութիւն Քրիստոսի» [Բ Կորնթ. Ժ 5]: Սրանով ցոյց տուեց, որ այս տօնն, արդ, աւար է, որը վարդաւառ է կոչում Եկեղեցին՝ այդ օրն առաքինութեան լուսերանգ եւ յուսահոտ բոցատերեւ վարդերով հարսնագգեստ պսակուելով եւ հրճուելով: Սա Առաջին Եկեղեցում առաքելալների կողմից որպէս աւետաբեր տօն օրինադրուեց, որը չի մտնում ընթերցուածների շրջանի մէջ միւսների հետ, երբ մարգարէների պատմած աստուածային տնօրէնութեան խորհուրդն է վերաձայնաբար տօնւում. քանզի ոչ թէ անցածների մասին է, ինչպիսին որ նրանք են, այլ յաւիտենական հանդերձեալն է յարազուարճ ցնծութեամբ կրում իր մէջ՝ որպէս մշտապայծառ փառքի գերակայութիւն, որը նոյնիսկ մարգարէները չճանաչեցին, ինչ այնտեղ Աստուած պատրաստել էր Իրենն սիրողների համար. քանզի սա Ութերորդ, որպէս Առաջին եւ Վերջին, Օրուայ, անթառամ մշտնջենահոս լոյսով պսակուած, յաւէտահրաշ եւ ճառագայթաւէտ տօնն է, որ սկզբնաւորում է Դատաստանի Ատեանից եւ տեւում մինչեւ անսպառ մշտանորոգ յաւիտեանները՝ տօնասէրների բացախմբերի շարքը միացնելով իր լուսաթաղանթ առագաստուած ծոցին, այստեղ մաքրուածներին բաժանելով էի հետ աստուածացածների անսահման ուրախութիւնների յարատեւողութիւնից, որը ոչ ոք չի կարող բացատրել, թէ ինչպէս կլինի, [այլ միայն]՝ Աստուած, որ ամենայն է ամենայնում:

Իսկ մենք, այս աստուածահրաշ լուսաւորութիւնների օրը տօնախմբուած, կնքենք մեր խօսքը. Քրիստոսի փառքի պայծառագգեստ լոյսով պսակուած՝ սուրբ առաքելների եւ մարգարէների խմբի հետ արարչական տնօրէնութեանը սպասաւորենք՝ այս լուծանելի մարմնի տաղաւարը մաքրութեան խորան դարձնելով: Որի մէջ Իրենն՝ միեւնոյն Քրիստոսին, ընդունելով՝ Երրորդութեան անպարագիր լուսաւորութիւնն ընկալենք մեր սրտի մէջ. եւ այդպէս լուսերամների հետ ամպերով յափշտակուենք Տիրոջն ընդառաջ՝ նոյնատիպ կերպով աստուածացած օդային տարածութիւններով՝ զուարթ եւ պայծառ կանգնելու առաջագահ դասի մէջ՝ որդեգրութեան պարգեւն առնելով նոյն Իր՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի լոյսի մէջ թագաւորողների հետ. Նրան փա՜ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գրաբարից փոխադրեց ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆԸ

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՅՈՒՆԱՐԷՆ ԲՆԱԳՐՈՎ ԱՆՑԱՑԵ «ՄԵԾԻ ԱՒՈՒՐՆ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻՆ» ՃԱՌԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ս. Բարսեղ Կեսարացին (329–379) տիեզերական Եկեղեցու խոշորագոյն հեղինակութիւններից մէկն է: Յատկապէս նշանակալից է նրա դերը Եկեղեցու բարեկարգութեան, վանական կանոնադրութեան բնագաւառում:

Թողել է մատենագրական հարուստ ժառանգութիւն, որի մի կարեւոր բաժինը հայերէն է թարգմանուել ե դարից սկսեալ: Հայ թարգմանական մատենագրութիւնը մեզ է աւանդել ս. Բարսեղի հետեւեալ երկերի հայերէն թարգմանութիւնները. Վեցօրեայ ճառեր (Թ ճառ), Պատարագամատոյց (Ե դար), Պահոց գիրք (33 ճառական միաւորներ, որոնցից «Ի Ծնունդն Քրիստոսի» նշանաւոր ճառը թարգմանուել է Է դ. Դաւիթ Տարօնացու ջանքերով), Հարցողաց գիրք (3 մաս), այլեւայլ ճառեր, թղթեր, կանոններ, աղօթքներ: Հայ մատենագրութեան մէջ այս երկերի վայելած հեղինակութեան մասին է վկայում այն իրողութիւնը, որ դրանցից շատերը լայնօրէն օգտագործուել են հայ դաւանաբանական եւ մեկնաբանական գրականութեան մէջ:

Ընթերցողներին մատչելի դարձնելու նպատակով միջնադարում

ս. Բարսեղի երկերը բաւական հանգամանալից մեկնաբանուել են: Այսպէս յայտնի են ԺԲ–ԺԳ դդ. նշանաւոր մատենագիրներ Դաւիթ Քոբայրեցու եւ Վահրամ Ռաբունու՝ Պահոց գրքի լուծմունքները: Ուսումնական նկատառումներով մեծ հայրապետի երկերի մի մասը համառօտուել է: Այդպիսիներից է Հարցողաց գրքի համառօտ տարբերակը, որ կազմել է ս. Գրիգոր Տաթեւացու աշակերտ Մատթէոս Ջուղայեցին:

Հայ եկեղեցական իրաւունքի պատմութեան մէջ կարեւոր դեր են կատարել բարսեղեան կանոնները, որոնք պատշաճ տեղ են գրաւեցնում Հայոց կանոնագրքում: Միջնադարեան Հայաստանի վանական շատ հաստատութիւններ առաջնորդուել են այդ կանոններով (Կ. Մուրադեան, Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրութեան մէջ, Երեւան, 1976, Հ. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Բ, Երեւան, 1976, էջ 1344–1399):

Հայերէն ձեռագրերն, ի շարս ս. Բարսեղի բազում երկերի, մեզ են աւանդել «Մեծի աւուրն Տեառնընդառաջին Սրբոյն Բարսեղի եպիսկոպոսի Կեսարու Կապպադովկացւոյ ի Գալուստն Տեառն ի տաճար» ճառական միաւորը (հ. Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, դար Դ–ԺԳ, Վենետիկ, 1889, էջ 333–334, Հ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Բ, Երեւան, 1976, էջ 1365–1366) չի յիշատակւում նրա երկերի նորագոյն մատենագիտութեան մէջ (M. Geerard, Clauis Patrum Graecorum, v. II, Ab Athanasio ad Chrysostomum, Bre'pols–Turnout, 1974, p. 140–178, M. van Esbroeck, Zanetti, Le Manuscript Ere'van 993. Inventaire des Pie'ces, "REA" , 1977, t. XII, p. 137 (N 100)): Ուստի պէտք է ենթադրել, որ ինչպէս նրա շատ երկերը, այս նմանապէս մեզ հասել է միայն հայերէն թարգմանութեամբ: Հրապարակումն իրականացուում է Մաշտոցի անուան Մատենադարանի NN 436 (1790 թ.), 993 (1456 թ.), 1525 (ԺԳ դ.) ձեռագրերի հիման վրայ: Ըստ որում, N 993 ձեռագրում նիւթի միջնամասը զգալիօրէն համառօտուած է: Ձեռագրերի կարճառօտ նկարագրութիւնը տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա, կազմեցին Օ. Եգանեան, Ա. Ջեյթունեան, Փ. Անթաբեան, խմբագրութեամբ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1965, էջ 319–320, 454–455, 575:

Յակոբ Քեռսէեան

ՏՕՆԱԿԱՆ

ՄԵԾԻ ԱՌՈՒՐՆ ՏԵՏՈՆԸՆԴՀԱՆՈՒՆԻՆ ՍՐԲՈՅՆ ԲԱՐՍԵՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԵՍԱՐԻՈՒ ԿԱՊՊԱԴՈԿԱՑԻՈՅ Ի ԳԱԼԼԻԱՏՆ ՏԵՏՈՆ Ի ՏԱՃԱՐ

Զամենայն տաւնախմբութիւնս եւ զարհներգութիւնս[1–2] պարտ է մեզ կատարել սաղմոսիւք եւ արհնութեամբք եւ դպրութեամբք[3] ընթերցուածոցն, որ ինչ խորհրդոյն է. եւ եւս[4–5] զհրաշափառ եւ զպայծառ եւ[6] զնախախնամաւոր Բանին մերոյ զտնաւրէնութիւն, որ առաքեցաւ ի Հաւրէ եւ[7] ի Հոգւոյն Սրբոյ եւ առ զկերպարանս ծառայի[8] յամենասուրբ Կուսէն Մարեմայ, զի ազատեսցէ զծառայս եւ փրկեսցէ զաշխարհս յանիծիցն[9] Ադամայ եւ զարիանատրսն եւ ապրեցուցանէ[10] մտեալ ընդ արիանաւք, զի զորդեգրութիւն մեք ընկալցուք զերկնաւոր Հաւրն եւ, ի ծառայութենէ զերծեալք արժանաւորք լիցուք երկնաւորաց[11] արքայութեան ի Քրիստոս Յիսուս[12]:

Արդ, այսոցիկ այսպէս եղելոց արժանաւոր[13] գոհութիւնս վերառաքեսցուք ամենեցունց Տեառն եւ Փրկչին այլ յայլմէ երանութիւն[14] ճշմարտութեան ի մի[15] բերելով զարհնութիւնս, վասնզի երգեալ[16] լինի աւուրս սաղմոս.[17] «Տեառն ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ»*: Եւ հրեշտակաց ասացեալ լինի առ հովիւսն, յորժամ ի բարձունս զփառս առաքէին եւ հաճութիւն մարդկան զեկուցանէին. «Մնաւ ձեզ,– ասէին,– Փրկիչ, որ է Աւետեալ Տէր ի քաղաքի Դաւթի[18], եւ Նա փրկեսցէ զժողովուրդս Իւր ի մեղաց իւրեանց»**, զոր եւ յաւետիսն է ուսանել Յիսուս կոչեցեալ, այսինքն[19] փրկութիւն Տեառն, որ զամենայն խորհուրդ ի տնաւրէնութեան ի յԻնքեան[20] գաղափարեալ ունի, եւ[21] ի Սիմէոնէ[22] վերաձայնի փրկութիւն[23], որ ի գիրկս ընկալաւ, որով պատրաստեցաւ ի խորհուրդս փրկութեան Եկեղեցւոյ: Եւ բազում է ուսանել զՓրկիչդ անուն ի վերայ Աւետելոյն[24] յորջորջեալ եւ՛ հրեշտակաց, եւ՛ մարդկայնոցս[25]. եւ՛ ի նորոցս որպէս տեսութեամբ[26] Հոգւոյն ազդեցութեամբ զիմանալի փրկութիւն Տեառն առձայնեցին, ի փրկելոց զանձինս ի յայտնութեան իւրում[27]: Քանզի երեւեցան շնորհքն[28] Աստուծոյ՝ փրկիչ ամենայն մարդկան, ասէ առաքեալ, որ ուսուցանէ զմեզ[30] ատել զամենայն ամբարշտութիւն եւ զաշխարհական ցանկութիւն, զգաստութեամբ եւ աստուածապաշտութեամբ կեալ[31] յաշխարհիս: Զայս գալուստ ասէ, որ երկրորդ գալստեանն ակն ունել[31–32] երանելի յուսոյն եւ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Արդ[32], այս գալուստ՝ նուաստապէս եւ փրկչաբար, իսկ երկրորդն՝ փառաւորապէս եւ աստուածաբար՝ ոչ փրկելով, այլ՝ դատելով եւ ըստ արժանեացն հատուցմունք եւ արդար դատաւորութիւն[33] սրբոց եւ անսրբոց ոմանց եւ ոմանց՝ զամաւթ յաւիտենից: Բայց ինձ բանս[34] վասն առաջին գալստեանն յառաջասացի, որ է մերձակայ տաւնս[35] եւ յայտնութիւն փրկութեան մերոյ:

Եւ զի գլուխ տաւնից է ըստ Ղուկայ աւետարանական[36] քարոզութեան, անտի սկիզբն արասցուք բանիցս սկիզբն[37] Քրիստոս Յիսուս, ընդ[37a] ճշմարտութեան ի ներքս մտցուք եւ զգեղեցկութիւն համբարեալ փրկութեան մերոյ յայտնեսցուք, եթէ յաջողեսցէ[38] Բանն զբանս, շնորհաւք լցուսցէ[39] զիմոց իմանալեացս եւ ի[40] խորհուրդ իմաստութեամբ առաջնորդեալ, որ ոչ թողցէ[41] ի վայր բերել:

«Եւ[42] իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա ըստ աւրինացն Մով-

* Սաղ. ՂԷ 3

** Ղուկ. Բ 11

սէսի, ածին զՅիսուս քառասնաւրեայ ի տաճարն յանդիման առնել Տեառն, որպէս եւ գրեալ է յաւրէնսն[43] Տեառն՝ տալ զոյգս տատրակաց կամ երկուս ձագս աղաւնեաց»*:

Ի քառասուներորդ աւուրցն[44] մանկանցն եղելոց[45], ըստ աւրինացն սրբութեան, ասէ, որ[46] ածեալ լինէին ի տաճարն սրբեալքն եւ[47] յանդիման լինէին Տեառն:

Քառասուն թիւ[48] նախամեծար իմն հնումն եւ ի նորումս եւ զքառասուն[49] տիւ զքառասուն գիշեր պահեաց Մովսէս ի լերինն[50] եւ[51] զտախտակսն քարեղէնս[52] առնու գրեալ[53] մատամբն Աստուծոյ, որ թէպէտ եւ խորտակեալ վասն անաւրէնութեանց[54] դարձեալ առնու վերստին[55] զխորտակեալն նովին թուով քառասուն[56] չափով չափեալ զպահսն, քառասուն[56ա] ամ յանապատին փորձէր զժողովուրդն, քառասուն քաղաք ապաստանից Յեսու երեւեցուցանէր ապրելոցն[56բ] ի նոսա ապաւինեալք, քառասուն աւր պահեալ՝ Եղիաս[57] Աստուծոյ երեւմանն արժանաւորի, որպէս ասի՝ քառասուն աւր Տէրն մեր[58] յետ մկրտութեան փորձեալ լինէր եւ յաղթէր[59] փորձողին: Նոյնպէս եւ աստ իմացեալ լինի քառասուներորդ թուոյն պատուեալ խորհուրդն, բայց թուի ինձ զչարչարանացն խաչին[60] ունել զաւրինակն՝ չորրորդ տասամբն[61] քառաթեւեալ եւ տախտակս աստուածածինս առնու եւ զխորտակեալսն վերստին ստանայ եւ յաւետիս զփորձեալսն հանէ յանապատէ եւ քաղաք ապաստանի լինի եւ երեւմանն[62] Աստուծոյ արժանաւոր առնէ եւ փորձութեանց հակառակորդաց յաղթաւղ լինի[63] եւ անսրբոց մաքրութիւն ստանայ, տղայոց միանգամայն եւ ամենայն եւ հասակաց ըստ աւրինացն արդարութեան սրբեալ յամենայնէ յանդիման[64] կացուցանէ Տեառն ի տաճարի փառաց սրբութեան Նորա[65] յԵրուսաղէմ, որ է մայր մեր ամենեցուն, յորս եւ զառաքինութիւնս[66] ամբարեմք եւ ոչ միայն արու, որ բանայ զարգանդ[67], առաջ Տեառն կոչեսցի, ըստ աւրինացն, այլ եւ ամենեքեան[68] իսկ, զի[68ա] չիք խտիր ոչ հրէի եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ ազատի, ոչ արուի եւ ոչ իգի, զի ամենեքեան[69] մեք[69]—[70] մի եմք ի Քրիստոս Յիսուս:

Եւ յերկաքանչիւրոցն[71] հաւասարութենէ հաւուցն՝ աղաւնոյ եւ տատրակի, որ պատարագ Տեառն յաւրէնսն հրամայէ, ուսցուք, որ ինչ խորհուրդն է. միովն յողջախոհութիւն եւ ի զգաստութիւն եւ ի պարկեշտութիւն պատարագաւ մերձաւոր[72] լինել[73] Տեառն եւ միւսովն միամտութեամբ եւ հաւանականաւն եւ բարութեամբ[74] նմանապէս պատարագել Տեառն՝ միաբանեալ ասեմ Հոգով[75] եւ մարմնով: Վասն զի երկու երկու[76] զոյգ[77] տատրակաց եւ ձագս աղաւնեացն զայս բացայայտէն պատարագ[78] ընդունելի եւ հաճոյ Աստուծոյ: Նաեւ յարանց եւ կանանց ոչ հեռի ի գիտութենէն իմացի[79], վասն զի ամենեցուն կա[80] մեզ յանդիման լինել[81] երեսացն Աստուծոյ Իւրով պատարագաւն[82]: Սոյնպէս[83] եւ Քրիստոս կատարեաց, որ գրոյն է լուծիչ եւ կատարիչ Հոգով սրբութեամբ եւ քահանայ մեծ ի վերայ տանն Աստուծոյ, զոր Աստուած հաստատեաց եւ ոչ՝ մարդ, զի մեք զորդեգրութեան առ հաւատչեայ հրաւիրելոցս ի ժառանգութիւն առցուք, որպէս խոստումն է: Յաղագս այսորիկ տնաւրինեցաւ ի կնոջէ եւ եմուտ ընդ աւրինաւք մարմնոյ եւ եղեւ[83ա] անդրանիկ ի բազում եղբայրս եւ ընծայի ի տաճարին, զի մեք հաղորդեսցուք Նորա Աստուածութեանն ըստ աճման հաւատոյ[84] տարբերութեամբք:

«Եւ ահա այր մի էր յԵրուսաղէմ, որոյ անուն էր Սիմէոն[84ա], եւ այրն այն արդար եւ երկիւղած յԱստուծոյ եւ ակն ունէր մխիթարութեան Երուսաղէմի, եւ Հոգի Սուրբ էր ի նմա: Եւ էր նորա հրաման առեալ ի Հոգւոյն Սրբոյ մի տեսանել զմահ, մինչեւ տեսցէ զԱծեալն Տեառն, եւ եկն Հոգւովն ի տաճարն»*: Առնս[85] այսորիկ անուն Սիմէոն լսի ըստ Աւետարանիս, այլ ոչ ազգ եւ տոհմ երեւի՝ յորպիսեաց[86] արդեւք. որպէս Մելքիսեդեկին եւ ոչ Ղազարուն եւ ոչ երիտասարդին, որ ի մերկուց զհանդերձսն[87] ոնՀ որ է[88], նա[89], որ մեծն է քան զայսոսիկ ամենասուրբ Կուսին ծնաւղն, ոչ ուրեք յԱւետարանսն ասացան, այլ զխաւսն այրն զվարուցն պահապանն եւ եթէ՝ յազգէ եւ ի տանէ Դաւթի: Արդ[90], Կոյսն. եւ նորա [91] ունէին[92] ծնաւղս, որպէս յիւրաքանչիւրսն է ուսանել, որ ինչ հաւր եւ Հոգւոյն է ունակութիւն կամ պակասութիւն, զի որոց պատկանաւոր դնին անունքն, զուշակումն իմն ցուցեալ դնին[93] զընդ նորաւք, որ ինչ խորհրդոյն է, որպէս Յիսուս եւ Մարիամ, եւ Սիմէոն անուամբն անուանի երկիւղած յԱստուծոյ եւ Հոգւոյն Սրբոյ ընդունակ: Մի՛ խուզեսցուք, որ ինչ լռութեան է եւ արժանաւոր եւս գոհութեան, զի ուր երկիւղ Տեառն է, անդ պահպանութիւն պատուիրանաց Տեառն եւ հոգւոյ եւ մարմնոյ մաքրութիւն եւ մերումն ամենայն չարութեան եւ աղտեղութեան, որք զինուորին ընդդէմ

---

* Դուկ. Բ 22—25

* Դուկ. Բ 25—27

չարին հոգւով եւ մարմնով:

Այսպէս նկարագրեաց[94] Աւետարանիչն զայրս[95] Սիմէոն երկիւղած յԱստուծոյ կատարեալ եւ մաքրագոյն[96] ըստ արդարութեան եղեալ ամենայնի եւ հոգւով լցեալ, որ առաւել բացափայլէ զայս, քան զոր ինչ մարմնոյն է ծանաւթք, զի ուր հոգի Տեառն է, անդ ազատութիւն է եւ պայծառութիւն եւ տեսութիւն մեծամեծաց, որք այնոցիկ են ցանկացաւղք: Եւ Սիմէոն բացափայլեալ[96ա] տեսանէր զիմանալի լոյսն իբրեւ ընդ հայելի եւ ակն ունէր մխիթարութեան յԵրուսաղեմի, որ էր յԵրուսաղէմ եկեալ հոգւովն ընդառաջ Տեառն, զի հրաման ունէր ի Տեառնէ ոչ տեսանել զմահ, մինչեւ տեսցէ զԱւծեալն Տեառն: Ո՛վ սքանչելի[97] եւ մեծախորհուրդ ծերունոյս[98] վերագոյն ըստ[99] աւրինացն եղեալ, յամենայնի բարէպաշտ եւ երկիւղած եղեալ յԱստուծոյ եւ ընդունարան հոգւոյն Սրբոյ: Հոգւով կայր յԵրուսաղէմ, հոգւով ակն ունէր մխիթարութեան Երուսաղեմի, ի հոգւոյն առեալ հրաման ոչ տեսանել զմահ, մինչեւ տեսցէ զԱւծեալն Տեառն, հոգւով գայր Երուսաղէմ[100] ի տաճարն ընդառաջ Աւծելոյն, հոգւով զմեծութիւն Աստուածութեան ի փոքր ժամու փառաւորէր հոգւովն իմանայր զնայ Փրկիչ աշխարհի եւ Տէր: Այսպիսի էր այրս այս[101] բարէպաշտութեամբ կատարեալ եւ հոգւով լցեալ, որ եւ զԱստուած արժանաւորի տեսանել ի գծուծ[102] մարմնի, հոգւոյն ազդեցութեամբ գայն, որ անտեսանելի է անմարմնոց զինուորութեանց, որ ոչ ոք ետես ի մարդկանէ, եւ ոչ տեսանել ոք[103] կարող է:

«Եւ իբրեւ ածին ծնաւղքն զմանուկն Յիսուս ի տաճարն առնել նոցա ըստ սովորութեան աւրինացն ի վերայ նորա, եւ նա ել ընդառաջ նորա եւ ընկալաւ զնայ ի գիրկս իւր»*:

Նախքան զաւրինացն սրբութիւն հոգւովն Սրբով ծանեաւ զՍրբութիւն Սրբոցն, ընդունէր ի գիրկս իւր զանսկիզբն Բան՝ ի ծոցոյ Հաւր առաքեալ, տղայապէս ի գիրկս իւր ընդունէր զեակիցն Հաւր եւ հոգւոյն Սրբոյ, որպէս զմանուկ ի գիրկս իւր ընդունէր զԱրարիչն երկնի եւ երկրի եւ որ ի նոսա արարածք իցեն[104]: Արդարեւ, Աթոռ քրովբէական երեւեալ գիրկք Սիմէոնի յերկրի, ի գիրկս ծերունոյն հանգչի ի բիւրուց հրեշտակացն աւրհնեալ: Որ անտանելին է երկնի եւ երկրի, ի գիրկս նորա պարագրի: Որ զերկինս եւ զերկիր լնու, ի գիրկս նորա

* Դուկ. Բ 27—28

ժողովի կամաւորապէս, որ զամենայն յամենայնի լնու, ի գիրկս նորա լցեալ լինի[105]: Ո՛վ փափագելի[106] գրկացն[107], որ զլոյսն անշիջանելի ունի յինքեան եւ զանհասանելի Զաւրութիւն, եւ զանանց Մեծութիւն, եւ զկենդանութիւն յաւիտենական[108], եւ զՏէրն փառաց, եւ զթագաւորն թագաւորաց[109], եւ իշխանն կենաց եւ մահու, եւ զԱստուածն ամենայն յամենայնի:

Ո՛վ խորք մեծութեան եւ մարդասիրութեան Աստուծոյ, զի վասն մեր աղքատացաւ, որ մեծատունն էր, զի մեք Նորա աղքատութեամբն ի հոգիս մեր[110] ընկալցուք զմեծութիւն Աստուածութեան Նորա:

«Եւ[111] առ ընկալաւ զՅիսուս ի գիրկս իւր Սիմէոն, աւրհնեաց զԱստուած եւ ասէ»*, որ առաքեաց զՄիածին Որդին Իւր ի փրկութիւն աշխարհի:

Աւրհնեաց[113] զՀայրն ամենակալ, որ գթացաւ յԻւր ստեղծուածս եւ Փրկիչ առաքեաց զԲանն Աստուած առ ի կեցուցանել զազգս մարդկան ի մահուանէ մեղաց: Աւրհնեաց զբոլորիցն Աստուած, որ ծագեաց զլոյս մեծ՝ լուսաւորել զխաւարեալս մեղաւք, եւ զստուերս մահու կացեալք ըստ յանցուածոցն Ադամայ:

Աւրհնեաց զէնն Աստուած եւ զերն եւ զերեւեալն որպէս զբարեբար եւ մարդասէր եւ զգթած, զի բարեհաճեցաւ ի մեզ Հայր բարերար, որ էն, եւ գթացաւ հոգին Սուրբ, գթածն եւ նախախնամաւղն մեր, որ էրն, եւ մարդասիրեաց ի մեզ Որդի, որ առ ծառայի կերպարանս եւ կերպարանաւք գտեալ որպէս մարդ երեւեալ ի գիրկս Սիմէոնի, որ էր ընդունարան Աստուածութեան, զի որ հոգւոյն բերեալ եւ շարժեալ, նոյն եւ զՈրդի ի գիրկս ընդունէր, նաեւ զՀայր ոչ ի բացէ իմացի, ուր հոգին Սուրբ եւ Որդին Միածին, անդ եւ Հայր ամենակալ, զի յորժամ զմի ոք յերիցն իմանամք, զերրորդութեան իսկութիւն ստուգեմք հաւատովք, վասն զի միաւորի այսպէս որոշմամբ եւ բաժանի առանց բաժանման, որ հրաշափառագոյն եւ անհասանելի մերոյ իմացուածոյս է ասել:

Աւրհնեաց զԱստուած Աստուած[114] եւ հաստատեաց զխնդրելին միով Աստուածութեան զխոստովանութիւն, որ ի Հայր եւ յՈրդի եւ ի հոգին Սուրբ եւ զբազմաստուած ուսմունսն ի բաց մերժեաց զմի Աստուածութեան զաւրհնութիւն, եւ զգառս եւ զպատիւ ընծայեսցէ, զի որ-

* Դուկ. Բ 28

պէս են աստուածք բազումք եւ տեարք բազումք, այլ մեզ մի է Աստուած տէրութեամբ եւ իշխանութեամբ եւ փառաւք, յորմէ ամենայն արարածք երեւելիք եւ աներեւոյթք[115]:

«Աւրհնեաց զԱստուած Սիմէոն եւ ասէ. «Արդ, արձակեա՛ց, Տէ՛ր, զծառայս Քոյ ըստ Բանի Քում ի խաղաղութիւն, զի[115ա] տեսին աչք իմ զփրկութիւն Քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդեան Քում Իսրայէլի»[116*]:

Աստանաւր երիս իմն[116ա] արձակութիւն[117] խնդրէր երանելի ծերն յամենեցունց Տեառնէ. մին՝ յաւրինացն՝ յԱւետարան, երկրորդն[118՝] ի կապանաց մեղացն[119՝] յարդարութիւն, երրորդն[120՝] ի մահկանացուացս՝ յանմահական կեանսն: Սին զՀաւրէ իմանալ, իսկ զմիւսն՝ զՈրդւոյ, եւ զմիւսն՝ զՀոգւոյն Սրբոյ: Արձակեսցէ Հայր ի ծառայութենէ աւրինացն յազատութիւն փառաց Միածնի Որդւոյն Իւրոյ[121], լուծցէ զկապանս դատապարտութեան մերոյ[122] փրկական տնաւրէնութեամբն Աստուած Բանն, նորոգեսցէ զհնութիւն հոգւոյ եւ մարմնոյ Սուրբ Հոգին[123] եւ[124] ի մշտնջենաւորսն արձակեսցէ. միոյն[125՝] շարժելոյ ի բարերարութիւն, եւ միոյն՝ մարմնանալոյ եւ փրկելոյ, իսկ միւսոյն՝ կացելոյ եւ մնացելոյ ի կեանս, որ ոչ շարժի եւ ոչ սասանի, որոց ոչ գոյ հանումն պարգեւացն տուեցելոց, որ անդէն կայանքն[126]: Այսպէս Երրորդութեան լոյսն ծաւալեցաւ[127], որ լուսաւոր առնէ զմարդիկ ի լոյս աստուածգիտութեան: Ետես[128] զՓրկիչն[129] եւ հայցէր արձակել ի խաղաղութիւն, իմացաւ զԱրարիչն կապելոց եւ խնդրէր լուծանել յաւրինաց մեղաց եւ մահու, ծանեաւ մարմնով զպատրաստեալ փրկութիւն ժողովրդոց եւ աղաչէր գտանել չյարկսն Աստուծոյ Յակոբայ ընդ արձակապէս: Գիտաց զազատիչն ծառայից եւ պաղատէր տալ զազատութեան կտակն: Ընկալաւ զխաղաղութիւն ի գիրկս իւր եւ առ ժամայն փութայր ի խաղաղութիւն: Ամփոփէր զկեանքն ի գիրկս իւր եւ ցանկայր ի կենացն զկեանս սեպհական առնուլ: Զլոյսն մեծ ունենալով ի գիրկսն եւ ընծայէր բանիւ զբանն փրկութեան զմարմնացեալ Բանն բարձրացելոյ Հաւր եւ քարոզէր զլոյս մեծ հեթանոսաց, որք ի խաւարէ կռապաշտութեան եւ յանաստուածութենէ ի լոյս ածի[130]: Քանզի երեւեալ[130ա] ի բարձանց՝ ծագեաց[131] լոյս հեթանոսաց՝ նստելոցն ի խաւարի անգիտութեան, փրկական տնաւրէնութեամբն՝ աշակերտելով զամենայն հեթանոսս[132] եւ մկրտելով զնոսա յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն

* Դուկ. Բ 29—32

Սրբոյ: Եւ պահելով զոր ինչ ասացաւն, այս է՝ լոյս ի յայտնութիւն հեթանոսաց. հաւատովն[133] եւ պայծառութիւն ոգւոց, լուծումն գիշերայրն մեղացն, փոփոխումն վարուց մարմնաւորաց, ոգւոց զհետ երթալ, զի որք հոգւով վարին, նոքա եւ որդիք լուսոյ եւ որդիք տուընջեան, եւ փառք ժողովրդեան քում Իսրայէլի, զի[134] նոցա էր որդեգրութիւն եւ փառքն եւ աւրէնքն նոցուն եւ աւետիքն: Ի նոցանէ եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ ի վերայ ամենայնի Աստուած աւրհնեալ յաւիտեանս: Եւ մինչեւ ցայժմ յԻսրայէլ փառաւք քարոզին այլ յայլմէ երեւմանց ժողովելոց ի մի ճշմարտութեան փառս ի հարցն եւ յաւրինացն եւ ի մարգարէիցն եւ յառաքելոցն, փառք ժողովրդեանն Իսրայէլի[135]: Այսպէս է ի գիրկսն ընդունէր Սիմէոն ծերունին զլուսոյ լոյս մեծ եւ զփառսն փառաց եւ սուղ բանիւք քարոզէր զմեծամեծսն Աստուծոյ ի փոքր ազգայում[136] «զլոյս ի[137] յայտնութիւն հեթանոսաց եւ փառք ժողովրդեանն Իսրայէլի»:

«Եւ էին հայր եւ մայր նորա զարմացեալ ի վերայ բանիցն, որ խաւսէին զնմանէ»*:

Ո՛վ զարմանալեացս. ո՞վ ոչ խրախասցի եւ սքանչանայ[138] ի վերայ անճառ տնաւրէնութեանն[138ա]. ոչ իմանալ եւ ոչ ասել զաւրեսցեն[139] մարդկային միտք եւ բան՝ որպէն զի անքննելի է տնտեսութեան խորհուրդք եւ անհետազաւտելի Քրիստոսի մարմնանալն, նաեւ ոչ հրեշտակաց է իմանալի, թող թէ մեզ ներեսցէ զմտաւ ածել եւ հասու լինել անհասանելւոյն, զի թէ մայր նորա զարմացեալ էր, որ ծնաւ եւ սնոյց եւ սքանչացեալ ընդ անհասութեան խորհրդոյն սխրանայր: Ո՞վ ոք ի մարդկանէ համարձակասցի իմանալ ինչ կամ ասել, զի ո՞վ գիտաց զմիտս Տեառն կամ ո՞ եղեւ նմա խորհրդակից եւ ստուգեաց զխորհուրդ տնտեսութեան, զի ոչ պարտ է ասել յաղագս անհաս տնաւրէնութեանն եւ անճառ խոնարհութեան Աւծելոյն: Զասն[139ա] այնորիկ Աստուած ի մարմնում, զի ապականացու մարմնոյս անապականութիւն շնորհեսցէ, եւ յաղագս այնորիկ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ. ընդ անշնորհս՝ բարեգործն, ընդ ապականացուս՝ անապականն, ընդ գերեալս՝ ազատեցուցիչն, ընդ նստեալս ի խաւարի՝ Արեգակն արդարութեան, ընդ աղախնոյն՝ Տէրն, ի գիրկս ծառային՝ Թագաւորն փառաց, ընդ չարչարեալս՝ անչարչարելին, ի մահու՝ կեանքն, ի դժոխս՝ աւերողն դժոխոց, ի թաղումն՝ յարութիւն: Այսպէս զմեզ կենսագործէ

* Դուկ. Բ 33

պատրաստեալ մարմնով փրկութիւն եւ լոյս աշխարհի, որպէս քարոզեաց զքառասնաւրեայս զայս Սիմէոն[140]: Բայց զինչ պարտ է Հայր ասել[141] զՅովսէփ, որ ոչ ինչ հաղորդութիւն ունէր[142] ընդ Նորայսն, որպէս մեք զԱստուած Հայր կոչեմք ոչ ըստ բնութեան, այլ՝ յաղագս[143] նախախնամողի մեզ մատակարարութեան եղելումն: Այսպէս եւ առ Յովսէփ ասասցի հայր ոչ բնութեամբ[144], այլ[145] դրութեամբ, որպէս ասիցէ ոք ընդ նոսին լեալ եւ ընդ նոսին հանդիսացեալ խորհրդածութեամբ եւ խնամածութեամբ[146] եւ սպասաւորութեամբ ընդ[147] մարմնոյն Քրիստոսի եւ մաւր նորա՝ Մարիամայ, թէպէտ եւ անուանեցան հայր եւ մայր: Գոյ եւ այլ պատճառս, որպէս թէ ի[148] զբաղումն չարին հայր եւ մայր անուանեցան, զի մի՛ ինչ ամբաստանութիւն ի փրկական խորհուրդն[149] լարեսցէ չարն, այլ վկայ կուսական[150] ծննդեանն եւ մաքրութեան Մարիամայ, քանզի արդար կոչեցաւ[151] ի հրեշտակէն: Այսպէս քարոզեցին հոգեկրացն դասքն[152], որք[153] տնաւրէնութեան[154] էին[155] խորհրդածուք: Յաղագս այսորիկ աւրհնի ընդ ամենասուրբ[156] Կուսին Մարիամայ[157] եւ Յովսէփ ի հոգեգիր[158] ծերունոյն Սիմէոնէ:

Աւրհնեաց զնոսա Սիմէոն եւ ասէ ցՄարիամ մայր Նորա վասն հրաշափառ եւ փրկական[159] ծննդեան Նորա, որ ծնաւ զՓրկիչն[160] աշխարհի եւ զլոյսն խաւարելոց, եւ՝ զՅովսէփ[161], զի[162] անճառ խորհրդոյ[163] եղեւ սպասաւոր եւ խնամածու[164]: Նաեւ յազգահամարսն[165] ասացեալ է յԱւետարանին, որ ըստ Ղուկայ ազգաբանութեան, եաւթանասներորդ եաւթներորդ թուեալ յԱդամայ մինչեւ Քրիստոս: Այլ[166] զի մի՛ առաւել քննութիւն լիցի մեզ քան զասացեալսն եւ որ ի կարգիս է, յառաջ ածցուք զբանն, զի բաւական է իմանալոյն դուզնաքեայ սերմանք բանիս, քանզի տո՛ւր պատճառս իմաստնոյն եւ իմաստնագոյն լիցի, եւ բան ընդունելի, ո՛վ իմաստուն, գովեսցէ զնայ հանճարով եւ ի նոյն յաւելցէ տէրութեամբ[167]: Իսկ Սիմէոնի բանքն[168] առ սուրբ Կոյսն ասացեալ ոչ ունի զանազանս եւ խոր իմաստս[169]. «Քանզի աւրհնեաց զնոսա Սիմէոն եւ ասէ ցՄարիամ մայր Նորա. «Ահա սա կայ ի գլորումն եւ ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայէլի եւ ի նշան հակառակութեան, եւ ընդ քո իսկ անձդ անցցէ սուր, զի յայտնեսցին ի բազում սրտից խորհուրդք»*:

Յո՞ի զայդոսիկ սքանչացաւ եւ զարմացաւ, զիա՞հդ զյառաջածեալսն[170] իբրեւ զանցելոց զայդոսիկ[171] խնդրեցեր. «Եւ ընդ քոյ իսկ անձդ անցցէ սուր, զի յայտնեսցին բազում սրտից խորհուրդք»[172]. զի եւ սակայն ոչ ինչ[173] նուազէր[174] եւ ոչ[175] տարակուսանք[176]: Զիա՞հդ կայ նոյնիսկ ի գլորումն[177] եւ ի կանգնումն, եւ զինչ նշան հակառակութեան: Եւ երրորդ՝ զիա՞հդ ընդ մարմնոյ անձն անցցէ սուր: Թուի ինձ «յանկումն[178] եւ ի կանգնումն» զոլ ասել զՏէրն ոչ անկելոց, այլ մեզ[179] վատթարացս[180], ի[181] վայր անկելոցս[182] եւ լաւագոյն կանգնելոց[183], քանզի մարմնական[184] սրբութիւնս[185] մարմնական ախտիցս մերոց մարմնական յայտնութիւն Տեառն յարուցանել ի հոգւոյն յայտնութիւն ուսուցանէ ի հոգեկան սրբութիւն զմեզ[186], որպէս ասէ Պաւղոս, թէ՝ «Մինչ տկարանամք, յայնժամ զաւրանամք»*: Ինքն տկարանայ եւ ինքն զաւրանայ. տկարանայ մարմնով ճգնել եւ զաւրանայ հոգւով ըստ յոսոյն: Սոյնպէս եւ Տէրն բազմաց զանկանելն ընձեռնէ եւ ոմանց՝ զկանգնելն, եւ այլք, որ երբեմն անկեալք էին[187], դարձեալ[188] ի վայր[189] անկանէին[190], յայտ է, թէ[191] անհաւատութեամբն միշտ գետնաքարշեալք ընդ աւձին[192] յարմարին, եւ ոչ ունի, ուստի անկցի[193] յաղագս կործանեալ[194] անհաւատութեան: Իսկ հաւատացեալն այն Աստուծոյ շնորհաւքն[195] եւ սկիզբն առնել[196] բարեգործութեան կամեցեալ[197], որ անկեալն էր ի մեղս[198], միւսանգամ[199] կանգնել եւ յարուցանել, կեալ[200] արդարութեամբ ի ձեռն[201] շնորհին անկեալն ի վատթարն ժամանակաւ եւ ի վեր յառնել, ի Քրիստոս փրկութեան հանդիպել: Եթէ ոչ անկցի թերահաւատութիւն, հաւատն ոչ կանգնի, եւ եթէ ոչ թողցի պոռնկութիւնն, մաքրութիւն ոչ նորոգի, եթէ ոչ դարձցի ցանկութիւն, ողջախոհութիւն ի մեզ ոչ ծաղկեսցէ[202]: Արդ, այդպէս[203] գլորումն եւ կանգնումն իմացիս[204]:

Իսկ ի[205] «Նշան հակառակութեան». տիրաբար նշան ծանեաք զԽաչն Քրիստոսի ասացեալ, քանզի եդ Մովսէս զաւնն պղնձի՝ նշան, այսինքն է՝ ի նշան 206 Խաչին, կարծելոց[207] որումն[208] անյայտ իրաց ցուցական տեսակ ամենեցուն, իսկ իմացական է մաքրեցելոց մտաց, վասն զի ոչ դադարեն ի լծակռուելոյ յաղագս մարմնանալոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ոմանք առնլոյ մարմին եւ ոմանք անմարմին զՔրիստոսի գալուստն համարին, ոմանք չարչարելի ասեն առնուլ զմարմինն, իսկ ոմանք՝ երեւութիւք, ոմանք՝ հանդերձ մարմնով զտնտեսութիւն լեալ, եւ այլք՝ երկնային մարմին, ոմանք՝ նախքան զյաւիտեանս զգոյութիւն, եւ կէսք՝ ի մարմնոյ սկիզբն առեալ: Յաղագս այ-

* Ղուկ. Բ 34—35

* Բ Կորնթ. Ժ.Բ 10

սորիկ նշան հակառակութեան ի Սիմէոնէ ասացեալ: Բայց «սուր» անուանէ զբանն փորձանացն, զընդհիչն խորհրդոց եւ իմանալեաց սրտից, զհատուցն մինչեւ ցորոշումն հոգւոյ եւ մարմնոյ եւ յաւդից եւ ուղղոց, զդատողն ամենայնի յամենայն ստեղծուածս, վասն զի ամենայն անձն ի ժամանակի չարչարանացն եւ խաչելութեան իբրեւ ի քննութեան իմիք եւ ի զարմանս ըստ Տեառն բանին, թէ՝ «Ամենեքին դուք գայթակղելոց էք յԻնէն»: Մարգարէանայ Սիմէոն յաղագս այսորիկ, նաեւ՝ վասն մարմնոյ, զի, մերձ կալով առ Խաչին եւ տեսանելով զեղեալսն զնախատինս զկնի Գաբրիէլի վկայութեանցն յետ անճառելի գիտութեանցն եւ աստուածային յղութեան եւ Աստուածածին լինելոյ յետ մեծամեծ զարմութեանցն եւ սքանչելեացն ցուցանելոյ, լիցի ինչ եւ ի քում անձինդ տատանումն, քանզի Տէրն վասն ամենեցուն ճաշակեաց զմահ եւ քաւարան եղեալ աշխարհի՝ զամենեսեան լուսաւորելով եւ արդարացուցանելով իւրով պատուական մարմնով եւ արեամբն, որ ի վերայ Խաչին պատարագեցաւ:

Արդ, ի քո ինքեան ի վերուստ վարդապետեցելոյ մերձեսցի ինչ որոշումն, այս է սուրն, որպէս զի յայտնեսցի ի բազում սրտից խորհուրդք, զեկուցէ, թէ յետ գայթակղութեանցն ի Խաչն Քրիստոսի եղելոյ աշակերտացն եւ նորին իսկ մարմնոյ արագագոյն բժշկութիւն զհետ երթայցէ Տեառնն ի հաստատել զնոսա ի նոյն հաւատս, քանզի այսպէս զՊետրոս տեսաք զկնի գայթագղելոյն հաստատագոյն ի Քրիստոս, զի, ի հաւատսն եկեալ, զմարդկային ապականութիւնն յանդիմանեաց, զի զաւրութիւն Տեառն ցուցցի ամենայն յամենայնի[209]:

«Եւ անդ էր Աննա մարգարէ՝ դուստր Փանուէլի, յազգէ Ասերայ: Սա ինքն անցեալ էր զաւուրքն բազմաւք կացեալ առանն ի կուսութենէ իւրմէ ամս եօթն: Եւ էր այրի ամաց ութսուն եւ չորից, որ ոչ մեկնէր ի տաճարէն, այլ պահօք եւ աղօթիւք պաշտէր զցայգ եւ զցերեկ: Եւ սա ինքն ի նմին ժամու ցնծացեալ գոհանայր զՏեառնէ եւ խօսէր զնմանէ ընդ ամենեսեան, որք ակն ունէին մխիթարութեան Երուսաղէմի»*: Ամենեցուն ծանօթ առնէ աւետարանիչն զկինն բարեպաշտօն եւ զգաւն եւ անուամբն եւ բազմամեայ այրութեամբն եւ մարգարէութեամբն[210], աղօթիւք եւ պահօք[211], որ զցայգ եւ ցերեկ պաշտէր զԱստուած եւ ոչ մեկնէր ի տաճարէն Տեառն: Սիմէոն[212] յարանց լինի քարոզ եւ մարգարէ ի փրկական տնօրէնութեան, եւ Աննա՝ ի կանանց բազմամեայ,

* Ղուկ. Բ 36—38

զի յերկուց հաստատութենէ բանից, զօր խօսեցան ի Հոգւոյն Սրբոյ ազդեցութեան: Ամենեցուն հաւատարմացի յայտնութիւն եւ գալուստ Տեառն ի տաճարն, զոր տեսին զլոյս մեծ աստուածային ի գծուծ մարմնի, քանզի Աննա շնորհ ասի՝ արժանաւորեալ այնպիսի շնորհի մարգարէութեան եւ տեսութեան որքան[213] ունէր զշնորհս գիտութեան, մինչ զի ամենեցուն բացայայտէր զմարմնացեալ Բանն ի սրբոյ[214] Կուսէն, զոր[215] յառաջագոյն մարգարէքն նախաձայնեցին իւրաքանչիւր ըստ իւրում բանի, որպէս եւ Հոգին տայր բարբառել զփրկական տնօրէնութիւնն: Եւ այնպիսի ինչ թերեւս խօսէր ընդ այնսն, որք ակն ունէին մխիթարութեան Երուսաղէմի ոչ ի մարգարէիցն, որք աստ երեւեցան, եւ ոչ՝ ի հրեշտակաց, այլ ինքն Տէրն եկն ի փրկել զմեզ՝ զմեղաւորքս փրկութեան հոգեբարձուն եւ անժամանակ յաղագս մեր տղայաբար երեւեալ, դարձարո՛ւք, որդի՛ք հեռացեալք, ի Տէր, որք ակն ունիք մխիթարութեան Երուսաղէմի, զի սաստեսցէ ձեզ եւ հովուելով հովուսցէ զձեզ իմաստութեամբ, որպէս եւ խօսեցան մարգարէիք եղոյց[216] Տէր զփրկութիւն իւր, առաջի ամենայն[217] ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր, եւ որ զհետ սոցա տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ: Այսոքիւք խօսեցեալ լինի մարգարէուհիսն առ այնք, որք կան ունէին փրկութեան[218] Երուսաղէմի, զփրկութիւն[219] Տեառն առցեն հրաւիրեալքն ի ժառանգութիւն առ հաւատչեայ արքայութեան, վասն զի տեսին զքառասունօրեայ տղայ ոչ որպէս երեւին, այնպէս տեսեալ, այլեւ փառացն, որ ի նմայն էր, ծագէր եւ լուսաւորէր զտիեզերս, տեսանէր հոգւոյն ազդեցութեամբն, զի ի հեռուստ տեսին զնա եւ ցնծացան, վասն որոյ գոհանայր ողջախոհն եւ բազմամեայ այրին՝ երկոտասներորդ եօթներորդ թուովն պատուեալ, որ եւ մարգարէուհին կանխեալ յաղօթս զցայգ եւ զցերեկ ոչ մեկնէր ի տաճարէն, սորայս հաւատացի մարգարէութիւն, որ յաղագս մարմնացելոյ Բանին խօսեցեալ եղեւ՝ գոհանալով զՏեառնէ Աստուծոյ: Արդ, նոքա տեսին զանտեսանելին ի մարմնի եւ ի բանն ի ստեղծուածի, զլոյսն ի նիւթականիս ծածկեալ քարոզեցին զփրկական գալուստն, եւ դուք այսպէ՛ս հաւատացէք ի Տէր:

«Եւ իբրեւ կատարեցին զամենայն ըստ օրինաց Տեառն, դարձան անդրէն ի Գալիլեայ ի քաղաքն իւրեանց Նազարէթ: Եւ մանուկն աճէր եւ զօրանայր իմաստութեամբ, եւ շնորհքն Աստուծոյ էին ի վերա նո-

բայ»*:

Խորհրդոյն, որ է ճշմարտութիւն եւ զօրինաւոր սրբութիւն մարմնոյ ի հոգոյ սրբութիւն. սրբութիւն հոգեւոր աւազանին եւ զընծայաբերութիւն անդրանկութեան ի խորհուրդ բարէպաշտութեան առաքինութեամբ յարմարմամբ ի վեր առաքէ յատուկ իւրոյ Հօրն հանդերձ օրհնութեամբ եւ տայ պատարագ զողջախոհութիւն եւ անմեղութիւն զհոգի եւ զմարմին միաբանեալ, որպէս զհաւուցն զայնոսիկ ասէ զբնութիւն եւ զբարօրութիւն, որ ըստ օրինացն պատարագէր: Եւ դարձան ի քաղաքն իւրեանց Նազարէթ՝ Մաքուր՝ ըստ երբայեցւոյն, այնպէս ածեալ լինի յօրինաւոր սրբութենէն յանուանեալ սրբութենէն, որ ըստ Հոգւոյն է, զի լցցի բանն մարգարէին, թէ նազարեցի կոչեսցի, այսինքն՝ մաքուր անուանեալ եւ Տէր մաքրութեանց:

«Եւ մանուկն աճէր եւ զօրանայր լի իմաստութեամբ»**: Այսպիսի ինչ էր իմանալ, զի Աստուածութիւն ի մարմնի եկաց ծածկեալ: Աճման մարմնոյն անսայ եւ զօրանալոյ եւ իմաստութեան, զի հաւատարիմ լիցի մարդեղութիւն եւ առ սակաւ սակաւ զօրութիւն եւ իմաստութիւն, եւ զօրութենէն Աստուածութիւն մեզ ցուցցէ, զի մի պակուսցէ զտկարացեալ լոյսն, եւ այնպէս հաւատարիմ լիցի տնտեսութիւն, թէ՝ «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նորա՝ լի շնորհօք եւ ճշմարտութեամբ»***: Յաղագս այսորիկ առ սակաւ սակաւ ընդելացուցանէր զարարածս իւր Տէրն, որպէս առաւօտն երեւեալ, եւ ապա առ սակաւ սակաւ ճառագայթից արեգականն զօրանայ լոյսն, եւ ծագէ արեգակն լուսաւորել զերկիր: Ըստ այնմ իմասցիս եւ զԱստուած Բանն ի ներմարդութիւնս, մանաւանդ՝ ի վեր քան զօրինակս անհասութեամբ անքննին երեւեալ:

«Եւ շնորհք Աստուծոյ էին ի վերայ նորայ»****, ոչ՝ որպէս մարդոյ յատուկ, այլ՝ որպէս Աստուծոյ տնօրինեցելոյ՝ շնորհօք բացափայլեալ հաւատացելոց, որք զաչս մտացն ունին մաքրեալք, վասն զի շնորհք աստուածային ի մարմնի երեւեալ ի ծայրագոյն խոնարհութեան, զի շնորհեսցէ մարդկան զլուծումն դատապարտութեան մեղաց, քանզի երեւեցան շնորհքն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան, որպէսզի,

* Դուկ. Բ 39—40
** Դուկ. Բ 40
*** Յովհ. Ա 14
**** Դուկ. Բ 40

սրբեալք ի մեղաց, մնասցուք ի շնորհսն՝ առաւելեալք ի նմին զոհութեամբ: Եւ Մարիամ զամենայն բանս զայսոսիկ պահէր եւ խելամուտ լինէր՝ ոչ ի տախտակս քարեղէնս, այլ ի տախտակս սրտին գրէր, ոչ՝ մրով, այլ՝ հոգով, զի իմաստուն գոլով յամենայնի ողջախոհ եւ ամենաօրհնեալ Կոյսն. նման նմա ոչ եղեւ յամենայն ազգս, վասնզի ոչ այլ ուրեք Աստուած իմանի Հոգւով յղութեամբ, բայց միայն՝ առ Աստուածածին Կոյսն. յաղագս այնորիկ երեւեցաւ ի բոլորից ոչ միայն մարմնականաց, այլեւ՝ յանմարմնոց դասուց, զի նովաւ յայտնեցաւ խորհուրդն, որ ծածկեալն էր, եւ արար խաղաղութիւն յերկինս եւ երկրի, հրեշտակաց եւ մարդկան[220]: Արդ, զամենաօրհնեալ սուրբ[221] Կոյսն օրհնեսցուք[222], բարեհամբաւեսցուք[223], եւ նախանձաւո՛ր լերուք ողջախոհութեան[224] եւ մաքրութեան նորա, որք կուսութեամբ նահատակիք, ա՛րք եւ կանա՛յք[225], զի հասարակաց է պսակն եւ խոստումն, եւ առ նա հաղորդութիւն ունել[226] մաքուր կուսութեամբ՝ ճգնատրելով[227] ի մերձակայիս, զի մարմնաւոր[228] ինչ հասցուք երանութեանց նորին յաւիտենականին[229]: Նաեւ զՍիմէոն եւ զԱննայ ոչ արտաքս թողցուք յորդորականս ծերոց եւ այրեաց ծերոց զգաստ լինել երկիւղածութեամբ եւ արդարութեամբ զհոգի եւ զմարմին տաճարացուցանել Հոգւոյն Սրբոյ, զի զՔրիստոս ընկալցուք ոչ ի գիրկս միայն, այլեւ՝ ի սիրտս պատուական մարմնով եւ արեամբն, որպէսզի արձակեալք կապանաց մեղաց ի խաղաղութիւն եւ ի կենդանութիւն յաւիտենական: Եւ այրիք նովին[230] չափով չափեալ ամաւ զողջախոհութիւն հանդերձ զԱստուած պաշտել զցայգ եւ զցերեկ ի տաճարի փառաց սրբութեան նորայ եւ մի խաւսել զոր ինչ ոչ է պիտոյ եւ ոչ պաշտի ի շինութիւն հաւատոյ, այլ՝ որ ինչ մխիթարութեան է եւ հանդերձեալ յուսոյն, որ ի Քրիստոս Յիսուս, եւ յամենայնի զոհացա՛ւք լինիջիք, զի այսու կարասցուք ամենեքեան հասանել հանդերձելոց բարեացն ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր: Ընդ որում Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂԲԻՒՐՆԵՐ

A= ձեռ. 1525, թ. 152բ—160բ:
B= ձեռ. 436, թ.138ա—141բ:
C= ձեռ. 993, թ. 178ա—180ա:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԽՈՐԱԳԻՐ B Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու ի գալուստ Տեառն ի տաճարն ի մեկնութենէ Ղուկայ Աւետարանի ի տատրակն եւ յաղաւնի: C Ի մեծի ատուր Տեառն ընդառաջին՝ երանելւոյն Բարսղի արքեպիսկոպոսի Կեսարու Կապպադովկացւոյ ի Ղուկասու Աւետարանին մեկնութենէն: ՎԵՆԵՏԻԿ՝ Ի մեծի ատուրս գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի տաճարն քառասնաւուրեայ՝ սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկեցւոյ ասացեալ [Հ.Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, դար Դ–ԺԳ, Վենետիկ, 1889, էջ 333–334]:

ԲՆԱԳԻՐ

1 BC *չիք* եւ զաւրհներգութիւնս: 2 B աւրհնութեամբ: 3 AC դրութեամբք: 3–4 AB ինչ է: 4–5 B *չիք* եւս A եւս պայծառ եւ հրաշափառ: 5 AC *չիք* եւ: 6 AB Բանն Տեառն [A *չիք* Տեառն] եւ Աստուծոյ մերոյ *փխ* Բանին մերոյ զտնաւրէնութիւն: 7 A *չիք* ի Հաւրէ եւ: 8 AB զծառայի կերպարանս: 9 A ի նգովիցն *փխ* յանիծիցն: 10 A ապրեցուսցէ: 11 A երկնից: 12 AB Հոգին Սուրբ *փխ* Քրիստոս Յիսուս: 13 C երանաւոր ինչ *փխ* արժանաւոր: A արժանաւորս: 14 B վարեալ երեւմանց *փխ* երանութիւն: 15 B իմն: 16 AB Քանզի երգեցեալ: 17 B սաղմոսս: 18 C *չիք* ի քաղաքի Դաւթի: 19 B այսինքն է: 20 B յինքն: 21 A նաեւ: 22 A Սիմեովնէ: 23 B գրութիւն: 24 C Աւծելոյ: 25 C տեսութեամբք: 26 A մարդկան: 27 B *չիք* ի փրկելոց... իւրում: 28 B երեւեցան շնորհքն: 29 C *չիք* ամենայն: 30 C մեզ: 31 AC կեցցուք: 31–32 B ունել եւ: 32 AB *չիք* արդ: 33 A ըստ... դատաւորութեան: 34 B Բան: 35 A տաւնիս: 36 C աւետաբանութեան: 37 B *չիք* սկիզբն: A սկիզբն բանիցս: 37ա B ըստ: 38 BC աջողեսցէ: 39 C կալցի: 40 B *չիք* եւ ի: 41 AC թողու: 42 C *չիք* եւ: 43 B յաւրէնս: 44 C քառասնորդ ատուր: B քառասնորդում ատուրցն: 45 B *չիք* եղելոց: 46 B որ եւ: 47 C եւ Տեառն: 48 B թիւ: 49 *միշտ* Խ: 50 B սոյնպէս ի Քորեք լերինն *փխ* Մովսէս ի լերինն: 51 C *չիք* եւ: 52 AC աւրինացն: 53 C գրեալս: 54 A անաւրինելոցն: 55 C վերստին առնու: 55–56ա A զքառասուն: 56բ A երեւեցուցեալ ապրեցելոցն: 57 B Հեղիաս: 58 B *չիք* մեր: 59 BC լինի եւ յաղթեալ: 60 B զչարչարանացն Խաչի: 61 B տասամբք: 62 B երեւման: 63 B առնէ *փխ* լինի: 64 B յանդիման Տեառն: 65 C *չիք* Նորա: 66 B զառաքինութիւն: 67 B զարգանտ: 68 B ամենեքին: 68ա C *չիք* զի: 69 A ամենեքին: 69–70 B *չիք* մեք: 71 C յիւրաքանչիւրոցն: 72 A մերձատրս: 73 AC առնել: 74 B բարատրութեամբ: 75 C Հոգւով ասեմ: 76 AB երկուքն եւ երկուք *փխ* երկու երկու: C երկու երկու զոյգք: 77 B զոյգ ձագ: 78 A եւ պատարագ: 79 C իմացիկ է: 80 B *չիք* կա: 81 B լինել կայ: 82 B պատարագաւ: 83 B Զայն *փխ* սոյնպէս: 83ա C եղեալ *փխ* եւ եղեւ: 84 B հաւատոց: 84ա B Սիմեովն [*միշտ*]: 85 A Առն: 86 B յորպիսեան: 87 B զհանդերձն: 88 B *չիք* է: 89 B նա է: 90 AC այլ: 91 C տոքա: 92 B ունին: 93 AB ցուցանին: 94 AC նկարագրէ: 95 B զայրս զայս անուն: 96 B մանկագոյն *փխ* մաքրագոյն: 96ա A բաց փառաւք: C Բացեալ փառաւք *փխ* բացափայլեալ: 97 C Սքանչելոյ: 98 B մեծի խորհրդոյ: C ծերոյս: 99 B ընդ: 100 C *չիք* յԵրուսաղէմ: 101 C *չիք* այս: 102 B գձուն: 103 B *չիք* ոք: 104 C *չիք* ի գիրկս իւր... արարածք իցեն: 105 B լնու ի գիրկս նորա լցեալ լինի [ժողովի կամաւորապէս–ը *ջնջուած*]: 106 B փափաքելի: 107 AB գոգոյն: 108 C *չիք* եւ զանանց... յաւիտենական: 109 B հրեղինաց *փխ* թագաւորաց: 110 B գիրկս *փխ* հոգիս մեր: 111–115 C Նորա զխորհրդովն Աստուծոյ զՈրդին ի գիրկս ընդունի զՀայր ոչ ի բացէ իմասցիս, զի որ Հոգին Սուրբ է եւ Որդին Միածին, անտ եւ Հայր ամենակալ, զի յորժամ զմի յերիցն իմանամ զԵրրորդութեան իսկութիւն ստուգեմ հաւատով, վասն զի միատրի այսպէս որոշմամբ եւ բաժանի առանց հատանելոյ, որոյ հրաշափառագոյն է անհասանելի մերոյ իմացութեանս *փխ* Եւ առընկալաւ... եւ աներետոյթք: 113 A եւ աւրհնեաց: 114 B *չիք* Աստուած: 115ա–116 C *չիք* զի տեսին աչք իմ... Իսրայէլի: 116ա B *չիք* իմն: 117 B արձակմունս: 118 C երկրորդն: 119 C մեղաց: 120 C *չիք* երրորդ: 121 C *չիք* Իւրոյ: 122 C *չիք* մերոյ: 123 B Հոգին Սուրբ: 124 C *չիք* եւ: 125–126 C *չիք* միոյն... կայանքն: 127 B ծագեալ *փխ* ծաւալեցաւ: 128–130 C *չիք* ետես... ածի: 129 A Փրկիչն: 130ա B Վասն զի երեւի: 131 B եւ ծագէ: 132 C *չիք* աշակերտելով... հեթանոս եւ: 133 B հաւատու: 134–135 C *չիք* զի նոցա... Իսրայէլի: 136 C Այսպէս ծերունին Սիմեոն ի փոքր տղայում տեսանէր *փխ* Այսպէս ի գիրկսն ընդունէր... փոքր տղայում: B ծերունին Սիմեոն ի լուսոյ զլոյսն մեծ եւ ի փառաց զփառսն եւ... զփոքր տղայ: 137 AB *չիք* ի: 138 A սխրասցի եւ սքանչասցի: 138ա B յայտնութեան: 139 B զաւրասցի: 139–140 C *չիք* Վասն... Սիմեոն: 141 C ասել հայր: B ասել սմա: 142 B ունի: 143–144 C *չիք* յաղագս... բնութեամբ այլ: 145 B ըստ բնութեան: 146 B խնամակալութեամբ: 147 B *չիք* ընդ: 148 B *չիք* թէ: 149 C փրկչական ծնունդն: 150 B փրկական *փխ* կուսական: 151ա B կոչի: 152 C անձինք: A բանք *փխ* դասքն: 153 B որք եւ: 154 A տնտեսութեանն: 155 B եւ են *փխ* էին: 156 C սրբոյ: 157 B *չիք* Մարիամայ: 158 B *չիք* հոգեկիր: 159 C փրկական եւ հրաշափառ: 160 B ի փրկութիւն *փխ* զՓրկիչն: 161 B Յովսէփ: 162 B զի այնպիսի: 163 C ծննդոյ: 164 B *չիք* եւ խնամածու: 165 B յազգահամարին: 166–167 C *չիք* Այլ... տէրութեամբ: 168 C բանք: 169 C զանազան եւ կամ խորինս *փխ* զանազանս... իմաստս: 170 B զյառաջեալսն: 171 B զանցեալս [*չիք* զայդոսիկ]: 172 B *չիք* զի... խորհուրդք զի: 173 C ինչ ոչ: 174 B նուազէիր: 175 B ինձ: 176 B տարակուսանս: 177 B նոյն իմն յանկումն *փխ* կայ... գլորումն: 178 C յանկումն գոլ *փխ* յանկումն եւ ի կանգնումն: 179 B մեր: 180 C վատթարաց: 181 B զի: 182 B անկե-

լոց: 183 B *չիք* եւ լաւագոյն կանգնելոց: 184 B մաքրական: 185 B սրբութիւնս ի: B Տեառն յայտնութիւն ուսուցանէ ի հոգեկան սրբութիւն զմեզ *փխ* մարմնական յայտնութիւն: 186 B անկեալն *փխ* զմեզ: 187 C զի այլ էին երբեմն անկեալք *փխ* եւ այլք... էին: 188 B եւ դարձեալ: 189 B *չիք* ի վայր: 190 B անկանին: 191 C թէ որ: 192 C անձին *փխ* աւձին: 193 B կործանեսցի: 194 B կործանմանն: 195 B հաւատացեալ յԱստուած շնորհիւն: 196 B առնելով: 197 B կամելով: 198 B *չիք* ի մեղս: 199 C *չիք* միւս անգամ: 200 B *չիք* եւ յարուցանել: 201–202 C եւ կանգնել ի Քրիստոս գիտութեամբ *փխ* ի ձեռն ծաղկեսցէ: 203 B *չիք* Արդ: B այսպիսի: 204 C կալցի: 205 B *չիք* ի: 206 C *չիք* նշան: 207 C գործելոյ: 208–209 C *չիք* ուրումն յամենայնի: 210 C *չիք* մարգարէութեամբ: 211 C պահաւք եւ աղաւթիւք: 212–213 C *չիք* Սիմէոն... որքան [C այնքան]: 214 B *չիք* սրբոյ: 215–216 C *չիք* զոր յառաջագոյն... մարգարէիւք: 217 C *չիք* իւր ամենայն: 218 B մխիթարութեան *փխ* փրկութեան: 219–220 C *չիք* զփրկութիւն Տեառն առցեն... հրեշտակաց եւ մարդկան: 221 A *չիք* սուրբ: 222 C *չիք* բարեհամբաւեսցուք: 223 A երանեսցուք: 224 C լիցուք: 225 C *չիք* արք եւ կանայք: 226 B *չիք* ունել: 227–229 C զի հասցուք երանութեանցն, որ յափտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յափտեանս յափտենից [շար չիք] *փխ* ճգնաւորելով... յափտենականին: 228 BC մասնաւոր *փխ* մարմնաւոր: 230 BC նոքաւք:



Աստուածաբանական
ուսումնասիրութիւններ

Սեպուհ ծայրագոյն վարդապետ Սարգսեան

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ԾԷՍԵՐԸ

(Շարունակութիւն)

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ձեռնադրութիւնը կամ կարգ քահանայութեանը այն խորհուրդն է, որով Աստուծոյ եւ Քրիստոսի Եկեղեցւոյն ծառայութեան կոչուած անձը ձեռնադրութեամբ եւ օծութեամբ Սուրբ Հոգւոյն շնորհներն ու նուիրապետական կարգ կը ստանայ՝ խորհրդագործելու, Քրիստոսով փրկութիւն շնորհելու ու նոր կեանք պարգեւելու, այլեւ Քրիստոսի Աւետարանը քարոզելու եւ ուսուցանելու, ժողովուրդը ապաշխարութեան հրաւիրելու ու նաեւ շնորհ փոխանցելու: Քրիստոս Իր տնօրինական առաքելութեան ընթացքին ընտրեց Իր աշակերտները եւ այդ իշխանութիւնը տուաւ անոնց: Քրիստոսի առաքեալներն ալ, իրենք իրենց կարգին, Պենտեկոստէի օրը, Սուրբ Հոգիով լեցուելէ ետք, նոյն այդ իշխանութիւնը փոխանցեցին իրենց անմիջական յաջորդներուն, ահա թէ ինչպէս անընդհատաբար շարունակուեցաւ ու կը շարունակուի այդ իշխանութիւնը:

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. ինչ որ կապէք երկրի վրայ, կապուած պիտի ըլլայ երկնքի մէջ» [Մատթ. ԺԸ 18], «Իւրաքանչիւր Եկեղեցիի վրայ անոնց համար երէցներ ձեռնադրեցին եւ, ծոմ պահելով ու աղօթք ընելով, յանձնեցին զանոնք Տիրոջը, Որուն հաւատացեր էին» [Գործք ԺԴ 22]: Տ. Սահակ քհնյ. Սարգսեանը հետեւեալ բառերով կու տայ սահմանումը ձեռնադրութեան. «Քահանայութեան կարգն է սրբազան խորհուրդ Եկեղեցւոյ՝ սահմանեալ ի հնումն աստուածակարգ սահմանադրութեամբ ի ձեռն Մովսէսի եւ ի նորումս՝ նոր նորոգեալ եւ հաստատեալ ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, որով ընծայեալը ձեռնադրութեամբ եպիսկոպոսին կը կնքուի շնորհօք Սուրբ Հոգւոյն՝ քահանայ նորոյ ուխտիս՝ ի գործ պաշտման նուիրագործութեան և Եկեղեցւոյ եւ զՀոգին Աստուծոյ զօրավիգն ունելով քարոզել զբանն կենաց՝ հովուել զհօտ Փրկչին եւ մակաղել զոչխարսն յաւետարանական փարախ երկնաւոր Հօտապետին»*:

Հին կտակարանեան պատմութեան մէջ քահանայական կոչումն ու պաշտօնը վերապահուած էր միայն յատուկ դասակարգի մը, որ էր Ահարոնի ցեղը. «Քեզի մօտեցուր քու եղբայրդ Ահարոնը իր որդիներուն հետ Իսրայէլի որդիներու մէջէն, որպէսզի ինծի քահանայութիւն ընեն» [Ելից ԻԸ 1]: Մովսէս մարգարէի միջոցով Ահարոնն ու իր որդիք քահանայութեան կոչուեցան եւ իբրեւ այդպիսիներ եղան միջոցներ Եհովայի եւ մարդոց միջեւ. նոր ուխտով Քրիստոս Ինք որպէս քահանայապետ տուաւ նոր իմաստ եւ տարողութիւն. քահանայութիւնն այլեւս սահմանափակուած չմնաց միայն Ահարոնի ցեղին մէջ. որեւէ ճշմարիտ հաւատացեալ ինքնընծայման արարքով, առաքելական յաջորդութեամբ ձեռնադրութեան շնորհը ընդունելով, կրնայ քահանայ ըլլալ: Քրիստոս իբրեւ քահանայապետ Իր առաքեալներուն իշխանութիւն տուաւ սպասաւորներ կարգելու Եկեղեցւոյ մէջ. այսպէս, առաքեալներ Եկեղեցւոյ մէջ կարգեցին առաքեալներ, մարգարէներ, վարդապետներ, աւետարանիչներ, հովիւներ, առաջնորդներ, եպիսկոպոսներ կամ տեսուչներ, երէցներ, քահանաներ եւ սարկաւագներ, երբեմն ալ՝ սարկաւագուհիներ:

Ձեռնադրութեան խորհուրդը կ'իրագործուի արժանաւոր նուիրեալի, ընծայեալի ընտրութեամբ եւ ապա ձեռնադրութեամբ յետ քահանայական կոչումին պահանջած բոլոր տուեալներու լրացման: Ձեռնադրուողը անշուշտ Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակ պէտք է ըլլայ եւ անպայման մկրտուած ու դրոշմուած եւ եկեղեցական ասպարէզին ատակ: Ձեռնադրուող ենթական հարկ է, որ լրացնէ հիմնական կարգ մը տուեալներ, որպէսզի հնարաւոր ըլլայ իր ձեռնադրութիւն.

1. Մարմնական կատարելութիւն եւ խելամիտ չափահասութիւն. հոգեւոր առաքելութեան ծառայութեան ձեռնարկող անձը պէտք է ֆիզիկապէս անթերի ըլլայ որպէս ցոլացումը իր հոգեւոր կատարելութեան: Ֆիզիկական կատարելութիւնը պայման էր նաեւ Հին ուխտի մէջ այն անձերու համար, որոնք պիտի քահանանային... Տէրը խոստացաւ Մովսէսին՝ ըսելով. «Խօսէ՛ Ահարոնին ու ըսէ՛. «Քու սերունդէդ իրենց ազգերուն մէջ ով որ իր վրայ արատ մը ունենայ, թող չմօտենայ Աստուծոյ հացը մատուցանելու, վասնզի արատ ունեցող մարդ մը բնաւ պէտք չէ մօտենայ. կոյր մարդը, կաղը կամ ակրձունչը կամ իր անդամներուն մէջ աւելորդ բան մը ունեցողը... Ահարոն

* Քննական կրօնագիտութիւն, Տ. Սահակ քհնյ. Սարգսեան, Կ. Պոլիս, 1897, էջ 932

քահանային սերունդէն արատ մը ունեցող մարդը Տիրոջը պատարագները մատուցանելու պէտք չէ մօտենայ, քանզի, արատաւոր ըլլալով, իր Աստուծոյն հացը մատուցանելու պէտք չէ մօտենայ» [Ղեւ. ԻԱ 16–18, 21]:

2. Մտաւոր-ու բարոյական պատրաստութիւն. առանց ճշմարիտ գիտութեան, աստուածաբանական համապատասխան ուսմանց, Ս. Գրոց հմտութեան կարելի չէ երեւակայել Եկեղեցւոյ ձեռնադրեալ պաշտօնեան: Տգէտը պէտք չէ ձեռնադրել, եւ ասիկա հիմնական պայմաններէն մէկն է, զոր անտեսել կարելի չէ:

3. Աստուածային կոչում, այսինքն՝ այն, որ ի ներքուստ կ'ըզգայ, թէ ինք կոչում ունի քահանայութեան: Առաքեալը կ'ըսէ. «Որովհետեւ ով որ կը պարծենայ, Տիրոջմո՛վ թող պարծենայ. քանի որ ընտրեալը ան չէ, որ ինքզինք կը ներկայացնէ, այլ՝ ան, զոր Տէրը կը ներկայացնէ» [Բ Կոր. Ժ 18]: Ձեռնադրութեան ատեն ընծայեալին կը հարցուի, թէ կամատրաբա՞ր յանձն կ'առնէ կոչումը, թէ՝ ոչ:

4. Ժողովուրդի ձայնը, այսինքն՝ միակամ ընտրութիւնը ամբողջ Եկեղեցւոյ անդր, որ պիտի կոչուի հովւութեան. երբ աստուածային կոչումը ճշմարիտ է ու սրտանց վստահաբար, որ Աստուած կը յաջողացնէ ժողովուրդի ընտրութիւնը եւս:

5. Յանձնառութիւն՝ հետեւելու Հայաստանեայց Եկեղեցւոյ ուղղափառ վարդապետութեան եւ ս. հայրերու ուսուցումներուն՝ մերժելով միաժամանակ բոլոր աղանդաւորական շարժումներն ու հերետիկոսութիւնները:

6. Յանձնարարութիւն անձանձրոյթ եւ հանապազ լինել քարոզիչ աստուածային ճշմարտութեան եւ՛ խօսքով, եւ՛ գործով. հարկ է առաջնորդուիլ Աստուածաշնչով եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետութեամբ ու աւանդութեամբ:

Վերոյիշեալ տուեալները լրացնող թեկնածուն կը ներկայանայ եպիսկոպոսին՝ ձեռնադրութեան համար: Ձեռնադրութեան խորհուրդն ալ մկրտութեան ու դրոշմի նման անկրկնելի է եւ անջնջելի:

ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՒ ԱՆՈՐ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Նուիրապետական կարգը երեք գլխաւոր աստիճաններ ունի՝ սարկաւագ, քահանայ եւ եպիսկոպոս:

Ա. Սարկաւագութիւն

Սարկաւագութիւնը Եկեղեցւոյ առաջին աստիճանն է՝ հիմնուած նոյն ինքն առաքեալներու կողմէ Եկեղեցւոյ տնտեսական գործերուն հսկողութեան եւ այրիներուն ու աղքատներուն հոգածութեան համար. արդէն սարկաւագ կը նշանակէ սպասաւոր, սպասաւորութիւն. հետագային սարկաւագի պաշտօնը սահմանափակուեցաւ Եկեղեցւոյ մէջ յընթացս ս. Պատարագի, պատարագիչի սպասարկելուն մէջ: Ան իրաւունք ունի Աւետարան կարդալու եւ վերաբերում ընելու:

Սարկաւագները կրնան ըլլալ կուսակրօն կամ ամուսնացեալ. ընդհանրապէս վանքերուն մէջ ապրողները կուսակրօնութեան ուխտ կատարած կ'ըլլան եւ հետագային ալ կ'ընդունին քահանայական, կուսակրօն քահանայութեան կոչումը: Սարկաւագութիւնէն առաջ կան դպրութեան հետեւեալ աստիճանները, որոնց ընդունումէն ետք միայն ընծայեալը սարկաւագ կրնայ ձեռնադրուիլ. այդ աստիճաններն են՝ դռնապան, ընթերցող, երգմնեցուցիչ, ջահընկալ (լուսարար) եւ կիսասարկաւագ կամ ուրարակիր: Այս օրերուն վերոյիշեալ աստիճանները գործնականօրէն դադրած են որպէս առանձին պաշտօններ:

Բ. Քահանայութիւն

Քահանան Եկեղեցւոյ խորհուրդները, աստուածային պաշտամունքներն ու արարողութիւնները կատարող անձն է եւ հովիւը, որ միեւնոյն ժամանակ կը ներկայացնէ Քրիստոսը ս. Խորանին վրայ. անոր համար է, որ ըսինք՝ քահանայական ձեռնադրութիւն ընդունելէ առաջ թեկնածուն պէտք է լրացնէ հիմնական պայմաններ, որպէսզի կարենայ ճշգրիտ եւ ճշմարիտ քահանայութիւն ընել:

Մեր Եկեղեցւոյ մէջ ունինք ամուսնացեալ եւ կուսակրօն քահանայութեան դրութիւնը: Ամուսնացեալ քահանան պէտք է, որ ձեռնադրութենէն առաջ ամուսնացած ըլլայ, իսկ կուսակրօն քահանաները, որոնք աբեղայ կը կոչուին, կը բնակին վանքերու մէջ եւ կը կրեն վեղար:

Կուսակրօն քահանայութեան կարգ ունեցողին կը տրուի վարդապետական եւ ծայրագոյն վարդապետութեան մասնաւոր իշխանութիւն, որով իրաւունք կը տրուի իրեն ուսուցանելու, քարոզելու, վարդապետելու մասնաւոր իրաւասութիւն: Այս իշխանութիւններու տչութեան յատուկ կանոններ եւ արարողութիւն ունի մեր Եկեղեցին. վարդապետութեան աստիճաններ տասնչորս են. առաջին չորս աստիճանները կը կոչուին մասնաւոր վարդապետութիւն, իսկ վերջին մնացեալ տասը՝ ծայրագոյն վարդապետութիւն:

Վարդապետական աստիճանները իրենց ներկայ ձեւին մէջ կու գան ԺԴ դարէն: Հին ժամանակ վարդապետական իշխանութիւնը ծայրագոյն կամ մեծ վարդապետները կու տային. այժմ այդ վերապահուած է միայն եպիսկոպոսներուն: Այս աստիճանները կը տրուին տարիներու ընթացքին յետ համապատասխան առարտաճառերու ներկայացման պատկան մարմին-

ներում: Այրիացած քահանաներում ալ վեղար կը տրուի, երբ անոնք ուխտ կ'ընեն կուսակրօն ըլլալու: Այդպիսիները կը կոչուին Շուշտակ վարդապետներ:

Գ. Եպիսկոպոսութիւն

Եպիսկոպոս կը նշանակէ տեսուչ. «Նա Աստուծոյ տնտեսն է երկրի վրայ, որի պարտականութիւնն է ըլլալ հիւրասէր, հեզ, արդար, սուրբ, ժուժկալ, ամուր կապուած վարդապետութեան վստահելի խօսքին, որպէսզի կարողանայ յորդորել ողջամիտ վարդապետութեամբ եւ կշտամբել հակառակորդներին» [Տիտ. Ա 8–9]: Եպիսկոպոսը իշխանն է Եկեղեցւոյ, առաջնորդն ու հովիւը իր թեմին, այսինքն՝ այն ժողովուրդին, որուն ծառայութեան կոչուած է:

Եպիսկոպոսութիւնը Եկեղեցւոյ նուիրապետական կարգի բարձրագոյն աստիճանն է. ան է հովուապետը իր հօտի: Եպիսկոպոսը իրաւասու է Եկեղեցւոյ բոլոր խորհուրդները կատարելու: Քահանան կամ վարդապետը իրաւունք չունեն ձեռնադրութիւն կամ եկեղեցւոյ օծում կատարելու: Եկեղեցին եպիսկոպոսով կայ եւ առանց եպիսկոպոսի Եկեղեցին չի կրնար գոյութիւն ունենալ:

Ըստ եկեղեցական կանոնի՝ եպիսկոպոս մը թեմի վրայ կը ձեռնադրուի եւ կը մնայ ցմահ. անոր համար ալ շատ յաճախ թեմական առաջնորդներ տուեալ թեմով կոչուած, ճանչուած են. օրինակ՝ Մահակ եպս. Արծրունեաց, Անանիա եպս. Սիւնեաց եւ այլն: Արդ, եպիսկոպոսը իր վիճակին մէջ վերին դատաւոր եւ խնամակալ հայր է, եւ, իբրեւ այդպիսին, իր ձեռնադրութիւնը պէտք է կատարուի յետ քննութեան եւ ընտրութեան եւ նաեւ վկայութեան ժողովուրդի եւ Եկեղեցւոյ վերին իշխանութեան: Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունքը վերապահուած է միայն ու միայն կաթողիկոսին:

Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ կաթողիկոսը թեմական եպիսկոպոսներուն կը շնորհէ արքութեան պատիւը, տիտղոսը, իրենց բարձր ծառայութեան որպէս գնահատանք, որով արքեպիսկոպոսութիւնը պատուոյ տիտղոսի մը վերածուած է, այնպէս որ բոլոր եպիսկոպոսները ալ՝ առաջնորդ կամ՝ ոչ, կրնան կաթողիկոսէն արքութեան տիտղոս ստանալ:

Մենք ունինք պատրիարքական երկու աթոռներ. մին՝ Երուսաղէմի մէջ, եւ միւսը՝ Կ. Պոլսոյ: Պատմական աթոռներ են, որոնց աթոռակալները պատրիարք կը կոչուին. խորքին մէջ արքեպիսկոպոսներ են անոնք, եւ իրենց վարչական իրաւասութիւնը սահմանափակուած է իրենց երկիրներու մէջ միայն: Արքեպիսկոպոս, պատրիարք կամ արքեպիսկոպոսութիւն եւ

պատրիարքութիւն եկեղեցական յատուկ աստիճաններ չեն, այլ պարագայաբար, այսինքն՝ ժամանակի եւ միջավայրի պայմաններու բերումով, նուիրապետական եւ վարչական պարտաւորութեանց վրայ ստեղծուած իրաւասութիւններ են:

Եպիսկոպոսին, այսինքն՝ թեմական եպիսկոպոսին պարտաւորութիւնները են՝ իր թեմի մէջ եղող ժողովուրդի հոգեւոր–բարոյական սնունդի մատակարարումը եկեղեցական կեանքի կանոնաւորմամբ, պահպանութիւնը աւետարանական ճշմարտութիւններու եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետութեան հիմնական սկզբունքներուն, մէկ խօսքով՝ ըլլալ բարի եւ անձնդիր հովիւ իր ժողովուրդին եւ Եկեղեցւոյ:

Դ. Կաթողիկոսութիւն

Կաթողիկոս կը նշանակէ ընդհանուր պետ: Կաթողիկոսը ազգի մը կամ Եկեղեցւոյ մը պետ է: Մեր Եկեղեցւոյ մէջ կաթողիկոսը նուիրապետական կարգի գլուխն է, եպիսկոպոսապետն է, որուն պարտականութիւնն է հովուել Հայաստանեայց Եկեղեցին եւ նախանձախնդիր ըլլալ անոր դաւանութեան, ծէսին, կանոններուն, աւանդութեանց, այլ խօսքով՝ այն ամէն ինչին, որ Հայաստանեայց Եկեղեցի է, պահպանման եւ յարատեւման: Մէկ խօսքով՝ լիիրաւ ու լիակատար իշխանութիւն ունի կաթողիկոսը եկեղեցական մեր կեանքին վրայ. միայն կաթողիկոսը իրաւունք ունի եպիսկոպոս ձեռնադրելու եւ աւագ Միւռոն օրհնելու, ինչպէս նաեւ՝ Ազգային եկեղեցական ժողով գումարելու, նոր թեմեր հաստատելու, արժանաւոր եկեղեցականներ վարձատրելու եւ օրինազանցները պատժելու եւ այլն:

Կաթողիկոսը թէ՛ կը ձեռնադրուի եւ թէ՛ կ'օծուի. մենք պատմութեան մէջ ունեցած ենք կաթողիկոսական բազում աթոռներ՝ արդիւնք մեր երկրին եւ ժողովուրդի քաղաքական կեանքի մակընթացութիւններու: Այս օրերուն ունինք կաթողիկոսական երկու աթոռներ եւ պատրիարքական երկու աթոռներ, որոնք են.

1. Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մէջ:
2. Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Անթիլիասի մէջ, Լիբանան:
3. Սրբոց Յակոբեանց Աթոռին Պատրիարքութիւնը, Երուսաղէմի մէջ:
4. Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը, Պոլսոյ մէջ, Թուրքիա:

Ձեռնադրութեան խորհուրդին կատարումը

Ձեռնադրութեան խորհուրդին կատարման հիմնական պայմանը անշուշտ խորհրդակատար պաշտօնեան է, որ այս խորհուրդին պարագային

եպիսկոպոսն է միայն, եւ եպիսկոպոսի ձեռնադրութեան պարագային ալ կաթողիկոսն է առընթերակայութեամբ երկու եպիսկոպոսներու:

Ձեռնադրութեան խորհուրդը կը սկսի օրհնութեամբ Եկեղեցւոյ սպասաւորութեան նուիրուած դպիրներուն, որոնք կը ստանան դռնապանութեան, ընթերցողութեան, երգմնեցուցչութեան եւ ջահընկալութեան աստիճանները: Բուն ձեռնադրութիւնը կը սկսի կիսասարկաւագութենէն եւ կը տրուի եպիսկոպոսին կողմէ: Սարկաւագութիւնը, քահանայութիւնն ու անոր առնչուած աստիճանները կուսակրօն քահանայութեան պարագային կը տրուին եպիսկոպոսին կողմէ, իսկ եպիսկոպոսութիւնն ու անոր առնչուած տիտղոսները կը տրուին միայն ու միայն կաթողիկոսին կողմէ:

Ձեռնադրութեան խորհուրդի կատարումը կ'իրագործուի նախ ընծայեալի ընտրութեամբ եւ արժանիքներու վկայութեամբ, ապա՝ աղօթքով առ Աստուած, երրորդ՝ ընթերցումով Սբ. Գրային պատշաճ հատուածներու, չորրորդ՝ ձեռք դնելով եւ ապա օծելով, որմէ ետք՝ պաշտօնի յայտարար իրերու յանձնումով (սկիհ, բանալի, բուրվառ, գաւազաններ): Անշուշտ, այս բոլորը կը կանխուին ուղղափառ հաւատոյ խոստովանութեամբ ու մերժումովն հերետիկոսական–աղանդաւորական գաղափարներուն: Նուիրապետական իրաքանչիւր կարգ ունի իրեն յատուկ աղօթքներ, որով Սուրբ Հոգւոյն շնորհքը կը հայցուի ընծայեալի վրայ, որպէսզի կարենայ իր պաշտօնը կատարել համաձայն աւետարանական ուսուցումներուն եւ մեր Եկեղեցւոյ աւանդութեանց ու սկզբունքներուն: Այսպէս, աղօթքներէն ու Սուրբ Գրային ընթերցուածներէն ետք կ'երգուի «Աստուածային եւ երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ, կոչէ (զայն անուն) ի դպրութենէ ի սարկաւագութիւն (կամ՝ ի սարկաւագութենէն ի քահանայութիւն եւ կամ՝ ի քահանայութիւնէ յեպիսկոպոսութիւն եւ կամ՝ այլ յեպիսկոպոսութիւնէ ի կաթողիկոսութիւն) ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժողովրդեանն»: Երբ կ'երգուի ասիկա, ընծայեալը խորանին վրայ ծնրադիր դէպի ժողովուրդը դարձած կ'ըլլայ. երկու ձեռքերը վեր, ափերը բաց երկու ականջներու ուղղութեամբ: Այս հանդիսաւոր պահէն ետք ընծայեալը կրկին եպիսկոպոսին առջեւ կը տարուի, եւ այս անգամ ձեռնադրիչը կը կատարէ ձեռնադրութիւնը. «Ես դնեմ ձեռս ի վերայ ադրա, դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան սարկաւագութեան», կամ այս բաժնէն ետք տեղի կունենայ օծումը դարձեալ շատ հանդիսաւոր ու տպաւորիչ ձեւով եւ օծման ընթացքին ընծայեալը կը վերանուանուի նոր անունով՝ իբրեւ խորհրդանշան նոր մարդ դառնալուն:

Իւրաքանչիւր աստիճան ունի իրեն յատուկ կարգ ու աղօթք եւ խորհուրդի իրագործման ընթացք: Օրինակ՝ եպիսկոպոսին ձեռնադրութեան ատեն ամբողջ Եկեղեցւոյ գործնական վկայութեան ու մասնակցութեան խորհրդանշան պատկերը կը տեսնենք. այսպէս, եկեղեցական եւ աշխարհական ամէն կարգէ ու աստիճանէ երկու անձ, իրենց յատուկ զգեստաւորումով, վկայ ու ներկայ կ'ըլլան ձեռնադրութեան: Իսկ կաթողիկոսի ձեռնադրութեան եւ օծման արարողութիւնը, որ կը կատարուի աւանդաբար տասներկու եպիսկոպոսներով, կը կազմէ մեր Եկեղեցւոյ ամէնէն գեղեցիկ արարողութիւններէն մէկը: Ձեռնադրութեան խորհուրդը կը կատարուի միշտ յընթացս ս. Պատարագին: Ընդհանրապէս ձեռնադրիչը ինքը կ'ըլլայ նաեւ օրուան պատարագիչը:

ԿԱՐԳ ՀԻՒԱՆԴԱՑ*

Կարգ կամ այցելութիւն հիւանդաց այն խորհուրդն է, որով Եկեղեցւոյ պաշտօնեային կողմէ յատուկ աղօթք կը մատուցուի հիւանդի վրայ, աստուածաշնչական ընթերցումներ կը կատարուին, ձեռք կը դրուի, որպէսզի ենթական հաւատքով եւ Սուրբ Հոգիի շնորհներով կազդուրուի, զօրանայ՝ բժշկուելով իր մարմնական եւ հոգեկան հիւանդութիւններէն: Խորհուրդին հիմնական նպատակը հիւանդը իր մեղքերէն սրբելն է խոստովանութեամբ, զղջումով ու մեղաց թողութեամբ: «Այն ս. խորհուրդն, որով Եկեղեցին աստուածային շնորհներ է մատակարարում իւր հիւանդ հաւատացեալներին ապաքինութեան ու կազդուրման համար, կոչւում է **Կարգ հիւանդաց:** Քանի որ Աստուած այցելում է ամենքին, մխիթարում է Իւր օգնութեան դիմողներին եւ թողութիւն է տալիս զղջացողին, պարզ է, որ այս կարգի հիմնական նպատակն է յորդորել հիւանդին՝ զղջալու իւր մեղքերն ու դէպի Աստուած դարձնել նրա հոգին, որպէսզի նա լցուի հաւատքով, յոյսով ու

* Կարգ հիւանդացը պէտք է դիտել որպէս Վերջին Օծման խորհուրդի շարունակական լրացում: Այժմ Վերջին Օծման խորհուրդը կատարւում է Դրոշմի խորհուրդի ժամանակ (զգայարանների կնքումով): Իրենց նախնական վիճակում Վերջին Օծումը եւ Կարգ հիւանդացը զուգակցուած են եղել: Հետագայ դարերում մեր հայրերը նպատակայարմար գտան օծման արարողութիւնն անջատել աղօթական մասից, միաւորել Դրոշմի խորհուրդին եւ այն դարձնել մէկ անգամ կատարուող խորհուրդ քրիստոնեայի կեանքում, իսկ մնացած մասը, այսինքն՝ Կարգ հիւանդացը, վերածուեց շարունակաբար կատարուող հոգեւոր բարեպաշտական արարողութեան՝ ի նորոգութիւն եւ հաստատութիւն Քրիստոսի բանաւոր հօտի: Վերջին Օծման խորհուրդի մասին աւելի մանրամասն տե՛ս «Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1729, էջ 604–605: (Մանօթ. խմբ.)

պիրով, զօրանայ քահանայի աղօթքով եւ օրհնութեամբ եւ, Սուրբ Հոգուն ընդունելով, հոգեպէս նորոգուի ու նոր ոգի առնէ»*:

Այս խորհուրդը եւս հաստատած է Քրիստոս Ինք Իր երկրաւոր կեանքի ընթացքին կատարած բժշկութիւններով եւ ուսուցումներով: Քրիստոս բժշկեց Իրեն եկած հիւանդները, երբեմն ալ Ինք գնաց հիւանդներուն մօտ: Բժշկուելուն հիմնական պայմանը հաւատքն էր. Քրիստոս Իր բժշկութիւնները կը կատարէր խօսքով, ձեռքի հպումով: «Երբ Ան իջաւ լեռնէն, մեծ բազմութիւն մը գնաց Անոր ետեւէն: Եւ ահա բորոտ մը մօտենալով երկրպագութիւն կ'ընէր Անոր ու կ'ըսէր. «Տէր, եթէ կամենաս, կրնաս զիս մաքրել»: Յիսուս Իր ձեռքը երկարեց եւ հասցուց անոր ու ըսաւ. «Կուզեմ, մաքրուէ»: Եւ իսկոյն բորոտութիւնը մաքրուեցաւ անկէ» [Մատթ. Ը 1–3]: Քրիստոս Իր երկրաւոր կեանքի ամբողջ տեւողութեան անդադար բժշկեց հիւանդները, կոյրերն ու կաղերը եւ, իբրեւ Իր առաքելութեան հիմնական մաս, իշխանութիւն տուաւ Իր առաքեալներուն եւս նոյնը ընելու. «Եւ Ան, Իր մօտ կանչելով Իր տասներկու աշակերտները, իշխանութիւն տուաւ անոնց պիղծ դեւերու վրայ՝ զանոնք հանելու եւ բժշկելու ամէն ցաւ ու ամէն հիւանդութիւն» [Մատթ. Ժ 1]:

Առաքեալները, հետեւութեամբ իրենց երկնաւոր Վարդապետին այցելութիւններ կու տային հիւանդներուն զանոնք բժշկելու համար եւ այդ կ'ընէին երբեմն աղօթք ընելով միայն անոնց վրայ. «Եւ պատահեցաւ, որ Պողիխոսի հայրը, ջերմախտ եւ փորլուծութենէ հիւանդացած, անկողին իյնայ: Պօղոս անոր մօտ գնաց եւ աղօթելով ձեռքը դրաւ անոր վրայ ու բժշկեց զայն» [Գործք ԻԸ 8]: Երբեմն՝ ձեռք դնելով անոնց վրայ՝ աղօթելով եւ երբեմն ալ՝ իւղով օծելով զանոնք. «Եւ անոնք ելան ու կը քարոզէին, որպէսզի մարդիկ ապաշխարեն: Եւ շատ դեւեր կը հանէին, բազմաթիւ հիւանդներ կ'օծէին իւղով ու կը բժշկէին զանոնք» [Մարկ. Զ 12–13]: Յակոբոս առաքեալ կը թելադրէ Եկեղեցւոյ հաւատացեալներուն, որ հիւանդութեան պարագային կանչեն անպայմանօրէն Եկեղեցւոյ պաշտօնեան, որպէսզի աղօթքով զօրացնէ հիւանդը. «Ձեզմէ մէկը վշտի՞ մէջ ինկած է, թող աղօթէ. մէկը բերկրանքի՞ մէջ է, սաղմոս թող երգէ. հիւա՞նդ է ձեզմէ մէկը, թող կանչէ Եկեղեցիին երէցները, եւ անոնք թող աղօթք ընեն անոր վրայ, թող իւղով օծեն զայն Տիրոջ անունով: Եւ հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ հիւանդը, ու Տէրը ոտքի պիտի հանէ զայն» [Յակ. Ե 13–15]:

* Արշակ Տէր–Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը. Տփխիս 1900, էջ 457

Հայաստանեայց Եկեղեցին այս խորհուրդը կը կատարէ համաձայն տիրաւանդ պատուէրին. խորհրդակատարութիւնը կը կոչուի «Կանոն զիշերային ժամու աղօթից»: Խորհուրդը կը կատարուի «ի վերայ ծանր հիւանդաց՝ ի բժշկութիւն ցաւոցն եւ ի քաւութիւն յանցանաց»: Քրիստոս տարբեր կերպերով ու ձեւերով կը կատարէ հիւանդներուն բժշկութիւնը. երբեմն՝ ձեռք դնելով անոնց վրայ [տե՛ս Մարկ. Ե 23, Զ 5, 8, 23], երբեմն ալ՝ բռնելով անոնց ձեռքէն եւ կամ հպելով անոնց, երբեմն ալ՝ միայն խօսքով, երբեմն՝ թուք գործածելով կամ կաւով ծեփելով հիւանդի աչքերը եւ թելադրելով, որ Սիլոամի աւազանին մէջ լուացուի: Քրիստոս երբեմն ալ բժշկութիւն կատարելէ առաջ մեղաց թողութիւն կու տար ենթակային, որովհետեւ մեղքը ընդհանրապէս նկատուած էր սկիզբն ու պատճառը հիւանդութեան:

Յոյն եւ Լատին եկեղեցիները իւղով օծելու սովորութիւնը գործադրեցին, իսկ Հայաստանեայց Եկեղեցին ձեռք դնելու եւ աղօթք ընելու ձեւը պահեց: Հայաստանեայց Եկեղեցին իւղով օծելու սովորութիւնը չգործադրեց, թէեւ յիշատակութիւններ կան, որ հին ժամանակ Հայաստանեայց Եկեղեցին ալ երբեմն իւղով օծեր է հիւանդները:

Կարգ հիւանդաց խորհուրդը կը կատարուի ծանր հիւանդներու վրայ, որպէսզի անոնք բժշկուին Սուրբ Հոգիի զօրութեամբ: Խորհուրդի կատարման հիմքը, ինչպէս ըսինք, զղջումն է եւ հաւատքը: Եկեղեցւոյ պաշտօնեան կ'այցելէ հիւանդը եւ կը կատարէ խորհուրդը, որուն աւարտին եւ յետ մեղաց թողութեան նաեւ կը հաղորդէ հիւանդը, որպէսզի ան հոգեպէս զօրացած կարենայ դիմադրել եւ իրմէ վանել ամէն տեսակի չար ու վատ մտածում եւ զգացում՝ որպէս սկիզբ նաեւ մարմնական առողջութեան:

Պատմութենէն գիտենք, որ ս. Գրիգոր Լուսաւորիչ այցելեց հայոց հիւանդ թագաւորը Տրդատ եւ աղօթքով բժշկեց զինք. այստեղ իւղով օծելու յիշատակութեան չենք հանդիպեր: Վերը յիշեցինք, որ Աւետարանները ոչ մէկ պարագայ կը յիշեն Յիսուսի իւղով օծում կատարելու մասին: Հակառակ անոր, որ հրէական սովորութիւն էր մարմինը իւղով օծելը: Առաքեալներն ալ ամէնքը եւ ոչ միշտ իւղ կը գործածէին իրենց այցելութեանց ընթացքին: Մարգիս Շնորհա՛լին կ'ըսէ. «Ո՛չ իւղն տայր զառողջութիւն հիւանդին, այլ՝ անունն Տեառն»: Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Եւ հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ հիւանդը, ու Տէրը ոտքի պիտի հանէ զայն: Եւ եթէ ան ունէ մեղք ալ գործած ըլլայ, պիտի ներուի անոր: Խոստովանեցէ՛ք ձեր մեղքերը իրարու եւ աղո՛թք ըրէք իրարու համար, որպէսզի բժշկուիք, քանզի արդարին աղօթքը շատ զօրաւոր է ներգործելու համար» [Յակ. Ե 15–16]:

Կարգ հիւանդաց խորհուրդէն զատ Հայաստանեայց Եկեղեցին ունի ծանր կամ մահամերձ հիւանդներուն «հաղորդ տալոյ» կանոնը, թէեւ ըսենք անմիջապէս, որ որեւէ մէկը կրնայ հաղորդութիւն առնել, անշուշտ հիւանդութեան պարագային ըլլայ անիկա, այսինքն՝ հիւանդը, տան մէջ, թէ հիւանդանոցի մէջ: Հայաստանեայց Եկեղեցին մեծ կարեւորութիւն կ'ընծայէ Քրիստոսի Մարմնով եւ Արեամբ հաղորդելու մահամերձ հիւանդները. մասամբ՝ իբրեւ նախապատրաստութիւն հանդերձեալ կեանքին եւ մասամբ ալ՝ իբրեւ ապահովութիւն յարուցեալ կեանքին:

Կը յիշուի, որ առաջին դարերուն քրիստոնեաները մարմինները կը խնկէին եւ իւղով կ'օծէին՝ ըստ, հաւանաբար, եբրայական մէկ սովորութեան, այս սովորութիւնը սակայն շուտով դադրեցաւ Եկեղեցւոյ կեանքին մէջ: Հայաստանեայց Եկեղեցին ունի իր ննջեցեալ եկեղեցականները օծելու սովորութիւնը, սա խորհուրդ չէ, այլ պարզապէս, քանի որ ձեռնադրութեամբ անոնք օծում ունեցած են, իրենց մահուան, վերջին անգամ եւս կ'օծուի ճակատն ու աջ ձեռքը հանգուցեալի:

Յիշենք նաեւ, որ Մաշտոցի մէջ ունենք յատուկ կանոններ «դժուարածին յղի կնոջ» եւ «վասն այսահարաց եւ լուսնոտից»: Սոյն կանոններուն կատարումով Եկեղեցին իր հաւատացեալներին մարմնական ու հոգեկան առողջութեան համար աղօթք կ'ընէ՝ հայցելով Սուրբ Հոգւոյն շնորհներն ու զօրութիւնը անոնց վերայ:

Եզրակացնելով ըսենք, որ Կարգ հիւանդաց խորհուրդով Եկեղեցին ինք կ'երթայ իր հաւատացեալներուն, այն հաւատացեալներուն, որոնք հիւանդութեան պատճառաւ չեն կրնար եկեղեցի գնալ եւ զիրենք մասնակից կը դարձնէ աստուածային սրբարար խորհուրդին:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ (ԾԷՍ)

Աշխարհի բոլոր կրօնները իրենց ամենանախնական ժամանակաշրջաններէն սկսեալ ունեցած են պաշտամունքային, արարողական կեանք, որով արտայայտած են իրենց ապրումները ու զգացումները հանդէպ այն էակներուն, որոնք եղած են առարկայ իրենց հաւատքին: Նախամարդը իր պաշտամունքի առարկայ էր դարձուցած իր շրջապատին մէջ իրեն նիւթական տնտեսութիւն ու բարեկեցութիւն ապահովող իրերն ու երեւոյթները:

Պաշտամունքը եղած է եւ է գլխաւորագոյն երեւոյթներէն մէկը կրօններու: Իր էութեանը մէջ պաշտամունքը հոգեկան արժէքի մը կամ արժէքներու արտայայտութիւն է, որ կրնայ սիրոյ եւ կամ ալ երկիւղի ծնունդ ըլլալ: Հեթանոսական կրօններու մէջ պաշտամունքի հիմնական նպատակը եղած է չաստուածները գոհացնելու, անոնց «զայրոյթը» իջեցնելու: Մինչ

քրիստոնէական հասկացողութեամբ պաշտամունքի հիմնական նպատակն է գոհութիւն յայտնել Աստուծոյ Իր մարդկութեան տուած բարիքներուն եւ շնորհներուն համար, ինչպէս նաեւ՝ փառաւորել զԻնք եւ խնդրել Իր հովանաւորութիւնը: Այսպէս, պաշտամունքը այնքան հին է, որքան մարդկային կեանքը:

Մեր Եկեղեցւոյ դասական բացատրութեամբ պաշտամունքը կոչուած է «Կարգ հասարակաց աղօթից», այսինքն՝ կարգաւորեալ եւ համայնական բնոյթ կրող արարողութիւններու ամբողջութիւն: Պաշտամունք կը նշանակէ պաշտելու արարք կամ արարմունք, կատարողութիւն. գրաբարին մէջ կը կոչուի *պաշտօն*: Պաշտել բառը կու գայ յունարէն leiturgia բառէն եւ կը նշանակէ ծառայել, ծառայութիւն մատուցանել: Այս բացատրութեամբ պաշտամունքը Աստուծոյ ընծայուած փառաբանանքն է, այլեւ՝ մատուցուած ինքնանուէր պատրաստակամութիւն՝ Իրեն ծառայելու եւ զԻնք պաշտելու համար միայն:

Ունինք նաեւ ծէս բառը, որ, ըստ կարգ մը լեզուագէտներուն, վրացական բառ է եւ կը նշանակէ կարգ, դասաւորում այն խօսքերուն, երգերուն եւ արարքներուն, որոնք հաստատուած են Եկեղեցւոյ կողմէ *վասն պաշտամանն Աստուծոյ*: Ասկէ ահա աստուածապաշտութիւն բառը ծէսին կամ պաշտամունքին:

Եզրակացնելով կրնանք ըսել, որ պաշտամունք կամ ծէս, աստուածապաշտութիւն ամբողջութիւնն է այն եկեղեցական արարողութիւններուն՝ աղօթք, երգեցողութիւն, երկրպագութիւն, որոնք կը կատարուին եկեղեցւոյ մէջ ի փառաբանութիւն եւ գոհութիւն Աստուծոյ եւ նաեւ ի զօրութիւն հաւատացեալց: Քրիստոնէական հասկացողութեամբ պաշտամունքը, ծէսը կամ աստուածապաշտութիւնը հոգեկան կապ է ու կամուրջ, որով հաւատացեալը կը հաղորդակցի իր Արարչին հետ:

Ծէսին կամ աստուածապաշտութեան խորքը աստուածաշնչական է. Ծննդոցի մէջ կը կարդանք մարդկային ազգի անդրանիկ զոհագործութեան պաշտօնի մասին [Ծննդ. Դ 3–5]:

Հին Կտակարանի աւանդութեան մէջ զԱստուած պաշտելը նուիրական պարտականութիւն էր, որմէ խուսափիլը հնարաւոր չէր: Քրիստոս Ինքն ալ Իր հերթին նուիրագործեց աստուածապաշտութեան կարգը, որ հետագային՝ առաքելական շրջանին եւ անոր հետեւող տարիներու ընթացքին, զարգացաւ, ամբողջացաւ եւ հասաւ իր այսօրուան վիճակին: Ծէսը, որպէս հոգեւոր կապ ու կամուրջ մարդու եւ իր Աստուծոյն միջեւ, հարկ է, որ կատարուի ամենայն բծախնդրութեամբ եւ առ Աստուած կենդանի հաւատով: Շնորհա-

լի հայրապետը իր «Ընդհանրական թուղթի» մէջ կ'ըսէ. «Մաքուր եւ սուրբ եւ անարատ հաւատով եւ մեծաւ յուսով եւ պարզ մտօք եւ կատարեալ սիրով, ահիւ ու դողութեամբ սպասաւորեցէք աստուածային խորհրդոյն. եւ մի՛ իբրեւ ջուր ընդ խողովակ անցանէք անմտաբար խորհրդական բանն աղօթիցն, զոր մատուցանէք, եթէ սաղմոսերգութիւնք են եւ եթէ՝ ընթերցումն Սուրբ Գրոց, եթէ՝ պաշտօներգութիւնք եւ եթէ՝ քահանայական աղօթք սրբոյ Պատարագին եւ այլոց կարգադրեալ կանոնացն, այլ՝ յոյժ մտաւորաբար»:

Աստուածապաշտութեան կամ ծէսի, պաշտամունքի բաղկացուցիչ հիմնական բաժիններն են.

1. *Խորհուրդներ:*
2. *Ժամերգութիւններ:*
3. *Տօներ:*
4. *Հոգեւոր բարեպաշտական արարողութիւններ* – սովորութիւններ:

Խորհուրդներ

Հայաստանեայց Եկեղեցին կ'ընդունի եօթ խորհուրդներ, որոնցմով հաւատացեալը ի հաղորդութիւն կու գայ Իր Տիրոջ հետ Իրմով զօրանալու եւ Իրմով փրկութեան արժանանալու համար: Նախորդ գլուխներուն մէջ խօսեցանք Եկեղեցւոյ եօթ սրբազան խորհուրդներու մասին:

Ժամերգութիւն

Ժամերգութիւն բառը գոյացած է «ժամ երգել» ասոյթէն, այսինքն՝ օրուայ որոշ ժամերուն կարգաւորուած եկեղեցական արարողութիւն կատարել, որմէ՝ ժամերգութիւն բառը: Ժամ ժողովրդական բացատրութեամբ կը նշանակէ նաեւ եկեղեցի. ասկէ նաեւ՝ ժամագիրք, ժամհար, ժամատուն բառերը: Ժամագիրքը այն գիրքն է, որ կը պարունակէ ժամերգութեանց կարգաւորութիւնները, այսինքն՝ այն աղօթքները, քարոզներն ու հոգեւոր երգերը՝ ի բաց առեալ շարականներէ, որոնք կ'երգուին ու կ'արտասանուին յընթացս ժամերգութեան: Երկու տեսակ ժամագիրք ունինք, մէկը՝ փոքր՝ Ձեռաց ժամագիրք, իսկ երկրորդը՝ Ատենի ժամագիրք է մեծածաւալ, որ դրուած կ'ըլլայ բեմին վրայ, ուրկէ կը կարդացուին աղօթքներն ու քարոզները:

Մեր Եկեղեցին ունեցած է եօթը ժամերգութիւններ: Սաղմոսերգուն Դաւիթ կ'ըսէ. «Եօթն անգամ օրհնեցից զքեզ վասն իրաւանց եւ արդարութեան Քո» [Սաղմ. ՃԻ 164]:

Այդ ժամերգութիւններն են՝ **Գիշերային, Առաւօտեան, Արեւագալի, Ճաշու, Երեկոյեան, Խաղաղական** եւ **Հանգստեան**: Կար ժամանակ, երբ բոլոր այս ժամերգութիւնները կը կատարուէին ճիշդ իրենց ժամերուն, մասնաւորաբար վանական աւանդութեանց մէջ, անխափան կը կատարուէին: Ներկայիս որոշ ժամերգութիւններ միացած են իրարու եւ կամ միայն որոշ ժամանակաշրջանին եւ որոշ առիթներով կը կատարուին: Այսպէս, ընդհանրապէս Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները միատեղ կը կատարուին առաւօտուն, իսկ Երեկոյեան ժամերգութիւնն ալ՝ երեկոյեան: Արեւագալը, Խաղաղականն ու Հանգստեանը, ինչպէս նաեւ՝ Ճաշուն, կը կատարուի նաեւ սուրբ Պատարագ մատուցած օրերուն եւ ճրագալոյցներուն եւ Աւագ Հինգշաբթի Պատարագէն առաջ:

Իւրաքանչիւր ժամերգութիւն, որ կը կատարուի, ուղղուած է Սուրբ Երրորդութեան Անձերէն մէկուն. այսպէս.

Գիշերային ժամերգութիւն. «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց Եկեղեցւոյ, որ կատարի ի մէջ գիշերի ի դէմս Հօր Աստուծոյ»:

Առաւօտեան. «... որ կատարի ի դէմս Որդւոյն Աստուծոյ, որ երեւեցաւ իւղարերիցն»:

Արեւագալի. «... որ կատարի ի դէմս Հոգւոյն Սրբոյ, այլ եւ՝ ի դէմս Յարութեանն Քրիստոսի, որ երեւեցաւ աշակերտացն»:

Ճաշու ժամերգութիւնները երեք են, որոնք կը կատարուին երրորդ, վեցերորդ եւ իններորդ ժամերուն, եւ որոնցմէ իւրաքանչիւրը նուիրուած է Սուրբ Երրորդութեան մի անձնաւորութեան.

Երրորդ ժամ. «... որ կատարի ի դէմս իշման Հոգւոյն Սրբոյ, այլ եւ՝ ի դէմս նախամօրն ճաշակման եւ ազատութեանն Քրիստոսի»:

Վեցերորդ ժամ. «... որ կատարի ի դէմս Հօր Աստուծոյ, այլ եւ՝ ի դէմս չարչարանաց եւ խաչելութեան Որդւոյն Աստուծոյ»:

Իններորդ ժամ. «... որ կատարի ի դէմս Որդւոյն Աստուծոյ, այլ եւ՝ մահուանն եւ բանական հոգւոյն աւանդմանն»:

Երեկոյեան ժամերգութիւնը կը կատարուի «ի դէմս Որդւոյն Աստուծոյ, որ էջ ի խաչէն եւ, պատեալ պաստառակալաւ, եդաւ ի գերեզմանի»:

Խաղաղական ժամերգութիւնը կը կատարուէր մայրամուտէն վերջ, «ի դէմս Հոգւոյն Աստուծոյ, այլ եւ՝ ի դէմս Քանին Աստուծոյ, որ եդաւ ի գերեզմանի եւ էջ ի դժոխս եւ խաղաղութիւն արար հոգւոցն»:

Հանգստեան ժամ. «... որ կատարի ի դէմս Հօր Աստուծոյ, զի պահպանողական աջով Միածնին պահեսցէ զմեզ ի խաւարային գիշերիս»:

Հայ Եկեղեցւոյ պաշտամունքային դրութեան մէջ ինքնուրոյն տեղ ունի ս. Պատարագը, որուն մասին խօսեցանք ս. Հաղորդութեան խորհուրդի մասին խօսած ատեն:

Հայ Եկեղեցւոյ տօները

Տօն, որպէս բնիկ հայերէն բառ, կը նշանակէ հանդէս, նուիրական խնճոյք, այլ եւ՝ զոհ: Յընթացս տօնին կը պատուին փրկութեան տեսակէտէ արժէք ներկայացնող դէպքերն ու դէմքերը: Տօներուն նպատակը անպայմանօրէն հանդէս կատարելը չէ, այլ հանդիսակատարութեանց ընդմէջէն վեր առնելն է հոգեւոր այն արժէքները, որոնցմով քրիստոնեան կ'առաջնորդուի Աստուծոյն սրբոց բարեխօսութեան եւ աղօթանուէր ինքնամփոփման:

Հայ Եկեղեցւոյ տօներն ու կրօնական պաշտամունքները կարելի է երեք խումբերու բաժնել.

1. *Տէրունի տօներ*, որոնցմով կը պանծացնենք Քրիստոսի Տնօրինութիւնները եւ Քրիստոսի ու ս. Կոյսին վերաբերեալ յիշատակները:

2. *Սրբոց յիշատակներ*, որոնցմով կը յիշատակենք քրիստոնէական կեանքին մէջ սրբութեամբ առաքինացած անձերը:

3. *Պահոց օրեր*, որոնց ընթացքին զոհումի եւ հայցողական զգացումներով կ'աղօթենք մեր անձերուն եւ ի կեանս եղող եւ ննջած անձերուն փրկութեան համար:

Տէրունի տօներ

Տէրունի կը կոչուին այս տօները, որովհետեւ կապուած են Քրիստոսի անձին եւ քրիստոնէական տօնակատարութիւններուն հետ, ինչպէս նաեւ՝ Աստուածամօր անձի եւ յիշատակի հետ:

Տէրունի տօները կը բաժանուին երեք գլխաւոր մասերու.

ա) *Տնօրինական տօնք Քրիստոսի*

Տնօրինական գլխաւոր տօներն են՝ Ա. Աստուածայայտնութիւն, Բ. Յարութիւն, Գ. Պայծառակերպութիւն:

Քրիստոնէութեան առաջին դարերուն Տէրունի տօները միայն երկու հատ էին՝ Աստուածայայտնութիւնը ու Յարութիւնը: Աստուածայայտնութեան տօնը սկզբնապէս իր մէջ կը բովանդակէր Քրիստոսի ծննդեան, յայտնութեան վերաբերեալ յիշատակներ, ինչպէս՝ աւետումը, ծնունդն ու մկրտութիւնը, անուանակոչութիւնը, Եգիպտոս փախուստը, քառասնօրեայ ի տաճար ընծայումը եւ այլն: Այս յիշատակներու ոգեկոչումը կ'ըլլար Ծնունդովը Քրիստոսի, որ կը կատարուէր յունուար 6–ին: Հետագային է, որ Ծնունդի

համար որդեգրուեցաւ 25 դեկտեմբերը, Հռոմի Եկեղեցւոյ կողմէ, այդ օրերուն կատարուող հեթանոսական մեծ տօնէն հեռու պահելու համար քրիստոնեաները: Քրիստոսի Ծնունդը 25 դեկտեմբերին տօնելու սովորութիւնը կամաց–կամաց ընդհանրացաւ, եւ այսօր գրեթէ ամբողջ քրիստոնեայ աշխարհը Քրիստոսի Ծնունդը կը տօնէ դեկտեմբերի 25–ին՝ ի բացառեալ Հայ եւ Ղպտի Եկեղեցիներէն. հայերը կը տօնեն յունուարի 6–ին, իսկ ղպտիները՝ յունուարի 7–ին:

Քրիստոսի երկրաւոր կեանքի այլ մէկ յատկանշական եւ բացառիկ տեղ ունեցող դէպքը Պայծառակերպութեան դրուագն է, որ մեր Փրկչին քարոզութեանց երրորդ տարուայ ամրան, Թաբոր լերան վրայ տեղի ունեցած հրաշալի դէպքին ոգեկոչումն է: Յոյներն ու Լատիններն այս տօնը կ'ոգեկոչեն օգոստոսի 6–ին, իսկ մենք՝ ս. Յարութեան տօնէն 14 շաբաթ կամ Հոգեգալուստէն 7 շաբաթ ետք հանդիպող կիրակիին: Այս տօնը ծանօթ է նաեւ Վարդավառ անունով: Այս կոչումը ինքնին կը բացայայտէ տօնին առնչուած կարգ մը սովորութիւններուն եւ աւանդութիւններուն հեթանոսական ծագումը: Կ'ենթադրուի, որ ս. Գրիգոր Լուսաւորիչ, երբ կարգաւորեց քրիստոնէական տօները, Պայծառակերպութեան տօնին առնչեց Նաւասարդեան տօնակատարութեանց որոշ սովորութիւններն ու աւանդութիւնները, որպէսզի մէկ կողմէն ժողովուրդը բոլորովին չկտրուէր իր արմատներէն, եւ երկրորդ՝ որպէսզի հակազդէր հեթանոսական այն մեծ տօնին, որ իբրեւ նոր տարուայ ամանորի հանդիսութիւնը կը կատարուէր Աշտիշատի մէջ:

Յարութեան տօնը կը կազմէ քրիստոնէական Եկեղեցւոյ մեծագոյն տօներէն մին եւ իր էութեամբ՝ նաեւ մեծագոյնը. Յարութեան տօնին առընչուած են Քրիստոսի կեանքին վերջին տնօրինութիւնները: Յարութեան տօնին կապուած տօներու խումբը կ'ընդգրկէ 64 օրերու շրջան մը, որ Ծաղկազարդի նախորդ օր կատարուող Ղազարու Յարութեան շաբաթով կը սկսի եւ կը վերջանայ Եղիական Պահքի եօթնեկի շաբաթ օրով: Այս 64 օրերը կը բովանդակեն Ծաղկազարդի կիրակին, Աւագ Շաբաթը, Զատիկը կամ Յարութիւնը, ապա՝ Զատկէն մինչեւ Համբարձում երկարող շրջանը եւ Հոգեգալուստը:

բ) *Տօնք ս. Աստուածածնի*

Ս. Աստուածածինը, որպէս միջոց փրկագործութեան, անբաժան է Յիսուսի փրկական տնօրինութիւններէն: Քրիստոսի Եկեղեցին սկիզբէն երկիւղած մեծարանք է ունեցած անոր նկատմամբ, մանաւանդ՝ Ե դարէն ետք, երբ Եփեսոսի տիեզերական ժողովի մէջ դատապարտուեցաւ Նեստորի մո-

թրութիւնը:

Աստուածամայրը Մարիամ Դաւթի ցեղէն էր, ծնողներն էին՝ Յովակիմ եւ Անա: Մարիամ ուխտի զաւակ էր եւ անոր համար կոչուեցաւ Մարիամ: Իր կեանքին կապուած տօներ են.

1. *Յղութիւն ս. Աստուածածնի յԱննայէ*, դեկտեմբեր 9–ին կը տօնենք մենք եւ յոյները, իսկ լատինները՝ դեկտեմբեր 8–ին:

2. *Մանուկը*, սեպտեմբեր 8–ին:

3. Երից ամաց ընծայումն ի Տաճարն, զոր բոլոր Եկեղեցիները կը տօնեն նոյեմբեր 21–ին: Այս տօնը Մարիամին, իբրեւ ուխտի զաւակի, տաճար ընծայման յիշատակն է:

4. *Անեռումը*, որ մէկ կողմէ Քրիստոսի տնօրինութիւնն է եւ միւս կողմէ ալ՝ Մարիամի կեանքի գլխաւոր պարագաներէն մին: Ապրիլ 7–ին կը տօնուի այս տօնը:

5. *Վերափոխում ս. Աստուածածնի*, որ կը տօնուի 15 օգոստոսին, իսկ մենք՝ օգոստոս 15–ին մերձատրագոյն կիրակիին: Այս տօնը Աստուածամօր յետ մահուան երկինք փոխադրութեան յիշատակի ոգեկոչումն է: Մեր ժողովուրդը Վերափոխման տօնին առնչած է խաղողօրհնէքի գեղեցիկ սովորութիւնը, որուն ծագումը կը թուի նախաքրիստոնէական ըլլալ:

6. Աստուածամօրը սեփական իրեղէններուն գիւտի նուիրուած երկու տօները.

1) *Գիւտ ոտիոյ Սրբուհւոյ Աստուածածնին*: Ասիկա ս. Աստուածածնի գործածած տուփի գիւտի յիշատակն է:

2) *Տօն Գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի*, որ գօտիի գիւտին յիշատակն է:

Այս երկու տօները մեր տօնացոյցի մէջ մտած են Սիմէոն Կաթողիկոսի օրով եւ իր տնօրինութեամբ:

3) *Տէրունական Յիշատակք*

Այս խմբաւորումին տակ կ'իյնան Խաչի եւ Եկեղեցւոյ տօները, որոնք տէրունական կը նկատուին, որովհետեւ Խաչը իբրեւ գործիք եւ Եկեղեցին ալ արդիւնք փրկագործութեան հաւատացեալներու հոգիին մէջ կը նորոգեն Քրիստոսի կեանքի կապուած յիշատակներ:

ա) *Խաչի* տօներ են.

1. *Գիւտ Խաչի* տօնը, որ Քրիստոսի խաչափայտի գիւտի յիշատակն է՝ կատարուած 326 թ. Կոստանդիանոս կայսրի մօր՝ Հեղինէի կողմէ: Հեղինէի

ջանքերով խաչափայտը կը գտնուի Գողգոթայի աղբերուն մէջ: Երեք խաչեր միատեղ կը գտնուին, մեռած պատանիի վրայ յաջորդաբար կը դնեն գըտնուած խաչերը, եւ Քրիստոսի խաչափայտը կը յայտնաբերուի, երբ պատանին յարութիւն կ'առնէ: Այս տօնը կը տօնուի հոկտեմբերի 26–ին մերձաւոր կիրակիին:

2. *Խաչի երեւման* տօնը, զոր կը տօնենք Յինանց Ե կիրակիին, այս տօնը յիշատակութիւնն է Խաչի նշանի երկնքի վրայ հրաշալի երեւումին 351–ին Երուսաղէմի մէջ, Գողգոթայէն մինչեւ Զիթենեաց լեռ տարածուած խաչանշան պայծառութեամբ:

3. *Խաչի վերացման* տօնը կամ Խաչվերացը, որ մեր Եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն է եւ միշտ կը տօնուի սեպտեմբերի 14–ին, իսկ երբ 14 սեպտեմբերը կիրակիին չի զուգադիպիր, զայն կը տօնէ 14–ին ամենամօտիկ կիրակիին: Խաչվերացը Քրիստոսի գերեվարուած խաչի վերադարձի յիշատակի ոգեկոչումն է, տօնը ուրեմն պատմական խորքի մը վրայ հիմնած է: 614 թուականին Պարսից Խոսրով թագաւորը պարտութեան կը մատնէ բիւզանդացիները, կը գրաւէ Երուսաղէմը եւ Քրիստոսի խաչափայտը գերի կը տանի Պարսկաստան: Օրուան Հերակլ կայսրը վերակազմակերպելով իր բանակները, որոնց մէջ էր նաեւ հայկական այրուձին, կը յարձակի Պարսկաստանի վրայ եւ կը յաջողի խաչափայտը ազատագրել: Վերադարձի ճանապարհին խաչը բարձրացուեցաւ ի մխիթարութիւն հաւատացելոց: Ահա պատմական այս դէպքի յիշատակն է, զոր կը պանծացնէ Եկեղեցին Խաչվերացի տօնով:

4. *Վարագայ Խաչի* տօնը: Այս տօնը զուտ հայկական է, կարծես հայու Խաչին տօնն է՝ կապուած ազգային գեղեցիկ մէկ աւանդութեան: Է դարուն՝ 660 թ., Վարագայ լերան վրայ ճգնաւոր մը Թոդիկ անունով տեսիլքով տեսաւ ժամանակին ս. Հռիփսիմէ կոյսին եւ իր ընկերուհիներուն իրենց հետ բերած եւ յետոյ այդ կողմերը թողած ս. խաչափայտի մէկ մասնիկին հրաշալիօրէն Վարագայ վանքի սեղանին վրայ զետեղուիլը: Թոդիկ եւ Յովէլ Տիրոջ Խաչափայտին մասնիկին հրաշալի այս երեւումը կը յայտնեն օրուան Ներսէս Գ Շինող կաթողիկոսին, որ այդ առթիւ գրեց «Նշանաւ ամենայաղթ Խաչիւդ» շարականը եւ տնօրինեց, որ ամէն տարի սեպտեմբերի 28–ի մերձաւոր կիրակին կամ Խաչվերացի տօնէն երկու շաբաթ ետք կատարուի Վարագայ Խաչի տօնախմբութիւնը:

բ) *Եկեղեցւոյ* տօներն են.

1. *Նոր կիրակիին* եւ *Աշխարհամատրան կիրակիին* կը պանծացուի նախ առաջին Եկեղեցւոյ հաստատութեան ընդհանուր յիշատակը եւ ապա՝

յիշատակը քրիստոնէական առաջին Եկեղեցւոյ հաստատութեան Երուսաղէմի վերնատան մէջ, ուր Փրկիչը հաստատեց հաղորդութեան խորհուրդը, եւ ուր առաքեալները ստացան Սուրբ Հոգին Պենտեկոստէի օրը:

2. Եկեղեցւոյ տօներուն մէջ պէտք է յիշել նաեւ, որ յատուկ կերպով կը տօնախմբուի յիշատակը այն չորս տաճարներուն, որ Կոստանդիանոսի մայրը՝ Հեղինէն, խաչափայտի գիւտէն ետք կառուցանել տուաւ. Քրիստոսի գերեզմանին վրայ՝ ի Գողգոթայ, Քրիստոսի ծննդեան այրին վրայ՝ ի Բեթղեհէմ, Քրիստոսի համբարձման բարձունքին վրայ՝ Ձիթենեաց լեռը, եւ ս. Կոյսին գերեզմանին վրայ՝ ի Գեթսեմանի:

Ընդհանուր Եկեղեցւոյ տօներու կարգին է նաեւ Տապանակի տօնը, որ կը կատարուի Վարդավառի կիրակիին նախորդ օրը՝ շաբաթ:

Այս տօներէն զատ ունինք երկու տօներ եւս, որոնք մեր Եկեղեցւոյ յատուկ են: Այդ տօներն են՝ տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի եւ տօն Շողակաթի: Կաթողիկէ Ս. Էջմիածնի տօնը կը կատարուի Հոգեգալստէն երկու շաբաթ ետք, Լուսաւորչի Խոր Վիրապէն ելելու տօնին շաբաթ օրուան յաջորդ կիրակիին, եւ որ յիշատակն է այն տեսիլքին, որ ս. Գրիգոր ունեցաւ Արտաշատի Խոր Վիրապէն ելելէն քիչ ետք եւ որուն մէջ տեսաւ ամպերէն եւ լուսերէն տաճարի մը ձեւը՝ ս. սիւներով եւ կամարներով կազմուած, Վաղարշապատի հայ հին հեթանոսական պաշտամունքի վայրին վրայ: Ձեւով մը տօնն է Հայաստանեայց Եկեղեցիին:

Երկրորդ տօնը, որ Շողակաթ կը կոչուի, կը կատարուի Աստուածածնայ Վերափոխման տօնի կիրակիին նախընթաց օրը՝ շաբաթ, եւ յիշատակն է Էջմիածնի լուսաւորչաշէն տաճարի նաւակատիքին: Շողակաթ մակդիրը կու գայ Լուսաւորչի տեսիլքին մէջ երեւցած շողի կաթումէն, ինչպէս Էջմիածինը՝ Միածինին իջմամ պատկերէն: Ժամանակի ընթացքին, երբ Էջմիածին անունը Մայր տաճարի յատուկ անուն եղաւ, Շողակաթ անունն ալ տրուեցաւ Լուսաւորչի շինած միւս երեք տաճարներէն անոր, որուն տեղւոյն վրայ ան առաջին անգամ տեսած էր լոյսին առաջին ծագումը:

Սրբոց տօներ

Սուրբերը այն անձերն են, որոնք իրենց կենդանութեան ապրեր ու գործեր են քրիստոնէական ամուր հաւատքով եւ եղած են արդար եւ աստուածահաճ մարդիկ: Անոնք իրենց առաքինի կեանքով, հաւատքի եւ Եկեղեցւոյ համար իրենց օգտակար գործունէութեամբ եւ մարտիրոսական մահով երկնային իրականութեան արժանացած անձեր են: Մեր Եկեղեցին կ'ոգեկոչէ յիշատակը սուրբերուն՝ գնահատելով անոնց մէջ ապրուած աւետարանական անբասիր ու տիպար կեանքը: Այսպէս ընտրուած սուրբերու կեանքը, ըլլան անոնք Հայ Եկեղեցւոյ յատուկ կամ Ընդհանրական Եկեղեցւոյ, յիշատակելի է եւ հանդիսանում է ներշնչման աղբիւր:

Հայ Եկեղեցւոյ մէջ ունինք Ընդհանուր Եկեղեցւոյ սուրբերու եւ զատ Հայ Եկեղեցւոյ յատուկ սուրբերու տօներ: Մեր մէջ յիշատակութեան երկու ձեւ կայ, այսպէս ունինք տօնելի եւ յիշատակելի սուրբեր: Տօնելի են անոնք, որոնք կը յիշուին ժամերգութեան եւ պատարագի ընթացքի, իսկ յիշատակելի են անոնք, որոնց կեանքի եւ մահուան պատմութիւնը կը կարդացուի միայն առօրեայ Յայսմաւուրքի միջոցաւ:

Սրբոց կարգին դասուած են նաեւ հրեշտակները, որոնց եւս նուիրած տօներ ունի մեր Եկեղեցին:

Պահոց օրեր

Պահք կը նշանակէ հրաժարում, ինքնազրկանք որոշ ուտելիքներէն կամ իւղոտ եւ կաթնեղէն ճաշերէն վասն զօրութեան մարմնին եւ հոգիի: Պահքը քրիստոնէական Եկեղեցւոյ կեանքին կարեւոր երեւոյթներէն մէկն է:

Մեր Եկեղեցւոյ տօնացուցային տնօրինմամբ ամէն չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը սահմանուած են պահքի համար: Ասոնցմէ զատ կան Քառասնօրեայ Մեծ Պահքը ս. Յարութեան նախօրեակի, Ծննդեան Պահքը եւ շաբաթապահքերու խումբը:

Շաբաթապահքերէն յիշենք նախ Առաջաւորաց Պահքը՝ հաստատուած ս. Գրիգորի կողմէ, իր Խոր Վիրապէն ելելէն անմիջապէս ետք, եւ նաեւ՝ տաղաւար տօներուն նախորդող շաբաթապահքերը, որոնցմէ իւրաքանչիւրը իր անունը ունի, այսպէս գարնան պահքը՝ Եղիական, ամռան պահքը՝ Լուսաւորչի, աշնան՝ Վարագայ ս. Խաչի, ձմռան պահք, որ սխալմամբ կը կոչուի ս. Յակոբի պահք, ունինք նաեւ Յիսնակաց պահք: Լուսաւորչի պահքը միակն է մեր Եկեղեցւոյ մէջ ի պատիւ սուրբերուն հաստատուած:

Այս պահքերէն զատ ունինք նաեւ պահքեր, որոնք տարբեր առիթներով կը պահուին. այսպէս, եկեղեցականներ իրենց ձեռնադրութիւնէն ետք 40 օրեր պէտք է պահք պահեն վասն ժուժկալութեան մարմնոյ եւ հոգւոյ, ոմանք հաղորդութենէ առաջ սովորութիւն են ընած նախ պահք պահել եւ ապա հաղորդուիլ:

Միքայել վարդապետ Աջապահեան

ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏԿԵՐԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Իւրաքանչիւր կրօնական համակարգ առաջին հերթին հաստատում է Աստուծոյ գոյութիւնը եւ ապա շարադրում աստուածճանաչութեան իւրայատուկ ուղիները: Այս տեսանկիւնից դիտուած՝ բոլոր կրօնները հիմնուած են հետեւեալ երկու ելակէտային դրոյթների վրայ. առաջին՝ Աստուած կայ, եւ երկրորդ՝ Նա կարող է ճանաչուել (այստեղ խօսքը չի վերաբերում բացարձակ ճանաչելիութեանը, այլ ընդունւում է ճանաչելիութեան որոշակի սահմանափակութիւնը): Այս երկու հաստատումները բոլոր կրօնների հիմքն ու ներշնչման աղբիւրն են հանդիսանում: Առաջին հաստատումը հիմնուած է հաւատքի վրայ, իսկ երկրորդը՝ փորձառութեան: Քանի որ Աստուծոյ գոյութիւնը գիտական ապացուցման առարկայ չի կարող լինել, ապա այն պէտք է հաւատքի վրայ հիմնուած անապացուցելի հիմնադրոյթ (պոստուլատ) լինի. եւ քանի որ Աստուած անդրանցական (տրանսցենդենտ) է իր ողջ արարչագործութիւնից, ապա Նա կարող է ճանաչուել միայն ինքնայայտնութեամբ, այսինքն՝ կարող է ճանաչուել այնքանով, որքանով Ինքն Իրեն յայտնում է մեզ:

Քրիստոնէական կրօնը տարբերւում է նրանով, որ այն յայտարարում է, որ Աստուած որպէս անձնական Աստուած կարող է ճանաչուել հիմնականում Իր սուրբգրային յայտնութեամբ: Պէտք է նկատի ունենալ, որ Աստուածաշունչը չի գրուել ապացուցելու համար, թէ Աստուած կայ, այլ՝ յայտնելու Նրան Իր գործունէութեան մէջ: Այդ պատճառով Աստուծոյ աստուածաշնչական յայտնութիւնն իր էութեամբ առաջադիմական (պրոգրեսիւ) է, որը զարգանում եւ հասնում է լրմանը Աստուծոյ Որդու՝ Յիսուս Քրիստոսի մէջ:

Պատմութեան մէջ յաճախ փորձեր են արուել իրար հակադրելու Աստուածաշնչի երկու գրքերը՝ Հին ու Նոր Կտակարանները: Մասնաւորապէս առաջ է քաշուել այն դրոյթը, թէ Հին Կտակարանում պատկերուած Աստուած, եթէ նոյնիսկ չի տարբերւում Նոր Կտակարանի Աստծուց, ապա գեթ թերի ու պակասաւոր է ներկայացուած: Այս կարծիքների առաջքաշման հիմնական պատճառն այն է, որ որոշ հեղինակներ Աստուածաշնչի կենտրոնական պատգամի (այն է՝ աստուածային յայտնութեամբ տրուած փրկութեան ճանապարհի) ուսումնասիրութեան փոխարէն իրենց եռանդը վատնել են բանասիրական վերլուծութիւնների վրայ: Բաւական է միայն Հին Կտակարանի Եհովա Աստծուն համեմատել այդ նոյն ժամանակահատուածում գոյութիւն ունեցող այլեւայլ չաստուածների ու դիցաբանական կերպարների հետ, որպէսզի իւրաքանչիւրի համար պարզ դառնայ, թէ որքան խորը տարբերութիւն գոյութիւն ունի, եւ թէ որքան կատարեալ է ներկայացուած Աստուած այն պարագային, երբ մարդկային միտքն ու լեզուն գտնւում էին նախնական վիճակում:

Առաջին հերթին պէտք է նշել, որ Հին Կտակարանը ոչ միայն չի ընդունում Եհովայի պատկերն արձանի տեսքով կամ տեսանելի ներկայացման որեւէ ձեւով, այլեւ պարունակում է Աստուծոյ «հոգեւոր» պատկերի ոչ լրիւ զարգացած, սակայն սիստեմատիկ վարդապետութիւնը: Հին Կտակարանի յայտնութեան մէջ ամենագլխաւոր տեղը ոչ թէ աստուածային էութեանն է պատկանում, այլ՝ աստուածային ներգործութեանը, թեեւ շատ կան այնպիսի հաստատումներ, որոնք ուղղակիօրէն վերաբերում են Աստուծոյ լինելութեանը, էութեանը: Աւելին, Հին Կտակարանում ներկայացուած աստուածային ներգործութիւնը մեծ թուով տեղեկութիւններ է պարունակում Աստուծոյ էութեան մասին: Այնուամենայնիւ, նախքան առանձին մանրամասնութիւններն ի մի հաւաքելը, որոնցով մենք կարող ենք պատկերացում կազմել հին կտակարանեան Աստուծոյ պատկերի մասին, պէտք է նշել, որ հին կտակարանեան յայտնութիւնը որոշակիօրէն «յայտնութիւն է զարգացման ընթացքի մէջ»: Թեեւ Եհովայիզմի մէջ հազիւ թէ կարելի լինի կրօնա–պատմական զարգացման որեւէ ընդհանուր գիծ գտնել, սակայն այն անշուշտ ենթարկուել է որոշակի օրինաչափ զարգացման, որն ի վերջոյ կարելի է նկատել Աստուծոյ յայտնութեան մասին ուսմունքի մէջ: Ժամանակի տեղատատութիւններն ու հոսքը կարեւոր դեր են խաղացել այստեղ, ինչպէս նաեւ Իսրայէլի կապն աւանդութեան տարբեր ոլորտների եւ գրաւոր ու բանաւոր վկայութիւնների զանազան ձեւերի հետ: Աստուծոյ վերաբերեալ հին կտակարանեան համեմատումները համակարգելու ցանկացած փորձի դէպքում անհրաժեշտաբար պէտք է հաշուի առնուեն տարբեր գործօններ:

Հին Կտակարանի ընդհանուր լայն ֆոնի վրայ Աստուծոյ մասին կարելի է անել հետեւեալ հաստատումները:

Ա. ՄԷԿ ԵՒ ՄԻԱԿ ԱՍՏՈՒԱԾ

Ի հակադրութիւն Հին Արեւելքի միւս կրօնների, Իսրայէլի միաստուածութիւնն այն տիեզերական հիմնադրոյթն է, որը որոշում է բոլոր կրօնական ուսմունքների կառուցուածքը: Այս միաստուածութիւնն Իսրայէլի մօտ ունենում է իր պատմական զարգացումը՝ զարգացում դէպի աւելի ճշգրտութիւն ու պարզութիւն:

Նահապետական դարաշրջանում շեշտւում է Իսրայէլի կողմից մէկ Աստուծոյ ընդունումը՝ առանց մերժելու ուրիշ աստուածային էակների գոյութիւնը: Մովսէսին Աստուած իրեն յայտնում է որպէս նահապետների Աստուածը՝ «Ես եմ Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակոբայ» [Ելք Գ 6]: Նա չի հանդուրժելու ուրիշ աստուածների պաշտամունքի որեւէ ձեւ՝ «Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յԻնէն» [Ելք Ի 3]: Հետաքրքիրն այն է, որ այլ աստուածների գոյութեան հարց չի բարձրացնում: Սակայն Մովսէսի համար ուխտի Աստուած անկասկած ողջ աշխարհի Աստուածն էր, եթէ նոյնիսկ «Իմ է ամենայն երկիր» [Ելք ԺԹ 5] արտայայտութիւնն աւելի ուշ շրջանի յաւելում լինի: Այսպիսով, մենք կարող ենք որոշակի կերպով խօսել գործնական միաստուածութեան մասին այն մարդկանց պարագային, ովքեր եղան աստուածային յայտնութեան վկաներն Իսրայէլի պատմութեան ամենավաղ շրջանում:

Սովորական մարդիկ օտար երկրներում եւ օտար մարդկանց մէջ ունէին ուրիշ աստուածների գոյութեան գիտակցութիւնը: Սրա ապացոյցը կարելի է գտնել Դատ. ԺԱ 24–ում, որտեղ իսրայէլացիների դատաւոր Հեփթայէն Ամոնացիների արքային է դիմում հետեւեալ յայտարարութեամբ՝ «Ո՞չ ապաքէն զոր ժառանգեցոյց քեզ Քամովս աստուածն քո, զայն ժառանգեսցես, եւ զամենայն զոր ժառանգեցոյց Տէր Աստուած մեր յերեսաց ձերոց, զայն մեք ժառանգեսցուք» [տե՛ս նաեւ Ա Թագ. ԻՁ 19, Դ Թագ. Գ 27]:

Վաղ շրջանում Աստուծոյ համար ձեւական ու տեսական միաստուածութիւնն ակնյայտօրէն աւելի նուազ կարեւոր էր, քան Իր ուխտի ժողովրդի կողմից միասնական պարտաւորութեան ստանձնումը միայն Իր նկատմամբ: Իր նպատակը նրանց դէպի լոյս առաջնորդնելն էր: Միայն աւելի ուշ է, որ Նա մարգարէների միջոցով թոյլ է տալիս ողջ ճշմարտութեանը բացայայտուել իր լիակատար պարզութեամբ, ըստ որի ուրիշ յարաբերութիւններ հնարաւոր չեն, որովհետեւ իրականութեան մէջ այլ աստուածներ գոյութիւն չունեն: Այսպէս է, որ մէկ Աստուծոյ գաղափարն աստիճանաբար վերաճում է միակ Աստուծոյ գաղափարի: Գ Թագ. ԺԸ 39–ի համաձայն, Եղիան ի վիճակի էր միաստուածեան հաւատքի արտայայտութեան միջոցով արթնացնել ժողովրդին. «Տէր, Նա է Աստուած. Տէր, Նա է Աստուած»: Սա այն մեծ թեմաներից մէկն է, որն ընդհանուր է բոլոր մարգարէների մօտ, ինչքան էլ որ տարբեր ձեւերով սրանք արտայայտեն իրենց պատգամը. եւ Եսայու միջոցով այն ի վերջոյ հանդէս է գալիս հիմնի տեսքով, ինչպէս օրինակ՝ ԽԳ 11–ում՝ «Ես եմ Աստուած, եւ չիք ոք բաց յինէն, որ փրկիցէ»: Նման բացարձակ միաստուածութիւնն ունենալով իր պաշտօնական կրօնի հիմքում՝ Իսրայէլը միայնակ ու մեկուսի աչքի ընկնող դիրք էր գրաւում Հին Մերձաւոր Արեւելքում, թէեւ քաղաքական եւ մշակութային տեսակէտից անկարեւոր ու երկրորդական ժողովուրդ էր այդ ժամանակաշրջանի միւս ժողովուրդների հետ համեմատած: Մերձաւոր Արեւելքում տարբեր հնագիտական հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ միաստուածեան հակումներ կային Եգիպտոսի ու Միջագետքի անձնական ու անհատական զգացումների մէջ, սակայն դրանք ազդեցութիւն չունեցան ժողովրդի պաշտօնական կրօնի վրայ: ԺԴ դարում Ախնաթոն փարաւոնի՝ միաստուածութիւն մտցնելու փորձը լիակատար ձախողում ունեցաւ: Զրադաշտի (Զարատուստրա) կրօնն է միակ երեւոյթը, որ հեռաւոր կերպով նմանութիւն ունի Իսրայէլի միաստուածութեան հետ, սակայն մինչեւ ն. Ք. 500 թուականը սրանց միջեւ որեւէ կապ չէր կարող լինել ո՛չ տարածութեան, ո՛չ ժամանակի առումով: Աւելին, Զրադաշտի միաստուածութիւնը տկարացած էր դուալիստական տարրերով, որը յայտնի չէր Իսրայէլի կրօնին:

Բ. ԱՆԴՐԱՆՑԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾ

Ախնաթոնի արեւապաշտութեան մէջ աստուածութիւնն ամբողջապէս պատկանում է այս աշխարհին եւ ներունակ (իմանենտ) է: Նրա գոյութիւնն էականօրէն «գոյութիւն է աշխարհի մէջ», որն այն հիմնական համոզմունքն էր, որ ընդհանուր էր Հին Արեւելքի բոլոր կրօնների համար եւ մասնաւորապէս բոլոր սեմական կրօնների այն տարբերակիչ գիծն էր, որի դէմ էր փորձում պայքարել Եհովայիզմը: Եհովան, միւս կողմից, հանդէս է գալիս (հակառակ մարդու հետ սերտ անձնական յարաբերութեանն ու աշխարհի հետ առնչութեանը) որպէս անդրանցական Աստուած, որն Իր ճշմարիտ գոյութեամբ եւ էութեամբ վեր է բարձրանում բոլոր աշխարհիկ գործերից: Այս անդրանցականութիւնը յայտնւում է զանազան ձեւերով:

1. Եհովան անդրանցական է: Թէեւ Հին Մերձաւոր Արեւելքում աստուածութիւնը նախ եւ առաջ մի տեղական հովանաւոր էր կամ մասնաւոր մի հատուածի Տէրը [ինչպէս օրինակ՝ Դ Թագ. Ե], սակայն Նահապետների Աստուածը ներկայանում է որպէս մէկը, որը ոչ մի ձեւով չի սահմանափակուած մասնաւոր տարածքով, ժողովրդով կամ պետութեամբ: Իր անկախ զօրութիւնը գործում է այսպէս կոչուած ողջ «Բերրի մահիկի» երկայնքով, այսինքն՝ Եփրատի գետաբերանից մինչեւ Եգիպտոս: Նա իշխանութիւն ունի Բահաղ չաստուծոյ երկրի՝ Քանանի վրայ, սկզբում՝ խոստման, ապա խոստման լրումի հիման վրայ: Թէեւ ճշմարիտ է, որ Նա Մովսէսի օրօք յայտնւում է որպէս Սինա լեռան Աստուած կամ միապետութեան ժամանակ որպէս Երուսաղէմ քաղաքի Աստուած, սակայն այս «տեղայնացումը» չի նշանակում, թէ իր ներկայութիւնը սահմանափակուած է մասնաւոր տարածքով, այլ՝ որ Նա յայտնւում է այդտեղ:

Մարդիկ իրենք որոշակիօրէն երբէք չէին էլ մտածում, թէ իրենք կարող են Նրան գտնել միայն Սինայի վրայ կամ Երուսաղէմում. նրանք փորձում էին Նրան պաշտել ամէնուրեք, որտեղ որ այսպէս կոչուած «բարձունքներ» կային: Այսպէս, Եղիան վերանորոգեց սեղանը Կարմէլ լեռան վրայ [Գ Թագ. ԺԸ 30]: Նրանց տեսակէտի համաձայն, ովքեր կոչուած էին կրելու Աստուծոյ յայտնուած խօսքը, Եհովան չէր կարող պարունակուել Երուսաղէմի տաճարի պատերի ներսում: Եսայու՝ տաճարի յայտնի տեսիլքի մէջ [Եսայի Զ] գահի վրայի ողջ տարածութիւնը դատարկ է, տաճարում սենեակ կայ միայն Եհովայի արքայական շքախմբի համար, իսկ Սերովբէն վկայում է, որ ամէն ինչ լցուած էր աշխարհի Թագաւորի ամենալից փառքով: Սողոմոնի՝ տաճարին ձօնուած աղօթքում ասւում է. «Եթէ երկինք եւ երկնից երկինք չեն քեզ բաւական, արդ, զիա՞րդ տունս զոր շինեցի» [Գ Թագ. Ը 27]: Ըստ Երեմ. է 12–ի՝ Եհովան, այսպիսով, կարող է թոյլ տալ նաեւ տաճարի կործանումը: Եհովայի ամէնուրեքութեան գաղափարն աւելի յստակ շեշտուած է Ամովսի մօտ. «Մի՛ ապրեսցէ ի նոցանէն փախուցեալն, եւ մի՛ զերծցի ի նոցանէ զերծեալն. զի եթէ ծածկեսցին ի դժոխս, անտի ձեռն Իմ կորզեսցէ զնոսա. եւ եթէ ելանիցեն յերկինս, եւ անտի իջուցից զնոսա. եւ եթէ թաքիցեն ի բարձունս Կարմեղայ, եւ անտի յուզեցից եւ առից զնոսա. եւ եթէ ընկեսցին յաչաց իմոց ի խորս ծովու, եւ անդ հրամայեցից վիշապին խայթել զնոսա» [Ամովս Թ 1–3]: ՃԼԸ սաղմոսի հեղինակը վերցրել է այս թեման եւ Աստուծոյ ներգործութեան գաղափարը ներկայացնում է որպէս տարածութիւնից դուրս մի որակ՝ վկայակոչելով Նրա գոյութեան եւ

էութեան անդրանցական բնոյթը. «Յո՞ երթայց ես յՈգւոյ Քումմէ, կամ յերեսաց Քոց ես յո՞ փախեայց. թէ ելանեմ յերկինս, Դու անդ ես. թէ իջանեմ ի դժոխս, եւ անդր մօտ ես. թէ առից զթեւս իմ ընդ առաւօտս եւ բնակեցայց յեզերս ծովու, սակայն եւ անդ ձեռն Քո առաջնորդեսցէ ինձ, եւ աջ Քո ընկալցի զիս» [Սաղմ. ՃԼԸ 7–10]:

Փաստօրէն, Եհովան բնութեան եւ ողջ տիեզերքի Տէրն է: Անգամ տիեզերքի երկնային զօրութիւնները, որոնք աստղերն ու մոլորակներն են շարժման մէջ դնում, նոյնը չեն, ինչ Նա է: Ըստ Ծննդ. Ա–ի՝ արեւն ու լուսինը սոսկ «լուսաւորներ» են, այսինքն՝ նիւթական բաներ, սոսկ տիեզերքի նիւթական տարրեր՝ բառի խիստ գործնական իմաստով: Բոլոր մարդկային մեծ զօրութիւններն աննշան են Իր առջեւ: Հաշուի առնելով հին աշխարհի հզօր կայսրութիւնները, որոնց հզօրութիւնն ու մեծութիւնը մեզ այսօր այնքան զարմացնում է, եւ ճանաչելով Եւրոպայի, Աֆրիկայի ու Ասիայի միջերկրական քաղաքակրթութիւնները՝ Եսային այնուամենայիւ ասում է. «Եթէ ամենայն հեթանոսք իբրեւ զկաթիլ մի ի դուլէ են եւ իբրեւ զմէտ մի ի կշռոց համարեցան եւ իբրեւ շիթք ի բերանոյ համարեսցին. եթէ Լիբանան չէ բաւական յայրումն, եւ ամենայն չորքոտանիք չեն բաւական յողջակէզս, եւ ամենայն հեթանոսք ոչինչ են, եւ յոչինչ համարեցան Նմա. արդ, ո՞ւմ նմանեցուցէք զՏէր եւ որո՞ւմ նմանութեան նմանեցուցէք զՆա» [Եսայի Խ 15–18]:

Եհովայի անդրանցականութիւնն այն ամենի նկատմամբ, ինչ տեսանելի է, ամբողջովին հիմնւում է Իր բացարձակ ստեղծարարութեան վրայ, որը վերաբերում է ամէն ինչի, որ լինելութեան վիճակում է: Այս ստեղծարարութիւնն Իր էութիւնից չի հոսում կամ բխում ճառագայթման միջոցով, այլ գոյութեան է կոչում Իր ստեղծագործ կամքի սկզբնարար զօրութիւնից, ինչպէս Իր խօսքից, որով այն որոշակի ձեւ է ստանում [Ծննդ. Ա 1, Եսայի ԽԲ 5, ԽԵ 18, Սաղմ. ԼԲ 6, 9, ՃԽԸ 5 եւն]:

2. Եհովան տիեզերական է: Եհովայի անդրանցականութեան առկայութիւնը կարելի է գտնել նաեւ Աստուծոյ՝ ժողովրդի նկատմամբ ունեցած Իր վերաբերմունքի մէջ, ինչպէս ներկայացուած է Աստուածաշնչում: Նա պարզապէս Իսրայէլի ժողովրդի Աստուածը չէ, ինչպէս ուրիշ ժողովուրդներ ընդունում էին իրենց բազմաստուածեան համակարգի գլխաւոր աստծուն: Հին Մերձաւոր Արեւելքում աստուծոյ եւ իր ժողովրդի յարաբերութիւններն արտայայտւում էին պարզ բնական եզրոյթներով: Իսրայէլի մէջ նոյնպէս հակում կար Եհովայի եւ Իսրայէլի միութիւնը ներկայացնել որպէս բնական կապի մի տեսակ, որպէս

փոխադարձ կախուածութիւն մէկը միւսից: Հակառակ սրա, մովսիսական աւանդութիւնն սկզբից եւեթ վկայում է, որ ուխտի յարաբերութիւնն անհրաժեշտաբար պէտք է հիմնուի ազատ ընտրութեան վրայ, այնպէս որ այն պարունակի մերժման ներյատուկ հնարաւորութիւնը: Սա դարձաւ մարգարէների ուսմունքի հիմնական բնագաւառը: Նրանք կրկին ու կրկին շեշտում են, որ Ուխտը կախուած է շնորհից, եւ այս պատճառով ուղղակի ուշադրութիւն է հրաւիրում այն փաստի վրայ, որ Եհովան ու Իսրայէլը կարող են գոյութիւն ունենալ իրարից հեռու: Ամովսն ստանձնում է Իսրայէլի խօսնակի դերը, երբ յայտարարում է Աստուծոյ վճիռը. «Ո՞չ ապաքէն իբրեւ զորդիս եթէովպացւոց էք դուք Ինձ, որդի՛ք Իսրայէլի... ո՞չ զԻսրայէլ հանի յերկրէն Եգիպտացւոց, եւ զայլազգիս՝ ի Գամրաց, եւ զԱսորիս՝ ի Բոթորայ» [Ամովս Թ 7]: Այստեղ Եհովան մերժում է Իր հետ յարաբերութեան բացառիկ «մենաշնորհի» գոյութիւնը, որն Իսրայէլն իրեն էր վերագրում: Իսրայէլի հետ Իր յատուկ ուխտն ազատ է, ուստի եւ կարող է լուծարքի ենթարկուել: Իհարկէ, Երեմիան հակուած է յայտարարելու Իսրայէլի վերականգնումը «Նոր Ուխտի» խոստումով [Երեմ. ԼԱ]:

3. Եհովան ժամանակի Տէրն է եւ ենթակայ չէ որեւէ ժամանակաւոր օրէնքի կամ Իր էութեան որեւէ կրճատման: Եբրայեցերէնը յափտենականութեան մասին չի մտածում որպէս գոյութեան մի այլ ձեւի, այլ ժամանակի գիծն իր պատկերացմամբ տարածում է առաջ ու ետ՝ դէպի անծայրածիր անորոշութիւն, որտեղ ոչինչ տեսանելի չէ: Ամէն ինչ, որ գոյութեան է կոչւում կամ դադարում է գոյութիւն ունենալուց, տեղի է ունենում այս երեւակայական գծի վրայ՝ բացառութեամբ այն բաների, որոնք աստուածային են: Այս ձեւով Հին Կտակարանն ամբողջական հակադրութեան մէջ է գտնւում հարեւան քաղաքակրթութիւնների բոլոր դիցաբանական թեոգոնիաների (աստուածների ծագում) նկատմամբ: Գոյութիւնը Եհովայի էութեան մի էական մասն է. եւ այն, ինչ մենք գտնում ենք Յովհաննէսի Աւետարանի Ներածական համարում (ի սկզբանէ էր Աստուած), բաց է թողնուած Ծննդ. Ա 1–ում: Միայն Սաղմ. ՁԹ 2–ում ենք մենք գտնում «մինչչեւ լերինք հաստատեալ էին, եւ մինչչեւ ստեղծեալ էիր զերկիր եւ զամենայն տիեզերս, յաւիտենից մինչեւ յաւիտեանս Դու ես»:

Այսպիսով, Աստուած ինքնին կեանքի ամբողջութիւնն է, որին բացարձակապէս անծանօթ է վաղանցիկութիւնը: Այս է պատճառը, որ, ըստ Սաղմ. ՁԹ 4–ի, հազար տարին Նրա համար մի օրուայ պէս է, եւ դրա համար է Եսային Նրան կոչում «առաջին եւ առ յապայ» [ԽԴ 6], «առաջին եւ յաւիտեան» [ԽԸ 12]: Աստուածաշնչի շատ հին

ու նոր մեկնիչներ ենթադրում են, որ Ամբ. Ա 12–ի եբրայեցերէնն ընթերցուել է՝ «Դու ես ի սկզբանէ Տէր Աստուած մեր եւ մի՛ մեռցիս» (այժմեան «մի՛ մեռցուք» արտայայտութեան փոխարէն), որի համաձայն մտացածին աստուածների առասպելներում արտայայտուած մահը Նրան ծանօթ չէ: Նա պարզապէս Կենդանի Մէկն է, Որին կարող է վստահել իւրաքանչիւր սերունդ: Այս միտքն է արտայայտուած Սատտի բերանով՝ «Կենդանի է Տէր, որ փրկեաց զԻսրայէլ» [Ա Թագ. ԺԴ 39, Դատ. Ը 19 եւն]: Ոչինչ չի կարող նուազեցնել Իր կեանքը: Այն չի կարող նաեւ նուազել մեղքի պատճառով: Յոբը բացականչում է. «Զի թէ մեղայ, զի՞նչ կարիցեմ առնել Քեզ» [Է 20, հմմտ. ԼԵ 6]: Եհովայի կեանքը միեւնոյն ժամանակ այնքան առատ է, որ այն չի կարող հարստանալ ո՛չ արդարութեամբ [Յոբ ԼԵ 7], ո՛չ անարատութեամբ [ԻԲ 3], ո՛չ պահեցողութեամբ [Զաք. Է 5] կամ զոհաբերութեամբ [Եսայի Ա 11–12 եւն]: Իսրայէլի Աստուած Իր կեանքը պահպանելու համար մարդուց ոչ մի բան ստանալու կարիք չունի, քանի որ անկախ է այն ամենից, ինչն անցողիկ է կամ որեւէ ձեւով կապուած է աշխարհի հետ:

4. Եհովան վեր է սեռական արտայայտութեան (դիմորֆիզմ) բոլոր ձեւերից: Սեռականութիւնը մի երեւոյթ է, որը լցնում է ողջ երկրային կեանքը եւ կեանքի աղբիւրն է կենդանական ու մարդկային ոլորտում: Կեանքն ու կեանքի սկիզբը մի աստուածային խորհուրդ էր Հին Մերձաւոր Արեւելքի ժողովրդի համար: Նրանք պտղաբերութեան աղբիւրը տեսնում էին աստուածային արգանդի մէջ եւ սրա մասին մտածում էին ոչ թէ փոխաբերական, այլ՝ կոնկրետ իմաստով, եւ այսպէս մարդկային սեռականութեան իրենց գաղափարը տեղափոխւում էր աստուածային ոլորտ: Այն երբեմն ստանում էր սեռական երկտութեան (դուալիզմ) տեսք, եւ, որպէս աստուածային զոյգ, աստուածներ ու աստուածուհիներ էին պաշտւում:

Սրան ուղղակի հակառակ, Հին Կտակարանում Եհովան յայտնւում է որպէս միայնակ աստուածային էութիւն: «Աստուածուհի» եբրայեցերէն բառը նոյնիսկ չի էլ հասել մեզ: Եհովան իգական համարժէք չունի, թէեւ ընդունւում է որպէս կեանքի աղբիւր, օժտուած է մարդկային բնութագրումներով եւ միշտ ներկայացւում է որպէս կեանքի լրիւութեան ու ջինջ երանութեան կրողը: Անգամ «Հայր» հասկացութիւնն Իր պարագային բացարձակ կերպով արական կիրառութիւն չունի [տե՛ս Եսայի ԽԹ 15, ԿԶ 13]: Իհարկէ, Ուխտի պարագային՝ լուսաբանման նպատակով՝ ամուսնական ուխտի կամ միութեան նմանեցնելու դէպքում Եհովան հանդէս է գալիս փեսայի կամ ամուսնու

դերում, բայց այն միշտ այլաբանօրէն է եւ վերաբերում է աւելի շուտ Իր ներգործութեանը, քան՝ էութեանը:

Սեռականութեան հետ կապուած այս անդրանցական որակը Եհովային տարբերում է ժամանակի բոլոր այլ կրօնների աստուածութիւններից, եւ անհնարին է սրա ճշգրիտ բացատրութիւնը գտնել գերազանցապէս բնական մակարդակի վրայ, եթէ նոյնիսկ հաշուի առնուի Իսրայէլի (ինչպէս նաեւ՝ այլ ժողովուրդների) յայտնի երկիւղը սեռի նկատմամբ:

5. Եհովան բնորոշ կերպով սուրբ է: «Սուրբ» ածականն ստորոգուելիս ունի ուղղակիօրէն առանձին եւ բացարձակապէս տարբեր լինելու ստուգաբանական եւ օբիեկտիւ իմաստ եւ սերտ ազգակցութիւն ունի համեմատուող կրօնների «տաբուի» հետ («տաբուն» աստուածութեան կոնտեքստում Աստծուն վերաբերող այն անթափանցելի շերտն է, որով վերջինս անհասանելի ու անմերձենալի է մնում):

Սրբութեան հասկացողութիւնը նաեւ սերտօրէն կապուած է մասնաւոր տեղի հետ, ինչպէս օրինակ՝ Ծնն. ԻԸ 17–ում (Յակոբը՝ Բեթելում) եւ Ելից Գ 5–ում (Մովսէսն ու անկեզ մորենին): Բայց սրա հետեւում «մեծ խորհրդի» փորձառութիւնն է, որն Աստուծոյ ինքնայայտնութեան ձեւն է: Աստուծոյ «նախանձոտութիւնը» եւ ամպի տեսքով աստուածայայտնութիւնը [Ելք Ի 5, ԼԴ 4] յստակօրէն նշում են սրբութեան այս որակը, որպէս ինքնայայտնութեան եղանակ: Այն, որ սրբութիւնը գոյաբանական ու բարոյական տեսակէտից Եհովայի էութիւնն է, հաստատւում է ոչ միայն քահանաների ու ղեւտացիների աստուածաբանութեամբ [տե՛ս Ղեւտ. ԺԹ 2], այլ նոյնիսկ աւելի է շեշտւում մարգարէների միջոցով: Ամովս Դ 2–ի համաձայն, Եհովան երդւում է Իր սրբութեամբ, որն Իր համար ամենավեհ ու գերագոյն իդեալն է: Իր մարգարէական տեսիլքի մէջ [Զ գլ.] Եսային Եհովային տեսնում է որպէս սարսափազդու բարձրութեան, կուրացուցիչ մաքրութեան եւ ամենալից փառքի Թագաւոր: Միակ հնարաւոր արձագանքը, որ կարող է տալ մարդն ի տես նման սրբութեան, իրեն մեղաւոր ու արարածներից ամենացածրը զգալն է, եւ այսպիսով Եհովայի սրբութիւնը ձեւաւորում է Եսայու պատգամի հիմնական թեման [տե՛ս Ժ 7 եւ Եհովայի հաստատուն արտայայտութիւնը որպէս «Սուրբն Իսրայէլի», Եսայի Ա 4, Ե 19, Ժ 20, ԺԲ 6 եւն]: Ըստ Եսայու՝ Եհովայի սրբութեան նշանն այն է, որ նա համեմատութեան եզր չունի մարդուն կամ աշխարհին պատկանող որեւէ բանի հետ [տե՛ս Եսայի Խ 13, 25, ԾԵ 8 եւն]: Սակայն բացարձակապէս ուրիշ լինելու այս որակը նաեւ պարունակում է այն գաղափարը, որ Եհովան Իր

սիրով նոյնպէս բացարձակապէս տարբեր է մարդուց [տե՛ս Ովսէ ԺԱ 8 եւ Եսայի ԾԵ 8]:

6. Եհովան Աստուած է, Որի պաշտամունքը պէտք է տարբերուի: Հին քաղաքակրթութիւնների բոլոր կրօնների աստուածութիւնը տեսանելիօրէն ներկայ է արձանի կամ արձանների տեսքով: Ամենավաղ շրջաններից միակ առարկան կամ վայրը, որ Իսրայէլին տեսանելիօրէն ներկայացնում է Աստծուն, Ուխտի սրբազան տապանակն է: Սինայական աւանդութեամբ Իսրայէլին տրուած պատկերներ արգելող պատուիրանը սկզբնապէս առաջին հերթին վերաբերում էր ուրիշ աստուածների պատկերներ պատրաստելուն ու պաշտելուն, եւ այդ պատճառով հնարաւոր էր, որ հազուադէպ երեւան գային նաեւ Եհովայի ընդհանրական պատկերապաշտութեան դէպքեր [տե՛ս Դատ. ԺԷ 4, նաեւ Գ Թագ. ԺԲ 28–ի ոսկեայ երինջները, ըստ Յովսեփոս Փլաւիոսի, նուիրուած էին Եհովային]: Սակայն Իսրայէլի ճշմարիտ աւանդութիւնը սկզբից եւեթ Եհովայի պաշտամունքն էր առանց պատկերների [տե՛ս Ելք ԼԴ 17], եւ սա ժամանակի հետ գնալով աւելի ու աւելի շեշտուեց [տե՛ս Բ Օր. Դ 15] եւ անգամ աւելի ամուր կերպով հաստատուեց այն գաղափարի հիմքի վրայ, որ Եհովան չի կարող համեմատուել որեւէ արարածի կամ երկրային առարկայի հետ [տե՛ս Եսայի Խ 12–18]:

Զոհաբերութեան պարագային, այնուամենայնիւ, Եհովայի պաշտամունքը շատ սերտօրէն մօտենում է Իսրայէլի հարեւանների միւս կրօններին: Այս համեմատութեան համար երեւութաբանական կամ եզրաբանական հիմք գտնելն այնքան էլ դժուար չէ, սակայն Իսրայէլի զոհաբերական պաշտամունքի նշանակութիւնն ու ոգին բացարձակապէս տարբեր է միւս կրօններից: Բոլոր մոգական հակումներն անմիջապէս վանւում են [տե՛ս Ելք Ի 7 եւ Ի 2–ի պատուիրանը, ԻԲ 18, Բ Օր. ԺԸ 10]: Այս ձեւով զոհաբերութիւնն արտայայտում է որպէս Ուխտի բաժնեկից ժողովրդի հիմնական բարոյական ընտրութեան պտուղն ու արտայայտութիւնը: Այսպէս, անգամ Սինա լեռան Ուխտի ամփոփման զոհաբերական արարողութիւնների մէջ կենտրոնականը Եհովայի կամքի նկատմամբ բարոյական ու անձնական ենթակայութիւնն է [Ելք ԻԴ 6–8]: Մարգարէները շարունակական կերպով մատնանշում են յայտնութեան կրօնի բարոյական ու անձնական ենթակայութեան առաջնահերթ կարեւորութիւնը եւ մերժում որեւէ զոհաբերութիւն, որը չի ուղեկցւում Աստծուն հաճելի «հոգով» [Ամովս Ե 21–25, Ովսէ Զ 6, Եսայի Ա 10–15, Միք. Զ 6–7, Երեմ. Է 21–22]:

* * *

Աստուծոյ անդրանցականութեամբ է, որ Իսրայէլի կրօնն այնքան ամբողջական կերպով տարբերւում է միւս բոլոր այն կրօններից, որոնք գոյութիւն են ունեցել այդ տարածքում տուեալ ժամանակահատուածում, եւ սա է պատճառը, որ պարզապէս անհնարին է Եհովայիզմը բխեցնել ուրիշ աղբիւրներից: Ոչ մի բաւարար բնական պատճառ չկայ, որ կարողանայ բացատրել, թէ ինչպէս Իսրայէլի փոքր, քաղաքականապէս ու մշակութապէս աննշան ժողովուրդը հասաւ Աստուծոյ այս գաղափարին, եւ այս տեսակէտից անդրանցական Աստուծոյ մասին Իսրայէլի գաղափարը պարզապէս Հին Կտակարանի հրաշքն է:

Այս գաղափարի ոչ պակաս յատկանշական կողմն այն է, որ հակառակ աստուածային էութեան ու գոյութեան անդրանցականութեանը, աստուածային ներգործութեան ու ազդեցութեան ներունակութիւնը ցուցադրւում է կրկին ու կրկին: Եհովան ներկայ է ժամանակի ու տարածութեան իւրաքանչիւր առանձին կէտում: Բնական բոլոր երեւոյթների հետքերը դէպի Իրեն են տանում, թէեւ մասնաւոր ուշադրութիւն չի դարձւում անմիջական հետեւանքների վրայ [տե՛ս Սաղմ. ՃԽԷ 15–18, Յոբ ԼԸ 28–30]:

Հին Կտակարանի հիմնական թեման այն է, որ Եհովան ճշմարտապէս պատմութեան Տէրն է: Ճիշտ է ասելը, որ Հին Կտակարանը ոչ միայն անզուգական կերպով պարունակում է պատմութեան ամբողջապէս զարգացած աստուածաբանութիւնը, այլ՝ որ այն հէնց պատմութեան աստուածաբանութիւն է, որի համաձայն Եհովան, որոշակի նախագծով ու նիւթով, յատկապէս մարդկային «վարքին պատասխանելով», մուտք է գործում մարդու պատմութեան մէջ Իր ողորմութեամբ ու արդարութեամբ, եւ իսկապէս Ինքն է ընտրեալ ժողովրդի եւ ընդհանրապէս մարդկութեան պատմութեան կենտրոնական ու առաջնորդող գործօնը: Ամէն ինչի վրայ Եհովայի ազդեցութեան ու հսկողութեան ամենացայտուն վաւերացումը կարելի է գտնել Իրեն արքայի տիտղոս տալու իրողութեան մէջ [տե՛ս Թուոց ԻԳ 21, Եսայի Ջ 5, ԻԴ 23, ԼԳ 22, ԽԱ 21, ԽԳ 15, ԽԴ 6, ԾԲ 7, Երեմ. Ժ 7, Մաղ. Ա 14, Սաղմ. ԻԳ 7, ԽՋ 6, ՂԲ 1, ՂԵ 10, ՂԶ 1 եւն]: Եհովայի թագաւորութեան այս ըմբռնումն աստիճանաբար զարգանում ու միանում է այն գաղափարի հետ, որ Ինքը տիեզերքի ու մարդկութեան պատմութիւնն ուղղում է դէպի Իր արքայական մեծութեան ու փառքի վերջնական

յայտնութիւնը վերականգնուած աշխարհում: Այսպէս, բնութիւնը եւ պատմութիւնը գոյութեան չեն կոչւում ու զարգանում որպէս եղածի ու պատահածի անկախ ու ինքնուրոյն հետեւանքներ: Այն, ինչ մենք կարող էինք անուանել բնութեան կամ նոյնիսկ պատմութեան հաստատուած օրէնքներ, Հին Կտակարանում հանդէս են գալիս որպէս տեղի ունեցող աստուածային գործ, որը վերահսկւում է իր սեփական օրէնքներով, սակայն որը բաց է Աստուծոյ ազատ միջամտութեան դիմաց: Այսպիսով Աստուծոյ էական գոյութեան անդրանցականութիւնը միահիւսուած է Իր ներգործութեան ազատ ներունակութեան հետ:

Պէտք է ընդունել, սակայն, որ արտայայտութեան նկատելի մարդաձեւութեան (անտրոպոմորֆիզմ) հաստատուն կիրառութիւնը, որը շատ քիչ զանազանութիւններով հանդէս է գալիս ամբողջ Հին Կտակարանում՝ սկսած ամենավաղ տեքստերից մինչեւ ամենավերջինները, տրամագծօրէն հակառակ է թւում Աստուծոյ անդրանցականութեան այս ըմբռնմանը: Աստուածային հարցերի մասին գրելու նմանօրինակ մարդաձեւ եղանակի հիմնական պատճառը ընդհանրապէս պէտք է գտնել մարդկային մտքի բնածին սահմանափակութեան եւ չափաւոր որակի մէջ, սակայն պէտք է նկատի ունենալ նաեւ այն, որ Հին Կտակարանի այս որոշակի մարդաձեւութիւնն անմիջականօրէն կապուած է մտքի ու խօսքի ծայրահեղ պատկերաւոր ու փոխաբերական արեւելեան ձեւի հետ: Մարդաձեւութեան այս յաճախակի օրինակները, սակայն, Աստուծոյ անդրանցականութեան Հին Կտակարանեան հիմնական պատկերը զիջման կամ նուազեցման որեւէ իրական վտանգի չեն ենթարկում, որովհետեւ նրանց նպատակը ոչ թէ Աստուծոյ էութիւնը պատկերելն է, որը աշխարհից դուրս է ներկայացուած, այլ՝ Իր գործունէութիւնը, որն անմիջապէս գործուն է աշխարհի ներսում: Փաստօրէն, սա միակ հնարաւորութիւնն է ճշգրիտ ձեւով եւ այսպէս ամբողջական ցոյց տալու Աստուծոյ ներունակութիւնն Իր հիմնական անդրանցականութեան հիմքի դիմաց: Նրանք, սակայն, մի շատ կարեւոր ու դրական գործառոյթ (ֆունկցիա) են կատարում՝ եբրայեցիներին հնարաւորութիւն տալով Եհովային ըմբռնել ու նկարագրել Իր ամբողջական անձնականութեան լրիւութեան մէջ:

Գ. ԱՆՁՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾ

Սկզբից եւեթ յստակօրէն պէտք է ընդունել, որ, ի հակադրութիւն Աստուծոյ անձնականութեան վերաբերեալ որոշ ժամանակակից առարկութիւնների, անձնականութեան վաւերական հասկացութիւնը

չի ներառնում գոյութեան որեւէ էական ձեւափոխութիւն կամ սահմանափակում, քանի որ այն էական անկախութիւն է ենթադրում իր հետ յարաբերութեան իմաստով, եւ սա վերաբերում է հաւասարապես իր էութեամբ սահմանափակ ու անսահմանափակ յարաբերութիւններին: Հրեաները, ի տարբերութիւն հին շրջանի միւս արեւելեան ժողովուրդների, հոգու եւ հոգեկանութեան գաղափարը չզարգացրեցին փիլիսոփայութեան աստիճանի, սակայն նրանք ամուր կերպով բռնեցին հոգու էութիւնը եւ այն համարեցին մի տարր, որը կապ ունի ուղղակի իր հետ ու անմիջականօրէն տիրապետում է իրեն, եւ յաջողութեան հասան Աստուծոյ մասին իրենց սեփական պատկերացման ամենաբարձր ուրուագծման մէջ, որն ամբողջովին դրոշմուեց հոգու բնութեան մասին իրենց անձնական հասկացողութեան կնիքով:

Այսպիսով, Աստուածութիւնը պարզապէս չի ներկայացւում որպէս ստեղծագործ առաջին պատճառ եւ ողջ գոյութեան աղբիւր՝ անորոշելի ու ամէն ինչ ընդգրկող «այն», ոչ էլ դիտւում է որպէս սոսկ գոյութիւն ինքնին: Աստուած պարզապէս դիտւում է որպէս «Նա» կամ «Ես» կամ որպէս մէկ «է»: Սա ակնյայտօրէն երեւում է Իր մասին արուած հին կտակարանեան սկզբունքային հաստատումներում, այսինքն՝ այն տեղերում, որտեղ Աստուած «խօսում է»: Այս հատուածներում Իր գիտութիւնն ու իմաստութիւնը, Իր կամքն ու Իր ազատութիւնը շեշտւում են ոչ միայն նիւթի մէջ, այլեւ՝ Իր խօսելու փաստի մէջ: Ուստի շատ յաճախ Աստուծոյ խօսքը երկխօսութեան ձեւով է, որտեղ Աստուած սուբիեկտն է, խօսող «Ես»ը, իսկ մեծ մասամբ մարդն է օբիեկտը՝ «դուն», որին դիմում է Աստուած: Դժուար թէ անհրաժեշտութիւն լինի մէջ բերել այս երեւոյթի մասնաւոր դէպքերը, քանի որ գրեթէ Սուրբ Գրքի իւրաքանչիւր էջ ապացուցում է դա: Դեռ աւելին, մարդու՝ որպէս «Աստուծոյ պատկեր» ներկայացման մէջ պարունակւում է Աստուծոյ անձնականութեան հիմնական հաստատումը, իսկ Եհովա անուան աստուածային պարզաբանումն [«Ես եմ, որ էն» Ելք Գ 14] անձնական տարրը մտցնում է որպէս աստուածային էութեան բաղադրիչ մաս:

Աստուած նոյնպէս ուղղակի ակնարկութիւններ է անում Իր անձ լինելու փաստի վերաբերեալ եւ այն կատարում է մի եղանակով, որը չէր կարող աւելի ուղղակիօրէն անձնական լինել: Սա կարելի է գտնել այն գրքերում, որոնք հիմնականում վերաբերում են Օրէնքին, ինչպէս նաեւ՝ իմաստութեան եւ ամենից շատ՝ մարգարէական գրքերի մէջ: Հետեւեալ երկու օրինակներն են ընտրուած շատերից. «Ես ողորմեցայց որում ողորմեցայց, եւ գթացայց յոր գթացայց» [Ելք ԼԳ 19] եւ

«Ասացի, թէ՝ ամենայն խորհուրդք Իմ հաստատեսցին, եւ զամենայն, զոր կամիմ, արարից» [Եսայի ԽՋ 10]: Միայն այս երկու օրինակներում Աստուծոյ հոգին ու ազատութիւնն անսխալ յստակութեամբ յայտնւում են որպէս բացարձակ անձնականութեան էական տարրեր:

Վերջապէս, աստուածային գոյութիւնը, որպէս անձ, ամենացայտուն կերպով ակնյայտ է Աստուծոյ ազատութեան ու ինքնուրոյնութեան մէջ Ուխտի պարագային՝ մարդու նկատմամբ Իր սիրոյ առնչութեամբ: Ուխտի մէջ Եհովայի այս սէրը կազմում է հիմնական թեման ոչ միայն հետագայում նոր կտակարանեան յայտնութեան, այլեւ՝ հին կտակարանեան յայտնութեան համար: Այն ամէնը, ինչ մաս է կազմում Աստուծոյ կառավարութեանը (եւ մարդու ղեկավարութեանը), պտտւում է այս առանցքի շուրջ՝ սէր եւ արդարութիւն, իմաստութիւն, առաջնորդութիւն եւ հաւատարմութիւն, խոստում եւ սպառնալիք, յանդիմանութիւն եւ զգուշացում: Ուխտի Աստուած Իրեն ցոյց է տալիս որպէս ժողովրդի Հայր [Ելք Դ 22–23, Ովսէ ԺԱ 1, Եսայի ԿԴ 8, Մաղ. Բ 10 եւն], որպէս մի Հայր, որի մէջ սերտօրէն միահիւսուած են հայրական ու մայրական տարրերը [տե՛ս Ովսէ ԺԱ 1–4, Երեմիա ԼԱ 9–20, Եսայի ԽԹ 15, ԿՋ 13], որպէս թագաւորների [Բ Թագ. է 13–16, Սաղմ. ՁԸ 27–28], որբերի [Սաղմ. ԿԷ 6], Իր նկատմամբ երկիւղածների [Սաղմ. ՃԲ 13] եւ արդարների Հայր [Իմաստ. Բ 16]: Նա Իրեն յայտնել է նաեւ որպէս նախախնամող Հովիւ [Միք. Դ 6, Գ 19, Երեմ. ԼԱ 10, Եզեկ. ԼԴ, Սաղմ. ԻԲ 2–4] եւ որպէս փեսայ ու ամուսին [տե՛ս Ովսէ Բ 16, Երեմ. Բ 2, Եզեկ. ԺՋ 8, Եսայի ԾԴ 5]: Այնպէս, ինչպէս մարդկային անձն է մասնաւորապէս բնութագրւում իր սրտով եւ իր դէմքով, նոյն ձեւով Հին Կտակարանի Աստուած նոյնպէս ունի սիրտ [տե՛ս Ծնն. Ջ 6, Ա Թագ. ԺԳ 14, Գ Թագ. Թ 3, Երեմ Գ 15, Սաղմ. ԼԲ 11 եւն] եւ դէմք [Ելք ԼԳ 14–23, Յոբ Ա 11, Սաղմ. ՀԹ 20 եւն]: Բոլոր աւելի բարձր ներքին որակները կարող են ստորոգուել Նրան, եւ, դեռ աւելին, անգամ նրանք, որոնք մասնաւորապէս մարդկային են թւում, եւ որոնք երբեմն նիւթ են հայթայթում Աստուծոյ հին կտակարանեան պատկերի դէմ մեղադրանքների համար: Այս մարդկային որակները, որոնք Հին Կտակարանը վերագրում է Աստծուն, պէտք է հասկացուեն, սակայն Աստուածաշնչի մնացած մասի հետ կապի եւ ողջ աստուածային յայտնութեան կոնտեքստի մէջ: Աւելին, նրանց մօտ կատարելութեան պակասի փաստն ինքնին վկայում է Եհովայի ակնյայտ անձնականութեան մասին, որի ներքին վճիռներն ու շարժառիթները յաճախ մութ են մարդու համար:

Աշխարհում չարի գոյութեան վերաբերեալ բնական աստուածա-

բանութեան հիմնահարցի առնչութեամբ Յոբի գիրքն ակնարկում է աստուածային բաշխման անթափանցելի խորհրդի մասին, սակայն միեւնոյն ժամանակ խստօրէն կանխում է կոյր կամ անանձնական ճակատագրի՝ բնութեան մէջ լուծման որեւէ ձեւի գաղափարը: Յոբ ԼԸ–ում Եհովան Իրեն յայտնում է որպէս միակ տեսակի անձ: Միեւնոյն ժամանակ յստակօրէն ցուցադրւում է նաեւ Իր տիեզերական պատճառականութիւնը, ինչպէս Հին Կտակարանի գրեթէ իւրաքանչիւր գրքում: Եբրայական միտքը յստակ զանազանութիւն չի մտցնում այն բաների, որոնց տեղի ունենալու պատճառն Աստուած է, եւ այն բաների միջեւ, որոնց տեղի ունենալը Նա թոյլ է տալիս: Այսպէս է, որ եբրայեցերէնն ի վիճակի է արտայայտելու փարատնի խստասրտութեան առարկայական նոյնական փաստը երկու հաստատումներով. «Խստացոյց Տէր զսիրտն Փարաւնի» [Ելք Թ 12 եւ «Փարատն... յաւել ի մեղանչել... եւ խստացաւ սիրտն Փարաւնի» [Ելք Թ՝34–35]: Աստուծոյ անձնական պատճառականութիւնը եւ մարդու ընտրելու ազատութիւնը հաւասար շեշտ է ստանում, եւ նրանք չեն ընդունւում որպէս միմեանց բացասող հակադրոյթներ: Այս ձեւով Եհովայի համար հնարաւոր է բաւական յաճախ յայտնուել «չարիք» գործողի դերում կամ որոշ թուացեալ «դիւական» որակով մարդու նկատմամբ Իր բաշխման փոխաբերական ու յաճախ հիպերբոլիկ ուրուագծման մէջ: Այս տեսակի հատուածներին աստուածաբանական մեկնութիւն հաղորդելու որեւէ փորձի ընթացքում պէտք է ուշադրութիւն դարձնել նման տեքստերն արտայայտութեան սովորական եբրայական եղանակի ու մասնաւորապէս տեղի գրական ժանրի հարցի կոնտեքստից չանջատելու վրայ, եւ նաեւ ի մտի պէտք է ունենալ Հին Կտակարանի յայտնութեան անկատարութիւնը Նորի նկատմամբ:

Դ. ԱՍՏՈՒԱԾ՝ ՈՐՊԷՍ ԼԻ ԿԵԱՆՔԻ ԱՂԲԻՒՐ

Թէեւ Աստուած անդրանցական է, Նա նաեւ մարդկային ու կենդանական թագաւորութեան մէջ ողջ կեանքի կենսական աղբիւրն է: Թուց Ի՛Է 16–ում Նա կոչւում է «Աստուած հոգւոց ամենայն մարմնոյ»: Իր կոնտեքստի մէջ վերցրած՝ սա մասնաւորապէս մարդուն է վերաբերում: Արարչագործութեան հատուածի համաձայն, մարդն, ի տարբերութիւն կենդանիների, նաեւ էապես կազմուել է Աստուծոյ կողմից՝ իր ռունգերի մէջ կեանքի շունչն ընդունելով [Ծնն. Բ 7]: Միւս կողմից, սակայն, ըստ Սաղմ. ՃԳ 29–30–ի, կենդանական կեանքը նոյնպէս աստուածային մի ձեւ է:

Սակայն մարդու մէջ Աստուծոյ կենդանի Հոգու այս հոսման դէպքում մեզ համար յատկապէս ցնցողը կեանքի գերբնական ու անսովոր արտայայտութիւններն են, ինչպէս Սամսոնի յատուկ ուժը [Դատ. ԺԴ 6], արուեստատրների ու արհեստատրների ստեղծագործական ոգեշնչումը [Ելք ԻԸ 3], մարգարէների յափշտակող ներշնչանքը [տե՛ս Ա Թագ. Ժ 5–6] եւ իմաստունների իմաստութիւնը [տե՛ս Յոբ ԼԲ 8]: Որքան արտառոց ու գերբնական է նման երեւոյթը, այնքան Աստուծոյ կենսական գործունէութիւնը նրանց մէջ աւելի ուժգին է հանդէս գալիս: Իսկապէս, Նա նրանց մէջ Իրեն յայտնում է այնպէս պարզ, ինչպէս կեանքն է, եւ հաւատացող իսրայէլացին ինքն իրեն ազատօրէն ճանաչում է որպէս մէկի, որն իր գոյութեան բոլոր մակարդակների վրայ կեանքը ստացել է Նրանից: Այս պատճառով է, որ սաղմոսերգուները (եւ յատկապէս՝ ՃԺԸ սաղմոսի հեղինակը) այդքան պատրաստակամօրէն Եհովային դիմում են «Կեցո՛ զիս» հայցով: Այստեղ առաջինն ու հիմնականը, իհարկէ, մահացու վտանգից ազատուելու ցանկութիւնն է, սակայն սրա հետ սերտօրէն կապուած է ներքին կեանքի վերանորոգումը [տե՛ս Սաղմ. ԻԱ 20–22, ԿԸ 33] եւ վերջապէս կեանքի հոգեւոր գանձերի (ինչպէս Աստուծոյ խօսքի) երջանիկ փորձառութիւնը [Սաղմ. ՃԺԸ]: Այսպէս, Սաղմ. ԺԵ 11–ում մենք գըտնում ենք. «Ցուցեր ինձ զճանապարհս Քո կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց Քոց, ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ Քո մինչեւ ի սպառ»: Այս զգացումն աւելի ուժգին արտայայտուած է Սաղմ. ԼԵ 8–ում. «Որպէս զի՞ բազում արարեր զողորմութիւն Քո, Աստուա՛ծ, այլ որդիք մարդկան ի հովանի թեւոց Քոց յուսասցին: Արբեսցին նոքա ի պարարտութենէ տան Քո, եւ զուղխս փափկութեան Քո տացես ըմպել նոցա: Ի Քէն է, Տէ՛ր, աղբեւր կենաց, եւ լուսով երեսաց Քոց տեսանեմք զլոյս»:

Մնկասկած, Եհովայի մօտ լոյսի ու կեանքի լիութեան այս գիտելիքն է, որ հաւատացեալի համար հնարաւոր դարձրեց հակուելու այն գաղափարին, ինչը ներյատուկ է Աստուծոյ մասին իր ուղղակի միաստուածեան կոնցեպցիային, եւ որը կարող է բնութագրուել «բացարձակ միակութիւն» արտայայտութեամբ: Ճշմարիտ է, որ իսրայէլացին գիտի, որ «երկնայինները», որոնց նա զանազան անուններ է տալիս՝ ներառեալ նոյնիսկ «Աստուծոյ որդիները», Եհովայի հետ են, սակայն նա Աստուծոյ անդրանցականութեան մասին իր գիտելիքից հակուած է եզրակացնելու, որ նոյնիսկ սրանք Եհովայի համար կատարեալ գործակիցներ չեն կարող լինել:

Յետգերութեան գրքերը, որոնք իմաստութեան մասին խորհրդա-

ծութիւնների են վերաբերում, յստակ ծանուցում են, որ Աստուծոյ կեանքը՝ անձնապէս եւ ինքնին, պէտք է լիապէս առատ լինի: Աստուածային իմաստութեան բնութեան այս արտայայտութիւնը, որը հաւակնում է վայելել սուրբգրային տեքստերի աջակցութիւնը, Առակ Ը–ում հասաւ իմաստութեան անձնաւորմանը, որի կարեւորութիւնը վեր է բարձրանում խիստ գործնական այն ճշմարտութեան արտայայտութիւնից, թէ Եհովան իմաստուն է: Այն, ինչ իսկապէս կապուած է Աստուծոյ իմաստութեան այս անձնաւորման հետ, Աստուծոյ կեանքի անձնական լրիւութեան ներշնչուած գիտելիքի առաջին յստակ արտայայտութիւնն է, թէեւ Աստուծոյ մէջ իրական յոգնակի անձնականութեան որեւէ ձեւի նշում չկայ: Այս մասնաւոր հատուածը, սակայն, դրականօրէն նոյնացուել է Բանի մասին նոր կտակարանեան ուսմունքի հին կտակարանեան հիմքերից մէկի հետ:

Հին Կտակարանում աստուածային խօսքը նոյնպէս անձնաւորուած է, թէեւ այս դէպքում ընդգծումը մշտապէս թոյլ է արտայայտուած եւ աւելի նուազ սահմանուած, քան աստուածային իմաստութեան պարագային: Այնուամենայնիւ, Սաղմ. ՃԺԸ 89–ում մենք գտնում ենք. «Յաւիտեան, Տէ՛ր, բան Քո կայ յերկինս», եւ այստեղ «կայ» բառն այս ձեւով եբրայեցերէնում օգտագործուած է բնորոշող անձնական լրացուցիչ իմաստով: Այստեղ «խօսքը» նոյնպէս ընկալում է որպէս աստուածային մունետիկ, որը կանգնած է բոլոր երկնային էակներից վեր, որով Եհովայի խօսելը (եւ այս շրջանում աշխարհի ու մարդու հետ Աստուծոյ ողջ կապը պարունակում է աստուածային «խօսելու» երեւոյթի մէջ) ստանում է ճշգրիտ ձեւ ու հզօր արտայայտութիւն: Նման գաղափար կարելի է գտնել հետեւեալ տեքստերում Եսայի Թ 6–7, ԾԵ 11, Սաղմ. ՃՁ 20, ՃԽՁ 15–20, Իմաստ. ԺՁ 12, ԺԸ 14:

Որոշակի հատուածներում Եհովայի հոգին նոյնպէս անձնաւորուած է: Անգ. Բ 5–ում Իր հոգին, որպէս պաշտպան, բնակւում է Իսրայէլի ժողովրդի մէջ. ըստ Նեեմ. Թ 30–ի՝ Իր հոգին նրանց զգուշացնում է մարգարէների միջոցով. Եսայի ԿԳ 10–ում Իր հոգին տրտմած է ժողովրդից, իսկ Իմաստ. Ա 7–ի համաձայն, Տիրոջ հոգին, որը լցնում է ողջ աշխարհը եւ ընդգրկում տիեզերքը, գիտի իւրաքանչիւր հնչիւնի մասին:

Աստուծոյ իմաստութեան խօսքի ու հոգու այս անձնաւորումները ոչ մի դէպքում չեն ընդունուելու դիմաւորման փիլիսոփայական իմաստով, սակայն միւս կողմից նրանք աւելին են, քան բանաստեղծական կամ սոսկ չափազանցուած գրական արտայայտութիւնները:

Նրանք ցուցադրում են աստուածային կեանքի առատութիւնն ու լիութիւնը եւ սրբազան պատմութեան տեսակէտից ներկայացնում են առաջին փորձնական ու նախնական շարժումները դէպի միակ աստուածային գոյութեան էութեան լրիւութեան ներսում յոգնակի անձնականութեան յայտնութիւնը, որն ի վերջոյ Նոր Կտակարանում յայտնւում է որպէս Երրորդութիւն:

Հին Կտակարանը չի ներկայացնում աստուածային էութեան ամբողջական ու համապարփակ պատկերը: Այն, ինչ ս. Պօղոսն ասում է Աստուծոյ պատկերի խորհրդաւոր ու հատուածական գիտելիքի մասին՝ «իբրեւ ընդ հայելի օրինակաւ» [Ա Կորնթ. ԺԳ 12], յարմար է Հին Կտակարանում ներկայացուածին: Այն, այնուամենայնիւ, ամէն դէպքում աւելին է, քան որեւէ պատկեր, որը բարձրագոյն կրօնների կամ փիլիսոփայութեան պատմութեան մէջ հնարաւոր էր ձեռք բերել ներըմբռնման, խորհրդածութեան կամ մտորման որեւէ մարդկային գործընթացի միջոցով: Հին Կտակարանը ոչ միայն պատկերում, այլեւ ցոյց է տալիս յայտնութեան Աստուծոյ ներկայութիւնը, եւ այսպիսով, Պասկալի արտայայտութեամբ, ուղղակի հանդիպումն «Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուծոյ» եւ, որպէս հետեւանք, այն Աստուծոյ հետ, որը Հայրն է Քրիստոսի:

ԱՂԲԻՒՐՆԵՐ

1. Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Վիեննա, 1929
2. Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729
3. Bauer Encyclopedia of Biblical Theology, London, 1976
4. Harper's Bible Dictionary, San Francisco, 1985
5. New Bible Dictionary, Leicester, 1988
6. Peake's Commentary on the Bible, London, 1967
7. Sacramentum Mundi, An Encyclopedia of Theology, Montreal, 1968
8. The New Oxford Annotated Bible, New York, 1977
9. Толковая Библія, Петербургъ, 1904-1907

Մեսրոպ քահանայ Արամեան

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԻ ՈՒՐՈՒԱԳԾԵՐ (Դ—Ը դդ.)

(Դաւանաբանական էսքիզ)

«Հաւատքի ճշմարտութիւնը լոյս է մտքի աչքերի համար...»:
[Ս. Գրիգոր Լուսաւորիչ, «Յաճախապատում»]

ՄՈՒՏՔ

Հաւատքը հոգեւոր կեանքի առանցքն է. այսպէս են տեղեկացնում մեզ Սուրբ Գիրքը եւ Եկեղեցու հայրերի գրուածքները: Հաւատքով ոչ միայն սկզբնաւորւում է Աստուծոյ եւ մարդու յարաբերութիւնը, այլեւ հաւատքով է պայմանաւորուած հոգեւոր կեանքի ողջ ընթացքը, նրա վերելքն ու զարգացումը: Հաւատքով է առհասարակ բնորոշւում քրիստոնէական կրօնը. այստեղից էլ *քրիստոնէական հաւատք* կամ *հաւատացեալ* արտայայտութիւնները: Ըստ Եկեղեցու վարդապետների՝ հաւատքն Աստծուց պարգեւուող շնորհ է, որը զօրացնում է հոգին՝ ճանաչելու Աստծուն. հաւատքով մենք յարաբերութեան մէջ ենք մտնում Աստուծոյ հետ, ճանաչում Նրան, որ վեր է ամէն տեսակ ճանաչողութիւնից եւ անհասանելի՝ մարդկային բնութեան համար: Հաւատքը, լինելով հոգեւոր կեանքի էական յատկանիշը, աստիճանական բնոյթ ունի. հաւատքի առաջին աստիճանը կամ տեսակը *դաւանական հաւատքն* է կամ *հաւատքի դաւանութիւնը:* Այս ուղղակիօրէն հաստատում է ս. Աթանաս Աղեքսանդրացին. *«Աստծուն ճանաչելու առաջին տեսակը ճշմարիտ հաւատքի դաւանութիւնն է»* [Ս. Աթանաս Աղեքսանդրիացի, «Յամենասուրբ Երրորդութիւն»]:

Դաւանել նշանակում է ընդունել, խոստովանել եւ վկայել որպէս ճշմարտութիւն, հաստատել եւ հաւատարմութիւն խոստանալ նրան, ինչին հաւատում ես: Իսկ դաւանութիւնը հաւատքի հիմնական դրոյթների (սկզբունքների) ամբողջութիւնն է, որին պէտք է ամբողջ սրտով հաւատայ ամէն մի քրիստոնեայ: Դաւանել բառն ունի մէկ այլ կարեւոր նիստ՝ դաւանել նշանակում է խոստովանել եւ վկայել բերանով: Բերանի վկայութիւնը կարեւոր է *«Քանի որ սրտով հաւատում էք արդարանալու համար եւ բերանով խոստովանում փրկուելու համար. քանզի այս է Գիրքն [ասում]. «Ամէն ոք, ով հաւատայ Նրան, չի ամաչի»* [Հռոմ. Ժ 10]. ահա թէ ինչու ամէն օր եկեղեցում բարձրաձայն արտասանում է Հաւատոյ հանգանակը: Դաւանական մաքրութեան հարցերը մշտապէս եղել են Եկեղեցու ուշադրութեան կենտրոնում, Եկեղեցու հայրերը, պայքարելով զանազան հերձուածների եւ աղանդների դէմ, աստուածաբանական կուռ կաղապարների միջոցով աշխատել են թրծել հաւատացեալ գիտակցութիւնը եւ ապահովել վտանգաւոր շեղումներից: Դաւանական մաքրութիւնը նրանց կողմից դիտարկուել է որպէս քրիստոնեայ լինելու անհրաժեշտ պայման: Այսպէս, հաւատքի մաքրութիւն է պահանջւում իւրաքանչիւր մկրտուող մեծահասակից (փոքրի դէպքում՝ կնքահօրից) եւ առաւելապէս՝ մկրտող հոգեւորականից, որը պէտք է ուսուցանի եւ նախապատրաստի մկրտուողին: Ահա՛ «Մաշտոց» ծիսարանում մկրտութիւնից առաջ քահանային ուղղուած խրատը. *«Մինչեւ [չափահասի] մկրտութիւնը, որը կամենում է քրիստոնեայ լինել, պէտք է նրան ուսուցանել սուրբ Եկեղեցու հաւատքը եւ վարդապետութիւնը, այսինքն՝ Աստուածային Անձերի Երրորդութիւնը, աշխարհի արարչագործութիւնը, սուրբ այրերի ընտրութիւնը, Քրիստոսի ծնունդը եւ Նրա բոլոր փրկարար տնօրէնութիւնները՝ մկրտութիւնը Յովհաննէսից, քարոզութիւնը, հրաշագործութիւնը, մատնութիւնը, խաչելութիւնը, մահը, թաղումը, յարութիւնը, համբարձումը, Սուրբ Հոգու գալուստը, Յիսուսի Երկրորդ Գալուստը, հասարակաց (համընդհանուր) յարութիւնը, գործերի հատուցումը եւ սուրբ Եկեղեցու եօթ խորհուրդները...»* [«Մաշտոց» ծիսարան]:

Հոգեւոր ճանապարհով ընթանալիս մարդն անընդհատ ենթարկւում է դիւային փորձութիւնների եւ յարձակումների: Ըստ անապատական հայրերի՝ ճշմարիտ դաւանութիւնը հզօր զէնք է չարի դէմ մղուող պայքարում: Ս. Նեղոս Սինայեցին գրում է *«Պարաստի՛ր քո անձն ինչպէս հմուտ ճգնող, եւ եթէ յանկարծ տեսնես որեւէ տեսիլք, մի՛ սարսափիր, եթէ տեսնես քեզ վրայ բարձրացրած սուր կամ աչքերիդ առաջ վառուող ջահ, մի՛ խռովուիր, եթէ տեսնես որեւէ վատաղէմ եւ արիւնատես կերպարանք,*

ամենեւին մի՛ տագնապիր քո ներսում. այլ կանգնի՛ր՝ դաւանելով ճշմարիտ դաւանումը, եւ դիւրութեամբ կտեսնես քո թշնամիների կործանումը» [Ս. Նեղոս Սինայեցի, «Աղօթքի մասին»]: Այսպիսով, հաւատքը հոգեւոր առաջնութացի եւ չարի որոգայթներից խուսափելու կարեւորագոյն գործօն է եւ պատահական չէ, որ Եկեղեցու հայրերի կողմից մշակուել եւ սերունդներին է աւանդուել մեծածաւալ դաւանական գրականութիւն:

Դաւանական շարժումները մշտապէս ուղեկցուել են քրիստոսաբանական մտքի մեծ ակտիւութեամբ. եկեղեցական միտքը կենդանի կերպով բեւեռուած է եղել Քրիստոսի վրայ՝ որպէս մարմնաւորուած Բան–Աստուծոյ: Յիսուս Քրիստոսին՝ Աստուծոյ մարդացած Որդուն ճիշտ դաւանելու խնդիրը Եկեղեցու հայրերի կողմից դիտուել է որպէս հաւատքի կարեւորագոյն սկզբունք. *«Քրիստոնէութեան անունը Քրիստոսին ճշմարիտ դաւանելն է, եւ քրիստոնեայ է անուանւում նա, ով ունի ճշմարիտ դաւանութիւնը»* [Ս. Աթանաս Աղեքսանդրիացի, «Յամենասուրբ Երրորդութիւն»]: Եւ, բնականաբար, Եկեղեցու դաւանական ժառանգութեան մէջ քրիստոսաբանութիւնը ճշդող մասն է կազմում:

Թէ՛ Ընդհանրական Եկեղեցու, թէ՛ Հայ Եկեղեցու համար Դ–Ը դդ. առանձնանում են որպէս քրիստոսաբանական մտքի ձեւաւորման ժամանակաշրջան. եթէ Դ դարի երկրորդ կէսին ամենայն սրութեամբ առաջ են քաշւում քրիստոսաբանական հարցերը, ապա Ը դարում բիւրեղանում եւ ամբողջական տեսք է ստանում Եկեղեցու քրիստոսաբանական համակարգը (ներկայ ուսումնասիրութեան մէջ մենք սոյն ժամանակաշրջանը կանուանենք քրիստոսաբանական դարաշրջան): Հայ Եկեղեցու պատմութեան մէջ այս ժամանակաշրջանը նշանաւորւում է դաւանական մտքի մեծ վերելքով, սուրբ հայրերի ջանքերի շնորհիւ յղկւում եւ ամրանում է ազգային դաւանական գիտակցութիւնը: Սակայն այս վերելքը եղել է դժուարին եւ խռովայոյզ. անընդհատ պայքար հաւատքի մաքրութեան համար թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին թշնամիների դէմ... Եւ այս ամէնը՝ երկերեսանիութիւնների, նենգութիւնների ու չարախօսութիւնների, քաղաքական ճնշման եւ բռնութիւնների ներքոյ: Այսուհանդերձ, մեր Եկեղեցին կարողացել է անաղարտ պահել իր առաքելական դէմքը, հարազատ մնալ առաքելական աւանդոյթին եւ այն, որպէս Սուրբ Հոգու կենդանի ժառանգութիւն, մատուցել Եկեղեցու մանկանց:

Հայ Եկեղեցու դաւանութեան մասին շատ է գրուել օտար հեղինակների կողմից: Ցաւօք, այդ գրականութեան մէջ զգալի տեղ են զբաղեցնում այնպիսի աշխատութիւններ, որոնք փորձում են աղաւաղել Հայ Առաքելա-

կան Ուղղափառ Եկեղեցու դէմքը, իբրեւ հերետիկոսական (որոշ «խորատեսներ» գործածում են «թաքնուած հերետիկոսութիւն» բառակապակցումը) ներկայացնել մեր դաւանութիւնը՝ յենուելով բազմադարեան բամբասանքի եւ սուտ մեղադրանքների վրայ (այս գործին «նպաստել» են ԺԹ–Ի դդ. որոշ հայ հեղինակներ)... Ուշագրաւ է, որ այդ հեղինակների զգալի մասը չափազանց թոյլ պատկերացում ունի կամ գրեթէ չունի հայ դաւանական գրականութեան մասին: Նպատակ չունենալով ընդդիմախօսել այս կամ այն հեղինակի հետ՝ մենք կշարժուենք ճշմարտութեան լոյսի բացայայտման ճանապարհով՝ համոզուած լինելով, որ լոյսի յայտնուելուն պէս կցրուի անգիտութեան մէգը, եւ կվերանայ կասկածանքի խաւարը: Այդ ճշմարտութիւնը նախ եւ առաջ կայանում է նրանում, որ Հայոց Եկեղեցին պահպանել է առաքելական աւանդութիւնը եւ հաւատքի ուղղափառ դաւանութիւնը, ունեցել ինքնուրոյն աստուածաբանական միտք եւ ճանապարհ, որն այսօր ունի համաքրիստոնէական նշանակութիւն եւ արժէք:

Մեր օրերում, աւաղ, դաւանական հարցերը մատնուած են սարսափելի անուշադրութեան: Այն, ինչը եղել է մեր հայրերի մշտաջան հոգածութեան առարկան, ինչի համար մշտապէս նահատակուել եւ արիւնով է վճարել մեր ժողովուրդը, այսօր պատուած է տգիտութեան եւ անհոգութեան փոշով: Եւ սրա հետ մէկտեղ՝ ազգային գիտակցութեան եւ գաղափարախօսութեան ընդունայն որոնումներ, օտարամուտ ուսմունքների եւ կրօնների հրապոյրներ... Այսօր, երբ գրեթէ աղաւաղուած է մեր քրիստոնէական հոգեբանութիւնը, երբ գրեթէ կտրուած ենք մեր արմատներից եւ Սուրբ Հոգու կենդանարար աւանդութիւնից, աւելի քան երբէք անհրաժեշտ է ունենալ հաւատքի ուղղափառ դաւանութիւնը՝ որպէս քրիստոնեայ լինելու կարեւորագոյն նախադրեալ եւ ամուր պարիսպ՝ ընդդիմամարտ ուժերի յարձակումների դէմ:

Ա. ՍԿԻԶԲ (Դ–Ե դդ.)

Քրիստոսաբանական հարցերը միշտ էլ ուղեկցել են Եկեղեցու պատմութեանը: Սակայն քրիստոսաբանական շարժումները յատկապէս աշխուժացան Դ դարում՝ կապուած Նիկիոյ Ա տիեզերաժողովի հետ... «Համագոյութիւնը» (*Ὁμοούσια*), որպէս աստուածաբանական «բանալի», քրիստոսաբանական մտքի համար բացեց իսկապէս նոր դարաշրջան: Համագոյութիւնը բացայայտում էր մի կողմից Քրիստոսի Աստուածութեան կատարելութիւնը եւ միւս կողմից՝ մարդեղութեան ամբողջութիւնը եւ իսկութիւնը. Յիսուս Քրիստոս կատարեալ Աստուած է (համագոյ

է Հայր Աստծուն) եւ կատարեալ մարդ (համագոյ է մեզ՝ մարդկանց): Դ դարի երկրորդ կէսին եւ Ե դարի առաջին կէսին երեւան են գալիս Ապողինարի եւ Նեստորի հակադիր հերձուածները. մէկը ժխտում էր մարդեղութեան ամբողջութիւնը, իսկ միւսը՝ ընդհակառակը՝ մարդկային ճիգերից բացի ոչինչ չէր տեսնում Քրիստոսի մէջ: Այս երկու ծայրահեղութիւններն էլ առաջ եկան Աստուածամարդու խորհրդի սխալ ընկալումից, Աստուծոյ եւ մարդու միաւորման մասին սխալ ենթադրութիւններից... Ծուցաբերելով աստուածաբանական մտքի մեծ զգուշութիւն եւ սթափութիւն եւ հարազատ մնալով Ճիկիական աւանդութեանը՝ Եկեղեցու հայրերը բացայայտում էին ուղղափառ հաւատքի սկզբունքները. նրանց համար ելակէտային էր Աստուծոյ եւ մարդու միաւորման կատարելութիւնը Քրիստոսի մէջ՝ որպէս փրկագործութեան հիմնական պահ: Քրիստոսի մէջ Աստուծոյ եւ մարդու միութիւնը նրանք ընդունում էին անբաժանելի, անփոփոխելի եւ անշփոթելի՝ իրենց գոյացական յատկութիւնների մէջ. միեւնոյն ժամանակ նրանք անընդհատ նշում էին, որ Քրիստոս–Աստուածամարդու միութիւնն անճառելի եւ անհասանելի է մարդկային մտքի համար. «Քանը մարմին եղաւ...», սակայն ինչպէս բոլոր մտքերից եւ խօսքերից վեր՝ անճառելիօրէն եւ անհասութեամբ: Այս սկզբունքային պնդումը Եկեղեցու աստուածաբանական համակարգը զերծ էր պահում մարդկային մտաբանութիւններից:

Քրիստոսաբանական շարժումները իրենց արձագանքները գտան նաեւ Հայոց աշխարհում: Երեք տիեզերաժողովների[1] բարերար ազդեցութեան տակ ձեւաւորւում եւ ամրանում է ազգային դաւանական գիտակցութիւնը, ստեղծւում ինքնուրոյն աստուածաբանական գրականութիւն, երեւան են գալիս որոշակի առանձնայատկութիւններ... Այս տեսանկիւնից ուշագրաւ են այս ժամանակաշրջանից մեզ հասած ս. Գրիգոր Լուսաւորչի «Յաճախապատումը» եւ «Վարդապետութիւնը», «Գիրք թղթոց» եւ «Կնիք հաւատոյ» դաւանական ժողովածուների շնորհիւ մեզ հասած ս. Սահակ Պարթեւի, ս. Մեսրոպ Մաշտոցի եւ ս. Եզնիկ Կողբացու անուններով դաւանական թղթերը, ս. Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը», ս. Եղիշէի եւ ս. Մովսէս Խորենացու անուններով

1 Երեք տիեզերաժողովների հետ կապուած քրիստոսաբանական շարժումների մասին աւելի մանրամասն տես Մեսրոպ քահանայ Աղամեան, «Երեք տիեզերական ժողովների դաւանութիւնը», «Գանձասար» Ա, 1992, էջ 110–140:

մեզ հասած դաւանական երկերը:

Ս. Գրիգոր Լուսաւորչի «Յաճախապատումը» եւ «Վարդապետութիւնը» մեր աստուածաբանական մտքի անդրանիկներն են: Դրանցով են պայմանաւորուած հայ աստուածաբանական մտքի ձեւաւորման մի շարք կարեւոր առանձնայատկութիւններ... Ս. Գրիգորի քրիստոսաբանական ընկալումների կիզակէտը փրկագործութեան խորհուրդն է: Փրկագործութիւնը նա դիտում է աստուածմարդկային պատմական յարաբերութեան երկու կարեւորագոյն նիստերի՝ Հին եւ Նոր Կտակարանների հանգուցման մէջ: Նախայաւիտեան Բանը, Որով արարչագործուեց առաջին Ադամը, մեր փրկութեան համար դարձաւ *ճշմարիտ մարդ*, որպէսզի փրկագործի եւ նորոգի մարդկային ընկած բնութիւնը: Եւ թէպէտ իջաւ չափաւորութեան մէջ եւ ամփոփուեց մարմնի մէջ, սակայն Աստուածութեամբ երկնքում էր՝ Հօր մօտ. եւ բոլոր արարածները շարժւում են Նրա հրամանով:

«Սակայն յորժամ կամեցաւ, առ զմարդկան կերպարանս եւ զգեցաւ մարմին եւ էջ ի մեր նմանութիւնս, Այն, որ անբաւն էր եւ անհաս յամենայն լրութեանն՝ լրութեան Աստուածութեան, եւ վասն մեր էջ ի չափաւորութիւն եւ ամփոփեցաւ ի մարմինն, բովանդակեցաւ ճշմարտութեամբ ի մարմինն եւ ճշմարիտ մարդ եղեւ եւ էջ յանարգութիւն, զի զմեզ բարձրացուցէ. սակայն Իւրով Աստուածութեամբ յերկինս էր եւ յերկրէ առ Հօր էր եւ ընդ Հօր, եւ ամենայն արարածք հրամանաւ Նորա շարժին...»[1]:

Հինաւուրցն վասն մեր մանկացեալ եւ առ զկերպարան մարմնոյ տկարութեան մարդկութեանս մերոյ, զի զմեզ փոխեսցէ յԻւր անմահութիւնն. սակայն թէպէտ զգեցաւ մարմին եւ էջ ի մեր նմանութիւն, այլ կայ ի փառս հայրենի բնութեանն Աստուածութեանն Իւրոյ, որպէս եւ էր իսկ եւ է եւ կայ յաւիտեան ընդ Հօր Իւրում ի

1 «Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց», Տփխիս, 1909, էջ 188

բարձունս, ի յԻրում բնութեանն՝ հանդերձ մարմնովն, զոր ի մէջ զգեցաւ: Փառաւորեալ ցանգ Որդի ի հոգեղէն եւ հրեղէն զուարթնոցն՝ Նա եկն եւ եղեւ մարդ, զի մարմնաւորք տեսանել կարասցեն զՆա. զի բայց զԱստուած գոյիւ ոչ տեսեալ է ուրուք՝ ոչ հրեշտակաց եւ ոչ հրեշտակապետաց, ոչ արովբէից եւ ոչ քրովբէից, եւ ոչ բիւրաւոր բանակք վերին զուարթնոց, բայց Որդին ծածկեալ է մարմնով, կատարեալամիտ եւ մասնաւորացն ցոյց յայտնի արար, զի յագեսցին լուսով սքանչելութեանն, թէ՝ «Որ ետես զԻս, ետես զՀայր իմ» [Յովհ. ԺԴ 9]: Եւ եկեալ զիտատացեալն կատարեաց, ի արքոյ Կուսէն. եւ ծնունդ առաջին ի Հօրէ յառաջ քան զանգէտ յաւիտեանս՝ մշտնջենական եւ յաւիտենական ծնունդ մշտնջենական եւ յաւիտենական Հօր, յառաջ քան զյաւիտեանս: Այսչափ եւ եթ գիտել տկարութեան արարելոցս ի Նմանէ»[1]

Քրիստոնեական ճանապարհն, ըստ ս. Գրիգորի, աստուածացման ճանապարհն է. Քրիստոս խոնարհուեց, որպէսզի մեզ անմահացնի, աստուածացնի:

«Հաւատք ճշմարիտ այս են. խոնարհեցաւ եւ իւսնեաց զԱստուածութիւնն ընդ մարդկութիւնն եւ զանմեռն ընդ մեռուն, զի զամենայն մարդկութիւնն անքակ արասցէ յանմահութենէ Աստուածութեանն Իւրոյ»[2]:

«Եւ որպէս Որդին Աստուծոյ եղեւ որդի մարդոյ եւ զգեցաւ զմեր բնութիւնս եւ կատարեաց զարդարութիւնս ամենայն եւ հոգւով, մարմնով, այսպէս եւ մեք զգեցցուք զուղղութիւն եւ կատարեսցուք զամենայն արդարութիւնս ի Քրիստոս. զի որդիք Աստուծոյ լիցուք եւ աստուածք սիրով: Զի մարմնացաւ Որդին Աստուծոյ կամօք եւ յանձն էառ զամենայն կիրս մարդկան բնութեանս մերոյ բաց ի մեղաց: Սոյնպէս եւ՝ մեզ լիցի՝ աստուածեղէն զօրութեամբն ընդ ամենայն կիրս անցանել առանց յանցման. զի կարողք լիցուք հասանել ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի. եւ այնպէս ճշմարտեալ ի կերպարանս Աստուծոյ, ժառանգեսցուք զարքայութիւնն Քրիստոսի»[3]:

Մեր հայրերը միշտ շեշտել են մարդկային բնութեան ամբողջա-

1 Նոյն, էջ 189

2 Նոյն, էջ 192

3 «Սրբոյ հօրն մերոյ, երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի՝ Յաճախապատում ճառք լուսաւորք», Ս. Էջմիածին, 1894, էջ 18—19

կանութիւնը Քրիստոսի մէջ. Քրիստոս կատարեալ մարդ է. «Եղեւ Աստուածն կատարեալ մարդ կատարեալ՝ հոգւով եւ մտօք եւ մարմնով՝ մի անձն, մի դէմ եւ միաւորեալ մի բնութիւն»[1]: Նա ճշմարտապէս կրում է մեր բնութեան կրքերը, ճշմարտապէս չարչարուում... Եթէ Քրիստոսի մարդեղութիւնը թերի է կամ առհասարակ թուացեալ, ինչպէս պնդում էին որոշ ծայրահեղ աղանդներ, ապա փրկագործութիւնն անիրական է եւ կեղծ: Քանզի փրկութեան համար *ինքնագոյ Կեանքը* պէտք է ճշմարտապէս բացայայտուէր մեր ապականուած բնութեան մէջ եւ այն կենսագործէր...

«Եւ եթէ նմանութեամբ միայն եղեւ մարդ, եւ կերպարանօք եւեթ էր խաչն եւ չարչարանք եւ մահն, ապա եւ փրկութիւն ինչ ոչ գործեցաւ: Այլ եւ փրկէր իսկ ընդէր զայլոյ արարածս, զոր Իւր չէր արարեալ»[2]:

«Էր Աստուած ճշմարտիւ եւ եղեւ մարդ ճշմարտիւ. ոչ, ի լինելն մարդ, կորոյս զԱստուածութիւնն եւ ոչ, ի կալ մնալ Աստուած, աղաւաղեաց զմարդկութիւնն, այլ նոյն եւ մի...»[3]:

Ե դարի սկզբին, 30—ական թուականներին, ս. Սահակ Պարթեւի եւ ս. Մեսրոպ Մաշտոցի գլխաւորութեամբ սուր պայքար է ծաւալւում Նեստորականութեան դէմ: Նեստորի մարդաբանական ծայրահեղութիւնների մէջ նրանք տեսնում էին փրկութեան իսկութիւնը փլուզող շեղումներ: Նեստորականութեան դէմ պայքարելիս զգացւում էր իւրայատուկ հարազատութիւն Աղեքսանդրեան դպրոցի հետ: Միայն «Մի Քրիստոսը»՝ մարմնացեալ Բանը, Աստուածամարդը եւ ոչ թէ՝ «աստուածակիր մարդը», կարող էր լինել ճշմարիտ Փրկիչ եւ Քաւիչ... Աստուծոյ եւ մարդու միութիւնը Քրիստոսի մէջ բնական եւ էական միութիւն է, եւ այդ միութիւնն է փրկագործութեան հիմքը. Քրիստոս ապրեց, տառապեց եւ մեռաւ ինչպէս մարմնացեալ Աստուած եւ ոչ թէ՝ որպէս մարդ: Նմանապէս ս. Կոյսից ծնուեց մարմնաւորուած Աստուած եւ ոչ թէ՝ լոկ մարդ, ուստի ս. Կոյս Մարիամին պէտք է կոչել Աստուածածին եւ Տիրածին...

«Եւ վասն մարմնազգեցութեան Որդւոյն այսպէս հաւատամք, զի էառ յանձն լինել մարդ կատարեալ՝ յԱստուածածին Կուսէն Մարիամայ՝

1 «Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», Դասնութիւն Հաւատոյ, էջ 3—4

2 «Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ եղծ Աղանդոց», Թիֆլիս, 1914, էջ 184

3 Եղիշէ «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին», Երեւան 1989, էջ 78

Սրբոյ Հոգւով ասեալ շունչ եւ մարմին, ճշմարտիւ եւ ո՛չ կարծեօք: Զի այսպէս եկն ի կատարել փրկել զմեր մարդկութիւնս եւ ճշմարտիւ չարչարեցաւ. ո՛չ թէ Ինքն պարտ էր չարչարանաց, այլ վասն մեր յանձն էառ զչարչարանս եւ յերրորդ աւուր յարեաւ եւ յերկինս համբարձաւ եւ ընդ աջմէ Հօր նստաւ եւ գալոց է դատել զկենդանիս եւ զմեռեալս»[1] :

«Խոստովանիմ զՔրիստոս Աստուած ճշմարիտ եւ Որդի Աստուծոյ եւ Միածին՝ ծնեալ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս եւ Տէր արարիչ ամենայն արարածոց, եւ զնոյն Բանն Աստուած ի վաղճան ժամանակաց զգեցեալ մարմին եւ եղեալ մարդ՝ առանց շրջելոյ եւ անկանելոյ յԻր աստուածական բնութենէն, եւ ծնեալ ի սուրբ Կուսէն, Աստուած՝ ըստ մարմնաւոր ծննդեանն մարդ կատարեալ, եւ կոչի եւ է Հոգւոյն Տիրածին եւ Աստուածածին, եւ ծնեալն՝ Աստուած եւ մարդ կատարեալ»[2]:

* * *

Մենք մի փոքր կանգ առանք Դ–Ե դդ. հայ քրիստոսաբանական մտքի զարգացման որոշ օրինաչափութիւնների վրայ. ուշագրաւ է, որ Հայոց Եկեղեցու հիմնադրումը զուգորդւում է աստուածաբանական մտքի մեծ եւ ինքնատիպ վերելքով (ս. Գրիգոր Լուսաւորիչ), որը Ե դարում ամրապնդւում եւ ազգային եկեղեցական արժէք է ստանում գրերի գիւտով (ս. Թարգմանիչներ): Բացի այս, հայ քրիստոսաբանական մտքի մէջ զգացւում է բացառիկ հոգեհարազատութիւն Աղեքսանդրեան աստուածաբանական դպրոցի նկատմամբ, որը սակայն դրսեւորւում է ոչ թէ բառացի կրկնութիւններով, այլ՝ իւրօրինակ ինքնութեամբ եւ առանձնայատկութիւններով:

1 Սրբոյն Սահակայ Հայոց կաթուղիկոսի եւ սուրբ վարդապետին Մեսրոբայ՝ ի թղթոյն, որ առ երանելին Պրոկղ պատասխանի, «Հնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914, էջ 129

2 Ի թղթոյն Եզնկայ Կողբացւոյ թարգմանչի, զոր գրեաց ի Կուսանդնուպոլիս՝ առ երանելին Մաշտոց վարդապետս, յետ առաջնոյ ժողովոյն Եփեսոսի, յորում լուծին ի պատուոյ զՆեստոր Կուսանդնուպոլսի եպիսկոպոս, «Հնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914, էջ 130

Բ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ե դարի աստուածաբանական շարժումների մէջ նկատւում է քրիստոսաբանական մտքի հետզհետէ սրուող բեւեռացում, որին նպաստում էին աստուածաբանական դպրոցների միջեւ ծաւալուած մրցակցութիւնը, աթոռների՝ իրենց ազդեցութեան ոլորտները լայնացնելու նկրտումները, քաղաքական ճնշումը: Այս բեւեռացումը սկսում է ընդգրկել կարեւոր աշխարհագրական տարածքներ եւ ստանալ ազգային–քաղաքակրթական երանգներ: Մթնոլորտը յատկապէս շիկացաւ ս. Կիւրեղ Աղեքսանդրացու մահից (444 թ.) յետոյ, որի հեղինակութիւնը կենդանութեան օրօք որոշակիօրէն կայունացնում էր իրավիճակը:

Նեստորականութեան դէմ պայքարելիս ս. Կիւրեղը յենւում էր ս. Աթանաս Աղեքսանդրացու «Մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ» դրոյթի վրայ, որը գործածելիս պէտք էր պահպանել աստուածաբանական սթափութիւն եւ զգուշութիւն: Քրիստոսի միութեան սխալ ընկալումը կարող էր յանգեցնել մարդաբանական նոր ծայրահեղութիւնների...

40–ական թուականներին նորից աշխուժացած նեստորականութեան դէմ մաքառողների դէմ աչքի է ընկնում Եւտիքէսը՝ Կուսի կողմ ծերունի վանահայրը...

Եւտիքէսն աստուածաբան չէր եւ չունէր իր ուսմունքը: Նա ծայրահեղօրէն պնդում էր Քրիստոսի միութիւնը եւ ասում էր «մի բնութիւն», քանի որ այդպէս էին սովորեցրել ս. Աթանասը եւ ս. Կիւրեղը: Արդիւնքում նա յայտնւում է մի իւրատեսակ շփոթի մէջ եւ սկսում քարոզել Աստուածութեան եւ մարդեղութեան մի խառնուրդ՝ մարդեղութեան ընկղմամբ եւ Աստուածութեան մէջ գրեթէ ոչնչացմամբ, ինչպէս մի կաթիլ մեղրը՝ ծովի, կամ շիւղը՝ բոցի մէջ, մինչեւ իսկ. Քրիստոսի մարմնին երկնային ծագում եւ բացառիկ գոյացութիւն վերագրում: Սակայն աւելի սկզբունքային էր Եւտիքէսի՝ Քրիստոսի մարդեղութեան եւ մարդկային բնութեան համագոյութեան ժխտումը: Եւտիքէսը չէր հասկանում՝ «ինչպէ՞ն կարող է մեր Տիրոջ մարմինը համագոյ լինել մեզ»: Նա զանազանում էր «մարդու մարմինը» «մարդկային մարմնից» եւ համաձայնում էր ասել, որ Քրիստոսի մարմինը «մարդկային» է, եւ Նա մարմնաւորուել է Կոյսից: Բայց Նրա մարմինը «մարդու մարմին» չէ: Եւտիքէսը վախենում էր խոստովանել Քրիստոսի մարդկային համագոյութիւնը, չափից աւելի մօտեցնել Նրան «սովորական մարդ-

կանց». չէ՞ որ Նա Աստուած է: Նրա յամառութեան մէջ զգացւում է մի քօղարկուած միտք՝ Քրիստոսի մարդեղութեան եւ մարդկային բնութեան անհամընկնելիութիւնը, օտարութիւնը... Եւտիքէսն ասում էր, որ Քրիստոսի մէջ «մարդկայինի» մասին կարելի է խօսել միայն յատուկ եւ ոչ թէ ուղիղ իմաստով: Եւտիքէսը Քրիստոսի մէջ ամէն ինչ տեսնում էր չափազանց այլակերպուած ու այլափոխուած:

448 թ. տեղական ժողովում Կ. Պոլսի Փլաբիանոս պատրիարգի գլխաւորութեամբ, Եւտիքէսը դատապարտւում է, եւ առաջ է քաշւում «երկու բնութիւն» բանաձեւը: 449 թ. մի նոր ժողով է հրաւիրւում, այս անգամ՝ Աղեքսանդրիայի Դիոսկորոս պատրիարգի գլխաւորութեամբ: Այդ ժողովում Եւտիքէսը ներկայացնում է նախընթաց ժողովներին համաձայն մի դաւանութիւն եւ արդարացւում, իսկ Փլաբիանոսը դատապարտւում է: 449 թ. ժողովին Հռոմի Լեւոն պապը Փլաբիանոսին է ուղարկում մի թուղթ՝ այսպէս կոչուած Լեւոնի տումարը:

Այս թուղթն արեւելեան վարդապետութեան համար անընդունելի կէտեր էր պարունակում: Լեւոնը, Քրիստոսին բաժանելով երկու բնութիւնների (in duabus naturis), միացնում էր դէմքի միութեան մէջ (in unam coeunte personam): Նկատում է որոշակի հոգեհարազատութիւն նեստորական *προσωπον τῆς ἑνώσεως*-ի (միացութեան դէմք) հետ: Երկու բնութիւնների բաժանելը սկզբունքային է Լեւոնի համար. նա Քրիստոսի մէջ ամէն ինչ փորձում էր տեսնել բաշխուած ըստ մարդեղութեան եւ աստուածութեան՝ *կարասցէ մեռանել ըստ միոյ եւ ոչ կարասցէ մեռանիլ ըստ միւսոյ*[1], *Բանն ներգործէ զոր Բանինն է, եւ մարմինն կատարէ զոր մարմնոյն է*[2], *թէպէտ եւ ի Տէր Յիսուս Քրիստոս մի անձ է, բայց այլ է ուստի անարգանքն, եւ այլ ուստի՝ փառքն:*[3] Լեւոնը վախենում էր շփոթել աստուածութիւնը մարդեղութեան հետ: Նա «մի բնութիւն» խոստովանութեան մէջ եւտիքէսեան շփոթից կամ քօղարկուած ապողինարիզմից բացի ուրիշ ոչինչ չէր տեսնում: Քրիստոսին բաղադրելով ըստ աստուածութեան եւ մարդեղութեան, միաժամանակ փորձում էր խոյս տալ ծայրահեղութիւններից եւ պահպանել աստուածութեան եւ մարդեղութեան ամբողջականութիւնը Քրիստոսի մէջ:

1 «Սկզբնագիրք տումարի ս. Լեւոնի». աշխատութեամբ աշակերտաց Մխիթարայ աբբահօր, Վենետիկ, 1905, 12
2 Նոյն, 16
3 Նոյն, 20

Ինչ-որ իմաստով սա նրան յաջողւում է, սակայն՝ լուրջ զոհողութեան գնով: Նրա քրիստոսաբանութեան մէջ առկայ է նոյն «անտիոքեան» անլուծելի երկուութիւնը, աւելին, Լեւոնը ոչ միայն չի փորձում յաղթահարել այդ երկուութիւնը, այլ այն ընդունում է որպէս հաւատքի խոստովանութեան հիմք: Լեւոնի աստուածաբանական ընկալումներն իրենց որոշակիութեանը եւ ամբողջականութեանը հասան Քաղկեդոնի ժողովի ընդունած որոշումներում:

451 թ. մայիսի 17-ին Մարկիանոս կայսրի եւ Հռոմի Լեւոն պապի կողմից նոր ժողով գումարելու հրաւարտակ է արձակւում: Ժողովը սկսուեց հոկտեմբերի 8-ին Բիւթանիայի Քաղկեդոն քաղաքում: Յիշենք, որ Հայաստանն այս ընթացքում գտնւում էր աղէտալի քաղաքական պայմաններում: Սասանեան Պարսկաստանը, ստանալով Բիւզանդիայի չմիջամտելու հաւաստիացումը, փորձում էր հայերին հաւատափոխ անել: 451թ. մայիսի 26-ին Աւարայրի ճակատամարտում ողջ հայ ժողովուրդը վկայական արեամբ հաստատեց, որ իր քրիստոնէական հաւատքը ոչ ոք չի կարող խախտել՝ *ոչ հրեշտակներ եւ ոչ մարդիկ, ոչ սուր եւ ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն, զինչ եւ են դառն հարուածք*[1]: Այս ընթացքում արեւմուտքը, իր կրօնքը եղբօրը մահուան վտանգի մէջ թողնելով, զբաղուած էր ժողով հրաւիրելու իրարանցմամբ:

Ժողովին ժամանած եպիսկոպոսները բազմաշատ էին, 636 հոգի, բայց գրեթէ բոլորը Կ.Պոլսի եւ Անտիոքի սահմաններից: Ժողովը վարում էին Մարկիանոս կայսեր եւ Պուլքերիա կայսրուհու նշանակած պաշտօնեաները. Աղեքսանդրիայի կողմից բարձրացուող ամէն մի դիտողութիւն ճնշւում էր արտաքին ուժի միջոցով, Արեւմուտքը բացարձակապէս բացակայում էր: Ժողովի օրերին Հայոց Յովսէփ կաթողիկոսը, նշանաւոր եպիսկոպոսներ, երէցներ եւ գլխաւոր նախարարներ դատւում էին Տիգրոնում, իսկ Հայոց Եկեղեցին եւ երկիրն անգլուխ հեծում էր:

Քաղկեդոնի ժողովի ընդունած հանգանակի կառոյցը շատ նման է Լեւոնի Տումարին: Սակայն Քաղկեդոնի հանգանակը վերջինիս բառացի կրկնութիւնը չէ: Այս անգամ, ընդունելով երկու բնութիւնների մէջ (*ἐν δύο φύσεσιν*) ճանաչելի, ժողովականները Քրիստոսին միաւո-

1 Եպիշէ, «Խօսք Վարդանայ եւ հայոց պատերազմին», Երեւան, 1989, էջ 80

բում են ոչ միայն դէմքով (*ἐν πρόσωπον*), այլեւ՝ մի անձով (*μία ὑπόστασις*): Քաղկեդոնի լեզուն աստուածաբանական նորամուծութիւն էր, այն պարտադիր էր դարձնում եզրաբանական որոշակի համակարգ եւ արգելում ցանկացած այլ համակարգ: Եւ նախ եւ առաջ արգելում էր ս. Կիւրեղի լեզուն... Սակայն Քաղկեդոնի ձեւակերպումները աչքի են ընկնում ոչ միայն լեզուական նորամուծութիւններով, այլեւ՝ Աստուածամարդու խորհուրդի այլ ընկալմամբ, որը խորթ է աղեքսանդրեան դպրոցի աւանդութեանը: Քրիստոսի միութիւնը նրանց համար *ամբանցուած միութիւն* է: Այս միութիւնը նրանց համար բաղկացած է երկու մասից: Այս բաղադրեալ միութիւնը բնորոշւում է հետեւեալ չորս ժխտական սահմանումներով՝ *ἀσυγχύτως, ἀτρέπτως, ἀδιαιρέτως, ἀχωρίστως* (անխառն, անփոփոխ, անբաժանելի, անքակտելի): Բաղադրեալ մասերը հանդէս են գալիս իրենց յատկութիւններով:

Քաղկեդոնի ժողովը Եկեղեցու ողբերգական պառակտման պատճառ դարձաւ: Այն չընդունեցին Աղեքսանդրեան դպրոցը եւ նրա աւանդութեանը հարազատ մի շարք եկեղեցիներ (այդ թւում նաեւ՝ Հայոց Եկեղեցին): Դարեր շարունակ կայսրերի եկեղեցական քաղաքականութիւնը եւ Եկեղեցու ներքին յարաբերութիւնները պտտւում էին մէկ հարցի շուրջ. ընդունե՞լ Քաղկեդոնի ժողովը, թէ՞ ոչ: Այս հարցը կայսրութեան ամբողջութեան պահպանման տեսանկիւնից մասնաւորաբար ունէր շատ կարեւոր նշանակութիւն: Եթէ արիոսական վէճերի դարաշրջանում կայսրերը դաւանական վէճերի մէջ էին մտնում ըստ իրենց ցանկութեան, ապա Ե–Ը դդ. կայսրերը գրեթէ ստիպուած կամ ըստ տխուր անհրաժեշտութեան ներքաշւում էին քաղկեդոնական վէճերի մէջ. աստուածաբանութիւնը դարձել էր «պալատական» հոգածութեան առարկայ («կայսերական աստուածաբանութեան» անյաջող փորձերից էր նաեւ *Միակամեաց վարդապետութիւնը*, որը մերժուեց մեր Եկեղեցու կողմից): Քաղկեդոնի ժողովի մերժումը չի կարելի միայն բացատրել քաղաքական պատճառներով եւ աթոռների մրցակցութեամբ: Այս մերժումը նախ եւ առաջ կապուած է աստուածաբանական համակարգերի այլութեամբ, քրիստոսաբանական խոստովանութիւնների անհամընկնելիութեամբ, առաքելական աւանդութեան իրարամերժ ընկալմամբ:

Պահպանելով Կիւրեղի հաւատքի խոստովանութիւնը (այսինքն՝ հարազատ մնալով աղեքսանդրեան դպրոցի աւանդութեանը) արեւելեան վարդապետները զգուշանում էին քաղկեդոնական ձեւակերպման վտանգներից: Արեւելեան վարդապետութեան քրիստոսաբանական կա-

ռոյցը շատ պարզ է: Այն չունի մտաբանական խճողումներ եւ հաւատքի խորհուրդը մտքի համար դիւրընկալելի դարձնելու հակումներ: Քրիստոս կատարեալ Աստուած է եւ կատարեալ մարդ: Աստուածութիւնը եւ մարդեղութիւնն անփոփոխելի, անշփոթելի եւ անբաժանելի կերպով միացած են մի բնութեան մէջ: Այս միութիւնն էական եւ բնական միութիւն է եւ միեւնոյն ժամանակ՝ անճառելի եւ անհասանելի՝ մտքի համար... Արեւելեան աստուածաբանութիւնը մերժում է ցանկացած բաժանութիւն եւ երկութիւն Քրիստոսի մէջ: Մի է Քրիստոս՝ մարմնացեալ Բանը. մի աստուածամարդկային բնութիւն, մի անձ, մի դէմք, մի կամք, մի ներգործութիւն (համաձայնեալ (integral) սկզբունք): Երկու բնութիւնների տրոհելը եւ անձով ու դէմքով միաւորելը՝ արեւելեան վարդապետութեան կողմից դիտարկւում էր որպէս Աստուածամարդու անճառ խորհրդի նսեմացում, հաւատքի հայեցողական խոստովանութիւնը մտաբմբռնելի մեխանիզմի վերածելու փորձ:

Զ–Ը դդ. հայ վարդապետների կողմից ստեղծւում է մեծածաւալ դաւանական գրականութիւն, որը ինչ–որ չափով արտացոլուել է մեզ հասած «Կնիք հաւատոյ» եւ «Գիրք թղթոց» դաւանական ժողովածուներում: Ահա՛ մի քանի նշխարներ այդ ժողովածուներից.

«Իսկ ի վախճան ժամանակիս, Աստուած գոյ մշտնջենաւոր Բանն Աստուծոյ եղեւ մարդ կատարեալ անյեղասպէս. մարմնացեալ ի սուրբ Կուսէն անճառաբար, ոչ հեռացեալ ի բնութենէն եւ ոչ քայքայեալ ի մարմնաւորութիւն, այլ եկաց մնաց նոյն, որ էրն անփոփոխելի եւ անայլայլելի: Աստուած մարմնացեալ ոչ մասամբ, այլ՝ բոլորիւ, ոչ՝ պակասութեամբ, այլ՝ լիութեամբ. ոչ՝ երկութիւն, այլ միութիւն անբաժանելի...»[1]:

«Ինքն Բանն, առաքեալն ի Հօրէ, Ինքն էանից Որդին, Ինքն Միածին Որդին Հօր՝ լրութեամբ աստուածութեամբն էջ եւ անճառաբար եւ անպարփակաբար անքննելի միութեամբ եղեւ մարմին ի Կուսէն, եթէ՝ «Ինքն եկեալ եւ փրկեալ» [Եւ. ԼԵ 4]: Ինքն Բանն է պատճառ եղելութեան. առանց պատճառին զեղելութիւնն անհնար է ասել: Ինքենէ եղեալն է Աստուած եւ մարդ միանգամայն...»[2] :

«Մասն զի խոստովանիմք մի բնութիւն Բանին եւ մարմնոյն՝ Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ, եւ միաւորեալ

1 Յովհաննէս կաթողիկոս, «Գիրք Թղթոց», Թիֆլիս 1901, էջ 82
2 Յովհան Մայրագոմեցի, «Կնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914, էջ 143

անքաժանաբար յատակ միացեալ բնութեամբ եւ անշփոթ միութեամբ՝ անսկզբանն ընդ սկզբանն, Բանն ընդ մարմինն, ըստ այնմ, եթէ՝ «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն... Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ» [Յովհ. Ա 1–14]. եւ Ինքն Որդին ասէ. «Ոչ ոք ելն յերկինս, եթէ ոչ՝ որ էջն յերկնից Որդին մարդոյ, որ էն յերկինս» [Յովհ. Գ 13]: Եւ Լուսաւորիչն մեր մեկնէ՝ ասելով. «Տեսանեմ իջեալն յերկիրս եւ էն յերկինս, այս է առ ի զմարդն աստուածացուցանելոյ», զոր եւ ասէ իսկ դարձեալ, թէ՝ «Տեսանիցէք զՈրդի մարդոյ, զի ելանիցէ, ուր էր զառաջինն» [Յովհ. Զ 63], այսինքն՝ զմարդն աստուածացուցանել կոչէ, եւ մի բնութեամբ հանգոյն Հօր ի ծոց էութեանն զերազանցէ զմարդկային բնութիւնս: Ահա ճշմարիտ մի բնութիւն աստուածութեան եւ մարդկութեանն, զոր եւ ասէ Յովհաննէս, եթէ՝ «ԶԱստուած ոչ ոք ետես երբեք, բայց Միածին Որդին, որ ի ծոց Հօր, նա պատմեաց մեզ» [Յովհ. Ա 18]: Այս է ելանելն, ուր էր զառաջինն, եւ յառաջ քան զարեւ անուն Նորա, վասն զի արգանդ եւ ծոց ասի ինքնին էութիւն Հօր, զոր եւ Տէր, Աստուածորդին մեկնեալ ուսուցանէ մեզ վասն երկուց բնութեանց միաւորութեան, որով յոյժ վստահացեալ առաւելապէս խոստովանիմք անորոշաբար միութիւն աստուածութեանն եւ մարդկութեանն ըստ վարդապետութեանն Իւրում»:[1]

«Բանն Հօր, որ յառաջ քան զյաւիտեանսն ծնեալն ի Հօրէ վասն հաշտեցուցանելոյ զարարածս ընդ Հօր, իջեալ յերկնից աւետեօք հրեշտակապետին, եկեալ ի սուրբ յանարատ Կոյսն, մարմնանալ ճշմարտապէս եւ եղանի Աստուած եւ մարդ, եւ որպէս էր ճշմարիտ Աստուած, նոյնպէս եւ՝ ճշմարտապէս մարդ, մինն յերկուց բնութեանց անշփոթ եւ անքաժանելի, թէպէտեւ մարմնացեալ, այլ՝ ի Հօրէ անմեկնելի, զամենայն մարդկային կիրս կրեալ, բաց ի մեղաց»:[2]

Անաչառ դիտարկել Քաղկեդոնի ժողովն, առանց Աղեքսանդրեան եւ Անտիոքեան աստուածաբանական դպրոցների պայքարի առանձնայատկութիւններն ըմբռնելու, անհնար է... Նեստորի պարտութեամբ նստեցաւ էր Անտիոքի երբեմնի «փառքը», սակայն շուտով (Ե դարի 40–ական թուականներին) վերջինս վերականգնելու լուրջ նախադրեալներ են ի յայտ գալիս. 440 թ. Հռոմի աթոռին է բարձրանում Լեւոն Ա պապը, 441–ին՝ Անտիոքի աթոռին՝ Դոմնուսը, 446–ին՝ Կ. Պոլսի աթոռին՝ Փլաբիանոսը. բոլորն էլ Անտիոքեան դպրոցի ներկայացուցիչներ: Այս ամենին նպաստում է նաեւ Կիւրեղ Աղեքսանդրացու մահը (444 թ.), որն, անկասկած, Ե դարի ամենապայծառ աստուածաբանական դէմքն էր... Աղեքսանդրիայի աթոռին է բարձրանում Դիոսկորոսը, որը չէր փայլում իր փառաւոր նախորդի աստուածաբանական հանճարով, սակայն աչքի էր ընկնում անհամբերութեամբ եւ կոպտութեամբ... Վիճակը ծայրաստիճան սրւում եւ անկայուն է դառնում: Շուտով այն խախտում է յօգուտ Անտիոքեան աստուածաբանութեան շնորհիւ Եւտիքէսի կեղծ վարդապետութեան: Անտիոքը չափազանց բարենպաստ առիթ է ստանում՝ Հռոմի եւ Կ. Պոլսի հովանաւորութեամբ «հաշիւները մաքրելու» Աղեքսանդրիայի հետ: Որոշում է վերջապէս «մի բնութիւն Բանին Աստուծոյ մարդացելոյ» աղեքսանդրեան «անհանգիստ» բանաձեւին, քանի որ այն շահարկել էին Ապողինարը եւ Եւտիքէսն իրենց հերձուածողական ուսմունքներում: Յամենայն դէպս, Քաղկեդոնի ժողովականները «մի բնութիւն» բանաձեւի մէջ շփոթից եւ մարդաբանական թերացումից բացի ուրիշ ոչինչ տեսնել չէին ուզում: Նրանք գտնում էին, որ միակ ճիշտ քրիստոսաբանական կառոյցը կարելի է կառուցել անտիոքեան «երկու բնութիւն» բանաձեւի հիման վրայ: Սակայն անտիոքեան քրիստոսաբանութիւնն ուներ յայտնի թոյլ կողմեր, որոնք ամենայն սրութեամբ երեւան էին եկել Նեստորի քրիստոսաբանական համակարգում (ուշագրաւ է, որ Քաղկեդոնի ժողովը ոչ մի քննադատական խօսք չասաց Նեստորի մասին): Որոնք էին Անտիոքեան դպրոցի թոյլ կողմերը, որոնք անընդհատ նշում էր ս. Կիւրեղն իր քննադատական գրուածքներում... Ըստ Անտիոքեան դպրոցի՝ Քրիստոս ունի «երկու բնութիւն», եւ Քրիստոսի մէջ ամէն ինչ որոշակիօրէն բաշխուած եւ բաղդատուած (ածանցուած) է ըստ աստուածութեան եւ մարդեղութեան բնական յատկութիւնների: «Երկու բնութիւնների» ընդունումը սպառնում էր «երկու կենտրոնների» եւ «երկու անձերի» վտանգով: Այս «ճեղքուածքը» յաղթահարելու համար Նեստորը շարժուեց հետեւեալ ճանապարհով. «երկու բնութիւնները» կարող են միաւորուել վերբնութենական կամ միջբնութենական ինչ–որ կապով, որը նա արտայայտեց «միացութեան դէմք» եզրով: Նեստորի մօտ երկու բնութիւններն անձնաւոր եւ ինքնուրոյն են, որոնք սակայն միացած են խոնարհման մէջ՝ «միացութեան դէմքով»: Այն, որ այս ծրիեստական համակարգում խախտուած է փրկաբանական իդեալը, այսինքն՝ Աստուածամարդու էական եւ գոյաբանական միութիւնը, ակնյայտ էր... Նեստորական հերձուածի բացայայտումն

---

1 Սակս ժողովոյ ի Հայս Յովհաննու Իմաստասիրի, «Գիրք Թղթոց», Թիֆլիս 1901, էջ 224–226

2 Ստեփանոսի եպիսկոպոսի պատասխան թղթոյն Անտիոքի եպիսկոպոսի, «Գիրք Թղթոց», Թիֆլիս 1901, էջ 324–325

Աղեքսանդրեան դպրոցի փայլուն նուաճումներից էր:

Քաղկեդոնականները շաթժուեցին մէկ այլ ճանապարհով: Նրանք «երկու բնութիւնները» միաւորում են ոչ միայն դէմքով, այլեւ՝ մի անձով. բնութագրական «դէմքը» դառնում է գոյաբանական «անձ»: Այսուհանդերձ, դեռեւս այս վիճակով քաղկեդոնեան միաւորումը հեռու չէր Նեստորից, տակաւին անորոշ էր միութեան պահը: Եթէ ընդունում է բնութիւնների անձնականութիւնը եւ ինքնակենտրոնութիւնը, ապա նրից խախտւում է Աստուածամարդու միութիւնը: Այս հարցն այնքան էլ պարզ չէր Քաղկեդոնի ժողովականների համար, այն իր «լուծումը» գտաւ աւելի ուշ՝ Ղեւոնդէոս Բիւզանդացու, Մաքսիմոս Խոստովանողի, Յովհաննէս Դամասկացու աշխատութիւններում...

Քաղկեդոնեան համակարգում կար մի քօղարկուած պահ... Անմիջապէս նկատւում էր որոշակի ասիմետրիա, այսինքն՝ որպէս աստուած–մարդկային միութեան անձնական կենտրոն ընդունուած է Քանի Աստուածութիւնը («Մի եւ նոյն Քրիստոսին, Որդուն, Տիրոջը, Միածնին՝ երկու բնութիւնների մէջ ճանաչելի...»): Բայց սա չի ասուած ուղղակիօրէն. որոշակի չի սահմանուած անձի միութիւնը՝ որպէս Քան–Աստուծոյ Անձ: Հէնց այստեղից էլ՝ մարդկային բնութեան ողջ անորոշութիւնը... Ինչպէ՞ն հասկանալ «անանձ բնութիւն»: Քաղկեդոնեան համակարգում որոշակիօրէն խոստովանւում է մարդկային անձի բացակայութիւնը (հէնց այստեղ է տարբերութիւնը Նեստորականութեան հետ), այսինքն՝ մարդկային բնութեան անանձնականութիւնը Քրիստոսի մէջ: Սակայն չի բացատրւում, թէ՝ ինչպէս: Այս բացատրաբանութիւնները տրուեցին աւելի ուշ Ղեւոնդէոս Բիւզանդացու կողմից, ըստ որի՝ բնութիւնը կարող է իրականանալ կամ անձնաւորուել մէկ այլ բնութեան անձով, այսինքն՝ հնարաւոր են մէկ անձով անձնաւորուած (կայացած) բնութիւններ (այս բաղադրեալ բնութիւնների միութիւնն արտայայտւում է անձի եզակիութեամբ): Այսպիսով, եթէ Նեստորը երկու անձնաւոր բնութիւնները փորձում էր միաւորել վերբնութենական կամ միջբնութենական կապակցումով, ապա Քաղկեդոնի ժողովի հետեւորդների մօտ մէկ անձնաւոր բնութիւնը սերտաճում է միւս անանձ բնութեան հետ կամ մէկ անձնաւոր բնութիւնն իր անձով անձնաւորում եւ գոյութեան է կոչում միւս բնութեանը:

Բնութիւնների այս արհեստական կապակցումը սուր քննադատութեան է ենթարկւում հայ վարդապետների կողմից:

«Չէ հնար բնութեան առանց դիմի իմանալ կամ ասել ըստ ամենայն հարկաւորութեան, յաղագս որոյ պարտ է քեզ երկուս դէմս ասել ըստ երկուց բնութեանցն եւ կամ ըստ միոյ դիմին մի ասել եւ բնութիւն...»[1],– գրում է Խոսրովիկ Թարգմանիչը:

Բանն–Աստուած սուրբ Կոյսից վերցնում է անձնաւոր եւ դիմաւոր բնութիւնը, եւ ինչպէս խոստովանում ենք մի աստուածմարդկային բնութիւն, այնպէս էլ՝ մի աստուածմարդկային անձ եւ դէմք:

«Որպէս բնութիւն մարդկային, ընդ նմին եւ դէմ մարդկային առնոյ Բանին ի Կուսէն, եւ որպէս զդէմ Բանին եւ մարմնոյն Իւրոյ ընդ ձեռն միաւորութեանն մի խոստովանելով դէմ, այսպէս եւ զբնութիւնսն՝ զաստուածայինսն եւ զմարդկայինսն՝ մի դասանել բնութիւն յանճառ միաւորութենէն...»[2]:

Եթէ Քրիստոսի մէջ մարդկային բնութիւնն անձ չունի, ապա Քրիստոսի մէջ ոչնչանում է մարդկային անհատականութիւնը եւ ինքնութիւնը (մարդաբանական կատաստրոֆա), եւ բոլոր մարդիկ Քրիստոսի մէջ են, խաչւում են Նրա հետ, թաղւում, յարութիւն առնում (առանց անհատականօրէն եւ կամովի ընտրութեամբ այդ ամենին մասնակցելով):

«Դու, որ զմարդկային դէմն ոչ ասէիր զոյ ի Քրիստոս, զտանիս ասացեալ զամենայն մարդիկ զոյ ի Քրիստոս... եւ համօրէն ազգ մարդկան Յիսուս. զորոյ զհետ գայ կամ ամենեքին լինել Քրիստոս եւ մեռանել խաչիս, եւ կամ ոչ ոք լինել Քրիստոս եւ ոչ մեռանել, որ եւ երկոքին անտեղիք»[3]:

Եթէ մարդկային բնութիւնը գոյութեան է կոչւում (կայանում է) աստուածային Անձով, ապա մարդկայինը Քրիստոսի մէջ ազատ ու ինքնաշարժ չէ եւ ասիմիլացուած է Աստուածութեամբ: Անանձ մարդկային բնութիւնը անգոյ է եւ ընդամենը տեսական հասկացողութիւն է, որը բնորոշում է մարդեղութիւնը ընդհանրապէս եւ, եթէ Քրիստոս մարմնաւորուել է անանձ մարդեղութեամբ, ապա Նա որոշակի մարդ չէ, Նրա մարդեղութիւնը ուղղակի մի աստուածային «երաշք» է, «հնարամտութիւն»... Նման համակարգը յղի է փրկաբանական իդեալի խախտմամբ, քանզի, եթէ Քրիստոս որպէս կատարեալ մարդ չի

1 Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղարշապատ 1899, էջ 10
2 Նոյն, էջ 12
3 Նոյն, էջ 19–20

գործում ազատ եւ ինքնիշխան կերպով, ապա փրկութիւնը դառնում է «գերբնական երեւոյթ» մարդկութեան համար:

«Ոչ բնութիւն անգոյ եւ անդէմ զմարդկայինս ընկալեալ Բանն Աստուծոյ, այլ յաւէտ թէ ի հաւատակական մարդկային բնութենէս առանձնական միացոյց Իւր մարմին անձամբ բանականաւ եւ նուիրեալ մարմնով յաղթեաց մեղաց, մահու, դժոխոց եւ ապականութեան»[1]:

«Նախ քան զամենայն յաւիտեանս ծնեալ յԱստուծոյ Հօրէ եւ Որդի Աստուծոյ, յետ ժամանակի ծնեալ նոյն եւ ի մօրէ ըստ մարմնոյ եւ Որդի մարդոյ, եւ սակայն ոչ՝ երկու որդիք, այլ մի՝ եւ միայն Որդի Աստուծոյ մարմնացեալ, մարդացեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. եւ այն, որ ունէր ի Հօրէ անժամանակաբար բնութիւն հաւատակական եւ դէմ առանձնական եւ յատկական, նոյն Ինքն եղեւ ըստ ժամանակի եւ մարդ հանդերձ բնութեամբ եւ դիմաւ եւ առանձնաւորութեամբ: Այլ ոչ եթէ յաղագս սորին այսորիկ յերկուս բաժանեալ բնութիւնս զՔրիստոս եւ կամ երկուս ասել զնա դէմ եւ երկուս առանձնաւորութիւնս, այլ մի եւ նոյն միայն մարմնացեալ Բանն Աստուած՝ բնութեամբ, դիմաւ եւ առանձնաւորութեամբ: Եւ, համայն մի ասելով ի Քրիստոս բնութիւն, դէմ եւ առանձնաւորութիւն, ոչ ուրանամ, զոր ունէրն ի Հօրէ եւ զոր եղեւն, կամ առն ի մարդկանէ զբնութիւն, զդէմ եւ զառանձնաւորութիւն»[2]:

«Զնոյն Ինքն զԲանն Աստուած առ Իւրն մարմին ասացին եւ միաւորեալ եւ անշփոթ մնացեալ, որպէս ինչ ոմանց թուեցաւ ասել, զմինն դիմին տպով եւ զմիսն՝ բնութեանն, այլ միաւորութիւն անշփոթաբար ասացին զոյ զԲանն Աստուած առ Իւրն մարմին, զոր ի Կուսէն: Եւ նմին Ինքեան Աստուածն Բանի եւ Իւրումն մարմնոյ որպէս բնութիւնն ընտանենայ հաւատակական, ըստ նմին եւ յատկական դէմն, եւ նոյն ինքն բոլորն խմանի միացեալ եւ անշփոթ մնացեալ: Եւ զի միաւորեալն մի է եւ ոչ եւս՝ երկու, մին միաւորեցեալումն ոչ զանգիտէին հարքն մի անուանել դէմ մի եւ բնութիւն: Բայց էր երբէք ուրեք, որ եւ կրկին, կամ թէ եւ երկու զնոյն դաւանեալով բնութիւնս:

Ոչ եթէ յորժամ կրկին ասէին, զմիաւորութիւնն եղծանէին ինչ ի նմա զիրաշալին խորհուրդ, եւ ոչ յորժամ մի ըստ միաւորութեանն ասէին, զգոյացութեան ինչ պակասեցուցանէին զկատարելութիւնն, յԱստուծոյ

1 Նոյն, էջ 25
2 Նոյն, էջ 34

Բանէն ասեմ եւ ի նորին մարմնոյն, այլ կացեալ ի նմին ասէին, որ էնն, եւ միացեալ անքակտութեամբ եւ անշփոթութեամբ ի վեր քան զմիտս եղեալոցս, կացեալ ի նմին զԲանն Աստուած եւ զպատուական Իւր մարմինն ասէին եւ զնոյն եւ ոչ այլ ինչ անշփոթաբար եւ անքակտաբար միացեալ դաւանէին. զի ի Բանումն եւ յԻրումն մարմնում տեսանէին եւ զդէմն առանձնական եւ զբնութիւնն հաւատակական. զի թէ դէմ է, այն է, որ զբովանդակն յինքեան երեւեցուցանէ զբնութիւնն, եւ եթէ բնութիւն է, այն է, որ բոլորապէս յառանձնեցեալումն երեւի դիմի: Եւ յաղագս սորին այսորիկ սուրբ հարքն խոստովանէին զՏէր մեր Յիսուս Քրիստոս մի բնութիւն եւ մի Որդի Աստուծոյ: Եւ համայն մի բնութիւն եւ մի դէմ ասելով ի Քրիստոս՝ ոչ ըստ համագոյութեան ասացին Բանին եւ մարմնոյն կամ ըստ յեղման եւ շփոթութեան եւ կամ դարձեալ ըստ յատկական գոյացութեան, այլ՝ ըստ անճառ եւ անպարփակելի միաւորութեան Բանին առ Իւրն մարմին, զոր յանարատ յարգանդէ սրբոյ Կուսին առանձնացոյց ինքեան զոչ յառաջագոյն գոյացեալն եւ յետ այնորիկ իբր ի տաճարի բնակեալ, զի այս ապա ոչ ասի ծնունդ Որդոյն Աստուծոյ, այլ՝ ծնունդ այնորիկ, որ նախակազմեալն եղեւ յարգանդի: Այլ յորմէ հետէ խոնարհեցաւ մարդասիրաբար յարգանդի Կուսին, զգենուլ ասեմք կամ թէ միացուցանել Ինքեան մարմին: Եւ ընդ ձեռն այնոսիկ ասացեալ եղեւ ի սուրբ հարցն մի դէմ եւ մի բնութիւն մարդացեալոյ Աստուածն Բանին. ոչ՝ ըստ համագոյութեան եւ ոչ՝ ըստ պատուոյ արժանաւորութեան, այլ գոյութեանցն, ասեմ, աստուածայնոյ եւ մարդկայնոյ, եւ որ մանաւանդ, որ անճառն եւ գերահրաշն է միաւորութիւն, եւ սորին աղագաւ ասին աստուածայինքն մարդկայինք, եւ մարդկայինքն՝ աստուածայինք: Զի որ անտեսանելին եւ անշօշափելին է բնութեամբ, առ շօշափականն՝ մարդկային մարմինն, տեսաւ եւ շօշափեցաւ առ ի մէնջ: Եւ որ յերկրէ բուսեալն եղեւ սակս առ ի յերկնայինն միաւորութեան, ի յերկնից ասի իջեալ. եւ զի ընդարձակագոյնս ասացից, զի որ ըստ բնութեանն Բանն էր անմահական, ըստ միաւորութեանն տնօրէնութեան յանձն էառ եւ զմեռանելն, եւ զբնութեամբ զմահկանացու մարմինն Իւր արար ընդ ձեռն առ Ինքն միաւորութեանն անմահ եւ անապական»[1]:

«Զի որպէս խոստովանիմք զԲանն, որ յԱստուծոյ Հօրէ՝ բնութիւն ունելով պատուածային, ունել Նմա եւ դէմ աստուածային. ապէս եւ ի մարմնումն Նորա, որ առ ի մէնջ, տեսանի բնութիւն մարդկային, տեսանի եւ դէմ մարդկային, մանաւանդ թէ նոյն ինքն անձնաւորեալն

1 Նոյն, էջ 42—45

դէմ բնութիւն եւ կամ թէ ի բնութենէ եւ կամ ի բնութեանց, որոց ոչ է հնար ոչ զոյ եւ ոչ ապիկ բնութիւն, որպէս բազում անգամ ասացաք: Զի թէ զդէմն ասասցես զոյ ի բանումն, որ յԱստուծոյ Հօրէ, եւ ի մարմնումն Նորա, որ ի մէնջ, ասացեալ լինիս ընդ նմին կամ թէ զնոյն եւ բնութիւն աստուածային, բնութիւն եւ մարդկային: Իսկ եթէ բնութիւն անդէմ եւ անզոյ ասասցես զոյ կամ զԲանն կամ զառ ի մարդկանէ զմարմին Նորա, զտանիս ասացեալ եւ ոչ ինչ, ոչ զոյ եւ ոչ բնութիւն»[1]:

Գ. ԱՆԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դեռեւս Դ դարից, երբ Քրիստոնէութիւնը դարձաւ պետական կրօն մի շարք երկրներում (Մեծ Հայք, Վիրք...) եւ Բիւզանդական կայսրութիւնում, սկսեց սպառնալ պետական ազդեցութեան չարաշահումը Եկեղեցու վրայ... Կայսրական իշխանութիւնն անմիջական եւ որոշիչ մասնակցութիւն է ցուցաբերում Եկեղեցու ներքին կեանքում... Կայսերական իշխանութեան նմանօրինակ ներթափանցումը Եկեղեցու մէջ ամրապնդուեց եւ «աւանդական» դարձաւ՝ սկսած Քաղկեդոնի ժողովից: Կայսրերը մասնակցում էին եկեղեցական ժողովներին, գրում դաւանական երկեր, արձակում կրօնական պարտադրանքներով լի հրամանագրեր, դաժանօրէն վարուում ընդդիմախօսների հետ...

Այս առումով բացառութիւն չէր Յուստինոս Ա (518–527) կայսրը, որի օրօք նորից բորբոքուեցին հալածանքները Քաղկեդոնի ժողովը մերժողների դէմ: Հալածուողների մէջ էին Հալիկառնասի Յուլիանոս եպիսկոպոսը եւ Անտիոքի Սեւերիոս պատրիարքը: Նրանք երկուսն էլ 518–ին աքսորուեցին Աղեքսանդրիա: Աղեքսանդրիայում մի վանական հարց է տալիս Սեւերիոսին, թէ Քրիստոսի մարմինը պէտք է համարել անապական, թէ՞ ապականացու: Սեւերիոսը պատասխանում է «Ըստ սուրբ հայրերի գրուածքների՝ այն ապականացու է»: Երբ նոյն հարցը տալիս են Յուլիանոսին, նա հակառակ պատասխան է տալիս. «Ըստ սուրբ հայրերի գրուածքների՝ այն անապական է»: Այստեղից նրանց միջեւ սկիզբ է առնում վիճաբանութիւն Տիրոջ մարմնի անապականութեան շուրջ:

Ապականութիւն (φθορά) կամ անապականութիւն (ἀφθαρσία) եզրերը

1 Նոյն, էջ 51–52

սոյն վիճաբանութեան մէջ կիրառւում էին ոչ թէ Տիրոջ մարմնի քայքայման կամ ոչ քայքայման իմաստով (այս իմաստով բոլորն էլ համաձայն էին, որ Տիրոջ մարմինը ենթակայ չէ մեղքի եւ քայքայման պրոցեսների), այլ՝ Փրկչի մարդկային կիրընդունակութեան ակամայ եւ կամովի լինելու իմաստով: Հարցն այն մասին էր, թէ որքանով են Քրիստոսին բնորոշ մարդկային կրքերը (ἀνθρώπινα πάθη) (ի նկատի ունի այսպէս կոչուած անմեղ (անանցանելի) կրքերը (πάθη ἀδιάβλητα)՝ տըխրութիւն, երկիւղ, սով, ծարաւ եւ այլն, որոնք դիտարկւում են որպէս մեղքի հետեւանքային վիճակներ:

Սեւերիոսը պնդում էր, որ Քրիստոս բոլոր մարմնական կրքերը կրում է հարկադրաբար (ակամայ, ստիպուած, անհրաժեշտօրէն)՝ ամէն ինչում նման սովորական մարդկանց: Հակառակ դէպքում նրան թւում էր, թէ Քրիստոս իսկապէս մարդացած չէր լինի: Նա ասում էր, որ Քրիստոսի մարմինն ապականացու է բոլոր մարդկանց մարմինների պէս: Նրա համար Քրիստոսի մարմինը ս. Կոյսից մինչեւ Յարութիւն անփառաւոր եւ անկատար էր եւ միայն յարութիւնից յետոյ փառաւորուեց եւ կատարեալ դարձաւ... Տիրոջ մարմնի ապականելիութեան նման ծայրահեղ պնդումը յղի էր վտանգներով (նկատւում է նաեւ բացորոշ հոգեհարազատութիւն անտիոքեան մարդաբանութեան հետ): Այս տեսանկիւնից մասնաւորաբար անհասկանալի էր դառնում «Նրա մարմինն ապականութիւն չտեսաւ» [Սաղ. ԺԵ 10, Գործք Բ 31], ինչպէս նաեւ՝ Տիրոջ խօսքը. «Տեսէ՛ք Իմ ձեռքերը եւ ոտքերը, քանզի Ես նոյնն եմ» [Ղուկ. ԻԴ 39], այսինքն՝ չփոխուեցի ապականութիւնից անապականութիւն, անփառութիւնից փառք, անկատարութիւնից կատարելութիւն: Այս է վկայում նաեւ Պօղոս առաքեալը. «Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան» [Եբր. ԺԳ 8]: Եթէ, ըստ Սեւերիոսի պնդման, Տիրոջ մարմինն ապականացու էր մինչեւ Յարութիւն, ապա վերնատանն աշակերտները չճաշակեցին կենդանարար եւ մեղաքաւիչ մարմինը, այլ՝ անկատար, անփառ եւ ապականացու մարմին: Սեւերիոսի մարդաբանական պաշտպանութեան մէջ նկատւում է միտում՝ ծայրահեղօրէն մօտեցնել Աստուածամարդուն սովորական «մարդկանց». նա այսպէս էր հասկանում Տիրոջ եւ մեր համագոյութիւնն ըստ մարդեղութեան:

Մեր Եկեղեցու հայրերը կտրականապէս մերժել են «ապականութեան» ուսմունքը: Զ–Ը դդ. սուր պայքար է ծաւալւում «ապականութեան» հետեւորդների դէմ: Ըստ Հայ Եկեղեցու հայրերի՝ Քրիստոսի մարմինը չարչարելի է եւ մահկանացու, սակայն ո՛չ՝ ապականացու

(ապականութիւնն այստեղ դիտւում է որպէս մեղքին (մեղանչման) զուգակցուած մարմնական վիճակ, որը հակաբնական է, քայքայում է բնութիւնը): Տիրոջ մարմինն անապական է մինչեւ Յարութիւն («Որ ուստ զՄարմին Իմ, կեցցէ յաւիտեան» [Յովհ. Զ 52]): Բանն Աստուած ոչ թէ առաւ Ադամի նախատեղծ բնութիւնը, այլ՝ մեր ապականացու բնութիւնը՝ ապականակիր մարմինը եւ մեղանչական հոգին եւ միտքը, եւ, միաւորելով Իրեն, զատեց մեղքը հոգուց եւ .ապականութիւնը՝ մարմնից: Տիրոջ մարմնի աճն ու զարգացումը վկայում են ոչ թէ ապականացու լինելը, այլ՝ ընդհակառակը, քանզի սրանք կատարելագործում են մարմնի զգայական համակարգը, իսկ ապականութիւնը՝ քայքայում: Տիրոջ մարմնի կիրընդունակութիւնը դիտարկելիս մեր հայրերը կրքերը դասակարգում էին հետեւեալ կերպ՝ *կամաւոր* եւ *ակամայ* կրքեր, *անգոսնելի* (մեղանչական, դէպի մեղք տանող) եւ *անանգոսնելի* (անմեղ) կրքեր: Տէրը կրեց կամաւոր եւ անանգոսնելի կրքերը եւ ոչ թէ՝ ակամաները եւ անգոսնելիները, որոնք հարկադիր են, ծառայական եւ մեղանչական: Սրանով չի թուլանում Տիրոջ մարդեղութեան կատարելութիւնը եւ համագոյութիւնը մեզ հետ, քանզի բանական մարդը կամաւորներով եւ անմեղութեամբ է մարդ: Այն, ինչ ակամայ է եւ մեղանչական, գործում է ոչ թէ ըստ բնութեան, այլ՝ հակառակ բնութեան, եւ բնութեան մէջ օտար եւ ներմուծուած բան է:

Քրիստոս կամաւորապէս եւ ազատ անցնում է մարդկային բնութեան անմեղ կրքերի միջով՝ դատապարտելով նրանցում արմատացած մեղքի զօրութիւնը եւ ազատագրելով մեզ մեղքի ծառայութիւնից:

«Ղրիստի Աստուծոյ կամօք Հօր եւ Իւր եւ Սրբոյ Հոգւոյն, վասն մեր եւ վասն մերոյ փրկութեան խոնարհեցոյց զերկինս եւ էջ յարգանդ Հուսին, եւ էառ մարմին ի Մարիամայ սրբոյ Հուսէն Աստուածածնէն եւ միացոյց զանմեռն ընդ մեռոտն. եւ զապականացուն եւ զմահկանացուն ընդ անմահ Աստուածութեան Իւրոյ, խառնեաց եւ միացոյց եւ արար անապական..»[1]:

«Իսկ մեք խոստովանիմք զմարմինն զախտական եւ զցաւնկական, զմեռուտ եւ զմահական բնութիւնս մեր, խառնեալ զանախտականն ընդ ախտականին եւ արարեալ անախտական, անմեռն ընդ մեռուտս եւ արարեալ զմեռուտն անմեռ. միաւորեալ Աստուած Բանն ընդ

1 Կամիսաս կաթողիկոս, «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 213

մարդկութեանն անախտարար եւ անորդիշ միշտ Աստուած եւ մարդ եւ ոչ՝ երկրութիւն, այլ՝ միութիւն հանապազորդ... Միութիւն խոստովանելով Աստուածութեանն եւ մարդկութեան անապականաբար..»[1] :

«Յայսմ վայրի վերադիտեացուք զվերածնութիւն, սակս ցօղակերպ իջիցն եւ հակիրճ զնախագրելոցն զնոյնս վերակարգեալ հանդիպեցուցուք իրիմ՝ զգուշանալով ի վրիպիտի իրաց հոգեմտութեամբ. զի թէպէտ եւ տղայացաւ Հինաւուրցն վասն մեր յանկատար հասակի, անկատար ո՛չ երբէք ասի, այլ՝ միշտ կատարեալ՝ ըստ Գրոց, եթէ՝ Որդին յաւիտեան կատարեալ. եւ թէպէտ եւ անասց անբանութեան աճման հասակին ըստ օրինակի տղայոց, անբան ո՛չ երբէք ասի, այլ՝ Ի սկզբանէ էր Բանն [Յովհ. Ա 1], եւ գլուխ բանից եւ իմաստից՝ ըստ Գրելոց, եւ հրաման կամացն Հօր ի բերանոյ Նորա բիւն, եւ ամենայն արարածք հրամանաւ Նորա շարժին: Եւ թէպէտ եւ անիմաստ եւ անզօր կարծեցաւ, իբրեւ զմի ոք ստնդիացիկ մանգանց, այլ Գիր ասէ. «Քրիստոս Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն» [Ա Կորնթ. Ա 24]: Եւ թէպէտեւ անգէտ եւ անմտաւոր համարեցաւ ի մարդկանէ՝ ըստ համաբնութեան տիրոցն, այլ մարգարէն ասէ. «Ահաւասիկ ի միտ առցէ մանուկ իմ» [Ես. ԾԲ 13]. նոյն բան վերստին առցի եւ առ մանուկն, եթէ՝ ոչինչ ծածկեցաւ ի քէն [Ես. Խ 26]: Եւ թէպէտ եւ յապականութենէ մարդկան զգեցաւ մարմին, Իսքն միշտ անապական ասի, ապականացու եւ երբէք ո՛չ. ըստ նախագրեցելոցն՝ «Մարմին Նորա ո՛չ ետես զապականութիւն» [Գործք Բ 31, ԺԳ 37, Սաղ. ԺԵ 10]...

Արդ, զպարսաւ երկիւղի եւ զանկատարելութեան մեք ի վերայ Քրիստոսի ո՛չ դնեմք, բայց միայն՝ գովութիւն: Նոյնպէս եւ վասն տրտմութեան տեսցուք, եթէ ո՛չ վասն Իւր ընդբռնելոյն ի զբաժակ մահուն տրտմեցաւ, այլ եթէ վասն անհաւատից կորստեան. առաքեալ ասէ, թէ՝ «Որ ըստ Աստուծոյ տրտմութիւն է, ապաշխարութիւն ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ. իսկ որ ըստ աշխարհիս տրտմութիւն՝ մահ գործէ» [Բ Կոր. է 10]: Արդ, յայտ է. եթէ վասն Իւր տրտմեցաւ, մահածին է տրտմութիւնն, իսկ եթէ վասն աշխարհի տրտմեցաւ, կենաածին. անգեղջագործ փրկութեամբ եհատ զամենայն արտօսր երեսաց ամենայն..»[2]:

1 Ս. Յովհաննէս Իմաստասէր, «Գիրք Թղթոց», Թիֆլիս 1901, էջ 227

2 Յովհաննէս Մայրագոմեցի, «Հնից հաւատոց», Ս. Էջմիածին, 1914, էջ 143 եւ 329

«Անգիտանայր զօրն եւ զժամ կատարածի մարդկօրէն եւ որպէս Արարիչ ժամանակաց ստուգապէս գիտէր, որ ինչ ի նոսա լինելոցն էր. վաստակէր յուղեգնացութեան, այլ վերաբայլէր թեթեւաբար ի վերայ ծովուն, եւ ի գահավէժն առնել, թռուցեալ, եկանէր ի միջոյ նոցա: Ասասցես զնուաստագոյնսն եւ զբարձրացուցանողօքն մի՛ զանց առնէր: Խոստովանեա՛ կրեալ զմարդկայինսն եւ ի վերայ բերր կամօք զայն կատարեալ. եւ մի՛ զնոսին զկամաւոր զկիրս ապականութիւն ի նմա իմանայր, այլ՝ մարդասիրութեան կարեկցութիւն: «Չի ապականութիւն մեղաց ծնունդ է, որպէս ասաց տէր Եփրեմ, ոչ ինչ բնութեամբ ապականացու արար Աստուած, մեղք պատճառք ապականութեան ամենեցուն»[1]:

«Պարտ է ճշմարտութեամբ խոստովանել կրեալ զմարդկայինսն կիրսն Փրկչին եւ զապականութիւն, որ ի կրից անտի ի մեզ ծնանի, ոչ շարամանեալ ընդ փրկչականն կրից. զի ի բառնալ եկն զնա ի մէնք եւ ի կրիցն մերոց՝ կրեալովն Իւր զնոսա: Նմանապէս չար են երկրորդն յաղագս երկեղի ապականութեանն անհաղորդ ասել զՆա մարդկայինսն կրիցն եւ ճշմարտելով զկիրսն, զապականութիւն ապրեալ ի ներքս իսառնեալ: Եղեւ մարդ ճշմարտութեամբ, այլ ոչ՝ ընդ ձեռն ապականութեան, որոյ վիրօք մեք զլինելութիւն ստանայցեմք. այսպէս եւ ի ծննդեանն եւ յայլ ի կիրսն կրեաց զմարդկայինսն բնականապէս, ըստ որում եւ զմարմինն զգեցաւ զբնութեանս մերոյ: Իսկ զապականութիւն եւ զմեղս, որ զկնի յանցանացն յարեալ եղեւ ի բնութիւնս, ոչ արժանի համարեցաւ ընդունել Տէրն ի մարմին Իւր: Մեռաւ ճշմարտութեամբ զբնականն մեր մահ. այս է բացորոշել շնչոյն բանական ի մարմնոյն եւ մարմնոյն անշնչանալ եւ յանզգայութեանն խոնարհեալ սահման, եւ նովին անշնչացեալ մարմնոյն զապականութիւնն մեր խափանեաց ի գերեզմանի եւ մերկացեալ շնչովն ի մարմնոյն իջեալ ի դժոխս, կործանեաց զնա՝ զգերեալսն գերելով որ ի նմա զոգիսն եւ մահուամբն զմերն մեռոյց զմահ: Յաղագս որոյ պարտ եւ արժան է զուարճացեալոցն աստուածազործ սքանչելեօքն ճշմարտել զնորա եւ վասն մեր կամաւորն մահ եւ ոչ դրդուել եւ անկանել յապականութեանն կարծեաց խորհրդոցն»[2]:

Մեր Եկեղեցու հայրերը որքան որ խորշում էին Սեւերիոսի «ապականութեան» վարդապետութիւնից, նոյնքան էլ զգուշանում էին Յուլիանոսի անապականութեան մէջ քօղարկուած երեւութականութիւ-

1 Խորենի Թարգմանիչ, Վարդապետութիւն 1899, էջ 129—130
2 Նոյն, էջ 174—175

նից (դոկետիզմ): Սակայն հայրերը վիճում էին ոչ այնքան Յուլիանոսի, որքան նրա ծայրահեղ հետեւորդների հետ: Յամենայն դէպս, Յուլիանոսի գրուածքներում չկայ այն կոպիտ երեւութականութիւնը, որի մասին յաճախ խօսում էին նրա հակառակորդները՝ մեղադրելով նրան այն բանի մէջ, որ Տիրոջ մարմնի անապականութեան իր ուսմունքով նա փրկութեան խորհուրդը վերածում է ինչ–որ «երեւակայութեան եւ անրջական պատրանքի» (այստեղից էլ՝ «երեւութականներ» անունը): Յուլիանոսի անապականութեան համակարգը կապուած է ոչ այնքան նրա աստուածմարդկային միութեան ըմբռնման հետ, որքան նրա՝ ադամական մեղքի ըմբռնման հետ, նրա ընդհանուր մարդաբանական ենթադրութիւնների հետ: Մարդու նախաստեղծ բնութիւնը Յուլիանոսը համարում է անապական, անկիրք (անչարչարելի) եւ անմահ, ազատ՝ այսպէս կոչուած «անգոսնելի կրքերից» (այսինքն՝ տկարութիւններից կամ ընդհանրապէս չարչարելի վիճակներից): Մեղանչումն էապէս եւ ժառանգականօրէն վնասում է մարդկային բնութեանը, այն դառնում է տկար, մահկանացու եւ ապականացու... Մարմնաւորման ժամանակ Բանն Աստուած վերցնում է Ադամի նախաստեղծ «անկիրք» եւ «անապական» բնութիւնը եւ դառնում Նոր Ադամ: Ուստի Քրիստոս չարչարուեց եւ մեռաւ ոչ թէ «ըստ բնութեան անհրաժեշտութեան» (՝էէ՝ ՝ανάγκες φυσικες), այլ՝ կամովի, «յանուն տնօրինութեան» (λόγω ο՝ικονομί՝ας), «աստուածային հաճութեամբ», «հրաշքով»: Այսուհանդերձ, Քրիստոսի չարչարանքները եւ մահը իրական եւ ճշմարտացի են, ոչ թէ՝ «կարծեօք» կամ «երեւութաբար»: Սակայն նրանք կատարելապէս ազատ են, որովհետեւ դա «ապականացու» եւ «չարչարելի» մարդու մահ չէ, քանզի նրանցում չկայ (նախաստեղծների անկման հետեւանքով) մեղքի ճակատագրական դատապարտուածութիւնը: Այս ուսմունքի մէջ դեռեւս չկայ հերետիկոսութիւն... Սակայն սա կապուած է մէկ ուրիշի հետ: Աստուածմարդկային միութիւնը Յուլիանոսի մօտ աւելի համածուած եւ սերտ է, քան Սեւերիոսի մօտ. այդ միութեան մէջ նա հրաժարւում է զանազանել «բնական կամ գոյացական յատկութիւններ»: Քրիստոսի մարմնի «անապականութիւնն» ամրացում էր Աստուծոյ եւ մարդու այնպիսի սերտ միաւորմամբ, որ չարչարանքների եւ մահուան մէջ այն վերացւում էր աստուածային «տնօրինական հաճութեամբ»: Ըստ Յուլիանոսի՝ դա չէր խախտում Փրկչի մարդկային համագոյութիւնը: Բայց, յամենայն դէպս, նա ակնյայտօրէն չափազանցնում էր մարդեղութեան «պոտենցիալ ասիմիլիացիան» Աստուածութեամբ: Մա կապուած է մարդեղութեան «աստուածացման» կրաւորա-

կան (պասիւ) ընկալմամբ: Քրիստոսի մէջ «անկրքութիւնը» եւ «անապականութիւնը» նա համարում էր չափազանց կրաւորական. մարդեղութիւնը կրաւորապէս պայծառակերպւում է: Հէնց այս մարդաբանական «առնուազութեամբ» եւ «կրաւորականութեամբ» էլ խախտում է հաւասարակշռութիւնը Յուլիանոսի համակարգում... Յուլիանոսի հետեւորդներն աւելի հեռու գնացին, նրանց անուանում էին «աֆտարտոկետներ» (անմպական–երեւութականներ) եւ «ֆանտազիստներ». այս անունները լաւագոյնս ցոյց են տալիս նրանց մտածելակերպի մէջ բոյն դրած երեւութականութիւնը: Յուլիանոսի ծայրահեղ հետեւորդներից ոմանց թւում էր, թէ աստուածմարդկային միութեան մէջ պայծառակերպուած եւ աստուածացած մարդեղութիւնը չի կարելի անուանել «արարչական». այսպէս առաջացաւ «անարարչականների» աղանդը:

Դ. ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յուլիանոսի ծայրահեղ հետեւորդներ (երեւութականներ) յայտնուեցին նաեւ Հայոց աշխարհում: Դատելով նրանց դէմ ծաւալած պայքարի չափերից՝ «երեւութականութիւնը» բաւականին խոր արմատներ էր գցել մեզ մօտ: «Երեւութականութիւնը» մեր պատմութեան մէջ յիշատակւում է նաեւ «Մայրագոմեցւոյ աղանդ» անունով. եւ սա կապուած է Հայ Եկեղեցու Նշանաւոր հայր Յովհան Մայրագոմեցու աշակերտ Սարգիս Մայրագոմեցու անուան հետ: Եկեղեցական աւանդութիւնը Յովհան Մայրագոմեցուն հռչակում է որպէս ուղղափառ վարդապետ, խոստովանող ճգնաւոր եւ երանելի հայր. *փիլիսոփայ կատարեալ եւ աստուածային Գրոց գիտութեան բանիբուն*[1], *կատարեալն աստուածային գիտութեամբ*[2]: Այս երանելի հօր աշակերտ Սարգիսը, ում, ըստ պատմիչի վկայութեան, «*Յուլիան ի բաց յիւրմէ հալածեաց*», յայտնւում է երեւութական սխալ վարդապետութեան մէջ եւ ապա դառնում երեւութականների պարագլուխ Հայոց աշխարհում: Ինչպէս արդէն նշուեց «Երեւութականութեան» աղբիւրը Փրկչի աստուածմարդկային միութեան ծայրահեղ ընկալումն է, որն էլ յանգեցնում է մարդաբանական վտանգաւոր շեղումների (խախտում էր փրկաբանական

1 Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղէմ, 1867, էջ 99
2 Տիեզերական պատմութիւն Ստեփաննոսի վարդապետի Տարօնեցոյ, Փարիզ, 1859, էջ 88

իդեալը): Քրիստոսի մէջ Աստուծոյ եւ մարդու միութիւնը նրանք այնքան էին չափազանցնում, որ մարդկայինն Աստուածութեան մէջ ընկղմուած եւ գրեթէ ոչնչացուած էին համարում... Ըստ երեւութականների՝ Քրիստոսի մէջ մարդկայինն իրական չէ, այլ՝ առ աչօք, թուացեալ երեւոյթ... Ակնյայտ հոգեհարազատութիւն է զգացւում Ապողինարի, Եւտիքէսի քրիստոսաբանական ընկալումների հետ (մարդաբանական առնուազութիւն): Երեւութականներին թւում էր, թէ Քրիստոս չէր կարող իսկապէս ծարաւել, քաղցել, յոգնել, չարչարուել... Քրիստոս ոչ թէ ճարմնաւորուել է Կոյսից, այլ՝ Կոյսի մէջ... Աստուածամարդու մարդեղութիւնը նրանց համար մի «դիմակ» էր, որով հանդէս էր գալիս Բանն Աստուած:

Մայրագոմեցու հետեւորդների կամ հայ երեւութականների դէմ անգիջում պայքար է ծաւալում Թէոդորոս Քռթենաւոր խարազնազգեստ ճգնաւոր վարդապետը... Վառ քրիստոսաբանական խոստովանութեամբ և հանդէս գալիս նա իր «Ընդդէմ Մայրագումացւոցն» գրուածքում: Բանն Աստուած անճառաբար, ինչպէս Ինքը գիտի, միացաւ մեր բնութեան հետ՝ առանց փոփոխութեան եւ շփոթի... Մարմնացեալ Բանը՝ Քրիստոս, իսկապէս կրելով բոլոր մարդկային կրքերն ու կարիքները, ազատագրում է մեզ նրանցում ամփոփուած մեղքի թթխմորից:

«Վայր իջեաց յանապատագրական ծոցոյ Հօր էական Բանն անմահական բնութեամբն եւ անսկզբնական էութեամբ ներտաղաւարեցաւ ի ծննդական ի սուրբ Կուսէն. եւ անպարտաւորի բնութեան պարտականատեղի հնանմանեալ ժամանակաւ ի համբարականի կնոջ. եւ զերկնայինն ոչ թողոյր թափուր տեղի. աղմնատեալ միացաւ ընդ մերաստեղծակ բնութեան մարմնոյ, որպէս Ինքն կամեցեալ գիտաց անճառաբար: Ոչ զԻրն ստեղծ բնութիւն, այլ զմերն առաստեղծեալ միացոյց Իր մարմին: Ոչ էրն փոխեաց եւ ոչ զեղեւն շփոթեաց, այլ բնութեամբ միացոյց ընդ մերումն՝ անբաժանաբար մնալով ի նմին Աստուածն Բան բովանդակեալ զյարգանդին բնակիչն: Մտրկից մարդկան ծնաւ ի Կուսէն անապականաբար եւ զցաւոցն եկուծ զդատակնիք, իմա զծննդոց փրկող եւ կիրքն անախտք պատուհասառոյ կրիցն»[1]:

Քռթենաւորը սուր հեգնանքով է դիմում երեւութականներին՝

1 Թէոդորոս Քռթենաւոր «Ընդդէմ Մայրագումացւոյն», տես «Յովհաննու Իմաստասիրի Աւանդեցոյ մատենագրութիւնք», Վենետիկ 1833, էջ 150:

անուանելով նրանց երկրորդ ապողինարիոսներ:

«Արդ, դու, ո՛վ յօդաբան եւ զրայահուր, ի՞բր գերաթեռեար մտացաթեռ հանճարով քան զերկնագուշակ նախահարսն, որք հիմունք Եկեղեցոյ եւ խարիսիք ճշմարտութեան անուանեցան. որոց պահապանք՝ հրեշտակք, եւ զօրավար՝ Ինքն Տէրն. որք վկայեալք յաղագս Քրիստոսի նահատակեալք, գլխատեցան յառաքելական սատիճանին: Կամ գրէ՞, թէ եօթն հարիւր ամ լիեալ յետ չարչարանաց Որդւոյն Աստուծոյ. եւ այսքան ժամանակք յանգիտութեան գնացին բոլոր մանկունք Եկեղեցւոյ. եւ միայն արդ եւս ի վախճան ժամանակաց նորուսք դուք եւ նորածանք գտայք ճշմարտութեանն, երկրորդ ապատինարիոս. որ նորածայն աւանդութեամբք նորածին բուսուցէք արմատոց դառնութեան փուշս հրաճարակ անշիջատոչոր բոցոյն»[1]:

Իր այս գրուածքը Քոթենաւորն աւարտում է դաւանական կոչով.

«Արդ, հի՛մ վարիք զարտուղի խորհրդովդ. եկա՛յք ընդ մեզ խոստովանեսցուք զառ ի Կուսէն ծնեալն Աստուածն Բան՝ ճշմարիտ առեալ մարմին անփոփոխ Աստուածութեամբ, անյեղեղուկ միութեամբ, անորիշ Աստուածութեամբ, եւ եզակի դէմ. անբաժ ի կրից, անապական մարմնով, մաքուր ի մեղաց, անեղծ ի չարչարանս եւ չարչարեալ իսկապէս»[2]:

Երեւութականների դէմ պայքարը յաջողութեամբ շարունակւում եւ իր գաղափարական ամբողջականութեանն է հասնում Քոթենաւորի աշակերտ ս. Յովհաննէս Իմաստասէր Օձնեցի կաթողիկոսի եւ մեծ գիտնական վարդապետ Խոսրովիկ Թարգմանչի գրուածքներում: Նկատի ունենալով Խոսրովիկ Թարգմանչի եւ Յովհաննէս Օձնեցու յայտնի ընդհանրութիւնները երեւութականների քննադատութեան գործում երեւութականութեան հերձուածի բացայայտման համար հետեւենք Օձնեցու «Ընդդէմ երեւութականաց» աշխատութեանը: Ըստ Օձնեցու՝ նրանց քրիստոսաբանական սխալ ընկալումների աղբիւրը «մի բնութիւն» ձեւակերպման ծայրահեղ ըմբռնման եւ «երկու բնութիւն» ասելը ծայրահեղօրէն ժխտելու մէջ է: Օձնեցին, բացայայտելով «մի բնութիւն» խոստովանութեան ներքին դինամիզմը, ցոյց է տալիս, որ «մի բնութիւն» է ո՛չ թէ ըստ մարդկային եւ աստուածային բնութիւնների

1 Նոյն, էջ 156–157
2 Նոյն, էջ 157–158

նոյնութեան կամ նրանց շփոթման, ո՛չ թէ միմեանց բացառելով կամ իրարից բաժանուելով, այլ՝ ըստ կատարեալ աստուածութեան եւ կատարեալ մարդեղութեան անճառ եւ անպարիմանալի միութեան: «Մի» ասելով՝ ոչ թէ պէտք է բացառել որեւէ մէկը կամ նրանք իրար հետ շփոթել, այլ անայլայլ պահել նրանց ամբողջականութիւնը, յիշել, որ «երկուսից» է...

«Քանզի առ այս՝ ամենայն քրիստոսասիրաց լուսաւորեալ են մտաց աչք. զի ոչ է մի բնութիւն մարմնոյն եւ բանին ըստ նոյնութեան բնութեան. զի ոչ մարդկային երկրքին եւ ոչ՝ աստուածային: Ոչ մարմինն յերկնից իջեալ՝ ըստ առաջին Եւտիքեայ բաշաղանացն, եւ ոչ Աստուածն Բան ի Մարիամայ առեալ սկիզբն, որպէս Փոտինոսի թուեցաւ ասել. այլ Բանն անեղ՝ յանեղագունէն իջեալ Հօրէ, մարմին առացական յարգանդէ կուսին զգեցաւ: Ապա ուրեմն, ոչ է ըստ բնութեան նոյնութեան՝ մի բնութիւն. զի թէ եւ ասեմք՝ մի բնութիւն Բանին մարմնացելոյ, ոչ այդպէս խելայեղ եւ ջաղջախ մտածութեամբ, որպէս թէ միոյն ի միսմէն ի բաց բարձեալ. եւ կամ լուծեալք ի միմեանց՝ որպէս խոնաւուտ բնութեանցն. յորմէ լինի եւ ոչ մի բնութիւն: Այլ զոր էրն ոչ ի բաց թողով, եղեւ՝ զոր ոչն էր. եւ այսպէս բարձրագունին ծանուցաւ խոնարհութիւն. մնալով ի բարձրութեան՝ գտաւ նոյն ինքն ի խոնարհութեան»[1]:

«Ապա ուրեմն մի բնութիւն եւ մի դէմ Քրիստոսի, եթէ պարտ է համառօտագոյնս ասել, ոչ է ըստ նոյնութեան բնութեան կամ ըստ միանձնականութեան. զի այս զերկուսին ի միասին գրեթէ զոկեսցէ, զԱստուած ի մարդն լինելոյ եւ զմարդն յաստուածանալոյ. այլ է, որպէս բազում անգամ ասացի, ըստ անճառ միաւորութեան Բանին ընդ Իւրում մարմնի: Որպէս եւ սուրբն Գրիգոր ասէ. «Միացաւ ի մարմնի բնութեամբ եւ խառնեաց զմարմինն ընդ Իւր Աստուածութեան»: Միաւասիկ ըստ անճառելի եւ անպարիմանալի խառնմանն եւ միաւորութեան համարձակիմք ասել մի բնութիւն Քրիստոսի եւ ոչ՝ ըստ այլում իմիք յեղանակի: Զսոյն եւ երանելին Յուղիոս ասէ Հռովմայ հայրապետ. «Որ ասէ զմարմինն առնելի առ անեղն Աստուած միաւորութեամբ աստուածային եւ երկրպագեալ, եւս զերկպիտումբն իբրեւ մի անառնելի Աստուած, երանեալ եղիցի»: Առ երկոսին հաւասարապէս ունի երանութեանս բան, երկպիտումբ խոստովանեալ ըստ բնութեանց եւ մի ըստ միաւորութեան: Մի զմին

1 Ընդդէմ երեւութականաց, «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ 1833, էջ 50

ասելով՝ զբնութեանցն իցանել կամակորեացուք զաղբերս, եւ մի՛ յասելոյ անտի զերկպիտումբն՝ պատառել կամելով զմիաւորութեան պատմուճան. այլ բարեպաշտաբար առ երկոսիանն գալ գիտացեալ, միութեամբն ճանաչել զբնութիւնսն եւ ի բնութեանց անտի ելանել առ միաւորութիւն»[1]:

«Եթէ այդպէս ասեմք՝ ասեն, երկուս լինիմք ասացեալ դէմս եւ երկուս բնութիւնս: Դարձեալ փախչելով ի սնոտի երկիւղէ՝ ի մեծագոյնն անկանիս չար: Եթէ յերկուց ըստ բնութեան ոչ կամիս ասել զմիանն, կարի յոյժ չարաչար ըստ բնութեան զմին գտանիս ասացեալ բնութիւն: Այլ անմարմին բնութիւն աստուածային Բանին՝ զմարմնական բնութիւն ի Կուսէն ընկալեալ, ընդ Ինքեան միաւորեաց. որ է ըստ բնութեան յերկուց՝ աստուածային եւ մարդկային. իսկ ըստ միաւորութեան՝ մի: Զի եթէ այս երկուք գեղեցկագոյն հաւատոյ ուղիք առ ճշմարտութիւն ի վեր կանգնեալ ոչ հաւատաս, առ որ եւ յենուցուս առ մինն ի նոցանէ, կաղ գտանիս առ խոստովանութիւն ճշմարտութեան. այլ կատարեալ՝ ըստ երկաքանչիւրոցն դիտելով զերկուսն, ըստ միաւորութեան՝ մի կատարեալ, մի դէմ եւ մի Որդի Աստուծոյ խոստովանելով. որպէս սուրբն Բասիլիոս ասէ. «Երկուց գոյացութեանց կատարեցելոց միաւորութիւն»[2]:

«Բայց դու թէ ասիցես՝ մարդ եղեալ ճշմարտապէս ի մարդկանէ զԲանն, որ ի Հօրէ, ընդէ՞ր զանգիտես զմարդկայինն ի Քրիստոս դաւանել բնութիւն. եւ աղամանդիս ի բանս քո, եւ յայլմէ առ այլ վազեալ անցանես տարապարտ մտածութիւնս: Երկնչիս յերկուց ասել բնութեանց. երկիւղ մեծ գոյ, եթէ ոչ արժանապէս եւ զմին ասել Քրիստոսի բնութիւն: Իսկ եթէ իրաւապէս եւ բարեպաշտաբար զերկուսին լսես, ոչ ինչ է արգել զմին ասելով յիշել եւ զառ ի յերկուցն՝ եւ դարձեալ՝ ոչ մոռանալով զյերկուցն, խոստովանել եւ զմին»[3]:

«Որ յոյժ պինդ ունիս զմիդ ասել բնութիւն. եւ ասելոյդ քո խորհուրդ ի վաղենտինեայցն եւ ի մանիքեցւոցն հայի աղճատանս: Իսկ զառ ի յերկուց բնութեանցն ասել՝ ոչ միայն թէ լսել ոչ կարասցես, այլ եւ վատթարագունի իմն նմանեցուցանես տարացուցի. որ է ըստ քում աստուածախօսութեանդ եւ տարացոյցն քո: Եւ յաղագս այդր երկիւղի, թէ մի՛ գուցէ զփրկչական մարմինն ի մարդկայնոյս ասել հարկեսցիս

1 Նոյն, էջ 52
2 Նոյն, էջ 54—55
3 Նոյն, էջ 56

բնութենէ, ի հանուր իսկ էակացս ի բաց բարձեալ տարար զանուն բնութեան՝ ասելով. Ոչ ասի այլ բնութիւն, բայց արարչականն եւ եթ. եւ ամենեքեանս, ի նմանէ ածանցոցեալք՝ զնա ունին միայն իւրեանց բնութիւն: Որպէս զի ըստ քեզ՝ յերկուց մին պատկանեսցի, կամ զԱրարիչն թուել ընդ արարածս, որ է անհաւասարութիւն, եւ կամ զԱստուածութեան կարծիս բերել ի վերայ արարածոյս, որ է բազմաստուածութիւն. եւ նոյնպէս երկոքին անաստուածութիւն: Այս է քո պանծալի աստուածաբանութիւնդ, մանաւանդ թէ՝ յիմարութեանդ ցոյցք, զնիւթս զայս յաւէտակից ասել արարչական զօրութեանն. բնութիւն, եւ ոչ առացուած նմա զսա համբաւել»[1]:

Ս. Յովհաննէս Օձնեցին անընդհատ անդրադառնում է Քրիստոսի մարդեղութեան կատարելութեանը եւ ամբողջականութեանը: Քրիստոս կատարեալ մարդ է... Նա կամովի յանձն է առնում կրել մեր մարդկային կրքերն ու կարիքները, սակայն, ոչ ըստ Աստուածութեան, ինչպէս պնդում էին երեւութականները:

«Արդ, զի երեւեցոյց բանս՝ ոչ մեղք եւ ոչ ապականութիւնք հոգեկանացն եւ մարմնականացն մերոց լինել կրից, այլ՝ որպէս ոմանք, եւ որպէսութիւնք մարդկայնոյս պատշաճեալ գոյացութեան. զի՞նչ զարմանք են, թէ՝ եւ Փրկիչն տրօք ի կենցաղասիրելն ընդ մարդկան վարեցաւ, ուրանօր եւ կամեցաւ, եւ յորժամ եւ որքան. ոչ օտար յեղանակաւ եւ կամ ստուերաւ իւիք, այլ՝ ճշմարտութեամբ. եւ զմերն իսկ առաջի արկանելով բնաւորականն՝ թուղացուցեալ մարմնոյն կրել զիւրան: Որպէս սուրբն Գրիգոր, ասէ, Նիւսացի. Քանզի անտուաղ ասէ զքառասուն օր մնացեալ՝ յետոյ քաղցեաւ. եւ ետ յորժամ սիրտրժեաց բնութեան զիւրն կատարել: Ապա ուրեմն ըստ օրինի մարմնոյն Իւրոյ՝ զոր ի մէնջն ընկալաւ, զմերն կրէր կիրս. եւ ոչ ըստ Աստուածութեան, որպէս քեզ թուի ասել: Զի եթէ ըստ Աստուածութեանն հնար էր զմարդկայինսս կրել Քրիստոսի, ապա թերեւս ոչ մարմին էր զգեցեալ ի Կուսէն ի մերմէ բնութենէս, այլ զնոյն զնախահարցն էր պահեալ զերեւութական տեսութիւն. որպէս առ Աբրահամաւն եկեր եւ ընդ Յակոբայ եղեւ կռուակից. ցՍդոմ եւ ցԵգիպտն անգիտաբար հարցանէր: Իսկ եթէ այն նմանութիւնք եւ օրինակք էին ճշմարտութեան, իսկ այս նոյն ինքն ճշմարտութիւն եւ ոչ օրինակ, ապա յայտ է ուրեմն, թէ ճշմարտութիւն էր եւ երեւումն, ճշմարտութիւն էր եւ երեւեալն, ճշմարտութիւն էր եւ կրելն, ճշմարտութիւն էին եւ կիրքն: Եւ թէպէտ եւ աստուածային զօրութիւն

1 Նոյն, էջ 65

կարող է եւ ի նմանութեան զճշմարտութիւնն պահել, որպէս ասաց ոմն ի սրբոցն մերոյ Գրիգորիոս, սակայն առ վերջնովս զառաջինն յիշեցեալ զերեւմունս եւ զկիրս՝ նմանութիւն եւ օրինակ զնոսա ասելի է եւ ոչ ճշմարտութիւն: Իսկ ճշմարտութիւն կոչեմ զիրն՝ եւ ոչ՝ զանունն միայն: Արդ, որպէս իր էր երեւելն ի կնոջէ, իր ուրեմն էիմ եւ ներգործեալքն ի նմանէ եւ կրիցեալքն: Եւ որպէս զմարմին Բանին ոչ յայլմէ իմեքէ ծանեաք, այլ՝ ի Կուսէն, այսինքն՝ ի մարդկային զանգուածոյս, նոյնպէս եւ զկիրսն մարդկայինս ըստ մեզ եւ զմերն ասեմ կրեալ Քրիստոսի եւ ոչ՝ ըստ աստուածայնոյ եւ կամ զայլոյ ուրուք: Որպէս եւ մեծն Գրիգոր ասէ Նազիանզու: Կրկին էր՝ ըստ որում վաստակեցաւն եւ երկեւան եւ արտասուեացն եւ քաղցեալ եւ ծարաւեցաւ օրինօք մարմնոյն: Կրկինն ասել զԱստուած Բանն, եւ զնորայն յայտնեաց մարմին. եւ օրինօք մարմնոյն ասելն՝ ըստ մարդկութեանն, եւ ոչ ըստ Աստուածութեան նշանակէ կրել զկիրսն: Զոր դու եւ ոչ զմի զոք յայոցանէ կարես առնոյ յանձն. յաղագս որոյ զնոյն ինքն ընդեան զմարդկային կազմածս մեղս ասացեր զոյ»[1]:

«Ուստի յայտ է, թէ, հաւաստապէս բնականացն թոյլ տուեալ, զանցնիւրան իրողութիւնս առ Իւրն անապականապէս ազդել մարմին եւ հոգի ինքնիշխանական կամօք, յորժամ եւ կամեցաւն. ոչ անուանն եւ ձեւոյն եւեթ, այլ՝ առաւել իրացն, որոց եւ անունն՝ յիւրաքանչիւրսն համբերեալ. եւ այսր աղագաւ զմերն ասի ընդունել կիրս: Այլեւ ըստ մեզ, եթէ ոչ յոյժ զայթագղեացիս բանիւս՝ զապականութեանն ընդ միտ ածելով տեսակս. քանզի եւ զբնականացն ասեմ բուռն հարկանել զՔրիստոս. դու զանբնականսն ի ներքս մղես, այս է զապականութիւն եւ զայլայլութիւն: Ոչ էր առակ մարդ, բայց եւ ոչ՝ Աստուած մերկ. այլ մանաւանդ՝ Աստուած եւ մարդ միանգամայն. էր ինչ որ ըստ մեզ, եւ էր ինչ որ ոչ ըստ մեզ՝ յինքեան ցուցանելով Տէրն. քաղցեաւ ըստ մեզ եւ, քաղցնլովն ոչ ըստ մեզ, առ յագեցութիւն երկնայինն բարութեանն զմեզ փոխաբերեաց: Եթէ յատուկ մարդ, ոչ եւս ընդ կրելն ներգործեալ կարօղ. եւ եթէ միայն Աստուած, ոչ եւս ներգործելովն կրել գիտակ: Բայց այժմ առ երկուսին միանգամայն բաւական լիեալ՝ առնլով յինքն զտկարութիւնն մեր եւ ըստ մեզ, եղեաք եւ մեք զօրութեան Նորա հաղորդք եւ ըստ Նմա»[2]:

* * *

1 Նոյն, էջ 70—71
2 Նոյն, էջ 73—74

Ը դարը հայ քրիստոսաբանական մտքի ամբողջացման եւ բիւրեղացման ժամանակաշրջանն էր: Աստուածաբանական մտքի ասպարէզ էին իջել այնպիսի մեծութիւններ, ինչպիսիք էին Յովհաննէս Օձնեցին, Խոսրովիկ Թարգմանիչը, Ստեփանոս Սիւնեցին... Եւ ահա տեղի ունեցաւ այն իրադարձութիւնը, որը պէտք է ամբողջացնէր եւ վերջնական տեսքի հասցնէր Հայ Եկեղեցու քրիստոսաբանական համակարգը. դա Մանազկերտի ժողովն էր (726 թ.):

Մեզ են հասել Մանազկերտի ժողովի նզովքները[1], որոնք խտացրած կերպով եզրագծում են մեր Եկեղեցու քրիստոսաբանական կառոյցը: Նզովքների ձեւակերպումներում, անշուշտ, զգացւում է Օձնեցու եւ Խոսրովիկի շունչը, չէ՞ որ նրանք էին Մանազկերտի ժողովի գլխաւոր դէմքերը: Ահա՛ այդ նզովքները:

Ա. Եթէ ոք ոչ խոստովանի զՍուրբ Երրորդութիւնն մի բնութիւն եւ Մի Աստուածութիւն, յԵրիս Դէմս եւ յԵրիս Անձնաւորութիւնս կատարեալս հաւասարս, նզովեալ եղիցի:

Բ. Եթէ ոք ոչ խոստովանեսցի զԲանն Աստուած մարմնացեալ ի սրբոյ Կուսէն ճշմարտութեամբ, այսինքն՝ զբնութիւնս մեր առեալ ի նմանէ՝ զհոգի եւ զմարմին եւ զմիտս, առանց ապականութեան, ասիցէ կարծեօք եւ նմանութեամբ երեւեալ զՔրիստոս, նզովեալ եղիցի:

Գ. Եթէ ոք ոչ ասիցէ ի մեղանչական եւ ի մահկանացու մերմէ բնութենէս առնոյ մարմին Բանին Աստուծոյ, այլ՝ յանմեղ, յանմահ եւ յանապական բնութենէն, զոր ունէր նախաստեղծն յառաջ քան զյանցանսն, նզովեալ եղիցի:

Դ. Եթէ ոք ոչ խոստովանեսցի զմարմնացեալ Բանն Աստուած մի բնութիւն ըստ անճառ միաւորութեանն, որ յԱստուածութեանն՝ որ յԱստուածութենէն եւ ի մարդկութենէս, այլ է կամ ըստ բնութեան մի բնութիւն եւ կամ եթէ ըստ շփոթութեան եւ ըստ փոփոխման մի բնութիւն, նզովեալ եղիցի:

Ե. Եթէ ոք ոչ խոստովանեսցի զմի եւ զնոյն Աստուած եւ մարդ միանգամայն, այլ զայլ ոմն Աստուած ասիցէ եւ զայլ ոմն՝ մարդ, նզովեալ եղիցի:

Զ. Եթէ ոք ոչ ասիցէ զմարմինն Քրիստոսի անապական ի ծննդենէն,

1 Տես Գարեգին վարդապետ Յովսեփեան, «Խոսրովիկ Թարգմանիչ», Վաղարշապատ, 1899, (Ներսիսեան) էջ 77—79:

որ ի Կուսէն, մինչեւ ցյաւիտեան, ոչ ըստ բնութեան, այլ՝ ըստ անճառ միաւորութեան, այլ՝ մինչեւ ցյարութիւնն ապականացու եւ անփոփոխ եւ անկատար եւ ապա յետ յարութեանն ապիրէ եղեւ անապական եւ փառաւոր եւ կատարեալ, նզովեալ եղիցի:

Է. Եթէ ոք ոչ ասիցէ զմարմինն տէրունական չարչարելի եւ մահկանացու ըստ բնութեան եւ անչարչարելի եւ անմահ ըստ Աստուածութեանն՝ Բանն միաւորութեան, այլ ասիցէ ըստ բնութեան անչարչարելի եւ անմահ եւ կամ ըստ անճառ միաւորութեան չարչարելի եւ մահկանացու, նզովեալ եղիցի:

Ը. Եթէ ոք ոչ ասիցէ զՔրիստոս մարմնով կրեալ զամենայն կիրս մարդկայինս, առանց մեղաց, այլ ըստ Աստուածութեանն զՆա անկեալ ընդ կրիւք, եւ կամ անհաղորդ լեալ զՆա մարդկային կրից ըստ տնօրէնութեանն, նզովեալ եղիցի:

Թ. Եթէ ոք ո՛չ խոստովանեսցի զՔրիստոս յետ անճառ տնօրէնութեանն հաւասար Հօր եւ Հոգւոյն՝ Աստուած ճշմարիտ, նոյնպէս կատարեալ եւ ճշմարիտ մարդ՝ հաւասար մօր եւ մեզ, բաց ի մեղաց, նզովեալ եղիցի:

Ժ. Եթէ ոք ոչ խոստովանեսցի անապականաբար կրեալ Քրիստոսի զամենայն կիրս մարդկայինս կամաւ, այլ ապականութեամբ ասեն Նմա զայտսիկ եւ կամ եթէ զայն Ինքն զկիրս ապականութիւն դնեն Նմա, եւ ոչ խոստովանիցի ըստ առաքելոցն եւ մարգարէից եւ ուղղափառ վարդապետաց խոստովանութեանն, նզովեալ եղիցի:

Քրիստոս կատարեալ մարդ է, ոչ թէ առաչօք եւ նմանութեամբ է երեւացել մարդկանց, Նա սուրբ Կոյսից առանց ապականութեան եւ մեղքի վերցրել է մարդկային բնութեան ամբողջականութիւնը՝ հոգին, միտքը եւ մարմինը: Երկրորդ նզովքով մերժւում է մարդաբանական ցանկացած անկատարութիւն, վերացականութիւն եւ վնասուածութիւն (այսինքն՝ մեղքի եւ ապականութեան առկայութիւն): Քրիստոս անճառ տնօրէնութիւնից յետոյ կատարեալ Աստուած է (համագոյ է Հօրը եւ Սուրբ Հոգուն) եւ կատարեալ մարդ է (համագոյ է մեզ՝ մարդկանց)՝ ամէն ինչում հաւասար մեզ, բացի մեղքից (Թ նզ.):

Մարմնացեալ Բանն ունի մի աստուածմարդկային բնութիւն՝ ըստ աստուածային եւ մարդկային բնութիւնների անճառ միաւորութեան՝ անբաժանելի, անփոփոխելի եւ անշփոթելի (Դ նզ.): Մի է Քրիստոս, եւ անընդունելի է բնութիւնների, անձերի, կամքերի, ներգործութիւնների ածանցում կամ բաշխում կամ թերացում Քրիստոսի մէջ (Ե նզ.):

Բանն–Աստուած մարմին է առել մեր մահկանացու եւ մեղանչական բնութիւնից, ոչ թէ՝ նախաստեղծի անմահ եւ անապական բնութիւնից (ինչպէս ասում էր Յուլիանոսը) (Գ նզ.), այսուհանդերձ, Քրիստոսի մարմինն անապական է, ոչ թէ՝ ըստ բնութեան, այլ՝ ըստ անճառ միաւորութեան (Զ նզ.). այսպիսով, Տէրունական մարմինը չարչարելի եւ մահկանացու է ըստ բնութեան եւ անչարչարելի ու անմահ՝ ըստ միաւորութեան (Է նզ.), Քրիստոս ճշմարտապէս եւ ազատօրէն կրում է բոլոր մարդկային կրքերը, բացի մեղքից (Ը նզ.). կրքերը Նա կրում է կամովի եւ անապականաբար եւ հետեւաբար՝ բնականօրէն եւ ոչ թէ՝ հակաբնական եւ ակամայ կերպով (Ժ նզ.):

Քրիստոսաբանութիւնն իմաստասիրական ձեւակերպումների համակարգ չէ, այլ. բացայայտումն է մարդկութեան մէջ բնաւորուած քրիստոսաբանական իդեալի, որն ըստ էութեան փրկաբանական է... Իրաքանչիւր ժողովուրդ իր մէջ կրում է Քրիստոսի՝ իրեն իւրայատուկ քրիստոսաբանական տիպը՝ որպէս փրկութեան եւ աստուածացման ներքին հնարաւորութիւն. որքանով մաքուր եւ առաքելական աւանդութեանը հարազատ է տուեալ ժողովրդի դաւանութիւնը, այնքանով էլ անաղարտ է նրա քրիստոսաբանական իդեալը:

ԱՂԲԻՒՐՆԵՐ

Արշակ Տէր–Միքելեան, «Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը», Տփխիս, 1900

Արշակ Տէր–Միքելեան, «Հայաստանեայց Եկեղեցին եւ բիւզանդեան ժողովոց պարագայք», Մոսկուա, 1892

«Կնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914

«Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, «Ազգապատում», Պէյրութ, 1959

Երուանդ վարդապետ Տէր–Մինասեանց, «Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները ասորուց եկեղեցիներու հետ», Ս. Էջմիածին, 1908

«Յովհաննու Իմաստասիրի Աւանեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833

Գարեգին վարդապետ Յովսէփեան, «Խոսրովիկ Թարգմանիչ», Վաղարշապատ, 1899

«Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914

«Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ.Պոլիս, 1729

«Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփխիս, 1909

«Սրբոյ հօրն մերոյ, երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի՝ Յաճախապատում ճառք լուսաւորք», Ս. Էջմիածին, 1894

Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին», Երեւան, 1989

«Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1899

«Մաշտոց՝ յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս հայոց՝ ըստ սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյ Հայոց», Վաղարշապատ, 1905

«Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», Վաղարշապատ, 1903

Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղէմ, 1867

Տիեզերական պատմութիւն Ստեփանոսի վարդապետի Տարոնեցւոյ, Փարիզ, 1859

«Սկզբնագիրք տումարի ս. Լեւոնի». աշխատութեամբ աշակերտաց Մխիթարայ աբբահօր, Վենետիկ, 1905

G. V. Florovsky, Byzantine Fathers of the V–VII [centuries]

The Armenian Version of the works attributed to Dionysius the Areopagite, edited by Robert W. Thomson, Lovanii, 1987

J–P. Migne, Patrologiae Cursus Completus. Series Graeca, tt. 86, 86 bis, 89

М. Э. Поснов, "История Христианской Церкви", Брюссель 1964

Вл. Лосский, Очерк Мистического Богословия Восточной Церкви, Богословские Труды, т. 8, Москва 1972

Вл. Лосский, Догматическое Богословие, Богословские Труды, т. 8, Москва 1972

Տիգրան Խաչատրեան

ՄԵՂՔԻ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՂՋՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ԿԵԱՆՔՈՒՄ

Մեղքի գիտակցութիւնն ուղղափառ աստուածպաշտութեան ամենաբնորոշ կողմն է: Այն յատուկ է եղել բոլոր սուրբերին. թէ՛ մարգարէները, թէ՛ առաքեալները, թէ՛ մեծահամբաւ հայրապետներն ու վարդապետները, սրբակեցութեամբ եւ մեծամեծ շնորհներով փայլելով հանդերձ, իրենց անձերը խիստ մեղաւոր ու անկատար են համարել: Նրանց իսկ գրաւոր վկայութեամբ զղջումն ու արտասուքն աստուածամերձ եւ աստուածասէր լինելու նշան է, իսկ յարատեւ արտասուքը՝ մեծագոյն շնորհ:

Ցաւօք, այս շնորհին խորապէս անտեղեակ են այսօրուայ բազում քրիստոնեաներ, մանաւանդ՝ օրաւուր բազմացող յարանուանութիւնների հետեւորդները, որոնց որդեգրած պաշտամունքային ուղիները գնալով առաւել ու առաւել «ժամանակակից» եւ խրախճական հնչեղանգ են ստանում: Հակադրելով փառաբանութեան լուսաւոր խնդութիւնն արտասուքի «մռայլութեանը»՝ յաճախ մերժում է վերջինիս կարեւորութիւնը եւ համարում հոգեւոր կեանքին խորթ, աւելորդ հոգեկան զեղում եւ հնացած միջնադարեան մոլեռանդութիւն: Նման ըմբռնումն իրականում հետեւանքն է թերի հոգեւոր փորձառութեան եւ շնորհազուրկ մտայնութեան, որը հոգեւոր խորհուրդներն ընկալում է անձնահաճ միակողմանիութեամբ՝ յարմարեցնելով ընկած բնութեանը յատուկ ցնորամներին: Այս պատճառով աներկիւղ յանդգնութեամբ յաճախ անտեսւում են Սուրբ Գրքի բոլոր այն խօսքերը, որոնցում մատնանշուած է կամաւոր ճիգերի ու վշտակրութեան անհրաժեշտութիւնը: Եւ փրկութեան երաշխիքը նենգափոխւում է քնաւ ինքնամխիթարութեան, իսկ մեղքի առկայութեան անտարբեր հանդուրժողութիւնը շփոթւում հոգեւոր խաղաղութեան հետ: Ինչպէս Յովհան Մանդա-

կունին է ասում.

«Զարեօք խոցոտիմք եւ անհոգ ենք իբրեւ առողջս»[1]:

Շատերն են վրիպում զղջման շնորհից այն պատճառով, որ չեն տեսնում սեփական մեղանչումները՝ մեղքի եւ անօրէնութեան բազում դրսեւորումները համարելով բնական եւ օրինաչափ երեւոյթներ.

«Եւ այն իսկ են անհնարին աղէտք. զի այնչափ յախտի կամք եւ չիմանամք զոգւոցն ծիւրութիւն եւ չդնեմք միտ տգեղութեան նորա»[2]:

Որտեղ բացակայում է հոգեւոր նորոգութեան իրական ներընթացը, այնտեղ մեղանչական վրիպումները ոչ մի ցաւ չեն պատճառում սրտին, քանզի նա անտեղեակ է լինում *Մուրք հոգու տրտմութեանը* [Եփես. Դ 30] եւ չի տեսնում իր անկատարութեան ու ապականուածութեան աստիճանը: Ոչինչ այնքան նպաստաւոր չէ չարի ներգործութեան համար, որքան կարծր ու անզգեղջ սիրտը, որը դիւրութեամբ է ենթարկւում նրա նրբին խաբէութիւններին եւ արտաքին բարեպաշտութիւնն ու բացայայտ մեղանչումների բացակայութիւնը հիմք ընդունում սեփական անձն անմեղսունակ համարելու համար.

«Բազմատեսակ չարիք ի մեզ հաստատեալ են, թէպէտ եւ մեզ թուի, թէ ի խաղաղութեան եմք: Եւ քան զբոլորսն այս իսկ է զմնդակագոյն, զի ոչ ճանաչեմք, թէ ի չարիս եմք...՝

Եւ մի՛ ասիցես թէ՝ ոչ պոռնկիմ. զի ահաւասիկ ընչասէր ես: Տե՛ս, ճնճղուկ թէպէտ ոչ ամենայն մարմնովն, այլ միով ոտամբ ըմբռնի, ի կորուստ երթայ. ապա եւ մեզ ամենայն ախտից զգուշանալ պարտ է ոգեկանաց, շնչականաց եւ մարմնականաց. զի կատարեալ լիցուք փրկեալք ի փառս Քրիստոսի»[3]:

Առաւել անհեթեթ է զղջման անհրաժեշտութեան բացառումն Աստուծոյ ողորմածութեան եւ ներողամտութեան պատճառաբանումով: Այս խեղաթիւր վերաբերումը, ըստ ս. հայրերի, *անզգայութեան* հետեւանք է, որին մատնուած հոգին սեփական մեղանչումը ճանաչելու

1 Յովհան Մանդակունի «Վասն չառնելոյ սէր բարեկամութեան ընդ թշնամիսն Աստուծոյ» («Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք» (երկրորդ տպագրութիւն), Վենետիկ, 1860, էջ 149)

2 «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպօլսի եպիսկոպոսապետի յաւետարանագիրն Մատթէոս», Վենետիկ, 1826, էջ 58

3 «Մեկնութիւն Գործոց առաքելոց խմբագիր արարեալ նախնեաց յՈսկեբերանէ եւ յԵփրեմէ», Վենետիկ, 1839, էջ 244

դէպքում իսկ զլանում է ցաւել գործածի համար՝ մնալով նախկին անհոգութեան մէջ.

«Այնպէս յանզգայեալ կան յախտի ոմանք. մինչ յետ զայսպիսի բանս խօսելոյ. «Ինձ,— ասէ,— մի՛ երբէք լիցի արտասուել, այլ ցանգ խաղալ եւ ծիծաղել տացէ Աստուած»: Եւ զի՞նչ քան զայն խակութեան միտք կայցեն: Ո՛չ թէ Աստուած տայ զխաղալն, այլ՝ սատանայ...՝ Մի՛ այսուհետեւ խնդրեր զայն յԱստուծոյ, զոր ի սատանայէն առնուս. քանզի Աստուծոյ սիրտ մաշեալ եւ խոնարհ է տալ, ցածուն եւ հեզ եւ զղջացող եւ ստրջացող: Այս են Նորա պարգեւք. քանզի եւ սոցին իսկ են մեզ պէտք»[4]:

Յաճախ երկրասէր մեղսունակ ուրախութիւնը ներկայացւում է որպէս հոգեւոր խնդութիւն, եւ *ամենայն ժամ ուրախ լինելու* առաքելական պատգամը [Փիլիպ. Դ 4] պատրուակւում է մեղքերը սգալու պարտաւորութիւնը մերժելու միտումով: Մինչդեռ հոգեւոր խնդութիւնը երբէք հակադրելի չէ զղջմանը, աւելին, ճշմարիտ, աստուածահաճ ուրախութիւնը ոչ միայն զուգորդւում է սուգի հետ, այլեւ նրա իսկ միջոցով՝ առատանում.

«Նախ քան զայլոցն՝ նոցա եւ երանի Աստուած. «Երանի՛,— ասէ,— սգաւորաց» [Մատթ. Ե 4]: Եւ զիա՞րդ Պօղոս ասիցէ. թէ՝ «Ուրա՛խ լերուք յամենայն ժամ» [Փիլիպ. Դ 4]: Զարտասուա՛ցն խնդութենէն ասէ: Զոր օրինակ աշխարհիս խնդութեան տրտմութիւն է վիճակակից, նոյնպէս ըստ Աստուծոյ արտասուքն ուրախութիւն հանապազորդ եւ անթառամ բղխեն»[5]:

Ով ճշմարիտ հաւատքով *հաղորդ է աստուածային բնութեանը* [Բ Պետր. Ա 4] եւ իր *ներքին մարդով* քաջածանօթ՝ Քրիստոսի փրկագործութեան իսկութեանը, նրա համար փառաբանութեան երանութիւնն ու զղջման արտասուքը ոչ թէ հակասելի են, այլ միմեանց լրացնող ամբողջութիւն են կազմում, ինչպէս շունչն ու արտաշունչը: Եւ որքանով մեծ է զղջումն ու սեփական անձի անարժանութեան զգացումը, այնքանով խորն է ու ներհուն գոհութիւնն առ Աստուած:

«Եթէ կամիս զոհութեան բանս ուսանել, լո՛ւր յերից մանկանցն.

4 «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպօլսի եպիսկոպոսապետի յաւետարանագիրն Մատթէոս», Վենետիկ, 1826, էջ 92—93

5 Նոյն. էջ 90

«Մեղաք,— ասէին,— անօրինեցաք եւ յանցեաք, արդար ես, Տէ՛ր, յամենայնի՝ զոր արարեր մեզ...» [տե՛ս Դանի. Գ 25–30]: Զիւր մեղսն խոստովան լինել՝ այն գոհանալ զԱստուծոյ է, եւ սերտ խոստովանութիւն, որ ցուցանէ զանձն բազում վնասուց պատժապարտ եւ չպահանջիցի զարդար դատաստանն. այնպիսին է, որ առաւել գոհանայցէ»[6]:

Աստուած Իր փառատրումն ամենից առաջ մեր ներսում է փընտրում եւ ոչ թէ արտաքին փառաբանութիւնների ու կոչերի մէջ: Իսկ Նրա փառքի լոյսը հաստատւում ու ճառագում է միայն սրբագործուող սրտերում: Ով ճշմարտապէս Աստուծոյ փառատրումն է փնտրում իր անձում, չի կարող չնկատել իր մէջ առկայ այն հակումներն ու բծերը, որոնք հակադրւում են շնորհին, եւ որոնց յաղթահարումն անհնար է առանց զղջման ու խոստովանութեան: Երբ քրիստոնեան գլանում է *քննել իր անձը* [Բ Կոր. Ժ 5] եւ, յայտնաբերելով իր ներքին արատները, զղջալ ու խոստովանուել դրանցից թօթափուելու համար, ակամայից հաշտութեան մէջ է գտնւում մեղքերի հետ եւ թոյլ տալիս նրանց օրէցօր առատացումն ու կուտակումը սրտում: Ըստ ա. հայրերի վկայութեան՝ անգամ մեծ շնորհառատութեան մէջ գտնուող անձը, երբ դադարում է ուշադրութեամբ քննել իր սիրտը եւ զղջում ապրել ամէն մի անմաքրութեան համար, վաղ թէ ուշ ենթարկւում է այնպիսի դիւային յարձակման, որին չի կարողանում դիմադրել, եւ ընկնում է առաւել մեղանչական իրավիճակի մէջ: Քանզի դեւերը ոչնչից այնքան չեն վախենում ու փախչում, որքան յարատեւ զղջման կրակից, եւ մեծ հմտութեամբ են օգտագործում նրա բացակայութիւնը: Այս փորձառութեանը ծանօթ լինելով՝ ա. հայրերը յորդորում են մեղքերի յիշատակմամբ մշտապէս ազալ եւ արտասուք թափել.

«Որպէս մարմնոյդ տաս զհանդերձն եւ զկերակուրն, այնպէս եւ արտասուօք կերակրես զհոգիդ. եւ այսպէս ջանա՛, որ յամենայն օր նախ զհոգիդ կերակրես եւ ապա՝ զմարմինդ»[7]:

«Զամենայն ատուրս, յորս ոչ ագաս, որպէս կորուսեալ զնա համարեսցիս»[8]:

6 Նոյն. էջ 39

7 «Խրատք ոգեշահք վասն զղջման արտասուաց ասացեալ Անանիայի սուրբ եւ ընտրեալ վարդապետին» («Պատկեր» հանդէս ամսօրեայ, 1898, թիւ 9, էջ 198)

8 Աբբա Յովհաննէս «Վասն ապաշխարութեան հոգւոյ» (ՄՄ ձեռ.N 3678, «Սանդուտք աստուածային ելից», էջ 92բ–93ա)

Ամենօրեայ զղջման ներհաստատումը որոշակիօրէն պայմանաւորուած է Եկեղեցու ապաշխարութեան խորհրդի իրագործման հետ, քանզի այն պարտաւորեցնում է յաճախակի խոստովանուել: Նախկինում կրօնական համայնքներում ու վանքերում խոստովանութիւնը խիստ սահմանուած կարգ ունէր, որը դրդում էր յարաժամ քննել սեփական անձը եւ չյապաղել զղջման մէջ: Եւ ոչ մի ճշմարիտ կրօնաւոր երեկոն չէր դիմաւորում առանց օրուայ յանցանքներից զղջմամբ ու խոստովանութեամբ թօթափուելու:

Մեղքի գիտակցութիւնը երբէք վերացական չէ: Այն կապուած է մեղքերն իրապէս տեսնելու եւ ճանաչելու հետ: Եւ ոչինչ այնքան խորթ չէ ճշմարիտ զղջմանը, որքան անձը մեղաւոր համարելն ու յայտարարելն՝ ըստ սովորութեան կամ ըստ սոսկ տրամաբանական համոզմունքի: Ուստի երբէք չի կարող հաստատուել ճշմարիտ զղջաւորութիւն՝ առանց խոստովանութեան ու ապաշխարութեան: Շատերը, շնորհառատութեան երանութեան մէջ գտնուելով հանդերձ, երբ դադարեցրել են ապաշխարութեան մշտանորոգ խորհրդի իրագործումը, հետզհետէ կորցրել են *առաջին սէրը* [Յայտն. Բ 4] եւ ճշմարիտ հոգեւոր մխիթարութեան ջերմութիւնը:

«Ասէ յԵրգն Սողոմոն. «Լաւ է իւղ անուշահոտ, քան զամենայն խունկս» [Երգ. Դ 10]: Այսինքն՝ Հոտ ապաշխարութեան ընդունելի է Աստուծոյ, քան զամենայն արդարս Հպարտացեալս, որք ոչ ապաշխարեն»[9]:

Չարը ձգտում է ամէն գնով խափանել ապաշխարելու մտադրութիւնը՝ բազում հնարներ գործադրելով: Այս պատճառով երբեմն դժուարին է լինում ապաշխարութեան սկիզբը.

«Կամիմ զղջանալ, խոստովանել, եւ թշնամին յապաղեցուցանէ. կամիմ մտանել ի վարս ապաշխարութեան, եւ թշնամին ծուլացուցանէ. կամիմ անկանել առաջի Աստուծոյ, եւ թշնամին հեռացուցանէ. կամիմ պաղատել եւ մաղթել եւ աղաչել, եւ թշնամին կարծրացուցանէ. կամիմ ողբալ եւ լալ

9 Ս. Գրիգոր Տաթեւացի «Քարոզ վասն խոստովանութեան» («Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1741, էջ 311)

արտասուք, եւ Թշնամին ցամաքեցուցանէ»[10]:

«Սատանայ ի մօտի առ այն, որ ապաշխարելն կամիցի, եւ ծանրացուցանէ զմիտս նորա՝ չյօժարել ի սկիզբն ապաշխարութեանն: Քանզի գիտէ՝ եթէ սկիզբն ուղղիցի, ապա եւ վաստակ ապաշխարութեանն քաղցրանայ. եւ վասն այնորիկ ամենայն Հնարիւք յսկիզբն ապաշխարութեանն զգուշանայ ծուլացուցանելովն եւ օր ի յօր առնելով»[11]:

Ապաշխարութեանը խիստ հակառակ են աշխարհիկ կեանքին բնորոշ անխոհեմ յարաբերութիւնները. աւելորդ զրոյցները, շատախօսութիւնն ու ծիծաղկոտութիւնը, որոնք մտքի մեծ ցրուածութիւն են առաջ բերում չթողնելով անդրադառնալ սեփական թերութիւններին.

«Մի՛ յաշխարհ մերձեսցուք. զի մի՛ ի խռովութեանցն Հանրութենէ զուգն մեր լուծցուք: Ոմանք բանիւ բազում անգամ զուգս լուծանեն: Եւ եւ բազում անգամ ի միասին ժողովելն մեր»[12]:

«Անօրինելոցն տեսանելով Հոգին...՝ ոչ բերէ ժամանակ սգալ զիւրաքանչիւր մեղանացն եւ խորտակել զինքն ապաշխարութեամբ ի յանցանս խղճի մնասուցն...՝ [եւ] ի խռովութեանց եւ զբաղմանց, զոր Հասարակաց կենցաղն բնաւորեցաւ առնել յարժանաւորութեան յիշմանն Աստուծոյ ի բաց քեցիցէ. ոչ միայն // զի ցնծալն եւ զուրախանալն առ Աստուած մնասեսցի եւ բերկրումն Տեառն...՝ այլ եւ արհամարհանս եւ մոռացումն դատաստանաց Նորա ամենեւիմբ սովորիցի. քան զոր մեծագոյն չար թերեւս ոչ ինչ՝ եւ ոչ սատակիչ ախտք»[13]:

Զղջման շնորհը երբէք չի կարող արմատանալ մարդու սրտում, քանի դեռ նա դատում է մերձաւորին:

«Որպէս օտար է Հուր ի Ջրոյ, նոյնպէս եւ՝ որ ապաշխարելն կամի եւ դատէ...՝ Քանզի ամենեւին, յորս մեղադրեմք ընկերին, ի նոյնն

10 Յովհան Մանդակունի «Վասն խոստովանութեան» («Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք» (երկրորդ տպագրութիւն), Վենետիկ, 1860, էջ 15–16)

11 Յովհան Մանդակունի «Վասն ապաշխարութեան» (Նոյն. էջ 27)

12 Աբբա Յովհաննէս «Վասն ուրախարար սգոյ» (ՄՄ ձեռ. N 3678, «Սանդուտք աստուածային ելից», էջ 114բ)

13 Բարսեղ Կեսարացի «Զի հարկաւոր է առանձնանալ» («Հարցումն ճգնաւորացն, պատասխանի սրբոյ Բարսղի», ՄՄ Ձեռ. N 1330, Ժողովածոյ, էջ 160բ–161ա)

շրջապատեալ, Թաւալիմք մեք»[14]:

Մերձաւորի մեղանչումները նկատելու դէպքում սուրբ հայրերը խրատում են ոչ միայն զգուշանալ դատելուց, այլեւ՝ սգալ դրա համար որպէս պեփականի.

«Եթէ տեսանես զեղբայրն քո մեղուցեալ ինչ, մի՛ Հաւաքեր ի վերայ նորա մեղադրանս, այլ ի վերայ դիւին դիցես, որ պատերազմին ընդ նա, եւ ասասցես. որպէս արդ ա յաղթեցար եւ յանցեաւ, նոյնպէս եւ ես յանցեայ եւ յանցանելոց եմ: Եւ ողբալով խնդրեսցես յԱստուծոյ զօգնութիւն եւ ցաւակի՛ց լեր յակամայ յանցման նորա. քանզի ոչ ոք կամի մեղանչել Աստուծոյ եւ կորուսանել զանձն իւր. այլ ամենեքեան բռնադատիմք եւ խաբիմք ի դիւաց»[15]:

«Եթէ ոք տեսանիցէ զեղբայր ի յանցանս եւ կարդասցէ առ Աստուած վասն նորա յօգնութիւն. յայնմամ առնու գիտութիւն, թէ գիարդ պարտ է սիրել զԱստուած»[16]:

Նորոգութիւն փնտրող անձն ամէն կերպ պէտք է իր սրտում հաստատի համընդհանուր նորոգութեան բաղձանքը եւ բոլոր մարդկանց ու ողջ արարչութեանը վերաբերուի նրանց սրբագործութիւնը կամեցող սրտի հայեացքով: Այսպիսի հայեացքը, հանդիպելով ցանկացած չարիքի, նախ եւ առաջ գիտակցում է, որ չարիք գործողն ի՛նքը գտնւում է մեծ աղէտի մէջ եւ ամենից առաջ այդ անձի համար է ցաւում:

«Որքան իմաստուն է մտօք եւ աստուել կարելիցդ, տեսանալ զչարիս մարդկան եւ զպատուհաս մեկայ նոցա. վշտակցի ի սրտի իւր վասն նոցա»[17]:

Սրբոց վարքերում շատ անգամ ենք հանդիպում մերձաւորին դատելու փոխարէն նրա մեղքը սեփական անձինը համարելու եւ խոնարհաբար սգալու օրինակներ: Այս իմաստութեանը ա. հայրերը յանգում

14 Աբբա Յովհաննէս «Վասն մատնութեան» (ՄՄ ձեռ. N 3678, «Սանդուտք աստուածային ելից», էջ 127ա–բ)

15 «Վասն դատելոյ» (Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւն նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց, հատոր երկրորդ, Վենետիկ, 1855, էջ 93)

16 «Վարք հարանց, խրատք» (ՄՄ ձեռ. N 787, Ժողովածոյ, էջ 8բ)

17 Ս. Գրիգոր Տաթեւացի «Քարոզ վասն խոհեմութեան» («Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1741, էջ 99)

էին սեփական փորձառութեամբ՝ խորապէս ճանաչելով մերձաւորին դատելու վնասը: Այն առաջին հերթին արտայայտւում է նրանով, որ մարում է զղջման ջերմութիւնը, եւ մեղքերը կրկին իշխանութիւն են ստանում սրտի նկատմամբ: Նորոգութեան ծարաւ հոգին չի վատնում իր ուշադրութիւնն այլոց թերութիւնները տեսնելու համար, այլ ամենից առաջ իրեն է քննում.

«Պարտ է զիւրաքանչիւր Հոգս Հոգալ եւ զիւրաքանչիւր վաստակս վաստակել եւ զիւր մեղսն կոծել եւ զիւր յանցանսն քննել. զիւր չարիսն որոնել, զիւր աղէտսն միայն ածել զմտաւ, զիւրն սգալ եւ Հառաչել, զիւրն լալ եւ ողբալ եւ Հանապազ զիւր անօրէնութիւնսն բամբասել եւ վասն իւր մեղացն չարախօսել եւ ոչ զյանցանս ընկերին որոնել»[18]:

Սեփական մեղքերի ճանաչման ատիճանը տարբեր է մարդկանց մօտ՝ կապուած խղճմտանքի արթնութեան հետ: Միեւնոյն մեղքը մէկի մօտ կարող է առաջ բերել խորը ցաւ ու կսկիծ, իսկ միւսի համար համարուել սովորական եւ ոչ մեծ վրիպում: Մէկի համար իր անձը պարսաւելի է միայն մարդկանց յայտնի դարձած ամօթալի մեղանչումից յետոյ, իսկ մէկ ուրիշն իր սրտի ծածուկ անմաքուր խորհրդի առկայութիւնն իսկ համարում է ծանր եւ ամօթալի յանցանք եւ խստօրէն կշտամբում իրեն: Քանզի մեղքի գիտակցութիւնն ուղիղ համեմատական է սրբազգացութեանը, եւ որքանով սրբագործուած ու հոգեղինացած է մարդու սիրտը, այնքանով խորն է ապրում ամենայն մեղսալի իրողութիւն:

Երբ միտքն ընկղմուած է մարմնական հեշտասիրութեան մէջ, դժուարութեամբ է նկատում սրտի խորհուրդները, եւ սեփական մեղքերի ճանաչողութիւնը սահմանագծւում է սոսկ արտաքին յանցանքների ինքնախոստովանութեամբ: Եւ միայն մարմնախոհութիւնից քիչ թէ շատ ազատուած միտքն է կարողանում իրապէս տեսնել սրտում թաքնուած մեղքերը, որն առաւել խորը սոսկում ու ցաւ է առաջ բերում: Իսկական զղջաւորութիւնը սկսւում է ներքին ինքնաքննութիւնից: Քանի դեռ բացակայում է այն, զղջումը մակերեսային բնոյթ ունի՝ կապուած միայն կոպիտ գայթումների հետ, եւ չի շօշափում մեղքի արմատը: Այդպիսի զղջումը գրեթէ չի նպաստում հոգեւոր առաջընթացին,

18 Յովհան Մանդակունի «Վասն բամբասողաց» («Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք» (երկրորդ տպագրութիւն), Վենետիկ, 1860, էջ 95)

քանզի այն կրողը ոչ թէ էական բժշկութիւն է փնտրում, այլ՝ շուտափոյթ արդարացում: Այս իսկ պատճառով անընդունակ է լինում տեւական, համբերատար ու խոնարհ ապաշխարութեան ընթացքի: Բազում քրիստոնեաներ ողջ կեանքում մնում են այս վիճակի մէջ՝ էապէս վրիպելով ապաշխարութեան խորհրդի ճշմարիտ իրագործումից: Որովհետեւ խոստովանութեամբ եւ ճգնութիւններով մեղքի դէմ տարուող պայքարի ներքին դրդապատճառը ոչ այնքան աստուածասէր ինքնանուիրումն է լինում, որքան անձը մեղաւոր զգալու ծանրութիւնից արագ թօթափուելու ցանկութիւնը: Այս պատճառով մեղքի դէմ պայքարում թեթեւակի յաջողութեան հասնելուց յետոյ անխոհեմաբար կորսւում է զղջումը՝ դառնալով նոր անկման իսկական նախադրեալ: Եւ մշտատեւ ինքնաքննութեամբ *ապաշխարութեան արժանի պտուղ արարելու* [Մատթ. Գ 8] փոխարէն հոգին շարունակ տուայտում է պարբերաբար կրկնուող մեղանչական անկումների եւ նրանց յաջորդող թերի ու անցողիկ ապաշաւանքների շարանում:

Ապաշխարութեան մէջ նման լուրջ թերացումից ետ պահելու նպատակով ա. հայրերը յորդորում են մեղքի հաւաստի թողութիւն ստանալուց իսկ յետոյ՝ մեղքը չմոռանալ.

«Այս իսկ է յարմար եւ պիտանացու. Աստուծոյ Թողուն եւ մեր չմոռանալն զօրինազանցութիւնն մեր...՝

Արդարեւ այսպիսի միտս ունիլ յանցաւորաց. թէպէտ ի խնամոցն Աստուծոյ արժանաւորին Թողութեան, սակայն զանձինս առ պարտաւորս պարտ է ունիլ եւ ի չափս կալ եւ չմոռանալ զմեղսն. այլ՝ յիշատակաւ մեղացն խոնարհիլ: Զի որչափ մեք անարժան զանձինս Համարիմք եւ ի խոնարհ ընկենումք, Նա ի վեր տանի»[19]:

Ով լրջօրէն հետամուտ է լինում այս սկզբունքի իրագործմանը, իմաստնաբար յարատեւում է զղջման մէջ եւ փորձով համոզւում, որ չկայ այլ ճանապարհ՝ կործանարար եսապաշտութիւնից ազատուելու եւ խոնարհութիւն հագնելու համար:

Զղջման էութիւնը սկզբունքային անհանդուրժողութիւնն է մեղքի նկատմամբ, որը եւ ստիպում է մտքի հայեացքն ուղղել դէպի ներս՝ սրտի խորքերում ծուարած մեղսալի հակումները բացայայտելու եւ

19 Իգնատիոս Վարդապետ «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին», Կ. Պոլիս, 1719, էջ 283, 284

վերացնելու համար:

«Արդ, եթէ Հայիմ յիս, ոչ կարեմ տեսանել զիս վասն բազում իրացն, որ յիս արժանի է յանդիմանութեան. եւ որքան նրբագոյն նկատեմ, այնքան բազում զարշութիւնս յանկիւնս սրտի իմում գտանեմ. ոչ խնդրեմ յԱստուծոյ տեսիլս կամ մարգարէութիւնս, այլ՝ զի միայն ճանաչեցից զմեղս իմ»[20]:

Սեփական մեղքերը ճանաչելու ձգտումը ստոյգ նշանն է այն բանի, որ սիրտը յայտնուել է Սուրբ Հոգու շնորհի ներգործութեան մէջ, որը փշրում է սրտի կարծրութիւնը եւ կործանում եսապաշտական նկրտումները՝ փոխարէնը միայն Աստծուն հաճելի լինելու ջերմ ցանկութիւն ներարկելով եւ մղում ամբողջապէս նուիրուել ապաշխարութեան սխրանքին.

«Այսպիսի է ապաշխարութեան ջերմութիւն՝ որ ոչ ի յինչս եւ ոչ ի մարմնոյ աշխատութիւն խնայէ, այլ նեղէ եւ մաշէ եւ տառապեցուցանէ եւ խնդրէ միայն զմեղացն թողութիւն եւ զախտից ոգւոցն զբժշկութիւն»[21]:

Ս. հայրերը, զղջման արտասուք ասելով, մեծ մասամբ ի նկատի ունէին ոչ թէ *ըստ պատահման՝* որեւէ *դիպուածով* սկսուող լացը, այլ՝ շնորհով սրտում հաստատուած այն յարատեւ զղջաւոր հոգեվիճակը, որի մէջ մարդ միշտ պատրաստ է արտասուելու: Ինչպէս ասում է Անանիա Նարեկացին, այս շնորհը ձեռք է բերւում մեծ ջանքերով.

«Կա՛րգ դիր եւ սահման եւ խորհրդեամբ արա՛ զարտասուաց ժամանակն. եւ յԱստուծոյ խնդրեա՛ յաջողութիւն շնորհին եւ բռնադատեա՛ զբնութիւնդ. յայնժամ Աստուած ի փոյթն Հայի եւ տայ զշնորհն, որում ցանկաս: Ա՛յս է զոր Տէրն ասաց, եթէ՝ «Բռունք յափշտակեն զարքայութիւն երկնից» [Մատթ. ԺԱ 12]: ...: Զղջման շնորհն արուեստ է, եւ բազում հնարիւ պարտ է ստանալ զնա»[22]:

«Զան մեծ կալ եւ ի շնորհէն վարդապետիս, մինչ դեռ ոչ լինիս թաղաւորել ի վերայ շնորհին, ոչ կարես ածել արտօսր, բայց եթէ՝ պատճառաւ. իսկ յորժամ առեալ զշնորհն ընտանացիս, այնուհետեւ ո՛չ կարօտանաս օրինակաց եւ պատճառի, այլ, ի շնորհէն ուսեալ, արտասուես սովորութեամբ»[23]:

Անցեալի վանական դպրոցներում զղջման շնորհը չկորցնելու եւ յարատեւ արցունքներ ստանալու համար կրօնաւորները դիմում էին ամենատարբեր միջոցների, որոնք նկարագրուած են նրանց վարքերում: Այդ միջոցները երբեմն խիստ անհատական են, յաճախ՝ տարօրինակ ու զաւեշտական թուացող: Սակայն կան առաւել ընդհանուր միջոցներ, ինչպիսին է, օրինակ՝ աղօթական խոկումը (*մեդիտացիա*), որի առաջադրութեամբ է հանդէս գալիս Անանիա Նարեկացին՝ իր «Վասն զղջման արտասուաց» խրատում ներկայացնելով խոկման ծաւալուն տեքստեր[24]: Սուրբ հայրերը յաճախ են խրատում խոկալ մահուան, Դատաստանի Օրուայ, դժոխքի չարչարանքների շուրջ՝ սեփական անձի մեծ նուաստացմամբ ու կշտամբանքով. ինչպէս սուրբ Գրիգոր Նարեկացին է ասում *ինքնահարուած տանջանաւորութեամբ*[25]: Նման խոկումները սկզբում տհաճ ու խորթ են լինում, քանզի նրանց մեծապէս դիմադրում է ողջ *հին մարդը՝* նրանց ներգործութեան մէջ տեսնելով իր կործանման նախադրեալը: Սակայն, երբ քրիստոնեան խոհեմաբար յարատեւում է այդ խոկումներում, շուտով դրանք խորն արձագանք են գտնում սրտում՝ արթնացնելով ջերմագին պաղատանքներ եւ բարեյօժար ինքնախոնարհում:

Երբ քրիստոնեայի մշտական ուղեկիցն է դառնում զղջման ապրումը, նա մեծ զգօնութիւն է ձեռք բերում, որի շնորհիւ սիրտը պահում է նոր անկումներից: Քանի դեռ մտքի ուշադրութիւնը շարակցուած չէ զղջման զգացումի հետ, ենթակայ է նուրբ վրիպումների՝ չկարողանալով յստակ զանազանել իր սիրտն այցելած խորհուրդների իսկութիւնը: Իսկ երբ սրտում բնատրւում է զղջման ջերմութիւնը, լուսաւորւում է մտքի տեսողութիւնը եւ առաւել զօրանում խորհուրդների դէմ տարուող պայքարում: Այս պատճառով ս. հայրերը խրատում են որեւէ մեղանչումի պատճառով յայտնուած զղջական տրտմութիւնն այլեւս չկորցնել.

20 «Գիրք է պարգեւացն Աստուծոյ» (ՄՄ ձեռ. N 563, Ժողովածոյ, էջ 25բ)

21 Յովհան Մանդակունի «Վասն խոստովանութեան» («Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք» (երկրորդ տպագրութիւն), Վենետիկ, 1860, էջ 19)

22 «Խրատք ոգեշահք վասն զղջման արտասուաց ասացեալ Անանիայի սուրբ եւ ընտրեալ վարդապետին» («Պատկեր» հանդէս ամսօրեայ, 1898, թիւ 9, էջ 199, 200–201)

23 Նոյն, թիւ 11, էջ 241

24 Տե՛ս նոյն, թիւ 10, էջ 119–121:

25 Տե՛ս «Մատեան ողբերգութեան», Բան ԻԷ, Գ:

«Եթէ անկանիցիս ի մեղս եւ դառնայցես եւ դաղարեսցիս ի նմանէ եւ սկսանիցիս ապաշխարել եւ տրտմել վասն նորա, զդո՛յշ լեր, մի՛ դադարեր ի տրտմելոյ եւ ի հառաչելոյ առ Աստուած մինչեւ ցօր մահու քո, եթէ ոչ՝ փութապէս անկանիս ի նոյն խորխորատ: Քանզի որ ըստ Աստուծոյ տրտմութիւն է, որպէս սանձք են անձին եւ ոչ տան նմա անկանել»[26]:

Այս ճանաչողութիւնը խորագոյն փորձառութեան հետեւանք է: Ըստ քրիստոնէական մարդաբանութեան՝ զղջումն առնչւում է մարդկային *եռամասնեայ հոգու*[27] բոլոր երեք ոլորտներին: *Բանականում* այն արտայայտւում է որպէս կամաւոր հրաժարում ճանաչուած չարիքից, *ցասմնականում* այն բարկութիւն է անձի հանդէպ՝ եռանդուն ինքնակշտամբանքով, իսկ *ցանկականում* ցաւ ու վիշտ՝ գործած սխալի համար՝ ի հակադրութիւն մեղանչական վիճակում ապրուած անսուրբ հեշտութիւնների: Սա նշանակում է, որ զղջման մէջ հոգու երեք մասերը բնականոն կերպով յայտնւում են ճշմարիտ, *վայելչական կարգում*, այսինքն՝ զգայական զօրութիւնները ենթարկւում են բանականութեանը եւ ներգործում բանական մղումներով: Այս պատճառով զղջման մէջ յարատեւելու դէպքում ի սպառ սանձւում են ցանկականի հեշտասէր հակումները: Զղջման մէջ հոգու զօրութիւնների շնորհական կարգաւորումը հանդիսանում է քրիստոնեայի ներքին խորհրդական (*միստիկական*) կեանքի առանցքը: Հոգու զգայական մասի սանձումը ոչ միայն նպաստում է նոր մեղքեր չվաստակելուն, այլեւ զգայութեան սկզբունքային որակափոխութեանը: Քանզի զղջման հոգեվիճակում սիրտն առաւել ընկալունակ է դառնում շնորհի ներգործութեան հանդէպ, որի մաքրագործող հուրը, ներթափանցելով սրտի գաղտնարանները, սրբում ու հոգեղինացնում է այն: Եւ, ցանկականի ծանրատաղտուկ հեշտախտութիւններն այրելով, փոխարկում է երկնալաց թեթեւ վայելքի ու հոգեւոր հեշտութեան.

«Այնր հրոյ ջերմութիւն, մտեալ յոգին, հանէ ի բաց զամենայն վհատութիւնն. եւ քան զթեւ թեթեւագոյն զորձէ զրմբռնեալն. եւ զամենայն երեւելիս արհամարհիցէ: Այնուհետեւ այնպիսին ի հանապազորդ

26 «Վարք հարանց, խրատք» (ՄՄ ձեռ. N 787, Ժողովածոյ, էջ 39բ)

27 Տե՛ս Գրիգոր Վարդապետ «Խօսք ճշմարիտ հաւատքի եւ առաքինասէր վարքի մասին», «Գանձասար» մատենաշար 1992, էջ 22:

զղջութիւնս կայցէ՝ ստէպ աղբերս արտասուաց բղխեալ եւ բազում հեշտութիւնս շահեալ անտի: Քանզի չիք ինչ, որ այնպէս յաւդէ եւ միաւորէ ընդ Աստուծոյ՝ իբրեւ զայնպիսի արտասուս»[28]:

Արտասուքի առատութիւնը կենդանի վկայութիւնն է այն բանի, որ սրտի *խորհրդակիր սենեակում* տեղի է ունենում սրբազան խորհրդարարութիւն (*միստերիա*), որի ներգործութեամբ միտքը թօթափւում է կոպիտ խորհուրդներից եւ նրբանում՝ օժտուելով գերիմացական հանդարտութեամբ: Այդ հանդարտութեան մէջ արտափայլում է երկնային իմաստութեան լոյսը, եւ արտացոլւում՝ աստուածային սիրոյ ջերմութիւնը:

«Արդ, ո՞րպէս կարողանամք զարտասուալից Հառաչումն ամենայն անձինն մեկնել կամ ուսուցանել, բայց թէ՝ փորձիւք ոք ընդ կիրթ նորին անցեալ ծանիցէ. յոր ճաշակ վայելեալ՝ ամենայն պատրանաց աշխարհիս, ի ստիպելոյ սրտին ողջոյն տուեալ. Հրաժարէ եւ միայն յայն Հառաչմանէն միշտ զանձն իւր կերակրէ: Հառաչումն այն է, որ զբոց սիրոյն Աստուծոյ արծարծէ, եւ արտասուքն է, որ զհոգւոյն աչս վճիտ ներգործէ»[29]:

Արցունքների առատութիւնը նշանն է սրտի արագ մաքրագործման: Եւ որքանով սիրտը սրբուած է լինում, այնքանով մեծ է լինում զղջման տրտմութեանը զարմանալիօրէն ընդխառնուած հոգեւոր ուրախութիւնը:

«Եւ, եւ զնոյն ինքն զյեղանակ զղջմանն զմտաւ ածեալ. զարմանամ, զիա՞րդ սուգն գտանի ի մէջ ուրախութեանն, որպէս մեղր ի բճիճս պանիցն: Եւ այս ստուգապէս Տեառն է պարգեւքն այնոցիկ, որ յայսպիսի զղջումն կացուցին զանձինս իւրեանց»[30]:

Այս ուրախութիւնը, որը յայտնւում է արցունքների միջից, իր բնոյթով վերերկրային է եւ անսահման տարբեր՝ սովորական երկրա-

28 «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպօլսի եպիսկոպոսապետի յաւետարանագիրն Մատթէոս», Վենետիկ, 1826, էջ 90

29 «Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ Պատարագին», Վենետիկ, 1847, էջ 255

30 Աբբա Յովհաննէս «Վասն ուրախարար սգոյ» (ՄՄ ձեռ. N 3678, «Սանդուղք աստուածային ելից», էջ 109բ)

յին զուարթութիւնից: Այն խորքից պայծառացնում է սիրտը մաքուր, հոգեղէն զգացումներով եւ մարմնահակ ցանկութիւնների փոխարէն հաստատում սուրբ մղումներ՝ ցանկականը նորոգելով եւ ընդունակ դարձնելով աստուածային սիրուն.

«Որպէս Հրոյ բնութիւն լուսաւոր է եւ զշարժումն զառ ի վեր ունի, նոյնպէս ցանկութիւն մեր, յորժամ ողջ է եւ լուսաւոր ընդ բնութեան եւ ջերմ է ի սէրն Աստուծոյ, յայնժամ ի վեր առ Աստուած ունի զշարժումն, եւ այս կոչի սէր»[31]:

Երբ սիրտը սովորում է հոգեւոր հեշտութիւնների, ինքնստինքեան սկսում է գարշել ամէն մի պիղծ ցանկութիւնից, քանզի ձեռք է բերում նոր հոգեւոր ճաշակ եւ, կտրուելով երկրից, յաճախակի բեւեռում աստուածային հայեցողութեան բարձունքին՝ աստուածտեսութեան անճառելի խնդութեան մէջ առատ արտասուք հեղելով.

«Որչափ զերեսս Բաղձալոյն նկատէ, եւս աստուկսպէս լոյսով սիրոյն Հատաչէ. եւ որչափ մերձենայ ի Նա, յորդառատ զկնոս արտասուացն Հեղեալ եւ միշտ զաւուրսն, յոլս անճաշակ էր ի սմանէ, ապաշաւ եւ յաւաջական զնայն ապօթէ ունէր: Ա՛յս է ուրախութիւն, որում բնաւ զղջումն ոչ սիրէ, եւ տրամութիւն, որ զանապաշաւ ցնծութիւն լիսէ»[32].

Ուրախաւորաւ արտասուքի շնորհը, արմատանալով սրտում, դառնում է ողջ կեանքն իմաստուն եւ աստուածահաճոյ կարգաւորութեան մէջ պահող կենդանի գործօն: Եւ ամէն ոք, ով մերձեցել է արտասուքի երանելի շաւղին, սեփական փորձով կարող է ասել.

«Բարւոք ասացին Հարքն, թէ սուղ վարդապետ է, քանզի նա ուսուցանէ մարդոյ զամենայն օգտակարս իւր»[33].

---

31 Ս. Գրիգոր Տաթեւացի «Քարոզ տասն բանեան օրինաց» («Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1741, էջ 32)

32 «Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ Պատարագին», Վենետիկ, 1847, էջ 255

33 «Վասն զղջութեան եւ արտասուաց» («Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւն նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց», հատոր առաջին, Վենետիկ, 1855, էջ 525)



ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

ԱՐԵՈՊԱԳԻՏԻԿԱՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ըստ աւանդութեան՝ Դիոնեսիոս Արիսպագացին (Արեոպագիտ՝ ինչպէս տալիս են որոշ հայերէն ձեռագրեր եւ ընդունուած է այլ լեզուներում) եղել է Պօղոս առաքեալի աշակերտը, որը հաւատքի է եկել՝ լսելով Պօղոսի քարոզը Աթենքի Արեոպագոսում (Ժողովարանում) (Գործք ԺԼ 16–34): «Յաղագս աստուածային անուանց» երկում յիշւում է նաեւ առաքելական շրջանի մէկ այլ աստուածաբան՝ Ոեթէոսը («բարեփառ առաջնորդ մեր»): Թէ՛ ասորերէն, թէ՛ հայերէն, թէ՛ լատիներէն թարգմանիչները չեն կասկածել, որ «Կորպուս արեոպագիտիկումը» (Դիոնեսիոսի գրուածքները) ստեղծուել է դեռեւս առաքելական ժամանակներում՝ Պօղոս առաքեալի հետեւորդ Դիոնեսիոս Արիսպագացու կողմից:

Արեոպագիտիկաները Յոյն Եկեղեցու կողմից երկակի ընդունելութիւն են գտել: Կ. Պոլսի 533 թ. ժողովը, հակադրուելով միաբնակներին, մերժել է այդ գրուածքներն իբրեւ ապողինարիստական մեղանչումներ: Դրանք մերժել են թերեւս Արետաս Կեսարացին եւ Փոտը[1]: Սակայն, ինչպէս նշում են մի շարք հեղինակներ, Յովհան Դամասկացին, լինելով պատկերամարտի բովում, Արեոպագիտիկաներն (յատկապէս՝ աստուածայինը պատկերների միջոցով ընկալելու ուսմունքը) իբրեւ զէնք հմտօրէն գործադրում է պատկերամարտների դէմ մղուած պայքարում: ԺԹ դարի վերջում արծարծւում են նոր պղատոնականների ազդեցութիւններն Արեոպագիտիկաների վրայ: 1895–ին Կոխը եւ Շտիգլմայրը գտնում են, որ «Յաղագս աստուածային անուանցի» Դ գլուխը կրում է Պրոկղի «Հարի էութիւնը» գրուածքի ազդեցութիւնը[2]:

Ներածական ձեւակերպումները, անցումը եզրակացութեան, հեղինակների վկայակոչումը եւ գնահատումը, գեղեցիկի, բարու, սիրոյ, Աստուծոյ եւ հրեշտակների խորհրդաբանութեան, նախախնամութեան վարդապետութիւնները, հոգեւոր տիեզերքի տեսութիւնը եւ կառոյցը, հայեցողական կեանքի փուլերն ու եզրերը, բանականութեան միասնացումը եւ աստուածացումը, խորհրդական (միստիկական) եւ նշանական (սիմուլիկ) համակարգերը ներկայացնում են Դիոնեսիոսին իբրեւ ուշ նոր–պղատոնականի, զանազան գնոստիկական ազդեցութիւններով[3]: Եւ քանի որ վերջին վիթխարի նոր–պղատոնականը Պրոկղն է, իսկ Դիոնեսիոսի երկերի մասին յիշատակւում է առաջին

անգամ Ջ դարի առաջին կէսում, ապա Դիոնեսիոսը ներկայացւում է իբրեւ Ե դարի վերջի հեղինակ:

Դիոնեսիոս Արիսպագացու ուսմունքն առաջադրում է երկու խնդիր՝ Աստուծոյ եւ աստուածացման իմացութիւնը: Դա կատարւում է Աստուծոյ ինքնաբացայայտման շնորհիւ: Այդ անընդհատ ինքնաբացայայտման ընթացքը տեղի է ունենում պղատոնական եւ խորհրդական տարբեր կարգերի մակարդակներում, որոնք սնուցուած են իմացաբանական եւ խորհրդական աւանդներով[4]: Վերջիններով հարուստ է Արեւելեան Եկեղեցին: Յիշենք, որ ներկայացուող «Խորհրդական աստուածաբանութիւնը» վկայակոչում է Բարդողիմէոս առաքեալին, որն, ըստ աւանդութեան, Եկեղեցու ուսմունքը քարոզում էր Արեւելքում՝ Հայաստանում եւ Հնդկաստանում:

Ըստ այդմ՝ Դիոնեսիոսի դատողական եղանակները կողմնորոշում են ըստ պղատոնական եւ գնոստիկական բաժանումների, միտքը, դատողութիւնը զարգանում են յաջորդաբար կամ միաժամանակ երկու փոխներթափանցուած մակարդակով՝ զգայական խորհուրդների մակարդակ եւ իմացութիւնների (գաղափարների) մակարդակ[5]:

Յայտնի է, որ նշաններով (սիմուլներով) Աստուածութիւնն ընկալելու մեր ունակութիւնն արդիւնք է Աստուծոյ բարեհաճութեան: Դրանով, ինչպէս ասում է Ներսէս Շնորհալին իր «Խորանների մեկնութեան» մէջ, փրկութեան յոյսը լրիւ չի ոչնչանում: Այդ նշաններն աստուածաշունչ են, քանի որ դրանք, ըստ Դիոնեսիոսի, գրել են աստուածաբանները՝ Ս. Գրքի հեղինակները (մարգարէները, առաքեալները)՝ ներշնչուելով աստուածային հրեշտակներից (Հին Կտակարան) եւ Յիսուսի վարդապետութիւնից (առաքեալներ): Ս. Գիրքը մեզ տալիս է նշաններ, պատկերներ, պատկերագրութիւն, պատկերաձեւեր, որպէսզի զգայական ընկալման միջոցով ի վիճակի լինենք ճիշտ մեկնաբանել դրանք՝ հասկանալու աստուածայինը: Եւ նման եւ ոչ նման կամ ճառելի (հաստատող, պնդող, կատաֆատիկ) եւ անճառելի (բացասող, ժխտող, ապոֆատիկ) պատկերների, խորհուրդների ու դատողութիւնների միջոցով, հաւատքի շնորհիւ, մեզ յայտնւում է ճանապարհը դէպի վեր՝ աստուածայինը, աւելի ճիշտ՝ աստուածային մէգը: Ճանապարհորդութիւնը դէպի իմացականները, մտաւոր գոյերը եւ, ի վերջոյ, աստուածային մէգը տեղի է ունենում, իհարկէ, կատարեալ հաւատքի դէպքում:

«Գործքում» նշւում է, որ Պօղոս առաքեալն Աթենքի ժողովարանում խօսում էր «հրեաների եւ բարեպաշտ» մարդկանց հետ, այդ

թում՝ էպիկուրեան եւ ստոյիկեան փիլիսոփաների, որոնցից պէտք է լինէր նաեւ Դիոնեսիոս Արիսպագացին: Եթէ յիշենք, որ ստոյիկեան փիլիսոփաներին յարում էին այդ շրջանի խոշորագոյն ուսեալները (օրինակ՝ Կիկերոնը, Փիլոն Աղեքսանդրացին), որոնց խորթ չէր «վայելչութեան» էպիկուրեան տեսութիւնը, ապա կարելի է ենթադրել, որ Դիոնեսիոսն այդպիսի ուսեալներից մէկը պիտի լինէր, որը միացնում էր տիեզերքի եւ հոգու պղատոնական ըմբռնումը եւ հեդոնէի (վայելքի) էպիկուրեան ըմբռնումը: Նրան պակասում էր միայն Քրիստոսի լոյսը, որն ստացաւ Պօղոս առաքեալից: Եւ ողջ Արեոպագիտիկաներում չկայ ոչինչ, որ դուրս լինի պղատոնականութիւնից, հեդոնիզմից, որն արտայայտւում է լիակատար վայելքում (էքստազում) եւ յատկապէս՝ Ս. Գրքից (մանաւանդ՝ Պօղոս առաքեալի թղթերից): Արեոպագիտիկաներում գտնուել են բազմաթիւ հատուածներ, որոնք արձագանքում են Պլոտինի, Պորփիւրի, Պրոկլի գրուածքների զանազան հատուածներին: Այստեղից էլ՝ վերը նշուած ձգտումը՝ նրանց ժամանակը ետ բերելու մինչեւ Ե դարի երկրորդ կէսը: Եւ արուել են բազմաթիւ փորձեր՝ այդ երկերը վերագրելու զանազան հեղինակների՝ Կղեմէս Աղեքսանդրացու աշակերտ՝ Գ դարում Աղեքսանդրիայի եպիսկոպոս Աղեքսանդրին, Բարսեղ Մեծի մի աշակերտին, ծագումով վրացի Պետրոս Իբերին եւ այլն[6]:

Եւ իրաւացի են նրանք, ովքեր կարծում են, թէ, անկախ բանասիրական եւ համեմատական հետազօտութիւնների արդիւնքից, Արեոպագիտիկաների արժէքը եկեղեցական աւանդութեան մէջ է, ինչպէս սաղմոսների հոգեւոր արժէքի համար նշանակութիւն չունի, թէ դրանք երգել է Դաւի՞թը, թէ՞ մի մասը յօրինուել է տարբեր ժամանակներում: Միւս կողմից հասկանալի պատճառներով հայ, ասորի, ղպտի արեւելաքրիստոնէական հնագոյն եկեղեցիների պասսիւութիւնը վերջին երեք դարերի ընթացքում կարծես նպաստել է նրան, որ այդ երկերը, որոնք Զ դարում մերժւում էին յոյն Եկեղեցու կողմից, իբրեւ միաբնակ Եկեղեցու հայեացքներ արտայայտող, դառնան «արեւելեան» (դրանով հասկանում են յոյն եւ ռուս ուղղափառ եկեղեցիները) եւ արեւմտեան եկեղեցիների մենաշնորհը: Նոյնիսկ այնպիսի ուսեալ աստուածաբան, ինչպիսին է Վլ. Լոսսկին, գրում է. «Արեոպագիտիկաների մասին մինչեւ Զ դարի սկիզբը, այսինքն՝ շուրջ հինգ դար, ոչինչ յայտնի չէր. ոչ մի եկեղեցական մատենագիր դրանք չէր վկայակոչում եւ յիշատակում: Առաջինը դրանք հոչակեցին միաբնակ հերետիկոսները՝ փորձելով հենուել դրանց հեղինակութեան վրայ: Յաջորդ դարում ս. Մաքսիմոս Խոստովանողը խլում է այդ զէնքը հերետիկոսների

ձեռքից՝ իր մեկնութիւններում կամ «սխոլիաներում» բացայայտելով Դիոնեսիոսի երկերի ուղղափառ իմաստը: Այդ ժամանակից ի վեր Արեոպագիտիկաներն անվիճելի հեղինակութիւն ունեն ինչպէս Արեւելեան, այնպէս էլ Արեւմտեան Եկեղեցու աստուածաբանական աւանդութեան մէջ»[7]:

Առնուազն տարօրինակ է եկեղեցական աշխարհի այսօրինակ բաժանումը, մանաւանդ որ յայտնի է Հայոց Եկեղեցու առաքելական եւ ուղղափառ լինելը. էլ չենք խօսում Աղեքսանդրիայի նոր–պղատոնական դպրոցի եւ Եկեղեցու նշանաւոր հայրերի (Աթանաս, Աղեքսանդր, Կիւրեղ Աղեքսանդրացիների եւ ուրիշների) մասին, որոնց հաւասարապէս ընդունում են թէ՛ յոյն, թէ՛ լատին, թէ՛ հայոց եկեղեցիները սուրբ հայրերի շարքում: Պէտք է նշել նաեւ, որ Արեոպագիտիկաները նախ թարգմանուել են ասորերէն, ապա Ը դարի սկզբում հայերէն եւ յետոյ միայն՝ լատիներէն, ընդ որում հայերէն թարգմանութիւնը զուգակցւում է Մաքսիմոս Խոստովանողի մեկնութիւնների թարգմանութեամբ, որը եւս սպասում է իր հրատարակչին: Եւ եթէ Զ–Ը դարերում Արեոպագիտիկաները Յունաց աշխարհում տարածուեցին Մաքսիմոսի եւ Յովհան Դամասկացու շնորհիւ, ապա Հայաստանում թէ՛ Արեոպագիտիկաների, թէ՛ դրանց մեկնութիւնների թարգմանութեան շնորհիւ: Մաշտոցի անուան Մատենադարանի N.N. 48, 49 (1284 թ.), 1309 (1364 թ.) եւ այլ բազմաթիւ ձեռագրերում Արեոպագիտիկաներն[8] ընդօրինակուած են մեկնութիւններով հանդերձ: Դրանք սովորաբար ուղեկցւում են հետեւեալ յիշատակարանով. «Ի վեց հազարերորդի, երկերիւր երրորդի քսաներորդի ամի արարածոց աշխարհիս, ըստ յունարէն թուոց ի չորեքտասաներորդի դիքտիկոնին, յերկրորդ ամի թուագրութեան Փիլիպպոսի, ստոյգ օրինակաց ի Կոստանդնուպօլսի, ի ձեռն Դաւթի հիւպատոսի եւ թագաւորական սեղանոյն կինառի եւ ի ձեռն Ստեփանոսի քահանայի եւ քերթողի, աշակերտի տեառն Մովսէսի Սիւնեաց եպիսկոպոսի...» (Մատենադարան N. 1309, էջ 3բ, նաեւ՝ N. 48):

Այսինքն՝ թարգմանութիւնը կատարուել է հայազգի Փիլիպպոս կայսեր օրօք, որը պատկերամարտ էր եւ հաւանաբար ինքն է օգնել օգտուելու Կ. Պոլսի կայսերական գրադարանի լաւագոյն օրինակներից: Ըստ «Արեոպագիտիկաների Կորպուսի» հայերէն թարգմանութեան հրատարակիչ եւ անգլերէն թարգմանող Ռ. Թոմսոնի՝ հայ մատենագիրները մինչեւ սոյն թարգմանութիւնն արդէն վկայակոչում էին Դիոնեսիոսին, իսկ հայերէն առաջին մեկնութիւնը գրել է Համամ Արեւելցին Ժ դարում[9]: Ռ. Թոմսոնի հաշուումներով, միայն Մատենա-

դարանում կայ 50 ձեռագիր, որ լրիւ կամ մասնակի ներկայացնում է Դիոնեսիոսի երկերը Դաւիթ Հիպատոսի եւ Ստեփանոս Սիւնեցու թարգմանութեամբ[10]: Չնայած այդ թարգմանութեան խրթնաբանութիւններին՝ դա ցոյց է տալիս, որ այն մեծ տարածում է գտել հայ միջնադարում: Որպէս հիմք Ռ. Թոմսոնը վերցրել է Մատենադարանի N. 167 ձեռագիրը, որ գրուել է Եսայի Նչեցու հովանաւորութեամբ, ճշտումներով եւ լուծմունքներով: Դա հիմք է ծառայել, որովհետեւ աւելի մօտ է յունարէն Արեոպագիտիկաների հնագոյն մի ձեռագրի (Փարիզի Ազգային գրադարանի 437 ձեռագիրը, որը Բիւզանդիայի Միքայէլ Գ կայսրը նուիրել է Լուի Բարեպաշտին, ընդօրինակուած է 897–ին, հայերէն թարգմանութիւնից մէկ դար յետոյ): Արեոպագիտիկաների բացայայտ ազդեցութիւնը նկատում է Ներսէս Շնորհալու եւ Գրիգոր Տաթեւացու «Խորանների մեկնութիւններում», Վանական Վարդապետի, Գրիգոր Տաթեւացու Հարցմանց գրքերում: Արեոպագիտիկաների եւ Դաւիթ Անյաղթի փիլիսոփայութեան միջեւ ընդհանուր եզրեր է գտնում Ս. Արեւշատեանը:

Բիւզանդիայում, ինչպէս պատկերատր ներկայացնում է Հ.–Գ. Բեքը, Դիոնեսիոսը յաղթանակում է Յովհան Դամասկացու մէջ, որը նոյնիսկ պատկեր էր անուանում Ս. Հոգին, մարդեղութիւնը: Յայտնի են Արեոպագիտիկաների բիւզանդական մեկնիչները (Մաքսիմոս Խոստովանող, Յոհանն Սկիթոպոլսեցի), նրանց յետագայ ազդեցութիւնը Գրիգոր Պալամայի եւ հսիխազմի վրայ: Ռուս եկեղեցական միտքը եւս մինչեւ ԺԹ դարը եւ նոյնիսկ այսօր չի կարող շրջանցել այդ գրուածքները:

Եւրոպայում եւս, ինչպէս նշում է Օ. Բարդենհեւերը, Դիոնեսիոս Արիսպագացին պարարտ հող է գտնում: Դա սկսում է Թ դարից, երբ դրանք լատիներէնի է վերածում Յոհանն Սկոտ Էրիգենան: Արեոպագիտիկաների ազդեցութիւնը երեւում է Աբելեարի, Թովմա Աքուինացու, Դանտէի, Նիկոլա Կուզացու երկերում: Գոյի տարբեր մակարդակների անդրադարձների թեման արծարծում է նոյնիսկ մեր դարի մի քանի քերթողների բանաստեղծութիւններում (Բելի, Բորխէս):

Ապագայի խնդիր է ցոյց տալ, թէ Արեոպագիտիկաներն ինչ եղանակներով են ազդել արեւելեան (հայ, ասորի, ղպտի), բիւզանդական (նաեւ՝ ռուս, սլաւոնական) եւ արեւմտեան (կաթոլիկ) աստուածաբանական մտքի եւ գեղարուեստական արտադրութեան վրայ: Ո՞ր երկերն են դրանցից առաւել ընդունելի եղել եւ առաւել ազդեցութիւն թողել այս կամ այն վարդապետութեան վրայ: Անշուշտ դա կարեւոր հարց է:

Մենք «Գանձասար» հանդէսի համար տ. Մեսրոպ քահանայի յորդորով փորձեցինք թարգմանել Դիոնեսիոսի երկերի շարքում ամենախորհրդաւորը՝ «Յաղագս Խորհրդական աստուածաբանութեան» գրուածքը՝ մեր կարողութեան չափով հետեւելով գրաբար բնագրի թէ՛ տառին, թէ՛ իմաստին, յաճախ իմաստը զոհելով տառին, ինչպէս վարուել է Ստեփանոս Սիւնեցին յունարէնից թարգմանելիս: Զգտել ենք պահպանել Սիւնեցու խրթին ոճերը՝ միաժամանակ փորձելով արեւելահայերէնով վեր հանել յունաբան խրթնութեան մէջ թաքնուած իմաստները: Այդ առումով մեզ մեծ ծառայութիւն մատուցեց Ռ. Թոմսոնի անգլերէն թարգմանութիւնը նոյն բնագրից: Այդ երկի ընտրութիւնը պայմանաւորուած է նաեւ նրանով, որ խորհրդական եւ նշանակալի աստուածաբանութիւնների սկզբունքները մեծ դեր են խաղում հայ միջնադարեան կերպարուեստում:

Ծանօթութիւններ.

1. Deny's L'Areopagite. La Hie'rarchie ce'leste. Introduction par Rene' Roques, e'tude et texte' critiques par Gunther Hell, traduction et notes par Maurice de Candillac. 2e e'd. Paris 1970, p. VIII.

2. Աղբիւրներ տե՛ս Deny's L'Areopagite.., p. XIII.

3. Նոյն տեղում, էջ XI:

4. Նոյն տեղում, էջ XIX– XX:

5. Նոյն տեղում, էջ XX–XXI:

6. Տե՛ս Ep. Вл. Лосский. Очерк мистического богословия восточной церкви ("Мистическое богословие". Изд. христианской благотворительно-просветительской ассоциации "Путь к истине"). Киев 1991, с. 108.

7. Նոյն տեղում, էջ 107–108:

8. Տե՛ս "The Armenian Version of the Works attributed to Dionysios the Areopagite, edited by R. W. Thomson". Lovanii in Aedibus E. Peeters 1987, p. IX–XII.

9. Նոյն տեղում, էջ VII:

10. Նոյն տեղում:

ՎԻԳԷՆ ՂԱԶԱՐԵԱՆ

ԱԹԵՆԱՑԻՆԵՐԻ ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՑԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ [ԹՈՒՂԹԸ] ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

I ԻՆՉ Է ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՄԷԳԸ ԴԻՈՆԵՍԻՈՍ ՔԱՀԱՆԱՆ՝ ՔԱՀԱՆԱՅԱԿԻՑ ՏԻՄՈԹԷՈՍԻՆ.

I. Գերագոյ Երրորդութի՛ւն, գերագոյնդ Աստուա՛ծ եւ գերագոյնդ բարութի՛ւն, քրիստոնեաների համար աստուածային իմաստութեան վերատեսո՛ւչ, տա՛ր մեզ դէպի խորհրդական խօսքերի գերանցանօթ, գերաճաճանչ եւ ծայրագոյն գագաթը, ուր աստուածաբանութեան պարզ եւ ազատ եւ անփոփոխելի խորհուրդները գերագոյն լոյսի պատճառով ծածկուած են թաքնախորհուրդ լռութեան Մէգով՝ խաւարի մէջ վերափայլելով գերերեւակայութեամբ[բ] եւ ամենամեծ ամենաշօշափելիութեամբ եւ աներեւոյթ գերագոյն գեղեցկութիւնների պայծառութեամբ գերալիր[գ] դարձնելով անտեսանելի իմացութիւնները: Արդ, այս բաները թող ըղձալի լինեն ինձ: Իսկ դու, ո՛վ ազնիւդ Տիմոթէոս, որպէսզի յարաձգական[դ] կրթութեամբ [հաղորդակցուես] խորհրդական տեսութիւններին, մի կո՛ղմ թող զգայութիւններդ, իմանալի ներգործութիւններդ, ամենայն զգալի եւ իմացական բաները, բոլոր ոչէները եւ էերը եւ, անծանօթաբար ձգտելով, որչափ հասանելի է, միաւորուի՛ր Նրա հետ, որ վեր է ամէն էութիւնից եւ գիտութիւնից: Քանզի Նրա ամենակատար, անըմբռնելի, ազատ եւ մաքուր զարմացմամբ[ե] կհամբարձուես դէպի աստուածային խաւարի գերագոյ ճառագայթը՝ ամէն ինչ թողած եւ ամէն ինչից ազատուած:

I.2. Բայց տե՛ս, որ ոչ ոք անխորհուրդներից չլսի այս բաների մասին. նկատի ունենք նրանց, ովքեր ըմբռնել են էերը եւ բարբաջել, թէ գոյութիւն չունի ոչինչ աւելի վեր, քան էերը, այլ կարծել են, որ իրենց գիտութեամբ տեսել են Նրան, որ խաւարը դարձրել է ծածկոյթ

ա խորհրդական— միստիկական, նուիրական, աստուածային
բ գերերեւակայութիւն— գերպայծառութիւն, լուսաշողութիւն
գ գերալիր— լիազեղուն, ամբողջական, կատարեալ
դ յարաձգական— երկարաձիգ, տեւողական, շարունակ
ե զարմացում— յափշտակում

Իր համար [Մաղմ. ԺԷ 12]: Իսկ եթէ աստուածային խորհրդածութիւնները գերազանցում են նրանց, ապա ինչ կարելի է ասել կատարեալ անխորհուրդների մասին, ովքեր ամենքի գերագոյ Պատճառին հետագայ էերին են նոյնիսկ նմանեցնում եւ չեն ասում, որ Նա գերագոյն է, քան իրենց ստեղծած աստուածները եւ բազմատեսակ կերպարանքները: Պէտք է Նրա՛ն համարել բոլոր էերի կարգաւորողը եւ [այս մասին] ճառել հաստատումներ[ա], քանի որ Նա է ամենքի պատճառը եւ այս ամէնը մանաւանդ անճառելի[բ], քանի որ [Իր] գոյութեամբ գերագոյն է ամենքից, եւ չհամարել անճառելիութիւնը ճառելիութեանը հակառակ, այլ՝ [Նա] բազմիցս աւելի վեր է անկատարութիւնից եւ գերազանցում է ամէն մի բացասման եւ հաստատման:

I.3. Այսպէս է ասում եւ աստուածային Բարդուղիմէոսը. աստուածաբանութիւնը լինում է բազում եւ սակաւ, Աւետարանն՝ ընդարձակ ու մեծ եւ դարձեալ՝ համառօտ: Ինձ այնպէս է թւում, որ [նա] գերբնապէս խորհում էր այն, թէ ամենայնի բարի Պատճառը եւ՛ բազմաբանելի է, եւ՛ սակաւաբանելի, միաժամանակ եւ՛ անճառելի, քանի որ Իր առաւել գերունակութեան պատճառով անհասանելի է խօսքի եւ մտքի համար եւ յայտնապէս ու ճշմարտապէս միայն նրանց է երեւում, ովքեր անցնում են ամենայն անմաքուր եւ մաքուր [բաների] միջով եւ գերազանցում ամենածայրագոյն սրբերի բոլոր աստիճանները եւ թողնում ամենայն աստուածային լոյսը եւ երկնային բարբառները ու հընչիւնները եւ մտնում Մէգի մէջ, ուր, ինչպէս ասուած է [Գրքում] [Ք Թագ. ԻԲ 12], Նա է՝ ամենայնից անդին: Քանզի աստուածային Մովսէսը հէնց այնպէս հրաման չստացաւ նախ իրեն մաքրել եւ ապա ոչ այդպիսիներին հեռանալ. եւ այս ամէն մաքրութիւնից յետոյ լսում է բազմաձայն փողերը եւ տեսնում առատ, մաքուր, փայլատակող լոյսը եւ յոգնահեղ ճառագայթները եւ յետոյ բաժանւում ժողովրդից եւ վերնագոյն քահանաներից եւ հասնում աստուածային լեռան կատարը [Ելք ԺԹ 9–24]: Եւ այսքանից յետոյ չի հպւում Նրան՝ Աստծուն, եւ տեսնում է ոչ թէ Նրան, քանզի անտեսանելի է, այլ՝ այն տեղը, ուր Նա էր [Ելք ԼԳ 20–23]: Եւ այս, կարծում եմ, նշանակում է, որ աստուածային [յայտնութիւնները] եւ երեւելիների եւ իմանալիների ծայրագոյն [վիճակները] պարունակում են ինչ–որ խօսքեր ամենից Գերա-

ա հաստատում— պնդում, ստորասութիւն
բ անճառել— բացասել, ժխտել

գոյնի մասին: Դրանով Նրան մերձենալը, որ վեր է ամենայն պատկերացումից, ցոյց է տրւում սուրբ տեղերում իմանալի բարձունքների վրայով Նրա ընթանալով: Եւ այնժամ [Մովսէսը] ծածկւում է Նրանցից՝ թէ՛ տեսանելի բաներից, թէ՛ տեսնողներից, մտնում արդարու խորհրդական անգիտութեան Մէգը, որով գոցում է ամենայն իմացական ընդունակութիւն, եւ ամենայնիւ անշօշափելի եւ աներեւոյթ լինում բոլորից եւ աններգործութեամբ, ըստ վեհագունութեան, միատրւում ոչ որեւէ մէկի, ոչ իրեն, ոչ այլ մէկի, այլ՝ Նրան, որ գերազանցում է բոլորին եւ ամենեւին անճանաչելի է ամէն տեսակ գիտութեան համար. եւ, գերագոյն կերպով անգիտանալով, [ճանաչում է] իր անգիտութիւնը:

II ԻՆՉՈՒ ՊԷՏՔ Է ՄԻԱՒՈՐՈՒԵԼ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԱՏՈՒՑԵԼ ԱՄԵՆՔԻ ՊԱՏՃԱՌԻՆ ԵՒ ԱՄԵՆՔԻՑ ԳԵՐԱԳՈՅՆԻՆ.

Այդպիսին լինելու համար մենք աղօթքներ ենք յղում գերալոյս Մէգին եւ անտեսութեան ու անգիտութեան միջոցով [ձգտում] տեսնել եւ ճանաչել Նրան, որ վեր է տեսութիւնից եւ գիտութիւնից՝ [միաժամանակ] աղօթելով [ձգտում] չտեսնել եւ չճանաչել: Քանզի սա է արդարու տեսնելն ու ճանաչելը եւ գերագոյ էն գերագոյապէս օրհնաբանելը՝ բացասելով բոլոր էերը, ինչպէս Նրանք, ովքեր մինչ բուն պատկերը[ա] ստանալը, վերացնում են վրան եղած այն ամէնն, ինչ խանգարում է մաքուր տեսողութեանը. եւ [պատկերը] բացասման միջոցով միայն ինքը [մնալով], ցոյց է տալիս ծածկուած գեղեցկութիւնը: Արդ, կարծում եմ, պէտք է օրհնաբանել աւելի բացասումներով, քան հաստատումներով: Քանի որ, երբ հաստատում ենք, սկսում ենք ամենասկզբից եւ միջինների միջոցով հասնում վերջիններին, մինչդեռ այստեղ (բացասելիս), վերջից դէպի ամենասկիզբը ելնելով, ամէն ինչ բացասում ենք, որպէսզի յայտնապէս ճանաչենք այն անգիտութիւնը, որ այս աշխարհի բոլոր գիտուններից էապէս ծածկուած է, եւ տեսնենք այն Աստուածային Մէգը, որ ծածկուած է էերի մէջ եղած ամենայն լոյսից:

ա ի նկատի ունի քարը:

III ԻՆՉ ԵՆ ՃԱՌԵԼԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԱՆՃԱՌԵԼԻՆԵՐԸ.

Արդ, «Աստուածաբանական տպաւորութիւններում» գլխաւորապէս օրհնաբանեցինք ըստ ճառելի աստուածաբանութեան, թէ ինչու է միական ասւում աստուածային եւ բարի բնութիւնը եւ ինչու՝ երրորդական, եւ ինչ են Նրա մասին ասուած հայրութիւնը եւ որդիութիւնը, ինչ է կամենում յայտնել [Սուրբ] Հոգու աստուածաբանութիւնը, թէ ինչպէս անմիւթ եւ անբաժանելի Քարութեան սրտից արտաբխեց լոյսը, եւ ինչպէս Նրանք, որ Նրանումն են եւ Իրենց եւ Միմեանց հետ[ա], մշտնջենաւորակցում են յարատեւ վերաբխութեամբ՝ մնալով անփոփոխ բնութեամբ, ինչպէս Յիսուս գերագոյն էութեամբ ճշմարտապէս միաւորուեց մարդկային բնութեան հետ, եւ բազում այլ ճառելի ճշմարտութիւններ, որոնք օրհնաբանւում են «Աստուածաբանական տպաւորութիւններում»: Իսկ ինչ վերաբերում է «Աստուածային անունների մասին» [երկում նշուած] անուններին, [բացատրել ենք], թէ ինչո՞ւ է բարի կոչւում, ինչո՞ւ՝ էութիւն, ինչո՞ւ՝ կեանք, ինչո՞ւ՝ իմաստութիւն եւ զօրութիւն, եւ բազում այլ իմացական աստուածային անուններ: Իսկ «Նշանական աստուածաբանութեան» մէջ [ասել ենք], թէ ի՞նչ են անուանափոխութիւնները՝ զգալիներից աստուածայիններին, թէ ի՞նչ է աստուածային կերպարանքը, ի՞նչ՝ աստուածային ձեւերը եւ մասերը եւ գործարանները, ի՞նչ են աստուածային տեղերը եւ զարդերը, ի՞նչ՝ բարկութիւնը, ի՞նչ՝ տրտմութիւնը եւ քինախնդրութիւնը, ի՞նչ՝ ըմպումն ու մսակերութիւնը, ի՞նչ է երդումը, եւ ի՞նչ՝ անէծքը, ի՞նչ է քունը, եւ ի՞նչ՝ արթնութիւնը եւ Նշանական աստուածաբանութեան բազում այլ սրբազանաստեղծ կերպարներ:

Կարծում եմ, թէ դու էլ գիտես, թէ ինչու առաւել բազմախօս են [իմ] վերջին, քան թէ առաջին [երկերը]: Քանի որ «Աստուածաբանական տպաւորութիւնների» եւ «Աստուածային անունների» բացայայտման համար պէտք էր աւելի՛ սակաւախօս լինել, քան «Նշանական աստուածաբանութեան», քանի որ որքան վեր ենք հայում, այնքան բանականութեան համար իմացականների տեսութիւնն աւելի է ծածկւում. ինչպէս եւ այժմ, մտնելով մտքից էլ վեր այն Մէգի մէջ, ոչ թէ սակաւախօսութեան, այլ բացարձակ անխօսութեան եւ անիմացութեան եմ

ա Ի նկատի ունի Սուրբ Երրորդութեան Անձերը:

[մատնում]: Իսկ վերեւից ներքեւ իջնելիս, իջման չափի համեմատ, խօսքիս քանակութիւնն ընդարձակւում է: Բայց այժմ ստորինները դէպի գերական ելնելիս, ըստ վերեւի ճանապարհի չափի, [խօսքս] սակաւանում է եւ ամենավերը հասնելուց յետոյ լրիւ դառնում անշրջելի եւ ամբողջապէս միաւորւում անբարբառութեան հետ: Բայց կասես, թէ ինչու աստուածայինի բացասումը սկսում ենք ամենայետին [բաներից]: Որովհետեւ ամենից Գերագոյնի մասին հաստատում անելու համար ենթադրականա ճառումը պէտք է [սկսել] համասեռ եւ մերձաւոր բաներից: Իսկ Նրա բացասումը, որ գերագոյն է ամենայն բացասումից, պէտք է [սկսել] Նրանից առաւել հեռաւոր [բաների] բացասումից: Եւ մի՞թէ [Նա] առաւել կեանք եւ բարերարութիւն չէ, քան օդը եւ ջրը, եւ առաւել չէ անասելին եւ անիմանալին, քան մսակերութիւնը եւ քինախնդրութիւնը:

IV ԹԷ ԲՈԼՈՐ ԶԳԱԼԻՆԵՐԻ ԳԵՐՈՒՆԱԿ ՊԱՏՃԱՌԸ ԶԳԱԼԻՆԵՐԻՑ ՉԷ

Բայց արդ, ասում ենք, որ ամէն ինչի Պատճառը եւ ամէն ինչից Գերագոյնը ո՛չ անգոյ է, ո՛չ էլ՝ անկենդան, ո՛չ անխօս է, ո՛չ էլ՝ անմիտ, ո՛չ մարմին ունի եւ ո՛չ էլ՝ ձեւ, ո՛չ տեսակ, ո՛չ էլ որակ կամ քանակ կամ ծանրութիւն ունի: [Նա] ո՛չ ինչ–որ տեղում է եւ ո՛չ էլ տեսանելի է եւ ո՛չ էլ ունի զգալի շօշափում: Ո՛չ զգում է եւ ո՛չ էլ զգալի է եւ ո՛չ էլ ենթակայ է անկարգութեան կամ շփոթութեան նիւթական ախտերի հետեւանքով: Անզօր չէ զգայական տկարութիւններով, ո՛չ էլ կարօտ է լոյսի, ո՛չ էլ ենթակայ այլայլութեան կամ ապականութեան կամ բաժանման կամ զրկման կամ հոսման կամ մի բանի, որ յատուկ է զգալիներիս. ոչ է՛ եւ ոչ է՛լ ինչ–որ [նման] բան է կոչւում:

V ԹԷ ԻՄԱՑԱԿԱՆՆԵՐԻՊ ԳԵՐՈՒՆԱԿ ՊԱՏՃԱՌՆ ԻՄԱՑԱԿԱՆ ՉԷ

Եւ դարձեալ՝ աւելի վեր ելնելով՝ կասենք, թէ [Աստուած] ո՛չ անձ է եւ ո՛չ միտք, ո՛չ երեւոյթ է, ո՛չ էլ ունի կարծիք կամ բանականութիւն կամ իմացում: Ո՛չ բանականութիւն է եւ ո՛չ իմացում. ո՛չ ասում է, ո՛չ իմացւում: Ո՛չ թիւ է եւ ո՛չ կարգ, ո՛չ մեծութիւն եւ ո՛չ փոքրութիւն, ո՛չ հաւասարութիւն եւ ո՛չ նմանութիւն կամ անմանութիւն: Ո՛չ կանգնած

ա ենթադրական– հիպոթետիկ
բ իմացական– իմանալի, հոգեւոր

եւ ո՛չ էլ շարժւում է, ո՛չ լռութիւն է բերում եւ ո՛չ էլ զօրութիւն ունի: Ո՛չ զօրութիւն է եւ ո՛չ լոյս եւ ո՛չ կեանք է, ո՛չ էութիւն, ո՛չ յաւիտեան է եւ ո՛չ էլ ժամանակ: Նա ո՛չ իմացական զգայութիւն է, ո՛չ հանճար, ո՛չ ճշմարտութիւն, ո՛չ թագաւորութիւն, ո՛չ իմաստութիւն, ո՛չ միակ, ո՛չ միութիւն կամ բարութիւն, ո՛չ էլ հոգի, ինչպէս մենք ենք պատկերացնում, ո՛չ որդիութիւն, ո՛չ հայրութիւն եւ ո՛չ էլ նրանցից, որ մեր մէջ են, եւ ո՛չ էլ ճանաչելի որեւէ այլ էի կողմից: Եւ ո՛չ ոչէներից է եւ ո՛չ էլ ինչ–որ էերից, եւ ո՛չ էերը գիտեն Նրան, թէ Նա է, եւ ո՛չ էլ Նա էերին գիտի, թէ էեր են: Նա ո՛չ խօսք է, եւ ո՛չ անուն, ո՛չ գիտութիւն, ո՛չ խաւար է եւ ո՛չ լոյս, ո՛չ մոլորութիւն եւ ո՛չ ճշմարտութիւն: Նրան ամենեւին հնարաւոր չէ հաստատել կամ բացասել, այլ, Նրա հետ եղածներին հաստատելով կամ բացասելով, Նրան ո՛չ հաստատում ենք, ո՛չ էլ բացասում: Որովհետեւ ամէն տեսակ հաստատումից վեր է ամենայնի ամենակատար եւ միեղէն Պատճառը եւ ամէն բացասումից վեր է բոլոր ընդարձակութիւնների Գերունակութիւնը եւ անդին է, քան բոլորս:

ԳԱՅԻՈՍ ՍՊԱՍՍԱՒՈՐԻՆ

Խաւարն աներեւոյթ է լինում լոյսից եւ առաւել եւս՝ բազում լոյսից, անգիտութիւնն աներեւոյթ է լինում գիտութիւնից եւ առաւել եւս՝ աւելի մեծ գիտութիւնից: Սրանք ընդունելով ամբողջութեամբ եւ առանց թերութեան՝ որպէս գերագոյն ճշմարտութիւն հաստատի՛ր, որ լոյսի գոյութեանն ու գոյների գիտութեանը ձգտողներին անհասանելի է աստուածային անգիտութիւնը, եւ գերագոյն ու վերնագոյն Նրա խաւարը ծածկուած է ամենայն լոյսից եւ թաքնուած՝ ամենայն գիտութիւնից: Եւ եթէ մէկը, տեսնելով Աստծուն, հասկանայ, թէ Ում տեսաւ, ոչ թէ Նրան է տեսել, այլ՝ նրանց, որ էերից են եւ իմանալիներից: Իսկ Նա հաստատուած է աւելի վեր, քան միտքը եւ էութիւնը, եւ Նա, ամբողջապէս անճանաչելի եւ անտեսանելի լինելով, գերագոյապէս գոյութիւն ունի եւ գերագոյն է, քան մտքերը: Եւ, ըստ վեհագունութեան, ամենակատարեալ անգիտութիւնը գիտութիւնն է Նրա, որ գերազանցում է բոլոր ճանաչելիներին:

ԴՈՐՈԹԷՈՍ ՊԱՇՏՕՆԵԱՅ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ

Աստուածային Մէգն այն անմատոյց լոյսն է [Ա Տիմ. Զ 16], որի մէջ, ասում է, բնակւում է Աստուած, եւ աներեւոյթ է գերունակ երեւու-

թականութեան պատճառով եւ անմատչելի՝ գերազանց գերագոյ լուսաբխութեան պատճառով: Նրա մէջ է ամենայն ոք, ով արժանացել է Աստծուն տեսնելուն եւ ճանաչելուն՝ Նրան ճշմարտապէս ոչ տեսնելով եւ ոչ գիտենալով, ելնելով աւելի վեր, քան տեսնելն ու իմանալը, այս իմանալով նրա մասին, որ ամէն ինչի հետ է՝ եւ՛ զգալի, եւ՛ իմանալի: Եւ կասեմ մարգարէի պէս. «Ինձ աքանչացրեց Քո գիտութիւնը, զօրացաւ [իմ մէջ], եւ չեմ դիմանում նրան» [Սաղմ. ՃԼԸ 6]: Ինչպէս աստուածային Պօղոսն է ասում, որ ճանաչում է Աստծուն, թէ ճանաչել է, որ Նա գերագոյն է, քան ամենայն իմաստութիւն եւ գիտութիւն: Ուստի ասում է, որ անքննելի են Նրա ճանապարհները, եւ անզննելի՝ Նրա դատաստանները [Հռովմ. ԺԱ 33], եւ նրա խաղաղութիւնը վեր է ամենայն մտքից [Փիլիպ. Դ 7]՝ այսպիսով համարելով Նրան բոլորից գերագոյն եւ ճանաչելով Նրան գերագոյն, քան ամենայն միտք, թէ [Աստուած] անդին է ամէն ինչից՝ լինելով ամէն ինչի պատճառը:

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ

Խոսրով Անձեւացու մասին շատ կցկտուր տեղեկութիւններ են պահպանուել: Առաջին անգամ նա յիշատակւում է իբրեւ ա. Գրիգոր Նարեկացու եւ նրա եղբայրներ Յովհաննէսի եւ Սահակի հայր, ինչպէս նաեւ՝ Անանիա Նարեկացու հօրեղբօր փեսայ: Անյայտ է Խոսրովի ծննդեան թիւն ու վայրը: Ենթադրւում է, որ նրա հայրենիքն Անձեւացեաց գաւառն է, որի եպիսկոպոս է ձեռնադրուել՝ հաւանաբար իր կնոջ մահուանից յետոյ կուսակրօնութիւն ընդունելով: Յայտնի է նրա մահուան տարեթիւը՝ 972 թ:

Անձեւացու կեանքն ու գործունէութիւնն անհնար է պատկերացնել առանց հաշուի առնելու իր ժամանակ հոգեւոր ասպարէզում կատարուող բուռն փոփոխութիւնները: Ժ դարում Հայաստանում մեծ վերելք էր ապրում վանականութիւնը: Այս շարժումն սկսուել էր հոգեւորականների մէջ ինքնաբուխ կերպով՝ առանց Եկեղեցու առաջնորդների գործակցութեան, սակայն այն մեծ աջակցութիւն ստացաւ Անանիա Մոկացու կողմից, որը Հայոց կաթողիկոսութեան աթոռին նստեց 946 թուականին: Մոկացու մասին բոլոր պատմիչները գոհութեամբ են յիշել: Նրա օրօք Հայաստանի բոլոր կողմերում յայտնւում էին նորանոր վանքեր, որոնցում ծաղկում էր կրօնատրութեան կարգը: Այդ շրջանում ստեղծուած որոշ վանական խոշոր կենտրոններ, հոգեւոր ուսումնառութեան օրրաններ լինելուց բացի, ճարտարապետական աքանչելի կոթողներ դարձան, ինչպիսիք են, օրինակ՝ Սանահինը (շինւ. 957), Կամրջաձորը (939), Հաղբատը (967): Սակայն առանձին ուշադրութեան է արժանի այդ ժամանակ տարածում գտած *ներքին մարդու* հոգեւոր ճարտարապետութիւն հանդիսացող ճգնատրական ուսմունքների վերածաղկումը: Այդպիսի ծաղկման ամենավաղ դրսեւորումներից մէկն էր Նարեկայ նշանաւոր վանական դպրոցի ստեղծումը (X–րդ դարի առաջին կէսին) Անանիա Նարեկացու կողմից: Վերջինս ժամանակի ամենազարգացած եւ լուսաւոր հոգեւորականներից մէկն էր եւ, բնականաբար, իր սրբակենցաղ վարքով եւ բազմաբեղուն գրականութեամբ պիտի անմիջական ազդեցութիւն թողած լինէր Խոսրովի, ինչպէս նաեւ նրա գաւակների վրայ[1], մանաւանդ որ նրանց մէջ ազգակցական կապ կար: Յայտ-

1 Տե՛ս Հրաչեա Թամրազեան. «Անանիա Նարեկացի. կեանքը եւ մատենագրութիւնը», Երեւան, 1986:

նի է, որ ս. Գրիգորը եւ իր աւագ եղբայր Յովհաննէսն Անանիայի հոգեւոր խնամքին են վստահուել՝ ճգնաւորութեան նուիրուելով Նարեկայ վանքում, իսկ Յովհաննէսը, նրա մահուանից յետոյ, ստանձնել է վանքի առաջնորդութիւնը[2]:

Պատմութիւնից յայտնի է, որ Խոսրովն ու Անանիան մեղադրուել են կղերական անհնազանդութեան մէջ[3]: Այս փաստը ոմանց համար առիթ է հանդիսանում նրանց աղանդաւորական, հակաեկեղեցական, մինչեւ իսկ հակակրօնական որակումներ տալու համար: Այսպիսի կարծիք է թեւածում նաեւ նրանց հանճարեղ ժառանգորդի՝ ս. Գրիգոր Նարեկացու անձի շուրջ: Իրականում Անանիայի եւ Խոսրովի անունների հետ կապուած հպանցիկ ամբաստանութիւնը լուրջ գործողութիւններ եւ հետեւանքներ չունեցած իրողութեան թեթեւակի արձագանքն է, ինչպէս վկայում է Մ. Օրմանեանը՝ իր *մանրազնին ուսումնասիրութեան վրայ* հիմնուելով[4]: Եթէ Ստեփանոս Օրբելեանն իր պատմութեան մէջ այդ մեղադրանքը պարզապէս զրպարտութիւն է համարում[5], ապա Կիրակոս Գանձակեցու մօտ ընդդէմ Խոսրովի բերուած փաստարկները խիստ կասկածելի են եւ *անհիմն*[6]: Բացի այդ, մեղադրութեան շարադրանքը գրաբարեան տեքստում անորոշ աւարտուն է[7] եւ առաւելապէս վերագրելի է Սիւնեաց Յակոբ եպիսկոպոսին, որն եւ համարում էր Խոսրովին *շեղողը*: Այդ անորոշութիւնը իւրովի է «լուծուած» նոր թարգմանութեան մէջ՝ Յակոբ անձնանուան աւելացմամբ[8]: Ամէն դէպքում, թէ՛ Խոսրովի եւ թէ՛ Անանիայի անունների հետ կապուած ամբաստանութիւնները նախանձի եւ խարդաւանքի հետեւանք են եղել եւ ոչ թէ՝ ենթադրուող կղերական հակառակութեան կամ նորաձեւական ձկրտումների:

2 Տե՛ս «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց», Վենետիկ, 1810, էջ 495:

3 Տե՛ս Ստեփանոս Օրբելեան. «Սիւնիքի պատմութիւն», Երեւան, 1986, էջ 242, Կիրակոս Գանձակեցի. «Հայոց պատմութիւն», Երեւան, 1982, էջ 71–72, «Մնանիա Մոկացու թղթերը», «Արարատ», 1897, էջ 275–288, Գ. Տէր–Մկրտչեան. «Հայագիտական ուսումնասիրութիւններ», Երեւան, 1979, էջ 224–234:

4 Տե՛ս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան. «Ազգապատում», Պրակ 1, 1912, Կ.Պոլիս, էջ 1099–1100:

5 Տե՛ս նոյնը. 3:

6 Տե՛ս նոյնը. 4, էջ 1098:

7 Տե՛ս «Համառօտ պատմութիւն», Վենետիկ, 1865, էջ 48:

8 Հմմտ. Երեւան, 1982, էջ 72:

Անընդունելի է եւ այն կարծիքը, թէ իբր նրանք, հանդիսանալով ներանձնական հոգեւոր ճանապարհի ջատագովներ, անկարեւոր էին համարում ընդհանուր եկեղեցական պաշտամունքը, ծէսն ու նուիրապետական կարգը եւ ձգտում ստեղծել կամ հաստատել ուրոյն խորհրդապաշտական դպրոց: Սրա դէմ է խօսում նրանց իսկ գրական աւանդը, ուր սքանչելիօրէն ներդաշնակուած են աստուածպաշտութեան ընդհանուր–ծիսական եւ առանձնական–ճգնաւորական կողմերը: Այդպիսի ներդաշնակութեան ամենաբնորոշ արտայայտութիւններն են Խոսրովի կողմից մեզ աւանդուած երկու աշխատութիւնները՝ **Պատարագի** եւ **Ժամակարգութեան** մեկնութիւնները[9]: Այս գործերում մատուցուող ծիսակարգի խորհուրդների աստուածաբանական մեկնութիւնները զուգորդուած են ներանձնական աստուածպաշտութեանը վերաբերող խրատներով:

Ստորեւ ներկայացուող խրատը վերցուած է **«Մեկնութիւն ժամակարգութեան»** գրքից, որտեղ այն զետեղուած է **Գիշերային** եւ **Առաւօտեան** ժամերգութիւնների մեկնութիւնների միջեւ: Խրատը, բնականօրէն պատշաճելով գրքի բովանդակութեանը, գլխաւորապէս վերաբերում է աղօթքին, սակայն նրանում ընդգրկուած են նաեւ աստուածպաշտական մի շարք կարեւորագոյն սկզբունքներ՝ սեղմ եւ դիպուկ խրատական խօսքով, յաճախ կշտամբիչ եւ սթափեցնող յանդիմանութիւններով: Այս խրատն իր բովանդակութեամբ այսօր էլ խիստ արդիական է, քանզի նրանում շօշափուող (ինչպէս անհատի, այնպէս էլ Եկեղեցու ընդհանուր կեանքին վերաբերող) ցաւոտ խնդիրներն առկայ են եւ մեր օրերում:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ

9 Սոյն աշխատութիւնները լոյս են տեսել հետեւեալ հրատարակումներով. 1. «Մեկնութիւն ժամակարգութեան», Յօրթագիւղ, 1840: 2. «Մեկնութիւն աղօթից Պատարագին», Վենետիկ, 1869:

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔՆ ՈՒ ԵՐԿԻՒՂԸ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ ՄԱՆՈՒԾՈՂ ՍՈՒՐԲ ՀՈԳԵԿԻՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՈՍՐՈՎԻ ՅՈՅԺ ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

Բազում աղօթքներ են մեզ պէտք, բազում արտասուքներ, յաճախակի պաղատանքներ եւ մեծագոյն ճգնութեամբ Հայցել Աստծուց, որպէսզի արժանի լինենք լուսաւոր միտք ստանալու, որով կբորբոքուի մեր մէջ աղօթքի բաղձանքն ու Աստուածային Գրքի վերծանութիւնը: Եւ մեր մտքի ճաշակելիքում կհամեղանայ այդ իմանալի ուտեստների խոհարարութիւնը, եւ կճանաչենք Հոգեւոր երկունքի օգտակարութիւնն ու անսպառ բարիքների արդիւնարարութիւնը: Եւ սիրով կջամբենք Հոգեւոր ստինքների խօսքի կաթը եւ յօժարութեամբ կզմայլուենք Սուրբ Հոգու պարգեւներով, որպէսզի չմնանք ինչպէս մի անմշակ եւ անարդիւն անդաստան, որ միշտ սերմանում եւ սերմնակորոյս է լինում. զո՜ւր աշխատանք եւ ընդունա՜յն յոգնութիւն:*

Այսպիսին են ցրուած միտք ու զբաղուած բարք [ունեցողները], որոնց մօտ սպառուել է աստուածային Կտակարանների ունկնդրութեան սէրը, որոնք շրջում են աշխարհում ինչպէս կոյրն ու ակնազուրկը: Քանզի կամ բնաւ չեն ընթերցում եւ կամ, ինչ որ ընթերցում են՝ ոչ թէ սիրով ու փափագով, այլ՝ որպէս հարկադիր մի բան եւ պարտքերի հատուցում: Քանզի ոչինչ [աւելի] ողորմելի չէ, քան Սուրբ Գրքի հանդէպ սիրոյ եւ աստուածային պատուիրանների վերծանութեան բաղձանքի սպառումը:

Աստուածսիրութիւնը Գրքից է ծնւում մարդու մէջ: Աղօթքների եւ արտասուքների, պահքի եւ ողորմութեան, խոնարհութեան ու սիրոյ հանդէպ սէրը Գրքից է ծագում մարդկանց մտքում: Արիութեան եւ համբերութեան, յուսոյ եւ երկիւղի եւ բոլոր բարեգործութիւնների պատճառը մեզանում Սուրբ Գիրքն է լինում մաքուր մտքով կարդալիս: Նաեւ օրէնքների ու կանոնների եւ բոլոր բարեկարգութիւնների պատճառն ու հաստատութիւնն աշխարհում Գիրքն է:

Այլեւ մեռոնի, խաչի եւ եկեղեցու օրհնութիւնը, քահանայական ձեռնադրութիւնը, թագաւորական օծումը եւ քրիստոնեական Պատարագի բաշխումն ըստ Սուրբ Գրքի ենք կատարում: Նաեւ քրիստոնէական հաւատքն ու մկրտութիւնը, օրինաւոր ամուսնութիւնը, մահն ու կեանքը, հանդերձեալ կեանքի ծանօթութիւնը, երկնքի արքայութեան [մասին] տեղեկութիւնն ու աստուածճանաչութիւնը եւ [ամէն ինչի] սկիզբն ու վախճանը մենք Գրքից ենք իմանում:

* Վերծանութիւն— ընթերցողութիւն՝ ճանաչողաբար, մտաւորաբար, հոգեւոր ընթերցանութիւն

Եւ չկայ որեւէ հոգեւոր գործառնութիւն կամ բարեկարգութիւն, որ առանց Գրքի լինի: Ոստի եւ, ինչպէս Յովհաննն է ասում, քանի որ զրկուեցինք Հոգուց, պարտաւոր ենք միշտ Գրքով առաջնորդուել: Եւ Տէրն [ասում է]. «Քննեցէ՛ք Գիրքը, քանզի նրանով էք համարում յաւիտենական կեանք ունենալ ձեր անձերում» [տե՛ս Յովհ. Ե 39]:*

Եւ արդ, պատուենք Սուրբ Գիրքն ընթերցանութեամբ, որ պատճառն է մեր բոլոր բարելաւութիւնների, սիրով փափագենք Սուրբ Գրքի ուսումնասիրութիւնը եւ ընթերցելիս հոգանք երկու բանի մասին. նախ՝ որ հասկանանք ընթերցուածը, եւ երկրորդ՝ որ մտքում անմոռաց պահենք, մանաւանդ՝ գործով կատարենք եւ օրէնքը կատարո՛ղ լինենք, որպէսզի թեթեւամտութեամբ չզրկուենք մեծագոյն բարիքներից:

*Առաջիններն** օրէնքով սահմանել են կանոնները*** միմեանց չմիացնել, այլ ամէն մի կանոնի վերջում ընթերցել Գիրքը մտքի լուսաւորութեան եւ բարի գործերի յորդորման համար: [Մինչդեռ] մենք բոլոր սաղմոսները միացնում ենք եւ, եթէ վերջում փոքր—ինչ ընթերցում ենք, ապա՝ ձանձրութեամբ եւ կամ էլ բնաւ չենք ընթերցում:*

Եւ այս՝ ի՞նչ պատճառով: Որովհետեւ սէրը սպառուեց, երկիւղը վերացաւ, զարտուղի ընթացանք, սիրեցինք աշխարհը եւ այն, ինչ աշխարհում է, ընթացանք ոչնչի ետեւից, կասեցուեցինք յոյսից եւ ցանկացանք միայն առօրեականը, քանզի մարմին դարձանք: Եւ սիրեցինք մարմնաւոր բաները եւ դրանց ետեւից գնացինք՝ հեշտութեան, զբաղմունքների, ծուլութեան, նախանձի եւ ատելութեան եւ բոլոր միւս չարիքների, փառքի, պատուի, իշխանասիրութեան եւ ագահութեան:

Այս պատճառով աղաչում եմ զարթնե՛նք, զարթնե՛նք եւ առաւել եւս

* Ի նկատի ունի Յովհան Ոսկեբերանի հետեւեալ խօսքերը. «Դարտ եւ պատշաճ էր մեզ ոչ կարօտանալ ի նշանագիրս գրելոցն օգնականութեան, այլ այնպէս սրբական վարս ընծայեցուցանել, որպէսզի շնորհք Հոգւոյն փոխանակ ընդ Գրոց լինէին մերոց հոգւոցս ի պաշտպանութիւն. եւ զորօրինակ զգրեալսն մելանաւ, նոյնպէս եւ զմեր սիրտս՝ Սուրբ Հոգւովն գրել: Իսկ արդ, քանզի յայնպիսի շնորհացն վրիպեցաք, օ՛ն առաւել մտադիր յերկրորդն դիմեսցուք» [տես «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպոլսի եպիսկոպոսապետի յԱստուծաբանագիրն Մատթէոս», Վենետիկ, 1826, էջ 1]:

** Ի նկատի ունի Եկեղեցու առաջին հայրերին:

*** Խօսքը ժամակարգութեան տեքստերի մասին է

թօթափուենք աստանայական մոլորութիւնների արբեցութիւնից։ Մի կո՛ղմ նետենք հրէական քողը* եւ լուսափայլ մտքո՛վ նայենք առ Աստուած։

Զար է մեղքի երեւոյթը եւ առաւել չար է գործողի համար եւ այնքան առաւել, որ մինչեւ իսկ վերացնում է Աստուծոյ երկիւղը մեղանչողի սրտից եւ չի թողնում նայել Արարչի շնորհին, այլ զբաղեցնում է միայն երկրաւոր բաներով ու թմրեցնում խաւարի խորքերում։ Մէկին՝ աշխարհական ցնորքների, միւսին՝ արծաթասիրութեան, մէկ ուրիշին՝ փառամոլութեան, մէկ այլին՝ նախանձի եւ ատելութեան մէջ։ Եւ մեր կեանքի թշնամին մղում է մեզ չարիք գործել սիրով եւ յօժարութեամբ՝ իբրեւ թէ իրաւացիօրէն։ Որպէսզի, չիմանալով անոտի սիրոյ հետեւանքը, ոչ ոք չզղջայ եւ ապաշխարութեամբ չփրկուի, այլ, չարի պատրանքներով զբաղուելով, խորը գիշերուայ մէջ թմրածի պէս, տգիտաբար խաւարն իբրեւ լոյս սիրի։

Այս պատճառով մենք, ճանաչելով նենգաւորի խորամանկութիւնները, միշտ սիրով, ահ ու դողով փութանք առ Աստուած, դատապարտենք մեր մեղքն ու զգայութիւնները՝ միշտ բարբրելով առ Աստուած գոհութեամբ եւ երկիւղով։ Զգայի գիշերուայ նուազելու հետ փարատենք մեզանից սխրաւանդի մեղքերի գիշերը, եւ առաւօտուայ լոյսի ծագելու հետ՝ սիրով ընդունենք մեր մէջ խաղաղութիւնն աստուած Քրիստոսին։ Միշտ ապաշխենք մարգարէ Աստծուն, որ վերոյին վերապրածնի մեղ գերութիւնից հայրենի աստուածների պէս [տե՛ս Սաղմ. ՃԼԵ 4], եւ բարբրի մեր հոգիներում Իր սիրոյ հուրը։

Միշտ ապրմութի՛ւն հայցենք ամենակալ եւ ամենաստ Տիրոջից՝ ոչ միայն խօսքով յայտնում խնդրելով, այլեւ ճիգերով եւ գործերով մեզ միշտ արժանի գործենք Աստուծոյ ապրմութեանը։ «Քո մեղքերը ապրմութեամբ կքաւես եւ քո անօրէնութիւնները՝ ողորմութիւնով» [տե՛ս Դան. Դ 24] եւ թէ՝ «Ինչ չափով որ չափում էք՝ [նոյնով] կչափուէք» [տե՛ս Մատթ. Է 2, Մարկ. Դ 24, Ղուկ. Զ 38] եւ թէ՝ «Ողորմութի՛ւն տուէք, եւ ձեր ամէն ինչը սուրբ է» [տե՛ս Առակ. ԺԴ 21] եւ՝ «Ինչ որ անէք փոքր եղբայրներից [մէկին], Ինձ եմ համարում» [տե՛ս Մատթ. Ե 40]։

Ուստի եւ անհրաժեշտ է ոչ միայն ողորմութիւն գործել, այլեւ մեծ փափագով խնդրել Աստծուց, որ բացի մեր միտքը՝ առատապէս յորդորուելու ողորմածութեան սիրով, որպէսզի պատշաճ ժամին արժանի լինենք փոխարէնը ստանալու երկնքի արքայութիւնում։ Մանաւանդ միշտ գոհանանք

* Ակնարկում է փարիսեցիական ձեւական պաշտամունքը։

մեր բարերար Տիրոջից եւ Նրա ամենաստ բարձրագոյն շնորհներից։ Յարաժամ Նրան աղօթենք սիրով եւ փափագով, անլռելի ձայնով օրհնենք մարդասէր Աստուծոյ՝ Իր արարածների հանդէպ մեծագոյն շնորհները։

Խաղաղութիւն հաստատենք ե՛ւ մեր անձերում, ե՛ւ Աստուծոյ, ե՛ւ մարդկանց հանդէպ։ Քանի որ մեր մեղքերը մեզ թշնամացնում են Աստուծոյ հետ, ուրեմն պարզ է, որ բարի գործերով խաղաղութիւն ենք հաստատում Նրա հետ։ Քանզի նախ Նա՛ խաղաղութիւն հաստատեց Իր խաչի արեամբ եւ այժմ, ըստ Իր կատարածի, մեզանից նոյնն է պահանջում։ Իսկ ինչպէ՞ս է այս լինում, երբ սիրենք միմեանց, երբ տանենք միմեանց բեռները, երբ ընկերոջ կարիքները [սեփական] անձինը համարենք, երբ լաց լինենք լացողների հետ եւ խնդացողների հետ զուարճանանք, երբ վերացնենք [մեր] միջից թշնամութիւնը եւ լինենք Աստուծոյ որդիներ եւ Քրիստոսի նման խաղաղարար։ Երբ համարձակ ասենք. «Ես եղբայրն եմ, եւ եղբայրը՝ ես»՝ թէ՛ վշտի եւ թէ՛ ուրախութեան մէջ։ Երբ [մեր] ձեռքերը ողորմութեան կարկառենք, երբ ստէպ աղօթքի կանգնենք սուրբ սրտով եւ խոնարհ հոգով երբէք չձանձրանալով կամ աղօթքի ծառայութիւնը հեղգութեամբ եւ հարկադրաբար կատարելով, այլ՝ սիրով եւ յօժարամտութեամբ, որպէսզի Տէրը չբարկանայ, եւ վարձքի փոխարէն՝ դատապարտութիւն կրենք։

Իսկ թէ ինչու է Աստուած բարկանում փառաբանութեան պաշտամունքի մէջ հեղգացողների վրայ, յայտնի է բանսարկուի [օրինակով]։ Քանզի երբ բոլորի միջից միայն նա դադարեց օրհնաբանել Արարչին, Աստուած բարկացաւ նրա վրայ եւ զցեց նրան [իր] դասի կայանից։ Եւ նա, որ [իր] պայծառութեան համար Արուսեակ էր անուանում, ամբարտաւանութեան պատճառով խաւարելով, նսեմացաւ եւ, հրեշտակի փոխարէն, Սատանայ անունը ժառանգեց։ Նաեւ Ահարոնի որդիները, երբ ծուլացան խորանի ծառայութեան մէջ եւ անպատշաճ ժամի օտար հուր մատուցեցին սեղանին, ողջ–ողջ այրուեցին [տե՛ս Ղեւ. Ժ 1–3]։

Այս պատճառով պէտք է զգուշանալ, քանզի եթէ Աստուած բոն ոստը չխնայեց, այլ անմիջապէս դատապարտեց, պատուաստուածներիս ինչպէ՞ս կխնայի, եթէ նոյն ախտով ախտանանք։ Եւ դու այժմ, Աստուծոյ ներողամտութեանը նայելով, [ասածս] մի՛ արհամարհիր՝ նրանց պէս նոյն պահին չպատժուելու պատճառով կարծելով, թէ Աստուած միշտ ներում է, քանզի այն ամէնը մեզ խրատելու համար գրուեց, որպէսզի զգաստանանք։ Ապա թէ ոչ՝ [յիշի՛ր, որ] Օր է կարգել, երբ դատելու է մարդկանց որդիների գաղտնի [գործերը]։

Բայց աղօթքներում չճառենք ունայն խօսքերով, ինչպէս արձագանքների սոկ հնչումը, կամ կապիկների պէս՝ ըստ սովորութեան միշտ բերա-

նով պաղաջելով, այլ հոգով եւ մտքով Աստուծոյ կամքին համաձա՛յն պատրաստենք մեզ աղօթքի ժամին։ Քանզի նա, ով աղօթքի վայրում մարմնով լինի, իսկ մտքով անկապ անասունների պէս դրսում թափառի, ոչ միայն աղօթքից վարձք չի ստանայ, այլեւ կդատապարտուի անզգոյշ աղօթքի համար։

Քանզի եթէ որեւէ մէկը, մարմնաւոր թագաւորի առաջ աղաչանքներ մատուցելիս, մեծապէս հոգ է տանում իր ներսում եւ առաւել ձգտում ըստ Նրա հաճութեան խօսել եւ չսխալուել, ապա ինչպէ՞ս կարող է մէկը ներում ստանալ, երբ ամենքի Արարչի եւ Տիրոջ առջեւ աղօթք մատուցի միայն լեզուով բարբառելով եւ մտքով խօսքերին չհետեւելով, անշունչների եւ անբանների պէս անբանաբար աղօթելով, որ սոսկ անզգայական ձայնի շշնջիւն է եւ ուրիշ ոչինչ։ Եւ կամ դարձեալ [նրանք], ովքեր տարտամութեամբ եւ կցկտուր բարբառով են խօսքերն արտաբերում ի դատապարտութիւն իրենց անձերի եւ ոչ թէ յօգուտ լսողների՝ պատերազմի եւ չարախօսութեան պատճառ լինելով։ Եւ ի՞նչ ասենք [նրանց մասին], ովքեր դատարկաբանելու եւ շատախօսելու համար են [եկեղեցի] յաճախում եւ, արտասուաթոր պաղատանքների եւ հաճոյական աղօթքների փոխարէն, որպէս թէ թատրոնում, կաքաւների պէս կարկաչում են ու չեն զարհուրում։

Քանզի եթէ առայժմ հուրը, երկնքից ընկնելով, արագապէս չի այրում, արդեո՞ք վախճանի Օրը հատուցում չի լինի, երբ ոչ միայն գործերի քննութիւն է լինելու, այլեւ՝ խօսքերի ու խորհուրդների։ Եւ զուտհիկ դատարկաբանութեան ու ծաղրածութեան համար ստուգապէս պատիժ եւ պատուհաս է [պատրաստուած]։

Ապա ովքեր աղօթքի վայրն անխտիր այսպէս են յաճախում, ի՞նչ պատասխան պիտի տան Աստծուն։ Քանզի ուր պէտք էր մեղքերը քաւել եւ հաճոյական աղօթքով Աստծուն հաշտեցնել, այնտեղ շատախօսութեամբ եւ ծաղրածութեամբ բարկացնում են Աստծուն եւ դատապարտուած դուրս գալիս աղօթարանից՝ վարձք ստանալու եւ հոգեւոր շնորհներ շահելու փոխարէն։

Էլ չեմ ասում աղօթքի ժամին հակառակութեամբ եւ նախանձով, նաեւ կեղծաւորութեամբ ու փառասիրութեամբ միմեանց հանդէպ վարուելու մասին, կամ չարութեամբ լռելու, կամ երգերը նախանձով եղանակելու։ Աստուած աղօթքների այդպիսի պտուղները չի ընդունում, այլ առաւել զայրանում է եւ դատապարտում։

Պէտք է եւ հետեւեալը միշտ մտաբերել, ասում են՝ հայրերից մէկը վախճանուելիս ուրախութեամբ էր գնում Տիրոջ մօտ։ Եւ երբ եղբայրները հարցրեցին իր խնդութեան պատճառի մասին, ասաց. «Ոչ մի այլ բարի

բան չեմ արել, բացի նրանից, որ աղօթքի ժամին միտքս թոյլ չեմ տուել դուրս գալ աղօթարանից», որից եղբայրներն յոյժ օգտուեցին ու զովեցին նրան։ Եւ մէկ այլ ծերի հարցրեցին, թէ արժէ՞ աղօթքի ժամին որեւէ խօսք ասել, եւ նա ասաց. «Եթէ լինի այնպիսի մի խօսք, որ սաղմոսի տան արժէքն ունենայ, թող խօսեն, իսկ եթէ՝ ոչ, թող լռութեամբ աղօթեն»։

Եւ մեծն Յովհան Ոսկեբերանի մասին գրուած է, թէ աղօթքի ժամին անհնար էր, որ որեւէ մէկը խօսէր նրա հետ։ Եւ այս ամէնը մեզ որպէս խրատ եւ վարդապետութիւն գրուեց առաջինների կողմից, որպէսզի իրենց յաջորդողներս զգուշանանք եւ առաջադիմենք առաքինութեան մէջ։ Ուստի աղաչում եմ բոլորին աղօթքի ժամին առաւել լռութիւն ձեռք բերել եւ միտքն ու զգայարաններն Աստուծոյ երկիւղով պարսպել՝ իւրաքանչիւր ոք ինքն իր հետ եւ Աստուծոյ հետ խօսելով եւ սիրով ու խոնարհութեամբ միմեանց հետ վարուելով եւ, եթէ հնարաւոր է, բոլորի հետ, ըստ առաքեալի, խաղաղութեամբ ընթանալ [տե՛ս Հռոմ. ԺԲ 18, Եբր. ԺԲ 14]։

Ամէնքս, լինելով Քրիստոսի անդամները, սիրով միաւորուենք մեր Գլխին։ Եւ քանզի քաջ Հովիւը եկաւ՝ փրկելու մեր մոլորուած բնութիւնը, եւ հրաւիրեց մեզ դէպի Իր արքայութիւնն ու փառքը, լսենք քաջ Հովուի ձայնը եւ առաքինութիւնների գործերով միշտ պատրաստենք մեզ լինել Նրա հօտից։ Որպէսզի վախճանի Օրը չլսենք, թէ՝ «Չեմ ճանաչում ձեզ, հեռո՛ւ կացէք Ինձանից բոլոր անիրաւութեան մշակներդ» [տե՛ս Մատթ. Է 23]։ Մանաւանդ որ Տէրը մշտապէս բարբառում է Հովիւների հետ՝ ասելով Պետրոսին. «Եթէ սիրում ես Ինձ, արածեցրո՛ւ Իմ ոչխարներին» [տե՛ս Յով. ԻԱ 15–18]։

Եւ այն, որ Հովիւներն ընտանիներին են արածեցնում ու խնամարկում եւ ո՛չ թէ վայրիներին, ցոյց է տալիս, որ նա, ով անձամբ օտարացնում է իրեն Աստուծոյ պատուիրաններից եւ չար գործերով հեռանում Նրա սիրուց, հեռու է քաջ Հովուի խնամքից։ Եւ ի՞նչ վտանգաւոր պատուհաս ասես չի կրի Նրա խնամքից հեռացողը։ [Մինչդեռ] Նա հանապազ կանչում, միշտ աղաչում եւ յարաժամ ձայնում է. «Եկէ՛ք Ինձ մօտ բոլոր յոգնածներդ եւ ծանր մեղքերով բեռնաւորուածներդ, եւ Ես կհանգստացնեմ ձեզ [Իմ] ողորմութեամբ՝ խոստովանութեան եւ ապաշխարութեան միջոցով» [տե՛ս Մատթ. ԺԱ 28]։

Նաեւ մարգարէի միջոցով է պատուիրում. «Ասա՛ դու քո մեղքերը, որպէսզի արդարացուես եւ Իմ սիրելին լինես» [տե՛ս Եսայի ԽԳ 26]։ Իսկ այլ մէկն ասաց. «Ո՛վ մարդ, ի՞նչ է խնդրում քեզանից քո Տէր Աստուած՝ Իրենից երկնչելուց եւ Իր երեսի մեծութիւնից սարսափելուց բացի». Որից քերովբէները թեւաքօղում են, եւ սերովբէները սարսելով ամփոփում

իրենց մէջ, եւ տէրութիւններն ու պետութիւնները ծառայում են ու դողով։ Այս պատճառով, թէեւ ոչ մի/բարիք ստացած չլինէինք Նրանից, պէտք էր սարսել ու դողալ եւ աՀ ու երկիւղով միշտ ծառայել Նրան։

Իսկ ինչպիսի՞ պատասխանատուութիւն պիտի կրենք, երբ, Նրանից բազում երախտիքների ու մեծագոյն սիրոյ արժանանալով եւ անթիւ բարիքներ վայելելով, խոտորնակ եւ զարտուղի ենք գնում Նրա պատուիրաններից։ Աստուած պարգեւեց մեզ բոլոր բարիքները եւ արժանացրեց բոլոր մեծագոյն շնորՀներին եւ այնչափ առաւել, որ արարածներից եւ ոչ մէկին նոյնը չարեց՝ ո՛չ երկնաւորներին եւ ո՛չ էլ երկրաւորներին։ Մանաւանդ որ պատուիրանազանցութիւնից յետոյ էլ չանտեսեց, այլ տուեց Օրէնքն ու Մարգարէները՝ Հրաւիրելով ճշմարտութեան գիտութեան։

[Եւ որպէս] ամենայն բարերարութեան գլուխգործոց՝ բարի եւ գթած երկնաւոր Հայրը, մեզ՝ կորստաններիս փրկութեան համար, առաքեց Իր միածին Որդուն։ Եւ անմաՀ Թագաւորը, գալով, մեր փրկութեան համար խաչով եւ արեամբ Իր մարմնով մաՀը ճաշակեց եւ մեղքով մեռածներիս կենդանացրեց։ Սերովբէների համար անտեսանելին մեր կերպարանքով տեսնուեց խաչի վրայ, եւ անշօշափելի բնութիւնը շօշափուեց մարդկանց ձեռքով, դիապատուեց եւ Իր աստուածային փրկագործութեամբ բժշկեց մեր վէրքերը։ Անապական մարմնով գերեզմանում դրուեց կորստեան վիՀն ընկածներիս համար, աստուածաբար յարութիւն առաւ եւ մեզ մեղքերի անկումից յարութիւն տուեց եւ մշտնջենաւոր անմաՀութեան Հրաւիրեց։

Եւ քանզի Հանապազամեռ մեղքերի մէջ ենք, որպէս կենդանութեան մշտնջենաւոր դեղ պարգեւեց Իր Մարմնի եւ Արեան օր ըստ օրէ ճաշակումը։ Իսկ դու Հեղգում եւ յապաղում ես Հաղորդ լինելու Քրիստոսին Իր Մարմնի Հաղորդութեամբ՝ մեղքերի առիթ պատճառելով եւ, մարմնի դոյզն—ինչ Հեշտութեամբ, ծուլանում ես՝ Հեռանալով Քրիստոսից։ Զգիտե՞ս, որ ինչ չափով յապաղում ենք մարմնի Հեշտութեան մէջ, օտարանում ենք Աստծուց՝ չգիտակցելով մեր Հոգիների կործանումը։

Այս արեգակն իր զգալի ճառագայթներով մաքրում է աղտեղութիւնը, ցամաքեցնում ժաՀաՀոտութիւնը եւ լուսաւորում մթնած օդը։ Եւ դու Տիրոջ Մարմնին եւ Արեանը, որ իմանալի արդար Արեգակի ճառագայթներն են, չե՞ս Հաւատում, թէ կարո՛ղ է քեզ մաքրել։ Ջուրը լուանում է կեղտը եւ սրբում. Հուրը բաժանում է ժանգը երկաթից ու վերստին նորոգում, իսկ դու չե՞ս վստաՀում, թէ Աստուծոյ Որդու Մարմինն ու Արիւնը կարող է նորոգել քեզ մեղքերի Հնութիւնից։ Ասում ես՝ մեղաւոր եմ, իսկ ե՞րբ պիտի արդարացուես։ Առանց խոստովանութեան մեղքը չի քաււում, եւ առանց ապաշխարութեան ոչ ոք Հաղորդութեան արժանի չի լինում։ Այս պատճառո՛վ եմ մանաւանդ ասում Հաղորդուել, որպէսզի զղջաս, խոստովանուես եւ ատես մեղքերը, որպէսզի ապաշխարես եւ քաւես յանցանքները, որպէսզի մարմինդ Քրիստոսից առաւել չսիրես եւ յուսաՀատութեամբ չկորչես. «Ասա՛ դու քո մեղքերը, որպէսզի արդարացուես» [տե՛ս Եսայի ԽԳ 26], եւ ո՛չ թէ կփրկուես Հեշտութեանդ մէջ յապաղելով։ Ծուլութեամբ եւ Հեղգութեամբ մեղքերը չեն քաււում, եւ յուսաՀատութեամբ թողութիւն չի՛ լինում, եւ ով որ անարժանաբար է Հաղորդում, [այն] դատապարտութիւն է իր անձի համար եւ ո՛չ թէ փրկութիւն։ Եւ երբ որեւէ մէկն իրեն Հաղորդութեան արժանի է կարծում, այնժամ առաւել անարժան է։ Սակայն որքան կարողութիւն կայ, պէտք է ջանալ եւ անձը մաքրել մեղքերից եւ զղջմամբ ու յոյսով Հաղորդուել, որպէսզի դիւրորսալի չլինենք սատանայի [Համար]։

Քանզի որքան որեւէ մէկն ուշանում է Հաղորդութիւնից, դեւերն ուրախանում են, որովՀետեւ նրանց Համար դիւրորսալի է փրկական խորՀուրդից Հեռացածը։ Իսկ երբ որեւէ մէկը Հաղորդում է, զարՀուրում են ու խոյս տալիս եւ առաւել Հեռու փախչում, որովՀետեւ նրանում իրենց տեղ չեն գտնում։ Քանզի նա, ով Քրիստոսի տաճար է լինում, նրանում դեւերին մեՀեան չի՛ յաջողում ստեղծել։

Ուստի աղաչում եմ ամենքին եւ Հայցում, որ յորդորուեն Աստուծոյ երկիւղի ու սիրոյ փափագով, որպէսզի ոչ ոք բնաւ անարժանաբար չՀաղորդուի եւ չբարկացնի Աստծուն եւ կամ յուսաՀատութեամբ չՀեռանայ եւ կորստեան չմատնուի, այլ այս երկու ծայրաՀեղութիւններից էլ խուսափի՝ թէ՛ անառակաբար խիզախելուց եւ թէ՛ Հեղգութեամբ եւ յուսաՀատութեամբ յապաղելուց ու Հեռանալուց։

Եւ այս ամէնն անուսումնութիւնից եւ անառաջնորդութիւնից է լինում [այնտեղ], ուր Հօտի Հովիւները Հոգ չեն տանում, որի պատճառով Քրիստոսի Հօտը շրջում է անտերունչ եւ մոլորական՝ թափուր եւ ունայն Հոգեւոր մշակութիւնից։ Եւ տգիտութիւն ու ամայութիւն է տարածւում աշխարՀում, եւ ամէն ոք ընթանում է ըստ [իր] քմաՀաճութեան եւ կամակոր վարքի։

Տէրն ասաց Պետրոսին եւ նրա միջոցով, ինչպէս ասացինք՝ բոլոր առաջնորդներին. «Արածեցրո՛ւ Իմ ոչխարներին, որոնց Համար Հեղեցի Իմ Արիւնը եւ փրկեցի եւ ձեզ յանձնարարեցի բարուք Հովուել, որպէսզի ոչ ոք չկորչի» [տե՛ս Յովհ. ԻԱ 15—18]։ Եւ ասում է մարգարէի միջոցով. «Մարդո՛ւ որդի, վերակացու կարգեցի քեզ Իմ ժողովրդի վրայ, եթէ տեսնես սուրն անօրէնին մերձեցած եւ չյանդիմանես նրան, անօրէնը կմեռնի իր անօրէնութեան մէջ, իսկ նրա արիւնը քեզանից կպահանջեմ» [տե՛ս Եզեկ. Գ 17—18]։

Լսէ՛ք, Հովիւնե՛ր, լսէ՛ք եւ երկնչէ՛ք եւ առաւե՛լ զարՀուրէք եւ ողբացէ՛ք

ահ ու դողով։ Քանզի հովիւ կոչուեցիք ոչ թէ որպէսզի ձեր անձերն արածեցնէք եւ ջորիներով ու աչքի ընկնող երիվարներով շրջէք աշխարհում եւ մարմնական փառքով ճոխանաք ու յիմարաբար մեղկանաք զգեստներով, այլ՝ որպէսզի Տիրոջ ժողովուրդը հովուէք, բանաւոր խաշներն արածեցնէք, բանական գառներին խնամէք եւ այծերին ոչխարների փոխարկէք, որպէսզի միշտ խօսքով վարդապետէք եւ նոյնը գործով կատարէք՝ [սեփական] անձի մաքրութեամբ բոլոր բարիքների օրինակը տալով հօտին եւ բարի նախանձով յորդորելով բոլորին։ Քանզի ում շատ գիտութիւն տրուեց, նրանից շատ առաքինութիւններ կպահանջուեն։ Եւ ում տրուեց բանական հօտի մեծ վերակացութիւն, նրանից առաւել եւս կպահանջուի ուղիղ վարք եւ ժողովրդի խնամակալութիւն։

Իսկ դուք, այս բարձրագոյն շնորհը թողնելով, հետեւում էք անպիտան գործերի եւ մարմնական հոգսերի էք տրում, անբան կենդանիների էք խնամում եւ զգալի հողը կակղեցնում։ Եւ ինչպէ՞ս թողութիւն ու ներում կստանաք կամ ի՞նչ պատասխանի արժանի կհամարէք ձեր անձերը՝ միշտ փառքի եւ հեշտութիւնների մասին հոգալով։ Երկու դահեկան աւանդեց ձեզ մեր Տէր Քրիստոս՝ Հին եւ Նոր Կտակարանները, որպէսզի նրանցով դարմանէք աւազակների ձեռքն ընկած եւ կիսամահ եղած քանական ոչխարներին։

Իսկ դուք, այս աստուածային առաջարկութիւնը թողնելով, ընթանում էք ոչնչի ետեւից՝ կաթ ուտելով, բուրդ հագնելով, եւ վիրաստուածին բժշկութեան արժանի չէք համարում, այլ կերեքում էք՝ կրկնակի կսկիծ պատճառելով։ Եւ, որ պարտաւոր էիք բարի օրինակ լինել, գայթակղութեան պատճառ էք լինում եւ կործանում ձեր անձերն ու ձեր ձեռքի տակ գտնուողներին։ Եւ ով անհոգ է իր անձի կորստեան հանդէպ, ինչպէ՞ս կարող է հոգ տանել այլոց փրկութեան համար։

Ո՛վ [դուք], Քրիստոսի հօտի հովիտնե՛ր եւ խնամակալներ, չէ՞ք լսել Սողոմոնի ասածը. «Հզօրները զօրաւոր Դատաստան կընդունեն,— ասում է,— իսկ խառնիճաղանճը ներելի ողորմութեանը կարժանանայ» [տե՛ս Իմաստ. Զ 7]։ Քանզի առաջնորդներն ու վերակացուները ոչ միայն իրենց անձերի, այլեւ իրենց հնազանդուողների սխալների համար պատուհասների պատիժներ պիտի հատուցեն։ Նաեւ՝ այն [խախտման համար], որ բոլոր սխալներից մեծ է եւ երկու կողմից էլ առաւել դատապարտութեան արժանի, քանզի շտապելով ձեռնադրում էք տգէտներին եւ նրանց, ում վարքուբարքին անտեղեակ էք՝ առաքեալի [խօսքին] հակառակ գինելով, եւ կցորդ էք լինում այլոց մեղքերին։ Էլ չեմ ասում սիմոնեան ախտով ախտանալու մասին, քանզի, նրանց վարքին տեղեակ, թէ անտեղեակ լինելով, երկուսով պատժւում էք եւ երկու կողմով դատապարտւում։ «Խոտան կհամարուեն,— ասում է,— արծաթով ընտրուածները» [տե՛ս Սաղմ. ԿԷ 30], եւ ովքեր ազահութեան կամ փառքի համար կաշառք տան, կդատուեն. թէ՛ տուողները եւ թէ՛ վերցնողները։

Եթէ, մամոնայ ստանալով, ձեռնադրեցիր մէկին՝ յուդայեան եւ սիմոնեան ախտով ախտացար ի դատապարտութիւն անձանց, քանզի, Աստուծոյ պարգեւը վաճառքի տակ դնելով, արժանիներին զրկեցիք շնորհներից եւ անարժաններին պատուեցիք։ Եւ դարձեալ՝ թէեւ ոչինչ չվերցրեցիր, բայց ձեռնադրեցիր անարժան մէկին, պատուհասի կրկնակի պատիժներ կլինեն, քանզի թէեւ ազահութեան պատճառով չխաբուեցիր, սակայն անմտօրէն շտապեցիր՝ շնորհներն անարժաններին տալով։

Զգուշացէ՛ք, ուրեմն, հովիտնե՛ր, զգաստացէ՛ք եւ աչալո՛ւրջ եղէք ձեր գործում միշտ ձգտելով աստուածասէր եւ անարծաթասէր լինել։ Քանզի, ինչպէս ասում է իմաստունը. «Ձեն օգնի ունեցուածքները մեծ Ատեանի առաջ», այլ միայն արդարակշիռ լինելն է փրկութիւն շնորհում յաւիտենական մահուանից։

Զարթնէ՛ք, զարթնէ՛ք եւ առաւել ե՛ւս զգաստացէք, որպէսզի չլսէք Տիրոջից այն սոսկալի խօսքը, թէ՝ «Ահաւասիկ Ես հովիտներիդ վրայ եմ եւ դատաստանով կդատեմ ձեզ» [տե՛ս Եզեկ. ԼԴ 10, Երեմ. ԻԳ 2, Զաք. Ժ 3]։ Եւ թէ՝ «Որթնած փայտն ուրիշ բանի պիտանի չէ բացի հրում այրուելուց» [տե՛ս Առակ ԺԲ 4, ԻԵ 20, Ամբակ. Բ 11]։ Եւ թէ՝ «Երբ աղն անհամանայ, դուրս կնետուի եւ ոտնակոխ կարուի ամենքի կողմից» [տե՛ս Մատթ. Ե 13]։ Եւ թէ՝ «Անօրինութիւնը ծերերից դուրս եկաւ, եւ թիւրութիւնը՝ քահանաներից» [տե՛ս Բ Մնաց. ԼԶ 11, Նեեմ. Թ 34, Եսայի ԻԶ 7]։ Եւ դարձեալ՝ «Առաջնորդները միաբանուեցին չարիքի մէջ ընդդէմ Տիրոջ եւ Նրա Օծեալի, եւ այդ պատճառով Տէրը կբարկանայ, եւ կկորչէք յաւիտենական յոյսից» [տե՛ս Սաղմ. Բ 2–4]։ Քանզի, եթէ միայն այս կեանքի վրայ է մէկը յոյս դնում, ողորմելի եւ անյոյս կորչում է, ինչպէս առաքեալն է ասում, եւ լսում է Տիրոջից, թէ՝ «Ձեր բարիքները ստացաք անցաւոր կեանքով որպէս լրումն ձեր կամքի» [տե՛ս Ղուկ. ԺԶ 25]։ Սրանք, արդարեւ, վայի են արժանի՝ ըստ Տիրոջ խօսքի։

Սակայն վա՛յ ինձ, որ եղկելի եմ եւ ես, քանզի անձամբ դատապարտեցի ինձ՝ այլոց խրատելով, իսկ ինձ՝ ոչ։ Այլոց նախատելով ես մշտապէս նոյնն եմ անում։ Ուրիշի աչքի շիւղը տեսայ, իսկ իմ առաւել մեծ գերանը ենշմարեցի, դատեցի այլոց, իսկ իմ անձը բարու մէջ երբէք չկրթեցի։

Բայց թէպէտ եւ իրօք առաւել եղկելի ենք, քան ամէն ոք, այսուհանդերձ, որքան որ կարողութիւն ունենք, պարտաւոր ենք խօսքի արծաթը տալ սեղանաւորին, որպէսզի չդատուենք որպէս քանքարը թաքցնող, քանզի ժա-

մը մերձեցել է, եւ Դատաստանը Տիրոջ տանից է սկսուելու։ Այսինքն՝ երէցներից կսկսուի՝ առաջնորդներից, վերակացուներից, գիտուններից եւ իմաստուններից, թագաւորներից, դատաւորներից եւ խօսքով ու գործերով մեծամեծներից։

Ուստի աղաչում եմ բոլորին եւ, ընդհակառակը, պաղատում Տիրո՛ջը զառանք ամենայն յօժարութեամբ, հեզութեան եւ խոնարհութեան սիրով, որպէսզի Տէրը դէպի մեզ զառնայ գթութեամբ եւ ողորմութեամբ։ Հանապազ երկարաձիգ աղօթքներով փութա՛նք առ Նա եւ Նրա բարեհաճութի՛ւնը խնդրենք պատեհ ժամին։ Քանզի մեծ է առ Աստուած հոգեւոր աղաչանքների եւ յարաժամ աղօթքների [նշանակութիւնը], եւ մեծ շնորհի են արժանացնում մարդու, երբ լինեն սուրբ սրտից եւ խոնարհ հոգով։

Եւ քանզի յարաժամ աղօթքի փութալը տէրունական պատուէր է միշտ եւ անդադար [պէտք] է աղօթել Նրան։ Քանզի, թէպէտ այլ առաքինութիւնների համար չափ եւ սահման ունենք, այսինքն՝ պահոց պնդութիւնն ու մարմնի ճնշումն ըստ կարողութեան են, իսկ ողորմութիւնը՝ ըստ ունեցուածքի եւ ժամանակի [պատշաճութեան], սակայն աղօթքի պտուղն Աստուած պահանջում է ամէն ժամ եւ ամէն տարիքում ու դիպուածում։

Աղօթքը բարի սնդակիցն է մանուկների համար եւ պահապան դրսում ու ներսում, երիտասարդների գործակից է, ծերերի հաստատութեան յոյս, քահանաների պարծանքի պսակ, ժողովուրդների ամրութեան պարիսպ, զինուորների փրկութեան վահան, թագաւորների ցնծութիւն, իշխանների արդարութիւն, դատաւորների զգաստութիւն։ Ծգնաւորների մարտակից է եւ կոյսերի կառավարութիւն, սգաւորների սփոփանք, բերկրեալների հրճուանք, նեղեալների անդորրութիւն ու խաղաղացանների զգուշութիւն։ Այրերի գործակից է եւ կանանց տնակից, ճանապարհորդների ուղեկից եւ նաւորդների առաջնորդութիւն, առողջների խնդութիւն եւ հիւանդների մխիթարութիւն, մեղաւորների քաւութիւն եւ արդարների խնդութիւն, ննջեցեալների կեանքի պաշար ու բարիքների յոյս։

Եւ ի՞նչ եւս ներբողեմ աղօթքի արդիւնաւորութեանը, քանզի հրեշտակներին դասակից է դարձնում, սուրբերին՝ քաղաքակից եւ սերովբէներին՝ կաճառակից։ Մարդուն դարձնում է Աստուծոյ տաճար եւ Երրորդութեան օթեան։ «Ուր երկու կամ երեք հոգի հաւաքւում են Իմ անունով,— ասում է Տէրը,— Ես այնտեղ նրանց մէջ եմ» [տե՛ս Մատթ. ԺԸ 20]։ Եւ դարձեալ՝ «Ով պահում է իմ Խօսքը, Ես եւ Հայրս կգանք նրա մօտ Սուրբ Հոգու հետ եւ նրա մօտ կօթեւանենք» [տե՛ս Յովհ. ԺԴ 23]։

Տե՛ս առաջին արդար հայրերին եւ աղօթքո՛վ Աստծուն հաճոյացած կգտնես նրանց. թէ առաջին արդար Աբէլին մտաբերես, նախ աղօթքո՛վ

արդարացած [կտեսնես] եւ ապա՝ ընդունելի պատարագն Աստծուն մատուցելիս, Սէթը, Ենովսը, Ենովքը, Նոյը, Աբրահամը, Իսահակը, Յակոբը, Մելքիսեդեկը, Մովսէսը եւ Ահարոնը՝ սրանք բոլորն էլ այլ բարի գործերի հետ նաեւ աղօթքո՛վ միշտ հաճելի եղան Աստծուն։

Դաւիթն աղօթքով ոչ միայն ազատւում էր Ուրիայի [հանդէպ գործած] մեղքից, այլեւ մարգարէական շնորհը պահում իր մէջ։ «Յոգնեցի,— ասում է,— իմ հեծութիւններով, ամէն գիշեր լուացի իմ մահիճը եւ իմ արտասուքներով անկողինս թրջեցի» [Սաղմ. Զ 7]։ Առաքեալների գլուխ Պետրոսը որպէս երեք ուրացութիւնների դեղ եւ սպեղանի յատկապէս աղօթքն էր համարում. «Դառնապէս լաց եղաւ,— ասում է,— եւ այնքան սաստիկ, մինչեւ որ արցունքների հետ արիւն կաթեց» [տե՛ս Մատթ. ԻԶ 75, Մարկ. ԺԴ 72, Ղուկ. ԻԲ 62]։

Մաքսաւորն աղօթքներով արդարացաւ եւ փարիսեցուց բարձր համարուեց։ Պոռնիկ կինն աղօթքո՛վ ընդունեց բազում մեղքերի թողութիւն եւ ապրեց հոգով. «Քո հաւատքը փրկեց քեզ,— ասաց Տէրը,— աղօթքի միջոցով» [տե՛ս Ղուկ. Ը 37, 48]։ Աւազակը մի խօսքով ճանաչեց [իր] մեղքերը, Քրիստոսից յիշուել հայցեց եւ դրախտի ժառանգորդ եղաւ։ Նաեւ եղկելի Յուդան, եթէ ճշմարտապէս ապաւինէր աղօթքին, թերեւս այնպէս չմատնուէր կորստեան։

Առաքեալներն աղօթքո՛վ հանդիսացան*, մարգարէները հրաշքներ գործեցին, մարտիրոսները պսակների արժանացան եւ հայրապետներն ահեղ գործեր ցոյց տուեցին։ Պօղոսն ու Եիղան աղօթքով բանտի հիմքերը շարժեցին [տե՛ս Գործք ԺԶ 25–26], եւ Պետրոսը զարմանալի անօթը տեսաւ իջած [տե՛ս Գործք 11], Եղիան երկնքից հուր իջեցրեց [տե՛ս Գ Թագ. 18–38] եւ յարութիւն տուեց մեռեալին [տե՛ս Գ Թագ. ԺԷ 17–24], Եղիսէն իր ուսուցչի նման [հրաշքներ] գործեց եւ դեռ աւելին. Երիքովի ջուրը բժշկեց [տե՛ս Դ Թագ. Բ 19–22], ասորի իշխանին մաքրեց [տե՛ս Դ Թագ. Ե 1–4], Գէեզի գողին տանջեց [տե՛ս Դ Թագ. Ե 20–27], փայտով երկաթը ջրից դուրս հանեց՝ Խաչի զօրութիւնն օրինակելով [տե՛ս Դ Թագ. Զ 1–6], ասորիների զունդը կուրութեամբ կապեց՝ Բելիարի եւ նրա դեւերի նման [տե՛ս Դ Թագ. Զ 11–19]։

Ստեփանոս նախասարկաւագն ու առաջին վկան աղօթքով ոչ միայն նշաններ եւ արուեստներ գործեց, այլեւ բացեց երկինքը եւ տեսաւ Որդուն

---

* հանդիսանալ— առաքինանալ, ճգնել, նահատակուել, անմեղեր եւ անձնուրաց պայքար մղել

Հօր աջ կողմում իր Հոգին ընդմիշտ Նրան յանձնելով [տե՛ս Գործք Զ 8, է 55–56]։ Եւ Յիսուս՝ աղօթքներին անկարօտն ու բոլորի աղաչանքներն ընդունողը, աղօթքով Հանդիսացաւ, որպէսզի յորդորի մեզ միշտ եւ յարաժամ սուրբ աղօթքի մէջ անձանձիր մնալու սիրով։

Աղօթքն ամրութեան պարիսպ է, Հաստատութեան սիւն, հաւատքի հիմք, յոյսի խարիսխ, առ Աստուած ելնելու սանդուղք։ Աղօթքը պարծանքների պակ է, փրկութեան պատճառ, բարիքների առիթ, համբերութեան մարզիչ, աստուածպաշտութեան ծանօթութիւն, Սուրբ Հոգուն հրաւիրող, ինչպէս վկայում է աղօթքով այս [ամէնը] գտած եւ պայծառացած Կոռնելիոսը [տե՛ս Գործք Ժ 1–33]։ Աղօթքը սանդարամետական դեւերի հալածիչ է, Բելիարին Չախչախող [տե՛ս Դատ. Ի 13], բանսարկուին կործանող, նրա բոլոր արկածները խափանող եւ կորստեան ամօթ։ Եւ քանի որ սատանան գիտի, որ մարդն աղօթելիս շնորհ է ստանում Աստծուց, ուստի Չանում է աղօթքի ժամին ցնորել մարդկանց մտքերը, որպէսզի զրկի շնորհներից, որոնք մարդ ստանում է մաքուր մտքով աղօթելիս։

Ուստի եւ մենք, այս իմանալով, նրան հակառակ հանապազ Չանանք անդադար մնալ աղօթքում։ Եւ այն ժամին մեր սրտերը մաքրենք չարի բոլոր արկածներից եւ միշտ աղօթենք սատանայ բարկութիւնն եւ երկմտութիւնն։ Եւ մանաւանդ պատանայ աղօթենք խշնամիների համար, որպէսզի մեր ապաչանքն էլ ընդունելի լինի Աստուծոյ մօտ։ Եւ յատկապէս աղօթքի ժամին մեր հոգիներում ընդունենք Քրիստոսի սիրոյ հուրը՝ յարատեւ պատգամներով արթուն լինելով Նրա առջեւ, առօրեայ հոգսերը թեթեւ համարելով յանուն մշանջենաւոր բարիքների վայելքի։

Արթնայնենք մեր միտքը՝ ամէն ժամ հաճոյ լինելու Աստուծոյ կամքին, եւ առաքինասէր վարքո՛վ դաստիարակենք մեր անձերը։ Չնայենք միայն առօրեային, այլ միշտ յաւիտենականը ցանկանք եւ այնտեղի կեանքը մշտապէս պտղաբերենք։ Այս կեանքը վաճառական է, եւ ինչ վաստակների գործեր, որ մէկն այստեղ վաճառում է որպէս իր Հոգու ծնունդ, նոյնն էլ գտնում է Հանդերձեալում պատրաստուած իր անձի համար՝ թէ՛ բարին եւ թէ՛ չարը։ Եկանք աշխարհ եւ գնում ենք աշխարհից, բայց մեր ետեւից [մեր] գործերն են լինելու, եւ պիտի մոռացուենք այս աշխարհից, եւ միայն Հանդերձեալի Հոգին է նորոգում։

Մէկը սերմանեց մարմնի մէջ եւ հեշտացաւ մարմնական վայելքներով, փառքին հետեւեց, ծառայեց ինչքին եւ ունեցուածքին, հեղգութեամբ եւ պարապութեամբ կեանքն անցկացրեց՝ որովայնով շուայտանալով եւ մտքով միշտ թափառելով։ Ամէն ինչ անցաւ, ապականութիւն եւ ոչինչ դարձաւ, իսկ պատուհասի պատիժները կան եւ մնում են յաւիտեան. բոցակէզ հուրը

եւ եռացող որդը, տարտարոսն ու յոյժ սարսափելի խաւարը։ Իսկ եթէ որեւէ մէկը զրկեց կամ գողացաւ, խաբեց կամ յափշտակեց, բազմապատիկ տոկոսներով կհատուցի, քանզի, [բարի] գործերից սպառուելով, հաւատքից եւս կվրիպի։

Ի՞նչ ասեմ չարակնողների, նախանձոտների եւ ատողների, [չարիք] հրահրողների եւ վրիժառուների մասին, որոնք անտանելի աղէտների են արժանանում։ Քանզի բոլոր գործերը յառնելու են համընդհանուր Յարութեանը՝ թէ՛ բարի եւ թէ՛ չար։ Եւ գործողներն ստանալու են ըստ արժանւոյն, ոմանք՝ պատիժ, եւ ոմանք՝ պակ։

Եւ այնժամ այնտեղ մեծ վիշտ ու սոսկալի վտանգ է լինելու։ Քանզի բաժանուելու են միմեանցից հայրերն ու որդիները, եւ անջատուելու են հարազատ եղբայրները, եւ յոյժ հեռացուելու են մտերիմները, եւ սննդակիցները՝ զատուելու։ Քանզի եղբայրը եղբօրը չի փրկի, եւ ոչ էլ հայրը՝ իր ծնած որդուն, եւ ոչ ոք չի կարող օգնել իրեն հարազատ անձին, քանզի Դատաւորն անաչառ է, եւ Դատաստանն՝ իրաւացի։

Այնտեղ սաստիկ ողբեր կլինեն, անբաւ աղաղակ կտիրի, եւ կլսուեն զատապարտուած անձանց յոյժ ողորմագին ձայներ։ Քանզի մէկը կմատնուի գեհենի հրին, մէկը կդատապարտուի տարտարոսի, մէկ ուրիշը հրեղէն որդների կեր կլինի, միաբ միշտ կտանջուի հրեղէն սրով։ Եւ ամենքին կհատուցուի ըստ իրենց արժանի չափի, քանզի ահաւոր է այն Ատեանը, ահեղ եւ զարհուրելի է հրապարակը, եւ անաչառ՝ գործերի քննութիւնը։ Թագաւորներից չի աչառում եւ քահանաներից չի հարկադրում, մեծամեծերին պատիւ չի տալիս եւ ծերերի ալեհերութեամբ չի մեղմանում։ Ովքեր ողորմութիւն չեն գործել, այնտեղ էլ ողորմութիւն չեն գտնում։ Ովքեր առաւել սիրեցին արծաթը, քան Քրիստոսին, եւ զարդարեցին ձիերին, ջորիներին ու շներին, իսկ աղքատներին անտեսեցին, այնտեղ կդատուեն Քրիստոսի կողմից եւ կայրուեն գեհենի հրում։ Եւ միայն արդարները կպսակուեն Աստուծոյ արքայութեան մէջ, որին եւ մենք բոլորս արժանանանք Քրիստոսի շնորհներով, որ օրհնեալ է Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՆԱՆԻԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՅՈՑ ԲԱՆ ՀԱԿԱՃԱՌՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲՆԱԿԱՑ, ՁՈՐ ԳՐԵԱՑ ՀՐԱՄԱՆԱՒ ՏԵԱՌՆ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅՈՑ ՎԵՐԱԴԻՏՈՂԻ

(շարունակութիւն)

Եւ արդ, լո՛ւր Պօղոսի, որ գրէ առ Հռովմայեցիսն վասն հաւատոցն Աբրահամու, որ է հիմն հաւատոյ մեր ամենեցուն՝ ցուցանելով, թէ անհնարին եւ անյուսալի իրաց հաւատոց, ըստ այնմ, թէ՝ «Անյոյսն յուսով հաւատաց լինել նմա հայր ազգաց բազմաց»[ա] ոչ իւրոց ծննդոց, այլ՝ օտարաց ազգաց, զոր չէր ծնեալ, որ անհնարին էր մարդոյ իմանալ զորպիսութիւն: Եւ դարձաւ զմեզ ի նոյն յորդորեաց, զի եւ մերս դժուարին էր հաւատալ քան նորայն, թէ Աստուծոյ անմահ բնութիւն վասն մեր փրկութեան հնարի մեռանիլ, որ թուի անհնարին եւ անհաւատալի մարդկան, որպէս դուքդ ոչ կարէք հաւատալ: Զի թէ մարդ մեռաւ, զի՞նչ դժուարին է զայդ իմանալ, յայդմ չեն պետք հաւատոց, զի զոր տեսանէ մարդ, զի՞նչ պետք են հաւատոց, զի զայդ միշտ տեսանեմք մեռեալ զմարդիկ: Եւ յայդ[156] հաւատալ, թէ մեռաւ, եւ զայդ հաւատդ ընդ Աբրահամու համեմատել, որ անյուսալի իրաց հաւատաց, ո՞չ ահա աղճատանք են: Ապա թէ յայն հաւատամք, որ մեռաւ վասն մեղաց մերոց, զի թէ նա մարդ է, զիւր պարտիսն միայն վճարէ, որ յԱդամայ[157] ունի, զի ամենայն մարդ Ադամայ ծնունդ է, ապա եթէ եւ ոչ

ա Հռովմ. Դ 18

մարդ է: Արդ, թէ ինքն մահկանացու մարդ է, ո՞չ ահա զիւր պարտքն միայն կարէ վճարել, զի թէ մահկանացու է ըստ ձեզ, ապա զիւր մահն միայն վճարեաց, քանզի մի անգամ մեռաւ նա: Զմեր զո՞ր պարտս վճարէ, զի այլ ոչ մեռանի, եւ մահ նմա ոչ եւս տիրէ, եւ թէ մեզ հաւատալ յայնպիսի, որ մեռաւ վասն մեղաց մերոց եւ յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ: Եւ այն, որ մեռաւն, մարդ է, ո՞չ ահա մարդապաշտք եմք, եւ հաւատք մեր ի[158] մարդ է մահկանացու, ապա կորեաւ յոյս մեր, իսկ եթէ յանմահ Աստուած հաւատամք, զի՞նչ պետք են այդր հաւատալ, զի ի սկզբանէ էր այդ հաւատ ի մարդիկ, թէ Աստուած անմահ է, զայդ եւ ոչ հեթանոսք ուրանան: Եւ այս զի՞նչ հաւատոյ գործ է, թէ՝ հաւատամք, թէ մարդ է, եւ անասունն անասուն[159] է, եւ քարն՝ քար. ո՞չ ահա այդ հաւատ յիմարութեան է: Եւ արդ, զի՞նչ պետք են հաւատալ, թէ Աստուած անմահ է եւ ոչ մեռանի, զի առաքեալ զհաւատոց գործ ուսուցանէ մեզ, ասէ. «Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ՝ յուսացելոց իրաց հաստատութիւն եւ յանդիմանութիւն այնոցիկ, որ ոչ երեւին»[ա]: Որպէս Նոյ վասն չեւ եւս երեւելեացն հաւատաց, եւ ապրեցան հաւատովքն, եւ նոյն ընկերք իւր անհաւատութեամբն կորեան. ո՞չ ահա անյուսալի իրաց են պետք հաւատոց: Արդ, զայս հաւատալ թէ Աստուած եւ մարդն շարայարեցան ի միմեանս, եւ մարդն՝ մարդ, եւ Աստուածն՝ Աստուած, եւ մարդն քաղցնու եւ ծարաւի եւ աշխատի եւ ննջէ եւ անարգի եւ չարչարի եւ մեռանի, եւ Աստուած անկարօտ, անչարչարելի եւ անմահ մնա160 ի բնութիւն: Եւ զայդ ո՞վ ոք ոչ իմանա[161], թէ երկուք են, եւ մինն՝ մարդ, եւ մինն՝ Աստուած, եւ մարդն կրէր ի կրից մարմնոյն, եւ Աստուած անկրելի մնայ ի կրից մարմնոյ: Եւ եթէ այդպէս է, զի՞նչ պետք են հաւատոց, զի այդ ամենեցուն յայտնի է: Եւ ընդէ՞ր այնչափ ժամանակս Աստուած յառաջագոյն կրթէր զմեզ օրինօք եւ օրինակօք եւ մարգարէիւք ածել զմեզ ի հաւատս ճշմարիտս, եթէ զայդ կամէր պահանջել ի մենք Աստուած, թէ՝ իմացե՛ք, զի մարդն է մահկանացու եւ չարչարելի եւ ընդ կարեօք մարմնոյ հարկեալ, եւ Աստուած անչարչարելի եւ անմահ եւ յամենայն[162] կարեաց ազատ: Ահա զայդ գիտեաք[163] ի սկզբանէ, եւ զոր գիտէաք, զի՞նչ պետք էր զնա հաւատովք ուսանել: Ահաւադիկ հաւատք յայդոսիկ մեռեալ եւ անպտուղ են: Եւ թէ[164] Աստուած բանիւ չէր մեզ ուսուցել եւ օրինակօք[165] նկարագրել, թերեւս պատճառս ունէաք յոչ հաւատալն: Ապա եթէ ուսոյց մարգարէիք եւ նկարագրեց օրինօք, ընդէ՞ր ոչ հաւատամք: Եւ արդ, սկըսցուք յառաջին օրինակէն, զոր առաքեալ ուսուցանէ մեզ, թէ՝ «Որպէս ի միոջէ մարդոյն մեղք յաշխարհս մտին, եւ ի մեղաց անտի՝ մահ, որով ամենեքեան մեռան»[բ]: Եւ դիմադրէ, թէ միոյն յանցանօքն բազումք մեռան, որչափ եւս առաւել շնորհօք պարգեւեաց միոյն Յիսուսի Քրիստոսի ի բազումս առաւելսն[գ]: Արդ, շնորհք[166] մարդո՞յ է, թէ՞ Աստուծոյ: Դարձեալ

ա Հռովմ. ԺԱ 1
բ Հռովմ. Ե 12
գ Հռովմ. Ե 15

ասէ, թէ՝ «Միոյն յանցանօք մահ թագաւորեաց, որչափ եւս առաւել միոյն արդարութեամբն շնորհք թագաւորեսցեն ի կեանս յաւիտենից»[ա]: Արդ, շնորհս այս մարդո՞ւ[167] թագաւորեցին ի մեզ..թէ՞ յԱստուծոյ, քանզի ասէ թէ միոյն յանցանօք բազումք մեռան, որչափ եւս առաւել շնորհօքն Աստուծոյ եւ պարգեւօք շնորհաց միոյն մարդոյն Յիսուսի Քրիստոսի ի բազումս առաւելաւ: Ո՞չ ահա, զոր Աստուծոյն ասաց պարգեւս, զնոյն կոչեաց շնորհք Յիսուսի Քրիստոսի: Եւ դարձեալ ասէ. «Յորոց հարքն, յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս»[բ]: Տե՛ս, զնոյն Քրիստոս Աստուած կոչէ եւ ոչ ի յերկուս բաժանէ, այլ անխտիր ասէ նոյն Աստուած, զնոյն Քրիստոս, զնոյն Յիսուս, զնոյն խաչ ելեալ: Եւ դու ուստի՞ ուսար զերկուսդ: Եւ արդ, գիտ անուն մարդոյն, որ զնոյն Աստուած ոչ ասէ առաքեալ: Դարձեալ լո՛ւր նմին՝ զիարդ զկերպարանս Հօր, ասէ, խաչիլ, զայս խորհեսցի՛ր. զի «որ ի կերպարանս Հօր էր, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ լինել հաւասար Հօր, այլ զանձն ունայնացոյց եւ հնազանդեցաւ Հօր մահու չափ եւ մահու Խաչի»[գ]: Եւ եթէ այս մարդ է, զիա՞րդ է ի կերպարանս Հօր: Եւ եթէ որ ի կերպարանս Հօր էր եւ այն խաչեցաւ, զնա մարդ զիա՞րդ դաւանես, զի եթէ յայն գայթակղիս, որ ասէ. շնորհեաց նմա անուն, եւ մարդ կարծես, մի մի՛ւ[168] առ, զի մարդ եղեւ՝ եւ մեր անհնազանդութեան վախճան եղեւ եւ հնազանդեցոյց զապըստամբութիւնս մեր մինչեւ ի մահ Խաչին եւ, իբրեւ զմարդ, ընկալաւ ի Հօրէ, զի ի վեր քան զամենայն անունն, զի եւ նոյն Խաչելոյն ասաց ամենայն ծունր կրկնել երկնաւորաց եւ երկրաւորաց: Եւ զիա՞րդ մարթի մարդոյն ամենեցուն երկրպագել, ո՞չ ահա կռապաշտութիւն է, եւ եթէ Աստուծոյ է երկրպագութիւն, ո՞չ[169] ահա զնա ասաց խաչեալ: Եւ առ Տիմոթէոս գրէ, եթէ՝ «Վկայութիւն դնեմ քեզ առաջի Յիսուսի Քրիստոսի, որ վկայեաց առաջի Պոնտացոյ Պիղատոսի պահել քեզ զպատուիրանն մինչեւ ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր յիւրում ժամանակի ցուցցէ երանելին եւ միայն հզօրն, Թագաւորն թագաւորաց, որ միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ ի լոյս անմատոյց»[դ]: Ո՞չ ահա զՅիսուս Քրիստոս, ասէ, վկայեալ առաջի Պիղատոսի, եւ վկայութիւն զչարչարանսն ասէ եւ նմա ասէ ունել զանմահութիւն եւ բնակել ի լոյս անմատոյց: Եւ զիա՞րդ զնա մարդ մարթի ասել: Եւ եթէ յերկուս[170] բաժանես եւ զմարդն ասես վկայեալ եւ ի Պիղատոսէ խաչեալ, զիա՞րդ ունի նա զանմահութիւն՝ բնակեալ ի լոյս անմատոյց:

Արդ, յորժամ ասէ, թէ՝ «Մարդն Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն իւր վասն մեր»[ե] եւ ի նմին ասէ, թէ՝ «Աստուածապաշտութեամբ կեցցուք

ա Հռովմ. Ե 17
բ Հռովմ. Թ 5
գ Փիլիպ. Բ 6
դ Ա Տիմոթ. Զ 13
ե Տիտոս Բ 14

եւ ակնկալցուք յայտնութեան մեծին Աստուծոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի»[ա]: Ահաւասիկ, զոր մարդն Յիսուս կոչեաց, որ վասն մեր մեռաւ, նմին ասաց յայտնութիւն փառաց մեծին Աստուծոյ: Եւ արդ, ո՞ւր են երկուքն, զոր դու սին սիւդրայիւքդ բաժանեցեր, եւ կորեաւ քո հաւատն մարդադաւան: Արդ, յորժամ ասէ Պօղոս. «Բազում[171] մասամբ եւ օրինակօք խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր, ի վախճանի խօսեցաւ ընդ մեզ Որդւովն իւրով[172], զոր եդ ժառանգ[173] ամենայնի»[բ]: Ո՞չ ահա քաջայայտ է, զի զմարմնոյն ասէ, որով խօսեցաւն ընդ մեզ, եւ զնա ասէ, թէ եդ ժառանգ ամենայնի, եւ վասն մարդկութեան ասէ դնել ժառանգ, զի, ըստ Աստուածութեան, միշտ Հօր էր ժառանգակից[174]: Եւ թէ այլ մարդն է, եւ այլ՝ Բանն. զիա՞րդ ասէ, թէ՝ Որով զյաւիտեանսն արար. զի մարդն երեկ ծնաւ ի Կուսէն, եւ նովաւ խօսեցաւ ընդ մեզ եւ նովաւ, ասէ, արար զյաւիտեանսն: Ուրեմն զԲանն ասաց, որով խօսեցաւն ընդ մեզ եւ նոյն է փառաց եւ նկարագիր էութեան նորա: Եւ եթէ[175] այլ Բանն է, եւ այլ՝ մարդն, որ խօսեցաւ ընդ մեզ, զիա՞րդ ասէ նովաւ գոյանալ ամենեցուն եւ նոյն նկարագիր էութեան նորա, որ կրէ զամենայն բանիւ զօրութեամբ: Եւ եթէ այլ է, որ զյաւիտեանս արար, եւ նա է կրող ամենայնի, զիա՞րդ նմին ասէ, թէ Սրբութիւն մեղաց մերոց արար, զի սրբեաց զմեզ, յորժամ ի Խաչին պատարագեցաւ. որպէս ինքն ասաց, թէ՝ «Զանձն իմ սուրբ առնեմ ի վերայ ձեր»[գ], եւ առաքեալ ասէ, թէ՝ «Միով պատարագաւ կատարեաց զսրբեալսն մշտնջենաւոր»[դ]: Եւ արդ, եթէ սրբեալ զմեզ պատարագաւն ասաց որ ի Խաչին, եւ եթէ այլ է նկարագիրն Հօր, որ կրէ զամենայն, զիա՞րդ նա, պատարագեալ ի Խաչի, սրբեաց զմեզ եւ նստաւ ընդ աջմէ Հօր: Եւ արդ, ո՞ւր երեւին երկուք, զի միոյ դիմաց ասաց զամենայն. նոյն, որ խօսեցաւ ընդ մեզ, նոյն է արարիչ ամենայնի, նոյն եւ նկարագիր Հօր, որ կրէ զամենայն, եւ նոյն պատարագեալ սրբեաց զմեզ: Եւ նմին դարձեալ ասէ. «Յորժամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ[176], երկիրպագցեն նմա ամենայն հրեշտակս Աստուծոյ»[ե]: Եւ եթէ Բանն է անդրանիկն[177], զիա՞րդ ասէ՝ մուծանել յաշխարհս. զի ահա ինքն յաշխարհի էր, եւ աշխարհս նովաւ եղեւ: Եւ եթէ մարդ է, զոր յաշխարհս եմոյծ, զիա՞րդ ասէ՝ երկիրպագցեն նմա ամենայն հրեշտակքն Աստուծոյ: Մի՞թէ մարդապաշտ արար զհրեշտակս եւ արարածոյ հրամայեաց պաշտօն մատուցանել: Եւ զի մի՛ կարծիցեն մարդիկ իբրեւ զքեզ, թէ մարդ էր, զոր յաշխարհս եմոյծ, ասէ. «Աթոռ քո, Աստուա՛ծ, յաւիտեանս յաւիտենից»[զ]: Ո՞չ ահա նմին մուծելոյն յաշխարհս ասաց ունել Աթոռ յաւիտեանս յաւիտենից եւ նմին ասաց, թէ գաւազան զօրութեան արքայութեան. «Սիրեցեր զարդարութիւն եւ ատեցեր զանիրաւութիւն»: Ո՞չ

ա Տիտոս Բ 12
բ Եբր. Ա 1
գ Յովհ. ԺԷ 19
դ Եբր. Ժ 14
ե Եբր. Ա 6
զ Եբր. Ա 8

ահա ընդ միմեանս խառնէ զճառս, որ վասն մարդկութեան ընդ ճառս Աստուածութեան, զի մի՛ երկուս տեսցուք զնա, այլ՝ մի՛, զի յորժամ ճառեաց զԱստուածութենէն, թէ՝ Աթոռ քո, Աստուած, զնոյն ի մարդկութիւն փոխեաց եւ նմին ասաց ցաւազան[178]:

Եւ թէ՝ սիրեցեր զարդարութիւն, եւ եթէ վասն այնորիկ օծ զքեզ Աստուածդ Աստուած քո: Արդ, օծիլ Աստուածութեան ոչ երբէք ասի, այլ՝ մարդկութեան, եւ յայտ յաջորդացդ է, որ ասէ առաւել քան զընկերս քո: Եւ ո՞վ են ընկերք նորա, եթէ ոչ՝ մարգարէքն[179]: Արդ, տե՛ս զկարգ բանիցն միոյ դիմի ասասցէ, զի մի երկուս իմասցուք զԲանն բաժանել յիմոյ մարմնոյն, զի յորժամ զմարդկութենէն ասաց, թէ խօսեցաւ ընդ մեզ եւ զնոյն եդ ժառանգ, զնոյն ասաց Արարիչ յաւիտեանց եւ նկարագիր էութեան եւ կրօղ ամենայնի եւ զնոյն պատարագեալ եւ սրբեալ զմեզ եւ նստեալ ընդ աջմէ: Եւ յորժամ ասաց դարձեալ զմարմնոյն, թէ մուծցէ յաշխարհ այլ ասմ[ա]ց երկրպագել հրեշտակաց[180], եւ զի մի՛ մարդ կարծիցես զերկրպագեալն ի հրեշտակաց, նմին ասաց՝ Աթոռ քո, Աստուած: Եւ զի մի՛ մերկ Աստուած կարծիցես, որ յաւիտեանս ունի զԱթոռն, ասաց զնա մարդ լեալ: Ասէ՝ գաւազան ուղղութեան, եւ եթէ[181] վասն այսորիկ օծ զքեզ Աստուածդ իմ. Աստուածն իմ առաւել քան զընկերս քո: Եւ ո՞վ են ընկերք նորա, եւ ընկերք Աստուածութեան ոչ գոն, այլ՝ մարդկութեան: Կոչեաց զընկերս մարգարէսն, որք օծան հոգովն, սմին վկայէ եւ Եսայի յասելն. «Բղխեսցէ գաւազան յԵսսեա եւ հանգիցէ ի վերայ նորա հոգի իմաստութեան եւ գիտութեան եւ հանճարոյ եւ զօրութեան եւ երկիւղի Աստուծոյ»[ա]: Այս էր առաւելութիւն օծմանն քան զմարգարէիցն ընկերաց նորա, զի այս յամենայն ի մարգարէ ոչ երբէք հեղաւ, բայց՝ ի Տէր մեր, որպէս ասէ Յովհաննէս, թէ՝ «Ոչ չափով տայ Աստուած զՀոգին Որդւոց որպէս մարգարէից ընկերաց նորա, այլ՝ սաստկութեամբ լցեալ եւ ի մեզ հեղեալ, զի ի լրմանէ նորա ամենեքին ընկալաք զշնորհս Հոգւոյն, որպէս ի գլխոյ յանդամս խաղացեալ»[բ]: Ահաւասիկ նոյն Աստուած մարդ եղեալ եւ օծեալ ի Հոգւոյն: Եւ զի մի՛ կարծիցես զնա մարդ վասն համեմատելոյ ընդ մարգարէս եւ ընդունելո[յ] օծումն, ի վերայ բերէ, թէ՝ Դո՛ւ, Տէ՛ր, այդ, որ ի սկզբանէ զերկիր հաստատեցեր եւ զերկինս, դոքա մաշեսցին եւ դու մնաս յաւիտեան: Եւ զի մի՛ կարծիցես, յորժամ ասիցեմք, թէ Բանն մարմին եղեւ, եւ ամենայն մարմին փոփոխելի է, գուցէ ընդ նմին եւ Բանն յեղափոխումն ընդունի, յորժամ միացուցանեմք: Զայդ կարծիս բառնա մարգարէն՝ ասելովն. «Դու նոյն ես եւ ոչ փոփոխիս»: Եւ զիա՞րդ ոչ իմանաս յառաքելական բանիցն՝ զիարդ շարահիւսէ ընդ միմեանս զճառս Աստուածութեան եւ մարդկութեան՝ անբաժանաբար միոյ դիմի ասելով զաստուածայինս եւ զմարդկայինս եւ ոչ որոշեալ դիմաց, դու ընդէ՞ր բաժանես զմիացեալն ի մարմնի եւ բաժանիս միջոցաւ մարդոյն յԱստուածութենէ նորա: Եւ տե՛ս ըստ կարգի զբան առաքելոյն, որ

ա Եսայի ԺԱ 1
բ Յովհ. Գ 34

ցուցանէ զպատճառս մարդանալոյն եւ մեռանելոյն. «Յորժամ,— ասէ,— մանգունք հաղորդեցան արեան եւ մարմնոյն, որ առաքեալ են ի մեղս եւ ինքն կցորդ եղեւ նոցա, զի մահուամբն իւրով խափանեսցէ զայն, որ զիշխանութիւն մահու ուներ»[գ]: Եւ զիա՞րդ մարդոյ մահ կարէր խափանել զիշխանութիւն մահու, զի եւ ինքն ընդ իշխանութեամբ մահու գրաւեալ է: Ո՞չ ահա եթէ Բանն ոչ էր միացեալ ի մարմնի եւ խափանել զմահ եւ զերծուցեալ ի յերկիւղէ[182] մահու զմեզ. մարդոյ չէր հնար զայս գործեալ:

Եւ արդ, եթէ զհակառակութիւն ի բաց թողուցուք եւ կամիցիք պարզամտութեամբ ի խնդիր ելանել ճշմարտութեան, զի մի՛ կորիցուք հակառակութեամբ եւ կամ անգիտութեամբ, ուսցուք խոնարհութեամբ ի Պօղոսէ, որ անօթ էր ընդունելութեան եւ հոգւով քնէր զխորս Աստուծոյ, եւ զնա կալցուք իբր կուրաց առաջնորդ եւ հետեւեցուք բանից նորա, զի մի՛ տգիտութեամբ յանդունդս կործանիցեմք: Եւ զոր ասաց, թէ՝ «Վասն այնորիկ մարմին առ »[բ], զի ողորմած լիցի եւ հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմանէ՝ անտի առ ի բանալոյ զմեղս ժողովրդեանն: Եւ զնոյն քահանայապետ ասէ, միջնորդ Աստուծոյ եւ մարդկան, մարդն Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն վասն մեր: Եւ զի՞նչ իցէ մականունութիւն քահանայապետի, եթէ ոչ՝ զի քաւիչ է մեղուցելոյ, իսկ միջնորդ երկուց հակառակաց պիտոյ է, զի, միասին ածելով, բառնայ զթշնամութիւն եւ միացուցանէ յերկուց բաժանումն: Եւ միջնորդի գործ այն է, որ ոչ միակողմանի ջանա զճշմարտութիւն թիւրել, այլ երկոցունց ջանա ի միաբանութիւն ածել: Եւ միջնորդին պարտ է առ երկոքինն միջնորդիլ եւ ածել ի խաղաղութիւն: Եւ զի չէր ոք ի յարարածոց, որ զԱստուած տեսանել կարէր եւ զնորայսն պատմել մեզ, որպէս ասաց Յովհաննէս, թէ՝ «ԶԱստուա՛ծ ոչ ոք ետես, բայց Միածինն, որ ի ծոց Հօր, նա պատմեաց մեզ»[գ]: Եւ ոչ ոք էր, որ զմարդկան աղէտս առ Աստուած տանէր եւ բառնայր զկարիս մարդկան եւ թողոյր զմեղս նոցա, զի բարձիչ[183] մեղաց մերոցն Աստուած էր: Նմա էր պարտ միջնորդ լինել, որ կարէր բառնալ զթշնամութիւն ի միջոց, որպէս ասացինքս, եթէ՝ «Սպան զթշնամութիւն յանձին իւրում եւ եկն աւետարանեաց խաղաղութիւն»[դ] եւ արար խաղաղութիւն յերկինս եւ յերկրի, զի զկրճիւն ի միջոյ եբարձ եւ զմիջնորմ մեղաց քակեաց»[ե] եւ եղեւ շաղկապ ընդ մեզ եւ ընդ Հայր, զի ասէ[184]. «Ամենայն առն գլուխ Քրիստոս է, եւ գլուխ Քրիստոսի՝ Աստուած»[զ]:

Տեսե՞ր զբաւական[185] շաղկապն ընդ մեզ եւ ընդ Հայր, թէ որչափ հեռի միջոցաւ պարփակեալ էաք յԱստուծոյ, եւ վիհ մեծ էր մեղացն ի մէջ մեր եւ Աստուծոյ: Եւ ո՞ւմ էր հնար դարձեալ զմեզ յԱստուած միացուցանել,

ա Եբր. Բ 14
բ Եբր. Բ 17
գ Յովհ. Ա 18
դ Եփես. Բ 16
ե Եփես. Բ 14
զ Ա Կորնթ. ԺԱ 3

եթէ ոչ՝ միայն Բանին, որ եղեւ շաղկապ երկոցունց, որ ընդ Հօր էր մի եւ միացեալ ի մարմնի, զի հաստատեսցէ զմեզ ի մի նոր մարդ եւ արասցէ խաղաղութիւն եւ հաշտեցուսցէ իւրով մարմնովն[186] ընդ Աստուծոյ խաչիւն, որով սպան զթշնամութիւն դատապարտեալ զմեզս ի մարմնին եւ բեւեռեալ ընդ խաչափայտին: Եւ արդ, եթէ մարմինն է մեր[187] գլուխ, եւ մեք, իբրեւ անդամք ի նա եմք յօդեալք, զի իբրեւ ի գլխոյ յանդամս խաղայցէ կենդանութիւն հոգւոյն ի մեզ եւ յօդալք ի նմա աճեցաք զաճումն Աստուծոյ: Եւ եթէ բաժանես զմարմինն յԱստուածութենէն[188], որ գլուխն մեր է, ո՞չ ահա ամենեքեան բաժանեալ հատաք յԱստուծոյ եւ օտարացաք ի կենաց մերոց: Եւ միջնորդն հատաւ յերկուս, եւ ճեղքեալ մեր բնութիւն ի մեզ հատուածեցաւ, եւ Աստուծոյ բնութիւն՝ յԱստուած եւ ի նոյն անկաւ ի խորխորատ, որպէս էաքն մեղօք որոշեալ յԱստուծոյ, զի կապ միջոցին խզեցաւ՝ յերկուս բաժանեալ, ըստ ձեր մտածութեան, որ չէ հնար այսմ լինել: Արդ, եթէ քահանայապետ մեր նա է, որ հաւատարիմ է ի տան Աստուծոյ, որ եմք մեք տուն Աստուծոյ: Եւ քահանայապետ մեզ զնա արար Հայր որպէս ասաց առաքեալ, եթէ՝ «Ունիմք մեք քահանայապետ՝ մեծ անցեալ ընդ երկինք զՅիսուս՝ զՈրդին Աստուծոյ, պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն եւ մաքրիցուք առաջի աթոռոյ փառաց շնորհաց նորա»[ա]: Արդ, մա՞րդ է այս քահանայապետ, թէ՞ Աստուած. եթէ մարդ է, ո՞չ ահա յերկրէ է, եւ ընդէ՞ր ասէ առաքեալ, եթէ էր յերկրէ, թերեւս չէր քահանայապետ, եւ բան սոսկ ոչ կոչի քահանայապետ, եւ եթէ մարդն է քահանայապետ եւ ոչ նոյն ինքն Բանն միացեալ ի մարմնի, զիա՞րդ ասէ՝ Լինդ կալցուք զխոստովանութիւն յուսոյն եւ մատիցուք առաջի աթոռոյ փառաց շնորհաց: Եւ զիա՞րդ լինիցի մարդոյ Աթոռ փառաց: Եւ դարձեալ, եթէ՝ գտցուք զողորմութիւն: Եւ զիա՞րդ ի մարդոյ հայցեմք զողորմութիւն: Եւ դարձեալ ասէ. «Ոչ անձին ինչ շուք եդ լինել քահանայապետ»[բ189], այլ խօսեցաւ ընդ նմա, թէ՝ «Որդի իմ ես դու, այսօր ծնայ զքեզ»: Եւ նմին ասէ. «Դու ես քահանայ յաւիտեան, որ յաւուրս Խաչին յաղօթս կայր, եւ լսելի եղեւ առ լաւութեան»: Եւ վասն ո՞յր կայր յաղօթս. թէ վասն ինքեան, ահա ոչ եղեւ լսելի, զի եւ ոչ իսկ ապրեցաւ ի մահուանէ, ապա ուրեմն՝ վասն մեր կայր յաղօթս, որ եւ ապրեցաք իսկ, զի եւ ամենայն քահանայապետ վասն ժողովրդեան աղօթէ, յորժամ պատարագէ զողջակէզս:

Եւ նա յորժամ իբրեւ զքահանայապետ մատուցանէր պատարագ զմարմինն իւր որպէս, եւ սուրբ առաքելն ասաց, թէ՝ «Պարտ է ի նմա ունել, ինչ զոր մատուցանէր»[գ], այսինքն՝ զմարմինն: Ապա յայտ է, եթէ իբրեւ զզոհ փրկութեան մատուցանէր զմարմինն ի վերա սեղանոյ Խաչին անարատ Գառն Աստուծոյ, որ բառնայր զմեղս աշխարհի, եւ, իբրեւ քահանայ, մատուցանէր զաղօթս վասն փրկութեան աշխարհի եւ լսելի եղեւ առ լաւութեան: Վասն որոյ եւ ասէ. «Իբրեւ կատարեցաւ, եղեւ պատճառ փրկութեան ժառանգաւորաց իւրոց եւ կոչեցաւ քահանայապետ՝ ըստ կարգին Մելքիսեդեկի»[ա]: Արդ, այս գործ մարդո՞յ, եթէ՞ Աստուծոյ, զի եթէ[190] յերկուս բաժանես. մարդոյն[191] չէ հնար զայս ի մեզ ներգործել, եւ մերկ բանն ոչ պատարագի ի Խաչին. ապա ուրեմն՝ յայտ է, թէ միացեալ Բանն միով բնութեամբ եւ միով զօրութեամբ ներգործեաց զայս ամենայն ի մեզ: Եւ արդ, եթէ վասն առաջին մարդոյն յանցանաց եկն յաշխարհս, որպէս վկայեն Գիրք, եւ զնորայն պարտիս եբարձ եւ զմեզս ջնջեաց եւ զմահ ելոյծ: Քանզի անչափ մեղաւ Ադամ եւ անց ընդ չափ բնութեան մերոյ ոչ միայն վասն ճաշակման, այլ զի եւ անհասիցն բաղձացաւ եւ բարձրանալովն ի բարձանց հոսեցաւ եւ ընկղմեցաւ ի խորս մեղաց որպէս կապար ի ջուրս սաստիկս՝ զօրէն տապարին Եղիսէի ի յորձանսն Յորդանանու, զի չէր ումեք հնար վերաբերել զծանրացեալն մեղօք ի խորոց մեղաց, բայց միայն՝ այնմիկ, որ զամենայն ինչ վերաբերէ բանիւ զօրութեամբ իւրով, որպէս զվերաբերող փայտն, որ զծանրութիւն երկաթոյն արտաքս ձգեաց: Արդ, եկ Բանն ի բարձանց եւ եբարձ զանչափ ծանրութիւն մեղացն Ադամայ, զի արձակեսցէ զնա ի չար կապանաց մեղացն, զի փոխադրեաց զնորայն զամենայն առ ինքն եւ փոխատուեաց զիւր զշնորհս նմին, եւ թէպէտ մարգարէն ասաց, թէ՝ «Նա զմեղս մեր բառնա»[բ], բայց առաքեալ ոչ միայն ասաց բառնալ, այլ թէ՝ «Ինքն մեղք եղեւ»[գ]:Եւ պարտ է գիտել, թէ զինչ է մեղք լինելն. զի ոչ ասաց, եթէ[192] մեղաք, այլ թէ՝ մեղք եղեւ: Արդ, զայս յորինակէն ուսցուք: Ասաց Աստուած Մովսէսի, թէ՝ որ վասն մեղացն լինի զենումն, բերցէ մեղուցեալն զպատարագն ի դուռն խորանին եւ դիցէ զձեռս[193] իւր ի վերա նորա, իբրեւ այն թէ գործք մեղաց նորին եդան ի վերա անմեղ գառինն, զի գրեալ էր, եթէ անձն, որ մեղիցէ, ի նոյնն եւ մեղցի: Եւ զի մահապարտ էր մեղուցեալն, առնոյր անմեղ գառն զմեղս պարտաւորին եւ փոխանակ ընդ[194] նորա մեռանէր եւ ազատէր զմահապարտն[դ]: Եւ զենումն այն մեղք կոչի իւր, որպէս ասաց մարգարէն, թէ՝ «Զմեղս ժողովրդեանն կերիցեն քահանայքն եւ զանօրէնութիւնս նորա բարձցեն»[ե]: Արդ, հայեա՛ց օրինակաւն ի Քրիստոս, քանզի ամենեքեան մեղուցեալ էաք եւ, ընկալեալ զվճիռ մահու, եկն Քրիստոս Գառն անմեղ եւ փոխադրեաց զմեղսն մեր առ ինքն եւ զենաւ ի վերա Խաչին ընդ անօրէնսն իբրեւ զմահապարտ եւ եղեւ ինքն մեղք, որպէս ասաց առաքեալ եւ զմեզ ոչ ասաց, եթէ՝ արդարացաք, այլ եթէ՝ «Արդարութիւն Աստուծոյ եղաք»[զ]: Տեսանե՞ս զփոխատրութիւնդ, զի ոչ էր հնար մարդոյ զայս գործել, եւ ոչ Բանին մեղք լինել եւ պատարագիլ ի Խաչին առանց մարմնոյն:

ա Եբր. Դ 14
բ Եբր. Ե 5
գ Եբր. Բ 17

ա Եբր. Ե 9
բ Եսայի ԾԳ 4
գ Բ Կորնթ. Ե 21
դ Տե՛ս Դեւտ. ԺՋ:
ե Ովսէ Դ 8
զ Բ Կորնթ. Ե 21

Արդ, տե՛ս զբաժանողդ, զմի Քրիստոս, զի վրիպեալ գտանիս յայսմանէ, թէ յերկուս բաժանես, զի ոչ մարդոյ մահ փրկէ զմեզ, եւ ոչ Բան կարէ մեռանել վասն մահապարտուց: Եւ ահա մնաց ի նմին մահու:

Դարձեալ տե՛ս ըստ կարգին զեղանակ փրկութեան, զի նախ մեղք մտին, եւ զկնի՝ անէծք: Եւ Քրիստոս նախ մեղք եղեւ եւ ապա՝ անէծք, որպէս ասաց առաքեալ, թէ՝ «Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն՝ եղեալ վասն մեր անէծք»[ա]: Եւ ո՞ւր եղեւ անէծք. ինքն ասաց, թէ՝ «Գրեալ է անիծեալ լիցի ամենայն, որ կախեալ կայցէ զփայտէ»[բ]: Եւ արդ, տեսցուք՝ այլ անէծք է ընդ այլ անիծից փոխադրեալ, զի գրեալ է, թէ՝ «Անիծեալ լիցի ամենայն, որ ոչ կացցէ յամենայն գրեալս ի գիրս օրինացն առնել զամենայն»[գ]: Եւ մեք ոչ կարացաք առնել: Եւ վասն այնորիկ անիծեցաք ամենեքեան, եւ Քրիստոս ոչ զայն եբարձ, զի ոչ մեղաւ իսկ օրինացն: Արդ, այլ է անէծք այնոցիկ, որ զփայտէ կախին: Եւ զիա՞րդ Քրիստոս այն անիծիւքն, որ ի փայտին էր, առնոյր զանէծս օրինացն ի մէնք, հայեաց ի միտս մարգարէին այնորիկ, որ գրեաց վասն նորա, զի գիտէր, թէ կատարիչ է օրինացն եւ ոչ անկանի ընդ անիծիւք օրինացն եւ այլ ումէք չէր հնար բառնալ զանէծսն, ժողովեաց մարգարէն զամենայն անէծս, որ մտին յաշխարհս եւ կուտեաց իբրեւ զխռիւ ի վերա փայտի Խաչին, զայն, որ յԱդամայ[195] օձիւն մտին եւ զայն, որ յօրինացն բազմացան եւ արար զփայտն զայն տեղի անիծից եւ մահապարտաց, զի եկեսցէ բարձօղն անիծից եւ կեանքն ամենեցուն եւ կախեսցի զփայտէն դատապարտութեան եւ, հրով Աստուածութեան իւրոյ կիզեալ իբրեւ զխռիւ զմեղս եւ զանէծս եւ լուցեալ, ի բաց բարձցէ ի մէնք: Եւ վասն այնորիկ ասէ առաքեալ, թէ՝ «Որ կայր մեր հակառակ եբարձ զայն ի միջոյ եւ ջնջեաց զձեռագիր մերոյ հակառակութեան եւ բեւեռեաց ընդ Խաչիս փայտին»[դ]: Եւ զի՞նչ է ձեռագիրն վճիռ մահուն, զոր ի դրախտին ընկալաւ եւ անէծք օրինացն, որ զամենեսեան գրաւեաց ընդ մահու: Եւ եթէ այս ամենայն ի մեղացն մտին, եւ Քրիստոս եղեւ մեղք եւ բեւեռեցաւ ի Խաչին եւ ընդ նմին կեանք կախեալ եւ սպան զմեղս: Եւ ո՞չ ահա ընդ նմին ջնջեցաւ ի մէնք վճիռ մահու, եւ ընկալաք զկեանս անմահութեան: Եւ վասն այնորիկ մարգարէն երբեմն ասէ. «Անիծեալ լիցի, որ կախեալ կա զփայտէ: Եւ զնոյն ասէ, թէ՝ «Տեսանիցէք զկեանք ձեր կախեալ զփայտէ»[ե]: Եւ զիա՞րդ նոյն կեանք եւ նոյն անիծեալ. այլ՝ զի իմացիս, թէ, զանէծս մեր բառնալով, եղեւ անէծք: Եւ նոյն ինքն բնութեամբ կեանք է: Արդ, տե՛ս ի Խաչին զպատերազմն, զի անէծք ե՛ւ մեղք, ե՛ւ մահ ի նմին բեւեռեալ որպէս ասաց առաքեալ, թէ՝ «Որ կայր մեր հակառակ, եբարձ

ա Գաղատ. Գ 13
բ Բ Օրին. ԽԱ 23
գ Բ Օրին. ԻԷ 26
դ Կողոս. Բ 14
ե Բ Օրին. ԽԱ 23, ԻԸ 66

զայն ի միջոյ»[ա]: Եւ հակառակ մեր էին մեղքն եւ անէծք եւ մահ բեւեռեալ ի Խաչին եւ ընդ նմին կեանք կախեալ: Եւ արդ ո՞ւմ յաղթեաց. ո՞չ ահա կեանք թագաւորեաց. զի անմեղութեամբ զմեղս դատապարտեաց եւ օրինութեամբ զանէծսն ելոյծ եւ մահուամբ զմահ սպան: Եւ զայս ամենայն տեսեալ առաքեալ, զոր Մովսէս հոգւով գուշակեաց: Եւ վասն այնորիկ ասէր. «Մերկեաց զիշխանութիւնս եւ զպետութիւնս յայտ յանդիման խայտառակեալ նշաւակեաց յանձին իւրում»[բ]: Եւ զի՞նչ էին իշխանութիւնքն, զոր խայտառակեաց. ասէ Յովհան, թէ՝ «Զպատրանս սատանայի եւ զմեղաց ցանկութիւնս իբրեւ զբարուրս զգեցեալ էր մարդն, եւ մահուն երկիւղիւ հանապազ կային ի ծառայութիւն չարին վըտարանդիք»[16*]: Իսկ Քրիստոսի խիզախելով երթալ ի՛ մահն ահաբեկ առնէր[196] բռնութիւն մահուն, զի ինքն, բարձեալ զԽաչն եւ խնդութեամբ դիմեալ ի վերա մահուն, ահիւ պակուցաներ զմահ եւ զիշխանն մահու եւ ապա զցանկութիւն եւ զհեշտութիւն, որ ի մեզ բնաւորեալ էր, սպանանէր՝ յիւրում մարմնին խայտառակեալ, որպէս ասէ Աստուածաբան. «Զի ի Խաչ ելանիցէ,— ասէ,— եւ հեշտութեանցն յաղթիցէ»: Եւ դարձեալ ասէ. «Վաճառեալ էաք ընդ մեղօք եւ փոխարէն առեալ զհեշտութիւն»: Եւ դարձեալ օձիւն յայտ առնէ զորպիսութիւն խայտառակելոյն, ասէ. «Պղնձի օձն կախի ոչ իբրեւ յօրինակ, այլ հակառակատիպ»[17*]: Եւ ընդէ՞ր[197] Քրիստոս օրինակ ասէ ինքեանզ, եւ սա՝ հակառակատիպ, զի բարձրանալովն օրինակ էր, իսկ գործով՝ հակառակ, զի նա զնմանիսն[198] իւր սպանանէր եւ զթշնամիսն իւր ապրեցուցանէր զմարդիկն: Իսկ սա զոսոխն մեր կործանէր զսատանայ եւ զօձաձեւ ցանկութիւն, որ բնաւորեալ էր ի մեզ, խայտառակէր յանձին իւրում եւ զնմանիւ իւր զմարդիկ փրկէր: Եւ տե՛ս[199] զասելն Աստուածաբանի՝ ոչ եթէ հաւատացեալ ապրեցուցանէր, այլ զի ինքն միացեալ էր եւ ընդ ինքեան սպանանէր, որ ընդ նովաւ էին զօրութիւնքն, այսինքն՝ զօձն, որ զմարդիկն խածանէին: Հայեա՛ց եւ ի Քրիստոս զցանկութիւն մեղացն, որ սպանանէր զմեզ, սպան զայն ի մարմնի իւրում եւ ի մեզ նոյն ներգործէր:

Արդ, տե՛ս իբրեւ ի հայելւոջ յանձին գործն Քրիստոսի: Ասաց Աստուած Մովսէսի, թէ՝ «Արա՛յ օձ եւ կախեա՛ զփայտէ, զի փրկեսցէ զժողովուրդդ»[դ]: Եւ զեղանակ որպիսութեան ոչ ասաց: Իսկ Մովսէս, որ գիտէր զտնօրէնութիւն որպիսութեան Բանին, զօրինակն յայտնի եցոյց մեզ ոչ կռանաւ կոփելով ձեւացոյց զօձն, այլ, հրով հալեալ, արկ ի դարիճակ, զի ձեւացցի անտի ի նմանութիւն օձի՝ յայտ ցուցանելով զԲանին մարմին լինել, զի ոչ չարչարանօք ցանկութեամբ ձեւացաւ մարմինն Քրիստոսի եւ ոչ երկամբք ծնաւ, այլ, հրով Աստուածութեան զապականեալ բնութիւնս մեր իբրեւ ի քրայի զտեալ եւ պարզեալ մաքրութեամբ յորովայնի Կուսին եւ իբրեւ ի դարիճակի յարգանդին կերպաւորեալ, ձեւացոյց զմեր նմանու-

ա Կողոս. Բ 14
բ Կողոս Բ 15
գ Յովհ. Գ 14
դ Թուոց ԽԱ 9

թիւնս: Եւ զի օձն հինգ գալար առնու ի գնացսն, եւ տտամբն եւ գլխովն եօթն լինին, որ բերէ զձեւ մերոյ զգայութեանցս, որք ըստ նմանութեան օձին բոլոր զգայութիւնքս լի են մահաբեր թիւնիւք ցանկութեամբ: Եւ զի օձ ընդ երկիր քարշի՝ սահելով ի պորտ եւ յորովայն, եւ մտանէ ի ծակս եւ թաղի ի հող, որ է օրինակ ցանկութեան, որպէս ասէ Փիլոն, որ մտանէ ընդ բոլոր ծերպս զգայութեանց մերոց եւ թաղի իբրեւ ի հող ի մարմինս մեր, բորբոքեալ վառէ ապականութեամբ զբնութիւնս մեր[18*]: Արդ, հայեա՛ց յօձն պղնձի, զի զձեւ ունի զօձի, եւ թիւնք մահաբերք[200] եւ չարահնար կենդանութիւն օձի մեռեալ ի նմա եւ ի բարձունս կախեալ: Հայեա՛ց եւ ի Քրիստոս, զի զձեւ մերոյ բնութեանս զբոլորն էառ, սակայն ցանկութիւն սպանող մեռեալ էր յայնմ մարմնի: Զի պղնձի օձն ոչ թիւնս ունի, որով զայլս վիրաւորէ եւ ոչ կակղութիւն մարմնոյ ընդունակ թիւնից օձի, եւ ոչ զայլս հարկանէ եւ ոչ ինքն հարկանի սակս կարծրութեան նիւթոյն, եւ զի մարդիկ հայելով առ իրեարս՝ այր եւ կին վիրաւորեն զմիմեանս ցանկութեամբ թիւնիւք մահաբերին: Արդ, հայեա՛ց ի Քրիստոս, զի գեղեցիկ էր, քան զորդիս մարդկան ըստ Դաւթա[ա], եւ կանայք, հայելով ի նա, փոխանակ ցանկութեան մահաբերին, արտասուս կենագործող բղխէին յաչաց մահաբերաց: Հայեա՛ց եւ տե՛ս զաչս պոռնկին, որ զօրէն օձի մահաբերի թիւնալից ցանկութեամբն վիրաւորէր զբազումս հայեցուածովն եւ ի մահ հրաւիրէր զտեսօղսն, եւ նոյն աչք, ի Քրիստոս հայելով, արտասուս կենաց բղխէին, եւ սիրտն, որ յառաջ բոց հրոյ բորբոքէր եւ վառեալ հրդեհէր զամենայն անդամս ի գեհենին, ի նմին սրտի հուր Աստուածութեան վառեալ մաքրէր, կենդանախարուկեալ սիրովն Քրիստոսի ի բաց հալածէր զամօթն զի եւ ոչ իսկ ամօթոյ էր սէրն այն, այլ՝ պարծանաց: Հայեա՛ց յօձն պղնձի, զի հարեալք յօձիցն դիմէին առ նա, եւ այն աչք, որ զմահաբեր օձսն տեսին եւ վիրավորեցան, նոյն աչք, յորժամ տեսանէին զպղնձի օձն, մտանէր կենդանութիւն եւ ապականէր զթիւնքն օձիցն ի նմա եւ փրկէր ի մահուանէ եւ զվիրավորիչ օձսն սպանանէր: Տե՛ս, ի միում օձին մահ եւ կեանք բնաւորեալ եւ մահուն վկայեն օձքն, որ մեռանէին, որպէս Աստուածաբան ասէ, թէ՝ «Մեռեալ էր եւ սպանանէր ընդ ինքեան, որք ընդ նովաւ էին զօրութիւնք, եւ վկայեն կենդանութիւն մահացեալքն, որ ապրէին ի թիւնից մահաբերին: Եւ արդ, ուսի՛ր յօրինակէն՝ զիա՞րդ կէսքն[201] ապրէին, եւ կէսքն՝ մեռանէին. զի որ տեսանել կարէր, ապրէր, եւ որ ոչն կարէր տեսանել, մեռանէր: Եւ զի՞նչ էին պատճառք տեսողացն եւ ոչ տեսողացն: Եւ տե՛ս, թէ յորում ժամու հրամայեաց Մովսէսի առնել զօձն, զի յորժամ ապստամբեցին ժողովուրդն ի Մովսէսէ, որկորաժէտք տրտնջելով զմանանայէն, զի կոչէին բալախ հաց:

Եւ զի օձն առաջին որկորստութեամբ պատրեաց զմարդն, եւ զքաղց ապականութեան բնաւորեաց ի մեզ, նոյն եկն այլ ժողովուրդն եւ տրտնջով վիրավորեաց զնոսա: Վասն որոյ եւ զօձն առաքեաց ընդդէմ

ա Տե՛ս Սաղ. ԽԴ 3:

ցանկութեան նոցա եւ ոչ՝ այլ գազան, զի յայտ արասցէ զյայտնի օձիւն եւ մահուամբն, զոր ինքեանք ծնան, ընկալան զմահն, որպէս ասաց առաքեալ, եթէ՝ «Մի՛ տրտնջեսցուք, որպէս եւ նոքա, որ յօձից անտի վիրաւորեցան եւ սատակեցան»[ա]: Եւ զի օձին հող ետ կերակուր եւ նա ոչ տրտնջեաց, եւ նոցա մանանայ[202], եւ նոքա տրտնջեցին: Վասն այնորիկ օձիւ սատակեաց զնոսա եւ վասն այնորիկ հրամայեաց ի դրան խորանին կանգնել, զի ապստամբն ժողովուրդն, որ հեռացան ի խորանէն եւ անջատեցան[203] ի Մովսէսէ, յօձիցն հարեալ՝ ի հարկէ դառնային ի խորանն առ օձն: Եւ էր օձն բարձրացեալ ի մէջ նոցա եւ իբրեւ դատաւոր բազմեալ ի վերա բարձրաբերձ բեմի եւ առնէր ընտրութիւն դատաստանի ի մէջ նոցա. զոմանս սպանանէր եւ զոմանս կենագործէր, եւ զի Մովսէսի չէր յայտնի, թէ ոյք էին արժանի մահու եւ կամ կենաց, զի յայտ լիցի, թէ մարդ է, զի ծածուկք մարդկան միայն Աստուծոյ է գիտելիք, զի մարգարէիցն զամենայն յայտնեաց Հոգին զանցեալն եւ զներկայսս եւ զապառնին: Եւ զայս միայն եթող ծածուկ ի մարգարէիցն զգաղտնիս մարդկան, զի պահեսցի այս գիտութիւն Յիսուսի, զի այդու ծանիցի, թէ Աստուած է նա, զի զայլ նշանքն, զոր գործեաց, գործեցին եւ մարգարէքն եւ իմացան Հոգով զխորս Աստուծոյ. զի Հոգին զամենայն քննէ եւ զխորս Աստուծոյ: Եւ եթէ խորք Աստուծոյ դժուարիմացք են, քան զմիտս մարդկան, եւ զայն ծանոյց Աստուած մարգարէիցն եւ առաքելոցն, որպէս ասաց առաքեալ, թէ՝ «Զմեղս Քրիստոսի ունիմք» եւ եթէ՝ «Իմաստութիւնս մեր ոչ է ի մարդկանէ, այլ՝ վարդապետութիւն Հոգոյն Սրբոյ»[բ], «զի եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց, զոր յառաջագոյն ետ ի տնտեսութիւն»[գ]: Ահա, յայտ է, թէ զամենայն խորհուրդս իւր ծանոյց մարգարէից եւ առաքելոց, բայց միայն զխորհուրդս մարդկան եթող անյայտ եւ Քրիստոսի պահեաց զնայ յայտնել, զի յայտնի ծանիցի, թէ Աստուած է ճշմարիտ, որ յայտնէր զգաղտնիս փարիսեցւոցն: Եւ զայս յաւելի, զի գիտասցես, թէ Մովսէս, որ զամենայն ճշդիւ գիտէր զտնօրէնութիւն Քրիստոսի, որպէս գրեաց բանիւ եւ նկարագրեաց օրինակաւ, սակայն ոչ գիտէր անդ զարժանիսն մահու, որպէս եւ ոչ ի յերկրպագութիւն, զի ամենեքեան միապէս երկրպագեցին արժանիքն կենացն եւ մահու: Եւ նա ոչ իմանայր ընտրութիւն առնել, զի եւ ոչ իսկ գիտէր, այլ Աստուած նովին որթովն յանդիմանէր զնոսա, զի նոյն որթ, մտեալ ի սիրտ նոցա եւ գտեալ զպիղծ սէր իւր ի սիրտս նոցա, բնչէր ուժգին գոչմամբ եւ պատառեալ հերձոյր զառագաստ սրտից նոցա եւ խայտառակէր զպիղծ սէր նոցա, զոր[204] ունէին առ նա, եւ որոյ երկրպագութիւն ի հարկէ ժողովրդեանն էր, եւ որ ոչ ունէր ի սիրտն զսէր որթոյն, այլ՝ զերկիւղն Աստուծոյ, մնայր անարատ, եւ այս Աստուծոյ միայն էր յայտնի եւ ոչ՝ Մովսէսի: Վասն որոյ ասէր. «Ողորմեցայց, որում ողորմութեան արժանիք են»[դ]: Այնպէս եւ որք ի յո-

ա Ա Կորնթ. Ժ 10
բ Ա Կորնթ. Բ 16, 13
գ Եփես. Ա 9
դ Ելից ԼԳ 19

ձիցն յարան, միապէս ընկալաւ զվէրս, եւ Մովսէսի ոչ էր գիտելի, թէ ոյք են արժանի ապրանաց, եւ կամ ոյք՝ մահու: Արդ, որպէս անդ հրամայեաց զորթուն գլուխն առնել դատախազ, զի պաշտօնն իւրեանց լիցի խայտառակիչ ինքեանց: Սոյնպէս եւ աստ զօձն արար իւրեանց դատախազ, զի խայտառակեսցէ զծածուկ չարութիւն նոցա: Եկին պատեցին շուրջ զօձիւն, եւ որոյ չարութիւն պղծութեան մեղաց ներկեալ էր զոգիսն, եւ ոչ գոյր մասն կենաց երկիւղի Աստուծոյ, այլ ամենայնիւ՝ հոգւով եւ մարմնով, ապականեալ էին, անդէն խաւարեալք ոչ տեսանէին զօձն, թէպէտ եւ մերձ կային, եւ յորս սակաւ մասն երկիւղի կայր, որ է պատճառս կենաց, այն լինէր նմա մասն լուսոյ, եւ հայեցեալ տեսանէր զօձն, եւ անդէն օձն հարկանօղն իւր սատակէր, եւ հարեալն ապրէր, զի օձն այն, որ կախեալ ունէր զձեւ մեռելութեան եւ սպանանէր ընդ ինքեան զօձսն կենդանի եւ շրջեալ զթիւնս օձին, որ ի մարդն, կենագործէր ծածուկ կենօքն, որ յինքեան: Ահաւասիկ[205] ի միում օձի կեանք եւ մահ տպաւորեալ, եւ ոչ կարէս բաժանել յերկուս եւ այլ ոմն ասել, որ զմահն գործէր օձիցն եւ չարեաց նման է այն մարդկան, եւ այլ ոմն, որ գործէր զկենդանութիւն մահացելոցն, այլ՝ մի եւ նոյն օձն: Եւ եթէ զօրինակն ոչ կարէս երկուս տեսանել[206], այլ մի եւ միոյ օձէ երկուս ներգործութիւնս քաջայայտ երեւեալ: Եւ եթէ զօրինակն չկարէս բաժանել զճշմարտութիւն, զիա՞րդ կարես բաժանել ի մարդ եւ յԱստուած: Արդ, օրինակաւ օձին հայեցեալ ի ճշմարտութիւն, յորժամ բարձրացաւ Բանն ի Խաչին, որ զօձն կապեալ եկին պատեցին զնովաւ կուրացեալ հրէայքն եւ տեսանէին զհրաշս սքանչելեացն ի նմա ներգործեալ. մեռելութիւն եւ կենդանութիւն հրաշականք, զի մեռեալ էր ի բարձունս, որպէս զօձն սպանանէր ընդ ինքեան զմեղս եւ զմահ, եւ զի օձն սպանօղ էր մարդկան խայթոցաւ թիւնիւքն, որով սպանանէր զմարդն, եւ մահ սպանօղ էր մարդկան խայթոցաւ մեղացն, զի խայթոց մահու մեղք են, եւ զայս սպանանէր Քրիստոս ընդ ինքեան եւ կենդանագործէր[207] զմահացեալսն, որք մեռեալ էին խայթոցաւ մեղացն:

Արդ, տե՛ս զընտրութիւն օձին, զոր արար յանապատին, զի որք անմասն էին ի բարւոյ եւ ոչ ունէին նշխար կենաց երկիւղի Աստուծոյ, թէպէտ եւ մերձ երթային, ոչ երեւէր նոցա օձն: Իսկ որ ունէր պատճառս կենաց երկիւղի Աստուծոյ, թէպէտ եւ հեռի լինէր բազում միջոցաւ յորժամ ուղղէր զդէմս առ օձն, անդէն տպաւորիւր առաջի աչացն եւ տեսեալ ապրէր ի մահուանէ, եւ օձն հարկանէր եւ մեռանէր: Այնպէս եւ կային առ Խաչին հրէայքն, եւ որք կուրացեալք էին նախանձու փարիսեցիքն ոչ կարէին տեսանել զնա Աստուած ի Խաչին եւ ոչ հաւատալ, զի ոչ ունէին մասն երկիւղի Աստուծոյ, որպէս չարքն յանապատին: Իսկ յորս կայր մասն երկիւղի Աստուծոյ, անդէն բախեն զկուրծս եւ խոստովանին զնա Որդի Աստուծոյ, որպէս այն, որ խոցեաց զկողն[ա] եւ հարիւրապետն, որ ասէր. «Արդարեւ Որդի Աստուծոյ է այրս այս»[ա]: Ահաւասիկ, որք խոստովանեցան զնա Որդի Աստուծոյ, ապրեցան, եւ դու ասես զնա մարդ խաչեալ եւ մեռեալ. ո՞չ ահա չար քան զհրէիցն է այս խոստովանութիւն: Արդ, Մովսէս նախ կանգնեաց զփայտն զայն ի դուրս խորանին եւ զամենայն մահապարտսն անդ կախեալ սպանանէր, եւ զմահն ոչ ելս միայն բաւական համարեցաւ մեղուցելոցն, այլեւ զանէծս ելս յաւել մահապարտաց եւ ասէր. «Անիծեալ լիցի, որ կախեալ կայցէ զփայտէ»[բ]: Եւ ամենայն մահապարտ հայէր ի փայտն եւ տեսանէր ի նմա զմահ իւր անիծիցն, ի նմին տեղոջ կախեաց զօձն, զի տեսցեն ի նմա վիրաւորեալքն զկեանս իւրեանց: Նոյն փայտ մահապարտաց կանգնեցաւ ի Գողգոթայ, եւ տեսանէին ի նմա մեղուցեալքն զմահ իւրեանց: Կախեցաւ ի նմա եւ կեանքն, որպէս ասաց Մովսէս: Եւ հայեցեալ տեսանէին ի նմա մահապարտքն զկեանս իւրեանց: Ահաւանիկ տեղին մահու եւ անիծից եղեւ տեղի կենաց եւ անմահութիւն: Եւ եթէ մարդ է կախեալն ի Խաչին ըստ ձեզ, զիա՞րդ է նա կեանք, եւ եթէ կեանք Աստուած միայն է: Եւ նա եթէ մարմին ոչ լինի եւ ոչ կախիլ կարէ եւ ոչ երեւիլ, զի անտեսանելի է, ապա ոչ տեսաք մեք զկեանս կախեալ, այլ՝ մարդ մահկանացու, ուրեմն եւ ոչ կեցաք. զի եթէ ի Խաչին, որք զնա մարդ իմացան, կորեան, եւ որք Աստուած խոստովանեցան, կեցին, մեք զիա՞րդ կեցցուք՝ մարդ դաւանելով զնա ի Խաչին: Կամի՞ս ուսանիլ եւ յայլ օրինակէ զԲանն մարմին եղեալ, հայեա՛ց ի գաւազանն Մովսէսի[գ], զի ի վայր անկեալ օձ եղեալ, զի օրինակ էր Մովսէս Հօր, գաւազանն[208] թագաւորական ի ձեռին նորա՝ Որդւոյ օրինակ: Որպէս ասէ Կիւրեղ ի Պարապմանց գիրսն[19*]. «Եւ, ի վայր անկեալ, եղեւ օձ ճշմարտութեամբ եւ ոչ առ աչս տեսլեամբ, որպէս եւ Որդին[209], իջեալ ի Հօրէ յերկիր, առ զմեր կերպարանք ճշմարտապէս»: Արդ, ասա՛ ինձ, եթէ այլ էր գաւազանն[210], եւ այլ՝ օձն, թէ՞ նոյն գաւազանն211 եղեւ օձ, եւ եթէ զօրինակն ոչ կարէս յերկուս բաժանել, եւ առաւել թէ այլ գաւազանն է, եւ այլ՝ օձ, եւ այլ նոյն գաւազանի եղեւ զճշմարտութիւն, զիա՞րդ բաժանես եւ ոչ խոստովանես՝ յօրինակն հայելով, թէ նոյն բանն, որ ի Հօրէ եղեւ մարմին՝ անշփոթ միացեալ եւ մարմնացեալ: Եւ արդ, տե՛ս՝ յորում ժամու հրամայեաց Մովսէսի ընկենուլ զգաւազանն, ո՞չ ահա՝ յորժամ ետես զորդիսն Աբրահամու յանողորմ չարչարանս ի փարաւոնէ եւ ՝ասէր. «Տեսի զաղաղակ դառնութեան որդւոցն Իսրաէլի եւ իջի ի փրկել զնոսա»[դ]: Եւ զամենայն հրաշս սքանչելեաց հրամայեաց գաւազանաւն առնել, զեգիպտացիսն տանջել գաւազանաւն եւ խրատէր զստամբակութիւն նոցա, եւ զիսրաէլացիսն ազատէր. զի նովին գաւազանաւ գետն յարիւն[212] եւ ի գորտ փոխարկէր եւ տանջէր զնոսա եւ ի յերկինս ամբարձեալ խաւարաւ տանջէր եւ նովին գաւազանաւն զծովն ճանապարհ գործէր Իսրաէլի եւ գերեզման եգիպտացւոցն: Նովին գաւազանաւն զվէմն աղբերա-

ա Տե՛ս Ղուկ. ԻԳ 48:

ա Մատթ. ԻԷ 54
բ Բ Օրին. ԻԱ 23
գ Ելից Դ 3
դ Ելից Գ 8

ցուցանէր եւ զմանանայն յերկնից իջուցանէր:

Եւ արդ, տե՛ս յօրինակէն զՈրդւոյ իջումն, յորժամ ետես զորդիսն Ադամայ ի դուռն ծառայութեան անմարմին փարաւօնի: Եւ, իջեալ ի Հօրէ փրկել զնոսա, ոչ ահա որպէս գաւազանն դարձաւ յօձ, նոյնպէս եւ Բանն մարմին եղեւ. ոչ այլ գաւազան էր, եւ այլ՝ օձ, այլ նոյն գաւազան էր օձ, եւ ոչ այլ Բանն էր, եւ այլ՝ մարմինն, այլ նոյն Բանն էր մարմին: Եւ միեւնոյն գաւազանն էր, որ ցուցանէր զտանջողական զօրութիւն առ փարաւօնի[213], եւ պարգեւաբաշխութիւն առ Իսրաէլ, ապա եւ նոյն Բանն էր, որ տանջէր զլեգէօնն առ գերգեսացիսն եւ զպարգեւս որդւոցն նորն Իսրաէլի՝ ազատելով զբնութիւնս մեր յիշխանութենէ մահու: Եւ տե՛ս ի յԵգիպտոս զնեռիակսն դիւական օձիցն ուրուական ստեղծուած՝ առ աչս երեւեալ եւ ոչ ճշմարտութեամբ, որք շլացեալ աչք եգիպտացւոցն կախարդէին, զի մի՛ հաւատայցեն ճշմարտութեան, մինչեւ եկուլ ճշմարիտ օձն Մովսէսի զստեղծական երեւոյթս, ոչ իբրեւ զգոյացեալ ճշմարիտ մարմինս կլանէր, այլ զառ աչս ստուերին լուծանէր, զի դիւթքն զօձս առ աչս տեսիլ ձեւացուցանէին եւ ոչ եթէ ճշմարտապէս զգաւազանսն յօձս փոխէին: Իսկ ճշմարիտ գաւազանն Մովսէսի զստուերսն առ աչսն լուծանէր եւ յայտնէր զխաբէութիւն նորա եւ յամօթի[214] եղեալ խոստովանէին ակամայ[215], թէ մատն Աստուծոյ է, զի հաւանէին, որով տանջէին ինքեանք ի խաւար տիցն: Այնպէս եւ իբրեւ եկն ճշմարիտ Բանն՝ կերպացեալ ի ձեւ մեր գլուխ դիւթիցն Սադայէլ, որ զԱդամ խաբեաց ստութեամբն՝ առ աչս ստեղծանելով զգոյն գեղոյ պլտղոյն ճշմարիտ՝ ցուցանելով զնա դեղ կենաց աստուածանալոյ, որով խաբեալ՝ կորոյս զդիւրապատիր կնոջն հաւանական բարսն: Սոյնպէս մատեաւ դեղդ[216] այն գլուխ դիւթիցն առ երկրորդն Ադամ, նովին առաջին պատրանօքն կարծէր խօսել, եւ ի բանէն խաբեալ կապեցաւ հզօրն, եւ աւար եղեւ գանձն, զոր ժողովեաց ի զուտ անիրաւութեամբ: Որպէս դիւթն փարաւօնի սնոտի եւ ստեղծական տեսլեամբ պատրէին[217] զմարդիկ՝ ոչ հաւատալ ճշմարտութեան, սոյնպէս իմաստասէրք[218] հեթանոսաց, ստեղծական բանիւք պատրանօք կախարդեալ զլսելիս[219] մարդկան, ոչ տային հաւատալ ճշմարիտ վարդապետութեան Բանին, զի դիւթքն զտեսանելիս ճայրոտէին՝ ոչ տեսանելով[220] զճշմարիտ նշանսն, եւ իմաստունք հեթանոսաց կախարդէին զլսելիս մարդկան եւ ոչ հաւատալ տային բանին ճշմարտութեան ընդդէմ առաքելոցն պատերազմել, որպէս եւ նոքա՝ ընդդէմ Մովսէսի: Արդ, որպէս օձն Մովսէսի եկուլ զօձսն սնոտիս եւ ինքն թագաւորեաց՝ ճեմելով իշխանապերճ, որով հաւատացին տեսօղքն ճշմարտութեան եւ իմացան զսնոտի խաբէութիւն դիւթիցն, սոյնպէս եւ ճշմարիտ վարդապետութիւն առաքելոցն եկուլ զսնոտի իմաստութիւն դիւաշունչ պաշտօնէիցն ուրուական կռոցն: Մովսէս գաւազանաւն, զոր ունէր ի ձեռինն, գծէր զնշանսն եւ խափանէր զսնոտիսն եւ հաստատէր զճշմարտութիւն: Եւ առաքեալքն գաւազանաւն, որ բղխեաց Յեսսեա, գործէին զհրաշակերտս եւ լուծանէին զստուերս եւ հաստատէին զճշմարտութիւնն:

Արդ, առաքեալքն մա՞րդ քարոզեցին, որով զնշանսն գործէին, թէ՞

Աստուած. ո՞չ ահա մարմին նորայ էր, զոր բարձեալն կրէին ընդ ինքեանս, յորոյ անուն զնշանսն գործէին, յորժամ ասաց Պետրոս լուծելոյն առ գեղեցիկ դրանն թէ՝ «Յանուն Յիսուսի Նազովրացւոյ արի՛ եւ գնա՛»[ա]: Արդ, այս Յիսուս մա՞րդ է, թէ՞ Աստուած, զի թէ մարդ է, զիա՞րդ անուն նորա զմեռեալս յարուցանէ. ո՞չ ահա եւ զՏաբիթայն անունն Յիսուսի յարոյց ի մեռելոց»[բ][221]: Արդ, զՅիսուս մա՞րդ խոստովանիմք, թէ՞ Աստուած, զի չասաց թէ՝ անուն Աստուծո՛յ արի, այլ՝ յանուն Յիսուսի, եւ Յիսուս մարդոյն է անուն, եւ մեք ի յայն անուն հաւատամք եւ մկրտիմք: Եթէ Յիսուս Բան չէ, եւ այլ է Բանն, եւ այլ՝ Յիսուսն. ո՞չ ահա քաջայայտ է, թէ մարդապաշտեմք, եւ զի Աստուծոյ բնութիւն միայն է, առ որ հպի, սրբէ եւ ոչ մարմնոյ. եթէ մարմինն Բանն չէր, ընդէ՞ր հպեալ ի բորոտն սրբէր, եւ ի դագաղն մերձեցեալ, յառնէր պատանին եւ, զձեռանէ կալեալ, յարուցանէր զաղջիկն: Ո՞չ ահա ցուցանէր, թէ մարմինն էր Բանն, որ էր կեանք, զի կենաց է գործ, առ որ մերձենայ կենագործել եւ ոչ մարմնոյ, որ լի է մահու: Եւ ընդէ՞ր, թքեալ ի գետինն, առնէր կաւ եւ ստեղծանէր զաչս կուրին. ո՞չ ահա յայտ ածէր, թէ նա է, որ ի սկզբանէ արար զմարդն ի հողոյ, որպէս ինքն ասաց, թէ յայտ լիցի գործն Աստուծոյ, որ ի ծածուկ ի դրախտին գործեցան: Եւ կատարեցաւ բանն, թէ՝ ձեռօք արար զմարդն, եւ Աստուծոյ ձեռք ոչ գոն, այլ՝ զԲանն ասաց ձեռքն[222] Աստուծոյ, որով յայնժամ եւ այժմ գործէ զկամս Հօր: Եւ տե՛ս, յորժամ ասէր յառաքեալսն, թէ՝ «Զով ասեն զՈրդւոյ մարդոյ, թէ իցէ»[գ]: Ո՞չ ահա զՈրդւոյ մարդոյ ասաց եւ ոչ՝ զԲանէն, զի իբր դաւանեաց Պետրոս զնա Որդի Աստուծոյ, այլ թէ՝ Դու ես: Եւ Յովհան ասէ, թէ՝ զՈրդին Մարդոյ, ասաց Պետրոս՝ Որդի Աստուծոյ: Եւ թէ երկուք են նոքա, զիա՞րդ ասէ զերեւեալն Որդի Աստուծոյ կամ զի՞նչ պետք էին այդմ յայտնութեան Հօր, զոր յայտնի տեսանէին՝ ո՞չ ահա անիմանալի իրաց պետք են յայտնութեան: Ուրեմն ծանեաւ Պետրոս Հոգւով, թէ Բանն Հօրէ[223] անտեսանելի, զոր տեսանէրն, եւ զնայ դաւանեց Որդի Աստուծոյ: Վասն որոյ եւ երեւեցաւ: Ապա ուրեմն, որք զերեւեալ մարդն որոշեն ի Բանէն, ոչ ունին յայտնութիւն ի Հօրէ, այլ՝ յայնմանէ, որ կործանեցան ի նմանէն եւ ոչ կամին զկեանս մեր, զոր ընկալաք ի կենարար մարմնոյն, որ նա ինքն է Բանն Աստուծոյ, որով կեցայք[224] եւ կեամք[224ա], որպէս ասաց Յովհաննէս, թէ՝ Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն մարմին եղեւ, եւ տեսաք զփառս նորա իբրեւ զՄիածնի: Ո՞չ ահա զմարմնոյն փառս Միածնի առ ի Հօրէ լի շնորհօք եւ ճշմարտութեամբ: Եւ Յովհաննէս վկայեաց վասն մարմնոյն, զոր ետես, թէ՝ յառաջ քան զիս էր: Եւ թէ այլ է մարմինն, զիա՞րդ յառաջ, քան զՅովհաննէս է, զի յետոյ ծնաւ: Եւ ասէ, թէ շնորհքն եւ ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի եղեն: Արդ, ի ձեռն մարդո՞յ տուաւ մեզ ճշմարտութիւն, թէ՞ ի ձեռն Աստուծոյ. ո՞վ յիմար հաւատոյդ, որ մարդով ծանեայք զճշմարտութիւն: Եւ յորժամ ասէ դարձեալ, թէ՝ զԱստուած ոչ ոք

ա Գործք Գ 6
բ Տե՛ս Գործք Թ 40:
գ Մատթ. ԺԶ 13

ետես, այլ՝ Միածինն, որ ի ծոց Հօր, նա պատմեաց: Ո՞չ ահա մարդն էր, որ պատմեաց մեզ զասելն, թէ՝ զոր լուաց ի Հօրէ, պատմեցի ձեզ: Եւ արդ, զիա՞րդ էր մարդն ի ծոց Հօր, զի ի Կուսէն ծնաւ եւ պատմեաց մեզ, եւ եթէ այլ էր ծնեալն ի Կուսէն, զի նա պատմեաց մեզ, եւ զիա՞րդ էր նա ի ծոց Հօր: Ուրեմն, զմարդն ասաց ծոցածին Հօր Բան, որ պատմեաց մեզ զծածկեալ խորհուրդն, որ խօսէրն ընդ մեզ, մարդն ասէր. «Ելի ի Հօրէ եւ եկի յաշխարհս»[ա]: Եւ դարձեալ ասէ, թէ՝ «Տեսանիցէք զՈրդի Մարդոյ ելեալ, ուր էրն զառաջինն»[բ], եւ ուր էր Որդին Մարդոյ զառաջինն, զի երեկ ծնաւ ի Կուսէն:

Ո՞չ ահա քաջայայտ[225] է, զի զԲանն ասէ Որդի Մարդոյ: Եւ դու զիա՞րդ յերկուս բաժանես, եւ մարմինն չէր յառաջ յերկինս, որ ել յետոյ, եւ Հայր յերկնից վկայեաց, թէ՝ Դա է Որդի իմ սիրելի: Եւ Հոգին իբրեւ մատամբ եցոյց զմարդն մկրտեալ, թէ՝ Դայ է: Եւ Աստուածաբան ասէ. «Զո՞ եցոյց, յայտ է, թէ զմարմինն, եւ ի Թափոր լերինն, ոչ որոշեաց ի յերկուս, այլ թէ՝ Դայ է Որդի իմ սիրելի, զոր տեսանէքդ, եւ ոչ՝ այլ ոմն, որ ի դմայ է: Եւ արդ, պարտ էր քեզ կամ մարգարէիցն հաւատալ, որ զնոյն մարդն ասացին Որդի Աստուծոյ՝ երեւեալ յերկրի եւ ընդ մարդկան շրջեալ, կամ առաքելոցն, որ զնոյն մարդ քարոզեցին Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ, կամ Հօր հաւատալ, որ զնոյն մարդն ասաց՝ Դայ է Որդի իմ սիրելի, եւ կամ ցուցանել ի գրոց, թէ՝ ո՞ ասաց զնա երկուս. մարդ եւ Աստուած՝ շարայարեալ ի միմեանս, եւ միաբանութեամբ փրկել զմեզ, եւ կարօտացաւ մարդոյն օգնականութեան: Աւա՜ղ թշնամանացս: Եւ արդ, եթէ վասն կրից մարմնականացն գայթագդիս դու եւ ասես, թէ Բանն մարմին էր, եւ մի են նոքա, եւ զամենայն կիրս մարմնոյ կրէր մարմինն այն, բայց[226] ի մեղաց, եւ եթէ զոր կրէր մարմինն, զայն բանն կրէր, եթէ մի են, զիա՞րդ մարթի, թէ Բանն էր, որ քաղցեաւ եւ ծարաւեցաւ եւ վաստակեցաւ եւ ննջեաց եւ արտասուեաց եւ հոգայր եւ տրտմէր: Զայս զիա՞րդ մարթի ասել, թէ Բանն կրէր, զի ահա այս ամենայն բնութեան օտար է եւ հերձուած է զայսոսիկ կիրս Աստուծոյ բնութեան ասել, թէ կրեաց զայս: Եւ արդ, եթէ վերահասու[227] լինիս ճշմարտութեան եւ իմանաս զեղանակ կրիցն եւ զպատճառսն, ոչ գայթակղիս[228], այլ ճշմարտութեան լինիս ջատագով: Եւ զի երկուս[229] են պատճառք այդորիկ, որ մեզ յայտնին զծածկեալսն Աստուծոյ, թողցուք զմինն ասացից կարճառօտ բանիւ եւ զմիւսն՝ քննութեամբ գրոց: Նախ այս է, որ քաջայայտ[230] է ամենից, զի կամէր մեզ ճշմարտութեամբ վերայիաստ լինել, թէ ստուգապէս մարդ եղեւ անթերի ունել զմարմինն կատարեալ ամենայն անդամօք եւ զհոգի եւ զտեղւոջ, ուր պէտք էր ի մեր փրկութիւն, ցուցանէր, զի գիտէր զչար հերձուած մարդկան, զի ոմանք ասացին, թէ զմարմինն յերկնից եբեր եւ իբրեւ ընդ ցնցուղ անց ընդ Կոյսն, եւ այլք ասացին, թէ զհոգի մարդկային ոչ էառ, այլ փոխանակ հոգ-

ա Յովհ. ԺԹ 28
բ Յովհ. Ջ 63

տյն Աստուածութիւն էր ի մարմնին, եւ այլք, թէ՝ հոգի ունէր մարդկային, բայց միտս մարդկային ոչ ունէր[20*]: Եւ զի զայս կամէր ցուցանել մեզ, թէ ճշմարտապէս առ զամենայն բնութիւնս մարդոյ հոգի եւ մարմին եւ միտք եւ ամենայն, որ ինչ է ի մարդ ճշմարտապէս, բաց[231] ի մեղաց, զի այս իսկ է հիմն հաւատոյ մերոց: Եւ կիրս, զոր կրէր, թէպէտ եւ բնաւորք էին, այլ ոչ եթէ՝ հարկաւորք, որպէս առ մեզ զկիրս մարմնոյ, զոր կրեմք մեք, բնաւորք են եւ հարկաւորք, զի ըմբռնեալ իսկ եմք ի հարկէ կրից մարմնոյս, զի ապականացու է բնութիւնս[232] մեր, եւ հարկ է զմեզ զպակասութիւն ապականութեան լնուլ: Իսկ Քրիստոսի մարմինն անապական էր, վասն այնորիկ, ոչ ունէր կիրս հարկաւորս, այլ կամաւորաբար կրէր, զոր կամէր: Եւ զի ապականութիւն ի մեղաց մտին, իսկ նա ոչ արար մեղս, եւ ոչ մարմին նորա ետես զապականութիւն ըստ վկայութեանց մարգարէիցն: Եւ եթէ ոչ ունէր զկիրս հարկաւորս, ընդէ՞ր կրէր, ասէ Գրիգոր Նիւսացի. «Եթէ կիրք կարեաց մերոց շարժեալք առ Քրիստոսի ոչ զի կալցին հարկաւորաբար, որպէս առ մեզ, այլ զի շարժեալք խափանեսցին, եւ յայտ յարդեանցն է, զի զոր կրեաց Քրիստոս զկիրս կարեաց մերոց, մի անգամ կրեաց եւ այլ ոչ եւս»[21*]: Ուստի յայտ է, զի թէ հարկաւորք էին, մինչեւ ի մահ կրէր առ նա, որպէս առ մեզ, ապա եթէ միանգամ կրեաց եւ զայն՝ կամաւորաբար եւ ոչ ի հարկէ, ո՞չ ահա քաջայայտ[233] է, թէ վասն խափանելոյ զնոսա ի մէնք կրէր, զայն, զի կիրքս այս յետ մեղացն մտին ի մեզ, քաղց եւ ծարաւ եւ արտասուք եւ աղքատութիւն եւ հոգք եւ տրտմութիւն եւ վերջին թշնամին՝ մահ:

Եւ արդ, լո՛ւր Աւետարանչին, զի զոր մի անգամ ասաց քաղցնուլն ի լերինն եւ զծարաւելն յաղբերն եւ զվաստակելն ճանապարհին եւ զարտասուելն ի վերայ Ղազարու եւ զհոգալն եւ զտրտմելն ի ժամ Խաչին: Եւ այլ ոչ եւս կրկնեալ զնոյնն[234], որով յայտ առնէր, եթէ ելոյծ կրելովն զնոսա: Եւ այլ ոչ էր պիտոյ զմեռեալն եւ զլուծեալն կրել վերստին, զի դատապարտեալ զմեղս այսորիկ[235] ի յանձին իւրում, քանզի «սպան զթշնամութիւն,— ասէ,— յանձին իւրում»[ա236]: Եւ եթէ զինչ էր թշնամութիւն, ինքն ասաց, թէ՝ «Խորհուրդ մարմնոյն թշնամութիւն է առ Աստուած»[բ]: Ապա թէ չէր կրեալ, զիա՞րդ էր սպանեալ. ո՞չ ահա կիրք մարմնոյն, որ իբր առ մարդ շարժէին, իբր յԱստուծոյ լուծեալ խափանէին: Ապա ուրեմն, իբր մարդ առ ամենայն կիրս մեր հպեցաւ եւ իբր Աստուած ելոյծ զամենայն, որպէս ի մահն հպելով՝ ելոյծ զնա եւ, յանէծս մերձեալ, ջնջեաց զնա եւ, առ մեղաւորս մերձեալ, եբարձ զնա եւ, առ բորոտս հպեալ, սրբեաց զնա եւ, առ մեռեալս մերձեալ, կեցոյց զնոսա: Զի՞նչ անվայելուչ է զայս Աստուծոյ ասել, զի մարդոյ[237] անհնար է զայսոսիկ ի մեզ ներգործել, իսկ Աստուծոյ՝ վայելուչ եւ հնարաւոր: Եւ դու ընդէ՞ր գայթագդիս զայսոսիկ Աստուծոյ վարկանիլ, զի նմա իսկ վայելուչ է այս գործ եւ ոչ մարդոյ: Եւ եթէ հար-

ա Եփես. Բ 16
բ Հռովմ. Ը 7

կատարաբար կրէր զայսոսիկ, ապա ապականացու էր մարմին նորա ըստ քո կարծեացդ, եւ եթէ ապականացու էր, ապա ոչ էր ազատ ի մեղաց, զի ապականութիւն ի մեղաց մտին: Եւ զի՞րդ ասէ մարգարէն եթէ՝ «Մեղս ոչ արար», եւ եթէ՝ «Ոչ տայցես սրբոյ քում տեսանել զապականութիւն»: Զի եթէ ապականացու էր մարմինն, ապա հարկ էր կերակրոյն հալելոյ եւ յամենայն ախտք բաժանիլ ի մաղձ, ի մաղաս եւ յայլ վնասակար ցաւս եւ յախտս անվայելուչս եւ ի խոնարհ ծորմունս եւ յարտափորումն ունկաց եւ յայլոց[238] զազրալեաց: Եւ եթէ այսպէս իմանաս, զի՞նչ այլ գարշելի մտածմունք եւ հայհոյութիւնք, քան զայսպիսի կիրս ի Քրիստոս իմանալ: Եւ զի՞րդ ասէ Կիւրեղ, եթէ՝ «Սրբեալ եւ պարզեալ եւ մաքրեալ էր մարմինն յամենայն շարժմանց եւ յարտաշնչմանէ, որ տանին զմեզ յոչ պատշաճսն»[22*]: Եւ Եփրեմ ասէ յԱւետարանին մեկնութեան, թէ՝ «Որպէս փոխեաց զջուրն ի գինի ի մէջ թակուկացն՝ ըստ ոչ բնութեան, նոյնպէս առեալ զմեր բնութիւնս եւ ի մէջ կուսին շրջեաց յանապականութիւն»[23*]: Եւ Ոսկէբերանն ասէ. «Եթէ վասն կերակուր ճաշակելոյն համարիս զնա ապականացու, նա-եւ յետ յարութեան ճաշակեաց եւ առ Աբրահամու ճշմարտապէս եկեր զորթն»[24*]: Եւ արդ, եթէ զՔրիստոսի մարմինն ապականացու կարծէք, զի՞րդ ասէ Քրիստոս, եթէ՝ «Ես եմ հացն կենաց»[ա], իջեալ յերկնից, եւ հացն, զոր եւ տաց, մարմին իմ է, որ բաշխի վասն կենաց աշխարհի: Եւ թէ[239] ապականացու է, զի՞րդ յերկնից իջեալ, զի յերկինս ապականացու ինչ ոչ գոյ եւ կամ զի՞րդ կարէ ապականացու կերակուր զկերօղն անմահացուցանել: Եւ կամ զի՞րդ կոչէք զՄարիամ Աստուածածին, եթէ նա ապականացու մարմին ծնաւ, եւ կամ զի՞րդ գոյ հնար ապականացու ընդդիմահար մարմին ծնանիլ եւ կուսութեան[240] ամբողջ մնալ: Եւ եթէ ասիցէք յետ յարութեան փոխիլ յանապականութիւն, ապա Մարիամ ոչ է Աստուածածին, այլ՝ գերեզմանն, զի ապականացու Աստուած եւ ոչ հեթանոսք խոստովանել խորհեցան: Եւ արդ, դուք յո՞ր մարմինն հաղորդիք. զի ահա ի վերնատանն զայն մարմինն ետ մեզ, որ ի կուսէն, եւ ոչ՝ զայն, որ ի գերեզմանէն յարեաւ եւ ասաց. «Զայս արարէք առ իմոյ յիշատակի»[բ], որ այսօր ունիմ եւ ոչ զայն, որ յետ յարութեան: Եւ եթէ յետ յարութեան եղեւ անապական, զի՞նչ աւելի էր, քան զմեր մարմինս: Զի եւ յետ յարութեան եւ մեք փոխիմք յանապականութիւն: Եւ եթէ թերի էր եւ անկատար յառաջ քան զյարութիւն, եւ ոչ Աստուծոյ մարթի ասել: Եւ զի՞րդ մարթի ի թերի եւ յանկատար Աստուած հաւատալ եւ զի՞րդ զկիսակատար Աստուածն յերրորդութիւն մուծանէք: Եւ Պետրոս հերձուած խօսեցաւ, որ զանկատար մարդն Որդի Աստուծոյ դաւանեաց: Եւ եթէ Որդի մարդոյ ոչ է թերի, քան զՀայր իւր, եւ կիսամարդ, զի՞րդ զՈրդին Աստուծոյ, զոր դաւանեաց Պետրոս, թերի եւ կիսաաստուած[241] համարիք, մանաւանդ թէ՝ ոչ իսկ Աստուած, զի՞րդ ապականացու Աստուածս ո՞ ծանեաւ յերբէք:

ա Յովհ. Զ 51
բ Ղուկ. ԻԲ 19

Արդ, հայեա՛ց յօրինակն. ո՞չ ահա մանանայն էր օրինակ մարմնոյն Քրիստոսի, որպէս առաքելոյ[242] եցոյց, եւ ոսկի սափոր՝ անապական կուսին: Եւ արդ, եթէ օրինակն ազգէ յազգ պահեցաւ անապական եւ կա դեռ մինչեւ ի վախճան աշխարհի, որ զիրք վկայեն: Եւ եթէ զօրինակն ոչ կարես ասել ապականացու, զճշմարտութիւն զի՞րդ ասես ապականացու, զի ստումանն ոչ էր գերեզմանին օրինակ, այլ՝ Կուսին, ապա ուրեմն՝ ի կուսէն տուաւ մեզ Հացն կենաց եւ անմահութեան: Եւ դու ոչ միայն բանիւ ասես ապականացու, այլեւ արդեամբ ապականես խմորով եւ ջրով, զի խմոր ապականութեան եւ կեղծաւորութեան է օրինակ. որպէս Տէրն աշակերտացն պատուիրեաց զգուշանալ ի խմորոյ փարիսեցւոցն[ա], որ է կեղծաւորութիւն, եւ յօրինակի անդ գառինն զենման հրամայեաց անհետ առնել զխմոր ի տանց, որ գառն զենանէր: Եւ թէ գտանի, ասէ, խմոր ի տանն, սատակեսցի նա ի ժողովրդէն[բ]: Եւ Տէր ի վերնատունն բաղարջովն աւանդեաց զխորհուրդն, որպէս գրեալ է, թէ՝ «Յառաջնում աւուր Բաղարջակերացն զատկին»[գ] եկն ի վերնատունն, եւ այրն, որ ընդունէր զնոսա, հրէայ էր, եւ չէր հնար գտանել խմոր ի տան նորա: Եւ Աստուածաբան ասէ, եթէ՝ «Խմորեալն ոչ լինի հաց կենդանական»: Եւ դարձեալ ասէ. «Ի հնամէն եւ քացախուտ չարութենէն մաքրումն»[16*]: Եւ արդ, զոր Քրիստոս ի բաց սրբեաց զքացախուտ չարութիւն ապականութեան[243], դուք վերստին կամիք բռնութեամբ մուծանել յանապական խորհուրդ մարմնոյն Քրիստոսի, զի ապականութիւն ծնունդ է մեղաց եւ աղբիւր մահու, զի ապականութիւն ոչ էութիւն ինչ է եւ ոչ մասն ինչ գոյացութեան, այլ՝ լուծումն էականին յանէակն՝ ի պատճառէ մեղացն եկամուտ բնաւորեալ ի մեզ: Եւ զի՞րդ աղբիւրն կենաց զաղբիւրն մահու կրէր յինքեան զապականութիւնն[244], եւ զի նա յայն սակս եկն, զի բարձցէ զապականութիւն: Եւ զի՞րդ աղբիւր անապականութեան միաւորիւր ընդ աղբիւր ապականութեան, զի ամենեին ներհակք են միմեանց: Եթէ գոյ հնար լուսոյ եւ խաւարի ի միասին բնակիլ եւ ոչ լուծանել զմիմեանս, ապա գոյ հնար ապականութեան եւ անապականութեան շարահարիլ ի միմեանս եւ էութեան երկոցունց ամբողջ մնալ, եւ ջրոյ եւ գինւոյ խառնակումն ո՞չ ահա շփոթումն եւ լուծումն երկոցունցն է եւ խառնակումն, զի այնուհետեւ ապականեալ է ջուրն ի գինւոյ, եւ գինին՝ ի ջրոյն, որպէս անիծանէ մարգարէն զկրպակաւորսն[245], որ խառնեն զջուր ընդ գինի: Զի թէ այն պիղծ է եւ խոտելի եւ անիծից արժանի գործ կրպակաւորացն եւ պիղծ է եւ խոտան ըմպողաց[25*], որչափ եւս առաւել խոտան եւ անընդունելի է, որ զանապական արիւնն Քրիստոսի շփոթեալ խառնակեն իբր զկրպակաւորսն եւ զարիւն նորոյ ուխտին խառնակ համարին եւ թշնամանեն զՀոգին շնորհաց, որով սրբեցան: Որպէս ասաց առաքեալ, զի «Զայն օրինակ բերէք ի մէջ, որ բղխեաց ի կողից Քրիստոսի, ոչ ահա

ա Տե՛ս Մատթ. ԺԶ 6:
բ Ելք ԺԲ 15, 19, ԺԳ 7
գ Մատթ. ԻԶ 17

խառնակեալ էր ընդ միմեանս արիւնն եւ ջուրն«[ա], զի թէ խառնեալ էր, ապա ոչ երեւէր ջուրն: Եւ զայս խորհուրդ ուսուցանէ մեզ Աստուածաբան եւ տէր Եփրեմ՝ ասելով, թէ՝ «Որք կամին հաղորդել սուրբ արեանն, նախ մաքրեսցին ջրով»[26*]: Որ ոչ ծնանի Հոգւոյն եւ ի ջրոյ[246], ոչ մտանէ յարքայութիւն Աստուծոյ: Եւ Յովհաննէս, որոյ նկարագրեաց զսոսա՝ ասելովն. «Արիւնն եւ ջուրն եւ Հոգին եւ երեքեանն սրբիչ մեր են»[բ], եւ Յիսուս Քրիստոս, որ եկն արեամբ եւ ջրով, եւ Հոգին է, որ վկայէ: Եւ յասելն, թէ երեքեանն մի են. ոչ վասն խառնելոյն ընդ միմեանս եւ շփոթելոյ ասաց, այլ՝ վասն զմի եւ զնոյն ներգործութիւն, որ ի մեզ գործեն ասաց մի, զի «արիւնն Յիսուսի,— ասէ,— սրբէ զմեզ յամենայն մեղաց» [գ] եւ «Մաքրեսջիք դուք ի Հոգին Սուրբ եւ ի հուր», եւ թէ՝ «Որ ոչ մաքրի ի ջրոյ, ոչ մտանէ յարքայութիւն Աստուծոյ»[դ]: Եւ արդ, եթէ զջուրն ընդ արիւնն խառնէք, ո՞չ ահա դատարկ եւ թափուր մնայ աւազանն ձեր եւ սոսկ ջուր անմաքուր: Եւ եթէ Հոգւոյն վերակոչմամբ ասէք մաքրիլ ջրոյն Հոգին Սուրբ ընդ սոսկ ջուր, որ ոչ ի կողիցն Յիսուսի է, ոչ խառնի, որպէս եւ ոչ ընդ սոսկ արիւն, որ ոչ ի կողիցն Յիսուսի բղխեաց:

Ապա ուրեմն, ի խառնակեալ ջուր եւ արիւնն[247], եւ ապականեալ ոչ իջանէ Հոգին եւ ի սոսկ ջուր ոչ եւ յանմաքուր, որ ի յաղբերաց միայն է եւ ոչ՝ ի կողահոս յաղբերէն Յիսուսի, զի վասն ջրոյն մկրտութեան, յորմէ աստուածածնեալ անմահանամք, մարգարէն գուշակեաց, եթէ՝ «Յաւուր յայնմիկ բղխեսցէ ջուր կենդանի յԵրուսաղէմ»[ե] , եւ օրն այն յայտնի Տեառն, որ է օր տէրունական խաչելութեան: Արդ, ասելով կենդանի զբղխումն ջրոյն՝ եցոյց զայլ ամենայն ջուրս մեռեալ, որպէս յասելն նոր ուխտն հնացոյց զառաջինն, ապա ուրեմն, ամենայն ջուրք մեռեալ էին՝ ըստ յանցանաց մարդոյն, որով անիծեցաւ եւ անկաւ ընդ ապականութեամբ: Իսկ կենդանի ջրոյն բղխմամբն նորոգեցան արարածք, որում եւ Դաւիթ վկայեաց, եթէ՝ «Ի քէն է, Տէ՛ր, աղբիւր կենաց», եւ լուսով Հոգւոյն Քրիստոսի տեսաք զլոյս գիտութեան, զոր եւ[248] Տէրն հաստատեալ կնքեաց. «Եթէ ոչ ծնանիջիք ի ջրոյ կենդանւոյ եւ ի Հոգւոյն, ոչ մտանէք յարքայութիւն»: Արդ, որպէս եցոյց մեզ Տէրն՝ զօրինակ խորհրդոյն զբաժակն, ասէ. «Այս է արիւն իմ», եւ զհացն, եթէ՝ «Այս է մարմին իմ»[զ] : Եւ նոյն բան, որ ասաց՝ եղիցին երկինք եւ երկիր, եւ անդէն[249] պէտ եղեալ շեշտակի գոյացան հանդերձ ամենայն զարդուք, նոյն բան ասաց հացին եւ բաժակին, եւ եղեւ ճշմարտապէս մարմին եւ արիւն: Եւ արդ, ցո՛յց մեզ զքո խառնափնդորեալ խորհուրդն. ընդէ՞ր ոչ ասէ՝ առ քացա՛խ, այլ ասէ՝ առ բաժա՛կ, եւ ոչ ասէ՝ առ խմո՛ր քացախեալ, այլ ասէ՝ առ հա՛ց կենաց: Արդ, քաջայայտ[250] է յերեւելեացդ, զի քացախ ոչ բաժակ է, այլ՝ ապականեալ գինի, եւ խմոր ոչ զանկուած ալերէ, այլ՝ հաց քացախեալ, եւ երկոքեանն ապականեալ են արտաքոյ բնութեան, զոր եւ խորհիք իսկ ի վերա անապական բնութեան Քրիստոսի՝ ապականացու գոլ կարծելով, որ է չարափառութիւն: Իսկ վասն ջրոյն խառնակութեան չեն պէտք դիմադրութիւն, զի Յովհան յանդիմանէ զձեզ յԱւետարանին մեկնութեան յայն բանին, որ ասաց Տէրն, թէ՝ «Ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչեւ արբից ընդ ձեզ ի նոր արքայութեան», զի միւս չար հերձուածն ի բաց հանցէ, որք ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն, զի որթն գինի եւ ոչ ջուր բղխէ[27*]: Եւ արդ, յորժամ Տէրն ի վերնատանն արբոյց աշակերտացն եւ ինքն արբ ընդ նոսա, բաժակ անապական էր եւ ոչ՝ քացախ, զի զքացախն ի Խաչին արբ ի տիրասպան ժողովոյն ի յանարգանս եւ ոչ ի պատիւ, որպէս ասաց Դաւիթ. «Ետուն ի կերակուր ինձ լեղի եւ ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ»[ա]: Ուրեմն զայն կամիք արբուցանել[18] Տեառն եւ դուք ըմպել. ընդէ՞ր եւ ոչ լեղեաւ խառնեալ, եւ թուի, թէ կարողութիւն էր ճաշակել զդառնութիւն լեղոյն, ոչ հրաժարէիք զայն եւս խառնել: Եւ ոչ լուայք[251] ի մարգարէէն զտրիտուր Տեառն, թէ՝ «Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորս եւ ի գայթակղութիւն, խաւարեսցին միտք նոցա, զի ոչ կարասցեն տեսանել զմահացու կերակուրն»[բ], զոր ապականեն քացախով[252] եւ ջրով եւ խմորով եւ աղիւ, զի այս ամենայն խառնուածոյս ոչ գոն յիշատակ յԱւետարանչացն, այլ միայն հաց եւ բաժակ յիշատակի: Զոր եւ սուրբ հայրապետքն մինչ ի ժողովն Քաղկեդոնի սոյնպէս ուսուցին մեզ՝ բաժակ անապակ եւ հաց անապական, եւ սուրբն Գրիգոր մեզ զնոյն աւանդեաց: Զի յորժամ եղեալ քահանայն զսուրբ եւ զանապակ բաժակն ի վերա սեղանոյն եւ, տարածեալ զձեռս իւր, հայցէ յԱստուծոյ առաքել զէակից Հոգին Սուրբ, զի օրհնեալ զբաժակս արասցէ արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ընդէ՞ր ոչ ասէք, եթէ զքացախս եւ զջուրս արասցէ արիւն Յիսուսի, ապա ուրեմն, չէ հնար զայլ ինչ յարարածոցս մարմին եւ արիւն Աստուծոյ առնել, բայց զոր Տէրն հրամայեաց՝ միայն զհացն եւ զբաժակն, թէ՝ «Զայս արարէ՛ք առ իմոյ յիշատակի»: Եւ ոչ յիշատակի անդ խառնուածք ապականագործք[253] եւ զազրալիք կերողացն: Եւ արդ, ձեզէն տո՛ւք զիրաւն, ո՞չ ահա այսպիսի խառնումն զանգուածոյ ի միասին, քացախոյ եւ ջրոյ եւ բաժակի եւ աղոյ եւ խմորոյ տաղտկալիք են կերողին, թեպետ յոյժ ոք որկորեայ իցէ: Իսկ արդ, եթէ մարմնոյ անախորժելի եւ վտանգաւոր է այսպիսոյ ճաշակումն, զիա՞րդ ոգւոց կարէ կեանս բաշխել:

Տեսցուք ըստ կարգիս եւ զաւազանն ձեր՝ ըստ գրոց վկայութեանց. զիա՞րդ թափուր է ի կենագործ աղբերէն, որ ի կողից Տեառն բղխեաց, զոր դուք ի բաժակն խառնէք՝ ոչ ունելով հրաման ի Տեառնէ եւ ոչ վկայութիւն ի Գրոց Սրբոց, զի ջուրն այն ի լուացումն եւ ոչ յարբումն տուաւ մեզ ի

ա Եբր. Ժ 29
բ Ա Յովհ. Ե 6
գ Ա Յովհ. Ա 7
դ Յովհ. Գ 5
ե Զաք. ԺԴ 8
զ Տե՛ս Մատթ. ԻՁ 26, Մարկ. ԺԴ 22, Ղուկ. ԻԴ 30, Յովհ. Ջ 52 :

ա Սաղ. ԿԸ 22
բ Սաղ. ԿԸ 23

Տեառնէ, որպէս ասաց. «Թէ ոչ ծնանիցիք ի ջրոյ, ոչ մտանէք յարքայութիւն Աստուծոյ»[ա]: Եւ մեզ զօրինակն յօրինակացն յայտնի ցուցանեն, զի սեղան հացիցն եւ բաժակացն ո՞չ ահա յայտնի ցուցանեն զօրինակ մարմնոյն եւ արեանն Տեառն: Իսկ քահանայքն ոչ իշխէին մտանել ի տաճարն եւ ոչ ճաշակել ի խորհրդական հացիցն, եթէ ոչ նախ լուանային ջրով. եւ Յովհաննէս նախ լուանայր ջրովն յապաշխարութիւն եւ ապա մաքրեալ ածէր առ Տէր մեր: Արդ, որպէս փոխեցան ստուերքն ի ճշմարտութիւն, սրբութիւն հացիցն՝ ի կենաց հացն, եւ բաժակքն՝ ի կենաց բաժակն, եւ զենմունքն զուարակաց՝ ի մահ բարձողին մեղաց, այսպէս եւ ջուրքն մաքրութեան՝ ի կենացն[254] ջուր, եւ բոլոր ամենայն օրինակքն ի կենարար մարմնոյն բղխեցին մեզ ճշմարտութիւնք: Արդ, որպէս կերակուր կենաց մեզ՝ մարմինն Տեառն, եւ բաժակ անապական՝ արիւնն, այսպէս եւ աստուածածնելութիւն մեզ՝ ջուրն[255] կենդանի, որ ի Տէրունական կողիցն բղխեաց: Արդ, եթէ արժան[256] համարիք զայն ջուր ընդ արեան խառնեալ, ընդէ՞ր եւ ոչ զարիւնն խառնէք ընդ ջուր աւազանին: Եւ ո՞չ լուայք ի Դաւթայ, որ բացայայտ ցուցանէ մեզ զխորհուրդ բաժակին՝ ասելով. «Պատրաստ արարեր առաջի իմ սեղան»[բ], որ է Խաչն վերընկալ[257] Տէրունոյ մարմնոյն՝ ըստ այնմ, որ ասաց. «Արասցուք տօնս ուրախութեան մինչեւ յանկիւնս սեղանոյ»[գ] Խաչին, եւ՝ «Բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս»[դ] : Զիա՞րդ ով ոք ոչ գիտէ, թէ քացախ եւ ջուր խառնեալ ոչ կոչի բաժակ անապակ, եւ ապա յայտնի ցուցի այն քեզ ի Գրոց, եթէ ջուրն այն ոչ ի խառնումն բաժակի տուաւ մեզ, այլ՝ ի լուացումն մեղաց: Ասէ Տէր Եփրեմ յԱւետարանին մեկնութեան, եթէ՝ «Նախ ջուր բղխեաց եւ ապա՝ արիւն»[28*], յայտնի ցուցանելով մեզ, եթէ որ կամին հաղորդել արեանն Տեառն նախ ջրով լուացին եւ մաքրեալ արժանացին կենաց հացին հաղորդել: Եւ Կիւրեղ Երուսաղէմի հայրապետն ի Կոչումն ընծայութեան ԳԺ—աներորդ ճառին, որ ասէ՝ «Պարծանք սրբութեան Կաթողիկէ եկեղեցւոյ Խաչն է», ասէ. «Փայտն, որ ի ձեռն Մովսէսի էր, քաղցրացուցանէր զջուրսն, եւ ի կողիցն անդի Յիսուսի ջուր բղխէին: Ի փայտէ սկիզբն նշանաց արիւն եւ ջուր ի ձեռն Մովսէսի եւ կատարած ամենայն նշանացն նոյնպէս եւ ի Յիսուսէ»[29*]: Նախ Մովսէս շրջէր զգետն յարիւն եւ յետոյ՝ ի ջուր, եւ Յիսուս հանէր ջուր ի կողից իւրոց արեամբ հանդերձ վասն երկուց բարբառոյ. այն, որ դատէինն եւ աղաղակէինն, եւ վասն այնոցիկ, որ հաւատայինն եւ թերահաւատային, եւ կամ վասն այնոցիկ, որ մկրտինն ջրով, զի Պիղատոս ասէր. «Սուրբ եմ ես» եւ ջրով լուանայր զձեռս:

Իսկ, որ աղաղակէին եւ ասէին. «Արիւն դորա ի վերայ մեր եւ ի վերայ որդւոց մերոցն»[ե]: Դարձեալ այլ ազգ իմասցուք հրէից արիւնն քրիս-

ա Յովհ. Գ 5
բ Սաղ. ԻԲ 5
գ Սաղ. ՃԺէ 27
դ Սաղ. ԻԲ 5
ե Մատթ. ԻԷ 24—25

տոնէից ջուր, նոցա վասն նենգութեան խարդախութեան յարենէ անտի դատապարտութիւն եւ ձեզ՝ հաւատացելոց, ի ջրոյ անտի՝ փրկութիւն, զի ոչինչ զուր տարապարտուց մեկնիչ մեր այլ իմն իրացդ այդոցիկ հնար ցուցին, քանզի կրկին իմն են զօրութիւն մկրտութեան յԱւետարանսդ մի, որ զկնիքն առնուն նոցա՝ շնորհեալ ի ջրոյն, երկրորդն այն է, որ սրբոյ մարտիրոսացն վճարի արեամբ նոցուն: «Եղ,— ասէ,— ի փրկութեան կողից անտի արիւն եւ ջուր, որ վասն խոստովանութեան Քրիստոսի առակի մկըրտութեան եւ մարտիրոսութեան հաստատէ զշնորհսն»[30*]: Զայսոսիկ՝ մեծն Կիւրեղ: Իսկ Աստուածաբան Անձիանձուն ի ճառին, որ առ Մեղիտոս գերեզմանական, եւ գեղեցկապէս բերէ ի բերանոյ կարկատումն հերձուածողաց[258], յորում ճառի այսմ վերագոյն գովէ զգեղեցկադիր առն աստուածայնոյ Մեղիտոսի բարէփառ դիմառութիւն առ երկաբնակսն, ասէ. «Նմանեցաւ Տեառն իւրում որպէս ի Կանա գալիլէացւոց Տէրն, նոյնպէս եւ աստ նմանող Տեառն, քանզի զհրէական սափոր հերձուածողական ջրով լցեալս լի սեռն գինով արար զօրութեամբ հաւատոյն փոփոխեալ զբնութիւն հաւասարեաց ի մեզ»[31*]: Եւ վսեմական վարդապետն սուրբն Դիոնէսիոս գրէ յաղագս աւազանին խաչանման[259] զեղն հեղլոյ, այսպէս մեզ բացայայտէ զծածկեալ խորհուրդն՝ ասելովն, թէ ի տեսողութիւն ածէ հայեցողականօք աչօք: Մինչեւ յայսմ եւս անգամ մահ ի ձեռն Խաչին: ԶՅիսուս յաղագս մեր աստուածածնելութեան ընկղմեալ նոյն աստուածայնով եւ անըմբռնելի հրամամբ զորս ըստ թաքուն բանի ի մահ նորա մկրտեալք յապականացուցիչ մահուանէ հին ընկղմանն բարէվայելչաբար ի վեր կորզել եւ նորոգել առ աստուածային եւ յափտենական գոյութիւն[32*]: Տեսանե՞ս զուղղափառ ճշմարիտ վարդապետին զուտիղ խոստովանութիւն, զի խաչատեսակ հեղումն եւ զնոյն զխաչն եւ զմահն Քրիստոսի նշանակէ, թէ որ մինչեւ յայս եկեալ վասն մեր ի մահ. ոչ մարդոյ, որպէս դուքդ խորհիք, այլ ասէ՝ աստուածային անըմբռնելի հրամամբ, զի ի մահ նորա թաղեալք, այլ ոչ՝ ի մարդոյ, այլ ըստ թաքուն աանդութեան եւ ի վեր կորզել զմեզ ընդ ինքեան, զի հին մահուանէն ընկղմեալքս աստուածային յարութեամբն: Եւ արդ, եթէ Հին եւ Նոր Կտակարանք վկայեն զջուրն ի մկրտութեան[260] խորհուրդ բղխեալ եւ զարիւնն՝ ի կենաց ճաշակս, դուք ուստի՞ ուսայք ի բաժակն խառնել եւ շփոթել զերկաքանչիւր բնութիւն: Վասն այնորիկ հարկ լինի[261] մեզ զայսպիսաբար մկրտեալսն դարձեալ վերստին մկրտել, զի ոչ ի կենդանի ջուրն բղխեալ ի կողահոս աղբերէն մկրտի, այլ՝ ի սոսկ ջուր, եւ ոչ ի մահ Աստուծոյ մկրտի ըստ առաքելոյն, այլ՝ ի մահ մարդոյն եւ ոչ ի հոգւոյն ծնանին վերստին, զի Հոգին ի մարդոյ մահ ոչ իջանէ[262]:

ՍԱԿՍ ԱՆԽՏԻՐ ՀԱՂՈՐԴԵԼՈՅ[263]

Արդ, եթէ զմահն մարդոյ համարիք, եւ մարմինն, որ չարչարեցաւն եւ մեռաւ, մարդոյ մարմին է, ապա, յիրաւի[264], անխտիր բաշխես յանցաւորաց, զի թէ Աստուծոյ է մարմինն, զոր բաշխէք, ապա ամենեքեան աստուածասպան էք եւ պարտական արեանն Տեառն՝ ըստ առաքելոյ սահմանին,

թէ՝ «Որ ուտէ անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ եւ արեանն Տեառն»[ա], զի որ ուտէ եւ ըմպէ անխտիր անարժան գործովք, դատաստան անձին ի մուր ուտէ եւ ըմպէ, ապա ուրեմն, վՀիռ դատաստանի մահու հատանէ ի վերա ձեր, դուք ինքնին վկայէք, որ ի մեղս անխտիր էք, եւ հաղորդելն անզեղք, զի եւ հարկ ի վերա դնէք, թէ՝ որ յառաջ հինգշաբաթջն ոչ հաղորդի, ի բա՛ց[265] հանէք ի հաւատոցդ ձերմէ, եւ գիտէք ճշմարտութեամբ, զի ոչ ամենեքեան սուրբ եւ արժանաւորք են: Եւ ոչ գիտեմ ուստի ուսայք զանխտիր հաղորդելն, զի առաքեալքն եւ սուրբ վարդապետք յոյժ զգուշացուցանեն մաքրութեամբ հաղորդիլ առաւել յառաքելոյ մեկնութեան ի Կորնթացւոց թղթին յայն բանին, թէ՝ «Որ ուտէ եւ ըմպէ[266] զբաժակ Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ եւ արեանն Տեառն»: Ընդէ՞ր ասէ[267], զի, զորօրինակ, որ յայնժամ խոցեցինն, ոչ՝ զի կերիցեն, այլ՝ զի հեղցեն անարգաբար: Նոյնպէս եւ որք անարժանութեամբ մերձենան, ոչ ինչ շահին, այլ դատապարտին, եւ ոչ զի շնորհօք տուան268 մեզ, անարգանօք եւ թշնամանօք ուտիցեմք անսրբաբար[33*]: Եւ ի սմին բանի ասէ տէր Եփրեմ. «Զի որպէս որ ոչ հաղորդի եւ կցորդի ընդ խորհուրդս ընդ այս, չիք[269] նորա կեանք, եւ որ ուտէ եւ ըմպէ յանարժանս, դատապարտեալ է եւ պարտական է արեանն Տեառն»[34*]: Եւ ձգի այս ի վերա ամենայն դարուց եւ ամենայն ազգաց: Փորձէ, ասէ, մարդ յանձն իւր ինքն առանձինն, եթէ վկայէ խիղճ[270] մտաց իւրոց, թէ սուրբ իցէ եւ մաքուր յամենայն մեղաց, առցէ, ապա թէ ոչ՝ մի՛ հպիցի ի դատապարտութիւն: Իսկ մեք հիւանդոտք, ասէ, մարմնոյ ցանկութեամբ եւ բարկութեամբ, զորս պարտ է, ասէ, զբոլորն ի բաց մաքրել եւ ապա հաղորդել ի սուրբ խորհրդոյն[271], մի՛ պղերգութեամբ, այլ՝ երկիւղածութեամբ եւ սրբութեամբ, զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատապարտեալ է: Զինչ խօսիս, որ այդչափ բարեաց պատճառ է եւ զկեանս բաշխէ սեղանն այն, նա դատո՞ղ լինիցի: Այո՛, ասէ ոչ վասն իւրոյ բնութեան, այլ՝ յաղագս անարժանիցն հաղորդելոյ, որպէս գալուստն Քրիստոսի անհաւատիցն ի դատապարտութիւն. նոյնպէս սեղանն այն անարժանիցն ի դատապարտութեան մահու է: Եւ ընդէ՞ր դատաստան իւր ուտէ, զի ոչ հարցուփորձեալ քննէ, թէ որպէս պարտ է զմեծութիւն պարգեւին ընդունել, զոր պարտ է յոյժ. մաքրութեամբ ընդունել իբրեւ Աստուծոյ272 մարմին, զի եւ ի նոցանէ բազումք մատեան[273] անարժան եւ տարաժամ սատակեցան: Եւ դարձեալ յԵբրայեցւոց թղթին ասէ յայն բանին մեկնութեան, որ ասէ. «Որչափ եւ առաւել պատժոց արժանիք են, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն հարկանեն եւ զարիւն նորոյ[274] ուխտին խառնակ[275] համարեցան: Եւ զիա՞րդ հարկանիցէ ոք զՈրդին Աստուծոյ, յորժամ խորհրդոցն ահագին հաղորդին եւ յետոյ ի մեղս անկանիցին»[35*]. ո՞չ ապաքէն[276] առ ոտն էհար զնա եւ արհամարհեաց, որպէս զոր ինչ առ ոտն կոխիցեմք, չհամարիմք ինչ: Նոյնպէս եւ որ մեղանչեն, չհամարին ինչ զՔրիստոս եւ այնպէս աներկիւղ հաղորդին:

ա Ա Կորնթ. ԺԱ 29

եւ ած առաքեալ զվկայութիւն բանից իւրոց ի մարգարէէ անտի, որ ասաց յերեսաց Տեառն, թէ՝ Իմ է վրէժխնդրութիւնք, եւ դատի Տէր զժողովուրդ իւր, որք անարժանութեամբ անխտիր հաղորդին. «Ահ մեծ է անկանիլ ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ արհամարհողաց զնա»[ա]: Եւ արդ, եթէ այս ամենայն վկայութիւն Գրոց Սրբոց եւ ձերոց վարդապետաց են, ուստի՞ ուսայք անխտիր հաղորդեցուցանել անարժան ժողովրդեան ձերոյ,մանաւանդ՝ յատուր Մեծի հինգշաբթին:

ՎԱՍՆ ՄԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԹԻՆ[277]

Որ ոչ է ամենեցուն ժողովրդականաց հաղորդել, բայց միայն քահանայիցն, որպէս ուսոյց մեզ Տէր մեր Յիսուս Քրիստոս, այն երկոտասանիցն միայն բաշխեաց.թէպէտ եւ բազումք գոյին աշակերտեալք եւ հաւատացեալք ի նա, զի ի ծածուկ ի գաղտնիս միայն աշակերտացն ուսուցանէր առնել առ յապայ յետ յարութեան, զի դեռ չեւ էր պատարագեալ ի վերա խաչին եւ ոչ մահ լուծեալ եւ ոչ դժոխք աւերեալ եւ ոչ Ադամ ազատեալ, այլ խորհուրդ առ յապայ լինելոյ իրաց ջուղական, զի ուսուցանէր աշակերտացն, եթէ ոչ հրէիցն է իշխանութիւն պատարագել զնա, այլ ինքն զինքն մատուցանէր կամաւոր պատարագ Հօր ի հոտ անուշից, որպէս ասաց, եթէ՝ «Ես ինձէն սուրբ առնեմ զանձն իմ ի վերայ ձեր»[բ]: Եւ արդ, մինչդեռ ոչ է պատարագեալ, զիա՞րդ մարթի հրապարակօրէն բաշխել ամենեցուն, զի սեղանն այն հարսանեաց եւ խնդութեան մեծի է հաղորդութիւն, որպէս ասէ տէր Եփրեմ, եթէ հարսանիք են կերեալն եւ արբեալն ընդ նմա Սուրբ Հոգւովն ըստ Տեառն բանին, թէ՝ «Հարսանիքս պատրաստ են, եւ պարարակք զենեալ»: Եւ արդ, մինչդեռ հզօրն չեւ է կապեալ, եւ ոչ հարսն՝ ազատեալ եւ մաքրեալ, զիա՞րդ մարթի առագաստին հաղորդել կամ արժան է յաւուր հինգշաբթին[278] տօնախմբութիւն առնել հրապարակօրէն եւ հաղորդիլ զենմանն չեւ եւս պատարագելոյն: Եւ անդրէն դարձեալ ի սուգ տխրութեան մտեալ եւ ողբակից լինել ձայնից մարգարէիցն, որք միահամուռ ժողովեալ զողբս աղէտից չարչարանացն Քրիստոսի մեծաձայն գոչեն, եւ ամենայն արարածք անզգայք, ընդ մարգարէիցն ողբալով, քրձազգածս[279] եղեալ եւ պատմուճանապատառք զիրար հարեալ, տատանին, խաչակցեալք ընդ Քրիստոսի՝ մեռանին՝ խաւարազգած եղեալ, եւ չեւ եւս աւետիք յարութեան բացափայլեալ եւ ի հրեշտակաց քարոզեալ. դու ո՞ւմ եղեր տօնակից եւ զուստճահաղորդ մինչեւ ամենայն արարածք ի խոր տխրութենէն վերինք եւ ներքինք, զի չեւ եւս Տեառն արբեալ զբաժակ մահու եւ ոչ մահ լուծեալ, զիա՞րդ մարթի տօնախմբութիւն առնել մեզ, զի փեսայն չեւ եւս է մտեալ յառագաստն եւ ոչ ի խաչին պսակեալ ըստ Սողոմոնի պսակելոյն: Իսկ Աստուածաբան յայտնի ուսուցանէ զմեզ ի Մկրտութեան ճառին՝ ասելով. «Դարձեալ ի խորհուրդ ածէ ի տանին զաշակերտսն ի վերնատանն եւ յետ ընթրեացն եւ նախքան զմի աւր չարչարանացն: Բայց մեզ ի տունս աղո-

ա Հռովմ. ԺԲ 19, Եբր. Ժ 30—31
բ Յովհ. ԺԷ 19

թից եւ նախքան զընթրիսն եւ զկնի յարութեան»[36*]: Ահա ի տունս[280] աղօթից ասէ եւ ոչ՝ ի հաղորդութիւն խորհրդոցն: Այլ յորժամ աւետաքարոզ հրեշտակքն երեւեցան կանանցն, յայնժամ լուծաւ խաւար մեղացն: Որպէս ասաց ի պահու իմում ճառին յասելն, թէ՝ «Մեզ գառն կերիցի ընդ երեկս, վասնզի զվախճան յափտենից Քրիստոսի չարչարանօքն հաւասարէ խորհրդոյն աշակերտացն երեկոյին՝ լուծանելով զխաւար մեղացն»: Ահաւանիկ յարութեամբն լուծաւ խաւար մեղացն, յորում պարտ է մեզ հաղորդել ճշմարիտ գառինն պատարագելոյ եւ լինել աւետաքարոզ յարութեան նորա՝ բացածագելոյ ի մեզ զճառագայթ յարութեան, որ լուսափայլեալք ազատեցաք յեգիպտական խաւարէն եւ ի դառն գործավարացն: Եւ ոչ ոք է ի չար զօրութեանց, որ կարէ արգելուլ զմեզ տօնել զտօնելիս յաշխարհէ աստի չարէ առ վերինն փոփոխել աշխարհ:

Եւ արդ, պարտ է մեզ ուսանիլ ի Տեառն բանէն, որ ասաց. «Ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս»[ա]: Ոչ ահա բացայայտ ցուցանէ զհնութիւն բնութեանս՝ ոչ զօրելով տանել զանապական բաժակն Տեառն, մինչ չեւ իցէ նորոգել մկրտութեամբն,եւ մեք նորոգեցաք յետ յարութեան, մանաւանդ թէ՝ յերկրորդումն Նոր կտակին[281], յորժամ զթերութիւն Թումայի ելից հաւատովք՝ զանհաւատութիւն բժշկեալ եւ փչեաց յառաքեալսն, ելից Հոգւով Սրբով եւ նորոգեաց յառաջին բնութիւն Ադամայ: Իսկ եթէ ասիցես. «Առաքելոցն ընդէ՞ր բաշխեաց զնոր բաժակն, եթէ ոչ էին նորոգեալ», ասացից առ այդ. զի վասն նոցա Տէրն վկայեաց, թէ՝ «Դուք սուրբ էք վասն բանին, որ խօսեցա ընդ ձեզ»[բ]: Վասն որոյ եւ ոչ պետք եղեւ նոցա մկրտիլ ջրով, զի եւ մկրտութեան ջուրն Բանն սրբէ, որով մաքրիմք: Եւ եթէ նոքա բանիւ մաքրեցան եւ նորոգեցան[282], չէին պետք ջրով մկրտիլ: Վասն որոյ եւ կարող էին ընդունել զբաժակն զօրութեամբ նորոգութեան Տեառն բանին: Իսկ եթէ ասիցես, եթէ՝ «Մեք նորոգելոց մկրտելոցս բաշխեմք եւ ոչ՝ հնոց մարդոյն»[283], ասացից եւ ես առ այդ. ընդէ՞ր բնաւ առնեք[284] յիշատակ հնոյ տօնիցն. բաղարջակերացն[285] յաւուր հինգշաբաթին, կամ զի՞նչ բնաւ պիտոյ է զՔրիստոսի չարչարանսն վերստին յիշատակել եւ առաջի աչաց նկարել զձաղանս եւ զնախատինս Խաչին: Եւ արդ ի միտ առ իմաստաբար, զի որպէս ի հնումն նկարագրեալ էր նորս, եւ ծածկաբար ի ստուերին բացափայլէ ճշմարտութեանս խորհուրդ եւ իբր ընդ հայելի տեսանէին զայժմուս մաքրեալքն մտօք, նոյնպէս պարտ եւ արժան է եւ զհնոյն յիշատակ ընդ նորոյս շարայարել[286], զի յայտ լիցի զմի զնոյն խորհուրդ տպաւորել ի միոյն Աստուծոյ զմեր փրկութիւն: Եւ արդ, եթէ յայնմ աւուր զամենայն ի միասին գումարեմք՝ զհին եւ զնոր[287] խորհուրդ միացուցանելով, որպէս Տէրն արար Հնոյն վախճան եւ Նորոյս սկիզբն, եւ մեք որպէս զամենայն պահեմք զօրինակսն, նոյնպէս եւ զայս խորհուրդ ի յարութեան անդ կատարեմք զնոր արբումն ի նոր արքայութեան՝ յարութեամբ նորոգեալք:

ա Մարկ. Բ 22, Ղուկ. Ե 37
բ Յովհ. ԺԵ 3

ԱՌ ԱՊԱԿԱՆԱՑՈՒ ԱՍՕՂՍՆ Է ՋՄԱՐՄԻՆՆ ՏԵԱՌՆ[288]

Եւ արդ, չեն ինչ պետք առ այդ ասել ինչ ձեզ, որովհետեւ ապականացու խոստովանիք զմարմինն Տեառն: Յիրաւի, ապականեալ մեղօք յապականացու[289] մարմինն հաղորդիք, ապա ուրեմն եւ զնա ընդ հին մեղօքն անկեալ[290] խոստովանիք, զի ապականութիւն մեղացն է ծնունդ: Եւ արդ, ապականացու կերակուր զիա՞րդ կերողացն կեանս շնորհէ. ո՞չ գիտէք, եթէ ապականացու ընդ որս շարախառնէ զունակութիւն բնութեան յիւրն յարաքարշեալ փոխադրէ ապականացու բնութիւն: Եւ արդ, եթէ ընդդիմաբանէք մեզ՝ ի Սոկրատա Պատմութենէն առնելով վկայութիւն, որ յատուր հինգշաբաթու, յետ ընթրեացն ոչ ամենայն աշխարհի, այլ թէ ոմանք տգիտութեամբ հաղորդին: Եւ մեք չեմք անտեղեակ այնմ[37*]: Բայց իմա՛յ, իմաստակդ, զի մինչ ի նիկիական ժողովն ոչ էր կարգ եկեղեցւոյ հաստատեալ: Եւ եթէ արդարեւ ուղիղ ունէին զամենայն կարգս, ոչ փոխէին զառաջինսն: Իսկ եթէ ի Հոգւոյն շարժեալք հաստատեցին զամենայն կարգս եկեղեցւոյ: Եւ մերն սուրբ Առըստակէս զկանոնեալսն ի սուրբ ժողովոյն եբէր առ սուրբն Գրիգոր, եւ հաստատեցին ի հայս: Եւ ոչ երբէք յիշատակեցաւ ի սուրբ ժողովոյն յաւուր[291] հինգշաբաթին հաղորդել ժողովրդականացն, եւ ոչ ջուր եւ քացախ եւ խմոր եւ աղ աւանդեցին ի սուրբ խորհուրդն ի կիր արկանել: Եւ սուրբն Գրիգոր ոչ աւանդեաց ի մեզ զայդոսիկ, եւ ոչ սուրբն Ներսէս ի ժողովոյն Կոստանդնուպօլսի, որ ի քակտումն հոգեմարտին Մակեդովնի ժողովեցան, եւ ոչ սուրբն Սահակ ընկալաւ յԵփեսոս ի ժողովոյն, որ ընդդէմ Նեստորի գումարեցան, ի սրբոյն Կիւրղէ Աղեկսանդրացոյ ընկալեալ զՀաւատոյ նամակ, զի սուրբն Կիւրեղ ոչ ի Պարապմանց գիրքն յիշէ զայդոսիկ եւ ոչ ի Գանձուն, զոր ունիմք մեք հիմն հաւատոյ, եւ յայդմ վերայ հաստատեալ է հիմն հաւատոյ մերոյ[38*]: Յայդմ երից սուրբ ժողովոյդ ոչ կարէք յայտնել, թէ սահմանեցին[292] ուրէք կանովնական սահմանաւ քացախ եւ ջուր ի սուրբ խորհրդին խառնել եւ ոչ՝ խմոր: Եւ մեք յայդմ եմք հաստատեալ, ոչ յաւելուլ ունիմք հրաման եւ ոչ պակասեցուցանել եւ զՔաղկեդոնի զաւելորդ հրամանսն ոչ[293] ընդունեմք: Եւ արդ, մի՛տ[294] առ, քա՛ջ, զի ապականութիւն ոչ բնութիւն ինչ է եւ ոչ՝ որակութիւն բաղկացուցիչ ենթակային, այլ՝ լուծիչ էակին յանէակն[295], զի ոչ յԱրարչէն իսկ գոյացեալ եղեւ ընդ բնութեան առաջին ստեղծուածին, որպէս քաջայայտ է ի գրեցելոյն, թէ՝ ըստ պատկերի Աստուծոյ ստեղծաւ մարդն[ա296]: Յայտ է, թէ անապական, որպէս սկզբնատիպն[297], զի թէ ի նախահայրն ինչ գոյր մասն ապականութեան, ապա առ սկզբնատիպն298 վերաբերի այսպիսի կարծիք, ըստ որում նմանութեան ստեղծաւ: Իսկ եթէ ի մեղացն եմուտ ապականութիւն, որպէս քաջայայտ է[299], ապա ուրեմն՝ արմատ ապականութեան մեղքն են:

ա Ծնն. Ա 27

Եւ արդ, ուր ոչ բուսանի արմատ մեղաց, ուստի՞ գոյանայ պտուղ ապականութեան, զի ոչ է հնար առանց արմատոյ մեղացն գոյանալ պտղոյ[300] ապականութեան, զի ինքն ըստ ինքեան անգոյական է ապականութիւն: Եւ վկայեն այսմ արտաքին իմաստասէրքն, որք ճշմարտութեամբ հասին ի վերայ բաղկացութեան բնութեանս: Որպէս գրեացն Պղատոն առ Կռետաս. «Ի չորից,— ասէ,— գոյացեալ մարդն», եւ ապականութիւն ոչ ի չորից, այլ չորեցունց է ապականիչ: Գրէ եւ ի Պպոն. «Ի չորս յոդաւորութիւնս ոչ շարալծի ապականութիւն»:

Իսկ Դիմոկռատէս եւ Դինարքոս եւ Պիւթագորաս այսպէս գրեցին. «Ապականութիւն լուծումն էակին յանէակն, եւ այս վասն վնասու իրիք մեղաց ի ներքս մտեալ»:

Գրէ եւ Գալինոս առ Գլօկոս. «Արուեստս այս բժշկութեան, ո՛վ Գլօկոս, որ անհունս[301] հաստատեալ ունի զքննութիւն, վասն ապականութեան տուեալ եղեւ ի մարդիկ յառաջին պատճառէն, զի ապականութիւն ոչ ընդ մարմնոյ գոյացաւ, այլ լուծիչն է մարմնոյ»:

Գրեցին եւ ի տասն հեռետորքն յԱրիսպագոսին յԱթենացւոց. «Ապականութիւն ոչ միանայ ընդ անապականութեան զի եւ ոչ իսկ ստեղծեալ եղեւ յառաջին պատճառէն»:

Գրէ եւ Արիստոտելէս առ Ջենոն Կորնթացի. «Իմաստութիւն անապական եւ ապականութիւն ընդ իմաստութեան ոչ շարայարի, եւ որ կամի լինել իմաստասէր, պարտ է օգնել զողջախոհութեան, զի ապականութիւն եկամուտ է եւ ոչ՝ ընդ բնութեան ստեղծեալ»:

Պիսիդոս Կորնթացի էհարց ցԹողիոս Թագերգիչ. «Ջի՞նչ է մարմին»: Պատասխանի. «Գործ ի ոգոց առ կենցաղս»: Հարցումն. «Ջի՞նչ է մահ»: Պատասխանի. «Լուծումն յապականութենէ»: Հարցումն. «Ջի՞նչ է ապականութիւն»: Պատասխանի. «Ինքն լուծեալ յէակէն եւ լուծիչ էակին յանէակն»: Պիսիդոս ասէ. «Ամենեքեան սոքա լծակի՞ցք են միմեանց, թէ՞ ոչ»: Թողիոս ասէ. «Այլ է մարմին, եւ այլ է մահ, եւ այլ է ապականութիւն. ոչ մարմին մահ է, եւ ոչ ապականութիւն՝ բնութիւն, զի մահ եւ ապականութիւն ըստ վնասու ինչ անգոյ անուստեք ի ներքս մտեալ ի բնութիւնս»[39*]:

Եւ արդ, եթէ արտաքին իմաստասէրքն վկայեն վասն ապականութեան՝ թէ ոչ ընդ բնութեան է ստեղծեալ, այլ ի պատճառէ մեղացն է մըտեալ ախտ ապականութեան լուծիչն մարմնոյ: Եւ զիա՞րդ կրէր Քրիստոս յինքեան զպտուղն մեղաց, այն, որ մեղս ոչ արար եւ եթէ կրեաց զապականութիւն, ապա հարկ էր նախ զարմատ ապականութեան կրել զմեղս, զի բուսցի ի նմանէ պտուղ ապականութեան: Իսկ ուր ոչ արմատացան մեղքն, եւ ոչ պտուղ նորին երեւեսցի, զի, անդստին յանապական յարգանդի կուսին շրջաստեղծեալ[302] յինքեան մարմին, փոխադրեաց յանապականութիւն, որպէս զջուրն փոխեաց ի բնութիւն անապակ գինւոյ[303] ի մէջ թակուկացն եւ մեզ զանապական մարմինն, որ ի կուսէն առ, զայն ետ ի կերակուր եւ

ասէ. «Այս է մարմին իմ», որ ի կուսէն, եւ ոչ՝ որ ի գերեզմանէն յարեաւ, զի եւ նոյն իսկ էր յարուցեալն, որ ի կուսէն առ, եւ ոչ առաւելութիւն ինչ փոխեցաւ յետ յարութեան, զի եւ ոչ անկատար Աստուած էր ի կուսէն ծնեալն, զի աստուածածին էր կոյսն, ոչ անկատար եւ թերի Աստուած ծնաւ, այլ՝ զնոյն, որ ի կերպարանս Հօր էր եւ ի կերպարան մարդոյ եղեւ ի կուսէն եւ ոչ՝ ի գերեզմանէն: Ապա ուրեմն՝ ոչ էր ընդ հարկաւ կրից, զի ամենայն կիրք հարկաւորք, բնաւորեալք հարկաւորապէս, զիւրոյն միայն վճարէ զպարտսն, ընդ որով պարփակեալ է բնաւորաբար, եւ ոչ այլոյ կամէ վճարել զպարտսըն, ըստ որում եւ ինքն մահկանացու հանդիպի եւ ընդ մեղօք պարփակեալ: Եւ որ[304] յայս է բնաւորեալ, նա ընդ մեղօք է գրաւեալ: Եւ որ ընդ պարտեօք է, ոչ զայլոյ, այլ զիւրն միայն վըճարէ զպարտիս: Թէ այդպէս է, ապա Քրիստոս զիւրն միայն վճարեաց զպարտիս եւ ոչ՝ զմերն. եւ ընդէ՞ր ասէ առաքեալ, թէ՝ «Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց»[ա]: Եւ դարձեալ թէ՝ «Ամենեքին մեռեալ էք եւ ի վերա ամենեցուն մեռաւ, եւ թէ հաւատամք յայն, որ մատնեցաւ վասն յանցանաց մերոց, եւ յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ»[բ]: Ջի եթէ ապականացու եւ մահկանացու էր ոչ վասն այլոց, այլ վասն իւրոյ հարկի բնութեան մեռաներ[305], եւ եթէ ըստ հարկի մեռաւ, ապա ոչ յարեաւ, որպէս ամենայն մահկանացուք, ապա եւ ոչ մեր գոյ յոյս յարութեան, զի անդեն ընդ նմին պարտեօք եմք գրաւեալ նախահօրն[306]: Այլ մեք ոչ այդպէս հաւատամք. մի՛ լիցի, այլ՝ անապական եւ անմահ զմարմինն զայն անդստին ի կուսէն ստացեալ խոստովանիմք եւ վասն մեր[307] մեռեալ անպարտական մահու, զի զմերն հատուցեալ զպարտս եւ ազատեսցէ ի մահուանէ յանցանաց սկզբնամօրն[308] պարտեաց եւ նախահօրն յանցանաց եւ յիւրն յանմահականն վերացուցեալ ի փառս՝ ստեղծանելով Նոր արարած ըստ պատկերի իւրոյ, զի որք ի Քրիստոս մկրտեցաք, զՔրիստոս զգեցաք եւ անմահացեալք եղաք որդիք Աստուծոյ: Եւ վկայեն[309] անապական մարմնոյ նորա ամենայն սուրբ եւ ուղղափառ վարդապետք, զորս աստեն շարագրեցից զնոցայն վկայութիւն իբր զկնիք անեղծ առ ի մերոց. բանիցս հաստատութիւն:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ.

Եւ արդ, գրէ սուրբն Գրիգոր Սքանչելագործ.

«Կանոնական ուղղախորհաց խոստովանութիւն այսպէս. Բանն Աստուած կրէ ճշմարտութեամբ զմերս մարդկաբար գեր ի վերոյ քան զմերս եւ ներգործէ հրաշս աստուածաբար հանգոյն Հօր եւ զապականեալ մարմնով զԱդամ անապական մարմնով իւրով վերստին նորոգէ, զի մի եւ նոյն է սքանչելագործն եւ յախտակրելն, զի կրէ ճշմարտութեամբ զմերս եւ ոչ՝ իբրեւ զմեզ հարկաւորաբար եւ ի բռնութենէ, այլ՝ կամաւորութեամբ, զի մեր կամքս ոչ կամօք կրին ի մեզ, այլ՝ հարկաւորաբար եւ բռնու-

ա Հռովմ. Ե 9, Ա Պետ. Բ 21, Գ 18
բ Հռովմ. Դ 25

թեամբ[310]: Այլ Քրիստոս ոչ այնպէս, այլ որպէս աստուածավայելուչ կամաց զհետ երթայ: Եւ այսպէս աստուածավայել ի մարմնաւորութիւն Փրկչին անբաժանաբար միացեալ, զի մի է Տէր Յիսուս եւ մի՝ նորին բնութիւն, զի թէպէտ եւ յերկուց իմանի, այլ մի եւ նոյն է Որդի Աստուծոյ եւ Որդի մարդոյ ասի յաղագս ծնողացն հոմաբնութեան, զի սայ[311], որ ի ծոց Հօր եւ զամենայն յոչընչէ գոյացոյց, ի ծոց կուսին եղանի եւ զարգանայ ըստ մարմնոյ, զի սա, որ արարիչ ամենայնի, նոյն համբերէ խաչի Ե՛ւ մահու, Ե՛ւ կենդանութեան, զմահ ճաշակէ եւ զամենայն կրէ մարդկաբար եւ լուծանէ աստուածաբար ի դատապարտութենէ նախահօրն եւ նորոգ կենացն առնէ արժանիս իւրով անապական մարմնովն: Արդ, եթէ ոք բաժանէ զմիաւորութիւն Քրիստոսի յերկուս[312] դէմս եւ յերկուս բնութիւնս եւ յերկուս ներգործութիւնս, նզովեա՛լ եղիցի: Որ ոք մինչեւ ի Խաչն ապականացու ասէ զմարմինն Քրիստոսի եւ ոչ անդստին իսկ յարգանդէ կուսին անապական եւ ամենափառաւոր, նզովեա՛լ եղիցի: Եթէ ոք զմի ինչ տնօրինական կրիցն հատցէ զքաղց կամ զծարաւ, կամ զննջելն կամ զվաստակելն կամ զզարհուրելն կամ զանգիտանալն կամ զտրտմելն կամ զչարչարելն կամաւորութեամբ եւ ոչ խոստովանեսցի զամենայն կիրս մարդկայինս կրեալ Աստուածն Բան, բաց ի մեղաց, նզովեա՛լ եղիցի: Որ Բանին այն մարմնացելոյ մի բնութիւն ոչ ասէ, նզովեա՛լ եղիցի»[40*]:

Պրոկղի

«Եթէ ոչ բնակեալ էր Բանն յանգանդ[313] Կուսին անապական մարմնով, ոչ նստէր մարմինն սուրբ յաթոռ փառաց, զի բնութեամբ անչարչարելի Բանն եղեւ գթութեամբ բազմաչարչարելի ոչ փոփոխմամբ եղեւ մարդ, մի՛ լիցի, այլ՝ ողորմութեամբ եղեւ մարդ, զի թէ այլ ոմն է Քրիստոս, եւ այլ ոմն՝ Աստուած Բանն, ոչ եւս Երրորդութիւն, այլ՝ չորրորդութիւն, այլ մի՛ պատառէր զպատմուճան տնօրէնութեան, զի վերուստ անկեալն: Եւ մի՛ աշակերտիր Արիոսի, զի անբարշտելովն զբնութիւն հատանէ[314]: Դու զմիաւորութիւն մի՛ բաժանէր յերկուս բնութիւնս, զի մի՛ բաժանեսցիս յԱստուծոյ՝ երկաբնակ հայհոյութեամբն նեստորաբար»[41*]:

Նորին՝ Սքանչելագործի

«Ոչ ինքն ի մարմնի, այլ մարմինն յԱստուածում բնակեալ, եւ Աստուած մարմնացեալ ոչ մասամբ, այլ՝ լրութեամբ, ոչ՝ երկութիւն, այլ՝ միութիւն՝ անբաժանաբար ի կուսէ յայտնեալ անապական մարմնով, մատնեալ, չարչարեալ, ի փայտի բեւեռեալ, մեռեալ, յարուցեալ, ի յերկինս համբարձեալ եւ աստուածաբար կրեալ զամենայն մարդկայինսն: Արդ, եթէ ոք ասիցէ զնա փոփոխելի եւ ոչ խոստովանեսցի զնա հոգւով եւ անապական մարմնով, նզովեա՛լ եղիցի: Եթէ ոք ասիցէ, եթէ՝ այլ է, որ չարչարեցաւն, եւ այլ է, որ ոչն չարչարեցաւն, եւ ոչ խոստովանեսցի զնա առանց չարչարանաց զԲանն մարմնով չարչարեալ անփոփոխաբար[315], որպէս գրեալ է, նզովեա՛լ եղիցի: Եթէ ոք ոչ խոստովանեսցի զնա անյեղլի[316] հոգով, անապականելի մարմնով, նզովեա՛լ եղիցի»[42*]:

Կիւրղի Ալէքսանդրացւոյ

«Կոյս՝ մայր, եւ Յովսէփ՝ հայր, եւ ապականութիւն ոչ ուրէք եղեւ մարմին գոլով Բանն ոչ ըստ հնոց ծնունդեանն ծնունդն, որով ապականութիւն քաղաքավարիւր: Եւ ծնաւ ոչ յայլ տեղիս, այլ առ ի յԵւայի գործարանս: Ոչ կարէ բնակել մահ ընդ կեանս եւ ոչ ապականութիւն ընդ անապականութեան, զի ասէ. Որ ետես զիս, ետես զՀայր»[a43*]:

Նիւսացւոյ

«Զի առ մարդկանս միաւորութիւն Աստուածն Բանի, ըստ որում միաւորեալ մնաց անշփոթ եւ անպարագրելի՝ ոչ ըստ անձին եղանակի[317], քանզի նա ի բազմացելոցն թուի գոլով եւ ախտակից լինել վասն իւրութեան մարմնոյ: Է երբէք, զի ըմբռնեալ եւ ըմբռնիլ, իսկ Աստուածն Բան ոչ ինչ ի կցորդութենէ, որ առ մարմին եւ անձն այլայլեալ եւ ոչ ընդունակ եղեալ նոցա տկարութեան, այլ, հաղորդեցուցեալ զնոսա իւրոյն աստուածայնութեան, լինի նոքօք մարմնացեալ, որ ինչ էրն եւ նախքան զմիաւորելն: Նոր իմն է եղանակս[318] այս միաւորութեան եւ խառնման եւ միաւորի եւ խառնի յամենայնի՝ ամենեւին անխառն եւ անշփոթ եւ անապական եւ անփոխադրելի, ոչ՝ ախտակից եղեալ, այլ՝ գործակից միայն, ոչ՝ ապականակից կամ այլայլակից, այլ աճիլ նոցա ի միասին, նա ոչ նուազեալ ի նոցանէ առ ի մնալոյ անփոփոխելի անշփոթելի, զի մաքրապէս ամենայն այլայլութեան անընդունակ է: Վկայէ այսոցիկ Պորփիւռիոս յերկրորդ բանին շարախառնութեան խնդրոյ. «Ոչ,— ասէ,— անհնար է էութեան իրիք առեալ լինել ի լրումն, այլ՝ էութեան, եւ լինել մասն էութեան՝ մնալով ըստ իւրում բնութեան մի, յետ լնլոյն զմիւս էութիւն՝ ընդ այլում լինելով եւ զիւրն ամբողջ պահելով եւ զմեծագունութիւն իւր ոչ փոխեալ, այլ փոխեալ զնոսա, յորս լինիցին յիւր ներգործութիւն մերձաւորութեամբն»: Եւ ասէ զայս յաղագս միաւորութեան անձին եւ մարմնոյ: Իսկ եթէ ի վերայ անձին ճշմարիտ է բանս վասն անմարմնութեան, որչափ եւս առաւել՝ ի վերայ Բանին Աստուծոյ յաւետ անբաղդատաբար եւ զճշմարտութեան անմարմնոյն, զի ըստ ընտանի բնութեան անմարմնոյն անշփոթ լինել միաւորութեան ոչ վնասել Աստուածայնոյն: Զի մաքուր, անմարմին բնութիւն տարեալ լինի անարգելաբար ընդ ամենայն, իսկ եւ ոչինչ ընդ նմա եւ մնալ անխառն եւ անշփոթ: Արդ, ոչ հաճութեան է եղանակ միաւորութեան, որպէս թուեցաւ արանց[319] փառաւորաց, այլ բնութիւն է պատճառ, քանզի առնուլ մարմին ըստ հաճութեան է, բայց միաւորելն ոչ շփոթիլ ըստ ընտանի բնութեան Աստուծոյ եւ ոչ՝ ըստ հաճութեան: Ասի, թէ ամենայն շարժութիւն ի զօրութենէ իմեքէ է: Արդ, զի՞նչ է զօրութիւն այն կամ յումմէ՞ գոյացեալ: Արդ, եթէ զօրութիւն նիւթ ինչ է, նոքիմք վարեսցուք բանիւք, իսկ եթէ ոչ նիւթ, այլ՝ նիւթաւոր, այլ է նիւթաւորն, քան զնիւթն, զի հաղորդ նիւթոյ ասի նիւթաւորն: Զի՞նչ իցէ հաղորդութիւն նիւթոյն, թե-

a Յովհ. ԺԴ 1

ռեւս[320] նի՞ւթ է նա, թէ՞ աննիւթ: Արդ, եթէ նիւթաւոր եւ ոչ նիւթ, իսկ եթէ ոչ՝ նիւթ՝ աննիւթ ուրեմն, եւ թէ աննիւթ՝ ոչ մարմին, քանզի ամենայն մարմին նիւթաւոր եւ եռակի տարորոշ»[44*]:

Տեառն Եփրեմի[321] ի սուրբ կոյսն Մարիամ

«Սպասաւորեաց կոյսն ի ձեռն անապականութեան Քրիստոսի, պահեաց զկուսութիւն, զի անապականութեան ցանկացեալ եւ մայր անապականութեան ոչ եղեւ աղախին ապականութեան, զի յորում[322] ստեղծաւ շափղ անապականութեան, շափղ ապականութեան լինել ոչ կարէ՝ յեղելումն անփորձ ամուսնութեան խորհրդապէս ոչ կարէր ապականութիւն տեղի գտանել, զի ոչ կարէր զանապականութիւն պարտել ապականութիւն, վասն այնորիկ եւ Մարիամ զուգաբնակցութեամբն յաղթեաց, որպէս ասաց Պողոս, թէ՝ «Ապականութիւն զանապականութիւն ժառանգել ոչ կարէ»[ա], զի գիտէր, թէ Մարիամ նշանակ է յարութեան: Զի ի յարութեան ապականութիւն հալածական լինի եւ առ Մարիամաւ ընդարմացաւ նորա զօրութիւն առանց բնակցութեան եւ ծնընդեան, ամենեքեան ի յարութեան ծնցին: Սոյնպէս[323] եւ Մարիամ ծնաւ: Երանելի է Մարիամ, զի այսպիսի ունէր մաքուր խորհուրդ, զի կարելի լինել զանապականութիւն ծնանել: Երանելի է եղեալն անապականութեան շտեմարան, զի առատապէս զնա ի վերա երկրի յառաջ եհեղ: Երանելի աղբերն բարեպաշտութեան, զի ի նմանէ արտածաղկեցաւ մարդ Աստուած: Երանելի է, որ ստացողին պիտանացու եղեւ, զի եղեւ փրկութիւն բոլոր ազգի մարդկան: Ոչ էր ապականութեամբ մարմնաւորութիւն, զի խաւար փախչի[324] ի գալ լուսոյն: Եկն անապականն յանապական տեղին, զի ուր անապականութիւն է, անդ դադարեալ հովանոցաւ աստուածային զօրութիւն՝ ոչ մարմնով յեղափոխեալ ի ստուեր, այլ՝ ի ձեռն այցելութեան նմա զիւրոյ գալստեան զգայութիւն շնորհեալ: Գզաթ էր Մարիամ, ոչ ներգործեաց ապականութեամբ, մեռանի մարմնով, վասն այնորիկ զզաթու իջանել ասի Բանն ի վերա նորա: Անդ զԱդամ կարգեաց ընդ անապականութեան կենակից լինել, իսկ ի Մարիամու զանապականութիւն օրինադրեաց: Ո՜վ երկնային հրամանացն, զի ծնաւ բնութիւն, ոչ՝ զիւր, եւ եղեւ ծնունդ, որ ոչ յառնէ անգաւ: Կոյսն՝ մայր, եւ բնութիւն՝ աղբիւր, արգանդն՝ սնուցիչ, աղջիկն՝ գործակից, առնումն՝ ի հիւթից բնութենէն, եւ ծնունդ՝ ի կատարելութենէ հաստատեալ բնութեամբ: Միայն կին ծնաւ, զի օտար էր ապականութեան ծնեալն: Կոյս ծնաւ վասն այնր, զի էր սրբութեան աղբիւր: Կոյս սպասաւորեաց բնութեամբ աստուածութեան: Վասն այնորիկ եւ բնութիւն անապական ետ նմա»[45*]:

Աթանասի

«Գահաւորակ արար արքայ Սողովմոն[325], այսինքն՝ մարմինն, զոր զգեցաւ Բանն, ի մայրիցն անփուտ, այսինքն՝ ի կուսէն անապական, սիւնքն արծաթիք զնոյն զմարմինն անապական քան զայլ մարմինս, յոս-

ա Ա Կորնթ. ԺԵ 50

կոյ, զի ինքն նոյն մարմինն բարձեալ լինէր ի Բանէն, եւ ոչ թէ գահաւորակն զնա բառնայր, զի գալուստ Բանին առ մարդիկ եւ մարմնանալ ի կուսէն, զի նորոգեսցէ զբնութիւն ազգի մարդկան իւրով մարմնովն եւ զերծուսցէ ի մահուանէ եւ յապականութիւնէ, որ տիրեալ էր ի վերա նոցա: Եւ դարձուսցէ զնոսա յառաջին անապականութիւն: Զի թէ այն, որ եկն նորոգել իւրով մարմնովն զմարմին մահկանացու, ըմբռնեցաւ յապականութիւնէ: Իսկ զիա՞րդ կապեաց զիզորն եւ զմեզ ազատեաց, եւ զիա՞րդ ասէ Յովհաննէս. «Սա է գառն Աստուծոյ, որ բառնա զմեղս աշխարհի»[ա], իսկ եթէ զմեղս ասաց բառնալ, որ է մայր ապականութեան, զիա՞րդ ասեն ոմանք ի մոլորելոցն, թէ ապականացու էր մարմինն Քրիստոսի, որք եւ նզովեցան ի նմանէն: Ոչ ինչ ապականէ զհոգի եւ զմարմին, բայց միայն՝ մեղք: Իսկ ապա անհոսանուտ մարմինն Քրիստոսի, որ ի կուսէն անմեղանչական է, զի եւ յանամուսնութենէ եւ մշտակուսութենէ: Վասն այսորիկ եւ անապական խոստովանելի է, զի ամենայն ապականութեանց եւ մեղաց բացաբարձիչ է, զի եւ ի Հոգւոյն Սրբոյ, զի ծնեալն ի քէն սուրբ է եւ Որդի Աստուծոյ կոչեսցի: Մի՛ ապա ամբարիշտք զանհոսանուտ եւ զգերամբարձեալ մարմինն հոսանական եւ բնութենական կարծիցեն իբր ապականացու, զի զայսոքիկ հարքն ոչ խոստովանին, այլ նզովեն զայսպիսի հայհոյիչսն, զի որպէս թէ ոք կամիցի ձեռամբ զվէմ հատանել, զվէմն ոչ հատանէ, այլ զձեռն վիրաւորէ: Սոյնպէս եւ որք ընդդէմ Տեառն գործեն, որպէս ընդդէմ անապականի իշխեցեալք, ինքեանք ապականին եւ, որպէս հակառակ անմահի ձեռնարկեալք, ինքեանք մեռանին: Եւ եթէ ոք ասիցէ, թէ[326] որպէ՞ս լինի, լռեսցէ, զի երկուց իրաց անհաւասարից եղեւ ի միասին ճանապարհորդութիւն մահկանացու, զի մահկանացու ընդ անմահի պատմեցաւ, եւ ապականացու մարմին ընդ անապական Բանի միաւորեցաւ եւ մահկանացուն ոչ վնասեաց զանմահն, զի ըմբռնեալն ըմբռնեցելումն Տէր հանդիպի, զի ընդ անմահ Բանին լինելով եւ մահն ապականիւր հրաշափառապէս ի նմա, որպէս ի հրոյ ծախի եղէգն: Իսկ Բանն անապական ելով օգտեցուցանէր, մանաւանդ զապականացուն գոլով ընդ նմա, զի թէպէտ Ադամ զանմեղ մարմին եւ զանդատապարտն ի դատապարտութիւն եւ յապականութիւն մահու իջոյց, իսկ Քրիստոս զսա անապական եւ լուծիչ մահու եցոյց եւ ունել իշխանութիւն յերկրի թողուլ զմեղս եւ ի գերեզմանի զապականութիւն ցուցեալ եւ աւետարանել զյարութիւն, ոչ կարաց մահ զինքեամբ ածել զմարդկային զոգին Քրիստոսի զկերպարանաց ըմբռնեալն, եւ ոչ ապականութիւն ըմբռնեաց զմարմինն Քրիստոսի, զօրութեամբ յապականութիւն, զի եւ սոյնպէս[327] ապականացու իմանալ զայսոսիկ ամբարշտութիւն է, զի Բանն, որ ի մարմնումն էր, ի վեր քան զմահ էր: Եւ արար զմարմին իւր անմահ եւ անապական եւ լուաց եւ ջնջեաց ի մարմնոյն զբնական մահն եւ զապականութիւն, զի միացուցեալ[328] էր իւր զմարմինն, որ ի վեր քան զբնութիւն մարդկան: Վասն որոյ եղեւ[329] անապական մարմինն ապականացու,

ա Յովհ. Ա 29

եւ յաղթահարեցաւ մահ ի բնութեան մարմինն մահկանացուի, զի Բանին Աստուծոյ կեանք թագաւորեցին ի նմա: Եւ զի հանդերձեալ էր Տէր մեր կատարել զայս մեծ խորհուրդ, առեալ զհացն ուրհնեաց եւ ասէ. «Այս է մարմին իմ անապական»: Նոյնպէս զբաժակն առ յանապական ձեռսն եւ ասէ. «Այս է արիւն իմ»[ա], թողիչ մեղաց, զի վասն մեր իսկ առ մարմին անապական: Վասն որոյ Պօղոս ասէ. «Պարտ է ապականացուին այսմիկ զգենուլ զապականութիւն, զի նա է Տէր մեր, զի արեամբն իւրով խափանեաց զմահ»[բ46*]:

Գրիգորի Լուսաւորչին մերոյ

«Զապականացու[330] մարմինս մեր խառնեաց յանապականութիւն իւրոյ, զի բնութիւնս մեր անապականս գործեսցէ»[47*]:

Սրբոյ Եպիփանու

«Ի նմա էր մարմին հոգեւոր, եւ Աստուածութիւն՝ անփոփոխելի, եւ այն չարչարեցաւն, ոչ ապականեցաւ. անապականելի ասեմք զՏէրն[332], որ նստաւ ընդ աջմէ Աստուծոյ»[48*]:

Անփիլա եպիսկոպոսի

«Բանն մարմին եղեւ վասն մեր միշտ անապական, առանց ամենայն ապականութեան»[48*]:

Գրիգոր Նիւսացւոյ

«Ընտրեալ ի բիւրուց վասն անապական եւ անախտ ծննդեան արտաքոյ տրտմութեան յատկութեան, զի ի ձեռն մարմնոյն անապականութեան զմահուան զստորալծումն, իսկ ի ձեռն անձինն, զոր առ զմանկաձգեալն առ ի դրախտն վերստին դարձն[333], զի ի ձեռն եկաւորութեան Հոգւոյն հոմախառնեալ եւ յանձին լինի, որպէս էր, զի Քրիստոս Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն միշտ անփոփոխելի[334], միշտ անապական»[49*]:

Սրբոյն Բարսղի

«Զոր օրինակ մարմինն Քրիստոսի ոչ եռեսս զապականութիւն, նոյնպէս եւ ոչ միտքն իմացան զմեղս»[50*]:

Սրբոյն Եպիփանու հայրապետին

«Ամենայն ինչ կարելի է Աստուծոյ եւ զապականելին փոխել յապականութիւն, զի զայս եկն ցուցանել. եւ եցոյց՝ առեալ յապականելի մարմինս եւ ցուցեալ անապականելի, քանզի ո՞վ[335] յանդիմանէ զԱստուած»[51*]:

ա Մատթ. ԻՁ 27-28, Մարկ. ԺԴ 23
բ Ա Կորնթ. ԺԵ 53

Գրիգորի Աստուածաբանի

«Եթէ ոք յետ մկրտութեան կամ յետ ի մեռելոց յարութեան որդեգրութեան արժանաւորեալ ասիցէ, որպէս հեթանոսք թերի գրով ի ներքս ածին, նզովեա՛լ լիցին, զի սկսեալն կամ յառաջադէմ լեալն կամ կատարեալն ոչ է Աստուած»[52*]:

Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի

«Զարմանամ ընդ ոմանս, որ ասեն, թէ՝ մինչ որ ապականացու չէր մարմինն Քրիստոսի, զիա՞րդ զնշան բեւեռացն եւ զխոցուածն եցոյց Թովմայի336: Այլ՝ զի յամօթ արասցէ զհերետիկոսս, որք ասեն, թէ խոցուածն յառաջ քան զյարութիւն ապականութիւն էր, եցոյց զնշան բեւեռացն եւ յամօթ արար զնոսա զի եւ յառաջ քան զյարութիւն անապական էր»[53*]:

Կիւրղի Աղէքսանդրացւոյ

«Աստուածն Բան ըստորակեաց զինքն, յոր ոչն էր, զի եւ որ ոչն էր մարդոյն, եղիցի բնութիւն նորա աստուածայնոյն գերունակութեան արժանաւորութեամբ, զի վայել էր իսկ անապական եղելոյն բռնահարել զբնութենէ զընդ անապականութեամբն, զի զնա բացափոխիցէ յանապականութենէն, զի պարտ էր ոչ գիտողի զմեղս կերպակից եղանիլ, որ ընդ մեղօքն էին, զի դադարեցուսցէ զմեղս, զի ուր լոյս է, անդ անգործեսցի խաւար, զի, առընթեր եղեալ անապականի, իբր ի հարկէ խափնուլ ապականութեան եւ ոչ գիտողի զմեղս խափանել զմեղս: Եւ որպէս հրացելոյ երկաթ ոչ զիւրն, այլ զնորայսն ներգործէ, սոյն եւ մարմինն, զիւրն ի բաց եղեալ, տկարութիւն զնորայսն ներգործէ զօրութեան հրաշս առ որ միացաւն»[54*]:

Սեբերիանոսի

«Եւ վասն է՞ր եղջիւր կոչեցաւ Քրիստոս, ըստ այնմ, թէ. «Յարոյց մեզ եղջիւր փրկութեան»[ա], զի զոր օրինակ եղջիւրն ի բոլոր մարմնոյն է եւ ոչ ունի նմանութիւն մարմնոյ եւ ոչ մասն բոլոր մարմնոյն է՝ անման գոլով մարմնոյն, զի ոչ մարմին է. ո՛չ ոսկր, ո՛չ ջիւղ, ո՛չ երակ եւ ո՛չ այլ ինչ, որ ի մարմնի է: Այսպէս եւ Քրիստոս առ ի մարդկանէ գոլով եւ ոչ ինչ ունելով զնմանութիւն մարդկան, որ առ ի մեզս: Յիրաւի կոչեցաւ եղջիւր, զի ոչ օրինակօք բնութեան ճանապարհորդեաց, զի ծնանի կոյս անապական, եւ զի ունիմք այսպիսի քահանայապետ»[բ]:

Պրոկղի

«Այլ մեզ քաւ լիցի յայն բնութիւն Միածնին ապականութիւն խոստովանել: Մեզ քաւ լիցի վասն չարչարանացն մահուան զոր կրեաց իւրովք կամաւք ապականութիւն ասել»[55*]:

ա Ղուկ. Ա 69
բ Եբր. Ը 1

Յովհաննու Ճգնաւորի

«Ադամ աստուածաստեղծ ամենեւին անապական էր, ի ստունգանելն ապականացու եղեւ: Իսկ ի նորոգումն Աստուած զիւր Որդին առաքեաց եւ յառնուլ[337] զմարմինն ոչ յամեաց յապականելի մարմնումն, այլ անդէն[338] ընդ առնուլն անապական գործեաց: Ոչ լոկ յաւետ վերաբերեաց զանձն իւր քան զաստուածաստեղծ մարդն, որ անապականն էր, այլ ամենեւին իսկ հաւասար Հօր գտաւ մարմնատեսակ անձամբ իւրով, որպէս էրն իսկ յէութենէ Հօր, հաւասար գտաւ մարմնովն, զոր առ ի կուսէն յեղելութենէ մարմնոյն. ոչ է մարդ երբէք ապականութիւն ասել յերկրորդն Ադամ ոչ ի բանս եւ ոչ ի գործս եւ ոչ միանգամայն ի միում ժամու արար զանապականութիւն փրկելոցն, այլ ի մարմնանալոյն, մինչեւ ի նստելն ընդ աջմէ Աստուծոյ, արար զանապականութեան քակտումն եւ առնել ի գերեզմանէն յարութեամբն»[56*]:

Ոսկէբերանի

«Զի թէպէտ եւ կաթնաբոյծ եղեւ, աշխատեցաւ եւ արտասուեաց, այլ ոչ ըստ այսմ ապականացու ասի, զի եւ նա յանմարմնութեան իբր զմարդ կերակրի առ Աբրահամու եւ յետ յարութեան, այլ ոչ թէ վասն կերակրոյ[339] ապականացու դաւանեմք զնա: Ապա թէ ոչ եւ նախքան զմարմնանալն ապականացու եւ յետ յարութեան, որքան եւ մի՛ լիցի: Եւ եթէ վասն խոցմանն ապականացու, ապա եւ ի միւս անգամ գալստեան, զի հայեսցին, ասէ, յոր խոցեցին, զի զգենուլ մարմինն ցուցաւ անապական, եւ ոչ ասեմք երկու բնութիւն. զոմն՝ անապական եւ զոմն՝ ապականացու: Առաքեաց, ասէ, զԲան իւր եւ փրկեաց զնոսա[340] յապականութենէ իւրեանց, յորժամ զգեցաւ զմարմինն եւ ասաց. «Իշխանութիւն ունիմ ի վերա անձին իմոյ»[ա]:

Սրբոյն Աթանասի հայրապետի

«ԶԱդամայ յանցանս յանհաւասարելի կանգնումն Քրիստոս կանգնեաց՝ ի նմանութիւն մարմնոյ մեղաց երեւեալ եւ դատապարտեալ զմեղս, զի մարմնով յերկրի առաքինասցի եւ անընդունակ մեղաց ցուցցէ զմարմինն, զոր յառաջին ստեղծուածին ունէր անմեղ եւ յետ յանցանացն յապականութիւն եւ ի մահ կործանեցաւ: Զայս կանգնեաց Քրիստոս ըստ բնութեան անմեղ, զի ցուցցէ զարարիչն անպատճառ մեղաց եւ ըստ մեզ բնական ստեղծուածն յինքեան բնութեան հաստատեսցէ, զի ինքն էր անմեղութեան հանդէս, զի զանկեալն յերկնէ յերկիր դարձեալ յերկինս եհան»[57*]:

Դիոնէսիոսի Արիոյպագացւոյ[341]

«Ոչ մարդ էր Քրիստոս եւ ոչ՝ որպէս ոչ մարդ, այլ՝ որպէս ի մարդկանէ մարդկան գերազանց եւ ի վեր քան զմարդ եւ ճշմարտապէս մարդ եղեալ եւ այնուհետեւ ոչ ըստ զաստուածայինսն ներգործել եւ ոչ մարդկայինսն ըստ մարդոյ, այլ այրացելոյ Աստուծոյ նոր իմն եւ աստուածայրական ներգործութեամբ ընդ մեզ քաղաքավարեալ»[58*]:

ա Յովհ. Ժ 18

Սրբոյն Եփրեմի

«Ոչ թէ վասն որովայնի լրման հրաւիրեցաւ յագիլ, այլ՝ վասն ապաշխարութեան կնոջն մեղաւորի, զի արդարացուսցէ զմեղաւորս[342], ոչ էր քաղցեալ կերակրոց, այլ արտասուօք պոռնկին հանգչէր եւ հանգուցեալ յարտասուաց[343], որում քաղցեալն էր: Զի ոչ թէ վասն անցաւոր կերակրոյն հրաւիրեալ էր, այլ՝ վասն օգնականութեան մտացն, եւ ոչ վասն հեշտութեան եղեւ ընդ կերակրողս[344] եւ ընդ արբեցողսն, որպէս կարծեր փարիսեցին, այլ՝ զի ի մահկանացու կերակուրս նոցա խառնեսցէ զվարդապետութիւն իւր որպէս դեղ կենաց: Զի որպէս ի պատճառ կերակրոյն տայր բարին զպարգեւս կենաց որդւոց Ադամայ: Որսորդ իսկ էջ, զի որսայր զկորուսեալ կենդանիսն[345], ետես զմաքսաւորս եւ զպոռնկեալս յանառակութիւնս ընթացեալս, փութացաւ եւ սփռեաց զգործիս իւր վերա ընթացից նոցա, որ է կերակուր պարարող մարմնոյ նորա, որսալ զնոսա ի պահս, որ պարարէ զհոգիս նոցա: Ի լկտեաց կարծէր կերող, իսկ ի գիտնոց՝ ամենապարգեւս[346], հարբեցողաց՝ արբեցող, իսկ յիմաստնոցն[347]՝ արբեցող ամենեցուն զբաժակս կենաց օրհնեալ տեսչութեամբ քո, Տէր, ամէն»[59*]:

Գրիգորի Հայոց[348] Լուսաւորչի.

«Զի որպէս յառաջ քան զչարչարելն պարգեւեաց զմարմին իւր աշակերտացն՝ յայտ առնելով, թէ ինքնակամ չարչարի, նոյնպէս եւ յետ յարութեան ցուցանէ զնշան բեւեռացն, զի ցուցցէ, թէ չէին բաւական վերքն արգելուլ ի գերեզմանի զբժիշկն վիրաւորաց, սոյնպէս եւ՝ ճաշակելն ի նոր արքայութեան, զի ցուցցէ, թէ որ յանկարօտ եւ յանճաշակ արքայութեան ճաշակել գիտէ, նոյն եւ յառաջ քան զչարչարելն քաղցական եւ դարմանաւոր յաշխարհս, լի եւ անկարօտ ամենալցոյցն շրջէր: Եւ որպէս անդ վասն հաստատելոյ աշակերտացն եկեր, սոյնպէս եւ աստ՝ առ ի հաւատարիմ առնելոյն զմարմինն քաղցեալ, թէ արդարեւ իսկական Որդին Աստուծոյ ոչ ստուեր կերպարանաց, այլ ճշմարիտ մարդ եղեւ: Եւ զի կեցուցէ զաշխարհս, վասն որոյ կանխասաց մարգարէն ասէր. «Աստուած յաւիտենական, որ հաստատեաց զծագս երկրի, որ քաղցիցէ եւ ոչ վաստակիցէ, եւ ոչ գոյ քննութիւն իմաստութեան նորա»[60*]:

Սրբոյն Աթանասի

«Բնութեամբ եւ ոչ պիտակապէս Տէրն մարդ եղեւ եւ ոչ ըստ բնութեան եւ ոչ ըստ գործոց մեզ մեղաց հանդուրժել կարողութիւն էր արարչին, զի մերով բնութեամբ գտանել զմեզ պատերազմ լինէր եւ սերման տանումն ի ձեռն մերոյ տկարութեան: Իսկ Բանին մարմնաւորութիւն, ըստ բնութեան աստուածութեան եղեալ, անընդունակ եղեւ, որ ի մեզ հնութեամբ սովորական իրք էին: Վասն այնորիկ ուսանիմք մերկանալ զհինն եւ զգենուլ զնորն, զի մարդ եղեւ Տէրն եւ առանց մեղաց, զի նոր բովանդակ եղեւ եւ որքան ինքն հրամայեաց, բնութենէն կամելով, յինքն ընկա-

լաւ որքան կամեցաւ, այս է՝ ծնողեանն[349], որ ի կուսէն աճման հաւակի ամաց թուոց, աշխատութեան, ծարաւոյ, քաղցոյ եւ քնոյ, տրտմութեան մահու եւ յարութեան»[61*]:

Բարսղի[350] հայրապետի.

«Եւ զի եկեր Տէրն եւ արբ՝ ոչ այնոցիկ արարեալ, այլ՝ քեզ չափս եւ սահմանս հարկաւորացն անձին ախտից թողցէ: Սոյնպէս եւ արտասուեաց, զի զգացելոցն զսաստկացեալ զախտն նուաստացուցեալ ուղղեսցէ եւ զի ոչ ախտաւոր էր արտօսրն Տեառն, այլ՝ վարդապետութիւն, զի եւ ոչ զգայր, զոր յարուցանելոց էր անդէն իսկ»[62*]:

Փիլիքսիմայ Բաքա եպիսկոպոսի

«Առ Տէրն մեր մարմին ճշմարիտ, եւ ցանկութիւն ոչ ի նմայ, եւ ոչ՝ հալումն[351] եւ ոչ՝ մի ինչ, որ ի պատճառ դատապարտութեան Ադամայ, այլ ազատ ամենեւին եւ ազատութեամբ փորձեալ Տէրն կամաւորութեամբ եւ ոչ որպէս ինքն իշխանութիւն ունէր անձին, զոր կամէր, այն լինէր, եւ ոչ ի բոնութենէ ուրուք կրէր ինչ: Զի թէ դնել եւ առնուլ զանձն իշխանութիւն ունէր, ապա եւ ամենայն ինչ կամաւորութեամբ լինէր եւ ոչ բնական քաղցն եւ ծարաւն, վաստակն, քունն[352] եւ չարչարանքն. այս ամենայն ըստ տեսչութեան համարեալ եւ ոչ՝ ըստ բնութեան մարմնոյն. յորժամ կամէր, քաղցեաւ՝ ոչ ըստ թափման կերակրոց, որպէս ամենայն մարդ: Պահեաց զքառասուն օր եւ ապա քաղցեաւ, զի թէ ըստ բնութեան էր, ոչ յետ քառասուն աւուրն: Արդ, ոչ ասեմք, եթէ ոչ վարեցաւ Տէրն կերակրօք եւ ըմպելեօք, այլ ի բոնութենէ քաղցի որպէս կարօտ ձգեալ ի պէտսն»[63*]:

Սրբոյն Երանոսի

«Նոյն ինքն Բանն Աստուծոյ Հոգով գիտութեամբ կատարելութեամբ երեւեալ եւ ոչ՝ Հոգով անգիտութեան պակասութեամբ: Զիա՞րդ ի նմին կարէր գոլ կատարելութիւն եւ պակասութիւն, գիտութիւն եւ անգիտութիւն ճշմարտութիւն եւ մոլորութիւն, լոյս եւ խաւար, կարօտութիւն եւ անկարօտութիւն, զի սոքա բարձօղք միմեանց են. որպէս լոյս եւ խաւար ի նմին համայնգամայն ոչ երբէք լինիցին, զի թէ լոյս ոչ երբէք խաւար, եւ եթէ կարօտութիւն՝ ոչ անկարօտութիւն, եւ եթէ ճշմարտութիւն՝ ոչ մոլորութիւն, ե եթէ լիութիւն՝ ոչ պակասութիւն, եւ եթէ գիտութիւն՝ ոչ անգիտութիւն, ե եթէ կատարելութիւն՝ ոչ երբէք թերութիւն»[64*]:

Կիւրղի Երուսաղէմի հայրապետի.

«Վասն այնորիկ Յիսուս առ յանձին[353] զդատապարտութիւն, զլուծցէ զվճիռ դատապարտութեան զառաջնոյ դատաստանին: Եւ վասն այնորիկ թաղեցաւ յերկրի, զի երկիրն[354], որ ընկալաւ զանէծս, փոխանակ նզովիցն ընկալցի զօրհնութիւնս: Եւ վասն զի առ ժամանակ մեղացն պատսպարան զտերեւ թզենոյն կարկատեալ զգենուին, վասն այնորիկ ե Յիսուս ի վախճանի նշանացն, զի զթզենին անէծ, յորժամ գայր ի չարչարանս, ոչ զամենայն, այն զմինն միայն յօրինակի լուծեալ լիցի այսուհետե

վճիռ դատապարտութեան, եւ անցցէ պատիժ պատուհասին: Արդ, որովհետեւ առին զտերեւ թզենոյն եւ արկին զիւրեամբք, եկն ի ժամանակի, յորում ոչ գտանէր պտուղ, այլ՝ միայն տերեւ. ոչ եթէ ոչ գիտէր, այլ՝ զի զսաստ նզովիցն տերեւով չափ կամէր առնել եւ ոչ՝ պտղով»[65*]:

Եպիփանու Կիպրացւոյ[355]

«Վասն հարցանելոյն Տեառն, թէ՝ «Ո՞ւր է Ղազար»[ա], եւ «Ո՞[356] մերձեցաւ յիս»[բ] եւ թէ՝ «Զո՞ խնդրէք»[գ]: Այս որպէս ի հնումն խոնարհեալ Հօր եւ առ հաւանումն մարդկան եկեալ Որդւոյ՝ կատարելով զասացեալսն: «Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ»[դ], զի որպէս ի յնումն ասէ՝ «Ո՞ւր ես, Ադա՛մ»՝ ոչ անգիտելով, սոյնպէս ասէ. «Ո՞ յիս մերձեցաւ», զի մի՛ ինքն ինքեան լիցի վկայ, այլ զի յայլոց խոստովանեսցի, զի առնելոց էր նշան սքանչելեաց: Եւ ասելն, թէ՝ «Զո՞ խնդրէք», զի նոքին ասացեն, թէ՝ զՅիսուս, որ է փրկիչ, զի ի տեսանելն զնա ի նորա փրկութենէն զըրկեալ գտցեն, ապա թէ ոչ այսպէս, որ ի հեռաստանէ գիտէր զմահն Ղազարու, մերձ եկեալ զգերեզմանն՝ ո՞չ գիտէր: Այլ զայս ամենայն առնէր, զի կատարելապէս ոչ ոք հաւատայր նմա, եւ զի ցուցցէ առ մեզ զբազում խնամակալութիւնն[357] իւր»[66*]:

Աթանասի հայրապետի

«Թէ յառաջ ոչ գոյր երկիւղ ի մարդումն: Արդ, եթէ իշխան աշխարհիս ոչ ինչ գտանէ զիւր ի Քրիստոս: Բազում եւս առաւել Քրիստոս ոչ ինչ յիւրմէ արարածոցն եթող առ իշխանի աշխարհիս եւ վասն այնորիկ ոչ ինչ գտանէր ի նմա կատարելապէս զնորոգումն ցուցեալ Քրիստոսի, զի կատարելապէս զփրկութիւն գործեսցէ զմարդոցն բովանդակ[358] հոգւով եւ մարմնով»:

Յուլիայ Հռովմայ հայրապետի

«Զարմանամ՝ լսելով յաղագս ոմանց խոստովանողաց, որք ածեն ի մարմին զՏէր, իսկ զառածելոց ի հերձուած չարապէս ի պօղիանոսացն՝ ի ներքս ածելով Պօղի Սամօսատացւոյ[359] ծառայեալք, այլ ոմն զերկնուստ ասեն Աստուած խոստովանելով զնա, իսկ այլ՝ զերկրի՝ մարդ ասելով. զոմն առնելի եւ զոմն՝ անառնելի, զոմն՝ յաւիտենական եւ զոմն՝ երեկեան. զոմն՝ Տէր, իսկ զոմն՝ ծառայ: Ամբարշտելով, եթէ երկրպագեն, զոր ասեն ծառայ եւ առնելի, եթէ ոչ երկրպագեն զգնողն զմեզ իւրով արեամբն, իսկ որք զերկնուստն Աստուած խոստովանեն ի կուսէ մարմնացեալ եւ մի՛ լինել հանդերձ մարմնովն տարապարտ խռովեցուցանեն ի բանս նոցա ամբարշտութեան զառածեալք, քանզի ասեն սոքա երկուս բնութիւնս. զի Յովհաննէ ցուցեալ Տէրն՝ Բանն, մարմին եղեւ, եւ Պօղոս՝ մի Տէր Յիսուս

ա Յովհ. ԺԱ 34
բ Ղուկ. Ը 45, Մարկ. Ե 30
գ Յովհ. ԺԸ 4
դ Յովհ. Ե 17

Քրիստոս, որով ամենայն. զի թէ մի, որ ի կուսէն ծնեալ, անուանեցաւ եւ ինքն է, որով ամենայն եղեւ մի բնութիւն, զի եւ դէմք մի ոչ բաժանեալ, զի ոչ իւրոյն բնութեան մարմին եւ իւրոյն բնութեան աստուածութիւն ըստ մարմնոյն, այլ ըստ որում մարդ մի բնութիւն է առ որպէս եւ ի նմանութիւն մարդոյ եւ Քրիստոս: Իսկ եթէ ոչ ճանաչեն ըստ միաւորութենէն զմինն, կարեն եւ ի բազումս զմինն բաժանել բազում ասել բնութիւնս, զի բազմատեսակ է մարմին յոսկերաց եւ յերակաց եւ ի ջլաց եւ ի հոգւոյ եւ յայլոց բազմաց, որք յոյժ զանազանին միմեանց, բայց մի է բնութիւն, որպէս Աստուած հանդերձ մարմնովն. մի է եւ յերկուս ոչ բաժանի, քանզի ոչ կարելի էր զբոլորն Որդի մարդոյ կոչել՝ իջեալ յերկնէ եւ Որդի Աստուծոյ եւ ոչ՝ մարդոյ, եւ զծնեալն ի կնոջէ Որդի մարդոյ եւ ոչ՝ Որդի Աստուծոյ: Այլ մեզ աստուածային գիրք ուսուցանեն յաղագս միոյ Տեառն ըստ յերկնէ իջմանն խորհել, եւ որք մի անգամ այսպէս խորհին, ի ձայնակցութիւն նոցա մի՛ ելցեն, որ զամենայն ինչ ընդդէմ խորհին, քանզի հարկ է ասողացն երկուս բնութիւնս զմինն երկրպագելի եւ զմիւսն՝ ոչ, յաստուածայինն մկրտել եւ ի մարդկայինն՝ ոչ: Իսկ եթէ ի մահ Տեառն մկրտիմք, մին բնութիւն խոստովանիմք՝ անչարչարելի աստուածութեամբն եւ չարչարելի մարմնովն, զի այսպէս յԱստուած իցէ մկրտութիւն մեր, եւ ի մահ Տեառն՝ կատարելութիւն: Զի եւ ոչ մի այլայլութիւն[360] յաստուածայինն բնութեան ոչ նուազէ եւ ոչ աճէ եւ ոչ, յորժամ ասէ. «Փառաւորեալզիս», ի մարմնոյ է ձայնն, եւ յաղագս մարմնոյ փառաւորութեան ի վերա բոլորին ասացեալ, վասն զի բոլորն է: Եւ դարձեալ ի վերա ածէ. «Փառօքն, զոր ունէի առ քեզ յառաջ քան զլինել աշխարհի»[ա]: Զփառաւորեալն միշտ աստուածութեան յայտնէ: Եւ զի թէպէտ յայտնապէս աստուածութեան վայել է, սակայն հասարակաբար ի վերայ բոլորին ասացաւ այսպէս: Եւ Աստուծոյ համագոյական ըստ անտեսանելի Հոգւոյն շարաառութեամբ[361] անուամբ եւ մարմնոյ, զի առ Աստուծոյ համագոյութիւն միացեալ է: Եւ դարձեալ մարդկան համագոյական շարառելոյ եւ աստուածութեան՝ ընդ մարմնոյն, զի առ մեր համագոյութիւնս միացաւ ոչ այլայլելոյ մարմնոյն համագոյականութեան առ Աստուած միաւորութեամբն եւ հաղորդութեամբ համագոյական անուանն, որպէս եւ ոչ աստուածութեան այլայլեցաւ բնութիւն ի հաղորդութեան մարդկային մարմնոյն եւ անուանակցութեամբ համագոյականի մերում մարմնոյն: Մի՛ այսուհետեւ բաժանողացն պատճառս տայցեն երկուս[362] ասել բնութիւնք, քանզի ոչ մարմին ըստ ինքեան բնութիւն, զի եւ ոչ կենագործակ ըստ ինքեան եւ ոչ բաժանել կարացեալ առանց կենագործին, եւ ոչ բանն ըստ ինքեան յիւրն բաժանի բնութիւն, զոր ունի ըստ մարմնոյն, զի եւ ի մարմնի Տէրն եւ ոչ անմարմնաբար ներդրեաց աշխարհի: Իսկ եթէ որք մարդ յԱստուծոյ առընկալեալ ասէ զՄարիամայն Յիսուս եւ երկուս դէմս կատարեալս միաւորեալ ծանիցէ աստուածային յուսոյն օտարելով, զի Աստուածն Բան, որով ամենայն եղեւ, եւ ինքն է Յիսուս, որով ամենայն,

ա Յովհ. ԺԷ 5

իբր զի նզովեսցի, որ զի Մարիամայն մարդ ոչ խոստովանէ գոլ ներմարմին. Աստուած նոյնագոյ Հօր, Աստուած անյեղլի ի մարմնի եւ անախտ յախտակրութեան: Եւ նզովեալ լիցի որ զմարմինն ոչ ասէ ի կուսէն, այլ յերկնուստ կամ անարար բնութեամբ զառնելին ի յոչէիցն, իսկ զառ անառնելին՝ Աստուած միաւորութեամբ: Որ ասէ՝ աստուածական զմարմինն երկրպագելի եւ զերկախումբն իբր մի անարարեալ Աստուած, երանեալ եղիցի՝ ոչ գայթագղեալ ի վերայ մարմնոյ եւ ախտակրութեան նորա յայլ զանմարմնապէս երկրպագելին եւ մարմնականաբար երկրպագելով: Իբր մի եւ միայն Որդի Աստուծոյ, եւ ի մահ նորա մկրտիմք՝ մին խոստովանելով բնութիւն անախտակիր աստուածութեան եւ ախտակրելի մարմնոյն, զի այսպէս յԱստուած իցէ մկրտութիւն մեր եւ մահ Տեառն կատարեալ: Զի եւ ոչ երկնչիմք, որ հայհոյենն զմեզ՝ զրպարտելով զմեզ յերկնուստ ասել զմարմինն, յորժամ ընթեռնումք զգրութիւն՝ Որդի մարդոյ ասելով յերկնուստ, զի եւ ոչ յորժամ Որդի մարդոյ ասեմք եղեալ ի կնոջէ, զԲանն ասեմք յերկրէ եւ ոչ՝ յերկնուստ, այլ ասեմք զերկոսեան յերկնուստ զբոլորն սակս աստուածութեան եւ ի կնոջէ զբոլորն յաղագս մարմնոյն՝ ոչ գիտելով բաժանութիւն միոյ դիմի: Եւ ոչ ի բաց հատանել յերկնայնոցն զերկրայինն եւ ոչ յերկրականէն երկնականն, քանզի ամբարիշտ է տարատութիւն: Իսկ եթէ գրութեան սովորութիւն է զբոլորն աստուածաբանել եւ զբոլորն մարդաբանել, հետեւանամք եւ մեք բայիցն աստուածայնոց եւ ոչ բաժանեմք զանբաժանելին, քանզի երկրպագելի խոստովանէ Քրիստոս ըստ մարմնոյ՝ զՀայր ասելով, մեք երկիրպագանեմք, որում գիտեմքն[363]: Եւ ոչ որիշ աստուածութիւն երկրպագի ըստ աստուածութեան, եւ ոչ բաժանի մարմինն աստուածութեան երկրպագութեամբ, եւ ոչ որիշ կացուցանեմք զմարմինն, յորում երկրպագեմք, քանզի եւ ոչ կարելի մարմնոյ ախտակրելն, եւ ոչ զատանի աստուածութիւն, զի միացաւ[364], քանզի պարտ էր յաղթել զմահն յԱստուծոյ եւ յաղթեցաւ»:

Եւ արդ, հայեա՛ց յուղղափառ վարդապետացդ վկայութիւն՝ որպէս միաբան զմի եւ զնոյն խոստովանին ի վերա տնօրէնութեան Բանին՝ մի բնութիւն խոստովանելով՝ միացելոյն ի մարմնի ըստ մարգարէիցն եւ առաքելոցն դաւանութեան: Անդէն յարգանդի կուսին անշփոթ միութեամբ գոյացեալ. ի բնութենէ անապական կուսին շրջաստեղծեալ եզաբուն զարգացմամբ անփոփոխելի[365] բնութիւն զփոփոխելին փոխատրեալ յիւրն անապական անմահ, անչարչարելի, անյեղափոխելի, անկարօտ, յոր ինչ յԱստուծոյն բնութիւն գեր ի վերոյ ամենայն կրից: Նոյն եւ միացեալ մարմինն անկարօտ ի կրից կարեաց՝ զնոյն առնելով անմահութիւն, որ ինչ միացելոյ բնութիւն ի բաց մաքրեալ յամենայնէ, որ ինչ մարմնոյն են կիրք, եւ գերազանցեալ աստուածային երանական փառսն: Եւ նոյնատիպ պատկեր հրաշաբուսեալ յամենայնի յաղթող եւ անկարօտ եւ կրեալ զամենայն կիրս մարմնոյ կամաւորութեամբ եւ ոչ՝ ի հարկէ, որով ազատեաց զմեզ: Եւ մեք զայդ խոստովանիմք, որպէս ունիմք ոչ վկայութիւն ի սուրբ վարդապետացդ եւ ոչ յումեքէ լուաք զՔրիստոսի մարմինն ապականացու գոլ մինչեւ

ի յարութիւն, այլ անդստին յարգանդէ կուսին, զի յետ յարութեան ամենեքեան զգենուն զանապականութիւն, ապա ոչ ինչ աւելի ունենալով Քրիստոս քան զմեզ: Եւ արդ, ոչ երկուս բնութիւնս եւ ոչ երկու ներգործութիւնս կամ երկու կամս ի Քրիստոս կրիլ լուաք յումեքէ. եւ ոչ դուք ցուցանել կարեք յուղղափառացն զայդ խոստովանել երբէք, այլ՝ մի բնութիւն անապական ի կուսէն եւ ոչ՝ ի գերեզմանէն: Իսկ եթէ վասն շարագրեցելոյ մարմնոյն ընդ Աստուծոյ Բանին, եւ ըստ այսմ յարանունաբար խոստովանիմք զնա Աստուած, ոչ աւելի քան զմարգարէիցն ունիք կարծիս, առ որս Բանն Աստուծոյ եղեւ, զի եւ զնոսա Աստուածս եւ Որդիք Բարձրելոյն կոչեն Գիրք յաղագս շարախառնութեան Հոգւոյն եւ գերադրական մաքրութեան: Ջայսպիսի առատութիւն ընկալեալ անուանց ըստ փոխադրութեան վեհագունին: Թուի՝ թէեւ ոչ յարանուանաբար խոստովանիք, զի սահման յարանունութեան է, որ հաղորդութիւն տայ, անուան եւ իրի ըստ փոխաձեւութեան յանգակի փաղառութեան: Իսկ դուք թէպետ եւ անուան հաղորդութիւն տայք, այլ ոչ՝ իրի, զի բաժանելն յերկուս անհաղորդք են բնութեամբք եւ տարբերին[366] յոյժ ի միմեանց հեռաւորութեամբ, զի ոմն նիւթական եղանակաւն, եւ ոմն՝ աննիւթ եւ անեղ, եւ այլ՝ ամենայն կրիւք եւ ներգործութեամբ տարորոշեալք ի միմեանց ըստ պարզին եւ շարադրեցելոյն: Եւ զիա՞րդ որոշեալն յԱստուծոյ մարդն Աստուած իցէ պաշտելի, եթէ ոչ մի են նոքա, որպէս Աստուածաբան ասէ. «Ո՞վ նոր խառնմանս եւ սքանչելի խառնուածոյս: Իսկ եթէ յերկուս բաժանի, զիա՞րդ ասէ՝ սքանչելի խառնուածոյս, զի խառնել միաւորութեան ասի եւ ոչ յերկուս բաժանելոց բնութեանց: Եւ արդ[66ա*], կամիմ, զի յօրինակէ հրոյ յայտ ցուցից զմիաւորութիւն Բանին եւ մարմնոյն, որպէս սուրբ[367] Բարսեղ եւ Դիոնիսիոս յայտ ցուցանէն մեզ. զի որպէս երկաթ, ընդ հրոյ միաբանեալ, ընդունի զհուրն ոչ փոխարկաբար, այլ, փոխատրաբար զիւր բնական որակութիւնսն ի բաց դնելով ի հրոյն, փոխադրի ի որակութիւնսն եւ ոչ զիւրսն այլ զնորայն ներգործէ զօրութիւնսն: Իսկ բնութիւն հրոյն ոչ շփոթի կամ ի բաց դնէ զծայրս որակութեան՝ բնաբար ունելով զանեղափոխութիւն ի միաւորելն երկաթոյն, այլ զնորայն փոխադրէ յիւրն ունակութիւն, ըստ զօրութեան բնաբար368 ունելով զանյեղափոխութիւն թէպետ, եւ ընդ ամենայն գոյս ունի զհաղորդութիւն: Եւ արդ, միացեալ ընդ երկաթոյ՝ ոչինչ կրէ ի նորայց որակութենց, այլ պարզեալ ձգէ ի ծայրս որակութեան իւրոյն բնութեան: Ջորակութիւնս երկաթոյն ասեմ զցրտութիւն եւ զսեւութիւն, լուսափայլ եւ ջերմին փոխադրեալ: Վասն որոյ ասեմք զերկաթն հրացեալ, այլ ոչ անդրադարձի ասել զհուրն երկաթացեալ, զի ներհակս որակութեան երկաթոյն հուրն առ ինքն[369] վերաբերէ բնութիւն՝ ի լաւն զվատթարն փոխադրելով, ինքն ոչինչ առեալ ի նորայոցն, բայց միայն՝ ըստ ձեւոյ եւ ըստ չափոյ երկաթոյն ձեւակերպեալ: Եւ այսպէս անըմբռնելի բնութիւն հրոյն ըմբռնի ի ձեռն երկաթոյն եւ ընդ կռուանաւ անկանի: Այլ ըստ բնութեան անչարչարելի եւ անայլայլելի է Աստուածն Բան, զի որ միանգամ ի տանջանս ըմբռնի, այլայլէ, իսկ հուր ոչ ի տանջանս ըմբռնի եւ այլայլի, թէպետ

եւ ընդ երկաթոյ միաւորի անբաժանաբար, այլ ոչ կրէ զնորայսն, վասն զի անյեղափոխ է ունակացեալ, զի պարզաբար մեկին ունի զօրութիւն եւ անկար է փոխադրիլ յայլ ինչ[66բ*]: Եւ արդ, ըստ այսմն[370] նմանութեան՝ Բանն ի մարմնի միացեալ ոչ ինչ կրեալ զնորայսն հարկաւորաբար, այլ՝ կամաւորութեամբ՝ վասն մերոյ փրկութեան, իսկ զնորայսն հարկաւորաբար կիրսն վերաբերեալ առ իւր անպարտելի զօրութիւնսն[371]: Եւ ոչ էր նմա հնար ըմբռնիլ յիւրոցն ինչ հարկաւոր կրիցն, զիա՞րդ էր հնար զայլոցն շարաբառնալ զտկարութիւն, որ իւրոցն վտանգիւր կրիցն[67*]:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

156 A յայդ: 157 C Ադամա: 158 D *ցիր* ի: 159 D անասուն: 160 C մնայ: 161 C իմանայ: 162 D ամենայն: 163 A զիտեայք: 164 D եւ Աստուած թէ: 165 D օրինօք *փխ* օրինակօք: 166 D շնորհքս: 167 D ի մարդոյ: 168 D միտս ա—ն՝ *յետոյ ջնջուած*: 169 C *ցիր* ոչ՝ ահա: 170 AC երկուս: 171 C Բազում *կրկ. եւ ջնջ.*: 172 C իւր: 173 AC ժառանկ: 174 AC ժառանգակից: 175 C թէ: 176 D աշխարհ: 177 D անդրանիկ: 178 C գաւազան զօրութեան զօրութեան—ը *յետոյ ջնջուած*: 179 A մարգարէք: 180 D ի հրեշտակաց: 181 A *ցիր* եւ: C թէ: 182 A յերկեղէ: 183 C թողիչ *փխ* բարձիչ: 184 AC ասէր: 185 D զբօսական *փխ* զբաւական: 186 D մարմնով: 187 D ի մեր: 188 D յաստուածութեան: 189 C քահանայ: 190 C թէ [1,2]: 191 A մարդոյ: 192 D եթէ: 193 AC զձեռ: 194 C *ցիր* ընդ: 195 A յԱդամա: D Ադամայ: 196 A առնելով: 197 D ընդ *փխ* ընդէ՞ր: 198 C զնմանիւն: 199 D *ցիր* տես: 200 C բահաբերք: 201 A կեսք [2]: 202 A մանանա: 203 A անճարեցան: 204 D որ *փխ* զոր: 205 D Ահաւանիկ: 206 C բաժանել երկուս, այլ մի տեսանել *յետոյ ուղղուած*: 207 D կենագործէր *փխ* կենդանագործէր: 208 AÇ գաւազան: 209 AC Որդի: A մեր: 210 CD գաւազան: 211 D գաւազան: 212 D արիւն: 213 D փարաւօվի: 214 C յամօթ: 215 A ակամա: 216 AC դեղտ: 217 AC պարտէին *փխ* պատրէին: 218 C իմաստունք: 219 D զպսելս: 220 AC տեսանել: *Ուղղումն ըստ Վենետիկի ձեռ., տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 169*: 221 A մերելոյց: 222 AC ձեռք: 223 D *ցիր* է: 224 AC կեցաք: 224ա D կեանմք: 225 C քաչայայտ: 226 A բայց: 227 C վերահասու: 228 AC զայթագդիս: 229 C երկու: A պատճառ: 230 C քաչայայտ: 231 A բայց: 232 AC բնութիւն: 233 C քաչայայտ: 234 D զնոյն: 235 D այսուիկ: 236 CD *ցիր* իւրում: 237 A—ում «զի մարդոյ... յանհնար է զայսոսիկ ի մեզ» միջեւ՝ «Նոյնպէս առ կիրս մեր հաղորդեալ սպան զնոսա»: 238 A յայլեաց: 239 D եթէ: 240 D կուսութեամբ: 241 D կէս աստուած: 242 A առաքելս: 243 D զի ապականութիւն... աղբիւր մահու *լուսանցքում*: 244 C զապականութիւն: *Շիր* եւ: 245 A զկերպակաւորսն: 246 A ջրոյս: 247 C արիւն: 248 AC *ցիր* եւ: 249 C այն թէպետ *փխ* անդէն պետ *ուղղուած ձախ լուսանցքում*: 250 C քաչայայտ: 251 A լուաք: 252 D քացաղով: 253 D ապականագործ: 254 D կենաց: 255 D ջուր: 256 D արժամ: 257 C վերնկալ: Տէրունոյ: 258 A որ հերձուածողաց: 259 A խաչանըման: A հեղլր: 260 A

մրկրտութեան: 261 AC լինել: 262 A իջանէ: Փառք Աստուծոյ: 263 CD հաղորդելոյ: Գլ. Բ: 264 D իրաւի: 264ա D Որ թէ: 265 D բան *փխ* բաց: 266 AC ըմբէ: 267 A *չիք* ասէ: 268 A տրաւն: 269 A *չիք* է [1]: 270 D խեղճ: 271 C խորհուրդոյն *ու—ն յետոյ ջնջուած:* 272 AC զԱստուծոյ: 273 D մտան *փխ* մտանեն: 274 A նորդ: 275 AC եւ խառնակ: 276 C ապագէն: 277 CD հինգշաբաթին: Գլուխ Գ: 278 D հինգշաբթին: 279 AC քրձասգածս: 280 A տօնս: 281 C կիւրակին *փխ* կտակին: 282 D նորոգութեամբ: 283 D ասացիս: 284 D առնես: 285 AC բաղարջակերաց: 286 A շարայարիկ: 287 D զնոր եւ զհին: 288 CD Տեառն: Գլուխ Դ: 289 C յապականացու մարմինն խոստովանիք հաղորդիք (խոստովանիք—*ը՝ յետոյ խազուած*): 290 A անգեալ: 291 D յաւուրս: 292 C կանոնական: 293 A հրամանն: 294 D ի միտ: 295 C յանէակ: 296 D մարդ: 297 D սկիզբնատիպն: 298 A սկիզբնատիպն: 299 C քաչայայտ: 300 D պատուղոյ: 301 A անհնարս: 302 D շրջեաստեղծեաց: 303 A գինոյ: 304 D *չիք* որ: 305 D բնութեան: Եւ եթէ վասն հարկի մեռաւ՝ *լուսանցքում*: 306 A նախահայրն: 307 AC *չիք* մեր: 308 A սկզբնամօրն: 309 C վկայեն մեզ (մեզ—*ը՝ ջնջուած*): 310 D Այլ կամաւորութեամբ... եւ բռնութեամբ: 311 C սա: 312 A երկուս: 313 B յարգանս: 314 A հատանես: 315 D անփոփաբար *փխ* անփոփոխաբար: 316 D անյեղի: 317 AD յեղանակի: 318 A յեղանակ: D այս եղանակս: 319 C արանց ոմանց (ոմանց—*ը՝ յետոյ ջնջուած*): 320 C *վերին լուսանցքում՝* թերեւս նիւթանիւթ անհիւթ: D եւ թէ անհիւթ: 321 D Եփրեմ: 322 A որում: 323 D Այսպէս: 324 A փաղչի: 324ա CD լուսոյ: 325 CD Սողոմոն: 326 D թէ: 327 D այսպէս *փխ* սոյնպէս: 328 A միացոյցեալ: 329 C եղեւ մարմինն ապականացու անապական: 330 D Ապականացու: 331 AC *չիք* ի: 332 A զՏէր: 333 A դարձան: 334 D անփոփելի: 335 A ով զա: 336 C Թօմայի: 337 A առնուլ: 338 A այլ անդեն... ոչ լոկ *բառերը՝ կէտագծերի մէջ:* 339 D կերակրոյն: 340 D նոցա: 341 C Արիսպագացւոյ: 342 D զմեզ առրս: 343 D յարտասուեաց: 344 D կերակրօս: 345 A կենդանիս: 346 AC ամենապարգեւ: 347 C յիմաստնոց: 348 C մերոյ *փխ* Հայոց: 349 A ծննդեան: 350 D Բարսեղի: 351 A հալածումն: 352 C եւ քունն (եւ—*ը՝ յետոյ ջնջուած*): 353 A անձին: 354 A եւ որ: 355 A Կիպրացու: 356 A ոյ: 357 D խնամակալութիւն: 358 A բովընդակ: 359 D Սամոստացւոյ: 360 D յայլայլութիւն: 361 D շարառութեամբ: 362 A երկու: 363 A գիտեմք: 364 D *չիք* զի միացաւ: 365 D անփոփելի *փխ* անփոփոխելի: 366 D տարաբերին: 367 D սուրբն: 368 C բնաբար Անանիա վարդապետ (Անանիա վարդապետ—*ը՝ կէտագծերի մէջ*): 369 AC իւրն *փխ* ինքն: 370 C այսմ: 371 AC զօրութիւն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

16* Ոչ բառացի վկայաբերումն է ս. Յովհան Ոսկեբերանի Կողոսացւոց թղթի մեկնութեան համապատասխան հատուածի (տե՛ս Ոսկեբերան, Մեկն. Պաւղոսի, Ա, էջ 589):

17* Նախադասութիւնը համառօտում—խմբագրումն է ս. Գրիգոր Աստուածաբանի Պասեքի ճառի «Պղնձի աւձն կախի ընդդէմ հարկանողաց աւձիցն ոչ իբրեւ արիւնակ իմն յաղագս մեր չարչարելոյն, այլ՝ իբրեւ հակառակատիպ» հատուածի (ՄՄ ձեռ. N 946, թերթ 120ա, Հմմտ. Migne, PG, t. 35, col. 809D):

18* Միտքը քաղուած է Փիլոն Երրայեցու (Ալեքսանդրացի) (21 կամ 28թթ. ն.Ք.— 41 կամ 49թթ. Ք.յ.) Ծննդոց գրքի մեկնութիւնից, տե՛ս «Փիլոնի Երրայեցւոց Մնացորդք ի Հայս, որ են Մեկնութիւնք Ծննդոց եւ Ելից...», աշխատ. Հ. Մկրտիչ վրդ. Ազգերեան, Վենետիկ, 1826, էջ 25—26:

19* Տե՛ս «Գիրք Պարապմանց սրբոյն Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրու հայրապետի...», Կ. Պոլիս, 1717, էջ 19—490:

20* Ակնարկում է Եւնոմիոսի, Ապողինար Լաոդիւեցու, Եւտիքէսի հերձուածները. տե՛ս «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան Եկեղեցւոյ Հայաստանեայց՝ աշխատասիրութեամբ Մսերայ վարժապետի Գրիգորեան Զմիւռնացւոյ», Մոսկուա, 1850, էջ ԼԵ, 277—282:

21* Հատուածն ընդհանուր տեսական բովանդակութեամբ նման է հայերէն ձեռագրերում ս. Գրիգոր Նիւսացու անուամբ հանդիպող «Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ» երկի համաբնոյթ մասին (Վենետիկ, 1889, էջ 88—90):

22* Ինչպէս երեւում է, մեզ համար տակաւին անյայտ կիրեղեան այս հատուածն օգտագործուել է դաւանաբանական ժողովածուներից մէկում. ըստ ՆՀԲ, Ա, էջ 378 («Արտաշնչումն» բառի տակ):

23* Իմաստային յառաջաբերութիւնն է ս. Եփրեմ Ասորու համաբարբառ Աւետարանի մեկնութեան համապատասխան հատուածի. տե՛ս Եփրեմ, Բ, էջ 50:

24* Քաղուածքի բովանդակութեան հետ ընդհանուր նմանութիւն ունի Ոսկեբերանի Մատթէի Աւետարանի մեկնութեան համաբնոյթ մասը. տե՛ս Ոսկեբերան, Մեկն. Մատթ., գիրք Գ, էջ 105—106:

24ա* Վկայութիւնները բերուած են ս. Գրիգոր Աստուածաբանի Պասեքի ճառից. (ՄՄ ձեռ. N 1500, ձեռ. N 737բ—741ա): Ճառիս այդ հատուածներն ակնարկում են Ստեփանոս Օրբելեանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» երկում (Կ. Պոլիս, 1756, էջ 69):

25* Համաբնոյթ պատկեր առկայ է ս. Եփրեմ Ասորու համաբարբառ Աւետարանի մեկնութեան, Ասողիկի Տիեզերական պատմութեան մէջ նմանապէս. ըստ ՆՀԲ, Ա, էջ 1138:

26* Տե՛ս ծնթ. 28:

27* Վկայութիւնը, որ մէկ հատուածն է Ոսկեբերանի Մատթէի Աւետարանի մեկնութեան (Ոսկեբերան, Մեկն. Մատթ., գիրք Գ, էջ 106), ինչպէս երեւում է, քաղուած է Սահակ Գ կաթողիկոսի «Ընդդէմ երկաբնակացն նեստորականացն» թղթից եւ խմբագրումն է նոյն այդ թղթի համապատասխան մասի. տե՛ս ԳԹ, էջ 479, տող 9—11, Հմմտ. Մատթէոս Ուռհայեցի, էջ 173:

28* «Հակաճառութեան» հեղինակն ի նկատի ունի ս. Եփրեմի Համաբարբառ Աւետարանի մեկնութեան համաբնոյթ տեղերը. «...Աղբիւրն, որ ի կողից անտի նորա ել, եցոյց եւ յայտ արար զարիւնն, որ ընկալան, եւ ելին ջուրք, որ փութային ի քաւել: Արիւն տեսլեամբ իւրով աղաղակէ ի վերայ սպանողացն նորա, եւ ջուրն խորհրդեամբ իւրով ի սրբել զբարեկամս նորա» (Եփրեմ, Բ, էջ 237, տող 8—12), «Եւ արիւնն, որ նովաւ գնեաց զմեզ ի ծառայութենէ անտի մահու, իսկ ջուրն... եղիցի լուանալ զայն... եւ արիւն եւ ջուր...» (անդ, էջ 237,

տող 37— էջ 238, տող 3): Իսկ ս. Գրիգոր Աստուածաբանի անուամբ միաժամանակ վկայաբերուած հատուածով (տե՛ս N 26) ըստ երեւոյթին ակնարկում է նրա Պասեքի ճառը: Վկայութիւնը ոչ այլ բան է, քան այս ճառի համաքնոյթ դատողութեան («Արիւն եւ ջուր ի կողոցն հոսեալ՝ մին իբրեւ մարդոյ, եւ միւսն՝ ի վեր քան զմարդոյ»: ՄՄ, ձեռ. N 946, թերթ 126ա, տե՛ս Քեռսէեան, 1982, էջ 57—58) իմաստային խմբագրում—ամփոփումը մէկ նախադասութեան մէջ: Սա, ի դէպ, վկայակոչում է նաեւ «Հարցմունք հայրապետին Անտիոքայ ընդ Խոսրով Հայոց վարդապետի Յաղագս ծնունդ առնելոյ» երկում (Գ. Յովսէփեան, Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղարշապատ, 1899, էջ 19):

29* Տե՛ս Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832, էջ 253, տող 7—12:

30* Հմմտ. Կոչումն ընծայութեան, էջ 253:

31* Ս. Գրիգոր Աստուածաբանի՝ Մելիտոս Անտիոքացուն յղուած թուղթը տե՛ս Migne, PG, t. 46, col. 852—864, հայ թրգմ. ՄՄ, ձեռ. N 1500, թերթ 845բ—847ա:

32* Վկայութիւնը բերուած է ս. Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան» երկից, տե՛ս ՄՄ ձեռ. N 49, թերթ 122ա («Յաղագս մեռոնին կատարման եւ որք նովա կատարին»):

33* Վկայութիւնը, որ մի հատակոտորն է ս. Յովհան Ոսկեբերանի Ա Կորնթ. ԺԱ 27, 29 համարի մեկնութեան, բացակայում է հայերէն թարգմանութեամբ յայտնի տպագրուած հատուածներում (Ոսկեբերան, Մեկն. Պաւղոսի, Բ, էջ 425—430): Վկայակոչուած պարբերութիւնը յունարէն բնագրի «Ὥστε ἴσ ἐαν εσθίη... των προκειμένων» սկիզբ եւ վերջ ունեցող հատուածի (Migne, PG, t. 61, col. 230. առկայ են նաեւ Թղթի մեկնութեան ասորերէն, դպտերէն եւ արաբերէն թարգմանութիւնները. Geerard, 11, p. 525 (4428)) հայերէն թարգմանութիւնն է, որ բխում է Ոսկեբերանի երկասիրութեան առայժմ մեզ անյայտ հայերէն ամբողջական, ըստ երեւոյթին, ազատ թարգմանութիւնից (այս մասին տե՛ս Ց.Ց. Քեռսէեան, Նորայայտ հատուածներ Յովհան Ոսկեբերանի Պաւղոսի թղթոց մեկնութեան հայերէն թարգմանութիւնից, «Բանբեր Մատենադարանի», N 16 (հրատ. ընթացքում)):

34* Ըստ ակնարկի՝ վկայութիւնս քաղուած է ս. Եփրեմ Ասորու Կորընթացուց Ա թղթի մեկնութիւնից: Սակայն այն բացակայում է տուեալ աշխատութեան մէջ (Եփրեմ, Գ, էջ 51—85): Հատուածը բացակայում է նաեւ Համաբարբառ Աւետարանի մեկնութեան ենթադրուող մասում (Եփրեմ, Բ, էջ 201—203):

35* Վկայութիւնը, որ Ոսկեբերանի Երբ. Ժ 29—ի մեկնութեան մէկ հատուածն է, բացակայում է հայերէն թարգմանութեամբ մեզ յայտնի տպագիր փաստաթղթերում (Ոսկեբերան, Մեկն. Պաւղոսի, Ա, Բ), համապատասխանում է յունարէն բնագրի «Πόσω δοκειτε χείρονος... ὅτεν καί οὑτως ἡμαρτον» պարբերութեանը (Migne, PG, t. 63, col. 144: Մեկնութիւնը յայտնի է նաեւ լատիներէն եւ արաբերէն թարգմանութիւններով. Geerard, p. 528: Քեռսէեան, Նորայայտ հատուածներ...):

36* Ճառը տե՛ս Migne, PG, t. 36, col. 360—425, ՄՄ, ձեռ. N 1500, թերթ 729—737ա:

37* Անանիա վարդապետն ակնարկում է Սոկրատ Սքոլաստիկոսի Պատմութեան Ժ գլուխը. «Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական Պատմութիւն... աշխատասիրութեամբ Մեսրոպ վրդ. Տէր—Մովսէսեանի», Վաղարշապատ, 1897:

38* Ակնարկում է Նիկիական (325թ.) հանգանակի (տպ. «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ», էջ ԻԴ—ԻԹ)՝ Արիստակէս կաթողիկոսի (325—333թթ.) կողմից Հայաստան բերուելը եւ դրա վաւերացումը ս. Գրիգոր Լուսաւորչի (302—325թթ.) ձեռամբ (Հայոց հանգանակը տե՛ս անդ, էջ ԻԹ—Լ), ինչպէս նաեւ «Հոգեմարտ» Մակեդոնի դէմ 381թ. Կոստանդնուպոլսի (որին մասնակցում էր Մեծն Ներսէս կաթողիկոսը՝ 353—373թթ.) եւ «մարդադաւան» Նեստորի դէմ 431թ. Եփեսոսի տիեզերաժողովների նկատմամբ Հայ Եկեղեցու որդեգրած յայտնի դիրքորոշումը: Եփեսոսի տիեզերաժողովին հրաւիրուած էր նաեւ ս. Սահակ Պարթեւ հայրապետը (387—436թթ.), որը, սակայն, երթեւեկութեան հետ կապուած դժուարութիւնների պատճառով չկարողացաւ մասնակցել այդ ժողովին (Հրահանգ քրիստոնէական հաւատոյ, էջ ԻԱ): Հայ Եկեղեցին ս. Կիւրեղ Աղեքսանդրացու, Պրոկղոս Կոստանդնուպոլսեցու եւ Ակակիոս Մելիտինացու թղթերի (ԳԹ, էջ 14—15, 16—18, 19—21) միջոցով տեղեկանալով եւ հաղորդակից լինելով Ժողովի որոշումներին՝ ընդունում է դրանք:

39* «Արտաքին» իմաստասէրներից բերուած այս վկայութիւնը խմբագրումն է Հռոմաղ Երուսաղէմացու, Դորան երէցի, Մամբրէ Կորնթացու եւ Մելիտոս Մակեդոնացու հետ հայ վարդապետների վիճաբանութիւնը պարունակող «Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի եւ Դաւթի հարցմունք ընդ երկաբնակ չարափառսն» խորագրով երկասիրութեան համապատասխան մասի. ՄՄ, ձեռ. N 2018, թերթ 133բ—134ա: Այս երկի մասին մատենագիտական ընդարձակ տուեալներ տե՛ս Հ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Բ, Երեւան, 1976, էջ 241—244:

40* Այս վկայութիւնը բաղկացած է երկու տարբեր ծագում ունեցող հատուածներից: Վկայութեան սկզբից մինչեւ «իւրով անապական մարմնով» բառերն ընկած հատուածը խմբագրումն է ս. Գրիգոր Սքանչելագործի (213—270թթ.) անուամբ անխորագիր «Բանն մարմնացեալ յերկրի երեւեցաւ...» սկսուածքով ճառի կամ ճառական հատուածի (C. Pitra, P. Martin, Analecta Sarca et classica, t. IV, Parisiis, 2ed. 1966, p. 144-145), որ տակաւին Montfaucon-ի կողմից վերագրուել է Ոսկեբերանին (Յակոբ Թօփճեան, Ծուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 67, Լ. Ա. Վարդանեան, «Երանելւոյն Գրիգորի Սքանչելագործի խօսք ի Ծնունդն Քրիստոսի», «Հանդէս ամսօրեայ», 1912, էջ 393), հեղինակի մի շարք ճառերի նման (Pitra, Martin, նշ. աշխ., թ. 134—144, 156—159) դասելի է թում կեղծոսկեբերանական եւ կեղծաթանասեան երկերի շարքին (Geerard, pp. 558, 584): Սքանչելագործի «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառի նման ենթադրելի է, որ սա եւս հայ մատենագրութեան վաղագոյն շրջանից վկայակոչուելով հեղինակի անուամբ, պատկանում է Սքանչելագործի գրչին: Վկայութեան «Արդ, եթէ որ բաժանէ զմիաւորութիւն Քրիստոսի... ներգործութիւնս, նզովեալ եղիցի» հատուածը, ինչպէս երեւում է այլափոխուած վերաշարադրումն է Սքանչելագործի «Ի մասինն հաւատոյ» (Κάτα Μέρας πίστις) երկի Ե գլխի «ոչ երկու դէմք եւ ոչ երկու բնութիւնք... սակս որոյ նզովեմք» հատուածի (Տիմոթէոս, էջ 21, տող 9—12, էջ 92, տող 5—8, էջ 189, տող 22—24, ԿՀ, էջ 72, տող 23—26: Հմմտ. Migne, PG, t. 10, col. 1116 B—C,

1117B): Վկայութեան մնցեալ միաւորները (նզովքները) բացակայում են նրա անուամբ յայտնի երկերում: Բացառուած չէ, որ այդ հատակոտորները կորած հատուածներն են լոկ երկու փշրանքներով պահպանուած «Մեկնութիւն հաւատոյ» աշխատութեան (Migne, PG, t. 10, col. 1123—24, ԿՀ, էջ 72, տող 5—19), տե՛ս Քեռսեէեան, 1982, էջ 54—55:

41* Վկայութիւնը խմբագրումն է Պրոկղ Կոստանդնուպոլսեցու (մահ. 446) «Խօսք Պրոկղի եպիսկոպոսի ի նստելն Նեստորի ի մեծ եկեղեցւոջն Կոստանդնուպօլսի, եթէ Աստուածածին է՝ սուրբ Կոյսն եւ ծնեալն ի նմանէ ոչ Աստուած մերկ եւ ոչ մարդ տոկ, այլ՝ Էմմանուէլ, այս է՝ Աստուած եւ մարդ յերկուց բնութեանց միացեալ» ընդարձակ խորագրով ճառի համապատասխան մասի, տե՛ս ՄՄ, ձեռ. N 1525, թերթ 46բ— 47բ, հմմտ. Migne, PG, t. 65, col. 684C—685A:

42* Վկայութեան «Ոչ ինքն ի մարմնի... զամենայն մարդկայինսն» հատուածը, ըստ Երուսաղէմի NN 282 (թերթ 32ա), 2807 (թերթ 268բ) եւ Արմաշի N 12 (թերթ 267բ) ձեռագրերի Ն. եպս. Պողարեան, Մայր ցուցակ Սրբոց Յակոբեանց, հտ. Բ, Երուսաղէմ, 1966, էջ 94, հտ. Թ, Երուսաղէմ, 1979, էջ 17, Յ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, էջ 72), բերուած է հեղինակի «Ի Յարութիւն Տեառն» ճառից: Սակայն հատուածը բացակայում է հեղինակի այդ ճառում («Արարատ», 1895, յաւելուած Ապրիլ ամսի, էջ 9—10): Այն իրականում բերուած է Սքանչելագործի «Էր Աստուած եւ եղեւ մարդ...» սկսուածքով ճառական բնագրից («Արարատ», 1895, էջ 10): Վկայութեան միւս մասը ծագում է Սքանչելագործի անուամբ անվաւեր, իրապէս Ապողինար Լաւոդիկեցուն պատկանող, հայրախօսական գրականութեան մէջ քաջ յայտնի «Երկոտասան նզովներից» (Κεφαλαια περί πιστέως δοδέκα): Վկայութեան առաջին «նզովը», որ համապատասխանում է յունարէն բնագրի Թ նզովին (Migne, PG, t. 10, col. 1132D), բերուած է ԿՀ—ից (էջ 73, տող 17—19): Երկրորդ «նզովը», որ համապատասխանում է յունարէն բնագրի Ջ նզովին (col. 1132A), դարձեալ քաղուած է ԿՀ—ից (էջ 73, տող 26—29): Այն վկայակոչում է նաեւ Սահակ Գ կաթողիկոսի «Ընդդէմ երկաբնակաց նեստորականացն» եւ Գագիկ արքայի «առ կայսրն Ռոմանոս թղթերում» (ԳԹ, էջ 482, 298—299): Երրորդ «նզովը» (որ նոյն Թ նզովն է՝ տարբեր թարգմանութեամբ) ոչ այլ բան է, քան ս. Գրիգոր Սքանչելագործի անուամբ հայ թարգմանական մատենագրութեանը յայտնի «Երկոտասան նզովներից» քաղուած «Խոստովանութիւն հնգից թուով» գործի չորրորդ «գլխի» երկրորդ հատուածը («Արարատ», 1895, յաւելուած, էջ 10), որն իր հերթին բխում է Տիմոթէոս Կուզի Հակաճառութիւնից (Տիմոթէոս, էջ 190):

43* Վկայութիւնը քաղուած է ԿՀ—ից (էջ 247, տող 4—9), ուր այն բերուած է հետեւեալ խորագրի տակ. «Երանելւոյն Աղէքսանդրու եպիսկոպոսին Աղէքսանդրու ի բանէն, որ ի տնօրէնութիւնն»: Միայն սկսուածքն առկայ է նաեւ՝ Սիւնեցի, էջ 390, տող 433—436:

44* Ս. Գրիգոր Նիւսացու անուամբ վկայաբերուած հատուածն իրականում քաղուած է Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատութիւնից: Սակայն վկայութիւնը ձոյլ—բնագրային չէ: Այն գոյացել է երեք տարբեր

հատուածների կցումով: Առաջին հատուածը («Զի առ մարդկանս... զճշմարտութեան անմարմնոյն») համապատասխանում է Նեմեսիոսի երկասիրութեան «Յաղագս միաւորութեան հոգւոյ եւ մարմնոյ» ենթախորագրով երրորդ գլխին («Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ», էջ 55, տող 24—էջ 56, տող 25): Երկրորդ հատուածը («զի ըստ ընտանի բնութեան... ոչ ըստ հաճութեան») բերուած է աշխատութեան նոյն գլխից (էջ 56, տող 10—13): Երրորդ հատուածը («Ասի, թէ՝ ամենայն շարժութիւն... եռակի տարբերոյ») բերուած է Նեմեսիոսի երկի «Յաղագս Անձին է բան, այսինքն է՝ հոգւոյ մարդոյ» ենթախորագրով երկրորդ գլխից (էջ 28, տող 11—31), տե՛ս Քեռսէեան, 1982, էջ 56—57:

45* Միայն սկսուածքը քաղուած է ԿՀ—ից (էջ 245, տող 3—7) կամ «Կիւրղի եպիսկոպոսապետին Աղեքսանդրու պատասխանի թղթոյն առ Յովհաննէս եպիսկոպոս Անտիոքայ» դաւանաբանական գրութիւնից (տե՛ս Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 518), իսկ վերջը՝ Սիւնեցի, էջ 386, տող 333—335:

46* Վկայութիւնը քաղուած է ԿՀ—ից (էջ 247, տող 15—20, էջ 248, տող 11), ուր այն հասնում է մինչեւ վկայութեան «... որ է մայր ապականութեան» բառերը, որից յետոյ բնագիրն ընդհատւում է: Հմմտ. Սիւնեցի, էջ 387, տող 351—355, էջ 388, տող 384—386:

47* Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 256, տող 5—7:

48* Ամփիլոքոս Իկոնացու կամ Կեսարացու (մահ. 394թ. յետոյ) երկերից քաղուած այս հատուածի մասին տե՛ս Յ. Յ. Քեռսեէեան, Յոյն մատենագիրները հայ դաւանաբանական գրականութեան մէջ. Ամփիլոքոս Իկոնացի, «Էջմիածին», 1981, N 7, էջ 54:

49* Համեմատելի է՝ Սիւնեցի, էջ 390, տող 449—455:

50* Քաղուած է ԿՀ, էջ 86, տող 24—25: Վարդան Այգեկցու կազմած «Արմատ հաւատոյ» դաւանաբանական ժողովածուի մէջ այս հատուածը գտնւում է «Ի հակառակելն Ապողինարի» ենթախորագրով սկսուող կարճառօտ քաղուածքների շարքում. ՄՄ, ձեռ. N 3295, թերթ 357բ, հմմտ. ձեռ. N 1500, թերթ 912ա:

51* Միայն սկսուածքը տե՛ս Սիւնեցի, էջ 377, տող 85—88:

52* Վկայութիւնը քաղուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Առ Կղեդոնիոս» թղթից (ՄՄ, ձեռ. N 4149, թերթ 142բ): Այն վկայակոչում է նաեւ Սահակ Գ կաթողիկոսի «Ընդդէմ երկաբնակացն նեստորականացն» (ԳԹ, էջ 475, տող 26—29) եւ Յովհաննէս Սարկաւագի (մահ. 1129թ.) երկերից մէկում. տե՛ս Մուրադեան, էջ 153: Քեռսէեան, 1981, էջ 51:

53* Նոյնութեամբ քաղուած է՝ Սիւնեցի, էջ 377, տող 102—106:

54* Վկայութիւնը խմբագրումն է՝ Սիւնեցի, էջ 378, տող 113—120:

55* Բերուած է՝ Սիւնեցի, էջ 393, տող 519—523:

56* Բերուած է՝ Սիւնեցի, էջ 396—397, տող 2—20:

57* Բերուած է՝ ԿՀ, էջ 252—253, տող 13—25—13:

58* Բերուած է՝ ԿՀ, էջ 256—257, նաեւ՝ էջ 101, տող 1—7:

59* Ամբողջովին քաղուած է՝ ԿՀ, էջ 257—258:

60* Ագաթանգեղոս, էջ 244, տող 5—19, նաեւ՝ ԿՀ, էջ 258, տող 9—28:

61* Ամբողջովին քաղուած է՝ ԿՀ, էջ 253, տող 4—18:

62* Վկայութիւնը, որ քաղուած է ս. Բարսեղ Կեսարացու Պահոց գրքի «Գոհութեան ճառից», համապատասխանում է հեղինակի «Homilia de Gratiarum Action» ճառաշարքի Ե ճառի *'ὅτι καί 'ἔφαγε... 'αλλα διδασκαλικον* հատուածին. տե՛ս Migne, PG, t. 31, col. 228B, հայ թրգմ.՝ ՄՄ, ձեռ. N 822, թերթ 200բ, նաեւ՝ "Кавказ и Византия", вып. III, Ереван 1982, с. 210: Այս ճառը վկայակոչում է նաեւ Յովհան Օձնեցու «Ընդդէմ երեւութականաց» երկում. «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 73:

63* Փիլոքսենոս (Քսենայաս) Մաբուգի կամ Հիերապոլսի եպիսկոպոսի անուամբ վկայաբերուած այս հատուածը խմբագրումն է՝ Սիւնեցի, էջ 379, տող 158—162:

64* Քաղուած է՝ ԿՀ, էջ 262—263, տող 15—17, 1—9:

65* Ամբողջապէս քաղուած է՝ ԿՀ, էջ 264, տող 10—31: Հատուածը բացակայում է հեղինակի քաջ յայտնի «Կոչումն ընծայութեան» երկում (հմմտ. ԺԳ գլխի հետ, էջ 234). տե՛ս Քեոսէեան, 1981, էջ 52:

66* Խմբագրումն է համապատասխան հատուածի. ԿՀ, էջ 265, տող 3—15, նաեւ՝ էջ 266, տող 1—10:

66ա*—66բ* «Եւ արդ... յայլ ինչ» հատուածը խմբագրումն ու մասամբ իմաստային յառաջաբերութիւնն է ս. Բարսեղ Կեսարացու «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառի «Եւ զի՞նչ արիւնակ ի մարմնում աստուածութիւնն, որպէս հուր երկաթում ոչ փոխարկաբար, այլ՝ փոխադրաբար... ոչ փոխատրեաց ի նա զիւր տկարութիւնն» («Հանդէս ամսօրեայ», 1968, էջ 422, տող 44—61) եւ ս. Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկի «զամենեցուն զլոյսն աւդոյն պարունակելով՝ որոխել եւ տանել առանց միոյն միւսն... եւ նիւթեղէն հրոյ կազմութենէ լուսոյ...» (ՄՄ, ձեռ. N 167, թերթ 157աբ) մասերի: Հատուածս այս կամ այն չափով օգտագործուել է նաեւ Սեբաստիայի Մետրապոլտի պատասխան թղթում (Ասողիկ, էջ 200), Մովսէս Երզնկացու «Պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր Երէց» դաւանաբանական գրութեան մէջ («Էջմիածին», 1975, Ա, էջ 34, տող 18—20), ինչպէս նաեւ՝ Յովհաննէս Պլուզ Երզնկացու (ՄՄ, ձեռ. N 2173, թերթ 130ա), Յովհան Որոտնեցու (ՄՄ, ձեռ. N 6573, թերթ 258բ) եւ Գրիգոր Տաթեւացու (Ոսկեփորիկ, Կ. Պոլիս, 1746, էջ 349—350) երկերում:

67* Բերուած է՝ ԿՀ, էջ 259—262, նոյնը այլ թարգմանութեամբ՝ էջ 186—187, հմմտ. Տիմոթէոս, էջ 259—262. նոյնի ընդարձակ խմբագրութիւնը՝ էջ 186—187: Այս վկայութիւնը, որ համաձայն Յովհաննէս Սարկաւագի «Նշանակ հաւատոյ Նիկիականն ՅԺԸ—իցն» երկի (ՄՄ, ձեռ. N 2751, թերթ 243բ), բերուած է նրա «Առ Դիրնասիոն» թղթից, ինչպէս երեւում է, ԿՀ—ի եւ Տիմոթէոս Կուզի նշուած հատուածների խմբագրումն է:



ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏՐՈՍ ԲԵՐԴՈՒՄԵԱՆԻ ՆՈՐԱՅԱՅՏ «ԵՐԳ ԵՐԳՈՅԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ»

ԺԸ դարի աստուածաբանական մտքի կարկառուն ներկայացուցիչներից մէկը Պետրոս արքեպիսկոպոս Բերդումեանն է՝ աստուածաբան, փիլիսոփայ, մեկնիչ, տաղասաց, եկեղեցական եւ հասարակական գործիչ: Նա հեղինակ է շուրջ 20 անուն մեկնողական, աստուածաբանական, փիլիսոփայական գործերի, քարոզների, տաղերի եւ այլն:

Պետրոս Բերդումեանի մեկնողական երկերի որոշ մասն արդէն իսկ հրատարակուել է, ինչպէս՝ Յովհաննու Յայտնութեան մեկնութիւնը, Եփեսացւոց թղթի մեկնութիւնը եւ աւետարանական առակների մեկնութիւնը, որը յայտնի է «Աղբիւր բացեալ» վերտառութեամբ:

Ձեռագիր վիճակում էին գտնւում հեղինակի մեկնողական գործերից երկուսը՝ Ծննդոց եւ Յոբի գրքերի մեկնութիւնները, իսկ Երգ երգոցի մեկնութիւնը կորած էր համարւում:

Յոբի մեկնութեան բնագիրը պատրաստելու ընթացքում մենք Մաշտոցեան Մատենադարանի հմր. 2224 ձեռագրում հանդիպեցինք մի անանուն Երգ Երգոցի մեկնութեան, որն անմիջապէս գրաւեց մեր ուշադրութիւնը: Այդ ձեռագիրը գրուել էր ոմն Պետրոս կրօնաւորի կողմից Էջմիածնում այն տարիներին, երբ այնտեղ էր ապրում եւ աշխատում Պետրոս արքեպիսկոպոս Բերդումեանը: Պետրոս Բերդումեանի ինքնագիր եւ վստահելի ձեռագիրները համեմատելով հմր. 2224 ձեռագրի հետ՝ մենք համոզուեցինք, որ այն նոյն գրչի գործն է, եւ որ յիշուած կրօնաւորը նոյն ինքը Բերդումեանն է: Գրեթէ ամբողջութեամբ Բերդումեանի երկերից կազմուած այդ ձեռագրում գտնուող Երգ երգոցի մեկնութիւնը ամենայն հաւանականութեամբ լինելու էր վերջինիս կորած համարուող աշխատութիւնը: Հետագայում նաեւ լեզուական ու ոճական նմանութիւնները վերջնականապէս փարատեցին ամէն մի կասկած, եւ անյայտ մի ստեղծագործութիւն վերստին կեանքի կոչուեց:

Բերդումեանի այս աշխատութիւնը թերի է՝ ի՛ տարբերութիւն միւս գործերի: Հեղինակը կամ չի կարողացել աւարտել այն, կամ էլ գուցէ մտադրութիւն է ունեցել մեկնելու միայն գրքի մի քանի համարները: Ինչեւէ, գործն իր այդ վիճակով էլ աստուածաբանական արժէքաւոր նիւթ է պարունակում եւ կարող է օգտակար լինել մեկնողական գրականութեան սիրահարներին: Նպատակայարմար գտանք նաեւ դիւրամատչելիութեան համար բնագրին զուգահեռ ներկայացնել արեւելահայերէն թարգմանութիւնը:

Պետրոս Բերդումեանի կեանքի եւ մատենագրական վաստակի մասին տե՛ս «Էջմիածին», 1991, Է–Ը:

Միքայէլ Վարդապետ Աջապահեան

ՊԵՏՐՈՍ ԲԵՐԴՈՒՄԵԱՆ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳ ԵՐԳՈՑԻ

(Ձեռ. հմր. 2224)

Մինչ հարսն ի յօրիորդաց վերաձայնեցաւ ուղղութիւն, իսկ եւ նա պատասխանեալ նոցա ասէ. «Սեաւ եմ ես» [Երգ Ա 4]: Զի յատկութիւն է ընտիր արանց, որք տեսանեն զբարձրութիւն պատուոյ փառաց իւրեանց, իսկոյն խոնարհեցուցեալ զինքեանս՝ անարժան զոյ խոստովանիւն: Որպէս Աբրահամ, երբ լուաւ զաւետիս ծնընդեանն Իսահակայ եւ բան Տեառն առ նա, յայնժամ խոնարհեալ ասաց. «Ես հող եմ եւ մոխիր» [Ծննդ. ԺԸ 27]: Նոյնպէս եւ Մովսէս, մինչ կոչեցաւ երթալ առ Փարաւոն, պատասխանեալ ասաց. «Աղաչեմ զՔեզ, Տէր, չեմ բաւական, զի նրբաձայն եւ ծանրալեզու եմ ես» [Ելք Գ 10]: Այսպէս եւ Եսայի, յորժամ ետես զփառս Աստուծոյ, աղաղակեաց՝ ասելով. «Վա՛յ է ինձ, ես՝ այր տառապեալ, զիա՞րդ կամս հիացեալ, զի մարդ եմ եւ պիղծ շրթունս ունիմ» [Եսայի Զ 5]: Սմին նման եւ Երեմիաս, մինչ լուաւ ի Տեառնէ, թէ՝ «Մարգարէ ի հեթանոսս եդի զքեզ», ասաց. «Տէ՛ր, Տէ՛ր, աւասիկ խօսիլ իսկ ոչ գիտեմ, զի մանուկ եմ ես» [Երեմ. Ա 6]: Եւ գեր քան զամենեսին սրբուհի Կոյսն Մարիամ, յորժամ հրաւիրեցաւ ի մայրութիւն միածնի Որդւոյն Աստուծոյ, իսկ նա խոստովանեցաւ զինքն աղախին Տեառն [Ղուկ. Ա 3]՝ ըստ Աբիգեայ, զոր խօսեցաւ վասն Դաւթի, եւ նա իսկոյն յարեաւ եւ երկիր եպագ ի վերայ երեսաց իւրոց եւ ասէ. «Ահաւասիկ կայ աղախին քո ի ստրկութիւն՝ լուանալոյ զոտս ծառայից տեառն իմոյ» [Ա Թագ. ԻԷ 40]: Զի խոնարհն, մինչ գովի յերեսս, ձաղի ի միտս: Զի ի սկզբանէ այսպէս ուսաւ Հարսն, որ, ի դէմս ընդհանուր Եկեղեցւոյ, որպէս ի յարմատոյ օրհնեցաւ ի Տեառնէ. «Աբրահամ եղիցի ազգ մեծ եւ ի բազում, քանզի գիտէի, եթէ պատուիրեսցէ որդւոց իւրոց եւ տան իւրոյ յետ իւր պահել զճանապարհս Տեառն եւ առնել զարդարութիւն եւ զիրաւունս» [Ծննդ. ԺԸ 18]: Իսկ եւ հարիւրապետն, մինչ լուաւ ի Տեառնէ, թէ՝ «Ես եկից եւ բժշկեցից մանուկդ», իսկոյն պատասխանեաց. «Տէ՛ր, չեմ բաւական, եթէ ընդ յարկաւ իմով մտցես» [Մատթ. Ը 8], եւ Պետրոս, թէ՝ «Ի բա՛ց գնա յինէն, Տէ՛ր, զի մեղաւոր եմ ես» [Ղուկ. Ե 8]: Նման նոցին իսկ եւ Հարսն ընդ օրիորդ հրեշտակացն, թէ՝ իբրու դուք կամիք ընդ իս ցնծալ եւ սիրել զստինս իմ եւ խոստովան լինիք, թէ՝ «Ուղղութիւն սիրեաց զքեզ», բայց ծաներ՛ուք, զի սեաւ եմ ես, թէեւ՝ գեղեցիկ: Զի դուք բանիւ էք ստեղծեալք, եւ մեք՝ ձեռիւրուեց Աստուծոյ Միածին Որդու մայրութեան, ինքն իրեն Տիրոջ աղախին համարեց [Ղուկ. Ա 3]՝ Աբիգեայի նման, որին երբ ասուեց Դաւթի մասին, իսկոյն բարձրացաւ, իր երեսի վրայ երկրպագեց եւ ասաց. «Ահաւասիկ քո աղախինը պատրաստ է ստրկութեան՝ իմ տիրոջ ծառաների ոտքերը լուանալու» [Ա Թագ. ԻԷ 40]: Որովհետեւ խոնարհը, երբ երեսանց գովութեան է արժանանում, ձաղկում է մտքում: Որովհետեւ Հարսն ի սկզբանէ այսպէս սովորեց, որն, ի դէմս ընդհանուր Եկեղեցու, Տիրոջ կողմից արմատից օրհնուեց. «Աբրահամը լինելու է մեծ եւ բազմաքանակ ազգ, որովհետեւ գիտէի, որ իրենից յետոյ որդիներին եւ իր տանը պատուիրելու է պահել Տիրոջ պատուիրանները եւ արդարութիւն ու իրաւունք գործել» [Ծննդ. ԺԸ 18]: Նաեւ հարիւրապետը, երբ Տիրոջից լսեց, թէ՝ «Ես կգամ եւ կբժշկեմ մանկանդ», իսկոյն պատասխանեց. «Տէ՛ր, արժանի չեմ, որ իմ յարկի տակ մտնես» [Մատթ. Ը 8], եւ Պետրոսը, թէ՝ «Հեռացի՛ր ինձանից, Տէ՛ր, որովհետեւ ես մեղաւոր եմ» [Ղուկ. Ե 8]: Նրանց նման է խօսում նաեւ Հարսն օրիորդ հրեշտակների հետ, թէ՝ «Դուք իբրեւ թէ կամենում էք ինձ հետ ցնծալ եւ սիրել իմ ստինքները եւ յայտարարում էք, թէ՝ «Ուղղութիւնը սիրեց քեզ», սակայն իմացէ՛ք, որ ես սեւ եմ, թէեւ՝ գեղեցիկ: Որովհետեւ դուք խօսքով էք ստեղծուել, եւ մենք՝ ձեռ-

ոօք ներգործեալք, բայց դիւահիծի բնութեան ենք վիճակեալք, վասն որոյ սեաւ եմ, զի ի տգեղ հողոյ ստեղծայ, եւ գեղեցիկ՝ զի ձեռամբն Աստուծոյ արարայ: Գեղեցիկ՝ դրախտին վայելչութեամբ, սեաւ՝ արտաքսմամբ, վասն զի ասէ. «Դու ատեցեր զիրատ Իմ, մերժեցեր եւ յետս ընկեցեր զամենայն բանս բերանոյ Իմոյ» [Սաղմ. ԽԹ 17]: Սեաւ եմ, զի սկզբնական մեղօք աղտեղացայ, եւ գեղեցիկ՝ զի Աւազանին շնորհիւ մաքրեցայ: Սեաւ՝ ներ[]գործական մեղօք, եւ գեղեցիկ՝ ա[պ]աշխարութեան լծով: Դարձեալ սեաւ՝ Եւայիւ, եւ գեղեցիկ՝ Մարիամաւ: Սեաւ՝ Ադամայ, եւ գեղեցիկ՝ Քրիստոսիւ՝ որդեգրութեամբ Հօրն երկնաւորի: Սեաւ՝ զի Ադամայ ամենեքեան մեռան, եւ գեղեցիկ՝ զի Քրիստոսիւ ամենեքին կենդանացան: Ուստի ասէ Բեռնարդոս. «Որդին Աստուծոյ գայ ի հեռուստ՝ առ ի հարանացուցանել Ինքեան զԵկեղեցի, որոյ Մովսէս եղեւ առաջնորդ, սակայն ոչ կարաց փոխել զգոյն նորա, բայց Քրիստոս այնքան սիրով ազնուացոյց զնա, մինչ զի եցոյց նմա զփառս Իւր եւ զսեւութիւն սպիտակեցոյց»: Ուստի քեզ, ո՛վ մարդ[կ]ային հոգի, եցոյց զանճառելի զփառս, զի արժանաւցիս լինիլ հարսն նորա, յաղագս որոյ ցանկան հրեշտակք հայիլ առ քեզ: Վասն որոյ ասէ. «Սեաւ եմ ես եւ

քով արարուել, սակայն դիւահալած բնութեան ենք արժանացել, որի պատճառով սեւ եմ, որովհետեւ տգեղ հողից ստեղծուեցի, եւ գեղեցիկ եմ, որովհետեւ Աստուծոյ ձեռամբ արարուեցի: Գեղեցիկ՝ դրախտի վայելչութեամբ, սեւ՝ արտաքսմամբ, որովհետեւ ասում է. «Դու ատեցիր Իմ խրատը, մերժեցիր եւ յետ մղեցիր իմ բերանի բոլոր խօսքերը» [Սաղմ. ԽԹ 17]: Սեւ եմ, որովհետեւ աղտոտուեցի սկզբնական մեղքով, եւ գեղեցիկ՝ որովհետեւ Աւազանի շնորհիւ մաքրուեցի: Սեւ՝ գործածս մեղքով, եւ գեղեցիկ՝ ապաշխարութեան լծով: Դարձեալ սեւ՝ Եւայով, եւ գեղեցիկ՝ Մարիամով: Սեւ՝ Ադամով, եւ գեղեցիկ՝ Քրիստոսով՝ երկնաւոր Հօր որդեգրութեամբ: Սեւ՝ որովհետեւ Ադամով ամէնքը մեռան, եւ գեղեցիկ՝ որովհետեւ Քրիստոսով ամէնքը կենդանացան: Ուստի Բեռնարդոսն ասում է «Աստուծոյ Որդին գալիս է հեռուից՝ Եկեղեցին Իրեն հարսնացնելու, որին Մովսէսն եղաւ առաջնորդ, սակայն չկարողացաւ փոխել նրա գոյնը, բայց Քրիստոս այնքան սիրով ազնուացրեց նրան, որ մինչեւ իսկ Իր փառքը ցոյց տուեց նրան եւ սեւութիւնը սպիտակեցրեց»: Ուստի քեզ, ո՛վ մարդկային հոգի, ցոյց տուեց անպատմելի փառքը, որպէսզի արժանի լինես նրա հարսը լինելու, ինչի համար հրեշտակները ցանկանում են նայել քեզ: Ուստի ասում է «Սեւ եմ ես եւ գեղեցիկ», որովհե-

գեղեցիկ», զի Հարսն սեաւ է հնութեամբ եւ գեղեցիկ՝ նորոգութեամբ: Սեաւ՝ Յակոբ՝ ձեռօքն Յեսաւայ, գեղեցիկ՝ օրհնութեամբ հօրն. սեաւ՝ զի միակ ցպով էանց Յորդանանն, եւ գեղեցիկ՝ զի դարձաւ անդրէն երկու բանակաւ: Սեաւ՝ Նէմման՝ բորոտութեամբ, գեղեցիկ՝ ապաքինմամբ: Նոյնպէս եւ մաքսաւորն՝ սեաւ, մինչ եմուտ ի տաճարն, գեղեցիկ՝ ելանելով անտի: Դարձեալ՝ «սեաւ եմ,– ասէ,– եւ գեղեցիկ», եւ այս՝ իրաւաբար, զի Հարսն Եկեղեցի զարգանայ ի յարդարոց եւ ի մեղաւորաց, որոց միոն՝ գեղեցիկ, եւ միւսն՝ սեաւ: Որպէս վերին դասակարգութիւնք երկնային զօրացն՝ սեաւ՝ Արուսեկիսն, որ ընդ առաւօտն ծագէր [Եսայի ԺԴ 12], եւ գեղեցիկ՝ մարդկան ազգաւ, որք լնուն զտեղի անկելոցն [Ղուկ. Ի 36]: Սեաւ՝ մեղուցեալքն, գեղեցիկ՝ ապաշխարողքն: Սե[աւ]՝ Կայէն, գե[ղեցիկ]՝ Աբէլ: Սե[աւ]՝ Քամ, գեղեցիկ՝ Նոյ, Սէմ եւ Աբեթ: Սե[աւ]՝ Թարա, գե[ղեցիկ]՝ Աբր[ա]համ: Սե[աւ]՝ Եսաւ, գե[ղեցիկ]՝ Յակոբ: Սե[աւ]՝ Փարաւոն, գե[ղեցիկ]՝ Իսրայէլ: Սե[աւ]՝ կախարդքն Եգիպտոսի, գե[ղեցիկ]՝ Մովսէս եւ Ահարոն: «Սեաւ եմ»,– ասէ, զի բարձաւ ի դատերէն Սիոնի ամենայն վայելչութիւնք նորա [Ողբ Ա 6]: Սե[աւ]՝ կռապաշտութեամբ եւ անառակ վարուք, զի մեղաց եւ

տեւ Հարսը սեւ է հնութեամբ եւ գեղեցիկ՝ նորոգութեամբ: Սեւ՝ Յակոբը՝ Եսաւի ձեռքով, գեղեցիկ՝ հօր օրհնութեամբ. սեւ՝ որովհետեւ մի գաւազանով անցաւ Յորդանանը, եւ գեղեցիկ՝ որովհետեւ այնտեղից երկու բանակով վերադարձաւ: Սեւ է Նէեմանը՝ բորոտութեամբ, գեղեցիկ՝ ապաքինմամբ: Նոյնպէս եւ մաքսատրը սեւ է մինչեւ տաճար մտնելը, գեղեցիկ՝ այնտեղից ելնելով: Դարձեալ՝ «սեւ եմ,– ասում է,– եւ գեղեցիկ», եւ այս՝ իրաւամբ, որովհետեւ Հարս Եկեղեցին առաջանում է արդարներից եւ մեղաւորներից, որոնցից մէկը գեղեցիկ է, իսկ միւսը՝ սեւ: Ինչպէս որ երկնային զօրքերի վերին դասակարգութիւնները սեւ են Արուսեակով, որն առաւօտեան էր ծագում [Եսայի ԺԴ 12], եւ գեղեցիկ՝ մարդկային ցեղով, որոնք լրացնում են ընկածների տեղը [Ղուկ. Ի 36]: Սեւ՝ մեղանչողները, գեղեցիկ՝ ապաշխարողները: Սեւ՝ Կայէնը, գեղեցիկ՝ Աբէլը: Սեւ՝ Քամը, գեղեցիկ՝ Նոյը, Սէմը եւ Յաբեթը: Սեւ՝ Թարան, գեղեցիկ՝ Աբրահամը: Սեւ՝ Եսաւը, գեղեցիկ՝ Յակոբը: Սեւ՝ Փարաւոնը, գեղեցիկ՝ Իսրայէլը: Սեւ՝ Եգիպտոսի կախարդները, գեղեցիկ՝ Մովսէսն ու Ահարոնը: «Սեւ եմ»,– ասում է, որովհետեւ Սիոնի դուստրից վերցուեց նրա ողջ վայելչութիւնը [Ողբ Ա 6]: Սեւ՝ կռապաշտութեամբ եւ անառակ վարքով, որովհետեւ մեղքերին ու կուռքերին ծա-*

կոց ծառայ էաք, զե[ղեցիկ]՝ զի ի Քրիստոս մկրտեցաք եւ Աւազանին ջրով մաքրեցաք: Սե[աւ]՝ պ[ա]տու[իր]ազանցութեամբ, որոց ասէ. «Մի՞ ապաքէն իբրեւ զորդիս եթովպացւոց էք դուք Ինձ, որդի՛ք Իսրայելի»,– ասէ Տէր» [Ամովս Թ 7], զե[ղեցիկ]՝ հրամանակրութեամբ, զոր ասէ. «Դադարեցէ՛ք ի չարեաց, ուսարո՛ւք զբարիս գործել, եւ թէ իցեն մեղք ձեր իբրեւ զծանձրախաւրիթ, իբրեւ զձիւն սպիտակ արարից, եւ թէ իցեն իբրեւ զորթան կարմիր, իբրեւ զաւր սուրբ արարից» [Եսայի Ա 17–18]: Այսպէս, սե[աւ]՝ հեթանոսական կռապաշտութեամբ, զե[ղեցիկ]՝ քրիստոնական սուրբ հաւատով: Սե[աւ]՝ Եղիա, զի հպածեցաւ յԵզաբելայ, եւ զե[ղեցիկ]՝ զի ետես զփառս Աստուծոյ [Գ Թագ. ԺԹ 3]: Սե[աւ]՝ սրբուհին Շուշան, մինչ ի մահ դատապարտեցաւ, զե[ղեցիկ]՝ զի անպարտ գտաւ: Սե[աւ]՝ առաքեալքն, մինչ զանեցան, եւ զե[ղեցիկ]՝ զի զնացին խնդալով յերեսաց ատենին [Գործք Ե 4]: Վերջապէս, երեք մանկունքն ի մէջ բորբոքեալ հնոցին համայնգամայն սեաւ եւ զեղեցիկ:

[]«[Դ]ստերք Երուսաղեմի»,– ասէ: Դստերք կոչին էգ զաւակունք մարդ, որք լինին միշտ շուրջ զնոքօք եւ ոչ բաժանին: Նոյնպէս եւ հրեշտակք, որք շուրջ են զՎերին

ռայ եղանք, զեղեցիկ՝ որովհետեւ Քրիստոսով մկրտուեցինք եւ Աւազանի ջրով մաքրուեցինք: Սեւ՝ պատուիրանազանցութեամբ, որի պատճառով ասում է «Մի՞թէ դուք ինձ համար եթովպացիների որդիների նման չէք, Իսրայէլի՛ որդիներ»,– ասում է Տէրը» [Ամովս Թ 7], զեղեցիկ՝ հրամանի նկատմամբ հնազանդութեամբ, որն ասում է՝ «դադարեցէ՛ք չարիք գործելուց, սովորեցէ՛ք բարիք գործել, եւ եթէ ձեր մեղքերը շառագոյն են, ձեան նման սպիտակ եմ դարձնելու, եւ եթէ որդան կարմիրի պէս են, սպիտակաթոյր գեղմի պէս սուրբ եմ դարձնելու» [Եսայի Ա 17–18]: Այսպէս, սեւ՝ հեթանոսական կռապաշտութեամբ, զեղեցիկ՝ քրիստոսական սուրբ հաւատքով: Սեւ՝ Եղիան, որովհետեւ հալածուեց Յեզաբէլից, եւ զեղեցիկ՝ որովհետեւ տեսաւ Աստուծոյ փառքը [Գ Թագ. ԺԹ 3]: Սեւ՝ սրբուհի Շուշանը, երբ մահուան դատապարտուեց, զեղեցիկ՝ որովհետեւ անպարտ գտնուեց: Սեւ՝ առաքեալները, երբ գանահարուեցին, եւ զեղեցիկ՝ որովհետեւ ատեանի առջեւից խընդութեամբ հեռացան [Գործք Ե 4]: Վերջապէս, երեք երիտասարդները բորբոքուած հնոցի մէջ միանգամայն եւ սեւ էին, եւ զեղեցիկ:

«Երուսաղէմի դուստրեր»,– ասում է: Դուստրեր են կոչւում մայրերի էգ զաւակները, որոնք միշտ նրանց շուրջ են լինում եւ չեն բաժանւում: Նոյնպէս են եւ հրեշտակ-

Երուսաղեմաւ իբրեւ դստերք նորին, զի ոչ բաժանին ի նմանէ: Եւ մարգարէքն են դստերք սինակոկայիին, եւ առաքեալքն՝ դստերք Քրիստոսի: Հայրապետք, վարդապետք, քահանայք եւ խոստովանահարք՝ որպէս դստերք եւ զաւակունք նորոյս սուրբ Եկեղեցւոյ, առ որս գանգատի եւ Հարսն խրոց յանցանաց: Որպէս հնումն բորոտք ի հեռաստանէ աղաղակէին [Ղուկ. ԺԷ 12], նոյնպէս եւ Հարսն բողոքէ զտգեղութիւնէ եւ սեւութիւնէ իւրմէ՝ օրինակաւ ծանուցմամբ ասելով. «[Ի]բրեւ ըզվրանն Կեդարու եւ իբրեւ զիտրանն Սողոմոնի»: Արդ, Կեդար է որդի Իսմայելի եւ հայր արաբացւոց, որք սեաւ քրձեայ կամ մաշկեայ վրանաւ շրջին, որպէս են այժմոյս ազգն կորդեաց եւ մարաց, որոց բնակութիւնն միշտ է ի լերինս եւ յանապատ տեղիս, որ ամառան եւ ձմեռան անդադար ի շրջիկն են, վասն որոյ, տօթախարշ եւ ցրտակէզ լեալք, ինքեանք եւ վրանք իւրեանց առաւել սեւանան: Որոց եւ զինքն համեմատէ Հարսն՝ ասելով. «Սեաւ եմ իբրեւ զվրանն Կեդարու»: Որպէս եւ Դաւիթ վայ տայր անձին իւրոյ, թէ՝ «Բնակեցայ ես ի վրանս Կեդարու» [Սաղմ. ՃԺԹ 5]՝ նման աղցաւոր կենցաղոյս, զի Կեդար «սեաւ եւ տրտմութիւն» թարգմանի: Եւ որ-

ները, որոնք Վերին Երուսաղէմի շուրջն են իբրեւ նրա դուստրեր, որովհետեւ չեն բաժանւում նրանից: Եւ մարգարէները սինագոգի դուստրերն են, եւ առաքեալները՝ Քրիստոսի դուստրերը: Հայրապետները, վարդապետները, քահանաներն ու խոստովանահայրերը նոր սուրբ Եկեղեցու դուստրերի ու զաւակների պէս են, որոնց եւ գանգատւում է Հարսն իր յանցանքներից: Ինչպէս հնում բորոտները էին հեռուից աղաղակում [Ղուկ. ԺԷ 12], նոյնպէս եւ Հարսն է բողոքում իր տգեղութիւնից ու սեւութիւնից՝ օրինակի ծանուցումով ասելով. «Կեդարի վրանի ու Սողոմոնի խորանի նման»: Արդ, Կեդարը Իսմայէլի որդին է եւ արաբների հայրը, որոնք սեւ քրձեայ կամ կաշուեայ վրանով են շրջում, ինչպէս են ներկայիս քրդերի ու մարերի ազգերը, որոնց բնակութիւնը միշտ լեռներում ու անապատ տեղերում է, որոնք ամռանն ու ձմռանը անդադար շրջում են, որի պատճառով, տօթախաշ եւ ցրտակէզ լինելով, իրենք եւ իրենց վրաններն աւելի են սեւանում: Որոնց հետ եւ համեմատում է Հարսն իրեն՝ ասելով. «Սեւ եմ Կեդարի վրանի նման»: Ինչպէս եւ Դաւիթն էր իր անձին «վայ» տալիս, թէ՝ «Բնակուեցի ես Կեդարի վրաններում» [Սաղմ. ՃԺԹ 5]՝ մեր կարիքաւոր կենցաղի նման, որովհետեւ Կեդարը «սեւ ու տրտմութիւն» է թարգմանւում: Եւ աւելի շատ այս

քան առ այս կամի ասել, թէ՝ ի փրկութեան վայրէն արտաքսեցայ եւ ի պանդխտութեան վայրս բնակեցայ: Զի եւ այլուր ասէ. «Պանդուխտ եմ ես առաջի քոյ, նժդեհ եւ անցաւոր, որպէս ամենայն հարք իմ» [Սաղմ. ԼԸ 13, ՃԺԸ 19], զի բնական եւ ի գրաւորական յօրինում շրջէի եւ ի ներքոյ անտառախիտ ծառոց զոհէի, ոչ լուայ եւ ոչ ունկն եդի, որ ասացեր. «Ես տնկեցի զքեզ որթ պըտղաբեր ամենեւին ճշմարիտ, զիա՞րդ դարձար ի դառնութիւն, ո՛րթդ օտարացեալ»: Որոյ աղագաւ ամբաստան եղեր յԻնձէն, թէ տեսեր զինչ գործեաց բնակիչն Իսրայելի, գնաց առանձին ի վերայ ամենայն լերանց բարձանց եւ ի ներքոյ ամենայն անտառախիտ ծառոց եւ անդ պոռնկեցաւ [Երեմ. Բ 20]: Իսկ երբ յետ դարձայ եւ զղջալով ապաշխարեցի, այն ժամանակ գեղեցկացայ Սողոմոնի խորանի նման: Սակայն այստեղ վրանն ու խորանը զանազանում են իրարից, որպէս թէ վրանի մէջ բնակւում են լեռնային գիւղացիներն ու շինականները, իսկ խորանի մէջ թագաւորներն ու իշխանները, որովհետեւ այդպէս է երեւում Հարսի խօսքից, որի համար էլ Սողոմոնին վայել էր իրեն յարմար եւ իր արքայութեանն արժանի խորան պատրաստել, որի մէջ բնակւում էր ճշմարիտ Սողոմոնի նման մեր Տէրը՝ հոգիների Փեսան, որի համար Հարսը եղաւ խորան եւ

մասին է ուզում ասել, թէ՝ փրկութեան վայրից արտաքսուեցի եւ պանդխտութեան վայրերում բնակուեցի: Որովհետեւ եւ այլուր ասում է «Քո առջեւ ես պանդուխտ եմ, նժդեհ եւ անցողիկ, ինչպէս իմ բոլոր հայրերը» [Սաղմ. ԼԸ 13, ՃԺԸ 19], որովհետեւ շրջում էի բնական ու գրաւոր օրէնքի մէջ եւ անտառախիտ ծառերի տակ էի զոհում, չլսեցի եւ ականջ չդրեցի, որ ասացիր. «Ես քեզ տնկեցի որպէս բացարձակ ճշմարիտ պտղաբեր որթ, ինչո՞ւ դառնութիւն դարձար, օտարացած որթ»: Որի պատճառով մեղադրեցիր ինձ, որ տեսար, ինչ գործեց Իսրայէլի բնակիչը, առանձին գնաց բոլոր բարձր լեռների վրայ եւ բոլոր անտառախիտ ծառերի տակ եւ այնտեղ պոռնկացաւ [Երեմ. Բ 20]: Իսկ երբ յետ դարձայ եւ զղջալով ապաշխարեցի, այն ժամանակ գեղեցկացայ Սողոմոնի նման: Սակայն այստեղ վրանն ու խորանը զանազանւում են իրարից, որպէս թէ վրանի մէջ բնակւում են լեռնային գիւղացիներն ու շինականները, իսկ խորանի մէջ թագաւորներն ու իշխանները, որովհետեւ այդպէս է երեւում Հարսի խօսքից, որի համար էլ Սողոմոնին վայել էր իրեն յարմար եւ իր արքայութեանն արժանի խորան պատրաստել, որի մէջ բնակւում էր ճշմարիտ Սողոմոնի նման մեր Տէրը՝ հոգիների Փեսան, որի համար Հարսը եղաւ խորան եւ

եւ բնակարան, զի խոստովանեցաւ զՆա Փրկիչ աշխարհի եւ Որդի Աստուծոյ [Ա Յովհ. Դ 14]: «Այլ այ[]սուհետեւ չեմք օտար եւ ոչ պանդուխտ, քաղաքակիցք՝ սրբոց եւ ընտանիք՝ Աստուծոյ» [Եփես. Բ 19]: Ուստի եւ Հարսն ասէ՝ սեւ եմ ես եւ գեղեցիկ: Սեւ՝ զի սահական եւ բեկանուտ մարդկային տկար բնութեամբ զգածեալ է, եւ գե[ղեցիկ]՝ զի գիտէ յաղթել մարմնոյ, աշխարհի եւ սատանայի եւ, ընդդէմ կալեալ նմա, ասէ. «Ո՞ւր է, մա՛հ, յաղթութիւն քո, ո՞ւր է, դժո՛խք, խայթոց քո» [Ա Կորնթ. ԺԵ 25]: «Սեւ եմ ես»,– ասէ, որպէս Աբէլ՝ նախանձու եղբօրն, եւ գե[ղեցիկ]՝ զի արեամ[բ] կարմրացաւ [Ծննդ. Դ 8]: Բայց համայնգամայն ասէ, թէ՝ սեւ եմ ես եւ գե[ղեցիկ]: Սեւ՝ իբրու յուսահատ տխրութեամբ՝ սակս անագանելոյ Փեսային, եւ գե[ղեցիկ]՝ իսկոյն գալստեան Նորին յաշխարհ: Վասն որոյ ասէ Յեսայեծինն, թէ՝ «Ի դարձուցանել Տեառն զգերութիւն Սիոնի, եղաք մեք մխիթարեալք, յայնժամ լցան բերանք մեր խնդութեամբ, եւ լեզուք մեր՝ ցնծութեամբ» [Սաղմ. ՃԻԷ 1], զի ի ծառայութենէ էանց յազատութիւն, ի պանդխտութենէ՝ ի քաղաքակցութիւն, ի յօտարութենէ՝ ի յ[ը]նտանեկցութիւն եւ ի յաղախնութենէ՝ ի հարսնութիւն Ստեղծողին իւրոյ: Վասն որոյ ասէ. «Որ-

բնակարան, որովհետեւ Նրան ընդունեց որպէս աշխարհի Փրկիչ եւ Աստուծոյ Որդի [Ա Յովհ. Դ 14]: «Այլ այսուհետեւ օտար եւ պանդուխտ չենք, այլ համաքաղաքացի՝ սրբերին եւ ընտանի՝ Աստծուն» [Եփես. Բ 19]: Ուստի եւ Հարսն ասում է՝ սեւ եմ ես եւ գեղեցիկ: Սեւ՝ որովհետեւ զգեստաւորուել է փոփոխական ու յեղյեղուկ մարդկային տկար բնութեամբ, եւ գեղեցիկ՝ որովհետեւ գիտի յաղթել մարմնին, աշխարհին եւ սատանային եւ, նրա դէմ դուրս գալով, ասում է. «Ո՞ւր է, մա՛հ, քո յաղթութիւնը, ո՞ւր է, դժո՛խք, քո խայթոցը» [Ա Կորնթ. ԺԵ 25]: «Սեւ եմ ես»,– ասում է, ինչպէս Աբէլը՝ եղբօր նախանձից, եւ գեղեցիկ՝ որովհետեւ արեամբ կարմրեց [Ծննդ. Դ 8]: Բայց ընդհանուր կերպով ասում է, թէ՝ սեւ եմ ես եւ գեղեցիկ: Սեւ՝ յուսահատ տխրութեամբ՝ Փեսայի յապաղելու պատճառով, եւ գեղեցիկ՝ Նրա իսկոյն գալստեամբ աշխարհ: Որի համար ասում է Յեսայեծինը, թէ՝ «Երբ Տէրը դարձրեց Սիոնի գերութիւնը, մենք մխիթարուեցինք, այն ժամանակ մեր բերանները լցուեցին խընդութեամբ, եւ մեր լեզուները՝ ցնծութեամբ» [Սաղմ. ՃԻԷ 1], որովհետեւ ծառայութիւնից անցաւ ազատութեան, պանդխտութիւնից՝ համաքաղաքացիութեան, օտարութիւնից՝ ընտանեկցութեան եւ աղախնութիւնից՝ հարսնութեան՝ իր Ստեղծողի համար: Ուստի ասում է. «Սիոնի որդի-*

դիք Սիոնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց» [Սաղմ. ՃԽԹ 2]: Սեաւ՝ Պօղոս, մինչ հալածէր զԵկեղեցին Քրիստոսի, եւ զե[ղեցիկ]՝ յորժամ քարոզէր զՔրիստոս Աստուած, որ եւ ի գլխատմանն փոխանակ արեան կաթն բխեաց: «Իբրեւ զվրանն Կեդարու եւ իբրեւ զիւորանն Սողոմոնի», այսինքն՝ թելադրութեամբն սատանայի սեւացայ, բայց ողորմութեամբն Աստուծոյ խորան եւ տաճար Սողոմոնի յարմարեցայ, որ է տուն Աստուծոյ: (Սատ եւ՝ աղքատ Ղազ[արոսն] եւ մեծատունն, փարիս[եցին] եւ մաքսաւորն):

Բան, որ ասէ. «Ունին զսուր ուսեալք զպատերազմն, այր իւրաքանչիւր զսուր իւր ի վերայ ազդեր իւրոյ ի զարհուրանաց գիշերոյ» [Երգ Գ 8]: Զայս վասն զօրաւորացն ասէ, որք շուրջ կան զգահոյիւքն Սողոմոնի: Բայց գիտելի է, զի որպէս եղանի զօրագլուխն, նոյնպէս եղանի զօրավարն, զօրք եւ զիւորք նորին, եւ որպէս նա առնէ, նոյնպէս առնեն եւ նոքա: Որպէս Աբիմելէք կոտորեաց բեռն մի փայտի եւ եւ զայն ի վերայ ուսոց իւրոց եւ ասէ ցզօրսն՝ զինչ տեսանիցէք յիս, զոր առնիցեմ, արասջիք եւ դո՛ւք վաղվաղակի: Կոտորեցին եւ նոքա իւրաքանչիւր ոք ամենեքին զբեռն մի փայտի եւ բարձին եւ գնացին զհետ նորա եւ եդին ի վերայ ամրոցին եւ այրեցին զամրոցն հրով [Դատ. Թ 49]: Նմանապէս եւ Զօ-

ները թող ցնծան իրենց թագաւորով» [Սաղմ. ՃԽԹ 2]: Սեւ էր Պողոսը, մինչ հալածում էր Քրիստոսի Եկեղեցին, եւ գեղեցիկ՝ երբ Քրիստոս Աստծուն էր քարոզում, որ եւ գլխատման պահին արեան փոխարէն կաթ բխեցրեց: «Կեդարի վրանի նման եւ Սողոմոնի խորանի նման», այսինքն՝ սատանայի թելադրութեամբ սեւացայ, սակայն Աստուծոյ ողորմութեամբ յարդարուեցի որպէս Սողոմոնի խորան եւ տաճար, որն Աստուծոյ տունն է: (Այստեղ նաեւ՝ աղքատ Ղազարոսն ու մեծատունը, փարիսեցին ու մաքսաւորը):

Այն խօսքը, որ ասում է. «Սուր ունեն եւ սովորել են պատերազմել, իւրաքանչիւր այր սուր ունի իր ազդրի վրայ՝ գիշերուայ զարհուրանքների դէմ» [Երգ. Գ 8]: Սա ասում է զօրավարների մասին, որոնք կան Սողոմոնի գահի շուրջ: Բայց հասկանալի է, որ ինչպիսին զօրագլուխն է, նոյնպիսին լինում են եւ նրա զօրավարը, զօրքն ու զինուորները, եւ ինչպէս նա է անում, այնպէս էլ նրանք են անում: Ինչպէս Աբիմելէքը մի բեռ փայտ կոտորեց եւ այն դրեց իր ուսերին եւ ասաց զօրքին՝ ինչ որ տեսնում էք, թէ ես եմ անում, շտապ դո՛ւք էլ նոյնն արէք: Եւ նրանց բոլորից իւրաքանչիւրը նոյնպէս մի բեռ փայտ կոտորեց, եւ վերցրեցին եւ գնացին նրա հետ եւ դրեցին ամրոցի վրայ եւ ամրոցը հրով այրեցին [Դատ. Թ

բագլուխն հաւատոց մերոց [Եբր. ԺԲ 2]. «Օրինակ մի եւտու ձեզ, զի որպէս Ես արարի, եւ դուք առնիջիք» [Յովհ. ԺԳ 15], քանզի սուր երկայրի սրեալ ելանէր ի բերանոյ Նորա, որով եմուտ ի պատերազմ [Յայտ. Ա 16 եւ Բ 16]՝ երջանկապէս զինուորեալ, որ ի տեղի սաղաւարտի էառ զփուշ պսակն, ի տեղի պղնձեայ զրահի զգեցաւ զքղամիտն, ի տեղի երկաթեայ առնապանաց ընկալաւ զերկաթեայ բեւեռս, ի տեղ[ի] զինուորական պաշտպա[]նութեան սիրեաց զմիայնութիւն, ի տեղ[ի] հնչման փողոյ զլռութիւնն եւ զհամբերութիւնն, ի տեղ[ի] ըմպելեաց՝ զքացախ եւ զլեղի, ի տեղ[ի] ձիոյ եւ երիվարի՝ զիւաչն: Որովք յաղթեաց զթշնամին ազգի մարդկան ըստ կանխագրութեան մարգարէին, թէ՝ «Յաւուր յայնմիկ ածցէ Աստուած զսուրն սուրբ մեծ եւ հզօր ի վերայ վիշապ օձին կամակորին եւ սպանցէ զվիշապն ի մէջ ծովուն» [Եսայի ԻԷ 1]: Այսպէս էիար զպատերազմ ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի, զաղեղունս փշրեաց, զենս խորտակեաց եւ զասպարս այրեաց հրով [Սաղմ. ԽԵ 10]: Առ այս վախճան աղօթէր աստուածահայր մարգարէն եւ պաղատէր առ Փեսայն հոգւոյ՝ ասելով. «Ո՛ւր զսուր ընդ մէջ Քո, հզո՛ր» [Սաղմ. ԽԴ 4]: Նմանապէս զօրաւորք եւ զօրք Նորին պահպանեն զգահոյք Փեսային հոգւոյ

49]: Նմանապէս մեր հաւատքի Զօրագլուխը [Եբր. ԺԲ 2]: «Մի օրինակ տուեցի ձեզ, որպէսզի ինչպէս Ես արեցի, այնպէս էլ դուք անէք» [Յովհ. ԺԳ 15], քանզի սրուած երկայրի սուր էր դուրս գալիս Նրա բերանից, որով պատերազմի մէջ մտաւ [Յայտ. Ա 16 եւ Բ 16]՝ երջանիկ կերպով զինուորագրուած, որ սաղաւարտի փոխարէն փշէ պսակը վերցրեց, պղնձեայ զրահի փոխարէն քղամիդ հագաւ, երկաթեայ սոնապանների փոխարէն երկաթեայ բեւեռներ [ընդունեց], զինուորական պաշտպանութեան փոխարէն միայնութիւն սիրեց, փողհարութեան փոխարէն՝ լռութիւն եւ համբերութիւն, ըմպելիքի փոխարէն՝ քացախ եւ լեղի, ձիու եւ երիվարի փոխարէն՝ խաչը: Որոնցով յաղթեց մարդկային ազգի թշնամուն մարգարէի կանխագրութեան համաձայն, թէ՝ «Այն օրն Աստուած մեծ եւ հզօր սուրբ սուրն իջեցնելու է կամակոր վիշապ օձի վրայ եւ սպանելու է վիշապին ծովում» [Եսայի ԻԷ 1]: Այսպէս պատերազմով հարուածեց երկրի ծագերից մինչեւ ծագերը, փշրեց աղեղները, խորտակեց զենքերը եւ ասպարները հրով այրեց [Սաղմ. ԽԵ 10]: Այս աւարտի համար էր աղօթում աստուածահայր մարգարէն եւ պաղատում հոգիների Փեսային՝ ասելով. «Ո՛ւր կապիր Քո մէջքին, հզո՛ր» [Սաղմ. ԽԴ 4]: Նմանապէս եւ Նրա զօրավարներն ու զօրքը պահպանում են մեր հոգիների Փե-

մերոյ Սողոմոնի եւ վասն Այնորիկ յորժամ պատերազմեն, որպէս Միքայէլ հրեշտակապետն վիճէր ընդ բանսարկուին վասն մովսիսեան մարմնոյն, եւ որ կամէր հակառակիլ ընդ Յեսուայ քահանայի մեծի եւ ընդ կնոջն, որ հանդերձեալ էր ծնանել, եւ յաղագս չարախօսելոյ վասն եղբարց մերոց: Վասն որոյ Միքայէլ եւ հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապ օձին եւ յաղթեցին զնա Արեամբ Գառին եւ, շղթայիւք կապեալ, փակեցին զնա ի խորս դժոխոց [Յուդա Ա 9, Զաք. Գ 1, Յայտ. ԺԲ 4 եւ Ի 1]: Նմանապէս առաքեալք եւ մարգարէք ունին զսուր ուսեալք զպատերազմ, որպէս ասէր, թէ՝ «Գրեալ է ի մարգարէս. «Եւ եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ, ամենայն որ լսէ ի Հօրէ եւ ուսանի, գայ առ Իս» [Յովհ. Զ 45]: Զի սուսեր հոգւոյն է բանն Աստուծոյ [Եփես. Զ 17], որով Պօղոս պապանձեցոյց զՏերտուղիոս ճարտասանն եւ զԼեւիաթանն խաղալիք արար ինքեան: Եւ, ըստ Ոսկ[եբերանի], իբրեւ ստրկի միում բազում անգամ սաստէր սատանայի եւ իբրեւ ընդ հպու խաղայր ընդ Սադայելի՝ ունելով զսուս իւր ի վերայ պարանոցի նորին: Վասն որոյ ասէ Պօղոս. «Ընտրեաց զմեզ Նովա յառաջ քան զլինիլն աշխարհի» [Եփես. Ա 4]: Սապէս եւ մարգարէն ասէ. «Ի յարգանդէ կոչեաց զիս եւ ի յորովայնէ մօր սայ Սողոմոնի գահը եւ Նրա համար ամէն ժամ պատերազմում, ինչպէս Միքայէլ հրեշտակապետն էր Մովսէսի մարմնի համար վիճում բանսարկուի հետ, որը կամենում էր նաեւ հակառակուել մեծ քահանայ Յեսուին եւ կնոջը, որը պատրաստում էր ծնել, եւ կամենում էր չարախօսել մեր եղբայրների մասին: Որի պատճառով Միքայէլն ու հրեշտակները կռում էին վիշապ օձի հետ եւ յաղթեցին նրան Գառան Արեամբ եւ, շղթաներով կապելով, փակեցին նրան դժոխքի խորքերում [Յուդա Ա 9, Զաք. Գ 1, Յայտ. ԺԲ 4 եւ Ի 1]: Նմանապէս եւ առաքեալներն ու մարգարէները սուր ունէին, պատերազմել էին սովորել, ինչպէս ասում էր, թէ՝ «Գրուած է մարգարէների մօտ. «Եւ բոլորն Աստծուց սովորած կլինեն, ամէն ոք, ով լսում է Հօրից եւ սովորում, գալիս է Ինձ մօտ» [Յովհ. Զ 45]: Որովհետեւ հոգու սուսերն Աստուծոյ խօսքն է [Եփես. Զ 17], որով Պօղոսը պապանձեցրեց Տերտուղիոս ճարտասանին եւ Լեւիաթանին իրեն խաղալիք դարձրեց: Եւ, ըստ Ոսկեբերանի, բազմաթիւ անգամ սաստում էր սատանային, ինչպէս մի ստրուկի, եւ խաղում Սադայէլի հետ, ինչպէս հաւի հետ՝ իր ոտքերը նրա պարանոցի վրայ դրած: Ուստի Պօղոսն ասում է «Մեզ Նրանով ընտրեց նախքան աշխարհի լինելը» [Եփես. Ա 4]: Սրա պէս ասում է եւ մարգարէն՝ «Արգանդից կանչեց ինձ եւ իմ մօր

իմոյ կարդաց զանուն իմ եւ եդ զբերան իմ իբրեւ զսուր սուսերի եւ ընդ հովանեաւ ձեռին իւրոյ թագոյց զիս» [Եսայի ԽԹ 1]: Եւ որքան առ այս տարակուսելի է, զի եթէ նախապէս ընտրեցան սոքա, զիա՞րդ այսքան երկար մնացին ներ անհաւատութեան. ասելի է, թէ որ ոմն երիտասարդ ընտրէ ինքեան կոյս մի ի հարսնութեան եւ ածել առ ինքն թողու ի դիպող ժամու, նոյնպէս եւ առաքեալքն նախապէս ընտրեցան ի գաղափարի մտացն Աստուծոյ եւ ի ժամանակի պիտանաւորութեան կոչեցան ի Նմանէ, որք եղեն զօրավար զօրու Տեառն եւ պատերազմեալք յաղթեցին յանմարմին թշնամւոյն: Նմանապէս եւ վարդապետք Եկեղեցւոյ ունին զսուր, որ է բանն Աստուծոյ՝ ազդող եւ հատու, քան զամենայն սուր երկսայրի [Եբր. Դ 12], զորս քարոզեն, որովք խրատեն, խոցեն եւ վիրաւորեն զմիտս լսողաց, զորոց պատմէ Դաւիթ, թէ՝ «Սուր երկսայրի ետ ի ձեռս նոցա առնոյ զ[]հատուցումն ի հեթանոսաց՝ ի յանդիմանութիւն ամենայն ժողովրդոց» [Սաղմ. ՃԽԹ 7]: Զի քարոզիչքն են սուր Քրիստոսի՝ Փեսային հոգւոց, որով Քրիստոս պատերազմի ընդ ամբարշտաց, զի ասա այսու սրով հատանէ զմոլութիւնս մոլորելոց եւ յԱւուրն Դատաստանի պատժէ դատապարտե-

որովայնից կարդաց իմ անունը եւ իմ բերանը հաստատեց որպէս սուսերի սուր եւ Իր ձեռքի հովանու ներքոյ պատսպարեց ինձ» [Եսայի ԽԹ 1]: Եւ սրա մասին ինչքան տարակուսելի է, որովհետեւ եթէ սրանք նախապէս ընտրուեցին, ինչո՞ւ այսքան երկար մնացին անհաւատութեան մէջ. կարելի է ասել, որ ինչպէս մի երիտասարդ մի կոյս է ընտրում իր համար հարսնութեան եւ իր մօտ բերելը թողնում յարմար ժամանակի, նոյնպէս եւ առաքեալները նախապէս ընտրուեցին Աստուծոյ մտքի գաղափարի մէջ եւ պիտանի լինելու ժամանակ կանչուեցին Նրա կողմից, որոնք եղան Տիրոջ զօրքի զօրավարը եւ պատերազմելով յաղթեցին անմարմին թշնամուն: Նմանապէս եւ Եկեղեցու վարդապետներն ունեն սուր, որն Աստուծոյ խօսքն է՝ բոլոր երկսայրի սրերից աւելի ազդու եւ հատու [Եբր. Դ 12], որով քարոզում են, խրատում, խոցում եւ վիրաւորում լսողների մտքերը, որոնց մասին պատմում է Դաւիթը, թէ՝ «Նրանց ձեռքը երկսայրի սուր տուեց հեթանոսներից հատուցում ստանալու համար՝ ի յանդիմանութիւն բոլոր ժողովուրդների» [Սաղմ. ՃԽԹ 7]: Որովհետեւ քարոզիչները հոգիների Փեսայ Քրիստոսի սուրն են, որով Քրիստոս պատերազմում է ամբարիշտների հետ, որովհետեւ այստեղ այս սրով հատում է մոլորեալների մոլութիւնները եւ Դատաստանի Օրը պատժում դա-

լով, զի հրամայէ ամենայն թռչնոց երկնից գալ ի յ[ը]նթրիս մեծին Աստուծոյ եւ ուտել զմարմինս թագաւորաց եւ զմարմինս հզօրաց եւ զմարմինս երիվարաց եւ ամենայն հեծելոց ի նոսա եւ զմարմինս ազատաց եւ ծառայից, մեծի եւ փոքրու [Յայտ. ԺԹ 17]: Վասն որոյ ասէ. «Ամենեքեան ունին զսուր ուսեալք զպատերազմն», այսինքն՝ համայն սուրբք եւ հարսնացեալք Քրիստոսի, որք գրեցան զինորք Քրիստոսի զօրապետին եւ մտին ի ներքոյ դրօշակի Նորին, ի տեղի սուսերի ունեցան զհաւատն սուրբ, որովք պարտեցին զթագաւորութիւնս [Եբր. ԺԱ 33] եւ զգեցան զզենն լուսոյ եւ եդին ի գլուխ զաղաւարտն յուսոյ փրկութեան եւ շուրջ ածին զինքեամբ զզրահն արդարութեան, կապէին ի մէջ զկամարն ողջախոհութեան, առին զվահանն աղօթից եւ այլն ամենայն, որք զինուորութեան պատկանին եւ փրկութեան հո[գ]ւոց, որովք պատերազմեալ ընդ հնագոյն օձին եւ յաղթեցին քաջապէս, քանզի, ի դէմս Յեսուայ, ասաց առ նոսա Փեսայն հոգւոց. «Ես զօրավար եմ զօրու Տեառն եւ եկի՝ օգնել քեզ» [Յեսու Ե 13]: Որովք ջնջեցան զձեռագիր մերոյ հակառակութեան հրամանօք Իւրովք, որ կայր մեզ հակառակ, եւարձ զայն ի միջոյ եւ բեւեռեաց ընդ խաչափայտին [Կող. Բ 14]: Բայց վարտապարտութեամբ, որովհետեւ հրամայում է երկնքի բոլոր թռչուններին գալ մեծ Աստուծոյ ընթրիքին եւ ուտել թագաւորների մարմինները, հզօրների մարմինները, երիվարների եւ նրանց բոլոր հեծեալների մարմինները, ազատների եւ ծառաների, մեծերի եւ փոքրերի մարմինները [Յայտ. ԺԹ 17]: Ուստի ասում է «Բոլորը սուր ունեն եւ սովորել են պատերազմել», այսինքն՝ Քրիստոսի համայն սրբերն ու հարսնացեալները, որոնք զինուորագրուեցին զօրապետ Քրիստոսին եւ մտան Նրա դրօշակի տակ, սուսերի փոխարէն սուրբ հաւատք ունեցան, որով պարտութեան մատնեցին թագաւորութիւններին [Եբր. ԺԱ 33], լոյսի զէնք հագան, իրենց գլխին փրկութեան յոյսի սաղաւարտ դրեցին եւ իրենց պատեցին արդարութեան զրահով, մէջքին կապեցին ողջախոհութեան գօտին, առան աղօթքի վահանը եւ այն ամէնն, ինչ զինուորութեանն ու հոգիների փրկութեանն է վերաբերում, որոնցով պատերազմելով հնագոյն օձի հետ՝ քաջաբար յաղթեցին, որովհետեւ հոգիների Փեսան, ի դէմս Յեսուի, ասաց նրանց. «Ես Տիրոջ զօրքի զօրավարն եմ եւ եկայ՝ օգնելու քեզ» [Յեսու Ե 13]: Որոնցով Իր հրամանով ջնջուեց մեր հակառակութեան ձեռագիրը, որ մեզ հակառակ էր, վերցրեց այն մեր միջից եւ բեւեռեց խաչափայտին [Կող. Բ 14]: Բայց Եկեղեցու զպատերազմ կոչեն աղբիւր չարագործութեան, արմատ անիրաւութեան եւ սկիզբն անօրէնութեան, բայց որովհետեւ ոչ է մեզ պատերազմն ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ՝ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս չարութեան, որք են ի ներքոյ երկնից [Եփես. Զ 12], վասն այնորիկ պատերազմս զայս կոչեմք աղբիւր բարեգործութեան եւ սկիզբն ամենայն առաքինութեան, որ ի պատերազմէ աստի առաջ գայ: Զորս ուստոյց զինուորաց Իւրոց Փեսայն երկնաւոր՝ ասելով. «Արասցեն զամենայն ըստ օրինակին, որպէս ցուցաւ քեզ» [Եբր. Ը 5]: Ուստի շնորհակալ եղեալ Հարսին՝ ասէ. «Ուսուցեր ինձ զպատերազմ եւ արարեր զբազուկ իմ որպէս զաղեղն հաստ» [Սաղմ. ԺԷ 35]: Արդ, այսոքիկ եւ ամենայն զէնք, որք հարկաւորք են հոգեւոր զինուորութեան. «Ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոյ» [Եփես. Զ 16] եւ թէ՝ «Առէք զսաղաւարտն փրկութեան» [Եփես. Զ 17], եւ այն թէ՝ «Զգեցցուք զզրահն հաւատոյ» [Ա Թես. Ե 8], կամ թէ՝ «Զգեցցի զրահս զարդարութիւն եւ դիցէ զսաղաւարտ անաչառ» [Իմաստ. Ե 19]: Եւ թէ կամիս լաւապէս ասել, ի գիրս նմանութեանց հինգերորդն չորրորդ գլխոյն բարւոքապէս խօսի վասն դպատերազմ կոչեն աղբիւր չարագործութեան, արմատ անիրաւութեան եւ սկիզբն անօրէնութեան, բայց քանի որ մեր պատերազմը մարմնի եւ արեան դէմ չէ, այլ՝ իշխանութիւնների եւ պետութիւնների դէմ, այս խաւարի աշխարհակալների դէմ, չար դեւերի դէմ, որ երկնքի տակ են [Եփես. Զ 12], ուստի այս պատերազմն անուանում ենք բարեգործութեան աղբիւր եւ ամենայն առաքինութեան սկիզբ, որն այս պատերազմից է առաջ գալիս: Որը սովորեցրեց Իր զինուորներին երկնաւոր Փեսան՝ ասելով. «Արա՛ ամէն ինչ ըստ օրինակի, ինչպէս քեզ ցոյց տրուեց» [Եբր. Ը 5]: Ուստի Հարսը, շնորհակալ լինելով, ասում է. «Սովորեցրիր ինձ պատերազմ եւ իմ բազուկն աղեղի նման հաստ արեցիր» [Սաղմ. ԺԷ 35]: Արդ, սրանք են բոլոր զէնքերը, որոնք հարկաւոր են հոգեւոր զինուորութեան համար. «Ամէն ինչից առաջ վերցրէ՛ք հաւատքի վահանը» [Եփես. Զ 16] եւ թէ՝ «Վերցրէ՛ք փրկութեան սաղաւարտը» [Եփես. Զ 17], եւ այն, թէ՝ «Հագնենք հաւատքի զրահը» [Ա Թես. Ե 8], կամ թէ՝ «Որպէս զրահ արդարութիւնն է հագնելու եւ որպէս սաղաւարտ դնելու է անաչառ դատաստանը» [Իմաստ. Ե 19]: Եւ եթէ կամենում ես լաւագոյն կերպով ներկայացնել, նմանութիւնների գրքի ինգերորդի չորրորդ գլխում լաւագոյն կերպով խօսում է այդ մասին, իմացի՛ր եւ հարատացի՛ր, որքան կամենում

այնմիկ բանի, զի՛ւ եւ ճոխացո՛ ողբան կամիս: [ ] Զայսոսիկ ամենեքեան ուսանիմք ի Սուրբ Գրոց, որովք ի չարէն ելանեմք առ բարին, զի այսոքիկ են սուրբ Հարսին Եկեղեցւոյ՝ զինուորացն Քրիստոսի ընծայեալ ի վերուստ, ըստ այնմ՝ «Մո՛ զսուսերդ զայդ սուրբ պարգեւ ի Տեառնէ, զի դովաւ սատակեացես զթշնամիս ամենայն» [Բ Մակ. ԺԵ 16]: «Ասեալք զպատերազմ»,– ասէ, որպէս պատմի ի վարս Յոհաննու Գրքեցւոյն, թէ մինչ սատանայ, ի կերպարանս նորին ծնողի գնացեալ ի բերան գրոյն, աղաղակէր ելանել անտի, եւ նա, լուռ եւեթ կալով, անդադար աղօթէր, եւ անճարացեալ դիւին, զկերպարանս միշապի փոխեալ, անկաւ ի գուրն, իսկ երանելի մանուկն Յոհաննէս, զօրացեալ Հոգւով Սրբով, յարեաւ եւ եդ զոտն իւր ի վերայ պարանոցի փողից միշապին, խեղդէր զնա, եւ նա երդուեալ յանուն Աստուծոյ, զի մի՛ այլեւս այն յանապատն երթիցէ, այլ միայն եթէ թոյլ տայցէ անտի: Նոյնպէս եւ բազումք ի յանապատաբնակ սուրբ հարցն նստեալ ի վերայ դիւին, որպէս ի վերայ իշոյ. եւ զայսպիսիս բազումս տե՛ս ի վարս հարանց: Նմանապէս եւ պատերազմէին ընդ հեթանոսաց եւ ընդ բռնաւորաց նոցին եւ թագաւորաց եւ քաջապէս յաղթէին բռնութեան նոցին: Վասն որոյ գրեաց եւ Դիոկղետիանոս առ

ես: Այս բոլորը սովորում ենք Սուրբ Գրքից, որով չարից բարձրանում ենք դէպի բարին, որովհետեւ սրանք են Քրիստոսի զինուորների՝ Հարս Եկեղեցու ի վերուստ ընծայուած սրերը՝ ըստ այն խօսքի. «Վերցրո՛ այդ սուրբ սուսերը որպէս պարգեւ Տիրոջից, որպէսզի դրանով սատակեցնես բոլոր թշնամիներին» [Բ Մակ. ԺԵ 16]: «Սովորել են պատերազմել»,– ասում է, ինչպէս պատմւում է Յովհաննէս Գրքեցու վարքի մէջ, թէ երբ սատանան, նրա ծնողի կերպարանքով գնալով գրի բերանը, աղաչում էր դուրս գալ այնտեղից, իսկ նա, լուռ մնալով, անդադար աղօթում էր, անճարացած դեւը, միշապի կերպարանքի փոխակերպուելով, ընկաւ գուրի մէջ, իսկ երանելի երիտասարդը՝ Յովհաննէսը, Սուրբ Հոգով զօրացած, բարձրացաւ եւ իր ոտքը դրեց միշապի կոկորդին, խեղդում էր նրան, իսկ նա Աստուծոյ անունով երդուեց, որ այլեւս այն անապատը չի գնայ, եթէ միայն իրեն այնտեղից բաց թողնի: Նոյնպէս եւ անապատաբնակ սուրբ հայրերից շատերը նստում էին դեւի վրայ, ինչպէս էշի վրայ. եւ այսպիսի բազում բաներ տե՛ս հայրերի վարքերում: Նմանապէս եւ պատերազմում էին հեթանոսների եւ նրանց բռնակալների ու թագաւորների հետ եւ քաջաբար յաղթում նրանց բռնութեանը: Որի պատճառով եւ գրեց Դիոկղետիանոսը հայոց Տրդատ արքային, թէ՝ թող տեղեակ լինի քո*

արքայն հայոց Տրդատ, թէ՝ զիտութիւն լիցի երբայրութեան քում վասն Քրիստոնէից, սուրբ մեր բթացան, եւ նոքա ի մեռանելոյ ոչ զարհուրեցան: Վասն այնորիկ եւ մասն Եկեղեցւոյ, որք դեռեւս են ի յերկրի, կոչին զինուորեալ Եկեղեցի, եւ յաղթողքն աշխարհի, ելեալք ի յերկրէ, խառնեալք ի դասս զուարթնոց, յայնժամ կոչի յաղթող Եկեղեցի, ուստի ասէ Դաւիթ. «Զգեցուցեր ինձ զզօրութիւն ի պատերազմի, զյարուցեալսն ի վերայ իմ ի ներքոյ իմ արարեր» [Սաղմ. Է 40]: «Այր իւրաքանչիւր զսուր իւր ի վերայ ազդեր իւրոյ ի զարհուրանաց գիշե[րոյ]»: Ըստ բժշկաց՝ ազդերքն բաղադրեալ եւ կազմեալք են ի մեծամեծ ոսկերաց, զի են հիմունք ամենից ոսկերաց, նաեւ ունին զմեծամեծ ջիլս եւ երակունս, որովք լինի կամաւոր շարժումն ոտից: Վասն որոյ կրեն զսուրն ի վերայ ազդեր, զի դիւրաւ կարասցեն շարժիլ եւ պատրաստ գտանիցին՝ առ ի փութապէս քարշել զսուրն ընդդէմ աւազակաց եւ զիշերային գողերի կամ միջօրէի թշնամիների կամ աստուածայինը խախտողների: Ինչպէս Մովսէսի օրօք Աստուած ասաց. «Իւրաքանչիւրդ ձեր սուրը ձեր ազդրի վրայ դրէք, անցէ՛ք եւ այստեղից բանակի մէջ դռնից դո՛ւռ դարձէք եւ կոտորեցէ՛ք յանցաւորներին» [Ելք ԼԲ 27]: Ուստի ազդերով հասկանում ենք Քրիստոսի զինուորների ճշմարտութեան

եղբայրութիւնը քրիստոնեաների մասին, մեր սրերը բթացան, իսկ նրանք մեռնելուց չզարհուրեցին: Այս պատճառով էլ Եկեղեցու մասը, որը դեռեւս երկրի վրայ է, կոչւում է զինուորեալ Եկեղեցի, իսկ աշխարհում յաղթողները, երկրից դուրս գալով եւ զուարթունների դասերի հետ խառնուելով, այն ժամանակ կոչւում են յաղթող Եկեղեցի, ուստի Դաւիթն ասում է. «Պատերազմի մէջ ինձ զօրութիւն հագցրիր, ինձ վրայ բարձրացածներին իմ տակովն արեցիր» [Սաղմ. Է 40]: «Իւրաքանչիւր այր իր սուրն իր ազդրի վրայ ունի գիշերուայ զարհուրանքների դէմ»: Ըստ բժիշկների՝ ազդրերը բաղադրուած ու կազմուած են մեծամեծ ոսկորներից, որովհետեւ բոլոր ոսկորների հիմքն են, նաեւ մեծամեծ ջիլեր ու երակներ ունեն, որոնցով ոտքերի կամաւոր շարժումն է լինում: Այս պատճառով սուրն ազդրի վրայ են կրում, որպէսզի հեշտութեամբ կարողանան շարժուել եւ պատրաստ լինեն՝ սուրը փութով քաշելու ընդդէմ աւազակների եւ զիշերային գողերի կամ միջօրէի թշնամիների կամ աստուածայինը խախտողների: Ինչպէս Մովսէսի օրօք Աստուած ասաց. «Իւրաքանչիւրդ ձեր սուրը ձեր ազդրի վրայ դրէք, անցէ՛ք եւ այստեղից բանակի մէջ դռնից դո՛ւռ դարձէք եւ կոտորեցէ՛ք յանցաւորներին» [Ելք ԼԲ 27]: Ուստի ազդերով հասկանում ենք Քրիստոսի զինուորների ճշմարտութեան

թացս ճշմարտութեան՝ զհնուորացն Քրիստոսի, առ որս ասէ Տէրն, թէ՝ «Մեծ եւս ինչ ուրախութիւն քան զայս ոչ ունիմ, զի լսիցեմ, թէ որդեակքն Իմ ճշմարտութեամբ գնան» [Բ Յովհ. Ա 4]: Այնպիսիքն են աստուածային զհնու վառեալք, եւ սուր՝ զբանն Աստուծոյ, որովք գիտեն աներկիւղ մնալ ի գազանաց այնոցիկ, որք, եկեալ յանտառէ կենցաղոյս, եւ շրջին ի գիշերի առ ի խողտել զսիրտ եւ զարիւն ուրուք ի ցանկութիւն ողջախոհութեան, ընդդէմ որոց քարշեն զսուրն ողջախոհութեան եւ ընդդէմ հպարտութեան՝ զսուրն [] խոնարհութեան, որպէս եւ Փեսայն հոգւոց սրով խոնարհութեան կտրեաց զշիլս հպարտութեան, աղքատութեամբ եւ մերկութեամբ ցամաքեցոյց զիղձս ագահութեան, պահօք եւ ծմօք՝ զպատճառս որկրամոլութեան, այսպէս՝ հեզութեամբ եւ համբերութեամբ՝ զբարկութեան, արիութեամբ՝ զծուլութեան եւ զերազանց մարդասիրութեամբ՝ զնախանձն եւ ատելութեան: Նոյնպէս եւ զհնուորեալ սրբերքն սրտիւք զԱստուած տեսանեն եւ ոչ երկնչին [յ]այնպիսի գազանական մարտից եւ ոչ խաբին ի ստապատիր բանից աղուէսաբարոյ թշնամեաց: Այսպէս ոչ երկնչին ի զարհուրանաց գիշերոյ եւ ոչ ի նետէ, որ թռչի ի տուէ, քանզի կրեն ի յինքեանս զնշան Նոբարտք ընթացքը, որոնց մասին ասում է Տէրը, թէ՝ «Սրանից աւելի մեծ ուրախութիւն չունեմ, երբ լսեմ, թէ Իմ որդեակները ճշմարտութեամբ են ընթանում» [Բ Յովհ. Ա 4]: Այնպիսիներն են աստուածային զինուորները, իսկ սուրն Աստուծոյ խօսքն է, որով գիտեն աներկիւղ մնալ այն գազաններից, որոնք, դուրս գալով կենցաղային անտառից, շրջում են գիշերով որեւէ մէկի սիրտն ու արիւնը դէպի բոլոխոհութեան ցանկութիւնը խախտելու նպատակով, որոնց դէմ քաշում են ողջախոհութեան սուրը եւ հպարտութեան դէմ՝ խոնարհութեան սուրը, ինչպէս եւ հոգիների Փեսան խոնարհութեան սրով կտրեց հպարտութեան ջիլերը, աղքատութեամբ ու մերկութեամբ ցամաքեցրեց ագահութեան իղձերը, պահքով ու ծոմով՝ որկրամոլութեան պատճառները, այսպէս՝ հեզութեամբ ու համբերութեամբ՝ բարկութեան, արիութեամբ՝ ծուլութեան եւ գերազանց մարդասիրութեամբ՝ նախանձի եւ ատելութեան պատճառները: Նոյնպէս եւ զհնուորեալ սրբերը սրտով տեսնում են Աստծուն եւ չեն երկնչում նման գազանական մարտերից եւ չեն խաբւում աղուէսաբարոյ թշնամիների ստապատիր խօսքերից: Այսպէս չեն երկնչում գիշերուայ զարհուրանքներից եւ ոչ էլ՝ [այն] նետից, որ ցերեկով է թռչում, որովհետեւ իրենց մէջ Նրա նշանն են կրում՝ զգայութեան դրոշմը եւ կնիքն ամէն ինչի դէմ: Ինչպէս

ռիմ՝ զդրոշմ զգայութեան եւ կնիք ի դէմս ամենից: Որպէս պատմի ի վարս սրբոց հարանցն, թէ հրեայ ոմն միայն ագանէր ըստ դիպուածոյ ճանապարհին յանմարդաբնակ տեղիս եւ զարհուրեալ երկնչէր ի խաւարաշրջող դիւացն եւ, զմտաւ ածեալ, եթէ քրիստոնեայքն կնքեն զինքեանս խաչիւն եւ պահպանեալ լինին, եւ տեառնագրեալ զինքն խաչիւն, ննջէր, եւ դեւքն իբրեւ եկեալ տեսին, ճիչ բարձեալ ասէին. «Եկաք ի զարմացմունս, անօթ ունայն՝ կնքեալ արքունական մատանեաւ». եւ անդէն չիք լինէին դեւքն: Իսկ հրեայն, տեսեալ զզօրութիւն սրբոյ խաչին, սիրեանայր, յարուցեալ յառաւօտուն պատմէր եպիսկոպոսի քաղաքին եւ մկրտիւր: Իսկ ի մարմնական թշնամեաց փրկէ ըզնշանն տէրունական, յայտ ի մեծէն Կոստանդիանոսէ է եւ յա[յ]լոց բազմաց, որք զօրացան նովա եւ յաղթեցին եւ երեւելի եւ հզօր եղեն ի վերայ թշնամեաց: Այլ եւ որպէս ազգերքն են հիմն ամենից ոսկերաց մարմնոյն, նոյնպէս եւ չորս գլխաւոր առաքինութիւնք հիմն ամենից առաքինութեանց, որոց վերայ կայանան եւ ա[յ]լքն ամենայն: Եւ որպէս մարմնաւոր սուրն կրի ի վերայ ազգեր, նոյնպէս եւ հոգե[ւ]որ սուրն՝ ի վերայ չորից առաքինութեանց, այսինքն՝ յարդարութեան, խոհեմութեան, արիութեան եւ ողջամտութեան: պատմում է սուրբ հայրերի վարքերում, թէ մի միայնակ հրեայ ճանապարհին պատահաբար հանգստանում էր անմարդաբնակ տեղում եւ զարհուրելով երկնչում խաւարաշրջիկ դեւերից եւ, մտածելով, որ քրիստոնեաներն իրենք իրենց խաչով են կնքում եւ պահպանում են, ինքն իրեն խաչով տեառնագրելով, ննջում էր, եւ երբ դեւերը գալով տեսան, ճիչ բարձրացնելով՝ ասում էին. «Զարմանքի մէջ ընկանք, արքունական մատանիով կնքուած դատարկ անօթ». եւ դեւերն այնտեղից չքում էին: Իսկ հրեան, տեսնելով սուրբ խաչի զօրութիւնը, ոգեորուեց, առաւօտեան ելնելով պատմեց քաղաքի եպիսկոպոսին եւ մկրտուեց: Իսկ որ տէրունական Նշանը մարմնական թշնամիներից փրկում է, յայտնի է մեծ Կոստանդիանոսից եւ շատ ուրիշներից, ովքեր նրանով զօրացան եւ յաղթեցին եւ թշնամիների վրայ երեւելի եւ հզօր եղան: Այլեւ ինչպէս ազգերն են մարմնի բոլոր ոսկորների հիմքը, նոյնպէս եւ չորս գլխաւոր առաքինութիւններն են բոլոր առաքինութիւնների հիմքը, որոնց վրայ են կառուցում եւ մնացած բոլորը: Եւ ինչպէս մարմնաւոր սուրը կրում է ազգրի վրայ, նոյնպէս եւ հոգեւոր սուրը՝ չորս առաքինութիւնների վրայ, այսինքն՝ արդարութեան, խոհեմութեան, արիութեան եւ ողջամտութեան:

Քանզի արդարութեամբ Սողոմոն վճռեաց զդատ երկուց պոռնիկ կանանցն [Գ Թագ. Գ 24]: Խոհեմութեամբ հրաման ապրեցոյց զտուն իւր եւ զ[ը]նտանիս իւր [Յեսու Բ 6]: Արիութեամբ կործանեաց Դաւիթ զԳողիաթ [Ա Թագ. ԺԷ 49]: Ողջախոհութեամբ Յովսէփ մերժեաց զբոջախոհութիւնն: Իսկ եւ ուր գտանիս թոյնք, անդ եւ ընդդէմ նոցին՝ դեղք, զի ուր հալածանք, եւ անդ նախատեսութիւնն Աստուծոյ պատրաստէ զապեղանի, ուր սատկանայ զհերետիկոսութիւն, եւ անդ յարուցանէ Աստուած զախոյեան ընտիր վարդապետս, որոց սուրբ ուղղափառութեան հալածէ զամենեսեան: Որպէս յամի Տեառն 325 սուրբ հայրապետաց Նիկիոյ սուրբ Ժողովոյն սատակեաց զԱրիոս եւ հալածեաց զհամախոհս նորին: Նոյնպէս եւ յամի Տեառն 396 սուրբ ՃԾ հայրապետացն Կոստանդնուպօլսոյ կործանեաց զՄակեդոն, եւ [] յամի Տեառն 446 սուրբ ՔՃ հայրապետացն Եփեսոսի ժողովոյն ի տար վանեաց զՆեստոր եւ զայլ խումբս հերձուած[ո]ղաց: Այլեւ յամի Տեառն 451 սուրն Կիւրղի եւ Դիոսկորոսի սատակեաց զՄարկիանոս եւ մերժեաց զԼեւոն եւ ջնջեաց զպիղծ տոմար նորին եւ ցրուեաց զանաստուած ժողովն Քաղկեդոնի, որպէս սուր աղօթից սրբոյն Բարսղի ձեռամբ Մերկերիոսի՝ զուրացողն Քրիստոսի զվեճն [Գ Թագ. Գ 24]: Ռահաբն իր տունն ու իր ընտանիքը խոհեմութեամբ փրկեց [Յեսու Բ 6]: Դաւիթը Գողիաթին արիութեամբ կործանեց [Ա Թագ. ԺԷ 49]: Յովսէփը ողջախոհութեամբ մերժեց բոջախոհութիւնը: Իսկ որտեղ թոյներ են գտնւում, այնտեղ են նրանց դէմ դեղերը, որովհետեւ ուր հալածանքն է, այնտեղ եւ Աստուծոյ նախատեսութիւնը սպեղանի է պատրաստում, որտեղ հերետիկոսութիւնը սատկանում է, այնտեղ եւ Աստուած ի յայտ է բերում պաշտպան ընտիր վարդապետների, որոնց ուղղափառութեան սուրը հալածում է բոլորին: Ինչպէս Տիրոջ 325 թուականին Նիկիոյ սուրբ Ժողովի 318 հայրապետների սուրը սատակեցրեց Արիոսին եւ հալածեց նրա համախոհներին: Նոյնպէս եւ Տիրոջ 396 թուականին Կոստանդնուպոլսի 150 հայրապետների սուրը կործանեց Մակեդոնին, եւ Տիրոջ 446 թուականին Եփեսոսի ժողովի 200 հայրապետների սուրը դուրս վանեց Նեստորին եւ հերձուածողների այլ խմբերի: Այլեւ Տիրոջ 451 թուականին Կիւրեղի եւ Դիոսկորոսի սուրը սատկեցրեց Մարկիանոսին եւ մերժեց Լեւոնին, ջնջեց նրա պիղծ տոմարը եւ ցրուեց Քաղկեդոնի անաստուած ժողովը, ինչպէս սուրբ Բարսեղի աղօթքի սուրը Մերկերիոսի միջոցով՝ Քրիստոսին ուրացող Յուլիանոսին:

տոսի Յուլիանոս:

Հաւատն է հիմն այսորիկ տան,
Յոյսն՝ նեցուկ սիւն ամրական,
Սէրն՝ առաստաղ ծածկողական,
Վայելքն է մէջն ուրախական,
Խոհեմութիւնն՝ շրջապարիսպ,
Արիութիւնն առնէ զզիսպ,
Արդարութիւնն՝ հաւաստող,
Ողջախոհ կեանքն՝ աւել մաքրող:

Բան, որ ասէ. «Կաթեցուցանեն շրթունք քո, քո՛յր իմ հարսն, մեղր եւ կաթն ի ներքոյ լեզուի քոյ, եւ հոտ հանդերձից քոց իբրեւ զհոտ կնդրկի» [Երգ Դ 11]: Արդ, մեղրն շինի ի մեղուաց ներ անօթում, զորս կոչեմք փեթակ, յորմէ կաթի եւ մեղրն, իսկ շրթունք մարդոյ կազմիչ եւ կարգաւորիչ են կանոնաւոր ձայնից եւ կերպաւորիչ խօսից, ուստի եւ օրիորդք զշրթունս Հարսին նմանեցուցանեն անօթոյ մեղեր, յորմէ արձակեալ բանքն հանգոյն մեղեր կաթեն ի յամանոյ, զի քաղցրացուցանեն զլսելիս, քանզի Հոգին Սուրբ իբր գործօք շրթամբ Հարսին խօսի ընդ Աստուծոյ, որպէս տէրունական աղօթիւք, յորժամ կարդայ առ Հայր եւ օրհնէ զՈրդի եւ զՍուրբ Հոգին: Որպէս երեք մանկունքն ի հնոցին եւ Ստեփանոս ի քարկոծմանն քաղցրաձայն երգով աղօթէին առ Տէր, եւ յաւուր Պենտեկոստէին սրբազանից առաքելոցն, թէ որպէս Հոգին տայր բարբառիլ նոցա, որոց բանիւք

Հաւատքն է հիմքը այս տան,
Յոյսը՝ նեցուկ սիւն ամրական,
Սէրն՝ առաստաղ ծածկողական,
Վայելքն է ներսն ուրախական,
Խոհեմութիւնը՝ շրջապարիսպ,
Արիութիւնը դարձնում է զուսպ,
Արդարութիւնը՝ հաւաստող,
Ողջախոհ կեանքն՝ առաւել մաքրող:

Խօսքը, որ ասում է «Քո շրթները կաթեցնում են, իմ քո՛յր հարս, մեղր եւ կաթ՝ քո լեզուի տակ, եւ քո հանդերձների հոտը կնդրուկի հոտի նման է» [Երգ Դ 11]: Արդ, մեղրը մեղուների կողմից պատրաստում է ներքին անօթում, որին փեթակ ենք անուանում, որից եւ մեղրն է կաթում, իսկ մարդու շրթները կանոնաւոր ձայների եւ կերպաւոր խօսքերի կազմիչն ու կարգաւորիչն են, ուստի եւ օրիորդները Հարսի շրթները նմանեցնում են մեղրի անօթի, որից արձակուած խօսքերը մեղրի նման կաթում են ամանից, որովհետեւ քաղցրացնում են լսելիքը, որովհետեւ Սուրբ Հոգին որպէս միջոց Հարսի շրթերով է խօսում Աստուծոյ հետ, ինչպէս տէրունական աղօթքով, երբ դիմում է Հօրը եւ օրհնում Որդուն եւ Սուրբ Հոգուն: Ինչպէս երեք երիտասարդները հնոցի մէջ եւ Ստեփանոսը քարկոծման ժամանակ քաղցրաձայն երգով աղօթում էին Տիրոջը. եւ թէ ինչպէս Պենտեկոստէի օրը սրբազան առաքելներին Հոգին բարբառել էր տալիս, որոնց խօսքերով այն օրը մկրտուեցին եւ աւելացան մօտ երեք հազար հոգիներ, որովհետեւ երկ-

մկրտեցան եւ յաւելան յաւուր յայնմիկ հոգիք իբրեւ ԳՌՆ, զի ճաշակեցին երկնաւոր պարգեւացն եւ հաղորդք եղեն Հոգւոյն Սրբոյ [Եբր. Զ 4]: Նոյնպէս եւ եթովպացի ներքինին միով բանիւ Փիլիպպոսի ձգեցաւ յաշակերտութիւն նորա ի յուսումն Սուրբ Գրոց: Վասն որոյ ասէ քնարերգ[ուն]. «Սփռեցան շնորհք ի շրթանց քոց, վասն այսորիկ օրհնեաց զքեզ Աստուած յաւիտեան» [Սաղմ. ԽԴ 3]: Վասն այնորիկ եւ սրբազան առաքեալն Պօղոս պատուիրէ՝ ասելով, թէ՝ «Եւ բանն ձեր յամենայն ժամ լի շնորհօք Տեառն իբրեւ աղի համեմեալ լիցի՝ գիտել որպէս արժանն իցէ ձեզ իւրաքանչիւր ումեք տալ պատասխանի» [Կող. Դ 6]: Որպէս բանք բերանոյն Աբիգեայ շիջեցոյց զբարկութիւնն Դաւթի [Ա Թագ. ԻԵ 23]: Նոյնպէս Եսթեր եւ Յուդիթ աղօթիւք շրթանց եւ իմաստութեան բանիւք ապրեցուցին զազգս եւ զերկիրս իւրեանց: «Քոյր իմ հարսն»,– ասէ: Քոյր կոչէ, որ ըզկնի եղբօրն երթայ, եւ հարսն անուանէ, զի անքակտելի [] սիրով նորա կապի: «Մեղրն եւ կաթն ի ներքոյ լեզուի քոյ»: Թէպէտ երկոքեանն եւս են քաղցր, բայց կաթն է մաքուր եւ յստակ եւ տղայոց սնուցիչ, որպէս Պօղոս առ եբրայեցիս գրէ, թէ՝ «Տղայք կարօտ կաթին եւ ոչ՝ հաստատնոյ

Նաւտր պարգեւներ ճաշակեցին եւ Սուրբ Հոգուն հաղորդակից եղան [Եբր. Զ 4]: Նոյնպէս եւ եթովպացի ներքինին Փիլիպպոսի մի խօսքով մղուեց նրան աշակերտելու Սուրբ Գրքի ուսման մէջ: Այս պատճառով ասում է քնարերգուն. «Շնորհներ սփռուեցին քո շուրթերից, սրա համար քեզ Աստուած յաւիտեան օրհնեց» [Սաղմ. ԽԴ 3]: Դրա համար եւ սրբազան Պօղոս առաքեալը պատուիրում է՝ ասելով, թէ՝ «Եւ ձեր խօսքն ամէն ժամ Տիրոջ շնորհներով լի որպէս աղով համեմուած թող լինի՝ իմանալու, թէ ինչպէս իւրաքանչիւրին պատասխանել այնպէս, ինչպէս պէտք է» [Կող. Դ 6]: Ինչպէս Աբիգեայի բերանի խօսքերը հանգցրին Դաւթի բարկութիւնը [Ա Թագ. ԻԵ 23]: Նոյնպէս Եսթերն ու Յուդիթը շուրթերի աղօթքներով եւ իմաստութեան խօսքերով փրկեցին իրենց ազգն ու երկիրը: «Իմ քոյր հարս»,– ասում է: Քոյր է անուանում, որ եղբօր յետեւից է գնում, եւ հարս է անուանում, որովհետեւ կապւում է նրա անքակտելի սիրով: «Մեղր եւ կաթ՝ քո լեզուի տակ»: Թէպէտ երկուսն էլ քաղցր են, սակայն կաթը մաքուր է, յստակ եւ մանուկների սնուցիչ, ինչպէս Պօղոսն է եբրայեցիներին գրում, թէ՝ «Մանուկները կաթի են կարօտ եւ ոչ թէ՝ հաստատուն կերակրի, որովհետեւ բոլորը, ովքեր կաթնակեր են, արդարութեան խօսքին տգէտ են,

կերակրոյ, զի ամենայն, որ կաթնակեր է, տգէտ է բանին արդարութեան, քանզի տղայ է» [Եբր. Ե 12], զի որպէս մանկունք սնանին կաթամբ, նոյնպէս եւ հաւատացեալ մանկունք Հարսին Եկեղեցւոյ զարգանան բանիւն Աստուծոյ, որ իբրեւ զմեղր եւ զկաթն ի ներքոյ լեզուի Հարսին, այսինքն՝ ի Սուրբ Գրոց ամբարեալ կայ, վասն որոյ ասէ, թէ՝ «Ոչ հացիւ միայն կեայ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ, կեցցէ մարդ» [տե՛ս Բ Օրին. Ը 3], որոյ պատճառն է, զի յայնցանէ սնանիմք, յորոց եւ եմք, որպէս ձագք հաւուց ծնանին ի ձուոյ եւ սնանին ձուով, նոյնպէս եւ մեք հոգեւորապէս ծնեալ եմք բանիւն Աստուծոյ, ըստ այնմ՝ «Կամեցեալ ծնաւ զմեզ բանիւ ճշմարտութեան» [Յակ. Ա 18], եւ բանիւ ճշմարտութեան սնանիմք, զի կերակուր հոգւոյ է բանն Աստուծոյ: Այլեւ կաթն ընդդիմանայ թիւնից եւ խափանէ զչարութիւն նորա, զի մի՛ վնասեսցէ, նոյնպէս եւ բանք ողոք շիջուցանեն զբարկութիւն [Առակ. ԺԵ 1], «Եթէ մահացու դեղ արբցեն, ոչ վնասեսցին» [Մարկ. ԻԶ 18]: Իսկ եւ մեղրն է քաղցրագոյն, զոր կազմեն մեղուք ի բջիջս ի նիւթոյ անուշահոտ ծաղկանց՝ ի պէտս բժշկաց, որք ի գործ ածեն ընդ դեղորայս վասն իսօթացելոց: Նոյնպէս եւ բանք Հարսին կազմեալ ի ներքոյ լեզուի

որովհետեւ մանուկ են» [Եբր. Ե 12], որովհետեւ ինչպէս մանուկները են սնում կաթով, նոյնպէս եւ Հարս Եկեղեցու հաւատացեալ մանուկները զարգանում են Աստուծոյ խօսքով, որն իբրեւ մեղր ու կաթ Հարսի լեզուի տակ է, այսինքն՝ Սուրբ Գրքից է հաւաքուած, որի պատճառով ասում է, թէ՝ «Մարդ միայն հացով չի ապրում, այլ ամէն խօսք, որ Աստուծոյ բերանից է դուրս գալիս, ապրեցնում է մարդուն» [տե՛ս Բ Օրին. Ը 3], որի պատճառն այն է, որ սնում ենք նրանցով, որոնցից եւ ենք, ինչպէս թռչունների ձագերը ծնւում են ձուից եւ սնւում են ձուով, նոյնպէս եւ մենք հոգեւորապէս ծնուել ենք Աստուծոյ խօսքով՝ ըստ այն խօսքի. «Կամենալով ծնեց մեզ ճշմարտութեան խօսքով» [Յակ. Ա 18], եւ ճշմարտութեան խօսքով ենք սնւում, որովհետեւ հոգիների կերակուրն Աստուծոյ խօսքն է: Այլեւ կաթն ընդդիմանում է թոյներին եւ խափանում նրանց չարութիւնը, որպէսզի չվնասեն, նոյնպէս եւ ողոքիչ խօսքերը հանգցնում են բարկութիւնը [Առակ ԺԵ 1], «Եթէ մահացու դեղ խմեն, չեն վնասուելու» [Մարկ. ԻԶ 18]: Իսկ նաեւ մեղրն է քաղցրագոյն, որը մեղուները անուշահոտ ծաղիկների նիւթից կազմում են բջիջների մէջ՝ բժիշկների պէտքերի համար, ովքեր այն դեղորայքի հետ գործածում են հիւանդացածների համար: Նոյնպէս եւ Հարսի խօսքերն Աստուածաշունչ Սուրբ Գրքի

իւրոյ իբրեւ ի բժիշս ի նիւթոյ անուշահոտ ծաղկանց Աստուածաշունչ Սուրբ Գրոց՝ ի պէտս հոգեւոր բժշկաց, որք ի գործ ածեն վասն հոգւով ախտացեալ հիւանդաց: Մեղր եւ կաթն էին բանք սրբոյ Պօղոսի, վասն որոյ ասէր. «Իբրեւ տղայոց ի Քրիստոս զկաթն ջամբեցի ձեզ եւ ոչ՝ զկերակուր» [Ա Կորնթ. Գ 2]: Նոյնպէս էին եւ բանք արբազնոց առաքելոցն եւ համայն առաքելաշաւիղ սուրբ արանցն, ուստի ասեն. «Քանզի Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս, որ ի ձեզ մեօք քարոզեցաւ»: Բայց վնասիչ մեղուաց եւ մեղեր հինգ են, այսինքն՝ հողմն, ցուրտն, գարշ հոտն, ծուխն եւ հիւթն դառն խոտոց: Այսոքիկ վնասեն մեղուաց եւ ոչ թողուն շինել զքաղցր եւ զանուշ մեղր, զի փախուցանեն եւ ամլացուցանեն զմեղուն եւ զմեղրն ապականեն եւ դառնացուցանեն: Որպէս հողմն հպարտութեան փախուցանէ զշընորհս Հոգւոյն Սրբոյ, որպէս ասէ առաքեալն. «Ընչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ» [Ա Կորնթ. Բ 14]: Երկրորդ՝ ցուրտն, որպէս գրի, թէ՝ «Եւ արքայ Դաւիթ ծերացեալ եւ անցեալ զաւուրքն, եւ ծած[կ]էին զնա հանդերձիւք, եւ ոչ ջերնոյր»: Նոյնպէս եւ որք ծերանան մեղօք, ցրտանան աստուածային սիրոյն, այլեւ ոչ եւս անուշահոտ ծաղիկների նիւթից կազմում են իր լեզուի տակ ինչպես բժիշներում՝ հոգեւոր բժիշկների պէտքերի համար, ովքեր այն գործածում են հոգով տկարացած հիւանդների համար: Մեղր եւ կաթ էին սուրբ Պօղոսի խօսքերը, որի պատճառով ասում էր. «Իբրեւ ի Քրիստոս մանուկների ձեզ կաթ ջամբեցի եւ ոչ թէ՝ կերակուր» [Ա Կորնթ. Գ 2]: Նոյնպէս էին եւ սրբազան առաքեալների եւ համայն առաքելաշաւիղ սուրբ այրերի խօսքերը, ուստի ասում են. «Քանզի Աստուծոյ Որդի Յիսուս Քրիստոսը, Որը ձեզ մեզանով քարոզուեց»: Բայց մեղուների եւ մեղրի վնասատուները հինգն են, այսինքն՝ հողմը, ցուրտը, գարշահոտութիւնը, ծուխը եւ դառը խոտերի հիւթը: Սրանք վնասում են մեղուներին եւ չեն թողնում քաղցր եւ անուշ մեղր պատրաստել, որովհետեւ փախցնում եւ ամլացնում են մեղուին, իսկ մեղրն ապականում եւ դառնացնում: Ինչպես հպարտութեան հողմն է փախցնում Սուրբ Հոգու շնորհները, ինչպես ասում է առաքեալը. «Ընչաւոր մարդն Աստուծոյ հոգունը չի ընդունում» [Ա Կորնթ. Բ 14]: Երկրորդ՝ ցուրտը, ինչպես գրուած է, թէ՝ «Եւ Դաւիթ արքան ծերացել եւ օրերն անց էր կացրել, եւ նրան ծածկում էին հանդերձներով, բայց չէր տաքանում»: Նոյնպէս եւ նրանք, ովքեր ծերանում են մեղքերով, սառչում են աստուածային սիրոյ հան-

կարեն շինել զմեղր բարեգործութեան, ըստ այնմ՝ «Վասն բազմանալոյ անօրէնութեան ցամաքեսցի սէր բազմաց» եւ՝ «Իմաստութիւն բարի տայ զշնորհս» [Առակ. ԺԳ 15]: Երրորդ՝ գարշ հոտն բղջախոհութեան, զի «անձն չարարեաւտ իմաստութիւն ոչ մտ[անի] եւ ոչ բնակի ի մարմնի վարեցելոյ մեղօք» [] [Իմաստ. Ա 4]: Չորրորդ՝ ծուխն ագահութեան՝ «աշխարհս անցանէ եւ ցանկութիւնն» [Ա Յովհ. Բ 17], վասն որոյ ասաց Տէրն մեր, թէ՝ «Մա՛րթա, Մա՛րթա, դու հոգաս եւ բազում իւիք զբաղեալ եւ, բայց ասա սակաւ ինչ պիտոյ է» [Ղուկ. Ժ 41]: Հինգերորդ՝ հիւթն դառն խոտոց, քանզի հոգք աշխարհիս եւ պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն եւ լինի [անպտուղ]» [Մատթ. ԺԳ 22], քանզի «խորհիւ մեղու են բանք բարիք, եւ քաղցրութիւն նոցա բժշկութիւն է հոգւոց» [Առակ. ԺԶ 24]: Բայց այսոքիւք հնգօք եղծանի, ապականի եւ դառնանայ եւ լինի անօգուտ, զի լեզու Հարսին Եկեղեցւոյ է Աստուածաշունչ Սուրբ Գիրն, որոյ բանքն բոլորովին մեղր է եւ կաթն՝ ի ներքոյ զետեղեալ, որ է անուշիչ հոգւոյ եւ մարմնոյ, բայց արք ամբարիշտք անգոսնեն զնա: Տե՛ս զանուշ մեղրն Սուրբ Գրոց, որ ասէ. «Երանի՜ աղքատաց...», «Եկա՛յք առ

դէպ, նաեւ այլեւս չեն կարողանում բարեգործութեան մեղր պատրաստել՝ ըստ այն խօսքի, թէ՝ «Անօրէնութեան բազմանալու պատճառով ցամաքելու է շատերի սէրը» եւ՝ «Բարի իմաստութիւնը շնորհներ է տալիս» [Առակ ԺԳ 15]: Երրորդ՝ բղջախոհութեան գարշ հոտը, որովհետեւ «չարագործ անձի մէջ իմաստութիւնը չի մտնում եւ չի բնակւում մեղքերով առաջնորդուող մարմնի մէջ» [Իմաստ. Ա 4]: Չորրորդ՝ ագահութեան ծուխը՝ «Այս աշխարհն անցնում է, նաեւ՝ ցանկութիւնը» [Ա Յովհ. Բ 17], որի մասին ասաց մեր Տէրը, թէ՝ «Մա՛րթա, Մա՛րթա, դու հոգս ես քաշում եւ բազում բաներով ես զբաղուած, սակայն այստեղ քիչ բան է պէտք» [Ղուկ. Ժ 41]: Հինգերորդ՝ դառն խոտերի հիւթը, որովհետեւ «աշխարհի հոգսերն ու մեծութեան պատրանքները խեղդում են խօսքը, եւ անպտուղ է լինում» [Մատթ. Ժ 22], որովհետեւ «բարի խօսքերը մեղրի խորիսխ են, եւ նրանց քաղցրութիւնը հոգիների բժշկութիւն է» [Առակ. ԺԶ 24]: Բայց այս հինգով եղծւում, ապականւում, դառնանում եւ անօգուտ է լինում, որովհետեւ Հարս Եկեղեցու լեզուն Աստուածաշունչ Սուրբ Գիրքն է, որի խօսքերն ամբողջովին մեղր ու կաթ են՝ ներսում զետեղուած, որը հոգու եւ մարմնի սնուցիչ է, բայց ամբարիշտ մարդիկ այն անգոսնում են: Տե՛ս Սուրբ Գրքի անոյշ մեղրը, որ ասում է. «Երանի՜*

Իս, ամենայն աշխատեալք եւ բեռնաւորք», «Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ»: Նաեւ զկաթն անուցիչ մանկանց. «Լուր, որդեա՛կ, իւրատու հօր քոյ», «Աղաչեմ զձեզ, ո՛վ մարդիկ, եւ բաշխեմ որդւոց մարդկան զբարբառ իմ»: Դարձեալ՝ լեզուաւ իմանամք զվարդապետս եւ զքարոզիչս Եկեղեցւոյ, որք ունին զբանս աստուածային Սուրբ Գրոց առաւել քաղցր, քան զմեղր եւ զկաթն, որք յարաժամ բաշխեն մանկանց Եկեղեցւոյ:

«Եւ հոտ հանդերձիցքոց իբրեւ զհոտ կնդրկի»: Հանդերձ Հարսին Եկեղեցւոյ է Քրիստոս, Որ է անուշահոտ ծիսանելի իբրեւ զհունկ, բայց բնութեամբ է յոյժ ջերմն, եւ հոտն՝ սաստիկ սուր, զորս յաճախ հոտոտողն արբուցանէ: Վասն այնորիկ ի հնումն, յորժամ զփիղսն յարէին ի պատերազմ, ընդ անառակ գինւոյ կնդրուկ խառնեալ՝ մատուցանէին ի յընպել, այլեւ ծիւրին ի հոտոտելիս նոցա, որով սաստիկ պատերազմէին [Մակ. Ե 1]: Այսպէս եւ Հարսն Քրիստոսազգեաց հոտով Փեսային յառնէ ի պատերազմ ոչ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ՝ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս չարութեան, որք են ի ներքոյ երկնից [Եփես. Զ 12]: Եւ Պօղոս, այս հոտով զմայլեալ, ասէ. «Հաղորդացուցեալ ի Քրիստոսի համար համաձայն եմ տկարութիւնս, թշնամանս, վշտեր, հալածանս եւ նեղութիւնս վասն Քրիստոսի» [Բ Կոր. ԺԲ 10]: Դարձեալ՝ հանդերձիւք իմանամք զմաքուր եւ զյստակ խղճմտանս, յորմէ բուրէ հոտ կնդրկի: Ուստի ասէ Քրիստոսի չարչարիլն մարմնով վասն մեր. «Եւ դուք ի նոյն միտս վառեցարուք» [Ա Պետ. Դ 1]:

«Պարտէզ փակեալ քոյր իմ հարսն, պարտէզ փակեալ եւ աղբիւր կնքեալ»: Զկնի բազմաց գովութեանց եւ պէս-պէս նմանութեանց զգեղեցկութեան եւ զդիրս անդամոց հարսին, եւ արդ, վերըստին փակեալ պարտիզի համեմատէ սակս զանազան բարի պտղոց բերմանն: Եւ «աղբիւր կնքեալ» ասէ վասն յորդառատ շնորհաց բղխմանն, զի որպէս պարտէզն կանաչութեամբ հեշտացուցիչ է տեսանելոց, անոյշ հոտով՝ զմայլեցուցիչ ոնկաց, համեղ պտղով՝ քաղցրացուցիչ ճաշակաց եւ գունա[]գոյն ծաղկօք՝ զուարճացուցիչ դիմաց, նոյնպէս եւ Հարսն Եկեղեցի է կանաչ յարահետ կուսութեամբ, անուշահոտ՝ քրիստոսական սուրբ հաւատով, համեղ՝ բարի գործով, քաղցր՝ աստուածայ[ի]ն բանիւ, ծածկեալ՝ զանազան առաքինութեամբ: Այսպէս եղեալ գեղեցիկ պարտէզ մերոյն Սողոմոնի, ուստի ասէ. «Արարի ինձ պարտէզս եւ դրախտս եւ աղբիւրս: Ի՞նչ մօտ, բոլո՛ր յոգնածներ եւ բեռնաւորուածներ», «Մի՛ երկնչիր, փոքրի՛կ հօտ»: Նաեւ [տե՛ս] մանուկների սնուցիչ կաթը. «Լսի՛ր, որդեա՛կ, քո հօր խրատը», «Աղաչում եմ ձեզ, ո՛վ մարդիկ, եւ մարդկանց որդիներին եմ բաշխում իմ բարբառը»: Դարձեալ՝ լեզուով հասկանում ենք Եկեղեցու վարդապետներին եւ քարոզիչներին, ովքեր աստուածային Սուրբ Գրքի խօսքերն առաւել քաղցր ունեն, քան մեղրն ու կաթը, ովքեր այն բաշխում են Եկեղեցու մանուկներին:

«Եւ քո հանդերձների հոտը կնդրուկի հոտի է նման»: Հարս Եկեղեցու հանդերձը Քրիստոսն է, Որը խունկի նման անուշահոտ ծխանելիք է, սակայն բնութեամբ չափազանց տաք է, իսկ հոտը՝ սաստիկ սուր, որը յաճախ հարբեցնում է հոտոտողին: Ուստի հնում, երբ փղեր էին օգտագործում պատերազմի մէջ, անմաքուր գինու հետ կնդրուկ խառնելով՝ խմել էին տալիս, այլեւ [այն] ծխում էին նրանց հոտոտելիքի մօտ, որի պատճառով սաստիկ պատերազմում էին [Մակ. Ե 1]: Այսպէս եւ քրիստոսազգեաց Հարսը Փեսայի հոտով պատերազմի է ելնում ոչ թէ մարմնի եւ արեան դէմ, այլ՝ իշխանութիւնների եւ պետութիւնների, այս խաւարի աշխարհակալների, չար դեւերի դէմ, որոնք երկնքի տակ են [Եփես. Զ 12]: Եւ Պօղոսն, այս հոտով զմայլուած, ասում է. «Քրիստոսի համար համաձայն եմ տկարութիւնների, թշնամանքների, վշտերի, հալածանքների եւ նեղութիւնների» [Բ Կորնթ. ԺԲ 10]: Դարձեալ՝ հանդերձներով հասկանում ենք մաքուր եւ յստակ խղճմտանքը, որից կնդրուկի հոտ է բուրում: Ուստի ասում է Քրիստոսի՝ մեզ համար մարմնով չարչարուելու մասին. «Եւ դուք նոյն մտքո՛վ վառուէք» [Ա Պետ. Դ 1]:

«Փակուած պարտէզ է իմ քոյր հարսը, փակուած պարտէզ եւ կընքուած աղբիւր»: Բազմաթիւ գովասանքներից եւ հարսի անդամների գեղեցկութեան ու դիրքի պէս-պէս նմանութիւններից յետոյ, արդ, վերըստին փակուած պարտէզի հետ է համեմատում՝ զանազան բարի պտուղներ բերելու պատճառով: Եւ «կընքուած աղբիւր» է ասում յորդառատ շնորհների բխման պատճառով, որովհետեւ ինչպէս պարտէզը տեսնողների համար գրաւիչ է կանաչութեամբ, ռունգերի համար զմայլեցուցիչ՝ անոյշ հոտով, քիմքը քաղցրացնող է համեղ պտղով եւ դէմքը պայծառացնող՝ գոյնզգոյն ծաղիկներով, նոյնպէս եւ Հարս Եկեղեցին կանաչ է մշտատեւ կուսութեամբ, անուշահոտ՝ Քրիստոսի սուրբ հաւատքով, համեղ՝ բարի գործով, քաղցր՝ աստուածային խօսքով, ծածկուած՝ զանազան առաքինութիւններով: Այսպէս է եղել մեր Սողոմոնի գեղեցիկ պարտէզը, ուստի ասում է

տնկեցի ի նոսա փայտս ամենապտուղս» [Ժող. Բ 5]: Պարտէզ անուանէ զՀարսն, որ ունի առ ի[ն]քն զԳեսայն իւր իբրեւ ազնիւ ծաղիկ՝ բուսեալ յարմատոյն Յեսսեայ ի կուսական յարգանուէ: Եւ «փակեալ» ասէ, զի բանակք հրեշտակաց Տեառն շուրջ են զնովաւ եւ պահեն, որպէս ծառն կենաց քերովբէքն բոցեղէն սրոյ շուրջանակի պահէին: Զի որպէս արքունական գանձարանն միշտ փակեալ պահի, նոյնպէս՝ պարտէզն եւ բուրաստանն, զի անկոխ եւ անձեռնհաս մնասցէ յօտարաց, զի որոմնացան թշնամին մի՛ կարասցէ մտանել ի նա, այլ՝ արքայն միայն, որպէս [առ] փակեալ պարտէզ Կոյսն սուրբ ընդ յարեւելեան դրան տաճարին Գեսայ արքայն Ինքն միայն եմուտ եւ ել. «Այդ դուռն փակեալ կացցէ, ոչ ոք մտցէ, բայց Տէր Աստուած մտցէ ընդ դա, եւ եղիցի փակեալ» [Եզեկ. ԽԴ 2]: Նոյնպէս փակեալ եւ կնքեալ գերեզմանէն յարեաւ եւ փակեալ դրամբ եմուտ առ աշակերտս: Այսպէս պարտ է կեալ Հարսին Եկեղեցւոյ, եթէ կամիցի ունել զԳեսայն ի հոգի իւր, առ որս ասաց. «Ես եկից եւ բնակեցայց ի միջի քում»: Վասն այն հարկաւորի փակել զգայարանս ամենից ներքմուտ հակառակ հողմոց, ապա թէ ի ներքուստ՝ ի արտէ, բուսուցանէ զծաղիկս զանազան առաքինութեանց, զի

«Ինձ համար պարտէզներ եւ այգիներ ստեղծեցի եւ այնտեղ ամէն տեսակ պտղատու ծառեր տնկեցի» [Ժող. Բ 5]: Պարտէզ է անուանում Հարսին, որն իր մօտ ունի Գեսային՝ իբրեւ Յեսսէի արմատից եւ կուսական արգանդից բուսած ազնիւ ծաղիկ: Եւ «փակուած» է ասում, որովհետեւ Տիրոջ հրեշտակների բանակները նրա շուրջ են եւ պահպանում են, ինչպէս քերովբէները էին բոցեղէն սրով շուրջանակի պահում կենաց ծառը: Որովհետեւ ինչպէս արքունական գանձարանն է միշտ փակ պահւում, նոյնպէս եւ՝ պարտէզն ու բուրաստանը, որպէսզի օտարներից հեռու եւ անձեռնմխելի մնայ, որպէսզի որոմնացան թշնամին չկարողանայ մտնել այնտեղ, այլ միայն՝ արքան, ինչպէս փակուած պարտէզ սուրբ Կոյսի մօտ տաճարի արեւելեան դռնով միայն Ինքը՝ Գեսայ Արքան, մտաւ եւ դուրս եկաւ. «Այդ դուռը փակուած թող մնայ, ոչ ոք թող չմտնի, այլ Տէր Աստուած թող մտնի նրանով, եւ թող փակուած լինի» [Եզեկ. ԽԴ 2]: Նոյնպէս փակուած ու կնքուած գերեզմանից յարութիւն առաւ եւ փակուած դռնով մտաւ աշակերտների մօտ: Այսպէս պէտք է մնայ Հարս Եկեղեցին, եթէ կամենում է Գեսային իր հոգու մէջ ունենալ, ինչի մասին ասաց. «Ես կգամ եւ կբնակուեմ քո մէջ»: Դրա համար հարկաւոր է զգայարանները փակել բոլոր արտաքին հակառակ հողմերի դէմ, որպէսզի ի ներքուստ՝

փակմամբ դրան կարասցէ պահել զայնուսիկ անապական, որոյ աղագաւ պատուիրեաց, թէ՝ «Յորժամ կացցես յաղօթս, մո՛ւտ ի սենեակ քո եւ փակեա՛ զդրունս քո» [Մատթ. Զ 6]: Բայց փակ դրան բանականի բնութեան երկիւղն է եւ խոնարհութիւն, զի ե[ր]կիւղս խորշի ամենայն ոք ի չարէ: Վասն որոյ ասէ Դաւիթ. «Բերեբերեա՛ երկիւղ քո ի մարմին իմ» եւ թէ՝ «Զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ», զի խոնարհութիւնն ոչ թողու մտանել ի ներս թշնամին բնութեան: Վասն այնորիկ ամենայն հարանցեալք խոնարհութեամբ եւ երկիւղիւ փակեցին զդրունս զգայութեանց իւրեանց եւ այնու հաճոյեցան Գեսային երկնաւորի: Եւ բազումք հեռացան յաշխարհէ եւ եղեն լեռնակիցք եւ անապ[ա]տաբնակք եւ խոտաճարակք, որոյք հազիւ կարացին լինել փակեալ պարտէզ երկնաւոր Թագաւորին: «Պարտէզ փակեալ եւ աղբիւր կնքեալ»: Որպէս զանձ թագաւորական պահեալ լինի կնքով նորին, նգօք եւ փակօք, նոյնպէս եւ շնորհն Հոգւոյն Սրբոյ՝ պահպանութեամբ զգայարանաց [Եզեկ. Թ 6], զի որպէս հովիւն դրոշմէ զոչխարս իւր, որով զանազանի [յ]այլոց, այսպէս եւ Տէրն՝ զընտրեալս Իւր, որով զանազանին ի կորո[ւ]սեալոցն: Եւ զկնքոյ յայմանէ ասէ Պո-

սրտից, զանազան առաքինութիւնների ծաղիկներ աճեցնի, որպէսզի, դուռը փակելով, կարողանայ դրանք անապական պահել, որի պատճառով պատուիրեց, թէ՝ «Երբ աղօթքի կանգնես, մտի՛ր քո սենեակը եւ փակի՛ր քո դռները» [Մատթ. Զ 6]: Բայց փակ դռան բանական բնութիւնն է երկիւղը եւ խոնարհութիւնը, որովհետեւ երկիւղով է ամէն ոք խորշում չարից: Ինչի մասին Դաւիթն ասում է. «Քո երկիւղը բերեբե՛ր իմ մարմնի մէջ» եւ թէ՝ «Աստուած չի արհամարհում սուրբ սիրտն ու խոնարհ հոգին», զի խոնարհութիւնը թոյլ չի տալիս բնութեան թշնամուն ներս մտնել: Դրա համար բոլոր հարանցածները խոնարհութեամբ եւ երկիւղով փակեցին իրենց զգայութիւնների դռները եւ դրանով հաճոյացան երկնաւոր Գեսային: Եւ շատերը հեռացան աշխարհից եւ լեռնաբնակ, անապատական ու խոտաճարակ դարձան, որով հազիւ կարողացան երկնաւոր Թագաւորի համար փակուած պարտէզ լինել: «Փակուած պարտէզ եւ կնքուած աղբիւր»: Ինչպէս որ թագաւորական գանձը պահւում է նրա կնիքով, նիգերով եւ փականքներով, նոյնպէս եւ Սուրբ Հոգու շնորհը՝ զգայարանների պահպանութեամբ [Եզեկ. Թ 6], որովհետեւ ինչպէս հովիւն է դրոշմում իր ոչխարներին, որով զանազանում է միւսներից, այսպէս եւ Տէրն՝ Իր ընտրեալներին, որով զանազանում են կորուսեալներից: Եւ

դրս. «Մի՛ տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Աստուծոյ, Որով կնքեցայք յաւուրն փրկութեան» [Եփես. Դ 30, Բ Կորնթ. Ա 12]: Ահա սրբազան առաքեալն յայտնի եցոյց աղբիւր զՀարսն, եւ զկնիք նորին՝ զՀոգին Սուրբ, որոց նախ աւետարանեցաւ, թէ՝ «Յաւուր յայնմիկ աղբիւր ելցէ ի տանէ Տեառն եւ արբուսցէ զերկիր» [Յովել Դ 18], որպէս սրբազան առաքեալն. «Որք կենաց ջրով ոռոգեցին զտիեզերս»: Վասն որոյ ասէ. «պարտէզ փակեալ եւ աղբիւր կնքեալ»: Քանզի ամենայն առաքելաշաւիղ սուրբ անձինք զսիրտս իւրեանց արարին իբրեւ զփակեալ պարտէզ՝ ծաղկեցուցեալ բարի խորհրդով, եւ զաչս իւրեանց՝ որպէս կնքեալ աղբիւր՝ յորդառատ եւ մշտաբուխ արտասուօք լցեալ, եւ այնպէս հաճոյացան Տեառն Աստուծոյ: Վասն որոյ ասէ. «Զերկամ ոչ դադարեցայց զմի մի ի ձենջ արտասուօք խրատել»: Մանաւանդ, ըստ Ոսկեբերանին, արտասուք մեղաւորաց է գին հրեշտակաց: Այլեւ սեռք քարոզչաց եւ ջոկք վերատեսուչ խրատչաց, որք դիմեցին ի յաղբիւրս կենաց եւ հաւատացին զՅիսուս Քրիստոս եւ ընկալան զՀոգին Սուրբ եւ եղեն աղբիւր կենդանի ջրոյն, որպէս ասէ Փեսայն հոգւոց. «Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ Իս եւ արբցէ: Որ

այս կնիքի մասին է ասում Պօղոսը. «Մի՛ տրտմեցրէք Աստուծոյ Սուրբ Հոգուն, Որով կնքուեցիք փրկութեան օրը» [Եփես. Դ 30, Բ Կորնթ. Ա 12]: Ահա սրբազան առաքեալը որպէս աղբիւր յայտնի դարձրեց Հարսին եւ որպէս նրա կնիք՝ Սուրբ Հոգուն, որոնց մասին նախ աւետարանուեց, թէ՝ «Այն օրն աղբիւր է դուրս գալու Տիրոջ տանից եւ արբեցնելու է երկիրը» [Յովել Դ 18], ինչպէս սրբազան առաքեալը. «Ովքեր կենաց ջրով ոռոգեցին տիեզերքը»: Ինչի մասին էլ ասում է. «փակուած պարտէզ եւ կնքուած աղբիւր»: Քանզի բոլոր առաքելաշաւիղ սուրբ անձերն իրենց սրտերը դարձրեցին իբրեւ փակուած պարտէզ՝ բարի խորհրդով ծաղկեցրած, եւ իրենց աչքերը՝ որպէս կնքուած աղբիւր՝ յորդառատ եւ մշտաբուխ արտասուքով լցուած, եւ այնպէս հաճոյացան Տէր Աստծուն: Ինչի մասին ասում է. «Երկու տարի չդադարեցի ձեզանից իւրաքանչիւրին մէկ առ մէկ արտասուքով խրատել»: Մանաւանդ, ըստ Ոսկեբերանի, մեղաւորների արտասուքը հրեշտակների գինն է: Այլեւ քարոզիչների խմբերը եւ վերատեսուչ խրատողների ջոկատները, որոնք դիմեցին դէպի կենաց աղբիւրը եւ հաւատացին Յիսուս Քրիստոսին եւ ընդունեցին Սուրբ Հոգին եւ կենդանի ջրի աղբիւր եղան, ինչպէս ասում է հոգիների Փեսան. «Եթէ մէկը ծարաւ է, թող գայ Ինձ մօտ եւ խմի: Ով հաւատայ Իս, որպէս ասեն Գիրքը, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան»: Այս ասէր վասն Հոգւոյն, զոր ընդունելոց էին, որք հաւատային ի Նա» [Յովհ. Է 37]: Բայց «կնքեալ» ասէ, զի հրամայեցաւ առն, որ զգեցեալ էր զպեղիսատրն, թէ՝ «Մնց ընդ մէջ քաղաքիդ Երուսաղեմի եւ դիր նշան ի ճակատ արանցդ, որք հեծեն եւ յոգւոց հանեն ի վերայ անօրէնութեանցն գործեցելոց ի մէջ նոցա» [Եզեկ. Թ 31]՝ ըստ Դաւթի, թէ՝ «Հայեի [յ]անագորոյնս եւ մաշէի, զի օրէնք Քո խօսք իմ էին» [տե՛ս Սաղմ. ճԺԸ 158]: Սոյնպէս եւ Պօղոս, մինչ տեսանէր ի կռապաշտութեան զքաղաքն աթենացւոց, զայրանայր ի հոգի իւր [Գործք ԺԷ 16]: Նմանապէս եւ Ղուկաս օր ըստ օրէ զիւր զսուրբ սողոմացւոց անտէն գնացիւքն տանջէր [Բ Պետ. Բ 7]: Զայսպիսի ծառայքն Աստուծոյ կոչին փակեալ պարտէզ եւ կնքեալ աղբիւր: Վասն որոյ կոտորող հրեշտակին հրամայեցաւ, թէ՝ «Մի՛ վնասէք երկրի, այլ դադարեցէ՛ք, մինչեւ կնքեցից զծառայս Աստուծոյ իմոյ» [Յայտ. Է 3]: Սոյնպէս եւ Հարսն կնքեալ է պարկեշտութեամբ, սրբութեամբ եւ երկիւղածութեամբ, վասն որոյ եւ ոչ բնաւ զմտաւ ածէ յարիկ առ օտարս կամ մերձենալ առ այլ ոմն՝ ըստ սրբազանին Պօ-

ատայ ինձ, ինչպէս ասում է Գիրքը, նրա որովայնից կենդանի ջրերի գետեր են բխելու»: Սա ասում էր Հոգու մասին, որն ընդունելու էին [նրանք], ովքեր հաւատում էին Իրեն» [Յովհ. Է 37]: Բայց «կնքուած» է ասում, որովհետեւ հրամայուեց մարդուն, որը մինչեւ կրունկները հասնող պարեգօտ էր հագել, թէ՝ «Անցի՛ր Երուսաղէմ քաղաքի միջով եւ նշա՛ն դիր այն մարդկանց ճակատին, ովքեր հեծում եւ յոգոց են հանում իրենց մէջ գործուած անօրէնութիւնների պատճառով» [Եզեկ. Թ 31]՝ Դաւթի պէս, թէ՝ «Նայում էի անագորոյններին եւ մաշւում, որովհետեւ Քո օրէնքներն իմ խօսքերն էին» [տե՛ս Սաղմ. ճԺԸ 158]: Սոյնպէս եւ Պօղոսը, երբ տեսաւ աթենացիների քաղաքը կռապաշտութեան մէջ, զայրացաւ իր հոգում [Գործք ԺԷ 16]: Նմանապէս եւ Ղուկաս իր սրբութեամբ օրըստօրէ տանջւում էր սողոմացիների այն վարքի պատճառով [Բ Պետ. Բ 7]: Աստուծոյ այսպիսի ծառաները փակուած պարտէզ եւ կնքուած աղբիւր են կոչւում: Ուստի կոտորող հրեշտակին հրամայուեց, թէ՝ «Երկրին մի՛ վնասէք, այլ սպասեցէ՛ք, մինչեւ կնքեմ իմ Աստուծոյ ծառաներին» [Յայտ. Է 3]: Սոյնպէս եւ Հարսը կնքուած է պարկեշտութեամբ, սրբութեամբ եւ երկիւղածութեամբ, ինչ պատճառով բնաւ չի մտածում օտարներին յարելու կամ մէկ ուրիշի մերձենալու մասին՝ ըստ սրբազան

դոսի, թէ՝ «Ռատմանս պէս–պէս եւ օտարոտիս մի՛ դանդաչէք», «զի աղբիւր կենաց Աստուծոյ բերան արդարոյ» [Եբր. ԺԳ 9, Առակ. Ժ 11]: Այլեւ փակեալ պարտէզ եւ կնքեալ աղբիւր կոչեցաւ Հարսն Եկեղեցի, զոր ունէր զիւորիւրդն ծածկեալ ի յաւիտեանց եւ յազգաց մինչեւ ցՅոհաննէս, քանզի ամենայն օրէնք եւ մարգարէք մինչեւ ցՅոհաննէս մարգարէացան, զոր այժմ յայտնեցաւ սրբոց Իւրոց [Մատթ. ԺԱ 18, Կող. Ա 26]: Եւ Գառն Աստուծոյ ի միջոյ Աթոռոյն Իւրոյ հովուէ զնոսա եւ առաջնորդէ նոցա ի կենաց աղբիւրն ջրոյ կենդանւոյ [Յայտ. Է 17]:

Պօղոսի, թէ՝ «Դէս–դէս եւ օտարոտի ուսմունքների միջեւ մի՛ տարուբերուէք», «որովհետեւ Աստուծոյ կենաց աղբիւրն արդարի բերանն է» [Եբր. ԺԳ 9, Առակ Ժ 11]: Այլեւ փակուած պարտէզ եւ կնքուած աղբիւր կոչուեց Հարս Եկեղեցին, որն ունէր յաւիտեաններից եւ ազգերից մինչեւ Յովհաննէս ծածկուած խորհուրդը, որովհետեւ բոլոր օրէնքներն ու մարգարէները մինչեւ Յովհաննէս մարգարէացան, որն այժմ յայտնուեց Իր (Աստուծոյ) սուրբերին [Մատթ. ԺԱ 18, Կող. Ա 26]: Եւ Աստուծոյ Գառն Իր Աթոռի վրայից հովւում է նրանց եւ առաջնորդում դէպի կենդանի ջրի կենաց աղբիւրը [Յայտ. Է 17]:



ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ՝
ՄԱՐԹԱ ԱՐԱԲԵԱՆԻ ԵՒ
ՍԵՌԱ ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆԻ

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ ՎԱՐՔԸ

Ըստ Հայրերի ու վկայագիրների միաբան վկայութեան՝ Տիրոջ սիրելի աշակերտ Յովհաննէսը՝ Որոտման Որդին, Երուսաղէմում սուրբ Աստուածածնին սպասաւորելուց յետոյ (ինչպէս յանձնարարուած էր նրան Փրկչից), մինչեւ նրա երկինք վերափոխուելը, քարոզելով շրջեց արեւելքում, առաւելապէս՝ Փոքր Ասիայում, որտեղ եւ՝ Եփեսոսում, Հաստատեց իր աթոռը: Բայց շատերն էլ ասում են, թէ շրջեց մինչեւ պարթեւների երկիրը, այսինքն՝ Հայաստան եւ Պարսկաստան, նաեւ՝ Հնդկաստան: Օգոստինոսը եւ այլք գտնում են, որ Յովհաննէսի առաջին ընդհանրական թուղթը գրուել է պարթեւների երկրում:

Պատմւում է, որ երբ սուրբ Յովհաննէսը Եփեսոս եկաւ, նախ աղօթքներով հիմնայատակ աւերեց Ամազոնաց կոչուած մեհեանը եւ ուրիշ այլ հրաշքներով, իր քարոզութեամբ ու հրեշտակային վարքով աստուածպաշտութեան դարձրեց բազում հելլենացիների: Իսկ Դոմետիանոսի ժամանակ, երբ երանելի Յովհաննէսը շրջում էր Ասիայում եւ աւետարանում Քրիստոսին, նրա համբաւը կայսրին հասաւ: Կայսեր հրամանով նրան բռնեցին եւ, կապանքներով կապելով, ուղարկեցին Հռոմ, որտեղ առաքեալը հեթանոսներին կռապաշտութեան համար յանդիմանելու պատճառով նետուեց եռացող ձէթի կաթսայի մէջ եւ անվնաս դուրս, եկաւ այնտեղից: Ուրիշ մեծամեծ հրաշքներ էլ արեց, եւ Դոմետիանոսն արտաքսեց նրան Պատմոս կղզի: Այս մասին յիշատակւում է «Յայտնութեան» մէջ: Առաքեալի աշակերտ Պրոխորոնը պատմում է, որ Պատմոս կղզում մի կախարդ կար, որին տեղի բնակիչներն իրենց չաստուածներից մէկն էին համարում: Նա, տեսնելով Յովհաննէսի գործերը, որ խօսքով ու զօրութեամբ կործանում էր կուռքերի մեհեանները եւ համարձակութեամբ քարոզում Քրիստոս Աստծուն, դեւերի դրդմամբ հնար մտածեց՝ սպանելու սուրբ առաքեալին եւ Քրիստոսի աւետարանչին: Բայց նրա բոլոր հնարքներն ի դերեւ ելան: Այսպէս Պատմոսի բնակիչների մեծ մասը հաւատաց Աստծուն, որովհետեւ ճշմարտապէս ճանաչեց Քրիստոսի զօրութիւնը:

Դոմետիանոսի մահից յետոյ քրիստոնէութիւնը չէր արգելւում: Նոր կայսրը լսեց, որ Յովհաննէսն առաքինի եւ սքանչելի այր է եւ առանձին հրովարտակ գրեց նրա՝ աքսորից դէպի Եփեսոսի իր աթոռը դարձի համար: Եւ կղզու բնակիչները, որոնցից շատերն աշակերտել էին սուրբին, հաւաքուեցին, եկան նրա մօտ եւ աղաչեցին նրան ամբողջ կեանքում չբաժանուել իրենցից: Յովհաննէսն ասաց նրանց. «Այդպիսի ծանրութիւն մի՛ բարձէք իմ հոգուն, որդեակնե՛ր, Քրիստոս ինձ ուղարկեց ձեզ մօտ՝ ձեզ լուսաւորելու, ինչպէս Ինքը կամեցաւ, իսկ այժմ հրամայեց ինձ դառնալ Եփեսոս՝ այնտեղ եկած մեր բազում եղբայրների հոգիների տկարութեան պատճառով»: Այնժամ նրանք ծունկի իջան նրա առաջ եւ արտասուելով աղաչեցին՝ ասելով. «Բարի՛ վարդապետ, որովհետեւ չկամեցար մնալ այս կրզում եւ մտածեցիր որը թողնել մեզ, տո՛ւր մեզ բոլոր նշանների ու հրաշքների գրաւոր պատմութիւնը, որ տեսար Աստուծոյ Որդուց, եւ խօսքերը, որ լսեցիր Նրա բերանից, որպէսզի մոլորուելով չհեռանանք Նրանից եւ Նրա լուսաւոր վարդապետութիւնից, այլ հաստատուն եւ անխախտ մնանք»: Յովհաննէսն ասաց նրանց. «Լսէ՛ք, լոյսի՛ որդիներ, մինչեւ այժմ կենդանի խօսքով ինձանից լսեցիք նշանների մասին, որ Աստուծոյ Որդին մեր աչքի առաջ կատարեց, եւ այն խօսքերը, որ իմ եւ այլ առաքեալների հետ խօսեց: Եւ մենք, ընդունելով Նրանից, աւետարանեցինք եւ քարոզեցինք Նրա Աստուածութեան մասին: Արդ, այդքանո՛վ մնացէք, քանզի այդ բաւական է ձեզ յաւիտենական կեանք ունենալու համար»: Սուրբ Յովհաննէսն այսպէս ասաց, քանզի բաւական էր համարում երեք աւետարանիչների՝ Մատթէոսի, Ղուկասի ու Մարկոսի գրածները, որ սկսել էին տարածուել աշխարհում առաքեալների ու աշակերտների կենդանի քարոզութեան հետ միասին: Բայց երբ շատ ստիպեցին երանելուն, ասաց նրանց. «Գնացէ՛ք ձեր տները, իսկ ես կխնդրեմ Տիրոջը, եւ եթէ հրամայի ինձ, ձեր խնդրածը կտամ»: Եւ նրանք, երկրպագելով սուրբին, ուրախութեամբ գնացին իրենց տները: Ապա Պրոխորոնը պատմում է. «Եւ քաղաքից դուրս ելանք մօտ վեց մղոն, մի լուռ տեղ: Այնտեղ մի փոքր լեռ կար: Ելնելով այնտեղ՝ մնացինք վեց օր առանց կերակրի՝ աղօթելու եւ Աստծուց եղբայրների համար բարի Աւետարան հայցելու: Եւ չորրորդ օրն ասաց ինձ. «Որդեա՛կ Պրոխորոն, գնա՛ քաղաք եւ բե՛ր այստեղ թանաք ու մագաղաթ: Թող եղբայրներից ոչ ոք չիմանայ, թէ որտեղ ենք: Դու ե՛ւս մնա այնտեղ երկու օր եւ ապա լռելեայն ե՛կ»: Ես գնացի եւ այդպէս էլ արեցի: Փայլատակում եւ ուժեղ որոտում եղաւ, մինչեւ երկիրը շարժելու չափ, եւ, մերձ ի մահ սարսափած, ընկայ երեսի վրայ: Այնժամ Յովհաննէսը, խոնարհուելով եւ իմ ձեռքից բռնելով, բարձրացրեց ինձ, նստեցրեց աջ կողմում եւ ինքն սկսեց աղօթել: Աղօթքն աւարտելուց յետոյ ասաց ինձ. «Տե՛ս, որդեա՛կ, ինչ որ կլսես իմ բերանից, զգուշութեամբ գրի՛ր մագաղաթի վրայ»: Եւ, աչքերը երկինք բարձրացնելով եւ բերանը բանալով, սկսեց ասել. «Սկզբից էր Բանը, եւ Բանն էր Աստուծոյ մօտ եւ Աստուած էր Բանը...»: Եւ այն ամէնն, ինչ Աւետարանում գրուած է, ոտքի վրայ կանգնած աւետարանեց, իսկ ես գրեցի: Աստուածային խօսքերն աւարտելուց յետոյ քաղաք մտանք եւ գնացինք մի տուն, որի տանտիրոջը սուրբը խնդրեց գտնել մաքուր ու գեղեցիկ մագաղաթ՝ աստուածային սուրբ Աւետարանը գրելու համար: Եւ երբ նա գտաւ ու բերեց, Յովհաննէսը պատուիրեց Աւետարանը մաքրագրել»:

Այնուհետեւ աւետարանիչն ուսուցանեց հաւատացեալների բազմութեանը, եպիսկոպոսներ ու քահանաներ կարգեց կղզում եւ, վերցնելով Աւետարանը, տարաւ, դրեց եկեղեցում: Ապա եղբայրներին հրամայեց ժողովուել,

եւ երբ եկան, ասաց Պրոխորոնին. «Վերցրո՛ւ Աւետարանը եւ ընթերցի՛ր եղբայրների համար»: Եւ նա ընթերցեց ի լուր ամենքի, իսկ նրանք լսելով փառաւորեցին Աստծուն: Յովհաննէսը պատուիրեց նրանց ընդօրինակել այն ըստ այդ օրինակի եւ դնել կղզու բոլոր եկեղեցիներում: Այդպէս էլ արուեց, իսկ իրենք, մատեանում գրուած առաջին օրինակն իրենց հետ վերցնելով, դուրս եկան այդտեղից եւ, մինչեւ Եփեսոս գնալը, սուրբ Աւետարանը վարդապետելու նպատակով մօտ վեց տարի շրջեցին եւ ուսուցանեցին ամենքին: Մի գիւղում դեւերի մեհեանի մի քուրմ էր ապրում, որի որդին կոյր էր: Քրիստոսի առաքեալը բռնեց նրա ձեռքից եւ ասաց. «Յանուն Յիսուս Քրիստոսի լուսաւորուի՛ր»: Նոյն պահին նրա աչքերը բացուեցին, եւ մանկան հայրը հաւատաց: Յովհաննէսը նրանց հետ տուն գնաց եւ վարդապետելով մկրտեց նրանց ու տան բոլոր անդամներին Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անուամբ:

Սրանից յետոյ Պրոխորոնը պատմում է, թէ ինչպէս միւս անգամ աւետարանիչը տասն օր առանց կերակրի առանձնացաւ մի այրի մէջ եւ տեսաւ այն հրաշալի տեսիլքը, որ գրուած է «Յայտնութեան» մէջ, որի մասին Պրոխորոնն ասում է, թէ գրիչն ինքն է, եւ որ աւետարանիչը դրա օրինակը եւս Պատմոս կղզում է թողել: Մի տարի անց, մի օր սուրբ Յովհաննէսը եկեղեցում ժողովուած բազմութեանն ասաց. «Տեսէ՛ք, եղբայրնե՛ր ու որդինե՛ր, զգուշութեամբ ու ձեր ամբողջ սրտով պահեցէ՛ք լուսաւոր այն վարդապետութիւնը, որ ընդունեցիք ինձանից ձեր ամբողջ սրտով, եւ փութացէ՛ք առողջ մտքով կատարել Քրիստոսի պատգամները, եղէ՛ք լուսոյ կատարեալ որդիներ, քանզի ահա մօտեցել է իմ ձեզանից բաժանուելու եւ դէպի Եփեսոս նաւելու պահը»: Իսկ նրանք արտասուելով ասացին. «Մեր բարի՛ հայր, որը մի՛ թողնիր մեզ՝ քո ծառաներին ու որդիներին»: Ասաց նրանց. «Իմ բարեմիտ ուսուցի՛ր ու դուստրեր, ուրա՛խ եղէք ի Յիսուս Քրիստոս, ի Տէր մեր, քանզի Նա՛ հրամայեց ինձ գնալ Եփեսոս»: Եւ յաջորդ օրը, Եփեսոս գնացող պատրաստ նաւ գտնելով, աղօթքով բաժանուեցին այն եղբայրներից եւ նաւ մտան: 14 օր նաւելուց յետոյ հասան մի տեղ, որ Եփեսոսից հեռու էր 10 մղոնով: Ցամաք ելնելով գնացին, մտան քաղաք: Եղբայրներն իմանալով մեծ ուրախութեամբ ժողովուեցին նրանց մօտ: Այնտեղ գալիս էին բոլորը եւ ուսանում Յովհաննէսից, մինչեւ եփեսացիներն ընդունեցին Յովհաննէսի բոլոր խօսքերն ու գործերը: Այստեղ Պրոխորոնը, ժամանակի այսպիսի հաշիւ դնելով, ասում է. «Մինչ առաջին անգամ եկանք Երուսաղէմից Ասիա, Յովհաննէսը 50 տարեկան էր, եւ Եփեսոսից դուրս քարոզութեան եղանք 9 տարի եւ, նախքան մեր աքսորուելը, Եփեսոսում մնացինք 15 տարի, իսկ Պատմոս կղզում որպէս աքսորական մնացինք 17 տարի եւ մեր աքսորից գալուց յետոյ Եփեսոսում մնացինք 6 տարի»: Աքսորից վերադառնալու ժամանակով այս հաշիւը ճշտում է Տրայիանոսի առաջին տարում ըստ նրա նախորդի՝ Ներուասի, որ երկու տարի թագաւորեց՝ Տիրոջ 96 եւ 97 թուականներին: Ահա թէ ինչու աքսորը

Պատմոս կղզում լինում է Դոմետիանոսի առաջին տարում, այսինքն՝ Տիրոջ 81 թ., ինչպէս եւ Յովհաննէսի առաջին գալուստը Երուսաղէմից Ասիա լինում է Տիրոջ 57 թուականին, այն ժամանակ նա 50 տարեկան էր, Փրկչից 7 կամ 10 տարի յետոյ ծնուած, որ համապատասխանում է նրա կեանքին: Մեր մեծ Ճառընտիրը, որտեղից առանք նախագրեալ բաները, այստեղ վերջացնում է պատմութիւնը:

Կղեմէս Ալեքսանդրացին պատմում է, որ Պատմոս կղզուց վերադառնալուց յետոյ, երբ Յովհաննէսն Աւետարանը քարոզելու նպատակով շրջում էր Ասիայում Եփեսոսի կողմերում, հանդիպեց մի երիտասարդի, որին սիրեց եւ, դարձի բերելով, մկրտեց նրան եւ յանձնեց մի եպիսկոպոսի՝ նրան բարուք խնամք տանելու եւ բարի վարքով ու հաւատքով դաստիարակելու համար: Այնուհետեւ, երբ նրան հաւատքի մէջ հաստատուած տեսաւ, բաժանուեց նրանից: Իսկ երիտասարդն անփոյթ գտնուեց քրիստոնեային վայել վարքի ու պահեցողութեան մէջ: Ընկերները նրա մօտ հաւաքուեցին եւ, հրապուրելով զեխ ու թուլամորթ վարքով, դարձրին նրան աւելի չար, քան առաջ էր, մինչեւ որ աւազակ, աւազակապետ ու մարդասպան դարձաւ: Պատահեց, որ Յովհաննէսը դարձեալ այդ քաղաքը եկաւ եւ հարցրեց եպիսկոպոսին. «Վերադարձրո՛ւ մեզ այն աւանդը, որ ես եւ Քրիստոս տուեցինք քեզ այս եկեղեցու վկայութեամբ, որում դու կաս»: Իսկ եպիսկոպոսը սկզբում զարմացաւ, թէ արդա՞թ է արդեօք խնդրում, որ ինքը չի վերցրել, բայց երբ Յովհաննէսն ասաց, որ այն երիտասարդին է փնտրում, եպիսկոպոսը դառն յոգոց հանեց եւ արտասուքով ասաց. «Նա մեռաւ»: Յովհաննէսը հարցրեց. «Ե՞րբ, ինչպէ՞ս, ինչպիսի՞ մահուամբ մեռաւ»: Եպիսկոպոսն ասաց. «Աստուծոյ համար մեռաւ, քանզի այն չար դեւը Տիրոջից հեռացաւ, աւազակ դարձաւ եւ այժմ, փոխանակ եկեղեցում լինելու, իր նման ուրիշների հետ լեռներում է շրջում»: Յովհաննէսն, այս լսելով, ձեռքը պարեզօտին զցեց, պատառոտեց եւ կոծում էր ու ասում. «Վա՛հ, բարո՛ւք պահապան, որ թողեցիր երիտասարդի հոգին, արագ բերէք ձի՛ եւ մի մարդ, որ ճանապարհ ցոյց տայ ինձ»: Եւ, եկեղեցուց մի քանիսի վերցնելով, գնաց: Երբ տեղ հասաւ, աւազակների պահապանները բռնեցին նրան, իսկ նա չփախաւ ու չարգելեց, այլ աղաղակեց ու ասաց. «Հէնց դրա համար էլ եկել եմ, արդ, տարէ՛ք ինձ ձեր գլխաւորի մօտ»: Իսկ այն երիտասարդը սպառազինուած կանգնած էր: Երբ Յովհաննէսը մօտեցաւ, նա ճանաչեց նրան, ամաչեց ու փախաւ: Իսկ Յովհաննէսը, մոռացած իր ծերութիւնը, հետապնդում էր նրան եւ իր ամբողջ զօրութեամբ աղաղակում եւ ասում. «Ինչո՞ւ ես փախչում, որդեա՛կ, վախեցա՞ր դու քո ծերունի հօրից: Ողորմի՛ր ինձ, որդեա՛կ, եւ մի՛ երկնչիր, քանզի կեանքի յոյս կա՛յ քեզ համար: Ե՛ս Քրիստոսին պատասխան կտամ քո փոխարէն, եթէ նոյնիսկ մեռնել պէտք լինի, քո փոխարէն ուրախութեամբ եւ ցնծութեամբ յանձն կառնեմ եւ կհամբերեմ, քո փոխարէն, ինչպէս մեր Տէրը՝ մեր փոխարէն, կտամ իմ անձը: Սպասի՛ր, հանդարտ կանգնի՛ր եւ հաւատա՛ ինձ, քանզի Տէ՛րն առաքեց ինձ»: Իսկ նա,

երբ այս լսեց, գլուխը խոնարհ, նայում էր, ապա նետեց իր զենքերը եւ դողահարի պէս լալիս էր դառնապէս։ Եւ երբ Յովհաննէսը մօտեցաւ նրան, երիտասարդն ընկաւ նրա գիրկը եւ արտասուքով լուանում էր իրեն իբրեւ փրկութեան յոյս չունեցող։ Իսկ առաքեալը երաշխաւոր եղաւ եւ ներողութիւն նրան. «Եթէ ես քեզ համար Թողութիւն խնդրեմ մեր Փրկչից, կքաւուես դու»,— եւ բռնում էր աւազակապետի ձեռքը, դնում իր աչքերի վրայ եւ համբուրում, իբրեւ թէ նա ապաշխարութեամբ սրբուեց։ Եւ նրան իր հետ եկեղեցի տարաւ, ստէպ—ստէպ պաղատանք ու աղօթք էր մատուցում, հանապազօրեայ պահեցողութեամբ ճգնում նրա փոխարէն եւ զանազան վայելուչ խօսքերով մխիթարում նրա միտքը եւ չզնաց այնտեղից, մինչեւ նրան Տիրոջ շնորհների մէջ չհաստատեց եւ աւանդեց Եկեղեցու ձեռքը՝ տալով ճշմարիտ ապաշխարութեան ցուցանելի օրինակ։

Սրանից յետոյ Եւսեբիոսը Յովհաննէսի աշակերտ Պողիկարպոսի աւանդութեան մէջ գրում է, թէ Յովհաննէս առաքեալը մի անգամ բաղնիք մտաւ լողանալու, բայց, երբ իմացաւ, որ աղանդապետ Կերինթոսը ներսում է, դուրս փախաւ, քանզի չհանդուրժեց լինել նոյն յարկի տակ, որտեղ նա էր, եւ ասում էր իր հետ եղողներին. «Փախչե՛նք, միգուցէ եւ բաղնիքը փլէն, քանզի այստեղ է ճշմարտութեան թշնամի Կերինթոսը»։ Ուրիշ բազում աւանդութիւններ կան Յովհաննէս աւետարանչի մասին զանազան վկայագրերում, որոնցից մէկն էլ Հերոնիմոսի յիշատակածն է, թէ ստէպ խրատում էր իր աշակերտներին ամէն ինչից առաւել յիշել Տիրոջ պատուիրանները միմեանց սիրելու մասին եւ իր բոլոր խօսքերին աւելացնում էր. «Որդիներ՛, սիրեցէ՛ք միմեանց, քանզի սէրն Աստծուց է, եւ Աստուած սէր է»։ Ահա թէ ինչու է երանելին անուանում նաեւ Սիրոյ աշակերտ։ Հաւատացեալների այն խօսքին, թէ՝ «Վարդապե՛տ, միշտ սէր ես քարոզում, բայց կամենում ենք, որ խրատի այլ խօսքեր էլ մեզ յիշատակ թողնես», պատասխանել է. «Եթէ ձեր մէջ սէր լինի, այդ բաւական է, եւ այլ բան պէտք չէ, քանզի այս պատուիրանը բովանդակում է ամէն բան»։

Իսկ Աբիդիասից՝ մի հին, բայց անվաւերական գրչից վերցուած աւանդութիւնը պատմում է, թէ հերձուածողներից ոմանք թոյնով լցուած բաժակ են տուել նրան, եւ երբ նա խաչակնքել է բաժակը, թոյնի ազդեցութիւնը խափանուել է, եւ խմելով չի մնասուել։

Յովհաննէսի ընդարձակ վարքի մէջ գրուած է. «Կար մի հեթանոս մարդ, որ դրամի մեծ պարտք ունէր։ Նա, պարտատէրերից նեղուելով եւ անյուսութեան մէջ ընկնելով, գնաց մի հրեայ դեղագործի մօտ՝ հնար խնդրելու։ Դեղագործը նրան դեղ տուեց, որ դեղամահ լինի։ Մարդը տուն գնաց եւ, երբ ուզեց թոյնը խմել, յիշեց քրիստոնեաների սովորութիւնը ուտելիքն ու ընպելիքը օրհնելու մասին եւ, խաչակնքելով բաժակը, այն խմեց, եւ սուրբ նշանի զօրութեամբ նրան ոչ մի չարիք չպատահեց։ Նոյն բանը մի անգամ էլ փորձելուց յետոյ, երբ պատմեց հրեային, վերջինս յիշեց եւ գնաց սուրբ Յովհաննէս աւետարանչի մօտ, հաւատաց Խաչուած Քրիստոսին եւ

մկրտուեց։ Այնժամ Յովհաննէսը կանչեց այն հեթանոսին, նրան եւս դարձի բերեց ի Քրիստոս, ապա կարգաղրեց նրան բռով խոտ վերցնել եւ տալ իր պարտատէրերին։ Եւ խոտն ընտիր ոսկի դարձաւ նրա ձեռքում։ Այսպէս հատուցեց իր պարտքերը։

Իսկ մենք աւելի ստոյգ աւանդութեանը գանք, որ սուրբ աւետարանչի վերափոխման մասին է։ Պատմւում է, որ Յովհաննէսն, իմանալով իր՝ աշխարհից փոխուելու օրը, իր վերջին խրատն աշակերտներին տալուց յետոյ, իր համար գերեզման փորել տուեց եւ այնտեղ իբրեւ թէ քնով ննջեց։ Սա առանձին—առանձին ընդարձակ գրուած կայ ընթերցուածում, որը սկսում է. «Երանելի Յովհաննէսը եղբայրների հետ էր մեծ ուրախութեամբ ի Տէր» խօսքերով եւ աւարտւում է հետեւեալով. «...եւ ապա խաչակնքեց բոլորին եւ ասաց. «Դո՛ւ եղիր ինձ հետ, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս» եւ ընկղմանեց փոսի մէջ, ուր իր հանդերձը տարածեց։ Եւ ասաց մեզ. «Խաղաղութի՛ւն ձեզ, եղբայրնե՛ր», եւ մինչդեռ մենք լալիս էինք, սուրբ առաքեալը եւ աւետարանիչն իր հոգին Տիրոջ ձեռքն աւանդեց»։ Հին վկայագիրներ մեր Ճառընտրի մէջ սրան աւելացնում են. «Եւ աշակերտները գնացին քաղաք, եղբայրներին պատմեցին, թէ իրենց վարդապետ Յովհաննէսը մեռաւ։ Եւ եղբայրներից ոմանք եկան, բացեցին տապանը եւ գտան միայն հողաթափերը, իսկ մարմինը չգտան, քանզի Աստուած երկինք փոխեց* Յովհաննէսին, ինչպէս Ինքը կամեցաւ։ Իսկ Յայսմաւուրքն ասում է. «Սուրբ աւետարանչի մարմինը չգտան, քանզի վերափոխուել էր առ Տէր կատարեալ յարութեամբ, ինչպէս սուրբ կոյս Մարիամը՝ իր հոգեւոր մայրը», որ հաւանելի կարծիք է։ Իսկ ստոյգն անիմանալի է, եւ խորհուրդը՝ ծածուկ, ուստի եւ անմեկնելի է մնում Տիրոջ խօսքը՝ ասուած Պետրոսին Յովհաննէսի մասին, թէ՝ «Կամենում եմ, որ դա ապրի, մինչեւ Ես գամ»։ Եւ ինքը՝ Յովհաննէսը, այդ խօսքերը մեկնելիս, անբացատրելի է թողնում ասելով այսպէս. «Եւ այս խօսքը տարածուեց եղբայրների մէջ, եւ համարեցին, թէ այն աշակերտը չի մեռնի։ Բայց Յիսուս նրանց չասաց, թէ չի մեռնի, այլ՝ «Ես կամենում եմ, որ նա ապրի, մինչեւ Ես գամ»։ Եւ որովհետեւ սուրբ Յովհաննէս Աւետարանչի նշխարներից որեւէ մասունք երբէք չգտնուեց, շատերը հաստատուեցին այս կարծիքի մէջ։ Իսկ մեզ ամէն բանից առաւել հարկ է յարգել ու պահել նրա աստուածաբան վարդապետութիւնը եւ սիրոյ հոգեկեցոյց խրատները՝ արժանի լինելու նրա սրբութեանն ու երկնաւոր պսակներին ի Յիսուս Քրիստոս, ի Տէր մեր, Որին փա՛ռք յաւիտեանս. ամէն։

---

* երկինք փոխել— հոգով եւ մարմնով երկինք բարձրացնել

ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ ՎԱՐՔԸ

Եատերի մօտ է յաճախ հարց ծագում, թէ ով է անապատում բնակուողներից առաջինը։ Ոմանք, Երանելի Եղիային եւ Յովհաննէսին առաջինը համարելով, ասում են, թէ նրանք անապատական կեանքի սկիզբը դրեցին։ Բայց Եղիան առաւել մեծ է, քան անապատականները, եւ Յովհաննէսը նախքան իր ծնուելը սկսեց մարգարէանալ։ Այսպիսի անապատաբնակ նախնիները վեր են բոլոր արարածներից։

Ոմանք ասում են, որ անապատականների առաջնորդը Հայր Անտոնն է։ Բայց նա ոչ թէ առաջինն է, այլ նրանով շատերն աստուածպաշտութեան կանչուեցին։ Նոյն Երանելի Անտոնի աշակերտները, մանաւանդ՝ Ամատասը եւ Մակարիոսը, որոնք էլ նրան թաղեցին, մինչեւ այսօր էլ պնդում են Պօղոս Թեբայեցու՝ անապատական վարքի սկզբնաւորող ու առաջնորդ լինելու մասին։ Մենք եւս այս կարծիքն ենք ընդունում։

Սակայն Հայր Պօղոսը ոչ ոքի չէր երեւում, միայն ինքն էր անապատական, ամենաառաջին միանձնականն էր։

Արդ, քանզի Երանելի Անտոնի վարքի մասին ոչ միայն յոյների, ատրիների եւ Հռոմէացիների խօսքերն են վկայում, այլեւ քրիստոնեայ բոլոր ազգերը ծանօթ են նրա քաջամարտիկ ճգնութեանը, նրա՝ բոլոր ճգնաւորական դասերի ու անապատաբնակութեան օրինակ ու պատճառ լինելուն, ես կարեւոր համարեցի գրել Երանելի Պօղոսի վարքի մասին, թէ ինչպէս եկաւ, ինչպիսի ճգնութիւններ կրեց, սատանայի ինչքան ու ինչպիսի փորձութիւնների համբերեց։ Այս ամէնը ծածկուած է շատերից, քանզի ոչ ոք մարդկանցից, բացի Երանելի սուրբ Անտոնից, որ ամփոփեց նրա սուրբ նշխարները գերեզմանում, չտեսաւ նրան այն անապատում եւ չխօսեց նրա հետ։

Արդ, սկսենք սուրբի աղօթքների օգնութեամբ։

Դեկոս ու Վաղէս ամբարիշտ ու հալածիչ թագաւորների ժամանակներում, երբ սուրբ Կոստանդիանոսը՝ Հռոմում, իսկ սուրբ Կիպրիանոսը Կարթագէնում երանութեամբ վախճանուեցին, կաթողիկէ Եկեղեցին Եգիպտոսում ու Թեբայիդում կրում էր բազում չարչարանքներ ու փորձութիւններ, եւ բոլոր աստուածասէր ու առաքինի անձինք Յիսուս Քրիստոսի անուան համար մեռնել էին շտապում։ Իսկ ճշմարտութեան թշնամին՝ սատանան, ոչ միայն վկաների մարմինը, այլեւ հոգին էր կամենում սպանել, ինչպէս սուրբ վկաներից մէկինը, որը, բազում ճգնութիւնների համբերելով, նաեւ խաչի տանջանքներին իր համբերութեամբ յաղթելով, ամօթահար էր արել սատանայի արբանեակին։ Անօրէն դատաւորը հրամայել էր նրա ամբողջ մարմինը մեղրով օծել եւ, ձեռքերը ետեւում կապած, միջօրէի տապին թողնել, որպէսզի, ճանճերից ու պիծակներից խայթուելով, ցաւից համաձայնի հրամաններին։ Բայց երանելին, տօթից աղեխարշուելով եւ խայթերից խոցոտուելով, պատրաստ սպասում էր նահատակութեան։

Այդպէս էր Քրիստոսի նահատակ մի այլ պատանի եւս, անօրէն իշխանը հրամայում է տանել նրան մի ծաղկաւէտ բուրաստան եւ այնտեղ, պայծառ շուշանների, անուշահոտ վարդերի, խաղաղ վտակների մօտ, ծառերի տակ, որոնց տերեւները զեփիւռից մեղմիկ, ախորժալուր ձայներով շարժում էին, կակուղ անկողին փռել, երանելի նահատակին թոյլ կապանքներով կապել, անկողնու վրայ բերել դնել է տալիս մի ժանտաբարոյ, անօրէն, դէմքով ու տեսքով շատ գեղեցիկ պոռնիկ կնոջ՝ սրբին գայթակղեցնելու համար։ Սպասաւորները հրամանը կատարում եւ հեռանում են։ Կինը, լրբենի երեսով մօտենալով սրբին, լկտիանում է սրբի առաջ, որի մասին պատմելն ինձ համար տհաճ է։ Քրիստոսի զինուորն արդեօք ի՞նչ պիտի գործէր եւ ի՞նչ մտածէր։ Նա, որ տանջանքներից չյաղթուեց, ցանկութիւնների՞ց պիտի յաղթուէր։ Արդ, լսի՛ր եւ զարմացի՛ր, թէ ինչպէս էին հրեշտակներն ու հրեշտակապետերը, երկնային բոլոր զօրքերը զարմացած Քրիստոսի վկայի աստուածասիրութեամբ, եւ Ինքը՝ Տէրը, բերկրանքով ցոյց էր տալիս Իր բոլոր հրեշտակներին Իր վկայի սէրը։ Քանզի Քրիստոսի վկան ու նահատակը, երկնքից ուժ ստանալով եւ Սուրբ Հոգով զօրանալով, ատամներով իր լեզուն էր կտրում, համբոյրի փոխարէն թքում պոռնկի երեսին եւ ցանկութեան բոցը ցաւով էր մարում։ Այս տեսնելով՝ երկնային զօրքերը փառաբանում էին Տիրոջը, իսկ Բելիարի ձախակողմեան գունդը կորագլուխ եւ ամօթալից էր լինում, քանզի այսպիսի սաստիկ պատերազմի յաղթութիւնն առաւել մեծ է, քան տանջանքներինն ու մահինը։ Սրա համար ասացի, որ առաւել հոգին էին ջանում սպանել, քան մարմինը։

Այսպիսի դառն ժամանակներում, Վերին Թեբայիդում, ծնողների վախճանից յետոյ, Երանելի Պօղոսն ապրում էր իր ամուսնացած քրոջ հետ։ Նա տասնվեց տարեկան էր, մեծատուն ծնողների հարստութեան միակ ժառանգը, կրթուած էր յունական ու եգիպտական իմաստութեամբ եւ հոգու խոնարհութիւնից առաւել նաեւ առ Աստուած սէր ունէր։ Հալածանքների պատճառով նա թաքնուել էր մի ագարակում։ Ագահութիւնը, որ ստիպում է մարդկանց ամենամեծ ոճիրները գործել, բռնել էր նրա քրոջ ամուսնու միտքը՝ երանելուն ծնողներից հասած ժառանգութեան պատճառով։ Քրոջ ամուսինը կամենում էր մատնել նրան (ում մանաւանդ պէտք էր պահել)՝ կամենալով արժանանալ անօրէն իշխանների շնորհներին։ Ո՛չ կնոջ արտասուքը, ո՛չ ազգականական կապը եւ օրէնքը, ո՛չ էլ ամենագէտն Աստուած եւ Նրա երկիւղն այդ մարդուն ետ չպահեցին անօրէն խորհրդից։ Նա մնաց

անողորմ ու խստասիրտ՝ աստուածպաշտութիւնը մատնութեամբ փոխանակել փութալով։ Իսկ երանելին, դաւաճանութիւնն զգալով, խոյս տուեց անապատ եւ այնտեղ, լեռների քարայրներում թաքնուելով, հալածանքների դաղարին էր սպասում մտքում խորհելով. «Ի՞նչ ունեմ ես այս աշխարհում կամ նրանից ի՞նչ օգտաշահ բան պիտի լինի ինձ»։ Այլ այսպիսի բարի խորհուրդներով ուրացաւ աշխարհը եւ, չվերադառնալով այդտեղից, անապատում Տիրոջը ծառայեց, որից երանելու սիրտն անճառ խնդութեամբ էր քաղցրանում։ Քիչ–քիչ առաջ գնալով հասաւ մի ապառաժ լեռան եւ գտաւ փոքր քարերով փակուած մի քարայր։ Քարերը հանելով մտաւ ներս եւ, ըստ մարդկային բազմախոյզ սովորութեան, այրի ներսը խուզարկելով, գտաւ մաքուր ու յստակ ջրով մի աղբիւր եւ այդ տեղը ցանկացաւ՝ իբրեւ Աստծուց իրեն շնորհուած, իր կեանքի ամբողջ ժամանակն այդտեղ էր մնում հագուստ ունենալով արմաւենիներից, որ բուսնում էին այդտեղ։ Որեւէ մէկի այդ բանն անհնար թող չթուայ։ Աստուծոյ եւ սուրբ հրեշտակների առաջ վկայում եմ, որ անապատի նոյն տեղում, որ մօտ է տաճկաց կողմին, տեսայ մի միայնակեացի, որ արգելական էր եւ երեսուն տարի ապրեց միայն զարեհացով ու պղտոր ջրով։ Դարձեալ մի ուրիշը հնում ապրում էր մի գուրի մէջ՝ օրեկան տասնհինգ թուզ ու քիչ ջուր ունենալով իբրեւ սնունդ։ Արդ, այս ասացի՝ վկայելու համար իմ աչքով տեսածը, քանզի կան մարդիկ, որ չեն հաւատում խստակրօն վարքին, որովհետեւ հեռացել են աստուածային փափագելի վարքն ըղձալուց։ Իսկ մենք շարունակենք մեր պատմութիւնը։

Երանելի Պօղոսը հարիւր տասներեք տարեկան էր եւ երկնաւոր վարքով էր ապրում երկրում, այդ նոյն ժամանակ իննսունամեայ հայր Անտոնն ապրում էր անապատի այլ կողմում։ Արդ, հայր Անտոնը մտքում խորհում էր, թէ անապատում կա՞յ արդեօք իրենից աւելի խորքում բնակուող միայնակեաց։ Եւ այս միտքը գիշեր ու ցերեկ տանջում էր նրան։ Մի գիշեր էլ նրան յայտնուեց. «Կայ մէկն անապատի խորքում, շատ աւելի լաւը, քան դու, եւ արժան է քեզ փութով գնալ նրա մօտ եւ տեսնել նրան»։ Եւ երանելի ծերը, վաղ առաւօտեան վեր կենալով, ձեռքն առաւ ցուպը եւ, նրան յենուելով, ճանապարհ ընկաւ, թէեւ ճանապարհն ամենեւին չգիտէր։ Նոյնիսկ կէսօրին, երբ արեգակն իր ողջ ջերմութեամբ խաշում էր ամէն ինչ, իր ընթացքը չէր դադարեցնում, այլ ասում էր. «Հաւատում եմ իմ Աստծուն, որ Իր ծառային, որին խոստացաւ ցոյց տալ ինձ, ցոյց կտայ»։

Անտոնը, ճանապարհը շարունակելով եւ անապատի անսահմանութեան մէջ բազում գազանների հետքեր տեսնելով, մտածում էր, թէ ինչ պիտի անի, մանաւանդ որ երկրորդ օրն էլ երեկոյանում էր, աչքի առաջ ունէր միայն այն, թէ անհնարին է, որ Քրիստոսն իրեն թողնի։ Եւ, ամբողջ երկրորդ գիշերն էլ աղօթքով անցկացնելով, վաղ առաւօտեան լեռան ստորոտի մօտ տեսաւ մի շատ մեծ ինձ, որ շնչակտուր վեր էր ելնում։ Անտոնը ճեպով գնաց նրա ետեւից։ Եւ երբ երկուսն էլ այրի մօտ էին, գազանը ներս մտաւ, իսկ նա մօտենալով առանց վախենալու նայեց՝ ըստ գրածի, թէ կատարեալ սէրը մերժում է վախը, եւ, հազիւ լոյս տեսնելով այրի մէջ, մօտեցաւ դռանը եւ քարով խփեց դռան մօտի մի քարի՝ իմանալու համար՝ որեւէ մէկը ներսում կա՞յ արդեօք։ Իսկ երանելի Պօղոսը, ձայնը լսելով, վեր կացաւ եւ մուտքը փակեց։ Այնժամ Անտոնը, մինչեւ օրուայ վեցերորդ ժամը դռան առաջ ընկնելով, աւելի ու աւելի էր աղաչում դուռը բանալ՝ յայտնելով, թէ ով է, որտեղից է եկել եւ ինչի համար։ «Գիտեմ,– ասում է,– որ անարժան եմ քեզ տեսնելուն, բայց եթէ չտեսնեմ, չեմ հեռանայ։ Դու, որ գազաններին ես ընդունում, մարդկանց ինչո՞ւ ես մերժում։ Քեզ փնտրեցի եւ գտայ եւ բախում եմ, որ բացես ինձ։ Եթէ ինձ չհանդիպես, այստեղ՝ քո դռան առաջ, կմեռնեմ, որպէսզի գոնէ մարմինս տեսնելով, թաղես ինձ»։ Այսչափ եւ որանից էլ աւելին աղաչեց նրան, եւ երանելի Պօղոսը հազիւ պատասխանեց. «Ոչ ոք այդպէս սպառնալիքներով չի խնդրում եւ ոչ՝ արտասուքներով բողոքում»։ Եւ շնորհալի խօսքերով բաց արեց նրան մուտքը։ Եւ, իրար անունները տալով, ողջագուրուեցին։

Սուրբ ողջոյնից յետոյ Պօղոսն, Անտոնի հետ նստելով, այսպէս ասաց. «Ո՞ւմ այդչափ աշխատութեամբ փնտրեցիր տեսնելու։ Ահաւասիկ տեսնում ես ծերացած ու մաշուած մի մարդու, որ սակաւ ժամանակ անց հող պիտի դառնայ։ Բայց սէրն ամէն ինչի համբերում է։ Արդ, ո՛վ սիրեցեալ եղբայր Անտոն, անապատի եւ կրօնաւոր միանձանց զա՛րդ, բարո՛վ եկար։ Ասա՛ ինձ, աղաչո՛ւմ եմ, ինչպէ՞ս է մարդկային ցեղը, ի՞նչ նոր շինութիւններ են կառուցում քաղաքներում, ինչպէ՞ս է աշխարհը հնազանդում թագաւորներին, իշխանները դեռեւս գերուա՞ծ են դիւային մոլորեցնող պատրանքների մէջ»։ Մինչդեռ նրանք զրուցում էին, մի ագռաւ, անապատի խորքից հեզիկ թռչելով, եկաւ, նստեց մի տունկի վրայ, նրանց առաջ։ Նրա բերանին մի ամբողջ հաց կար, հացը դրեց նրանց առաջ եւ, մինչդեռ նրանք զարմացած նայում էին, թռաւ։ Թռչունի գնալուց յետոյ երանելի Պօղոսն ասաց. «Տէրը մեզ հաց ուղարկեց, արդարեւ ողորմած եւ մարդասէր է։ Արդէն վաթսուն տարի է, որ ամէն օր կէս հաց էի ընդունում, բայց քո գալստեան առթիւ Քրիստոսն Իր զինուորներին կրկնակին ուղարկեց»։ Եւ, Տիրոջից գոհանալով, երկուսով նստեցին աղբիւրի մօտ եւ մինչեւ գիշեր հակառակում էին, թէ ով է առաջինը հացը կիսելու։ Եւ որոշեցին երկուսով բռնել հացը եւ կտրել Տիրոջ անունով։ Եւ այսպէս, Աստծուց գոհանալով, ճաշակեցին եւ ամբողջ գիշեր աղօթեցին։ Երբ լոյսը բացուեց, Պօղոսն ասաց Անտոնին. «Վաղուց գիտեմ քեզ, իմ եղբա՛յր եւ ծառայակի՛ց, գիտեմ, որ այստեղ ես բնակւում, եւ Քրիստոս խոստացաւ բերել քեզ ինձ մօտ։ Արդ, ժամանակն աւարտուած է, եւ արդարութեան պսակն է ինձ սպասում։ Դու ուղարկուեցիր Տիրոջ կողմից, որպէսզի մարմինս ամփոփես հողում»։ Երբ այս ասաց,

Անտոնն արտասուքով ու հառաչանքներով խնդրեց նրան, որ ինքը նրանից յետոյ չմնայ եւ ճանապարհակից լինի նրան։ Իսկ հայր Պողոսը պատասխանեց. «Զպէտք է խնդրես միայն քոնը, եղբա՛յր, այլեւ՝ ընկերոջինը, քանզի թէպէտ քեզ օգուտ է մարմնիդ բեռից ազատուելը, բայց շատ եղբայրների համար, որոնք նպատակ ունեն քեզ նմանուող լինելու, օգուտ չէ։ Բայց ես աղաչում եմ քեզ, եթէ ասածս ծանր չէ քեզ համար, փութով գնա՛ եւ մարմինս պատանքելու համար բե՛ր այն հանդերձը, որ շնորհել է քեզ Աթանաս եպիսկոպոսը»։ Բայց երանելի Պողոսը ոչ թէ հանդերձն էր ցանկանում, այլ՝ կեանքից հեշտութեամբ եւ խաղաղութեամբ հրաժարուելը՝ առանց կողքին որեւէ մէկին ունենալու։ Իսկ հայր Անտոնը զարմացած էր՝ լսելով Աթանասի եւ նրա հանդերձի մասին։ Այնուհետեւ որպէս Քրիստոսին տեսնող, նրա մէջ տեսնելով Քրիստոսին, նրա ոտքերն ընկաւ եւ երկրրպագեց։ Եւ երկար ժամանակ չէր համարձակւում պատասխանել, այլ առատաբուխ արտասուքով համբուրում էր նրա ձեռքերն ու աչքերը։ Ապա փութաց իր վանքը՝ ասելով. «Աղօթի՛ր ինձ համար, ո՛վ հայր պատուական»։ Երբ նրանից խնդրածն ընդունեց, խնդալից հոգով ճանապարհ ընկաւ եւ ամբողջ ճանապարհն անցաւ արտասուք թափելով։ Եւ երբ հասաւ վանք, նրա երկու աշակերտները, որ ծառայում էին նրան, ընդառաջ գալով, հարցրին՝ ո՞ւր էիր այսքան ժամանակ, հա՛յր։ Եւ նա, պատասխան տալով, ասաց. «Վա՛յ ինձ՝ մեղաւորիս, որ միայն կերպարանքով միայնակեացի անուն ունեմ, քանզի անապատում տեսայ Եղիային, տեսայ նաեւ Յովհաննէսին եւ արդարեւ դրախտի մէջ տեսայ Պողոսին»։ Եւ, այդպէս գոչելով ու լալով, կուրծքն էր ծեծում։ Ապա, իր հետ վերցնելով պատանքը, որ խնդրուեց իրեն բերել, ճանապարհ ընկաւ։ Երբ եղբայրներն աղաչեցին նրան ասել, թէ ինչ է, նա ասաց՝ կայ ժամանակ ասելու, եւ ժամանակ՝ լռելու։ Եւ, նրանցից հեռանալով, շտապեց այնտեղ, որտեղից եկել էր, քանզի ծարաւի էր սուրբի տեսքին եւ տենչում էր կրկին տեսնել նրան։ Եւ ամբողջ ժամանակ աչքի առաջ նրան ունէր եւ նրա մասին էր խորհում։ Եւ կասկածում էր՝ միգուցէ իր գնալուց առաջ նա հոգին աւանդի Տիրոջը։

Եւ յաջորդ օրը երրորդ ժամին տեսաւ հրեշտակների գնդեր եւ մարգարէների ու առաքեալների դասեր եւ նրանց մէջ՝ ձեան սպիտակութեամբ պայծառացած երանելի Պողոսին, որ երկինք էր ելնում։ Նոյն պահին երանելի Անտոնը երեսի վրայ ընկաւ եւ, աւազը գլխին ցանելով, բարձրաձայն ողբում ու հառաչում էր՝ ինչո՞ւ ես ինձ թողնում, տե՛ր Պողոս, ինչո՞ւ գնացիր՝ վերջին ողջոյն չտալով։ Եւ այնուհետեւ, վեր կենալով, փութաց հասնել երանելի Պողոսի մօտ, մինչեւ իսկ թռչնի արագութեան հետ կարելի էր համեմատել նրա ընթացքը, ինչպէս ինքն էր դրանից յետոյ պատմում։ Այնուհետեւ, ակնթարթօրէն հատել—անցնելով երկար ճանապարհը, հասաւ ցանկալիին եւ, մտնելով այրի ներսը, տեսաւ երանելի Պողոսին գետնամած եւ ձեռքերը տարածած։ Նա, կարծելով, թէ կենդանի է, ծունր իջաւ եւ նրա

հետ սկսեց աղօթել։ Բայց երբ չլսեց հառաչանքի ձայնը, որ երանելին աղօթելիս սովոր էր հեծեծել, իմացաւ, որ սուրբ մարմինն էր երկրպագութիւն մատուցում Աստծուն, Ում համար ամէն ինչ կենդանի է։ Եւ քաղցր արտասուքով, սաղմոսներով եւ օրհնութեամբ, ըստ քրիստոնէական աւանդոյթի, նրա սուրբ մարմինը պատանքեց եւ խոր տրտմութեան մէջ ընկաւ՝ իր հետ փայտատ չբերելու պատճառով։ որով հողը փորէր՝ երանելի մարմինը թաղելու համար։ Այնուհետեւ մտածեց փութով վերադառնալ վանք, բայց դարձեալ վախենում էր՝ ճանապարհի երկարութիւնը յիշելով, քանզի չորս օրում չէր կարող ճանապարհն անցնել։ Եւ ասում էր. «Տէ՛ր, թող եւ ե՛ս մեռնեմ Քո ծառայի մօտ, ինչպէս եւ պարտ իսկ է»։ Եւ մինչ նա այս էր մտածում, անապատի խորքից երկու առիւծ միասին եկան հասան այնտեղ, որտեղ սուրբերն էին։ Անտոնն, այս տեսնելով, սկզբում զարհուրեց, ապա, միտքն առ Աստուած ուղղելով, վախը հեռացրեց իրենից եւ որպէս ոչխարներ էր տեսնում նրանց։ Իսկ առիւծները եկան սուրբ ալեւորի մարմնի մօտ եւ, նրա ոտքերն ընկնելով, քնում եւ բարձրաձայն ոռնում էին։ Սուրբ Անտոնը հասկացաւ, որ յայիս ու ողբում են սուրբ Պողոսի՝ մարմնից անջատուելը։ Ապա սկսեցին ոտքերով հողը փորել եւ ասաղը դուրս թափել։ Եւ երբ մարդու հասակի չափով փոս փորեցին, եկան երանելի Անտոնի մօտ եւ, գլուխները խոնարհելով, ոտքերն ու ձեռքերը լիզելով, իրենց վաստակի վարձն էին հայցում։ Նա իմացաւ, որ գազաններն օրհնութիւն են խնդրում իրենից, եւ, հիացած Աստուծոյ փառքով, բերկրում էր, որ անիծս արտասանը գիտի լաւագոյնը։ Եւ ասաց. «Տէ՛ր, առանց Քո կամքի ու հրամանի տերեւ իսկ չի ընկնում ծառից, եւ ոչ իսկ թռչուն է ընկնում գետնին։ Դո՛ւ հատուցիր սրանց ըստ Քո կամքի»։ Եւ ձեռքի նշանով հրամայեց նրանց հեռանալ։ Ապա սուրբ մարմինը դրեց գերեզմանի մէջ, ինչպէս կարգն էր։ Մի օր անց, իբրեւ օրինաւոր ժառանգորդ վերցնելով պարեգօտը, որ երանելի Պողոսն ինքն էր պատրաստել արմաւենու ճիւղերից, ճանապարհ ընկաւ՝ վերադառնալու իր վանքը։ Երբ հասաւ, աշակերտներն ընդառաջ եկան, քանզի անհամբեր սպասում էին նրա գալստեանը։ Այնժամ արտասուքով պատմեց նրանց եղածի մասին։ Իսկ Զատկի տօնին եւ Պենտեկոստէին, կապելով երանելի Պողոսի պարեգօտը, ուրախանում էր։

Արդ, աղաչում եմ բոլորին, որ ընթերցում են այս, յիշել Հերոնիմոս մեղաւորիս, որ երանելի Պողոսի պարեգօտը թաղաւորական ծիրանուց առաւել էի կամենում, ի փառս Ամենասուրբ Երրորդութեան։

ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ* ՊԱՐՁԱՄԻՏԻ ՎԱՐՔԸ

Պօղոսը հողագործ էր, անբիծ, անարատ ու սուրբ վարքով եւ մօտ՝ բարեաց կարգին: Նա ամուսնացած էր, ինչպէս աշխարհի կարգն է: Բայց նրա կինը չարաբարոյ էր ու շնացող: Մի անգամ Պօղոսը բացակայում էր տնից: Երբ վերադարձաւ, կնոջը սիրեկանի հետ միասին գտաւ: Մերն այսպէս խօսեց եւ ասաց նրանց. «Արդարեւ ասում եմ ձեզ, այսօր ազատեցիք ինձ ձեզանից եւ աշխարհի սնոտի ունայնութիւնից»: Իսկ սիրեկանին ասում է. «Քրիստոսով ասում եմ քեզ, այսուհետեւ ես ամուսին չեմ: Գնա՛, ահա՛, վերցրո՛ւ նրան քեզ կին, իսկ մանուկներս՝ քեզ որդեգիր: Այսուհետեւ ես հրաժարւում եմ աշխարհից եւ դառնում միայնակեաց»: Այս ասելով՝ ճանապարհ ընկաւ դէպի երանելի Անտոնի վանքը: Հասնելով դուռը բախեց, եւ երբ երանելի Անտոնը դուրս եկաւ եւ հարցրեց. «Ո՞վ ես եւ ի՞նչ ես ուզում», Պօղոսը պատասխանեց. «Ես եմ, կամենում եմ միայնակեաց լինել»: «Դու ծեր ես, եւ քո ժամանակն անցել է, չես կարող միայնակեաց լինել: Գնա՛ գիւղ, աշխատի՛ր, քո մի կտոր հացը կե՛ր եւ փա՛ռք տուր Աստծուն: Քանզի չես կարող համբերել այն նեղութիւններին, որոնք կան անապատում»: Իսկ ծերն ասաց. «Այն ամէնը, որ կասես ինձ, կանեմ»: «Ասացի քեզ, որ ծեր ես: Եթէ կամենում ես, գնա՛, մտի՛ր միաբանների վանքը եւ բնակուի՛ր նրանց հետ, ովքեր կարող են ծերութիւնդ մխիթարել»: Այսպիսի ծանր խօսքեր ասելով՝ փակեց դուռը եւ չորս օր դուրս չեկաւ: Իսկ ծերը չհեռացաւ այնտեղից: Հինգերորդ օրը հայր Անտոնը դուրս ելաւ եւ երբ տեսաւ, որ ծերն այնտեղ է, ասաց նրան. «Դեռեւս այստե՞ղ ես եւ չե՞ս գնացել: Չէ՞ որ քեզ մի անգամ արդէն ասացի, որ չես կարող այստեղ մնալ: Արդ, մի՛ ձանձրացրու ինձ, ո՛վ ալեւոր, գնա՛ այստեղից, ինչո՞ւ ես ինձ վշտացնում: Եւ, դրսում մնալով, ինչպէ՞ս չվախեցար անապատի գազաններից, որոնք այստեղ շրջում են գիշերով: Վե՛ր կաց, գնա՛ եւ այլեւս մի՛ գա այստեղ»: Պօղոսը պատասխանեց նրան. «Ո՞վ հայր պատուական, մի՛ կարծիր, թէ կգնամ այստեղից, քանզի ես ուրիշ տեղ չեմ մեռնելու, եթէ ոչ՝ այստեղ, քո դռան մօտ»: Երանելին, տեսնելով, որ նա ոչ կերակուր ունի, ոչ էլ՝ ջուր, եւ այս չորս օր է, որ այստեղ է առանց ուտելու եւ խմելու, մտքում խորհելով, ասաց. «Եթէ սրան չընդունեմ, գուցէ այստեղ մեռնի, քանզի չգիտի պահք պահել, եւ դատաստանի առաջ կկանգնեմ»: Եւ հայր Անտոնն ասաց Պօղոս ծերին. «Վե՛ր կաց, նե՛րս արի, եղբա՛յր»: Եւ երբ ծերին առաւ իր խրճիթը, մտքում ասաց՝ սա չի կարող ժուժկալել անապատում: Կգնայ ու

* Հայ վարքագրութեան մէջ առաւել յայտնի է Պօղ Պարզամիտ անունով:

նախատելով կծաղրի միայնակեացիս վարքը: Հարկ է փորձել սրա ժուժկալութիւնը»: Եւ արմաւենու ճիւղեր տուեց ծերին ու ասաց նրան. «Վերցրո՛ւ, մանի՛ր այս պարանը, ինչպէս ես եմ մանում»: Մերը մինչեւ ժամը ինը մանեց մօտ երկու հարիւր քսան գիրկ եւ շատ չարչարուեց: Երանելի Անտոնը տեսաւ մանածը, չհաւանեց եւ ցասումով ասաց. «Ո՛հ, ի՞նչ վատ ես մանել, աւերել ես, քանզի՛ր եւ կրկի՛ն սկսիր մանել»: Պօղոսը հինգ օր ոչինչ չէր կերել եւ խիստ հիւծուել էր, քանզի ծեր էր եւ ժամանակն անցած: Իսկ հայր Անտոնը չարչարում էր նրան պահքով եւ շատ աշխատանքով, որպէսզի գնայ եւ չարչարանքներից փախչի: Բայց երանելի ծերը քանդեց պարանը եւ մեծ չարչարանքով կրկին մանեց: Եւ հայր Անտոնը տեսաւ, որ ծերը չտրտնջաց, չնեղսրտեց, ոչ իսկ ամենեւին երեսը կնճռոտեց: Այս տեսնելով՝ նա շատ ուրախացաւ: Երբ երեկոյացաւ, հայր Անտոնն ասաց ծերին. «Հայրի՛կ, թէ կուզես, արի հա՛ց ուտենք»: «Ինչպէս կամենում ես, հա՛յր»,— պատասխանեց ծերը: Հայր Անտոնն ուրախացաւ, որ նա չշտապեց ուտել եւ իրե՛ն թողեց որոշել: Այնժամ նա սեղանին դրեց չորս պաքսիմատ, իր մի կտորը թրջեց, իսկ երեք կտորը ծերին տուեց: Ապա երանելի Անտոնն ասաց տասնմէկ սաղմոս եւ տասներկու անգամ ծունր դրեց՝ սրանով եւս փորձել կամենալով ծերին, իսկ ծերն առաւել յօժարութեամբ էր աղօթում, քան Անտոնը: Երբ աղօթքը վերջացրին եւ ուտել սկսեցին, Անտոնն իր մի կտորը կերաւ եւ այլեւս չմերձեցաւ, իսկ ծերը շատ դանդաղ էր ուտում: Երբ տեսաւ, որ Անտոնն ուտելը թողեց, ինքը եւս դադարեց ուտել: Անտոնն ասաց. «Կե՛ր, եղբա՛յր»: Մերն ասաց. «Եթէ դու ուտես, ես էլ կուտեմ, իսկ եթէ դու չուտես, ես եւս չեմ ուտի»: «Ինձ բաւական է, ես միայնակեաց եմ»: «Ինձ ե՛ւս բաւական է, քանզի ե՛ս էլ կամենում եմ միայնակեաց լինել»: Եւ դարձեալ վեր կացան, ժամերգութիւն արեցին, տասներկու անգամ ծունր դրեցին: Երբ աւարտեցին, իւրաքանչիւրն առաւ մի խոտեղէն, եւ մի քիչ ննջեցին, իսկ գիշերն արթնացան եւ մինչեւ լոյս պաշտամունք կատարեցին: Երբ երանելի Անտոնը տեսաւ ծերի յօժարութիւնը եւ աչալրջութեամբ կարգին հետեւելը, ասաց ծերին. «Ահա՛ սահմանուածը կատարեցիր: Արդ, թէ կարող ես հանապազօր այսպէս անել, մնա՛ ինձ մօտ, եթէ ոչ՝ գնա՞ ուր կամենում ես»: «Եթէ սրանից էլ աւելին աւելացնես, չգիտեմ, բայց այսքանը ես կարող եմ»,— պատասխանեց ծերը: Այնժամ Անտոնն ասաց նրան. «Ահա յանուն Քրիստոսի դու եւս եղար միայնակեաց»: Եւ Անտոնին դուր եկաւ ծերի վարքը, որովհետեւ ծերը Քրիստոսի կատարեալ ծառայ դարձաւ: Շատ չանցած՝ Անտոնը մի խրճիթ շինեց իրենից չորս մղոն հեռու եւ ասաց նրան. «Ահա Քրիստոսի զօրութիւնը յաջողեց քեզ միայնակեաց լինելու, արդ, մնա՛ մենակ»: Եւ ծերին թողնելով այն խրճիթում, ինքն իր խրճիթը գնաց: Մէկ տարի անց Աստծուց Պօղոսին շնորհ տրուեց՝ բժշկելու հիւանդներին, ախտաժէտներին՝ աքանչելապէս հաստատելով նրան միայնակեցութեան կարգի մէջ:

Մի օր Անտոնի մօտ բերեցին մի դիւահարի։ Երբ Անտոնը երիտասարդին տեսաւ, ասաց բերողներին. «Սա ծերի գործն է, քանզի նա արժանացաւ այս շնորհներին»։ Եւ, պատանուն վերցնելով, եկաւ ծերի մօտ եւ ասաց. «Հա՛յր Պօղոս, հրամայի՛ր դեւերին ելնել պատանու միջից, որպէսզի փառաւորուի մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը»։ Ծերը հարցրեց. «Դու ի՞նչ ես անում»։ «Ես ժամանակ չունեմ, գործեր ունեմ»,— ասաց Հայր Անտոնը եւ, պատանուն թողնելով ծերի մօտ, եկաւ իր խրճիթը։ Ծերը վեր կացաւ, ըստ իր սովորութեան՝ աղօթեց։ Երբ աղօթքը վերջացրեց, ասաց դեւին այն, ինչ ասաց Հայր Անտոնը. «Ելի՛ր այս պատանու միջից, որ փառաւորուի Աստուծոյ անունը»։ Դեւն սկսեց բարձրաձայն հակառակուել եւ ասաց. «Ա՛յ դառնացեալ ծեր, ի՞նչ կայ իմ եւ քո միջեւ, որ հալածում ես ինձ»։ Իսկ երանելին վերցրեց գօտին եւ խփեց նրա թիկունքին՝ ասելով. «Ելի՛ր այստեղից, ինչպէս Հայր Անտոնը հրամայեց քեզ»։ Իսկ դեւն Անտոնին ու Պօղոսին սկսեց շուայտ հարբեցողներ անուանել, որոնք երբէք չեն յագենում իրենց խորտիկներից։ «Մի՞թէ մենք ձեր մէջ ենք բնակւում, որ բրոնանում էք մեզ վրայ»։ Երբ դեւը դադարեց խօսել, ծերն ասաց նրան. «Ելնո՞ւմ ես, թէ՞ գնամ, ասեմ իմ Քրիստոսին»։ Դեւն ասաց. «Չե՛մ ելնում այստեղից, չե՛մ ելնում»։ Այնժամ սուրբը դուրս ելաւ խրճիթից կէսօրուայ տօթին (իսկ այդտեղ տօթն աւելին էր, քան Բաբելոնի Հնոցում), մնաց մի քարի վրայ, ինչպէս սիւն՝ խարսխի վրայ, եւ այսպէս ասաց. «Դո՛ւ գիտես, Յիսո՛ւս Քրիստոս, որ խաչուեցիր Պոնտացի Պիղատոսից։ Չե՛մ իջնի այս վէմի վրայից, չե՛մ ուտի եւ խմի մինչեւ այս պատանու միջից դեւերին հանելդ»։ Մինչ նա այս խօսում էր, դեւն աղաղակեց եւ ասաց. «Կգնամ այստեղից, կգնամ, ինչո՞ւ ես ինձ տարաժամ դատում։ Կելնեմ այս պատանու միջից եւ այլեւս չեմ վերադառնայ սրա մօտ»։ Եւ ծերի խօսքով դեւը ելաւ եւ մտաւ մի վիշապի մէջ, որ վաթսուն կանգուն մեծութիւն ունէր, եւ որը սողալով ընկաւ Կարմիր ծովը։ Կատարուեց այն խօսքը, որ Տէրն ասում էր։ «Եթէ հաւատք ունենաք, լեռները կշարժուեն դէպի ծովի սիրտը»։ Եւ դարձեալ ասաց. «Ո՞ւմ մէջ կբնակուեմ, եթէ ոչ՝ հեզերի եւ խոնարհների եւ նրանց մէջ, ովքեր դողում են Իմ խօսքերից»։

Այս է սուրբ միայնակեաց Պօղոս երանելու, սրբի, խոնարհի եւ անբիծի վարքը, որ օրինակ եղաւ բոլոր միայնակեացներին։ Եւ այսպէս, քառասուն տարի միայնակեաց եղաւ աստուածահաճոյ վարքով։ Ապրեց հարիւրութ տարի եւ վեց ամիս։ Վախճանուելու օրն ուրբաթ էր։ Նրան թաղեցին սուրբ Անտոնի աշակերտները՝ Ամոնասը եւ Անտոնը։

ՄԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ ՎԱՐՔԸ, ՈՐ ՊԱՏՄԵՑ ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ՊԱՓՆՈՏԻՈՍԸ

Առաջին անապատական սուրբերից է Հայր Ոնոփրիոսը, որը վաթսուն տարի ապրել է անապատում, միայնակ՝ իբրեւ կերակուր ունենալով Աստուծոյ շնորհները եւ մեծամեծ ճգնութեամբ պատերազմելով բանսարկուի փորձութիւնների դէմ։ Սուրբի վարքը մեզ հասել է Հայր Պափնոտիոսի թողած պատմութեամբ՝ այն անապատական սուրբ ճգնաւորի, որ արժանացաւ տեսնելու սուրբ Ոնոփրիոսին եւ վախճանից յետոյ ամփոփելու նրա սուրբ նշխարները։ Արդ, ներկայացնում ենք սուրբի վարքը Հայր Պափնոտիոսի թողած պատմութեամբ։

«Մի օր փութացի գնալ անապատի խորքը՝ տեսնելու՝ կա՞յ արդեօք Աստծուն ծառայող որեւէ եղբայր։ Զորս օր առանց հաց ու ջուր ճաշակելու գնալով գտայ մի փոքրիկ այր եւ բախեցի դուռը՝ յուսալով, որ միայնակեաց է բնակւում այնտեղ։ Բազում ժամեր բախելով եւ պատասխան չստանալով բաց արի դուռը, մտայ ներս, եւ տեսայ նստած մէկին, մօտեցայ, ձեռք տուեցի հազուստին, նոյն պահին փոշի դարձաւ ձեռքիս մէջ։ Այնժամ հանեցի հանդերձս, ծածկեցի վախճանուածի մարմինը, հողը ձեռքով յօժարութեամբ փորեցի եւ աղօթքներով ու արտասուքով ամփոփոցի նրա նշխարները։ Ելնելով այնտեղից՝ գնացի դէպի անապատի խորքը եւ տեսայ մի ուրիշ այր, այրի դռան մօտ՝ մարդու ոտնահետքեր։ Բախեցի դուռը եւ, ոչ մի ձայն չլսելով, մտայ ներս, բայց ոչ ոքի չգտայ։ Սպասեցի ամբողջ ցերեկ՝ անդադար աղօթելով ու սաղմոսներ երգելով։ Օրուայ վերջում տեսայ մի եղբօր, որ նախրի ետեւից էր գալիս։ Երբ մօտեցաւ, տեսայ նրան մերկանդամ, ամբողջ մարմինը մազերով ծածկուած, եւ հիացած տեղումս կանգնած մնացի, նա եւս զարմացած սկսեց աղօթել, քանզի, ինչպէս ինքը յետոյ պատմեց ինձ, այստեղ չար ոգիները փորձել էին իրեն։ Մօտեցայ նրան եւ ասացի. «Ինչո՞ւ ես երկնչում, Յիսուս Քրիստոսի՛ ծառայ, նայի՛ր եւ տե՛ս, որ մարդ եմ քեզ պէս, շօշափի՛ր եւ տե՛ս, որ մարմին ու արիւն եմ»։ Երբ ծանօթացաւ ինձ հետ, գոհացաւ Աստուծուց եւ աղօթեց, ապա ողջագուրուեցինք ու երկրպագեցինք Աստծուն։ Նա ընդունեց ինձ իր այրը՝ հարցնելով, թէ ինչպէս եկայ այստեղ։ Եւ պատմեցի նրան իմ խորհուրդները՝ ասելով. «Կամենում էի տեսնել Քրիստոսի ծառաներին, որ այս անապատում են, եւ Աստուած իմ խնդրանքներն ունայն չթողեց»։ «Իսկ դու, տէ՛ր, ինչպէ՞ս եկար այստեղ եւ քանի՞ տարի ես բնակւում անապատում եւ ի՞նչ պատճառով ես մերկանդամ, առանց հագուստի»։ Նա պատասխանեց. «Ես սկզբում բնակ-

ում էի Թեբայիդում, միայնակեացների վանքում եւ կտաւ էի գործում: Խորհեցի դուրս գալ այդ միաբանութիւնից եւ միայնանալ: Ինձ համար շինեցի մի փոքրիկ խուց եւ միայնացայ: Կտաւ էի գործում եւ ամբողջ ստացուածքս բաժանում աղքատներին, կարօտեալներին ու օտարներին: Բայց ամենաչարն ու բարիատեացը, արդարութեան Թշնամին, նախանձելով ինձ, կամեցաւ հեռացնել Աստուծոյ բարիքներից եւ, մտնելով մի միայնակ կնոջ միտքը, եկաւ ինձ մօտ եւ խնդրեց գործել իր կտաւը: Զար այսը ստիպեց նրան ինձ մօտ գալ բազում անգամներ, մինչեւ սովորութիւն դարձաւ, մերձաւորուեցինք եւ մնացինք չար մեղքի մէջ վեց ամիս: Դրանից յետոյ սկսեցի մտածել կեանքի վախճանի, յաւիտենական եւ մեծ դատաստանի, արտաքին խաւարի, գեհենում բորբոքուող անշէջ հրի, անքուն որդերին կերակուր լինելու մասին եւ ասացի ինքս ինձ. «Վա՛յ քեզ, ա՜նձ իմ, ինչպիսի՛ տիղմի մէջ Թաւալուեցիր եւ կորստեան դուռ բացեցիր քեզ համար, ի՞նչ պիտի անես հիմա եւ որպէ՞ս ազատուես: Լաւ է անապատ գնալ եւ փախչել մեղքերից»: Եւ նոյն պահին վեր կացայ, Թողեցի այն ամէնն, ինչ ունէի, եկայ, հասայ այս անապատը, գտայ այս այրը, այս աղբիւրն ու արմատնին, որն էլ իմ ապրուստն է, քանզի տարին տասներկու ողկոյզ է տալիս, ամէն ամիս՝ մէկ ողկոյզ, եւ այդ ողկոյզը բաւարարում է ինձ երեսուն օր, ապա միւսն է հասնում, եւ այսպէս կերակրւում եմ Աստուծոյ շնորհներով: Այս այրում ինձ համար ոչինչ չունեմ ոչ հաց եւ ոչ էլ հագուստ: Ահա երեսուն տարի այստեղ եմ, եւ երկնային ցօղը չպակասեց ինձ համար, իսկ հաց չեմ ճաշակել մինչեւ այսօր: Այս խօսքերը լսելով այդ արդար մարդուց, հարցրեցի. «Սկզբում, երբ այստեղ եկար, շա՞տ չարչարանքներ կրեցիր»: «Նախ յոյժ չարչարուեցի, ո՛վ եղբայր, բազում ողբերով ինձ գետնին էի գցում, կուրծք էի ծեծում եւ բնաւ չէի կարողանում գլուխս բարձրացնել կամ գետնի վրայ կանգնած աղօթել, այլ սրտիս յոյժ տրտմութեան պատճառով ընկնում եւ, գետնին Թաւալուելով, աղօթում էի՝ խնդրելով Աստուծոյ բարեգթութիւնը՝ սրտիս տագնապը փարատելու, մեղքերս քաւելու եւ անձս փրկելու համար: Երկար այսպիսի տանջանքների համբերեցի, մինչեւ մարմինս հիւանդացաւ: Մի օր լեարդիս անտանելի ցաւով նստած էի, երբ իմ առաջ կանգնած տեսայ մի փառաւոր այրի: Նա հարցրեց ինձ. «Ի՞նչ է պատահել, եւ ինչո՞ւ է սիրտդ տագնապած»: Այս խօսքերը լսելով՝ զօրացայ եւ ասացի ցաւիս մասին: Նա ձեռքը տարաւ, կողս պատռեց, լեարդս դուրս հանեց, վէրքը ցոյց տուեց, իր ձեռքով մաքրեց եւ, այն անարատ դարձնելով, տեղը դրեց: Ապա իր օրհնուած ձեռքով շօշափեց ամբողջ մարմինս, ողջացրեց պատռած կողս եւ ասաց. «Ահա ողջացար, այլեւս մի՛ մեղանչիր, որպէսզի չար ոչինչ չպատահի քեզ, այլ ծառայի՛ր Տիրոջն այսուհետեւ մինչեւ յաւիտեան»: Այն պահից ամբողջ մարմինս բժշկուեց, եւ լեարդիս ցաւը դադարեց: Եւ ես անարատ եմ այն օրից, օրհնում ու փառաբանում եմ Աստծուն Իր բազում գթութեան համար»: Երբ այս ամէնը պատմեց ինձ, աղաչեցի

թոյլ տալ գիշերը մնալ իր հետ, բայց նա ասաց. «Եղբա՛յր իմ, չե՛ս կարող բանսարկուի դէմ պատերազմել»: Ապա խնդրեցի ասել իր անունը: «Տիմոթէոս է իմ անունը: Յիշի՛ր ինձ եւ աղօթի՛ր ինձ համար, որ Աստուած ողորմի ինձ»: Իսկ ես, նրա ոտքերն ընկնելով խնդրեցի օրհնել ինձ եւ աղօթել ինձ համար: Եւ նա ասաց. «Մեր Տէր Յիսուս Քրիստոսը թող օրհնի՛ ու փրկի՛ քեզ բանսարկուի բոլոր որոգայթներից եւ ուղղի՛ քո ճանապարհներն ի խաղաղութիւն՝ հասնելու համար Իր սուրբերին, այժմ եւ յաւիտեան»: Երբ նրա օրհնութիւնն ու աղօթքները ստացայ, փառաւորեցի Աստծուն եւ ուրախութեամբ վերադարձայ իմ բնակավայրը:

Կրկին խորհուրդներս սկսեցին տարուբերել ինձ: Խիստ տրտմեցի՝ մտածելով, թէ ինչ է իմ կեանքը եւ վարքը: Եւ անձկալից փափագում էի այն աստուածահաճոյ արդար մարդու հետքով գնալ: Եւ մարդասէրն Աստուած իմաստութեան շնորհ ծագեցրեց իմ մէջ, եւ անհոգ չապրեցի իմ կեանքը: Դարձեալ վեր կացայ եւ ճանապարհ ընկայ դէպի անապատի խորքը՝ նորից իմանալու համար՝ կա՞յ արդեօք որեւէ մէկն անապատի խորքում, որ ծառայում է Աստծուն: Զորս օր գնալով եւ սպառելով կերակուրն ու ջուրը, որ վերցրել էի՝ յոյժ տրտմեցի, բայց նոյն պահին էլ զօրացայ՝ աչքիս առաջ մահը տեսնելով, եւ շարունակեցի ճանապարհս՝ Աստծուն ինձ օգնական ունենալով: Եւս չորս օր ամենեւին ոչինչ չճաշակելով, գնալով եւ շատ յոգնելով՝ նեղսրտեցի, քաղցից գետնին ընկայ եւ ինձ մեռած էի կարծում: Այնժամ տեսայ մի փառաւոր մարդու, որ ինձ էր մօտենում: Նա դեղ տուող ճարտար բժշկի պէս ձեռքերը դրեց շուրթերիս եւ զօրացրեց ինձ, կարծես ամենեւին քաղցած չէի: Երբ այս հրաշքը տեսայ եւ ահաւոր զօրութիւնը զգացի ինձ վրայ, մեծ ուրախութեամբ վեր կացայ եւ յօժարութեամբ շարունակեցի ճանապարհս: Կրկին գնալով չորս օր ու գիշեր՝ յոգնեցի, յոյժ տկարացայ եւ, ձեռքերս երկինք բարձրացնելով՝ աղօթեցի Աստծուն: Կրկին տեսայ այն փառաւոր այրին, որ իր մատներով օծեց շուրթերս: Կրկին նրանից մեծ զօրութիւն ստացայ եւ ճանապարհս շարունակեցի: Եւ ահա հեռուից տեսայ մի մարդու՝ յոյժ ահաւոր տեսքով, նրա գլխի մազերն այնքան շատ էին, որ ծածկել էին ողջ մարմինը, ահաւոր դէմք ունէր, զգեստից մերկ էր եւ մէջքին կապել էր բանջարի տերեւ: Երբ մօտեցաւ ինձ, սարսափը պատեց ինձ. կարծեցի՝ մարդակերպ գազան է, եւ ընթացայ դէպի լեռան ստորոտը, ապա ելայ լեռն ի վեր մի բարձր տեղ: Իսկ նա, երբ հասաւ լեռան ստորոտին, մեկնուեց քարի հովանու տակ, որովհետեւ խիստ տկարացել էր ծերութիւնից ու կերակրի պակասից, տօթից ու խորշակից, բազում չարչարանքներից, որ կրել էր անապատում: Նայելով վերեւ եւ տեսնելով ինձ՝ ձայնեց. «Իջի՛ր ինձ մօտ, ո՛վ սրբասնեալ այրդ, ես էլ քո պէս մարդ եմ եւ յանուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի այս անապատում բնակուող»: Երբ սուրբ ծերունուց լսեցի այս խօսքերը, յօժարութեամբ իջայ եւ նրա ոտքերն ընկայ: Եւ ասաց. «Վե՛ր կաց, որդեա՛կ իմ, քանզի դու եւս Աստուծոյ ծառայ

ես եւ սուրբերին՝ սիրելի»։ Եւ երբ աղօթելով վեր կացայ եւ արժանացայ նրա դիմաց նստելուն, սկսեցի խօսել նրա հետ, հարցրեց աշխարհի ու եղբայրների մասին, իսկ ես աղաչեցի նրան հէնց այդտեղ պատմել իր մասին (քանզի ծարաւի էի լսելու նրա սուրբ վարքը՝ յագեցնելու իմ փափագը եւ մխիթարուելու բազում չարչարանքներից)։ Եւ երբ շատ խնդրեցի ասել իր անունը եւ իր կեանքի ու վարքի մասին, ասաց. «Ամէն ինչ կպատմեմ քեզ, որդե՛կ. Ոնոփրիոս է իմ անունը, վաթսուն տարի է, ինչ բնակւում եմ անապատում կերակրուելով Աստուծոյ շնորհներով։ Ամենեւին մարդ չեմ տեսել, քեզանից բացի, եղբա՛յր։ Նախքան իմ այստեղ գալը բնակւում էի մի պատուական վանքում, որ կոչւում էր Եռմիպալիտացուց, որտեղ մօտ հարիւր եղբայրներ էին բնակւում մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաղաղութեամբ, իրար համախոհ ու համակրօն, Աստուծոյ սիրոյ մէջ կատարեալ եւ բազում չարչարանքներով ճգնում էին՝ փառաւորելով Աստուծոյ բարերարութիւնը։ Մինչեւ կատարեալ հասակը մնացի այստեղ՝ սուրբ հայրերից սովորելով աստուածասիրութիւն, ճշմարիտ հաւատք եւ բարեպաշտութեան կանոնական աղօթքներ։ Այս ամէնը սովորելով եւ կատարելով սուրբ հայրերից լսեցի մեր սուրբ հայր Եղիա մարգարէի մասին, որ, Աստծուց զօրանալով, հաճոյ եղաւ Նրան իր համբերութեամբ, աղօթքներով ու պահքով, որ կրեց անապատում, եւ վեր բարձրացաւ։ Դարձեալ լսեցի սուրբ կարապետ Յովհաննէսի մասին, որին երբեւէ ոչ ոք չնմանուեց եւ նրա պէս չապրեց անապատում, մինչեւ Իսրայէլին երեւալու օրը։ Իսկ ես վիճաբանում էի վանքի սուրբ հայրերի հետ եւ ասում նրանց. «Ինչո՞ւ են անապատում բնակուողներն առաւել վեր Աստուծոյ մօտ, քան մենք»։ «Այո՛, որդե՛կ,— պատասխանում էին նրանք,— առաւել վեր են նրանք, քան մենք, քանզի մենք, յարաժամ տեսնելով միմեանց, մխիթարւում ենք միմեանցով, իրար օգնում հիւանդութեան ու նեղութիւնների ժամանակ, իսկ նրանք զուրկ են այս ամենից։ Նեղութիւնների ու թշնամու որոգայթների դէմ պատերազմի ժամանակ նրանք որտեղի՞ց գտնեն մէկին, որ իրենց զօրացնի Աստուծոյ խօսքով կամ Աստուծոյ սիրով մխիթարի։ Նրանք սկզբում շատ են չարչարւում, երբ խորհում են ապրել անապատում եւ, իրենց անձերը ճգնութեան տալով, ծառայել Աստծուն։ Յօժարում են համբերութեամբ տանել քաղցը, ծարաւը, ջանում յաղթահարել բանսարկուի դէմ գաղտնի պատերազմը եւ գնում են դէպի Տէրը տանող նեղ ու անձուկ բոլոր ճանապարհներով։ Իսկ թշնամին բոլոր հնարքներով փորձում է խափանել ու ետ դարձնել նրանց բարու ճանապարհից, որ չմնան ճգնութեան չարչարանքների մէջ եւ մարմնից ելնելուց յետոյ չստանան Աստուծոյ մեծամեծ պարգեւները։ Որովհետեւ ովքեր իմաստութեամբ համբերում են ճգնութեան նեղութիւններին, Տիրոջ գթութիւնն է հասնում հաստատելու նրանց, որ համբերեցին Իր համար։ Նա Ինքն Իր սուրբ հրեշտակների ձեռքով առաջում է նրանց պէտքերը եւ քարից ջուր բխեցնում։ Ինչպէս Եսայի մարգարէն սովորեցնում է նրանք, որ համբերում

են Տիրոջ համար, լցւում են բարութեամբ եւ թեւեր են առնում, վեր բարձրանում արծուի պէս, գնում եւ չեն քաղցում, ընթանում եւ չեն յոգնում։ Եւ դարձեալ ասում է. «Ծարաւեցի, եւ քարից ջուր բխեցրեց, անապատում մեղրի խորսխի պէս քաղցր բանջար բուսցրեց»։ Իսկ չարի ու թշնամու դէմ մարտի ժամանակ, երբ ձեռքերը դէպի Տէրն են բարձրացնում են՝ աղաղակելով ու աղաչելով, Տիրոջից շուտափոյթ օգնութիւն է առաքւում նրանց, փորձութիւնները փարատւում ու ցրւում են նրանց ճշմարիտ հաւատքի ու սուրբ սրտի պատճառով։ Զէ՞ որ գրուած է, թէ Աստուած չի մոռանում տնանկին, եւ աղքատների համբերութիւնը յաւիտեան չի կորչում։ Եւ դարձեալ ասում է. «Աստուած Իր երկիւղածների կամքն է կատարում, նրանց աղօթքները լսում եւ նրանց փրկում բոլոր նեղութիւններից։ Քանզի Աստուած հատուցում է իւրաքանչիւրին ըստ իր գործերի եւ՝ ըստ աշխատութեան նրանց, ովքեր համբերում են Իր համար։ Արդ, երանի՜ նրանց, որ կատարում են Աստուծոյ կամքը երկրի վրայ, քանզի հրեշտակները ցնծութեամբ եւ ուրախութեամբ սպասաւորում եւ զօրացնում են նրանց ամբողջ ժամանակ, մինչ մարմնի մէջ են գտնւում»։ Եւ՝ տառապեալ Ոնոփրիոս, վանքի սուրբ հայրերից այս ամէնը լսեցի, սովորեցի, եւ սիրտս ու հոգիս քաղցրութեամբ լցուեցին, ինչպէս մեղրի խորիսխ։ Մի գիշեր էլ մեծ յօժարութեամբ վեր կացայ, վերցրի մի քիչ հաց ու ջուր, որ բաւական կլինէր ինձ չորս օր, եւ փութացի այնտեղ, ուր Տէրն, ըստ Իր մարդասիրութեամբ, կամեցաւ բնակեցնել ինձ։ Ճանապարհ ընկայ դէպի անապատ, որի մուտքի մօտ տեսայ մի մեծ լոյս։ Այնքան վախեցայ, որ մտածեցի ետ դառնալ, բայց Տէրն առաջնորդեց ինձ ըստ Իր խնամածութեան, եւ, մինչ վախենում էի, երեւաց ինձ մի փառաւոր մարդ եւ մօտենալով ասաց. «Մի՛ երկնչիր, ես Տիրոջ հրեշտակն եմ եւ քո պահապանը մանկութիւնից սկսած։ Այն պարգեւները, որոնց արժանացար Տիրոջից՝ այդ ճանապարհով ընթանալու համար, կկատարուեն»։ Այս լսելուց յետոյ 6 կամ 7 մղոն ճանապարհ գնալով՝ հասայ անապատ, տեսայ մի փոքրիկ քարայր, բաց արի դուռը՝ ասելով. «Օրհնի՛ր, տէ՛ր»,— ըստ քրիստոսասէր եղբայրների սովորութեան։ Եւ այնտեղից դուրս եկաւ մի պատուական, յոյժ գեղեցիկ, դէմքն Աստուծոյ շնորհներով պայծառացած ալեւոր։ Նրա ոտքերն ընկայ, երկրպագեցի նրան, իսկ նա իր ձեռքերով ինձ բարձրացրեց, ողջունեց եւ ասաց. «Դո՞ւ ես իմ Ոնոփրիոս եղբայրը եւ իմ գործակիցն ի Տէր։ Մտի՛ր, որդե՛կ, Աստուած թող օգնական լինի քեզ եւ մնա՛ բարութեամբ, ինչպէս կանչուեցիր Տիրոջից՝ ծառայելու Նրան՝ ըստ Նրա երկիւղի»։ Եւ մնացի նրա մօտ մի քանի օր, փութացի սովորել կրօնի սուրբ գործերը։ Եւ նա սովորեցրեց ինձ միայնակեացների վարքը։ Երբ երանելին տեսաւ, որ հոգիս լուսաւորուեց՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի հաւատքի բարեպաշտութեան գործն ինձ ուսուցանելով, եւ կարող եմ ընդդիմանալ բանսարկուի գաղտնի պատերազմին եւ անապատի երկիւղին, ասաց ինձ. «Տանեմ քեզ անապատի խորքը, որպէսզի բնակուես մի այրի մէջ՝

առանձին կրելու համար քո աշխատութիւնը, քանզի, ըստ նախախնամութեան, դրա համար առաքուեցիր Աստծուց»։ Եւ վեր կացանք, չորս օր ու գիշեր գնացինք անապատի խորքը եւ հասանք մի փոքր խցի, որի մօտ մի արմաւենի կար։ Եւ պատուական այրն ասաց. «Ահա սա՛ է տեղը, որ մարդասէրն Աստուած պատրաստեց քեզ համար»։ Նա մնաց ինձ մօտ երեսուն օր՝ սովորեցնելով ինձ բարի գործերի կարգը, ապա ողջոյն տուեցինք իրար, եւ նա վերադարձաւ իր տեղը։ Այնուհետեւ մինչեւ երանելու այս կեանքից փոխուելը, ամէն տարի, հանդիպում էինք։

Երբ սուրբ Հայր Ոնփրիոսն այս ամէնն ինձ պատմեց, տառապեալ Պափնոտիոսս հարցրի նրան. «Պատուական Հայր, շա՞տ աշխատութիւն կրեցիր սկզբում»։ «Հաւատա՛ ինձ, որ այնչափ աշխատութիւն կրեցի բազում ժամանակ, մինչեւ յոյսս կտրեցի իմ կեանքից, քանզի բազում անգամ հասայ մահուան դուռը՝ քաղցից ու ծարաւից, տապից ու խորշակից, ցրտից ու դմնդակ անձրեւներից։ Իսկ բարերարն Աստուած, երբ տեսաւ իմ այսպիսի համբերութիւնը, աղօթքներն ու ճգնութիւնները, Իր սուրբ հրեշտակին հրամայեց սպասաւորել ինձ, եւ հրեշտակն ամէն օր չափաւոր ջուր ու կերակուր էր բերում ինձ։ Իսկ արմաւենու պտուղներն ու անապատի բանջարն առաւել քաղցր էին լինում, քան մեղրի խորիսխը։ Եթէ կատարես Աստուծոյ կամքը, ո՛վ Պափնոտիոս, կընդունես Նրա օգնութիւնը, քանզի սուրբ Աւետարանում ասւում է. «Մի՛ հոգացէք, թէ ինչ էք ուտելու կամ խմելու, քանզի ձեր Տէրը եւ երկնաւոր Հայրը գիտի ձեր պէտքերն ու կարիքները, այլ խնդրեցէ՛ք նախ Աստուծոյ արքայութիւնը եւ արդարութիւնը, եւ այդ ամէնն աւելցուկով կտրուի ձեզ»։ Այս խօսքերը լսելով երանելի Ոնփրիոսից՝ շատ զարմացայ եւ հարցրի, թէ որտեղի՞ց էր հաղորդութիւն վերցնում շաբաթ եւ կիրակի օրերին։ Նա պատասխանեց. «Որդե՛կ, բարերար Տիրոջ հրեշտակը աստուածային խորհուրդներով սպասաւորում է ոչ միայն ինձ, այլեւ՝ բոլոր նրանց, ովքեր իր համար բնակւում են այս անապատում, հաղորդեցնում է եւ ուրախութեամբ լցնում բոլորին։ Եթէ նրանցից մէկը կարօտում է մարդկանց, բարձրացնում է նրան երկինք, որպէսզի տեսնի սուրբերին եւ ողջունի նրանց, եւ նրա հոգին պայծառանում է ինչպէս լոյս, հոգով ու մարմնով ուրախանում է, յոյժ բերկրում եւ ցնծում, մոռանում անապատում կրած բոլոր չարչարանքները՝ արժանանալով բարիքին, որ չի սպառւում յաւիտեան։ Ապա վերադարձնում է նրան իր տեղը, ուր մեծ ուրախութեամբ մնում եւ իր կեանքի բոլոր օրերին ճգնում է մեծ յօժարութեամբ՝ մտածելով, որ փոխուելու է այն աշխարհը եւ ընդունելու այն պարգեւները, որոնք տեսաւ իր աչքով, եւ ամենեւին էլ չի մտածում, որ այս կեանքում է»։ Սուրբ Հայր Ոնփրիոսն այս ամենը պատմեց ինձ, երբ նստած էինք լեռան ստորոտում, որտեղ հանդիպել էի նրան։ Երբ այս ամէնը լսեցի, մեծ ուրախութեամբ լցուեցի, կրածս չարչարանքները հեռացան ինձանից, քաղցն ու ծարաւը ոչինչ համարեցի, յոյժ զօրացայ հոգով ու մարմնով եւ, բազում ցնծութեամբ լցուած, ասացի նրան. «Ո՛վ պատուական Հայր, երանի՛ է ինձ, որ արժանի դարձայ տեսնելու քեզ եւ քեզանից լսելու այսպիսի բարի ու քաղցր խօսքեր, որ փրկութեան առիթ դարձան ինձ»։ Եւ, ոչ սակաւ զարմանալով, սքանչանում էի նրա փառահեղ տեսքով։ Նա ասաց ինձ. «Որդե՛կ, այժմ գնանք միասին»։ Երբ գնացինք երկու կամ երեք մղոն, հասանք մի փոքր խցի դուռն, որի մօտ մի արմաւենի կար, միասին աղօթեցինք, նստեցինք ու իրար պատմեցինք Աստուծոյ բարերարութեան մասին։ Երեկոյեան մտանք խուց եւ տեսանք մի նկանակ հաց ու սակաւ ջուր։ Միասին ճաշակեցինք եւ, գոհանալով Աստծուց, ամբողջ գիշեր աղօթեցինք։ Լուսաբացին աղօթքի ժամանակ տեսայ, որ նրա դէմքը պայծառացաւ ինչպէս արեգակ, կերպարանքն այլափոխուեց եւ դարձաւ Աստուծոյ Հրեշտակի։ Այս տեսնելով՝ յոյժ երկիւղեցի, իսկ նա իմացաւ եւ ասաց. «Մի՛ երկնչիր, եղբա՛յր Պափնոտիէ, քանզի զթած ու մարդասէրն Աստուած քեզ առաքեց ինձ մօտ՝ ամփոփելու համար մարմնիս նշխարները, քանզի այսօր ահա իմ ճգնութիւնն աւարտւում է ի Տէր՝ ի հանգիստ յաւիտենական։ Այսօր եգիպտացիների Պունի ամսի 16-ն է, ըստ յունականի՝ յունիսի 12-ը։ Դարձեալ պատուիրեց ինձ ու ասաց. «Եթէ ելնելու լինես եգիպտացիների երկիրը, եղբայրների ու հաւատացեալների մէջ անուշահոտ խունկով քարոզի՛ր իմ յիշատակը, քանզի եթէ եղբայրներից կամ հաւատացեալներից որեւէ մէկն իմ անուամբ պատարագ մատուցի, Տէրը նրան առաջինների մէջ կհամարի, քանզի սրանք են իմ խնդրանքները։ Եւ եթէ մէկը կերակրի որեւէ եղբօր իմ անունով, կյիշեմ նրան Աստուծոյ առաջ»։ Եւ ես պատասխանելով ասացի նրան. «Եթէ մէկն աղքատ է եւ չի կարող պատարագ մատուցել կամ կերակրել որեւէ եղբօր քո յիշատակի օրը, այդպիսին չի՞ լինի առաջինների մէջ»։ Եւ նա ասաց. «Եթէ Տիրոջը մի քիչ խունկ զցի իմ անունով իբրեւ անուշահոտութիւն, կարժանանայ նոյնպիսի ուրախութեան»։ Համարձակուեցի այս եւս հարցնել նրան. «Եթէ մէկը բնակւում է անապատում եւ չի կարող խունկ գտնել եւ մատուցել Տիրոջն իբրեւ անուշահոտութիւն, այնպիսին չի՞ համարուի առաջինների մէջ։ Հա՛յր պատուական, աղաչում եմ, որ քո արդար աղօթքը բոլորին հասնի, քանզի գիտեմ՝ ինչ որ խնդրես Աստծուց, կտայ քեզ, եւ քո խնդրանքներն ընդունայն չեն մնայ քո հանապազօրեայ անդադար աղօթքների, Տիրոջը վաթսուն տարի համբերութեամբ ծառայելու եւ այս անապատում բնակուելու համար»։ Իսկ նա ինձ ասաց. «Եթէ մէկն աղքատ է, բնակւում է անապատում եւ չի կարող պատարագ անել կամ խունկ մատուցել, այնպիսին թող ասի «Հայր մերը»՝ իմ անունով մատուցելով Տիրոջը, եւ ես կյիշեմ նրան՝ աղօթելով նրա համար, որ արժանանայ Տիրոջ ողորմութեանը եւ արդարների հետ ժառանգի վարձքը»։ Եւ դարձեալ հարցրի նրան, թէ՝ արժանի՞ եմ այստեղ բնակուելու իմ սրտի յօժարութեամբ նրա՝ մարմնից ելնելուց յետոյ։ Նա ասաց ինձ. «Դու դրա համա՛ր չեկար։ Այլ գնա՛, Աստուած առաքեց քեզ, որպէսզի փառաւորես Իր

սուրբերին՝ այս անապատում բնակուողներին, նրանց վարքի բուրմունքը քարոզես աստուածասէր եղբայրների մէջ՝ յօգուտ եւ ի փառաբանութիւն լսող Հաւատացեալների։ Արդ, գնա՛ Եգիպտոս, որդեա՛կ, մնա՛ այնտեղ՝ Տիրոջը ծառայելով բարի գործերով եւ քարոզի՛ր այն ամէնն, ինչ տեսար անապատում»։ Այս լսելով՝ նրա ոտքերն ընկայ եւ ասացի. «Աղաչում եմ քեզ, պատուական՝ Հայր, օրհնի՛ր ինձ, որ ողորմութիւն գտնեմ Աստուծոյ առաջ, եւ ինչպէս Փրկիչն արժանացրեց ինձ այս աշխարհում տեսնելու ու երկրպագելու քեզ, արժանի դարձնի նաեւ հանդերձեալում հանդիպելու քեզ»։ Եւ նա ասաց. «Պափնոտիէ՛, որդեա՛կ, թող Տէրն ընդունայն չթողնի քո խնդրանքները, այլ թող օրհնի՛ քեզ, հաստատի՛ Իր սիրոյ մէջ, թող լուսաւորի՛ քո միտքն Իր Աստուածութեան լոյսով, թող փրկի՛ քեզ ապականութիւնից, թշնամու որոգայթներից եւ թող պահպանի՛ քեզ իր հրեշտակներով՝ օգնելով քեզ բանսարկու թշնամու դէմ բոլոր մարտերում, եւ ոչինչ թող չգտնի յանդիմանելու քեզ ահեղ ժամին, երբ կանգնես Իր առաջ եւ պատասխան տաս բոլոր արարքներիդ համար»։ Ապա երանելին վեր կացաւ, արտասուքով, բազում հեծեծանքներով աղօթեց Աստծուն եւ խոնարհեցրեց իր անձը գետնին եւ, մեծ ուրախութեամբ աւանդելով իր սուրբ հոգին Աստուծոյ ձեռքը՝ վախճանուեց ի Տէր։ Նոյն պահին լսեցի սուրբ հրեշտակների ձայներ, որ բարձրաձայն օրհնում էին Աստծուն՝ գնալով Մոփրիոսի հոգու առջեւից։ Եւ մեծ ուրախութիւն եղաւ Աստուծոյ առաջ նրա հոգու հանդիպման ժամին։ Ես աղաբողոնս* հանեցի, երկու մասին բաժանեցի, մի մասով ծածկեցի սուրբ մարմինը, միւսը վրաս գցեցի, որ մերկ չմնամ։ Գտայ գերեզմանի պէս փորուած մի վէմ, սուրբի մարմինը դրեցի մէջը, հաւաքեցի մեծամեծ քարեր եւ ծածկեցի նրա սուրբ նշխարները։ Ապա աղօթքով խնդրեցի Տիրոջը մնալ այդտեղ, բայց նոյն պահին տեսայ սուրբի խուցը կործանուած, եւ արմաւենին, որից սուրբը սնւում էր՝ ընկած։ Յոյժ զարմացայ եւ հասկացայ Աստուծոյ կամքը։ Ճաշակեցի մնացած հացն ու ջուրը եւ, ձեռքերս երկինք բարձրացնելով, աղօթեցի։ Տեսայ, որ ինձ մօտ է գալիս այն մարդը, որին տեսայ, երբ անապատ էի գալիս։ Նա զօրացրեց եւ մխիթարեց ինձ՝ ասելով. «Առաւե՛լ երանելի եղար, քանզի սուրբ Մոփրիոսի վախճանին հանդիպեցիր»։ Կրկին լցուեցի ուրախութեամբ, քանզի նրա սուրբ բերանից օրհնութիւն ստացայ։ Զորս օր գնալով՝ հասանք մի խցի, որ մի բարձրավանդակ տեղում էր շինուած։ Ներս մտնելով եւ ոչ ոքի չգտնելով՝ նստեցի դռան մօտ՝ խորհելով, թէ որեւէ մէկն արդեօք բնակո՞ւմ է այստեղ։ Մինչդեռ այս էի խորհում, եկաւ մի սուրբ ու պատուական մարդ, սքանչելի ու վայելուչ տեսքով, արմաւենու տերեւներից հիւսուած հագուստով։ Երբ ինձ տեսաւ,

* աղաբողոնս— թիկնոց, մեկնոց, փիլոն. կրօնաւորի զգեստ

խօսեց եւ ասաց. «Դո՞ւ ես Պափնոտիոս եղբայրը, որ ամփոփեցիր մեր երանելի Հայր Մոփրիոսի մարմինը»։ Եւ ես իմացայ, որ նա Հրեշտակի միջոցով է այդ իմացել, նրա ոտքերն ընկայ եւ երկրպագեցի նրան։ «Վե՛ր կաց, եղբա՛յր,— ասաց նա ինձ,— քանզի Աստուած արժանացրեց քեզ բարեկամ լինել սուրբերին ու Իր ծառաներին։ Եւ ահա Նրա նախախնամութիւնն այսօր ինձ ծանուցեց քո գալուստը, որպէսզի յայտնեմ քեզ մեր վարքի գործերի մասին, քանզի վաթսուն տարի է, ինչ բնակւում ենք այս անապատում եւ բնաւ մարդ չենք տեսել»։ Մինչդեռ խօսում էինք, երեք սուրբ ու պատուական անձինք եկան մեզ մօտ եւ, խօսելով ինձ հետ, ասացին. «Օրհնի՛ր, տէ՛ր, դո՞ւ ես Պափնոտիոսը՝ մեր եղբայրն ու գործակիցն ի Տէր, որ ամփոփեցիր սուրբ Մոփրիոսի պատուական ու սուրբ մարմինը։ Թողութի՛ւն արա, եղբա՛յր, քանզի մեծամեծ շնորհների ու փառքի արժանացար, եւ Տէրն Իր ողորմածութեամբ իմացրեց մեզ քո՝ մեզ մօտ գալը եւ հրամայեց քեզ մնալ մեզ մօտ մի օր։ Վաթսուն տարի այս անապատում բնակուելով՝ քեզանից բացի ոչ ոքի չենք տեսել այստեղ»։ Եւ մօտ երկու ժամ խօսեցինք Հայր Մոփրիոսի եւ այլ սուրբերի մասին։ Ապա միասին աղօթեցինք Աստծուն եւ տեսանք մեր առաջ հինգ գեղեցիկ, փափուկ ու ջերմ, կարծես հէնց նոր եփուած նկանակ։ Միասին ճաշակեցինք, եւ նրանք ասացին, որ ամէն օր Տիրոջ հրամանով իրենց կերակուրը, նաւթուում երկնքից, օրական՝ 4–5 նկանակ, իսկ այժմ նկանակների թիւն ինձ համար աւելացաւ։ «Զգիտենք՝ որտեղի՞ց է գալիս եւ ո՞ւր պատրաստում, բայց երբ մտնում ենք այրը, գտնում ենք այն Տիրոջից պատրաստուած, որով կերակրւում ենք եւ գոհանում Տիրոջից»։ Եւ ամբողջ գիշեր աղօթեցինք՝ կատարելով կարգը, քանզի լոյս կերակի էր։ Ապա աղաչեցի նրանց՝ մնալու իրենց մօտ մինչեւ իմ կեանքի վախճանը։ Եւ նրանք ասացին ինձ. «Տէրը չի հրամայել քեզ այս անապատում մնալ կամ բնակուել մեզ հետ։ Պէտք է գնաս Եգիպտոս եւ պատմես քրիստոսասէր եղբայրներին այն ամէնն, ինչ տեսար մեր եւ երանելի Հայր Մոփրիոսի մասին՝ յօգուտ լսողների»։ Ապա խնդրեցի նրանց ասել իրենց անունները, բայց նրանք չհամաձայնեցին՝ ասելով. «Նա, ով բոլորին գիտեցողն է, գիտի մեր անունները, իսկ դու, եղբա՛յր, յիշի՛ր մեզ, որ արժանի լինենք տեսնելու միմեանց կենդանի Աստուծոյ գաթում։ Փութա՛, սիրելի՛ որդեակ, փախչել կեանքի փորձութիւններից»։ Այս ասելով՝ նրանց ոտքերն ընկայ, նրանց օրհնութիւնը ստացայ եւ Աստուծոյ խաղաղութեամբ գնացի։

Աւելի խորը անապատ գնալով՝ տեսայ մի աղբիւր, որից յորդաբուխ ջուր էր բխում, իսկ շուրջը պտղաբեր ծառեր կային։ Երբ մի քիչ հանգըստացայ, մտայ ծառերի մէջ՝ տեսնելու այդ սքանչելի այգին։ Նրանց պտղաբերութիւնը յոյժ զարմացրեց ինձ, արմաւ եւ թուրինջ, նուռ եւ թութ, դեղձ եւ յունապ եւ բազում այլ պէսպէս պտղաբեր ծառեր [illegible] մեղրի պէս քաղցը պտուղներով, նրանց հետ՝ նաեւ մուրտ եւ այլ բազմաթիւ բոյսեր, որոնք

ցից անուշահոտութիւն էր բուրում։ Կարծում էի, թէ այդ Աստուծոյ դրախտն է։ Մինչդեռ հիացած ու զարմացած էի տեղի գեղեցկութեամբ, տեսայ չորս գեղեցիկ ու վայելուչ մանուկների, որ գալիս էին դէպի ինձ։ Նրանք իրենց վրայ զգած ունէին ոչխարի մորթիներ, խիստ փառաւոր տեսք ունէին, մտածեցի, թէ հրեշտակներ են։ Երբ մօտեցան, ասացին. «Ո՞ղջ եղիր, եղբա՛յր Պափնոտիէ»։ Իսկ ես երեսի վրայ ընկայ եւ երկրպագեցի։ Նրանք ոտքի կանգնեցրին ինձ, իրար մօտ նստեցինք եւ խօսեցինք։ Ապա բերեցին այգու պտուղներից, եւ սիրտս յոյժ բերկրեց այնպիսի աստուածային սիրոյ եւ իմ հանդէպ նրանց խնամքի համար։ Եօթ օր մնացի նրանց մօտ՝ կերակրուելով այգու պտուղներով։ Հարցրի նրանց. «Ինչպէ՞ս եկաք այստեղ եւ ո՞ր գաւառից էք»։ Նրանք ասացին. «Եղբա՛յր, մենք Ոքսիրինքոս քաղաքից ենք, մեր ծնողները քաղաքի խորհրդականներն էին եւ ուսուցանում էին մեզ իրենց գիտութիւնն ու ուսմունքը։ Եւ մեզ միասին ուսման տուեցին, սովորեցինք ու աւարտեցինք կեանքի իմաստութեան սնոտի գիտութիւնը։ Սկսեցինք ուսանել նաեւ Քրիստոս Աստուծոյ բարձրագոյն իմաստութիւնը եւ համախոհ եղանք իրար, եւ Տէրն օգնական էր մեզ ի բարին։ Ապա խորհեցինք սովորել նաեւ կրօնաւորութեան կարգը։ Գնացինք անապատ՝ փութալով տեղ գտնել մեզ համար, մի քանի օր մնացինք, մինչեւ իմացանք, թէ Աստուծոյ նախախնամութեամբ ինչ է սահմանուած մեզ։ Քիչ հաց ու ջուր մեզ հետ վերցնելով, որ բաւական էր եօթ օր՝ գնացինք անապատի խորքը եւ տեսանք մի փառաւոր մարդու, որ բռնեց մեր ձեռքից եւ այստեղ բերեց՝ յանձնելով մի Աստուծոյ ծառայ ծերունու, որպէսզի սովորեցնի մեզ աստուածպաշտութեան բոլոր կանոններն ու Աստծուն ծառայելը։ Այն սուրբ մարդը տարուայ վերջում բարի վարքով վախճանուեց ի Քրիստոս։ Այնուհետեւ մենակ մնացինք։ Ահա, սիրելի՛ եղբայր, վեց տարի այստեղ ենք եւ չենք ճաշակել հաց կամ այլ կերակուր, բայց՝ միայն այս այգու պտուղները։ Եւ շաբաթը մի անգամ ենք տեսնում միմեանց։ Հաւաքւում ենք այստեղ շաբաթ եւ կիրակի օրերին, երկու օր անց իւրաքանչիւրս գնում է իր տեղը եւ փառաւորում Աստծուն»։ Հարցրի նրանց. «Ինչպէ՞ս էք հաղորդւում շաբաթ եւ կիրակի օրերին»։ «Դրա համար ենք հաւաքւում այստեղ, քանզի լուսոյ հրեշտակը Տիրոջից ուղարկւում է մեզ մօտ եւ հաղորդեցնում սուրբ Խորհրդին»։ Եւ, յոյժ ուրախացած, սիրտս բերկրեց։ Երբ այս լսեցի եւ փափագում էի այն երանութիւնը տեսնելու։ Եօթ օր անց, շաբաթ օրը, երանելիներն ասացին ինձ. «Պատրաստի՛ր քո անձը, քանզի այսօր Տիրոջ հրեշտակն է գալու եւ տալու է մեզ անապական ու սուրբ կենարար Խորհուրդը։ Եւ ով այն ընդունի նրա ձեռքից, կպահպանուի թշնամուց, եւ նրա բոլոր մեղքերը կներուեն, դրանից յետոյ նա չի փորձուի թշնամու մեքենայութիւններից։ Մինչդեռ նրանք այս էին ասում, խունկի անուշաբոյրը տարածուեց, զարմացայ, քանզի մինչ այդ խունկի այդպիսի անուշ բոյր չէի զգացել։ Այդ պահին վեր կացանք, սաղմոսներով աղօթք արեցինք՝ բարեբանելով մեր

թագաւորին՝ Քրիստոսին, մինչեւ իններորդ ժամը։ Եւ Տիրոջ հրեշտակը եկաւ մեզ մօտ եւ արժանացրեց մեզ ընդունելու մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի Մարմնի ու Արեան կենարար սուրբ Խորհուրդը։ Հաղորդութիւնից յետոյ օրհնուեցինք փառաւոր հրեշտակից, եւ նա մեր առաջ բարձրացաւ երկինք։ Այսպիսի շնորհի արժանանալով՝ զարհուրեցի եւ բազում ժամեր ննջեցի։ Իսկ նրանք մօտեցան ինձ եւ ձայն տուեցին. «Վե՛ր կաց, եղբա՛յր, զօրացի՛ր եւ եղի՛ր զօրաւոր այր ի Տէր»։ Հազիւ վեր կացայ թմբիրից ու երկիւղից, որի մէջ ընկել էի խունկի առաւել անուշահոտութիւնից։ Դարձեալ ամբողջ գիշեր աղօթեցինք՝ փառաբանելով Տիրոջը, մինչեւ սուրբ կիրակի առաւօտ։ Երբ լոյսը բացուեց, դարձեալ խունկի նոյն անուշահոտը բուրեց, որից մեծ ուրախութեամբ լցուեցինք՝ զգալով մեզ կեանքի լոյսի մէջ։ Ապա Տիրոջ հրեշտակը եկաւ, մեզ մօտեցաւ եւ կրկին հաղորդեցրեց սուրբ Խորհրդին։ Եւ ես, զօրացած սրտով ու հոգով, ընդունեցի ահաւոր օրհնութիւնը եւ սուրբ Խորհուրդը նրա ձեռքից։ Օրհնեց մեզ եւ ասաց. «Տէր Յիսուս Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը թող լինի ձեզ իբրեւ անապական կենդանութեան կերակուր եւ փրկութիւն ի յաւիտենական կեանք»։ Ապա դարձաւ ինձ ու ասաց. «Խաղաղութեամբ գնա՛ Եգիպտոս եւ վարդապետի՛ր տեսածիդ մասին քրիստոսասէր եղբայրներին, որպէսզի նրանք եւս փութան սիրել, իրենց անձի մէջ ընդունեն բարի գործերը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուան համար։ Մանաւանդ, քարոզի՛ր սուրբ Մոփրիոսի մասին քեզ հրամայուածը, այն, որ Տէրն արժանացրեց քեզ նրան աշխարհում տեսնելու, երկրպագելու եւ ամփոփելու նրա սուրբ մարմինը։ Ահա սրա՛ համար դու կանչուեցիր Տիրոջից, օրհնուեցիր Նրանից ու սուրբերից եւ դասուեցիր նրանց շարքում»։ Ես թախանձեցի նրան թոյլ տալ ինձ բնակուել իրենց մօտ մինչեւ իմ կեանքի վախճանը, բայց նա ասաց. «Աստուած իւրաքանչիւրին հրամայեց բնակուել իր տեղում, ինչպէս հաճոյ է Իրեն, եւ բարի եւ ընդունելի են Տիրոջից հրամայուած բոլոր գործերը, եւ նրանք, ովքեր մտնում են Աստուծոյ գաւիթ, ստանում են հարիւրապատիկ իրենց վաստակների փոխարէն։ Արդ, գնա՛ Եգիպտոս, քանզի Տէրը հրամայեց ինձ առաքել քեզ այնտեղ»։ Այս ասելով՝ հրեշտակն օրհնեց մեզ եւ մեծ փառքով ու զօրութեամբ համբարձուեց երկինք, որ մեր աչքով տեսանք։ Նրանք դարձեալ այն պտուղներից բերեցին, որ միասին ճաշակեցինք, ապա անապատով վեց մղոն գնալուց յետոյ, միմեանց ողջոյն տալով, կամեցանք բաժանուել։ Ես աղաչեցի նրանց ասել իրենց անունները։ Անդրանիկի անունը Յովհաննէս էր, երկրորդինը՝ Անդրէաս, երրորդինը՝ Իռակլամոն, չորրորդինը՝ Փիլոթէոս։ Եւ պատուիրեցին ինձ իրենց մասին եղբայրներին պատմել իրենց յիշատակի համար։ Ես եւս աղաչեցի նրանց յիշել ինձ, եւ բաժանուեցինք։ Երբ տեսողութիւնիցս անհետացան, յոյժ տրտմեցի՝ գնալով իմ ճանապարհը՝ դեռեւս զարմացած տեսածս սքանչելիքներից։ Երեք օր անց հասայ Եգիպտոս եւ Հանդիպեցի աստուածասէր ու Տիրոջից երկիւ-

ղած եղբայրների։ Տան օր մնացի նրանց մօտ եւ պատմեցի տեսածիս մասին։ Նրանք ուրախութեամբ ասացին ինձ. «Եղբա՛յր Պափնոտիոս, արժանացար տեսնելու մեծ եւ կատարեալ սուրբերի եւ Աստուծոյ ծառաների»։ Եւ միայնակեաց եղբայրները փութով եւ յօժարութեամբ գրի առան սուրբ Հայրերի մասին ամբողջ պատմածս եւ վերցնելով շտապ տարան Սկիւթիա եւ բոլորի համար ընթերցեցին այդ պատմութիւնը՝ յօգուտ եւ յուրախութիւն բոլոր հաւատացեալ լսողների։ Ապա սուրբ Հայրերն այն եկեղեցի բերեցին եւ ամէն անգամ ընթերցելիս փառաւորում էին Աստծուն ու սուրբերին, քանզի գիրը լցուած էր հաւատքով, ցնծութեամբ եւ ուրախութեամբ եւ դէպի բարին էր ուղղում լսողների սրտերը։

Թող երանելի սուրբ ճգնաւոր Հայրերի ու սուրբերի բարեխօսութեամբ մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաղաղութիւնն ու ողորմութիւնը լինի ամենքի հետ։ Թարգմանուեց Հայոց ԵՄԹ (1110 թ.) թուին, Եգիպտոսում, ի փառս Ամենասուրբ Երրորդութեան։ Այս սուրբ պատմութեան թարգմանին՝ տէր Գրիգոր Հայոց կաթողիկոսին յիշեցէ՛ք ի Քրիստոս։

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՂԱԽԻՆ ԹԷՈԴՈՐԱՅԻ ՎԱՐՔԸ

Զենոն արքայի օրերին Ալեքսանդրիա քաղաքում ապրում էր Թէոդորա անունով մի յոյժ մեծատուն ու գեղեցիկ ամուսնացած կին։ Մի երիտասարդ՝ մեծանուն իշխանի որդի, ցանկացաւ Թէոդորային եւ շատ գանձեր ծախսեց միջնորդների վրայ, բայց, չկարողանալով կատարել իր ցանկութիւնը, գնաց մի կախարդ կնոջ մօտ, խոստացաւ շատ ոսկի ու արծաթ։ Եւ կախարդը երկար ժամանակ սատանայական գործակցութեամբ շատ ջանք թափեց, մինչեւ կարողացաւ խաբել Թէոդորային՝ ասելով, որ արեւամուտի ժամանակ Աստուած չգիտի մարդկանց գործերը, քանզի ոչ օր է, ոչ՝ գիշեր։ Թէոդորան այսպիսի պատրող խօսքերով խաբուեց եւ երիտասարդի հետ մեղքի մէջ ընկաւ։ Իսկ երբ տուն գնաց, խաբէութիւնը հակացաւ, զղջաց եւ սկսեց դառն արտասուքով ողբալ։ Ամուսինը հարցրեց նրան. «Ի՞նչ պատահեց քեզ, ինչո՞ւ ես լաց ու կոծ անում եւ այդպէս ողբում։ Ես կենդանի եմ, եւ քեզ պակաս ոչինչ չկայ»։ Թէոդորան ասաց. «Վա՛յ ինձ, որ կորցրեցի պարկեշտութեանս զգաստութիւնը։ Վա՛յ թշուառիս, որ չարիք գործեցի»։ Բայց չասաց, թէ ինչ մեղք է գործել։

Երբ ամուսինը տանից դուրս ելաւ, Թէոդորան գնաց մի կոյս կրօնաւորի մօտ ու ասաց. «Բե՛ր Աւետարանը, որ վիճակ գցեմ իմ մեղքերի համար, քանզի այսօր հայհոյութեան գործ գործեցի եւ կամենում եմ իմանալ՝ Աստուած իմացա՞ւ արածիս մասին»։ Երանելի կոյսն ասաց նրան. «Խաբուեցի՛ր, ո՛վ դուստր իմ, քանզի չկայ որեւէ բան, որ չիմանայ Աստուած։ Ամէն բան մերկապարանոց կայ Աստուծոյ ամենագէտ մեծութեան առաջ։ Նա ոչ միայն մեր գործածը, այլեւ չգործածն է տեսնում»։ Թէոդորան ասաց. «Աղաչում եմ քեզ, հոգեւո՛ր մայր, բա՛ց արա Աւետարանը, որպէսզի վիճակ գցեմ»։ Եւ երբ բերեց, Թէոդորան վիճակ գցեց եւ հաստատապէս համոզուեց, որ խաբուել է։ Եւ, երեսի վրայ ընկնելով, գլուխն ուժգին խփում էր գետնին եւ ասում. «Վա՛յ ինձ՝ մեղաւորիս։ Ինչպէ՞ս պիտի ազատուեմ մեղքերից»։ Ապա վեր կացաւ, գնաց տուն, տղամարդու պէս գլուխը խուզեց, կանացի հագուստն ու ոսկէ զարդերը հանեց, հագաւ իր ամուսնու հագուստը, տնից դուրս ելաւ, գնաց քաղաքից դուրս գտնուող վանքը եւ դռնապանի միջոցով իմաց տուեց վանահօրը։ Իսկ նա հրամայեց փակել դուռը եւ թոյլ չտուեց նրան մտնել՝ նրան փորձելու համար։ Գիշերը գազաններ եկան մինչեւ դուռը եւ, երբ տեսան նրան, շուտ փախան նրանից եւ չէին համարձակւում մօտենալ։ Առաւօտեան նրան վանք ընդունեցին, քանզի տեսան, որ նրա մէջ շնորհ կայ, որից գազանները փախչում են։ Իսկ նա, երբ մտաւ, երկրպագեց ու ասաց. «Ընդունէ՛ք ինձ Քրիստոսի սիրոյ համար, եւ կլինեմ ձեր

ոտքերը լուացող եւ վանքն ալող»։ Վանահայրը բոլոր վանականների ներկայութեամբ հարցրեց. «Որդե՛կ, ի՞նչ պատճառով եկար մեզ մօտ, քանզի վանականութիւնը ծանր է, եւ ամէն ոք չէ, որ կարող է գնալ այդ ճանապարհով։ Գուցէ պա՞րտք ես որեւէ մէկի, այդ պատճառո՞վ հարկադրուած փախար աշխարհից»։ Թէոդորան պատասխանեց. «Հա՛յր պատուական, ինչքի պարտք չունեմ, բայց պարտական եմ մեծամեծ մեղքերի»։ Հայրը հարցրեց. «Գուցէ մա՞րդ ես սպանել»։ «Ո՛չ, տէ՛ր»։ Հայրը դարձեալ հարցրեց. «Որեւէ մէկից նեղութի՞ւն ունես կամ ծառայութիւնի՞ց փախար»։ «Ո՛չ այդպէս, տէ՛ր, այլ եկայ՝ լալու եւ ապաշխարելու իմ մեղքերը»։ Հայրը հարցնում է. «Ի՞նչ է քո անունը»։ «Թէոդորոս, ձեր ծառայ»։ «Եղբա՛յր Թէոդորոս, ծանր է վանքի ծառայութիւնը, քանզի անքնա պահեցողութիւն եւ ապաշխարութիւն կայ այստեղ։ Կարո՞ղ ես երեք օր անօթի մնալ, պարտէզը ջրել, ցորեն աղալ, հաց թխել ու բանջար եփել, ճաշի ժամին ոտքի վրայ մնալ եւ եղբայրներին ծառայել, ցերեկն ու գիշերը, առաւօտեան եւ երեկոյեան տքնութեամբ ու ծնրադրութեամբ աղօթել. եւ, այս անելով, պարտէզի ու խոհանոցի ծառայութիւնը չպէտք է թողնես, անտրտունջ պիտի գնաս ամէն տեղ եւ հնազանդօրէն ծառայես բոլոր եղբայրներին»։ Վանահայրն այսպիսի ճգնութիւններ ու ծանր ծառայութիւններ հրամայեց նրան, որպէսզի փախչի ծանր գործերի պատճառով, քանզի շատերը, վանք գալով, չկարողացան ժուժկալել, ելան վանքից եւ, աշխարհ գնալով, ծածկեցին իրենց անժուժկալութիւնն ու պղերգութիւնները՝ պատճառաբանելով, թէ իբր եղբայրները նենգ, նախանձ ու չարաբարոյ են, հանգիստ չեն տալիս, չեն ուսուցանում նորեկներին եւ գայթակղեցնում պարզամիտներին։ Այդ պատճառով էլ կասկածում էր եւ չէր կամենում վանք ընդունել ամէն պատահական մարդու, այլ փորձելով փորձում էր եւ գործերը ծանրացնելով ծանրացնում, որպէսզի ոչ մի պղերգ ու անհամբեր համարձակ չմնայ նրանց մօտ։ Իսկ Թէոդորոսն ուրախութեամբ ընդունեց վանահօր պատուէրը եւ ասաց. «Այո՛, տէ՛ր, յոյսս Աստուծոյ վրայ է, որ քո հրամաններից ոչ մէկը չի խափանուի, բոլորը յօժարութեամբ կկատարեմ եւ բոլորին անպղերգաբար կծառայեմ»։ Երբ լոյսը բացուեց, հայրը հրամայեց, եւ նա ջրհորից երկու հարիւր սափոր ջուր հանեց եւ պարտէզը ջրեց։ Ապա եղբայրների հետ գնաց եկեղեցի եւ երեք ժամ աղօթեց։ Գնաց աղաց եւ ամբողջ ցորենը մենակ աղաց, 143 նկանակ եփեց եւ կրկին եկեղեցի գնաց՝ միջօրէի աղօթքի, յետոյ գնաց խոհանոց, եփեց բանջարը, ապա գնաց ժամը 9–ի աղօթքին եւ սպասաւորեց եղբայրների սեղանը։ Եւ երբ վեր կացան, հրամայեցին նրան ուտել սակաւ հաց ու ջուր եւ հինգ հարիւր անգամ ծունր կրկնել, դարձեալ ջրեց պարտէզը երկու հարիւր սափոր ջրով, ապա աղօթեց Խաղաղականի աղօթքը, սակաւիկ ննջեց՝ մտնելով իր խուցը։ Եւ, վեր կենալով, լալագին պաղատանքով աղաչում էր Աստծուն եւ ասում. «Աստուա՛ծ իմ եւ Տէ՛ր իմ, Թողութի՛ւն շնորհիր Քո աղախնուն, որ կորցրեց իր անձի վայելչութիւնը»։ Այսպիսի

ճգնութեամբ նա ապրեց ութ տարի։

Իսկ նրա ամուսինն աղաչում էր Աստծուն, որ յայտնի իրեն, թէ որտեղ է իր կինը, քանզի մտածում էր, թէ գուցէ ուրիշ մէկի հետ փախել է։ Եւ երկնքից ձայն լսեց, որ ասում էր, թէ՝ Սուրբ Հոգու հետ գնաց։ Եւ խնդրեց Տիրոջը ցոյց տալ նրան։ Եւ դարձեալ ձայն լսեց, որ ասում էր. «Առաւոտեան գնա՛ ս. Պետրոսի ճանապարհով, եւ առաջինը, ով կհանդիպի քեզ եւ ողջոյն կտայ, նա է քո կինը»։ Իսկ Թէոդորային վանահայրն առաքեց ցորենն եւ ձէթ ուղտերով բերելու, եւ երբ գնում էր, հեռուում տեսաւ իր ամուսնուն, ճանաչեց եւ ասաց. «Վա՛յ ինձ, իմ քա՛ղցր ամուսին, որչափ պիտի չարչարուեմ, որպէսզի ազատուեմ մեղքերիցս, որ անօրինացայ քո հանդէպ»։ Երբ մօտեցաւ, երկրպագեց եւ ասաց. «Ողջո՛յն քեզ, տէ՛ր իմ»։ Նա ընդունեց ողջոյնը, բայց կնոջը չճանաչեց։ Երբ իրարից հեռացան, այրն ասաց. «Տէ՛ր իմ, ինչո՞ւ ցոյց չտուեցիր կնոջս, ինչպէս խոստացար»։ Դարձեալ ձայն եղաւ, որ նրան ասաց. «Նա էր, որ ճանապարհին երկրպագեց քեզ եւ ողջունեց»։ Այրը զգաստանալով ետ դարձաւ, փնտրեց եւ չգտաւ նրան, շատ զղջաց անզգաստ գնալու համար եւ իրեն մեղադրեց, որ երկնային պատուէրը մոռացաւ։ Բայց գտհացաւ Տիրոջից, որ տեսաւ ապաշխարութիւն զգեցածին, որ գնաց Սուրբ Հոգու ետեւից։ Երբ Թէոդորոսը, իրեն հրամայուած գործն աւարտելով, վանք վերադարձաւ, սկսեց պաս պահել երկու–երկու օրով եւ շարունակեց ծառայել։ Մէկ տարի անց պահեցողութեան օրերն աւելացրեց եւ ճաշակում էր չորս օրը մի անգամ, իսկ մէկ տարի անց շաբաթուայ վեց օրն էր պահում, ուտում էր միայն կիրակի օրը՝ իր ծառայութիւնն անխափան ու անպղերգաբար կատարելով, իսկ աղօթքի ժամանակ ետ չէր մնում եղբայրներից։ Ապա մերկ մարմնի վրայ հագաւ մազեղէն հագուստ, որի վրայից պարեգօտ էր կապում։ Եւ անընդհատ կրկնում էր. «Տէ՛ր, ների՛ր մեղքերս, որ գործեցի»։ Եւ Աստուած մեծամեծ հրաշքներ կատարեց Թէոդորայի ձեռքով. նա աղօթքով սատկեցրեց մարդակեր կոկորդիլոսին, Աստուծոյ խօսքով մի մարդու ազատեց առիւծի երախից եւ, ձեռքը դնելով, գիշատուած անդամները ողջացրեց, իսկ գազանը սատկեց։ Ապա սատանան երեւաց նրան եւ ասաց. «Ամենապոռնի՛կ, ինչո՞ւ թողեցիր ամուսնուդ եւ այստեղ եկար։ Երդւում եմ իմ զօրութեամբ, որ անարգանքներ եւ նախատինքներ կբերեմ քեզ վրայ»։ Իսկ Թէոդորան աղօթքներով անյայտացրեց բանսարկուին։ Մի օր նա ուղարկուեց ուղտերով վանքի համար ցորեն գնելու։ Երեկոյեան ճանապարհին իջեւանեց Ինանկնեան վանքում եւ քնեց ուղտերի ոտքերի մօտ։ Գիշերը վանահօր դուստրը գնաց Թէոդորայի մօտ եւ, կարծելով, թէ այր է, ասաց. «Քնի՛ր ինձ հետ»։ Նա ասաց. «Զե՛մ կարող, քանզի այսահար եմ»։ Միւս անկիւնում մի այր էր ննջում։ Աղջիկը գնաց, պոռնկացաւ նրա հետ եւ յղիացաւ։ Առաւօտեան Թէոդորան ելաւ, ողջոյն տուեց վանահօրն ու եղբայրներին եւ գնաց վանքից։ Վեց ամիս անց հայրն իմացաւ աղջկայ յղիութեան մասին եւ ստիպեց նրան ասել, թէ երե-

խայի հայրն ով է։ Եւ աղջիկն ասաց. «Ութուտանեակի վանքի աբեղայ Թէոդորոսը»։ Եւ հայրը վերցրեց աղջկան ու եղբայրներին եւ գնաց Ութուտանեակի վանք՝ վանահօրն ու եղբայրներին յայտնելու Թէոդորոսի անօրինութիւնը։ Երբ վանքում այս լսեցին, շատ զարմացան, քանզի գիտէին նրան իբրեւ երկիւղած, հրաշագործ ու ճգնաւոր այրի։ Եւ վանահայրը կանչեց նրան ու ասաց. «Ինչո՞ւ այդպիսի անօրինութիւն գործեցիր»։ Թէոդորան պատասխանեց. «Թոդութի՛ւն արա ինձ, քանզի պատասխան չունեմ»։ Այնժամ ոմանք հաւատացին, ոմանք՝ ոչ։ Վանքում մեծ շշուկ ու շփոթ սկսուեց, զրպարտողները նոյնպէս զարմացան ու շփոթուեցին պատահածից, քանզի բոլորը գիտէին Թէոդորոսի երկիւղածութեան ու բարեպաշտութեան մասին։ Երբ երեխան ծնուեց, տարան եւ տուեցին Թէոդորոսին։ Վանահայրը դուրս արեց նրան վանքից՝ ասելով. «Դու այլեւս եղբայրների մէջ չպէտք է մնաս, որովհետեւ որդի վաստակեցիր։ Արդ, վերցրո՛ւ որդուդ, գնա՛ վանքից, տա՛ր, սնուցի՛ր զաւակիդ՝ ուր կամենում ես»։ Թէոդորան, մանուկը գրկին, լալով դուրս ելաւ վանքից, գնաց Հովիւների մօտ, կաթ վերցրեց եւ վերադարձաւ, բնակուեց վանքի մօտ, տղայի համար հովանի սարքեց՝ պատսպարելու համար անձրեւներից ու տօթից, իսկ ինքը, բացօթեայ մնալով, զառն արտասուք թափելով աղօթում էր եւ պահում ու սնուցանում մանկանը խաշների կաթով, որ ողորմելով տալիս էին նրան հովիւները։ Այդպէս վանքից դուրս եօթ տարի մեծ աշխատութեամբ սնուցեց մանկանը։ Իսկ սատանան, տեսնելով երանելու ժուժկալութիւնը, նրա ամուսնու կերպարանքով եկաւ եւ ասաց նրան. «Ինչ լաւ է, որ գտայ քեզ, տիկի՛ն իմ, քանզի այն պահից, որ հեռացար ինձանից, աչքերիս լոյսը խաւարեց քեզ համար արտասուելուց։ Ո՞վ խաբեց, ո՞վ մոլորեցրեց քեզ եւ բերեց այս անապատը։ Ես քե՛զ եմ փնտրում, ողորմի՛ր վշտացեալիս եւ տո՛ւն վերադարձիր։ Երդւում եմ, որ քո ճգնութիւնից քեզ չեմ հեռացնի։ Ո՞ւր է գեղեցկութիւնդ։ Ցիշի՛ր մեր սէրը եւ ե՛կ իմ ետեւից»։ Իսկ նա, չիմանալով, որ սատանայ է, ասաց. «Ես այլեւս չե՛մ մտնի այդ քաղաքը, քանզի հրաժարուեցի ե՛ւ քեզանից, ե՛ւ տանից, ե՛ւ ինչքից, որովհետեւ Յովհաննէս կոմսի որդու հետ մեղք գործեցի, այդ պատճառով անապատ փախայ, որ գործածս անօրինութիւնն ապաշխարեմ»։ Այս ասելով՝ բարձրացրեց ձեռքերը եւ սկսեց աղօթել, եւ Աստուծոյ հանդէպ նրա սիրուց սատանան անյայտացաւ։ Իսկ նա, հասկանալով չարի խարդախութիւնը, բարձրաձայն աղաղակեց. «Աստուա՛ծ իմ, մի՛ թողնիր ինձ»։

Թէոդորոսի կերակուրը վայրի բանջար էր, որ էրէներն էին բերում, եւ գետի ջուր։ Նա ամենեւին վանքից չհեռացաւ, մնաց այնտեղ, ուր բնակուել էր։ Գետի պէս արցունքներն հոսում էին աչքերից գիշեր—ցերեկ եւ միայն այս էր ասում. «Տէ՛ր, Դու ես միայն առանց մեղքի։ Թոդութի՛ւն տուր յանցանքներիս»։ Եւ նրա եղունգներն եղան ինչպէս հովազի, եւ մազերն՝ ինչպէս առիւծի, աչքերը տկարացան, մարմինը, ինչպէս մամռոտ քար, ներկուեց սառնամանիքից, իսկ խուզի յատակը թրջում էր նրա արտասուքից։

Երբ սատանան նրան յոյժ տկարացած տեսաւ, զազաններ երեւացրեց նրան ու ասաց. «Կերէ՛ք այս պոռնիկ կնոջը»։ Իսկ երանելին ամենեւին չզարհուրեց, եւ ամօթահարուելով հեռացան։ Դարձեալ երեւացրեց նրան գետնին թափուած գանձեր, նա սուրբ Խաչի նշանով կնքեց, եւ անհետացան։ Մի այլ ժամանակ դարձեալ երեւացրեց նրան բազում զօրականների՝ երիվարներով, որ եկան ու ասացին նրան. «Իշխանին ընդառա՛ջ ելիր ու երկրպագի՛ր»։ «Ես միայն իմ Տէր Աստծուն եմ երկրպագում ու պաշտում»,— պատասխանեց նա։ Եւ իշխանը հրամայեց զօրականներին եւ այնքան գանձ հարեցին Քրիստոսի աղախնուն, մինչեւ կիսամահ գետնին ընկաւ։ Հովիւները տեսան նրան եւ կարծեցին, թէ մեռած է, գնացին վանք ու յայտնեցին վանահօրն ու եղբայրներին։ Երբ գնացին եւ նրան կենդանի գտան, վանք վերադարձան։ Իսկ Թէոդորոսը, գիշերն ուշքի գալով, ողբալով ասաց. «Վա՛յ ինձ՝ անօգնականիս, մեղքերս ինչպէս են դատում ինձ»։ Եւ, աչքերն ու ձեռքերը երկինք բարձրացնելով, մինչեւ լոյս աղօթեց։ Ապա հայեց ու տեսաւ ծառայի կերպարանքով մի այրի, ձեռքին՝ անուշահամ կերակրով լի մի ափսէ, մատուցեց նրան եւ ասաց. «Կե՛ր այս եւ թոդութի՛ւն արա ինձ, քանզի անկաս սանջեցի քեզ»։ Եւ նա, խորհրդաւորութիւնն իմանալով, ասաց. «Հեռացի՛ր ինձանից, սատանա՛, եւ Յիսուսին անեմ ինձ օգնական»։ Նոյն պահին սատանան անհետացաւ եւ այլեւս չերեւաց նրան։ Երբ տարաշրջանի եօթ տարին լրացաւ, Ինոսենտան վանքի վանահայրն ու եղբայրները եկան վանք եւ ասացին. «Ասուած մեզ տեսիլքով ցոյց տուեց, որ Թէոդորոսի մեղքերը ներուեցին։ Ընդունի՛ր նրան վանք»։ Եւ եկան, մի՛ասին գնացին Թէոդորոսի մօտ, նրան վանք տարան եւ այլեւս չթողեցին նրան երթալ վանքից, որպէսզի այլեւս երբէք փորձութիւնների մէջ չընկնի։ Այդ պատճառով էլ փակեցին նրան մի նեղ, նեղ ու անձուկ խցում։ Երկու տարի։ Այն օրերին երաշտ եղաւ, ջրհորը ցամաքեց, եւ եղբայրները նեղուեցան։ Այն օրերին երաշտ եղաւ, ջրհորը ցամաքեց, եւ եղբայրները նեղուեցան։ Ամենքն թէ՝ ինչպէս ջուր չլինելու պատճառով։ Վանահայրը Թէոդորոսին հրամայեց գնալ ջրհորի մօտ եւ աղօթել։ Եւ նա, հնազանդուելով վանահօր հրամանին, վեր կացաւ, գնաց եւ աղաչեց Աստծուն, ապա սափորը լարով իջեցրեց ցամաքած ջրհորը, ջրհորի մէջ յորդաբուխ աղբիւր բխեց, եւ, Աստծուն փառաբանելով, վերադարձաւ իր խուցը։ Եւ բոլոր եղբայրներն օրհնեցին ու փառաբանեցին Տիրոջը։ Երբ իր վախճանի օրն իմացաւ, Թէոդորան մանկանը կանչեց իր խուցը, դուռը փակեց, համբուրեց նրան ու ասաց. «Որդե՛կս, իմ սիրեցեա՛լ Թէոդորոս, իմ վախճանը մօտեցել է, պիտի գնամ ու այլեւս չվերադառնամ, եւ դու, որդե՛կ, մի՛ ասա, թէ որբ մնացի, քանզի քո օգնականն Աստուած է, վանահայրը՝ քո հայրը, կրօնաւորները՝ քո աւագ եղբայրները։ Պատուի՛ր նրանց եւ երկիւղի՛ր նրանցից։ Պա՛հք պահիր եւ աղո՛թք արա, պաշտամո՛ւնք արա, քունը մի՛ սիրիր, եւ եթէ որեւէ մէկը քեզ բան հարցնի, աչքերդ խոնա՛րհ պատասխանիր, քո թշնամու ընկնելով՝ մի՛ խնդա։ Այստեղ լա՛ց, որ այնտեղ ծիծաղես։ Ծառայի՛ր հիւանդներին, առաջնդա։ Այստեղ լա՛ց, որ այնտեղ ծիծաղես։ Ծառայի՛ր հիւանդներին, առաջնդա։

նորդի՛ր կոյրերին, նեցո՛ւկ եղիր կաղերին, սաղմոսներով թաղի՛ր մեռածներին, մի՛ վախենա սատանայի երեւալուց, մի՛ դադարիր աղօթելուց, անձդ ամրացրո՛ւ սուրբ Խաչի նշանով եւ փորձութեան մէջ չե՛ս ընկնի»: Եւ, բազում այլ խրատներ տալով, օրհնեց նրան: Եւ մինչդեռ մանուկ Թէոդորոսը Հայում էր՝ լսելով նրա խօսքերը, աւանդեց Հոգին Աստուծոյ ձեռքը եւ խաղաղութեամբ ննջեց սեպտեմբեր ամսի 11–ին: Եւ մանուկը բարձրաձայն լալիս էր իր Հօր վրայ: Ապա գնաց, յայտնեց վանահօրն ու եղբայրներին: Նրանք եկան, դուրս հանեցին Թէոդորային եւ ըստ օրէնքի մարմինը լուանալիս տեսան, որ կին է, եւ շատ վախեցան եւ զարմացած ու տարակուսած դողում էին, եւ վանահայրը պատուիրեց չասել ոչ ոքի, մինչեւ զրպարտիչները գան: Ապա փութով կանչել տուեց Իննակնեան վանքի վանահօրն ու եղբայրներին եւ ասաց վանահօրը. «Ահա քո դստեր այրը մեռաւ, նայի՛ր դէմքին, դա չէ՞ Թէոդորոս աբեղան»: Եւ նա ասաց. «Այո՛, նա է»: Խոնարհուեց, համբուրեց նրան եւ ասաց. «Աստուած թող ների՛ քո մեղքերը, որ գործեցիր իմ դստեր հանդէպ»: Եւ վանահայրն ասաց նրան. «Բա՛ց հագուստի օձիքը»: Նա կատարեց հրամանը՝ կարծելով, թէ հրաշք պիտի ցոյց տայ, եւ երբ տեսաւ, որ կին է, զարմանքից ու ահից գետնին ընկաւ եւ ուշակորոյս նուաղեց: Իսկ եղբայրների մէջ մեծ հառաչանք ու ողբ սկսուեց, գետնին շատ արտասուք հեղուեց եւ սկսեցին պաշտամունք մատուցել: Եւ Տիրոջ հրեշտակը յայտնապէս երեւաց վանահօրը եւ ասաց. «Շտապ քաղա՛ք գնա, եւ ով որ առաջինը հանդիպի քեզ, բե՛ր այստեղ քեզ հետ»: Երբ գնաց, հանդիպեց Թէոդորայի ամուսնուն, հարցրեց նրան, թէ ուր է գնում: Նա պատասխանեց. «Կինս այսօր մեռաւ, գնում եմ նրան տեսնելու»: «Ե՛կ, ես կտանեմ քեզ քո կնոջ ու Քրիստոսի աղախնու մօտ»: Եւ նրան վանք տարաւ: Եւ մեծ ողբով ողբացին Թէոդորային, որ իր անձն այնքան փորձութիւնների տուեց համբերութեամբ: Ապա կրօնաւորներ ու անապատականներ ժողովուեցին եւ մեծ փառքով եւ օրհնութեամբ թաղեցին Քրիստոսի աղախնուն՝ փառաւորելով Իր աղախին Թէոդորային այնքան համբերութիւն Տուողին: Իսկ նրա այրը վանահօրը խնդրեց տալ իրեն Թէոդորայի խուցը, որ այլեւս վանքից չգնայ: Նա մտաւ այնտեղ, մեծ ճգնութեամբ ապրեց եւ վախճանուեց ի Քրիստոս: Իսկ մանուկ Թէոդորոսն իրեն մնացող հոգեւոր մօր վարքն ստացաւ եւ ճգնութեամբ նմանուող եղաւ նրան: Եւ երբ վանահայրը վախճանուեց, նա դարձաւ առաջնորդ ու վանահայր ի փառս մեր Տէր Յիսուս Քրիստոսի:

ՊՈՌՆԻԿ ԹԱՅԻՍԻ ԶՂՋՈՒՄՆ ՈՒ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆԸ

Պատմենք սքանչելի ու պայծառ ապաշխարութեան մասին Թայիսի, որը կատարելապէս փառաւորուեց: Այս պատմութիւնը յոյժ օգտակար է նրանց համար, ովքեր կամենում են ապաշխարել իրենց գործած պղերգութիւններից, եւ մխիթարական՝ նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն: Արդ, երանելի Թայիսն անչափ գեղեցիկ էր: Նրա մարմնաւոր մայրը դեռ փոքր հասակից նրան դրել էր կորստեան ճանապարհի վրայ: Թայիսի գեղեցկութեան համբաւը տարածուել էր ողջ երկրում, եւ ովքեր լսում էին, հեռուներից գալիս էին տեսնելու եւ չէին յագենում նրա գեղեցկութեամբ: Նրա մոլորեցնող սէրը բոցի պէս այրում էր տեսնողների սրտերը: Շատերն էին վաճառում ունեցուածքը, իսկ աղքատները հանդերձներն էին վաճառում իրենց ցանկութիւնը կատարելու համար: Երբ աբբայ Սերապիոնը (լատինները Պափնոտիոս էին ասում) լսեց, որ նրա գեղեցկութիւնը շատերի կորստեան պատճառ է դառնում, աշխարհականի հագուստ հագաւ, մի դահեկան վերցրեց եւ գնաց նրա մօտ: Երբ Թայիսին տեսաւ, դահեկանը տուեց նրան: Իսկ երբ ներս մտան, սուրբ հայրը տեսաւ մի բարձր անկողին, որի վրայ բարձրանալով՝ Թայիսը ծերին իր մօտ կանչեց: Մերը նրան հարցրեց. «Ներսում այլ սենեակ ունե՞ս, գնա՞նք այնտեղ»: Եւ նա պատասխանեց. «Եթէ մարդկանցից ես ամաչում, այստեղ քեզ ոչ ոք չի տեսնում, իսկ եթէ Աստծուց ես երկնչում, ուր էլ մտնենք, Աստուած տեսնում է մեզ»: Երանելին, այս խօսքերը լսելով, ասաց նրան. «Դու գիտե՞ս, որ Աստուած կայ»: «Գիտեմ, որ Աստուած կայ, կայ արքայութիւն եւ տանջանք»: «Եթէ գիտես, ինչո՞ւ ես կորստեան մատնում մարդկանց որդիներին»: Մերի այս խօսքերը լսելով՝ Թայիսը զղջաց, նրա ոտքերն ընկաւ եւ ասաց. «Գիտեմ, կայ ապաշխարութիւն, որով դառնում են շարի ճանապարհից: Թո՛յլ տուր ինձ միայն երեք օր, ապա գործածս շարիքների փոխարէն արա՛ այն, ինչ ինքդ կամենում ես»: Եւ, ծերից ներում ստանալով, պայմանաւորուեց նրա հետ հանդիպման վայրի մասին եւ արձակեց նրան: Ապա, ժողովելով այն ամէնն, ինչ ձեռք էր բերել պոռնկութեամբ, տարաւ քաղաք եւ, կրակի տալով, այրեց՝ ասելով. «Եկէ՛ք ամէնքդ, որ պոռնկացել էք ինձ հետ, տեսէ՛ք, այն ամէնը, ինչ շարով ձեռք բերեցի, ահա այժմ այրում եմ ձեր աչքերի առաջ»: Ամէնն այրելուց յետոյ գնաց ծերի մօտ: Եւ հայր Սերապիոնը նրան կուսանաց վանք տարաւ, գտաւ մի խաւար խուց եւ արգելափակեց նրան այնտեղ: Դուռը փակելով՝ կապարով կնքեց այն եւ միայն մի ծերպ թողեց՝ պէտքերը վերցնելու համար: Եւ վանամօրը պատուիրեց նրան օրեկան մի կտոր հաց ու քիչ ջուր տալ: Երանելին հարցրեց ծերին. «Ինչպէ՞ս

աղօթեմ Աստծուն, որպէսզի ների ինձ»։ «Արժանի չե՛ս աղօթելու Նրան,— պատասխանեց ծերը,— քանզի քո շուրթերն աղտեղի են ու պիղծ, եւ քո ձեռքերը շաղախուած են անօրինութիւններով։ Այլ լոկ նստի՛ր՝ արեւելք նայելով՝ առանց որեւէ բան ասելու, բացի այս խօսքերից. «Որ ստեղծել ես, ողորմի՛ր ինձ»։ Եւ երանելին երեք տարի այդպէս արեց։ Իսկ ծերը, գթալով նրան, գնաց աբբայ Անտոնի մօտ՝ իմանալու՝ Աստուած թողութիւն տուե՞ց Թայիսին, թէ՝ ոչ։ Սուրբ Անտոնը կանչեց իր աշակերտներին եւ ասաց նրանց. «Այս գիշեր իւրաքանչիւրդ ձեր խցում փակուե՛ք եւ խստաբար սիրով աղօթե՛ք Աստծուն, որպէսզի տեսնենք՝ ո՞ւմ կյայտնուեն այն բաները, ինչի համար եկել է Հայր Սերապիոնը»։ Եւ նրանք արեցին՝ ինչպէս իրենց հրամայուած էր։ Օրուայ վերջին ծերի երիցագոյն աշակերտը՝ Պօղոսը, հայեց եւ երկնքում փառքով կազմուած մի մեծ անկողին տեսաւ, երեք կոյսեր, ձեռքներին երեք լապտերներ բռնած, պահում էին այն, եւ անկողնու վրայ տեսաւ անթառամ պսակ։ Այս տեսնելով՝ մտքում ասաց. «Այս փառքն ու պսակը ուրիշինը չէ, եթէ ոչ՝ աբբայ Անտոնինը՝ իմ հօրը»։ Բայց մի ձայն լսեց, որ ասում էր. «Քո Հայր Անտոնինը չէ, այլ՝ պոռնիկ Թայիսինը»։ Լուսաբացին իր տեսած երազը պատմեց եղբայրներին։ Երանելի Սերապիոնն ուրախութեամբ վերադարձաւ կուսանաց վանք եւ բացեց Թայիսի խցի դուռը՝ կամենալով հանել նրան։ Իսկ Թայիսն աղաչեց եւ ասաց. «Թո՛ղ ինձ խցի մէջ մինչեւ իմ մահը, քանզի իմ մեղքերը շատ են, որպէսզի Աստուած դրանք քաւի»։ Մերը նրան ասաց. «Մարդասէրն Աստուած արդէն գթաց քեզ եւ ընդունեց քո ապաշխարութիւնը»։ Եւ նրան խցից հանեց։ Երանելի Թայիսն ասաց ծերին. «Հաւատա՛ ինձ, հա՛յր, այն պահից, երբ մտայ այս խուցը, բոլոր մեղքերս մի մեծ բեռ դարձրեցի եւ դրեցի իմ առաջ, եւ ինչպէս շունչը երբէք չի դադարում, այնպէս էլ իմ մեղքերը մտքիցս չվերացան մինչեւ այժմ»։ Եւ ծերը նրան ասաց. «Ոչ թէ քո ապաշխարութեան համար Աստուած ներեց քո մեղքերը, այլ՝ այն բանի համար, որ քեզ յանձնեցիր Իրեն՝ Քրիստոսին»։ Եւ Թայիսը կոյսերի հետ մնաց եւս տասնհինգ օր։ Տասնհինգ օր անց հիւանդացաւ եւ փառատրպէս մահացաւ՝ մեր Փրկիչ Աստուծոյ հոգածութեամբ։

ԲԱՐՁՐԱՄԻՏ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Սուրբ Հայր Անտոնը պատմել է, թէ ինչպէս մի անգամ իր մօտ է եկել անապատական միայնակեացներից մէկը եւ արտասուքով պատմել հետեւեալը. «Ես մի աշխարհական եղբայր ունէի, որ մեռնելուց յետոյ որբ թողեց երեքամեայ մի մանկան։ Վերցնելով մանկանը՝ տարայ անապատ եւ դաստիարակեցի միայնակեացի վարքով սնուցանելով նրան արմատով ու վայրի բանջարով։ Նա աշխարհիկ որեւէ բան չտեսաւ՝ ո՛չ կնոջ կերպարանք, ո՛չ միս, ո՛չ ձուկ, ո՛չ հաց կամ գինի, քանզի այս ամենից հեռու պահեցի նրան եւ տղայական հասակից պահեցողութեան սովորեցրի։ Այսպիսի ճգնութիւններով նա արբունքի տարիքի հասաւ եւ վարժուեց բոլոր առաքինութիւնների մէջ, պահեցողութեամբ ու յարաժամ աղօթքներով ապրեց անբիծ, սուրբ ու անարատ վարքով։ Երբէք չիշաւ լեռից։ Չտեսաւ ո՛չ գիւղ, ո՛չ քաղաք, ո՛չ էլ ճանաչեց երկրաւոր գործերը՝ բարի կամ չար։ Տասնութ տարի ապրեց այսպէս՝ ճգնելով եւ անապատական վարքով Տիրոջը ծառայելով։ Մի օր էլ հիւանդացաւ ու վախճանուեց։ Ես սաղմոսներով, օրհնութիւններով ու արտասուքով թաղեցի անբիծ կրօնաւոր եղբօրորդուս եւ ուրախ էի նրա՝ սրբութեամբ ու ճգնութեամբ հանդերձեալ կեանք գնալու համար։ Բայց չգիտէի նրա սրտի բարձրամտութեան եւ ամբարտաւանութեան մասին, քանզի եղբայրների մէջ չապրեց, որտեղ խօսքերից ու գործերից կերեւար նրա՝ ամբարտաւան կամ հեզ ու խոնարհ լինելը։ Եւ Աստծուն աղաչեցի ցոյց տալ ինձ, թէ եղբօրորդիս սուրբերի ո՞ր դասում դասուեց։ Երեք օր անց երազում մի նեմ ու ժանտահոտ տեղ տեսայ եւ այնտեղ՝ իմ եղբօրորդուն։ Այս տեսնելով՝ յոյժ տրտմեցի, վշտացայ եւ սկսեցի մեղադրել Աստծուն. «Մի՞թէ այն երիտասարդն անբիծ ու անարատ չէր, մի՞թէ գիշեր—ցերեկ Քեզ չէր ծառայում պահեցողութեամբ, աղօթքով ու տքնութեամբ։ Եւ ինչպէ՞ս տեսայ նրան»։ Մինչդեռ այսպէս խորհում էի, յայտնուեց ինձ Տիրոջ հրեշտակը եւ ասաց. «Ճգնութեան ամբողջ կարգը սովորեցրիր նրան, բայց խոնարհութիւն ու հեզութիւն ինչո՞ւ չսովորեցրիր։ Նա սրտում մեծ հպարտութիւն ունէր, ամբարտաւան էր, իրեն սուրբ եւ Աստուծոյ ընտրեալ ծառայ էր համարում, իբրեւ թէ իրենից բացի ուրիշ մէկը չկայ։ Մի՞թէ չգիտես, որ Աստուած ամբարտաւաններին հակառակ է, եւ ամէն բարձրամիտ պիղծ է Տիրոջ առաջ։ Իսկ խոնարհներն ու հեզերն առանց միւս առաքինութիւնների էլ կարող են հաճոյ եւ սիրելի լինել Տիրոջը, քանզի Տէրն ո՞ւմ մէջ է բնակում, եթէ ոչ՝ հեզերի եւ խոնարհների եւ նրանց, ովքեր դողում են Նրա խօսքերից։ Արդ, իմացի՛ր, որ Աստուած անիրաւ չէ, եւ որ բարձրամիտ ու հպարտ մարդը, եթէ բիւր առաքինութիւններ էլ ունենայ, պիղծ է Տիրոջ առաջ, ինչպէս քո սնուցած որդին։ Եթէ դու այդ

բանն իմանայիր եւ չխրատէիր. քեզ եւս քո մեղքերը չէին ներուի, բայց քանի որ չես իմացել նրա սրտում եղածը, հոգաբարձու չես եղել: Արդ, այսուհետեւ, եթէ ձեզ Հնազանդուողներին բոլոր առաքինութիւններից առաջ Հնազանդութեան ու խոնարհութեան չվարժեցնէք, անպատիժ չէք մնայ»: Այս ասելով հրեշտակը գնաց: Իսկ ես, ո՛վ պատուական Հայր, այս ամէնը տեսնելով ու լսելով, յարաժամ սգում եմ երիտասարդի կորուստը»:

Հայրը Անտոնը պատասխանեց նրան. «Ցիրաւի, ո՛վ եղբայր, ում մէջ ամբարտաւանութիւն կայ, նա Աստծունը չէ եւ չի տեսնի Նրան»:

ՍՈՒՐԲ ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՑԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱՐՔԸ

Եկեղեցու տիեզերահռչակ վարդապետ մեծն Եպիփանի սուրբ եւ արժանաւոր վարքի մասին ոչ ոք ըստ արժանւոյն չի գրել: Թէեւ իբրեւ առաջին գրիչներ յայտնի են նրա երկու աշակերտները՝ Յովհաննէսը եւ Պողիբիոսը, բայց նրանց անոճ գրուածքը լեցուն է անարուեստ նկարագրութիւններով, որտեղ մանր, աննշան դէպքերը ներկայացւում են մեծերի հետ խառն, տարապայման միասնութեամբ, առանց ստոյգն անստոյգից ընտրելու: Բայց եւ այնպէս, անկարելի է առանց նրանց գրածի բովանդակել սրբի պատմութիւնը: Ներկայացուող վարքում կան քաղուածքներ՝ հաւաքուած նրանց եւ այլ մատենագիրների աւանդած տեղեկութիւններից:

Ինչպէս աւանդում է, սքանչելի Եպիփանը (որ Թարգմանում է երեւելի կամ յայտնի), ազգութեամբ փիւնիկեցի հրեայ, ծնուել է աղքատ ու երկրագործ ծնողներից մի գիւղում, որ երեք մղոնով հեռու էր Ելեւթերոպոլիս քաղաքից: Տասը տարեկան էր, երբ Հայրը մեռաւ, եւ մանուկն իր քրոջ հետ մնաց այրիացած մօր տանը: Գեղեցիկ աւանդութիւն է պահպանուել Եպիփանի՝ քրիստոնէութեան հետ առաջին շփման մասին: Աղքատութիւնից նեղուելով՝ մի օր մայրը Եպիփանին ուղարկում է իրենց էշը վաճառելու: Ճանապարհին Եպիփանը հանդիպում է մի քրիստոնեայ միայնակեացի, որ հարցնում է նրան. «Վաճառո՞ւմ ես էշդ»: Մանուկը պարզամտօրէն պատասխանում է. «Այո՛, վաճառում եմ: Բայց չափազանց ստամբակ է, ուստի վախենում եմ գուցէ վնասի գնողին, եւ ես պարտական մնամ Աստուծոյ առաջ»: Այս խօսքի վրայ էշն, առաջ վազելով, Եպիփանին գցում է գետնին եւ թեւը կոտրում: Պատանին ուշակորոյս նուաղում է: Աբեղան Քրիստոսի անունով բժշկում է նրան: Այնժամ Եպիփանն աբեղային հարցնում է, թէ ո՞վ է Քրիստոսը: Նա պատասխանում է. «Յիսուսն Աստուծոյ Որդին է, Նա, Ում հրեաները խաչեցին»: Տուն գալով նա պատմում է այս եւ միշտ յիշում:

Հետագայում Տրիփոն անունով ելեւթերոպոլսեցի օրինագէտ ու մեծատուն մի հրեայ որդեգրում է Եպիփանին, ուսուցանում նրան եբրայական բոլոր գրքերն ու աւանդութիւնները եւ կամենում իր դստերը կնութեան տալ նրան, բայց աղջիկը շուտով մահանում է: Երբ մահանում է նաեւ Տրիփոնը, նրա ունեցուածքի ժառանգը Եպիփանն է դառնում: Մի անգամ Եպիփանը տեսնում է մի աղքատ մարդու, որ միայնակեաց Ղուկիանոսից ողորմութիւն էր խնդրում ասելով. «Աստուծո՛յ մարդ, ողորմի՛ր ինձ, քանզի երեք օր է՝ քաղցած եմ»: Ղուկիանոսը, հանելով պարեգօտը, տալիս է նրան՝ վաճառե-

լու եւ Հաց գնելու։ Այդ պահին երկնքից սպիտակ հագուստ է ընկնում եւ ծածկում նրան։ Եպիփանն ահով է բռնում եւ, գնալով Ղուկիանոսի հետ, սովորում է քրիստոնեայ միայնակեացի կարգը։ Ապա քրոջ հետ (մայրն արդէն վախճանուել էր) գալիս է եպիսկոպոսարան՝ մկրտուելու։

Երբ Եպիփանը եկեղեցի մտաւ, նրա ոտքից հողաթափերն ընկան եւ մնացին դռան մօտ։ Այնժամ նա ուխտեց բոկոտն շրջել։ Նրան մկրտելիս՝ եպիսկոպոսը տեսաւ նրա դէմքը փառաւորուած եւ մի զարմանալի պսակ՝ նրա գլխի վրայ։ Ապա Եպիփանը քրոջը տեղաւորեց կուսանաց վանքում, իսկ ինքը մեկուսացաւ Ղուկիանոս հօր վանքում, որտեղ տասը կրօնաւոր գրիչներ կային։ Նա տասնվեց տարեկան էր, երբ կրօնաւոր դարձաւ։ Կարծում է, որ այս ընթացքում է եղել այն, ինչ ինքը՝ սուրբ Եպիփանը, իր մասին պատմում է հերձուածների դէմ գրքի մէջ։ Երբ դեռ պատանի էր եւ ուխտի համար գնում էր Պաղեստինի վանքերից մինչեւ Եգիպտոս՝ հայրերից բարի օրինակ վերցնելու, բարիատեաց սատանան Եգիպտոսում գտնուող գնոստիկեան չար, մարմնապաշտ աղանդաւորներին գրգռեց իրենց մէջ կորզել պատանուն եւ, հիւրընկալելով նրան իրենց թաքստոցում, նրանք տուեցին նրան ընթերցելու իրենց մոլորութեան գիրքը, որի մասին Եպիփանը կարծում էր, թէ ողջամիտ բան է։ Զարագործներն համարձակուեցին թելադրել իրենց գործակից չար կանանց փորձել Եպիփանին։ Եւ նրանք սկսեցին պատանու վրայ յարձակուել պէս–պէս պատրանքներով։ Այնժամ Եպիփանը, հասկանալով նրանց չար աղանդի կորստաբեր լինելը, ամբողջ սրտով աղօթելով, դիմեց Աստծուն եւ հաղիւ զերծ պահեց իր անձը կանանցից՝ անարատ մնալով Աստծոյ շնորհներով։ Եւ, մի հնարով դուրս պրծնելով գնոստիկեանների բնակավայրից, գնաց եւ Եգիպտոսի եպիսկոպոսներին պատմեց նրանց անարժան ընթացքի մասին։ Եւ եպիսկոպոսները, իրերի ստոյգ լինելը տեսնելով, աղանդի գլխաւորներին՝ թուով ութսուն հոգու, աքսորեցին իրենց սահմաններից դուրս։ Իսկ Եպիփանը փութաց դառնալ իր նախկին վանքը եւ իր անձը տալ ապաւել ճգնութիւնների։

Երբ հայր Ղուկիանոսը մեռաւ, վանահայր դարձաւ Հիլարիոնը։ Եպիփանը, տեսնելով նրա առաքինի վարքը, նրանից սովորեց, եւ ինքն էլ երկու–երեք օրը մի անգամ էր հաց ու աղ ճաշակում առանց դրանով կշտանալու, նաեւ ջուրն էր չափով խմում։ Եւ վանքի բոլոր աշխատանքները խնամքով գլուխ բերելով, չէր պակասեցնում աղօթքներն ու Սուրբ Գրքի ընթերցանութիւնը։

Բանսարկուն, տեսնելով Եպիփանի առաջադիմութիւնը, սկսեց գիշերային աղօթքների ժամանակ նեղել նրան ահարկու տեսիլքների պէս–պէս ցնորքներով։ Եւ երբ չկարողացաւ խախտել նրա միտքը, դեւերի բազմութեամբ յարձակուեց նրա վրայ եւ սաստիկ զանահարեց։ Իսկ նա, Աստծուն ապաւինելով, անվնաս մնաց չարի բոլոր հարուածներից։ Եւ Աստծուց Եպիփանին նախագիտութեան եւ հրաշագործութեան շնորհ տրուեց՝ սքանչելի խոնարհութեամբ հանդերձ։

Պատմում է, թէ ինչպէս մի անգամ, երբ ջուր չկար հիւրերի եւ գրաստների կարիքների համար, նրանց մի տիկ գինին փոխարկեց ջրի։ Եւ երբ Եպիփանը մարդկանց գովեստներից փախաւ դէպի խոր անապատ, նրան գտան սարակինոսների քառասուն աւազակները։ Նրանցից մէկը, որ միակնանի էր, մերկ սուսերով յարձակուեց նրա վրայ, բայց երբ սուրը բարձրացրեց, նրա խաւարեալ աչքը բացուեց։ Այդ տեսնելով՝ աւազակներն ընկան սրբի ոտքը, կոչեցին նրան մի նոր Աստուած եւ բռնի տարան նրան իրենց հետ, որպէսզի իրենց պահի ճանապարհի փորձանքներից։ Սակայն, տեսնելով, որ նա խրատում է իրենց հեռու մնալ աւազակութիւնից, բաց թողեցին նրան։ Իսկ նրանցից մէկը, աշակերտելով Եպիփանին, մկրտուեց, կոչուեց Յովհաննէս եւ կրօնաւոր դարձաւ Հիլարիոնի վանքում։ Սա նոյն ինքը՝ Եպիփանի վարքագիր Յովհաննէսն է, որը գրել է այն մասին, թէ ինչպէս նա անապատում բժշկեց մի դիւահարի, թէ ինչպէս դեւը, դուրս գալով, գնաց մտաւ պարսից թագաւորի դստեր մէջ եւ աղաղակեց. «Զեմ ելնի այստեղից, մինչեւ Եպիփանը չգայ»։ Պարսից արքունիքից մարդիկ են գալիս եւ նրան խցում փակուած գտնում։ Եւ մինչդեռ նա երկար աղօթում է, կամենում են խորտակել դռները։ Երբ նրանցից մէկը փորձում է դաշոյնով ճեղքել դուռը, նրա ձեռքը գօսանում է, բայց Եպիփանը բուժում է նրան եւ իր Յովհաննէս աշակերտի հետ գնում, արքայադստերը բժշկում։ Պարսից մոգպետը շատ է զարմանում եւ կոչում նրան մոգերի գլուխ, բայց երբ սուրբը սաստում է նրան, մոգպետը համրանում է, ապա սուրբի աղօթքներով առողջանում։ Եպիփանը յարութիւն է տալիս նաեւ մի երիտասարդի, որ սպանուել էր մոգերի կախարդանքներից։ Ապա, բազում պատիներով բաժանուելով թագաւորից, գալիս է Փինիկիա, իր անապատը, որտեղ աղօթքներով ջուր է բխեցնում եւ հալածում վայրի գազաններին։ Այնտեղ Եպիփանին աշակերտում են մօտ յիսուն եղբայրներ, որոնց կրթում է միայնակեացի վարքով։

Մի անգամ, երբ նա գնացել էր Հիլարիոնի վանքը, մի քանի օր ուշացաւ։ Սատանան Եպիփանի կերպարանքով եկաւ վանք։ Աբեղաներից մէկը, որ հեշտասեր էր ու ծոյլ, խաբուեց եւ, դեւին ընդառաջ գալով, երկրպագեց նրան։ Իսկ դեւը, համարձակութիւն ստանալով, բնակուեց նրա մէջ։ Եւ կրօնաւորների մէջ դիւաբնակ աբեղայի երեսից մեծ խռովութիւն եղաւ։ Եպիփանը, Տիրոջ ազդմամբ այս բանն իմանալով, փութաց վերադառնալ իր վանքը։ Եւ հէնց որ ներս մտաւ, դեւը հալածուեց ու փախաւ։

Հռոմի ծերակոյտի մէջ Այետիոս անունով մի երեւելի մարդ կար, որ Կալլիստոս անունով դիւահար որդի ունէր։ Մի օր Կալլիստոսը երազում տեսնում է պատկառելի միայնակեացի, որն իրեն ասում է. «Կալլիստէ՛, կա-

մենո՞ւմ ես՝ Հանեմ քո միջի չար դեւերին»։ Եւ այն հարցին, թէ՝ ո՞վ ես դու, պատասխանում է. «Ես Եպիփան Փինիկեցին եմ։ Արդ, խո՛սք տուր ինձ, որ եթէ ազատեմ քեզ, կաշակերտես ինձ իմ անապատում»։ Եւ երբ պատանին խոստացաւ եւ, քնից զարթնելով, իրեն առողջացած զտաւ, ամէն ինչ պատմեց Հօրը, երեք ամիս անց Հօր Հրամանով ճանապարհ ընկաւ եւ եկաւ միացաւ Եպիփանի աշակերտներին։

Իսկ ինքը՝ Աստուծոյ այր Եպիփանը, իր անձը տուել էր Հանապազօրեայ աղօթքների, Հոգեւոր ընթերցումների եւ գրելու։ Ստէպ—ստէպ ձեռքն էր վերցնում Սուրբ Գիրքը, մեկնում իր աշակերտներին աստուածային գրուածքների իմաստը եւ ամենքին լցնում Հոգեւոր ուրախութեամբ։ Շուտով նրա Համբաւը տարածուեց ամէնուրեք։ Բազում մարդիկ գալիս էին նրան տեսնելու եւ նրա օրհնութիւնն ստանալու։ Եղեսիայում ապրում էր Եպիփան անունով մի մեծանուն, ճարտար հռետոր, հեթանոս փիլիսոփայ։ Լսելով երանելի Եպիփանի իմաստութեան մասին՝ ցանկացաւ գնալ, տեսնել նրան։ Գալով աղօթքի ժամանակ՝ մի պահ լուռ մնաց եւ, ծունկի գալով, համբուրեց նրան։ Սուրբն ասաց նրան. «Ինչի՞ համար մեծ հռետորդ եւ ականաւոր իմաստասէրդ, եղեսիացիների պարծանքդ չարչարուեցիր գալ անպիտան ու մեղաւոր Եպիփանիս մօտ։ Ինչո՞ւ դու՝ գիտութեամբ պերճացածդ, մի տխմար մարդու ոտքը եկար, ինչի՞ համար»։ Իմաստասէրը պատասխանում է. «Մի՛ զարմանա, ցանկալի՛ ուսուցիչ, քանզի, ըստ Դիոնիսիոս Աղիկառնացու գեղեցիկ առածի, եթէ գովելիները, գովելիների մօտ գալով, համեմատուեն, ընտիրներն առաւել կերեւան։ Ցաճախակի տեսութիւնը ծնում է խօսքերի առատութիւն, եւ գիտնաւոր խօսքերը փորձում են իմաստուններին»։ Այսպիսի խօսքերով սկսելով իմաստասէր Եպիփանը փորձում էր Աստուծով իմաստուն Եպիփանին։ Եւ սուրբ Եպիփանը բացեց իր բերանը Սուրբ Գրոց խօսքերով սկսելով աշխարհի արարչագործումից, դրեց նրա առաջ ճշմարիտ իմաստութիւնը՝ աներեւոյթ Արարչին ճանաչելը։ Իմաստասէրը յստակ մտքով լսում էր Աստուծոյ այրին երեք օր անընդհատ եւ չէր յագենում նրա քաղցրաբուխ վարդապետութիւնից։ Երբեմն հակառակում էր նրան, բայց, իր տարակոյսների բացատրութիւնն ստանալով, յոյժ հիանում էր։ Եւ, առաւել զմայլուելով սուրբի քաղցր վարքով եւ առաքինի կենցաղավարութեամբ, սիրեց նրան ինչպէս իր անձը, իր հոգին կապուեց նրա հոգուն եւ չկարողացաւ հեռանալ նրանից։ Իսկ չորրորդ օրն ասաց սրբին. «Վարդապե՛տ, վայելուչ է բնակութեանդ տեղը, եթէ հրամայես, կամենում եմ ես էլ այստեղ բնակուել»։ Սուրբը պատասխանեց. «Այստեղ ապաստանելը իւրաքանչիւրի կամքն է»։ Իմաստասէրն ասաց. «Եթէ այդպէս է, ես չեմ գնայ այստեղից, այլ Եղեսիայի դիւանից բերել կտամ այստեղ նաեւ իմ մատեանները եւ կխօսեմ քեզ հետ գրքերով»։ Եւ երբ սուրբը համաձայնեց, իմաստասէրը Կալլիստոսին երկու ծառաների հետ ուղարկեց Եղեսիա։ Կալլիստոսը, Եղեսիայի դիւանից վերցնելով իմաստասէրի

գրքերը, բարձեց ուղտերի վրայ եւ բերեց Եպիփանի անապատը։ Այն ժամանակ սուրբ Եպիփանը իմաստասէր Եպիփանին ասում է. «Գրուած է՝ ատեանում նստեց, դպրութիւններ բացուեցին...», եւ սուրբն իր աջ կողմում բացուած դրեց Աստուածաշունչ Գիրքը եւ տուն առ տուն վերծանում էր Մնդոց գրքի սկիզբը։ Եւ իմաստասէրը դրեց իր գիրքն իր ձախ կողմում եւ նախ բացեց Հեսիոդոս քերթողի գիրքը, սկսեցին քննել գիրքը՝ սիրով վիճելով իրար հետ։ Եւ խօսակցութիւնը երկարելով չէր աւարտում երկար ժամանակ՝ մինչեւ մի տարի, որովհետեւ իմաստասէրը մտածում էր կամ մարդկային ճարտարութեամբ յաղթել, կամ մարդկային փաստերով հաւանել ճշմարտութիւնը եւ չգիտէր, որ Աստուծոյ խորհուրդները հեռու են մարդկանցից, որչափ երկինքը՝ երկրից։ Այդ պատճառով էլ սուրբ Եպիփանը յորդորում էր նրան ի վերուստ խնդրել աստուածային հաւատքը։

Եւ Աստուծոյ կամքով այնպէս եղաւ, որ սուրբ Եպիփանի մօտ բերեցին մի դիւահարի, որին վաթսուն մարդ հազիւ էին կարողանում սանձել երկաթէ կապանքներով։ Այնժամ սուրբն ասում է իմաստասէրին. «Կամ դու բժշկի՛ր նրան հեթանոս աստուածների միջոցով եւ կամ համաձայնի՛ր հաւատալ Խաչեալին, եթէ Նրա Անունը բժշկի»։ Երբ իմաստասէրը հրաժարուեց բժշկել, սուրբը սկսեց քանդել դիւահարի շղթաները։ Եւ երբ իմաստասէրը զարհուրած փախաւ, սուրբը երեք անգամ այսահարի վրայ փրկական Խաչի նշանը կնքեց եւ ասաց պիղծ դեւին. «Տիրոջ մեղաւոր ծառայ Եպիփանոսը հրամայում է քեզ Աստուծոյ խաչուած Որդու՝ Յիսուս Քրիստոսի անունով դո՛ւրս արի այդ մարդու միջից եւ այլեւս մի՛ մտիր նրա մէջ»։ Դեւն արագօրէն դուրս ելաւ, մարդը հանդարտուեց եւ զգաստացաւ։ Երբ իմաստասէրը տեսաւ նրան, վազեց, երկրպագեց Աստուծոյ մարդուն եւ ասաց. «Ո՛վ Եպիփան, պսակուա՛ծդ յաղթութեան փառքով, հաւատում եմ, որովհետեւ խօսքով ասում եւ գործով կատարում են, քանզի անցաւոր ցընդելի խօսքերն օդում անպտուղ են մնում, իսկ գործերն արդիւնքով են պտուղը ճշմարտում։ Արդ, կամենում եմ ես եւս լինել Խաչեալի ծառաներից մէկը»։ Եւ այդ օրից, ստիպում էր իրեն տալ Քրիստոսի կնիքը։ Եպիփանը նրան տարաւ սուրբ Հայր Հիլարիոնի մօտ, որը մկրտեց նրան։ Ապա նրա վրայ երեւացին Աստուծոյ շնորհները, որի համար էլ քսան օր անց նրան ուղարկեցին Ելեւթերուպոլսի եպիսկոպոսի մօտ եւ քահանայ ձեռնադրել տուեցին։ Եւ այնպէս Սուրբ Հոգու օծմամբ վերադարձաւ Եպիփանի անապատը, եւ մեծ ուրախութիւն եղաւ բոլոր եղբայրների ու հաւատացեալների մէջ, ովքեր լսեցին այդ մասին, քանզի անուանի մարդ էր ամբողջ եղեսիացիների, ասորիների ու փինիկեցիների մէջ։ Ապա սուրբ Եպիփանը, քահանայ Եպիփանին կանգնեցնելով եղբայրների մէջ, ասում է. «Սա նա է, ով կարծում էր, թէ ինչ—որ բան է եւ չէր. իր մասին ասում էր, որ իմաստասէր է, բայց չէր։ Բայց այժմ Աստուծոյ շնորհներով ճշմարիտ իմաստասէր եւ իմաստուն եղաւ»։ Այնուհետեւ Եպիփանը իրրեւ հոգեւոր հօր պատուեց

նրան եւ կարգեց եղբայրների առաջնորդ, որտեղ երանելին ընտիր վարքով մնաց մինչեւ իր մահը։ Եւ ունեցաւ բազում աշակերտներ հոգեւոր եւ արտաքին իմաստութեամբ, որոնցից մէկն էր Սամոսում մեկուսացած երեւելի Հռուփանոսը՝ սուրբ Մեսրոպի օգնականը հայերէն գրերի գիւտի օրերին։

Իսկ մեծն Եպիփանի անունն աւելի ու աւելի հռչակուեց իմաստասէր Եպիփանին դարձի բերելուց յետոյ եւ բոլոր կողմերից գալիս էին անապատ՝ նրա մօտ։ Որի պատճառով էլ, մարդկային ամբոխից ձանձրանալով, իր հետ վերցնելով իր աշակերտ Յովհաննէսին, դուրս եկաւ անապատից։ Եկաւ նախ Երուսաղէմ, երկրպագեց սուրբ վայրերին, ապա նաւեց դէպի Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաք։ Այնտեղ, վիճաբանելով հրեայ օրինագէտ Ակիւղասի հետ, քրիստոնէութեան դարձրեց նրան եւ ուղարկեց սուրբ Աթանասի մօտ՝ մկրտուելու, իսկ ինքը դիմեց դէպի անապատ, դէպի Վերին Թեբայիդի կողմերը։ Հանդիպելով երանելի Պափնոտիոսին՝ մեծն Անտոնի աշակերտներից մէկին՝ հարցրեց սուրբ Անտոնի եւ նրա գործերի մասին։ Ապա Եպիփանն ասաց, որ կամենում է հանգիստ առնել Նիտրիայում։ Պափնոտիոսը մարգարէանալով ասաց նրան. «Գնա՛ Կիպրոս կղզին եւ դարմանի՛ր հօտերին, որպէսզի քեզ զգեստաբեր ոչխարներ լինեն, եւ դարմանի՛ր նորածիններին, որպէսզի քեզ գառներ լինեն»։ Եպիփանը, Ղեւոնդուպօլսի կողմերն հասնելով, գնաց տեսնելու Հերաքս անունով մի աբեղայի, որի անունը մեծ համբաւ ունէր։ Նրա մասին ասում էին, որ ունի կանխագիտութեան շնորհ։ Հանդիպեց նրան այն պահին, երբ նա իր մօտ եկած մեծ բազմութեան առաջ խօսում էր մեռելների յարութեան մասին։ Բայց քանի որ կրթուել էր Որոգինեան վարդապետութեամբ, նրա խօսքը հեռու էր ողջամիտ վարդապետութիւնից, քանզի ասում էր, թէ այս մարմինը յարութիւն չի առնում, այլ հող է դառնում, որտեղից առնուեց, եւ ուրիշ մարմին է յառնում նրա փոխարէն լաւ այն հասակի, որում մարդը վախճանւում է, երեխաները մանկահասակ են յարութիւն առնում, իսկ ծերերը՝ ծեր։ Այնժամ Եպիփանը յանդիմանեց նրան՝ ասելով. «Փակա՛նք դիր քո բերանին եւ սովորիր չհայհոյե՛լ մեր ամենքի յոյսին»։ Նոյն պահին Հերաքսի լեզուն կապուեց եւ պապանձուած մնաց։ Եւ Եպիփանն ինքը սկսեց ուսուցանել նրանց մեր հաւատքի ճշմարտութիւնը՝ այս հոգեղէն մարմնով Քրիստոսի կատարեալ հասակով յարութիւն առնելու մասին։ Ապա ասաց Հերաքսին. «Արդ, ճշմարիտ խո՛սքը խօսիր եւ ուղիղ վարդապետութեա՛ն լսող եղիր»։ Այնժամ բացուեց նրա լեզուն, խոստովանեց իր տգիտութիւնը եւ սխալներն ուղղեց։ Իսկ Եպիփանը, իր Յովհաննէս աշակերտի հետ գնալով դէպի Վերին Թեբայիդ՝ հայր Յովհաննէսի մօտ, եօթ օր հանգիստ առաւ մի վայրում, որ Բուբիդ էր կոչւում։ Մինչեւ որ մարդիկ, որոնք նրա համբաւն առնելով, դիմում էին այնտեղ, սկսեցին նաեւ նեղել նրան։ Նրա մօտ եկաւ եւ Եւդեմոն անունով մի փիլիսոփայ։ Երբ Եպիփանը բացեց նրա որդու խաւարեալ աչքը, փիլիսոփան հաւատաց եւ, Ալեքսանդրիա գալով, մկրտուեց։

Այնուհետեւ, երբ Եպիփանի համբաւը տարածուեց ամբողջ Եգիպտոսում, խնդրեցին նրան եպիսկոպոս ձեռնադրուել, որի համար վերադարձաւ Փիւնիկիա, իր առաջին վանքը, բայց այնտեղ Հիլարիոնին չգտաւ, քանզի նա եւս, բազմութիւնից փախչելով, առանձնացել էր Կիպրոսի Պափոսում։ Եպիփանն այցելեց եւ վանական իր եղբայրներին։ Եւ նրանց խնդրանքով երաշտի պատճառով աղօթք արեց, եւ երեք օր անընդհատ անձրեւ եկաւ։ Իսկ երբ հեղեղ սկսուեց, աղօթեց, եւ ջրերի յորդումը դադարեց։ Այն օրերին եպիսկոպոսները հաւաքուել էին Փիւնիկիայում գաւառի եպիսկոպոս ընտրելու նպատակով, ընտրուեց Եպիփանը, եւ պատգամաւոր ուղարկեցին նրա մօտ առաքինի միայնակեաց Պողիբիոսին։ Սուրբ Եպիփանը, կանխելով նրան, ասաց. «Լսի՛ր ինձ, որդեա՛կ, մնա՛ ինձ մօտ եւ երիվարդ վերադարձրո՛ւ իր տեղը ուղեւորի հետ։ Թող Եկեղեցու առաջնորդներն ընտրեն ուրիշ, աւելի արժանաւոր հովի, քանզի ես մեղաւոր մարդ եմ եւ դողում եմ ի՛մ անձի համար Աստծուն հաշիւ տալուց, ուր մնաց, թէ՝ հօտի համար»։ Պողիբիոսը համաձայնեց եւ մնաց, Եպիփանը նրա եւ իր աշակերտ Յովհաննէսի հետ կրկին գնաց Երուսաղէմ եւ, Պաղեստինի Կեսարիա քաղաքը գալով, նաւեց Պափոս եւ, այնտեղ գտնելով Հիլարիոնին, շատ ուրախացաւ եւ սկսեց առանձնանալու համար տեղ փնտրել։ Հայր Հիլարիոնը նրան խորհուրդ տուեց գնալ Կիպրացիների Սալամինա քաղաքը՝ ասելով, որ Տիրոջը հաճելի է իր այնտեղ բնակուելը՝ յօգուտ ժողովրդի։ Բայց նա չհամաձայնեց, որպէսզի չփառաւորուի մարդկանցից։ Եւ նաւ մտաւ՝ գնալու Ասկաղոն, բայց հողմերի պատճառով ստիպուած եղաւ ելնել Սալամինա եւ սպասել ալիքներից մնասուած նաւի նորոգուելուն։

Այդ օրերին Կիպրոս կղզու եպիսկոպոսներն հաւաքուել էին՝ Սալամինա քաղաքի եպիսկոպոս ընտրելու։ Եւ խորհում էին ընտրել սրբութեամբ նշանաւոր եւ Քրիստոսի անուան վկայութեան համար հալածուած Պապ անունով մէկին։ Այնժամ նա ինքը՝ երանելի Պապը, որ այնտեղ հաւաքուած հայրերից մէկն էր, ատեանի ժամանակ ոտքի կանգնեց եւ ասաց. «Տէրը ցոյց տուեց ինձ Սալամինա քաղաքի արժանաւոր հովուին՝ հայր Եպիփանին՝ սքանչելի մարդուն, որն այժմ այս քաղաքում է։ Հրամայէ՛ք ինձ, եւ ես կբերեմ նրան եւ կնստեցնեմ եպիսկոպոսութեան աթոռին»։ Նրա ասածին հաւանութիւն տրուեց, եւ Պապ եպիսկոպոսը երկու սարկաւագների հետ գնաց, շուկայում գտաւ Եպիփանին, որ խաղող էր գնում իր ընկերների համար, ասաց նրան. «Թո՛ղ, հա՛յր, ողոյզդ եւ մեր ետեւից ե՛կ Աստուծոյ եկեղեցին»։ Նա ուրախութեամբ գնաց՝ յիշելով գրուածը. «Ուրախացայ նրանց հետ, ովքեր ասում էին ինձ՝ Տիրոջ տուն գնանք մենք»։ Եւ երբ մտան եկեղեցի, Պապն ասաց Եպիփանին, ինչպէս օրէնք էր ասելու եկեղեցականներին՝ «Աղօթի՛ր, հա՛յր»։ Եպիփանը պատասխանեց. «Ների՛ր, հա՛յր, քանզի Եկեղեցու ժառանգորդ չեմ»։ Եւ երբ նրա բերանից որսաց, թէ չի առել եւ սարկաւագի աստիճան, նրան սարկաւագ, ապա քահանայ ձեռնադրեց, եւ բո-

լոր եպիսկոպոսները միաբանուելով Սալամինա քաղաքի եպիսկոպոս ձեռնադրեցին նրան։ Եւ երբ նրան եպիսկոպոսարան տարան, սուրբ Հայրը դառնապէս լաց եղաւ, քանզի առանձնութիւնը կորցրեց։ Իսկ երանելի Պապը մխիթարեց նրան՝ պատմելով, որ Տէ՛րը ցոյց տուեց իրեն նրա եպիսկոպոսութիւնը եւ ասաց. «Դու չպէտք է դէմ գնաս Աստուծոյ կամքին»։ Այնուհետեւ թէեւ մարմնով ծերացած, բայց հոգով աշխոյժ Եպիփանը ձեռնամուխ եղաւ հոգեւոր աշխատութեան, որ վստահուեց նրան Տիրոջից. հոգեւոր արթնութեամբ տքնում էր գիշեր–ցերեկ եւ անդադար քարոզում կեանքի խօսքը։ Միշտ ունենալով ձեռքին սուրբ Աւետարանը՝ խրատում էր ստահակներին, ուսուցանում տգէտներին եւ սքանչելիքներով հաստատում ասածը։ Կիպրոս կղզում բազում վանքեր հաստատեց եւ բարեկարգութեամբ զարդարեց Եկեղեցին, իսկ աղքատների նկատմամբ նրա գութն անչափ էր, մինչեւ եկեղեցու սպասները վաճառելը եւ կարօտեալներին բաշխելը։

Երբ երանելի Հայրապետ Եպիփանն առաջին անգամ սուրբ Սեղան բարձրացաւ, յայտնապէս տեսաւ Սուրբ Հոգու շնորհների նշանակը սուրբ Խորհրդի վրայ, եւ նոյնը կրկնւում էր նրա բոլոր պատարագների ժամանակ։ Քանզի երբ նա ծածուկ աղօթում էր, իսկոյն յայտնութիւն էր լինում նրան։ Բայց մի օր, երբ երեք անգամ կրկնեց նոյն աղօթքը եւ տեսիլք չտեսաւ, շատ վախեցաւ եւ արտասուքով Աստծուց խնդրեց իրեն հասկանալ տալ պատճառը։ Այդժամ սեղանի ձախակողմը նայելով՝ տեսաւ սարկաւագներից մէկին՝ քշոցը ձեռքին սպասարկելիս, եւ ասաց նրան. «Որդե՛կ, տո՛ւր ինձ քշոցդ եւ գնա՛ տուն»։ Նա գնաց, եւ ոչ ոք պատճառը չիմացաւ։ Իսկ Եպիփանը քշոցը տուեց ուրիշ սարկաւագի եւ նոյն պահին տեսաւ նշանը։ Պատարագն արձակելուց յետոյ այն սարկաւագին առանձին կանչեց եւ սաստելով հարցրեց, թէ ինչ անարժան բան է արել։ Նա, սուրբի ոտքերն ընկնելով, խոստովանեց, որ այն գիշեր մաքուր չէր իր լծակցից։ Այնուհետեւ սուրբ Եպիփանը քահանաներին եւ սարկաւագներին պատուիրեց երկիւղել սրբութիւնից եւ ապա մտնել Սրբութիւն Սրբոցը՝ վարագոյրից կամ բեմի անջրպետից ներս։

Այսքանն է պատմում Եպիփանի աշակերտ Յովհաննէսը, որը մահուանից առաջ, սուրբից զաղտնի, իր գրածները յանձնեց իր աշակերտակցին՝ Պողիբիոսին, որպէսզի նա իրենից յետոյ գրի նրա բոլոր գործերի մասին։ Ըստ Պողիբիոսի վկայութեան՝ Եպիփան Հայրապետն այսպիսի մի սովորութիւն ունէր. դժուար դէպքերի ժամանակ երեսի վրայ գետնին էր ընկնում եւ Աստծուց խնդրում դէպքերի ելքի համար եւ ձայն էր լսում. «Եպիփանէ՛, արա՛ այս կամ այն բանը», վեր էր կենում եւ ուրախութեամբ կատարում։ Այսպէս, Աստծուց հրաման ստանալով Սալամինայում շինեց մի մեծ եկեղեցի, քանի որ նախկինը փոքր էր եւ անբաւական՝ բազմութեան համար։ Դրակոն անունով մի հեթանոս իշխան, որ հակառակում էր Հայրապետին, տեսնելով սքանչելի սուրբին իր մանկանը կողերի հրակէզ ախտից եւ իրեն հիւանդութիւնից բժշկելիս, դարձի եկաւ եւ մկրտուեց իր ամբողջ ընտանիքով։ Աւելի՝ նաեւ, որ դարձի եկաւ Սինեսիոս իշխանը եւ՝ իր որդուն սուրբի աղօթքներով յարութիւն առած տեսնելով։

Եպիփանի բուն վարքում գրուած են նաեւ՝ այլ բաներ՝ նման սուրբ Յակոբ Մծբնացու հրաշքներին, թէ՝ երբ Եպիփանն անցնում էր մի վայրով, նրան հանդիպեցին երկու միմոսներ, որոնցից մէկն ընկերոջն ասաց. «Ես ընկնեմ իբրեւ մեռել, իսկ դու ինձ համար պատա՛նք խնդրիր եպիսկոպոսից»։ Նա այդպէս էլ արեց, եւ սուրբն, իր վերարկուն գցելով ընկածի վրայ, գնաց, իսկ այն մարդն իսկապէս մեռաւ։ Ընկերը, սուրբի ետեւից գնալով, արտասուքով խնդրեց. «Աղաչում եմ վերցրո՛ւ քո զգեստը եւ կեա՛նք տուր մեր անզգամութեան պատճառով մեռածին»։ Իսկ Եպիփանը պատասխանեց նրան. «Գնա՛, որդեա՛կ, եւ թաղի՛ր նրան, քանզի նա առաջ էլ մեռած էր մինչեւ քո՝ ինձանից ողորմութիւն խնդրելը, եւ ես գիտէի, որ մեռաւ, դրա համար պատանք տուեցի»։ Եպիփանը դարձի բերեց նաեւ Իսահակ անունով մի հրեայ գիտունի՝ եւ, մկրտելով նրան, կոչեց Եկեղեցու պաշտօնեաների մէջ։ Պատմւում է, թէ սուրբ Եպիփանը գնացել է Հռոմ եւ բազմել մեծն Թէոդոսի դուռը անբուժելի հիւանդութիւնը, մկրտել Արկադիոս եւ Ոնորիոս արքայորդիներին, իսկ վերջապէս Կոստանդնուպոլսում բժշկել նրանց Հօրը։

Արկադիոս արքան մեծապէս սկսեցաւ սիրել սուրբ Եպիփանին։ Եւ արքունի դուռն հետ նրա ընտանութիւնը Եւդոքիա թագուհուն համարձակութիւն տուեց Յովհան Ոսկեբերանի դէմ խարդախ պատրիարքին եւ Եպիփանին, մանաւանդ՝ որ սուրբ Եպիփանն Աղեքսանդրիայի թէոփիլոս պատրիարքի մեծ բարեկամն էր, իսկ նա Ոսկեբերանի թշնամիների գլուխն էր։ Բացի այդ, զմայլութիւն էր տիրում նաեւ Եպիփանի եւ Երուսաղէմի Յովհաննէս Հայրապետի՝ Ոսկեբերանի սերտ բարեկամի միջեւ։ Այս ամբողջ անցուդարձի ընթացքում Եպիփանն այնուամենայնիւ արդարանում է, քանզի նրա մէջ սիրոյ դէմ ատելութիւն չկար, այլ՝ պարզամտութիւն, որո՛վ թեոփիլեաններին միառժամանակ լսող եղաւ, որոնք իբրեւ պատրուակ ունէին Որոգինեան վարդապետութեան դէմ վրէժխնդրութիւնը, իբրեւ թէ հակամէտ են երկու սուրբ Հայրապետները՝ Ոսկեբերանն ու Յովհաննէսը, եւ քանզի Եպիփանը մէկն էր գլխաւորներից, որոնք խորհում էին Որոգինեան աղանդը բնաջնջելու մասին, խաբուեց թէոփիլեանների չարախօսութիւնից եւ, Եւդոքսիա թագուհու կանչով գալով, նրանց կուսակից կարծուեց։

Եղաւ, որ Եպիփանն օթեւանեց թագուհուն պատկանող մի վանքում։ Վանականները, որ օտարացել էին Ոսկեբերանից, աղաչեցին Եպիփանին, որ ձեռնադրութիւն կատարի, եւ ծերունին կատարեց նրանց խնդրանքը։ Ոսկե-

բերանն, այս լսելով, մեղադրանքի գիր ուղարկեց Եպիփանին, թէ՝ օրէնք չէր քեզ ձեռնադրել այլոց թեմում: Եպիփանը պատճառ բերեց թախանձանքները եւ դէպքերի կարծեցեալ հարկադրանքը: Եւդոքսիային լուր հասաւ, որ սուրբերի մէջ գժտութիւն է ընկել: Նա շատ ուրախացաւ, իր մօտ կանչեց Եպիփանին եւ ասաց. «Հա՛յր Եպիփան, տեսնո՞ւմ ես, որ Հռովմէացւոց ողջ տէրութիւնը վեր ի վայր է լինում Յովհաննէս եպիսկոպոսի երեսից, արդ, ինչպէս իմը. մարմնաւոր իշխանութիւնն է, քոնը՝ հոգեւորը՝ տէրութեանս մէջ, եւ քանզի Յովհաննէսն իր հերձուածի պատճառով արժանի չէ մնալ այս թագաւորական քաղաքի Աթոռին, արտաքսի՛ր նրան եւ բե՛ր ուրիշ մէկին, ում Աստուած ցոյց կտայ քեզ, մեզ եպիսկոպոս կարգի՛ր նրան»: Եւդոքսիան այս ասում եւ սաստիկ բարկութեամբ փրփրում էր Յովհաննէսի դէմ: Եպիփանը հեզութեամբ պատասխանեց. «Լսի՛ր ինձ համբերութեամբ՝ իբրեւ հօր: Եթէ Յովհաննէսը հերձուածող է, ինչպէս դու ես նրա մասին ասում, եւ չի զղջում, քահանայութեան արժանի չէ, այնժամ ինչ ձեր մեծութիւնը հրամայի, այն էլ կանեմ, բայց եթէ թշնամութեան պատճառով ես կամենում Եկեղեցուց հանել Յովհանին, այդ բանում Տիրոջ ծառայ Եպիփանը քեզ խորհրդակից չի լինի: Եւ ա՛յս իմացիր, որ ինքնակալներիդ առաւե՛լ պատշաճ է ներել անիրաւութիւնները, որովհետեւ դուք եւս Տէր ունէք երկնքում, Որի առաջ հանապազ մեղանչում էք, բայց Նա ներողամիտ է ձեր հանդէպ: Մի՞թէ գրուած չէ Աւետարանում. «Գթա՛ծ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրն է գթած»: Այնժամ մոլեգնած թագուհին ասում է. «Հա՛յր Եպիփան, եթէ խափանես Յովհաննէսին աքսորելը, կբանամ կուռքերի տաճարները եւ յետինն առաջինից չար կանեմ»: Աստուծոյ այր Եպիփանն, այս լսելով, ականջները խցեց, բացեց օձիքը՝ ասելով. «Անպարտ եմ ես այս դատաստանից», ապա շտապ դուրս ելաւ պալատից եւ փութաց դուրս գալ քաղաքից: Բայց Եւդոքսիան իր ներքինիներին պատուիրեց Յովհաննէսի ականջին հասցնել, թէ՝ Եպիփանը եւս գրեց քեզ աքսորելու ամբաստանագիրը: Այս պատճառով էլ Ոսկեբերանը Եպիփանին այսպէս գրեց. «Ո՛վ սքանչելիդ Եպիփան, որ կամեցար իմ անկումը եւ գիր գրեցիր ինձ աքսորելու համար: Այսուհետեւ դու ե՛ւ մի նստիր քո Աթոռին»: Եպիփանը նրան այսպէս պատասխանեց. «Ո՛վ նահատակդ Քրիստոսի Յովհան, վարդապե՛տ ճշմարտութեան, յաղթեցի՛ր եւ պիտի յաղթե՛ս, քանզի ինչպէս ես չեմ հանի իմ Աթոռին, նոյնպէս եւ դու չես հանի քո աքսորավայրը»:

Եւ Աստուծոյ կամքով կատարուեցին երկու սուրբերի գուշակութիւնները, որոնք միաժամանակ մարդկօրէն գժտուած էին միմեանց հետ, բայց հոգու տեսութեամբ հասկացան իրար անմեղութիւնը եւ միմեանց վախճանի կերպը: Ինչպէս որ սուրբ Ոսկեբերանն իր երկրորդ անգամ վտարանդիութեան ժամանակ մեռաւ աքսորի ճանապարհին եւ թաղուեց Կոմանայում, սուրբ Եպիփանն էլ մեռաւ նաւի մէջ, Կիպրոս վերադառնալիս: Քանզի երբ

Եպիփանը տեսաւ, որ ոչ մի հնար չկայ խաղաղեցնելու Ոսկեբերանի դէմ ցասումով լցուած թագուհուն, գնաց հրաժեշտի ողջոյն տալու Արկադիոս կայսերը: Եւ նոյն օրն էլ նաւ մտաւ՝ Կիպրոս գնալու, նստում հիւանդացաւ եւ, կանչելով իր երկու աշակերտներին, նրանց հոգեշահ խրատներ ու պատուէրներ տուեց, իսկ նաւավարներին ասաց. «Աղօթեցէ՛ք, որդինե՛ր, քանզի այսօր մեծ մրրիկ է լինելու ծովում, բայց մի՛ վախեցէք, քանզի ձեզանից ոչ մէկին վնաս չի լինի»: Եւ արեւի մայր մտնելուն պէս սկսուեց ուժեղ փոթորիկ, նաւը մօտ էր ընկղմուելուն, ալեկոծութիւնը տեւեց երկու—երեք օր: Եւ սուրբ Եպիփանը, հոգեվարքի հասնելով, համբուրեց սուրբ Աւետարանը, որ միշտ կրում էր իր մօտ, հրամայեց խունկ լցնել կրակին, աղօթել, փառաբանել Աստծուն, օրհնեց Արկադիոս թագաւորին, բոլոր քրիստոնեաներին, նաւի մէջ եղողներին եւ, բոլորին ողջունելով, աւանդեց հոգին առ Աստուած: Առժամանակ ծովը հանդարտուեց, եւ խաղաղութիւն եղաւ: Սուրբ Եպիփանը հարիւր տասնհինգ տարեկան էր: Արդ, երբ նաւը Կիպրոսի նաւահանգիստը հասաւ, եւ սուրբի փոխուելու լուրը տարածուեց Կոստանդիա քաղաքում, անհամար բազմութիւն ընդառաջ ելաւ նրան՝ խունկերով ու մոմերով, եւ, երանելուն ցամաք հանելով, մեծ կոծ արեցին նրա վրայ: Ասում են, որ երբ երեք կոյրեր տուեցին նրա անունը՝ ասելով. «Ո՛վ սուրբդ, այնպէ՛ս արա, որ մենք արժանանանք երկրպագելու քո սուրբ նշխարներին», նոյն պահին բացուեցին նրանց աչքերը: Ապա, վերցնելով սուրբի մարմինը, բերեցին մեծ եկեղեցին, որ ինքն էր շինել, եւ ամփոփեցին նրան մի տապանում, իսկ քահանաները սուրբի տապանն ամփոփեցին տաճարի մէջ՝ սաղմոսներով ու հոգեւոր երգերով, եւ այս ամենի մասին գրով հաղորդեցին Արկադիոս կայսերը: Նա քառասուն օր սգի մէջ մտաւ եւ Սալամինայի եկեղեցու միաբանութեանն ուղղուած մի հրովարտակով իր կատարեալ հաճութիւնը յայտնեց Աստուծոյ տաճարում սուրբին թաղելուն:

Արդ, սուրբ Եպիփանը, որ աթոռի անունով Կիպրացի է կոչւում, վախճանուեց Տիրոջ 403 թուականի մայիսի 12—ին: Նա Եկեղեցուն անմոռաց յիշատակ թողեց իր լուսաւոր վարդապետութիւնը, բազմաթիւ ճառեր ու ներբողներ Փրկչի տնօրինական տօների վերաբերեալ, բազում խրատներ ողորմութեան ու առաքինութեան մասին, սաղմոսների մեկնութիւններ, գրեց նաեւ գիրք ուղիղ հաւատքի եւ վարքի մասին՝ Անքոռադոն կոչուած, գիրք՝ ընդդէմ հերձուածների ու աղանդների, եւ բազում այլ պիտանի ու օգտաշահ գրուածքներ, որոնցից շատերը կան մինչեւ այսօր: Նա իրաւամբ դասուեց Եկեղեցու տասներկու վարդապետների շարքում:

ՄԵՐ ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ՎԱՐՔԸ

Երանելի Ներսէս Լամբրոնացին՝ երկրորդ Պօղոս տարսոնացի առաքեալը, սքանչելի այրը, քարոզութեան խօսքով առաքելանման, Հայաստանեայց Եկեղեցու լուսատու վարդապետը, Արշակունեաց ազգակից Հայկազունեանց տոհմից էր, Կիլիկիայի Լամբրոն դղեակի տիրոջ՝ Օշին Հեթումեանի որդին: Նրա մայրը սուրբ Ներսէս Շնորհալու եղբօր՝ Թահանի Թահանդուխտ դուստրն էր: Իր անունը ստացել է Ներսէս Շնորհալուց, քանզի նրա առաջին անունն էր Սմբատ: Ներսէսն ունէր չորս եղբայր՝ Հեթում, Ապիրատ, Թահնշահ, Գրիգոր, եւ երեք քոյր՝ Մարիամ, Շուշան եւ Տալիթա:

Ներսէս Լամբրոնացին ծնուել է 1153 կամ 1154 թուին: Երբ նա դեռ մօր արգանդում էր, ծնողներն ուխտ էին արել Աստծուն ընծայել իրենց զաւակին: Բայց երբ ծնուեց, անանելով մանկան հրաշալի վայելչութիւնը՝ ասացին. «Զարմէ այսպիսի գեղեցկութիւնն աշխարհից դրկել, սրա փոխարէն միւս որդիներից մէկին տանք Աստծուն»: Շուտով ապայի վրայ մահաբեր հիւանդութիւն հասաւ: Նրա բարեպաշտուհի մայրը՝ Թահանդուխտը, նրան տարաւ Լամբրոն ամրոցի մօտ գտնուող Սկեւռայի վանքի սուրբ Աստուածածին եկեղեցին, որտեղ նախքան մանկան ծնունդն ուխտ էր արել, եւ կրկին ուխտերով նրան ընծայեց Տիրոջը, եւ որպէսզի ուխտն անարատանելի մնայ, խանձարուրի մէջ նրա վրայ քահանայական օրհնութիւններ կարդալ տուեց: Մանուկն անմիջապէս առողջացաւ: Երբ Նեղսէսը մեծացաւ, Աստուծոյ շնորհները երեւացին նրա վրայ: Եւ, անուան լինելով Աստուծոյ երկիւղով, նա բոլորին ցանկալի դարձաւ իբրեւ մարմին առած հրեշտակ:

Մի անգամ հայրը նրան տարաւ Կոստանդնուպոլիս, Մանուէլ կայսեր մօտ: Կայսրը Ներսէսին յորդորեց մնալ արքունիքում. «Կմեծարեմ քեզ առաւել մեծ փառքով,— ասաց,— քան քո հօրը»: Մանուկը պատասխանեց. «Եթէ անանց լինէին մեծութիւնները, կլսէի խօսքերդ, սակայն ես շտապում եմ հասնել անանց մեծութեանը»: Այսպէս խօսեց նաեւ Անտիոքի լատին կոմսի մօտ:

Սրանից յետոյ մանուկը մնուեց Սկեւռայի վանքում, ճգնազգեաց եւ առաքինի Յովհաննէս վարդապետի հոգեւոր դաստիարակութեամբ, առաջադիմեց սուրբ վարքով եւ գրքերի գիտութեամբ, քանզի հոգեւորի մէջ փութաջան էր եւ իմաստութեան ուսմունքների ծարաւ, ուշիմութեամբ՝ անանման, Աստուծոյ Հոգու ձիրքերով զարդարուն:

Ներսէսը տասնվեց տարեկան էր, երբ մեռաւ հայրը, որն իր Հեթում որդուն կտակել էր հայրենի Լամբրոնի իշխանութիւնը, իսկ Աստուծոյ նուիրեալ Սմբատին՝ Սկեւռայի վանքի առաջնորդութիւնը, որի եկեղեցին ինքն էր շինել: Բայց այլ էին Սմբատի սրտի խորհուրդները, քանզի նա, ճգնութեան եւ անապատական կեանքի տենչանքով լցուած, կամենում էր խոյս տալ առանձնութեան մէջ եւ հրաժարուել եկեղեցական պատիւներից: Այս իմանալով նրա մայրը՝ Թահանդուխտը, որպէսզի իր զաւակը չհեռանայ իրենից, որոշեց ուխտի գնալ Երուսաղէմ: Նա իր հետ Հռոմկլայ տարաւ պատանի Սմբատին՝ սուրբ հայրապետ Ներսէս Շնորհալուց օրհնութիւն ստանալու նպատակով, եւ Շնորհալուն իրազեկ դարձրեց ամէն ինչի մասին: Շնորհալին, պատանուն տեսնելով, հոգով ճանաչեց աստուածային շնորհը, որ կար նրա մէջ, քահանայ ձեռնադրեց նրան եւ իր անունով կոչեց Ներսէս: Եւ հայրապետանոցում միաժամանակ պահեց, որտեղ նորընծայ Ներսէս քահանան, վայելելով Ներսէս Շնորհալու հոգեւոր խնամակալութիւնը, զգեցաւ նրա հոգին: Ապա նրա հրամանով գնաց Սեւ լեռան վանքը: Եւ այնտեղ մնաց գիտնական վարդապետ Ստեփանոսի մօտ՝ սրբութեամբ եւ իմաստութեամբ օրէցօր փայլելով: Վանականները, տեսնելով Ներսէս աբեղայի հոգու եռանդը, նրան խնդրեցին գործի դնել ի վերուստ տրուած տաղանդը եւ քարոզչական գործունէութիւն ծաւալել իր քաղաքում բազում մարդկանց հոգիներին ի շահ: Այդ նպատակով Ներսէսը եկաւ Լամբրոն: Եւ տասնութ տարեկանում, որպէս կատարեալ այր եւ բանիբուն ուսուցիչ, սքանչելի ու վսեմ խօսքերով քարոզում էր եկեղեցում իբրեւ մի նոր Ոսկեբերան, եւ նրա շուրթերից շնորհներ էին բխում: Շուտով նրա անունն այնքան հռչակուեց, որ քաղաքացիները միաբան թախանձեցին նրան դառնալ իրենց եպիսկոպոսն ու մօտակայ Սկեւռայի վանքի առաջնորդը: Բայց երանելին խոյս տուեց իր հոգեւոր հօր՝ Յովհաննէսի մօտ, Տաւրոսի լեռների մէջ, սուրբ Գեւորգ եկեղեցու մօտ գտնուող Շուղրի անապատի սուրբ Աստուածածին կոչուած միանձանց վանքը: Այնտեղ, անձուկ խցում առանձնանալով, նա օրերն անցկացնում էր աստուածային խորհուրդների մէջ, մշտնջենաժամուն արտասուաբուխ աղօթքներով, Սուրբ Գրքի, սուրբ հայրերի խօսքերի, շարագրութիւնների ու թարգմանութիւնների ընթերցանութեամբ: Միայն կիրակիից—կիրակի դուրս էր գալիս վանքի եկեղեցի՝ սուրբ Պատարագ մատուցելու: Միւս օրերը խցի մէջ էր անցկացնում մենամարտելով աներեւոյթ թշնամու դէմ ճգնութեամբ, բազմօրինակ ճիգերով ու չարչարանքներով: Նրա համար ուտելիք բերող սպասաւորը շատ յաճախ տեսնում էր, որ նախկին բերուածներին ձեռք չի տրուած:

Տէրը նրան տուեց սքանչելագործելու շնորհ, եւ երանելին շատերին փրկեց պէս—պէս ախտերից, ազատեց չար դեւերից: Եւ, փառքից փախչելով, տեղը փոխեց: Մի անգամ Ներսէս Շնորհալու կանչով գնաց նրա մօտ, բայց, այս աշխարհից հեռացած գտնելով նրան, դարձաւ իր անապատը: Այնժամ Շնորհալու յաջորդը՝ Գրիգոր կաթողիկոսը՝ Տղայ կոչուած, գրով իր մօտ կանչեց Լամբրոնացուն եւ ձեռնադրեց Կիլիկիայի Տարսոն քաղաքի

արքեպիսկոպոս, 1176 թուին, երբ Ներսէսը քսաներեք տարեկան էր, քանզի քաջ գիտէր նրա առաքինութիւնն ու իմաստութիւնը: Սկեւռայի վանքի միաբանութիւնը նրան յանձնեց տեղի առաջնորդութիւնը: Եւ նա որպէս քաջ եւ արթուն հովիւ խնամում էր բոլորին եւ բոլորի աչքում սքանչելի էր ու ճշմարտութեան հզօր քարոզիչ՝ ե՛ւ խօսքով, ե՛ւ գրով: Բայց մի տարի անց, տեսնելով, որ առաջնորդութեան գործը խանգարում է ընթերցելուն եւ աղօթելուն, գաղտնի գնաց Եուղրի իր անապատը, ուր քսանչորս տարեկանում գրեց եկեղեցական կարգերի մեկնութիւնը, պատարագի խորհուրդը եւ Եկեղեցու ժառանգաւորաց ճառերը, իսկ յաջորդ տարում 1178 թուին, իր հոգեւոր հօր՝ Յովհաննէսի խնդրանքով ձեռնարկեց սաղմոսների խորհրդական մեկնութեանը: Նոյն ժամանակ նրա մայրն ու եղբայրները, Սկեւռայի վանքի միաբաններով հանդերձ, սրբին կարօտած լինելով, կաթողիկոսի հրամանով վերադարձրին նրան իր տեղը: Բայց սակաւ ժամանակ անց նա, խոյս տալով փառքից ու զբաղմունքներից, դիմեց դէպի Եգիպտոսի ճանապարհը՝ թաքնուելու նախկին ճգնաւորների անապատներում: Եւ երբ նրան հետամուտ մարդիկ ետ ուղարկեցին նրան, մի քանի օր հանգիստ առաւ եւ մտերիմներից մէկի ուղեկցութեամբ լռելեայն ընթացաւ ետ՝ դէպի Սեպուհ լեռը, սուրբ Լուսաւորչի ճգնարանը՝ բազում չարչարանքներով, ոտքերը պատառոտելով, բայց կէս ճանապարհին բռնութեամբ վերադարձրին նրան: Այսպէս պատահեց երկու–երեք անգամ քահանայութեան եւ եպիսկոպոսութեան ժամանակ, երբ ժողովուրդը նրան վերադարձրեց Սեպուհ լեռան ճանապարհից: Անձանօթ կերպարանքով դարձեալ փախաւ Կիպրոս կղզին, յոյն միանձնց վանքը, որի մասին աւելի ուշ իմանալով ազգականներն եկան եւ այնտեղից տարան իրենց մօտ: Այնուհետեւ սուրբը, նրանց կամքին զիջելով, միաժամանակ իր տեղում մնաց՝ ծովացնելով իր վարդապետութեան խօսքերը եւ արբեցնելով ծարաւներին: Նրա սրբութեան եւ իմաստութեան համբաւը հնչում էր ամբողջ Հայաստանում, նաեւ յոյների, լատինների, ասորիների մօտ, եւ նրա անունը բարձրացաւ իշխանների առաջ: Ուստի եւ, նորից փառքից փախչելով, գնաց Եուղրի անապատի իր նախկին ճգնարանը եւ իր անձն առաջուայ պէս տուեց աղօթքների, տքնութեան, ընթերցումների: Բայց կաթողիկոսի հրամանով հարկադրուեց փութով վերադառնալ Հռոմկլայ՝ յոյների հետ միաբանութեան ժողովի համար, որի ժամանակ այն հրաշալի ատենաբանութիւնը խօսուեց: Թարգմանեց եւ Յովհաննու Յայտնութեան մեկնութիւնը՝ գրուած Կեսարիայի արքեպիսկոպոս Անդրէաս Կրետացու կողմից: Դրանից յետոյ, 1181 թուին, Տարսոնի Սկեւռայի վանքում աւարտեց սաղմոսների մեկնութիւնը: Լամբրոնացին գրեց եւ Սողոմոնի առակների մեկնութիւնը, Ժողովողի եւ տասներկու մարգարէների գրքերի մեկնութիւնները, յօրինեց նաեւ բազում ճառեր Տէրունական տօների մասին, որոնցից է եւ Վերափոխման ճառը՝ սուրբ Աստուածածնին ընծայուած նուիրական գործ, իսկ Համբարձման ճառը, եւ առաւել եւս՝ Պենտեկոստէինը,

սխրափայլ է ու հոգելից. նաեւ այլ գրուածքներ ու զօրաւոր նամակներ, բազմաթիւ թարգմանութիւններ յունարէնից ու լատիներէնից, նաեւ շարականներ, Ենորհալու վարքը (չափածոյ գրուած) եւ այլ պէս–պէս հոգեւոր աշխատութիւններ: Նաեւ Տարսոնի սուրբ Սոֆիա եկեղեցում կարգ հաստատեց չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին հաց եւ բակլայ բաժանել երեք հարիւր աղքատների, արեց նաեւ շատ բարեգործութիւններ իր հօտի համար: Սկեւռայի վանքում շինեց նոր եկեղեցի: Իր հօր եւ եղբօր շինած եկեղեցու նաւակատիքն արեց Նոր Կիւրակէի օրը: Կրօնաւորութեան քող եւ զգեստ տուեց իր երկու քոյրերին՝ Եուշանին ու Տալիթային, նաեւ՝ իր բարեպաշտուհի մօրը՝ Եահանդուխտին, յետոյ կրօնաւոր դարձաւ նաեւ միւս քոյրը՝ Մարիամը: Լամբրոնացին ապրեց մինչեւ Լեւոնի Հայոց թագաւոր օծուելու օրերը Գրիգոր Ապիրատի կողմից, 1198 թուականի յունուարի 6–ը: Նոյն տարում նրան հրաւէր եկաւ երկնքից՝ ըստ իր հանապազօրեայ տենչանքների: Եւ, այս խօսքն ասելով, «Քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին, Յիսո՛ւս, ընդունի՛ր քո Ներսէսի հոգին», մաքրափայլ հոգին աւանդեց յուլիս ամսի 14–ին, քառասունհինգ կամ քառասունվեց տարեկանում, եւ փառքով թաղուեց Սկեւռայի սուրբ վանքում, Լամբրոնի դղեակի մօտ: Եւ նրա քեռորդու՝ Ներսէս սրբակրօն քահանայի խնդրանքով, 1204 թուին, սուրբ վարդապետ Գրիգոր Սկեւռացին կամ Լամբրոնացին, որ Սկեւռայի վանքի առաջնորդութեան մէջ ճանաչւում է իբրեւ Ներսէս Լամբրոնացու աշակերտ եւ յաջորդ ընդարձակ ներբողական ճառ յօրինեց: Թող եւ ուրիշ իմաստուններ ժամանակին յիշեն սուրբ Ներսիսեանց աշակերտներին, որոնց յաւիտենական յիշատակն օրհնութեամբ թող լինի:



ՀՈԳԵՒՈՐ ՄԱՍԿՈՅԹ

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԸ Է-Ը ԴԱՐԵՐՈՒՄ

ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՂՑԵՑԻ (615–628)

Արագածոտն գաւառի Աղց գիւղում է ծնուել եղբօրորդին Թէոդորոս Քռթենաւոր հռչակաւոր գիտնականի, որի թելադրանքով, հայրենի Աղց գիւղում իր նախնական կրթութիւնն ստանալուց յետոյ, մեկնում է ուսանելու Սիւնեաց վարդապետանոցում, որը մեծ հռչակ էր վայելում է դարում: Աղց գիւղից ոչ հեռու՝ Տեղեր գիւղում գտնուող Ս. Աստուածածին վանքն այդ շրջանում յայտնի էր իր երաժշտական դպրանոցով, որը միակն է իր տեսակի մէջ, որի մասին յիշատակութիւն է պահպանուել մեր մատենագրութեան մէջ: Հարկ է ասել նաեւ, որ այդ վանքում են սովորել երեք նշանաւոր շարականագիր հայրապետներ՝ Կոմիտաս Աղցեցին, Սահակ Զորափորեցին եւ Յովհան Օձնեցին:

Է դարը հայ մշակոյթի պատմութեան մէջ նշանաւորւում է ճարտարապետութեան բուռն ծաղկումով:

Հայաստանի տարածքում վեր են խոյանում բազմաթիւ կոթողներ, որոնց մէջ առանձնապէս արժէքաւոր են Ս. Հռիփսիմէի, Ս. Գայիանէի, Զուարթնոցի եւ Մաստարայի տաճարները, որոնցից իւրաքանչիւրն ունի ինքնատիպ ճարտարապետական կերտուածք:

Ճարտարապետութեան բուռն ծաղկմանը զուգահեռ, Է դարում, նոր վերելք է ապրում նաեւ մեր հոգեւոր քնարերգութիւնը՝ երգասացութիւնը, որի ամենանշանաւոր ստեղծագործողներից էր Կոմիտաս կաթողիկոսը:

Կոմիտասի կեանքի ու հայրենաշէն գործունէութեան մասին առաջին եւ հաւաստի աղբիւրը Սեբէոսն է, որն իր պատմած դէպքերի ականատեսն է:

Կոմիտասը, 615–ին արժանաւորապէս բարձրանալով հայրապետական աթոռին, անմիջապէս ձեռնամուխ է լինում հայրենիքի ու Հայ Եկեղեցու անմխիթար վիճակն ամոքելու դժուարին գործին: Նշենք, որ վրացիք նոր էին անջատուել Հայ Եկեղեցուց, պարսիկները գրաւել

էին Երուսաղէմը եւ գերեվարել ս. Խաչափայտը: Մոգութիւնը, այս յաղթանակից հարբած, ամէնուրեք ծաղր ու ծանակի էր ենթարկում քրիստոնէութիւնը եւ հաւատացեալներին:

Այս շրջանում չափազանց ծանր էր նաեւ Հայաստանի քաղաքական ու տնտեսական վիճակը:

Կոմիտաս կաթողիկոսը, Հայ Եկեղեցու եւ հայ աւագանու կողմից լիազօրուած, 615 թուականին, հայրապետական գործերը վստահելով Յովհան Մայրավանեցուն, Ամատունեաց Մատթէոս եպիսկոպոսի ուղեկցութեամբ մեկնում է Պարսկաստան՝ Հայոց աշխարհի ծանր վիճակն անձամբ արիաց արքային ներկայացնելու: Նոյն օրերին Պարսկաստան են մեկնում նաեւ Վրաց եւ Աղուանից կաթողիկոսները: Պարսկաստան է ժամանում նաեւ Երուսաղէմի Զաքարիա պատրիարքը:

Այդ նոյն թուականին Ապրուէզ Խոսրովի հրամանով գումարւում է Տիզբոնի ժողովը: Այս ժողովի գլխաւոր կազմակերպիչներից էին եւ մեծ հեղինակութիւն էին վայելում Սմբատ մարզպանն ու Գաբրիէլ հայազգի բժշկապետը:

Ինչպէս յայտնի է, Խոսրով Ապրուէզը Տիզբոնի յիշեալ ժողովից վտարում է քաղկեդոնականներին ու հրեաներին:

Ժողովը, որին նախագահում էր Սմբատ մարզպանը, զբաղուեց տիեզերական առաջին երեք Ժողովների եւ Քաղկեդոնի դաւանական հարցերով եւ յանգեց այն եզրակացութեան, որ Քաղկեդոնի ժողովը հակասում է տիեզերական երեք ժողովների ոգուն եւ մոլորական վարդապետութիւն է:

Ասորական Եկեղեցու առաջարկութեամբ Կոմիտաս կաթողիկոսը մի քանի օրուայ ընթացքում պատրաստեց եւ ժողովին ներկայացրեց Հայ Եկեղեցու դաւանութիւնը: Ներկաները համոզուեցին, որ այն իրօք հարազատ է Քրիստոնեայ Եկեղեցու ուղղափառ դաւանութեանը՝ ըստ առաջին տիեզերական երեք Ժողովների որոշումների:

Սեբէոսը հաւաստում է, որ Խոսրովը հրաման է արձակում, «եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են, հաւատ զհայոցն կալցին...» (Սեբէոս պատմ., էջ 151):

Սեբէոսն աւելացնում է նաեւ, որ Կոմիտաս կաթողիկոսի ներկայացրած ուղիղ խոստովանութեան թղթի պատճէնը Խոսրով արքայի հրամանով կնքում են իր մատանիով եւ պահում արքունի գանձարա-

նում: Ժողովը միաժամանակ պատիժներ է սահմանում մոլորուածների համար, իսկ վրաց եւ աղուանից կաթողիկոսներին դարձնում է հարկատու:

Այսպիսով, Կոմիտասը մեծ պատուով ու յարգանքով վերադառնում է Հայաստան եւ ձեռնամուխ լինում Հայ Եկեղեցու եւ Հայաստան աշխարհի վերաշինութեան գործին:

Տիզբոնի վերոյիշեալ ժողովի մասին վկայութիւն կայ նաեւ Անանիա Մոկացու թղթում, ըստ որում, 617 թուականին, ժողովից յետոյ, Դուին են գալիս Մարութա եւ Պետրոս Յակոբիկ ասորի եպիսկոպոսները եւ իրենց դաւանական միութիւնը յայտնում հայերի հետ:

Այդ օրերին Կոմիտասն աւարտում է Դուինի Ս. Գրիգոր եկեղեցու կառուցումը: Նա վերակառուցում է նաեւ Ս. Էջմիածնի կենտրոնական գմբեթը, որը մինչեւ այսօր մնացել է կանգուն՝ մի քանի անշան վերանորոգումներով միայն:

618 թուականին Կոմիտաս կաթողիկոսն աւարտում է Ս. Հռիփսիմէի գերահրաշ տաճարի կառուցումը: Ահա՛ Սեբէոսի վկայութիւնն այդ մասին.

«Եւ եղեւ յամի ԻԸ (28) երրորդի թագաւորութեան Ապրուէզ Խոսրովու քակեաց կաթողիկոսն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած եւ մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի հայոց կաթողիկոսի, որդւոյն Ներսէսի: Արդ, մինչդեռ քակէին զորմն մատրանն, երեւեցաւ յանկարծակի լուսաւոր եւ չքնաղագիւտ արքունական մարգարիտն, այսինքն՝ կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հռիփսիմէի...

Ո՛վ մարգարիտ, որ ո՛չ ծովածին, այլ՝ մարգարիտ, որ ծնեալ ի թագաւորական ազգէ եւ սնեալ ի գիրկս սրբութեան եւ նուիրեալ Աստուծոյ, որում ցանկացեալ էին զքեզ տեսանել արդարք, եւ խանդակաթ էր ի սէր քո երանելին Կոմիտաս»:

Սեբէոսը գրում է նաեւ համազգային այն մեծ հետաքրքրութեան եւ բուռն սիրոյ մասին, որ տածում է հայ ժողովուրդը սրբուհու աճիւնի ու յիշատակի հանդէպ:

Հայաստանի բոլոր կողմերից շտապում են Վաղարշապատ. «Եւ դղրդեալ ամենայն կողմն հիւսիսոյ գայր յերկրպագութիւն, եւ բազում ախտաժետաց լինէր բժշկութիւն ամենայն ցաւոց»,– գրում է Սեբէոսը:

Նոյն պատմիչի վկայութեամբ, Կոմիտասը Հռիփսիմէի աճիւնը

թողնում է մի որոշ ժամանակ դրսում «վասն գիճութեան որմոյն, մինչեւ ցամաքել կրոյն: Ապա ամփոփեցաւ ի կայանս իւր»:

Սեբէոսը նշում է նաեւ Հռիփսիմէի հասակի մասին. «Չափ հասակի էր երանելւոյն ինն թզաւ եւ չորս մատունս»:

Այս դէպքերից ոգեւորուած Կոմիտաս կաթողիկոսն այդ իսկ օրերին ստեղծեց իր սքանչելի «Անձինքը», որն ամենայն հաւանականութեամբ առաջին անգամ երգուել է տաճարի Նաւակատեաց հանդիսութեան առիթով, եւ ապա՝ կոյսերի ամենամեայ յիշատակի տօնախմբութեանը:

Պէտք է կարծել, որ հռիփսիմեանց կոյսերի տօնակատարութիւնը մեր Եկեղեցին հաստատել է դեռեւս Լուսաւորչի ու Տրդատի ժամանակներում, սակայն հինգերորդ դարում ս. Սահակի երկարամեայ գահակալութեան շրջանում այդ տօնն աւելի է կայունացուել մեզանում, ապացոյց՝ որ ս. Սահակ Պարթեւ հայրապետն է վերաշինել ս. Հռիփսիմէի վկայարանը, ինչպէս նկատեցինք Սեբէոսի հաւաստումի մէջ: Ըստ այդ հաւաստման Կոմիտասը տեսել է ս. Գրիգոր Լուսաւորչի եւ ս. Սահակի մատանիների կնիքը Հռիփսիմէի դագաղի վրայ եւ, չհամարձակուելով բաց անել այն, ինքն էլ իր հերթին թողել է իր մատանու կնիքը:

Յաւօք սրտի, Սեբէոսը լռում է «Անձինքի» յօրինման մասին, սակայն նրա պատմութեան մէջ առկայ են բազմաթիւ բառեր ու բառակապակցութիւններ, որոնք գործածուած են «Անձինքի» տողերում:

Այսպէս. «պատուական մարգարիտ», «ի գիրկս սրբութեան», «նուիրեալ Աստուծոյ» եւ կամ «սիրոյն Քրիստոսի» եւ նման արտայայտութիւններ:

Յայտնի է, որ Կոմիտասի «Անձինքի» բուն աղբիւրը հանդիսանում է Ագաթանգեղոսի պատմութիւնը: Սակայն Կոմիտաս կաթողիկոսը կարողացել է ստեղծել մի այնպիսի անզուգական գոհար, որը շուրջ 12 դարեր շարունակ առանձնանում է մեր հարուստ ու անմման քնարերգութեան մէջ:

«Անձինքն» առանձնապէս աչքի է ընկնում բանաստեղծական բարձրարուեստ յօրինուածքով, քրիստոնէական երկիւղած ջերմեռանդութեամբ ու գեղարուեստական նուրբ ու քնքոյշ ճաշակով:

«Անձինք նուիրեալքը» եղել եւ մնում է մեր Շարակնոցի պատուական եւ ընտրելագոյն մարգարիտներից մէկը: «Անձինք նուի-

ռեալքը», որ նոր երեւոյթ է մեր հոգեւոր երգասացութեան մէջ, իր կառուցուածքով, բազմաթիւ ու նրբաճաշակ գեղեցիկ պատկերներով, սքանչելի համեմատութիւններով, տաղաչափութեան բազմազանութեամբ ու մանաւանդ համարձակ մտքերով զգալիօրէն տարբերւում է մինչ այդ ընդունուած ու ընդհանրացած համաքրիստոնէական հոգեւոր քնարերգութիւնից: «Անձինքը» հսկայական ազդեցութիւն է ունեցել մեր միջնադարեան քնարերգութեան ու նրա հետագայ զարգացման վրայ:

«Անձինքը» մեր քնարերգութեան մէջ նշանաւորուեց նաեւ նրանով, որ այն առաջին լայնաշունչ երգն էր՝ բաղկացած 36 տներից եւ կազմուած մեսրոպեան այբուբենի յաջորդականութեամբ: Միով բանիւ, «Անձինքի» միջոցով դրուատւում ու ներբողւում էր մեր աննման այբուբենը:

Հետագայում գրուած բոլոր 36 տներից բաղկացած բանաստեղծութիւնները՝ հոգեւոր թէ աշխարհիկ բովանդակութեամբ, կոչուեցին Անձինք, այսինքն՝ հայ քնարերգութեան մէջ, շնորհիւ Կոմիտաս կաթողիկոսի, սկսուեց մի նոր տեսակ: Օրինակ՝ Դաւթակ Քերթողի յօրինած Ջեւանշիրի ողբը:

Հետաքրքիր է նկատել նաեւ, որ հոգեւոր նոր Անձինքների յօրինումը շարունակուել է Կոմիտաս կաթողիկոսից շուրջ հինգ հարիւր տարի յետոյ միայն: Այսպէս. 12–րդ դարում Ներսէս Շնորհալի հայրապետը միաժամանակ յօրինել է հինգ Անձինք, որոնք բոլորն էլ արտականոնական գործածութիւն ունեն մեր ժամերգութիւնների մէջ, այսինքն՝ դրանք շարականային կանոնի մաս չեն կազմում: Բայց Ն. Շնորհալու այդ հինգ Անձինքներն ունեն գործածութեան տարբեր ձեւեր եւ ոչ թէ իբր այս կամ այն կանոնի կամ տօնի «Օրինութիւն» համարուող բաղադրիչ: Աւելի պարզենք մեր ասածը:

«Առաւօտ լուսոյ» շքեղ Անձինքը, որ մեր Եկեղեցում երգւում է կիրակի եւ տէրունի տօներին, գիշերային ժամերգութեան մէջ, երգւում է այսպէս. իւրաքանչիւր երկու եռատող տառ՝ իբրեւ մէկ տուն, որով Անձինքը դառնում է 18 տուն: Այս կերպով երգւում է նաեւ Շնորհալի հայրապետի «Աշխարհ ամենայնը»:

«Այսօր Անճառ» եւ «Արարչական» Անձինքները բաժանւում են վեց մասի. առաջինը՝ ըստ մատնութեան գիշերը կարդացուող Աւետարանների թուի, եւ երկրորդը՝ ըստ շաբաթուայ վեց օրերի: Իսկ «Աստուած անեղը» բաժանուած է չորս մասի՝ ըստ գիշերային ժամերգութեան ժամանակ կարդացուող չորս Աւետարանների թուի, եւ այն երգւում է միայն կիրակի օրերին:

Անձինքների յօրինումը շարունակուել է մինչեւ 15–րդ դար: Գեղեցիկ է Յովհաննէս Երզնկացու Լուսաւորչի Անձինքը՝ «Այսօր զուարճացեալքը», Գկ. Սկեւռացու Յովհաննու Կարապետի Անձինքը՝ «Արեգականն արդարութեանը», Ակ. եւ վերջապէս՝ Շարակնոցի վերջին Անձինքը՝ «Արեւելք գերարփին» գեղեցկահիւս շարականը, որի հեղինակն է Կիրակոս վրդ. Երզնկացին, վերջինս յայտնի է նաեւ «Անձինք Վերափոխման» անունով եւ, ի տարբերութիւն նախորդ երկու Անձինքների, որոնք օրուայ կանոնի օրինութիւններ են, «Արեւելք գերարփին» մեր Շարակնոցներում դրուած է իբրեւ քաղուածք՝ Վերափոխման տօնի երկրորդ օրուայ կանոնի, իսկ Վերափոխման տօնի առաջին օրուայ համար՝ հետեւակ շարական: Մեր Շարակնոցում կան նաեւ մի քանի այլ Անձինք շարականներ, որոնք ունեն այլ կառուցուածք: Նրանցից իւրաքանչիւրն ունի 10 տուն, սակայն այդ տասը տներում բանաստեղծը պահպանել է Անձինքի յօրինման սկզբունքը: Շարականի Ա տունը պարունակում է 3 տառ՝ Ա, Բ, Գ, յաջորդ ութ տները՝ 4 տառեր, իսկ տասներորդ վերջին տունը՝ մէկ տառ՝ Ք. եւ այսպէս՝ տասը տուն, 36 տառ: Այդ երկու Անձինքներից մէկը նոյն Հռիփսիմեանց կանոնի համբարձին է՝ «Անսկիզբն Բանն Աստուած», իսկ միւսը Ղեւոնդեանց կանոնի մանկունքն է:

«Անճառելի Բանն Աստուած» երկուսն էլ Դկ ձայնեղանակով են յօրինուած եւ շատ նման են միմեանց ոճով ու տաղաչափութեամբ:

Այժմ տեսնենք, թէ ինչ են ասում միջնադարեան ցուցակները Հռիփսիմեանց կանոնի հեղինակութեան մասին:

Ինչպէս արդէն ասել ենք մեր նախորդ զրոյցների ընթացքում, միջնադարից մեզ են հասել վեց ցուցակներ, ստորեւ մէջ ենք բերում այդ ցուցակների յղումները՝ խնդրոյ առարկայ Հռիփսիմեանց կանոնի հեղինակի վերաբերեալ.

Սարգիս երէց 4.

«ՁՀռիփսիմեանցն զԱնձինք նուիրեալքն եւ զայլն Կոմիտաս կաթողիկոսն ասաց...»:

Գր. Տաթեւացի.

«ՁՀռիփսիմեանց Անձինքն եւ զհարցն՝ տէր Կոմիտասն...»:

Անանուն ցուցակ 8.

«Տէր Կոմիտասն՝ Զհռիփսիմեանց Անձինքն եւ զհարցն»:

Ըստ Առաքել Սիւնեցու ցուցակի 7.

«Ցաղթող բանիւ երանելին՝ տէր Ստեփանոսըն Սիւնեցին, Պուետիկոսն ցանկալին՝ տէր Կոմիտասն հրաշալին»:

Ստեփանոս Զիք Զուղայեցու ցուցակ 16.

«Զհռիփսիմեանց զհարցն եւ զԱնձինքն Տէր Կոմիտաս սրբահոգին»:

Ըստ Յակոբ Սսեցու ցուցակի 16.

«Ըզհռիփսիմեանց զհարցն զԱնձինքն Տէր Կոմիտաս սրբահոգին»:

Ինչպէս տեսանք, ցուցակների հեղինակները ոչ միայն միախոհ են ու միասնական, այլ յաճախ միմեանց կրկնում են՝ Կոմիտաս գըրչին վերագրելով Հռիփսիմեանց կանոնի Անձինքն ու հարցի շարականը: Սարգիս Երէցի յղումի մէջ հետաքրքիր է «... եւ զայլն» արտայայտութիւնը:

Գեղեցիկ են նաեւ նրա անուան կողքին օգտագործուած մակդիրները՝ «Պուետիկոսն ցանկալին՝ տէր Կոմիտասն հրաշալին», «տէր Կոմիտաս սրբահոգին»:

Կոմիտաս կաթողիկոսն արդեօք այս կանոնից բացի ուրիշ երգեր եւս յօրինել է, թէ՝ ոչ, դժուար է ասել, սակայն միաժամանակ կարելի է ենթադրել, որ այսպիսի անզուգական ու շնորհաշատ բանաստեղծն ու երգասացը չէր կարող բաւարարուել միայն մէկ կանոնով, բանասիրութիւնն ու աւանդութիւնը այս հարցում լռում են: Առաջին անգամ հայոց պատմութեան գեղեցիկ ու յուզիչ մի պատմութիւն դարձել է երգ, դարձել շարական եւ շուրջ 1400 տարիներ երգւում է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցում: Այստեղ եւս Կոմիտաս Կաթողիկոսին են վերապահւում սկզբնաւորողի պատիւը մեր քնարերգութեան անդաստանում: Այդ գիծը հետագայում շարունակեցին Ն. Շնորհալին, Յովհաննէս Երզնկացին, Վարդան Արեւելցին եւ ուրիշներ՝ ստեղծելով գեղեցիկ շարականներ, որոնցում ներբողւում ու փառաբանւում են մեր պատմութեան կարեւոր դէպքերն ու երախտաւորները: Ագաթանգեղոսի պատմութիւնը, որն իրօք ստուգապատում դէպքերի շարադրանք է՝ նուիրուած Հռիփսիմեանց կոյսերին, ամբողջութեամբ իր գեղարուեստական արտացոլումն է գտել Կոմիտասի «Անձինքի» տողերում: Շարականագիր հայրապետը, ներբողելով սրբա-

կեաց կոյսերի առաքինութիւնները, միաժամանակ կոչ է անում հաւատացեալներիս, որ՝

«Ցնծութեամբ տօնեսցուք զյիշատակս նոցունց,

Զի եւ նոցին հաղորդեսցուք փրկութեան...»:

Բանաստեղծը կոյսերի նահատակութեան հանդէսին մասնակից է դարձնում նաեւ երկնքի հրեշտակներին, որոնք՝ «Վասն ձեր, երանեա՛լ նահատակք, զօրք հրեշտակաց անմարմին զուարթնոցն ի յերկնից ի յերկիր հեղան, եւ մարդիկ խառնեցան ի գունդս զինուորաց Զրիստոսի Աստուծոյ...»:

Կոյսերի մղած այդ աննախադէպ ու անհաւասար մարտին բանաստեղծը հանդիսատես է դարձնում նաեւ ամենազօր Աստծուն.

«Է զարմացումն եւ ի վեր քան զհրաշս, խորհրդոց եւ բանից հրեշտակաց եւ մարդկան, քանզի Էնն Աստուած ամենազօր զօրութեամբ խոնարհեալ տեսանէր զհանդէս կուսանաց...»:

Այդ զարմացումի պատճառը բանաստեղծը պարզում է յաջորդ տողերում.

«Թուլացան կորովիք հաստաձիգ աղեղանց,

Եւ տկար կանայքն վառեցան զինու.

Թագաւորն՝ պերճացեալ զօրութեամբ եւ փառօք,

Ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր...»:

Հռիփսիմեանք դարձան.

«Ողջակէզք բանատրք եւ զոհք փրկութեան...

Բառնալով զխաւար դիւապաշտ մոլորութեանց յաշխարհէ.

Եդին զանձինս գրաւականս բազմաց

Եւ եղեն փրկանք անծանօթ աշխարհին»:

Հայաստանն էր այդ անծանօթ աշխարհը, որի հողը ոռոգուեց նահատակ կոյսերի սուրբ արեամբ:

Այդ սուրբ արեամբ առաւել արգասաւորուեց ու պտղաբերեց հայոց հողը, որովհետեւ.

«Ծնան կուսանք ազգս բազումս,

Եւ մարդք մանկունք զհրապարակս ծերոց...»:

Հռիփսիմեանք, ըստ Կոմիտաս կաթողիկոսի, այն սուրբ քարերն են, որոնց մասին դեռեւս Զրիստոսից շուրջ ութ դարեր առաջ գուշա-

կել էր կայծակնամաքուր Եսայի մարգարէն, եւ այդ քարերից հրաշակերտուեց Կաթողիկէ Եկեղեցին.

«Սոքա են քարինքք սուրբքք՝ հիմնացեալք ի յերկրի,

Զոր կանխաւ տեսեալ գուշակեաց մարգարէն.

Ի նոյն ի նիւթից շինեցաւ կաթողիկէ Եկեղեցի՝

Բարձրացեալ փառօք ի պարծանս խաչին»:

Հռիփսիմեանք երկնատոր շինուածքներ են՝ հաստատուած երկրի վրայ, եւ լուսեղէն արձաններ՝ կանգնեցուած երկնքում. «Շինուածք երկնաւորք՝ ի յերկրի հաստատեալք, եւ արձանքք լուսեղէնք՝ ի յերկինս կանգնեալք. ինքեանք ելին եւ այլոց ցուցին զճանապարհս ցանկալի զՎերինն Երուսաղէմի»:

Բանաստեղծն, իր երախտագիտութիւնը խառնելով իր ժողովրդի երախտիքին ու ջերմեռանդ զգացումներին, գրում է.

«Փառաց ի փառս բարձրացեալ պարծին.

Ի պատիւ եւ ի փառս երեսուն եւ եօթեանքն,

Զանգի այս է թիւ երանեալ կուսանացն,

Որք անթառամ պսակեցան յանվախճան յաւիտեանս»:

«Անձինքի» բոլոր 36 տներում շարականագիրը միայն երկու անգամ է յիշատակում Հռիփսիմէի անունը, իսկ նախավերջին տան մէջ, ինչպէս տեսանք, նա յիշատակում է կոյսերի ընդհանուր թիւը՝ «երեսուն եւ եօթեանքն»: Սակայն կանոնի հարցի շարականի՝ «Այսօր զանյաղթելիի» մէջ, որը նոյնքան գեղեցիկ մի գոհար է, Հռիփսիմէի անուան հետ յիշում է նաեւ ս. Գայիանէի անունը: Այս երեւոյթին մենք աւելի ուշ հանդիպում ենք Ն. Շնորհալու հայրապետի Վարդանանց կանոնի օրհնութեան՝ «Նորահրաշ պսակաւոր» ծայրակապային 10 տներից բաղկացած սքանչելի շարականի մէջ: Այնտեղ եւս առաջին տների մէջ մէկ առ մէկ հերոսամարտում ընկած զօրավարների անունները յիշատակելուց յետոյ, դարձեալ. նախավերջին տան մէջ նշում է այդ օրն ընկած քաջամարտիկների ընդհանուր թիւը. «Ռամկական խումբ հազարաց եւ երեսնից թիւ ընդ վեցից...»:

Այսպիսով, Հռիփսիմէն եւ հռիփսիմեանք երկրային փառքն ու մեծութիւնը եւ սէրը զոհում են, փոխանակում երկնատոր սիրով, Քրիստոսի սիրով:

Աշխարհի հզօրները թուլանում են, իսկ տկարները զօրանում են

աստուածային սիրով: Հռիփսիմեանց կանոնը խիստ կայուն կառուցուածք ունի, նրա բոլոր բաղադրիչներն օրհնութեան նման յօրինուած են Դկ ձայնեղանակով:

Բոլոր բաղադրիչներում բանաստեղծ կաթողիկոսը ներբողում է Հռիփսիմէի ու նրա նահատակակից ընկերների հոգեկան առաքինութիւնները եւ հայցում նրանց մշտական բարեխօսութիւնը մեզ՝ նրանց յիշատակը տօնողներիս համար:

Առանձնապէս գեղեցիկ է կանոնի մանկունքը՝ «Յիշատակ Քրիստոսի սրբոց վկայիցն», եւ համբարձին՝ «Մնսկիզբն Բանն Աստուածը», որն, ինչպէս նշեցինք, թէեւ տասը տուն է, սակայն Անձինք է:

Կանոնը նոյնութեամբ երգւում է տարուայ ընթացքում ս. Հռիփսիմէի եւ ս. Գայանէի տօներին եւ նախատօնակներին, իսկ մանկունքը՝ բացի այս երկու օրերից, իբրեւ մանկունք երգւում է նաեւ կուսանաց ուրիշ տօների առիթով:

Ըստ Սիմէոնեան տօնացոյցի՝ Հռիփսիմեանց տօնախմբութիւնը կատարւում է Հոգեգալստեան ութօրեքին յաջորդող երկուշաբթի եւ երեքշաբթի օրերին իրենց անունը կրող գերահրաշ տաճարներում:

Այսօր եւս այս տօներին Հայաստանի տարբեր կողմերից հաւատացեալների խուռներամ բազմութիւն է ուխտի գալիս՝ կատարելու կոյսերի յիշատակը, խոնարհուելու նրանց շիրիմներին եւ հայցելու նրանց օգնականութիւնն ու բարեխօսութիւնը առ բարձրեալն Աստուած:

Այդ նոյն շաբաթուայ հինգշաբթի օրը տօնախմբւում է Յովհաննու Կարապետի եւ Աթանագինեայ եպիսկոպոսի յիշատակը:

Վաղարշապատում պահպանուած հնաւանդ սովորութեան համաձայն յիշեալ տօնը կատարւում է ս. Շողակաթ տաճարում, որտեղ նահատակուել ու թաղուել է ս. Մարինէ կոյսը, որին Ագաթանգեղոսն անուանում է տկար կոյս, այսինքն՝ հիւանդ կոյս: Այդ օրը միաժամանակ կատարւում է ս. Շողակաթ եկեղեցու Նաւատակեաց տօնը: Շաբաթ օրը «տօն է սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին ելանելոյն ի վիրապէն»: Տօնը մեծ հանդիսաւորութեամբ կատարւում է Խորվիրապում:

Ազգային եկեղեցական տօներով յագեցած այս շաբաթը եզրափակում է կիրակին՝ կաթուղիկէ Ս. Էջմիածնի հիմնադրութեան համազգային մեծագոյն տօնով, որը կարգել է ս. Գրիգոր Լուսաւորիչը վիրապից ելնելուց յետոյ:

Սիա՛ Հռիփսիմեանց կանոնն ամբողջութեամբ.
Կանոն սրբոյ Հռիփսիմեանց,
Օրհն. Դկ, դարձ. «Մնձինք նուիրեալքդ»,
Հարց Դկ «Այսօր զանյաղթելի...»,
Մեծ. Դկ «Զքեզ Աստուածածին աղբիւր...»,
Ողորմ. եւ ճշ. Դկ «Քրիստոս Աստուած բացեր զդուռն...»
Տէր յերկն. Դկ, դարձ. «Պարկեշտ կանայքն...»
Մանկ. Դկը, դարձ. «Յիշատակ Քրիստոսի...»,
Համբ. Դկ «Անսկիզբն Բանն Աստուած...»
Ծաղկաքաղ Հռիփսիմեանց կանոնից.

Մանկ. «Յիշատակ Քրիստոսի սրբոց վկայիցն.
Եկայ՛ք, հաւատացեա՛ք, զճգնութիւնս սոցա հռչակեսցուք եւ օրհնութեամբ զԱստուած փառաւորեսցուք:
Զուարճացի՛ր, Հռիփսիմէ՛, քոյին սուրբ ընկերօք,
Զի ի տեղւոջ հեղման արեան ձերոյ դասք հրեշտակաց
Տօնեն ընդ մեզ. եկայ՛ք, հաւատացեա՛ք...
Ի տաճարի հռիփսիմեանց մեծ վկայուհեաց
Եկեղեցիք սրբոց պայծառազգեաց վայելչութեամբ տօնեն այսօր,
Եկայ՛ք, հաւատացեա՛ք, ըզճգնութիւնս սոցա..»:

Օրհն. «Հռիփսիմէ մեծ խորհուրդ եւ անուն ցանկալի.
Ընտրեալ ի յերկրի եւ դասեալ ընդ հրեշտակս,
Եղեր օրինակ սրբութեան կուսանաց,
Վարդապետութիւն արանց արդարոց:
Տօնեսցուք ստուգութեամբ ի հնձանս նոցունց.
Զի արբեալքդ լիցուք անմահական բաժակաւն.
Քանզի բաշխեն զբժշկութիւն հոգւոց եւ մարմնոց
Եւ զպարգեւս երկնաւորս սիրողաց իւրեանց:
Քեզ, որ ցնծութիւնդ ես, Քրիստո՛ս Աստուած.
Եւ ուրախութիւն ամենայն արդարոց,
Քաղցրասցին վասն մեր աղաչանքդ սրբոցն՝
Շնորհելով զթողութիւն մեր բազում յանցանաց»:

ՍԱՀԱԿ Գ. ԶՈՐԱՓՈՐԵՑԻ (677–703)

Մատենագրական որոշ աղբիւրներ Զորափորեցուն անուանում են Արքուշեցի: Զորափ եւ Արքունաշէն գիւղերի անուններն այսօր եւս պահպանուել են եւ գտնւում են Արագածոտն պատմական գաւառում, Աշտարակից մի քանի կիլոմետր հեռու:

Զորափորեցին եւս իր երաժշտական կրթութիւնն ստացել է Տեղեր գիւղում գտնուող ս. Աստուածածին եկեղեցուն կից գործող դպրոցում, որը յայտնի էր իբրեւ երաժշտական կենտրոն դեռեւս Զ–Է–րդ դարերում: Զորափորեցին եւս աշակերտել է Թէոդորոս Քռթենատրին: Յովհաննէս Դրասխանակերտցին Զորափորեցու կաթողիկոսութեան շրջանը հաշտւում է 27 տարի՝ 677–704 թուականները:

Զորափորեցու գահակալութեան տարիները եղել են երկարատեւ աւերիչ պատերազմների ու նեղութիւնների մի ժամանակաշրջան, մերթ յոյները, մերթ արաբներն ասպատակելով աւերել ու քանդել են Հայոց աշխարհը: Առանձնապէս ծանր է եղել Յուստինիանոս Երկրորդի արշաւանքը 688 թուականին, որին զոհ են գնացել 25 գաւառ՝ շուրջ 8000 ընտանիք:

«Յայսմ ժամանակի հալածումն եւ աւերումն սաստիկ եհաս աշխարհիս հայոց...»:

«Խաղաղութիւնն վրդովուեցաւ, եւ սասանումն սաստիկ զՀայաստանեայսս պատեալ պաշարեաց»,– գրում են Ասողիկ եւ Դրասխանակերտցի պատմիչները՝ միմեանց լրացնելով:

Արդարեւ, այս շրջանը մեր ժողովրդի անիշխանութեան ամենածանր ու անտանելի շրջանն է եղել:

Յուստինիանոսի արշաւանքին յաջորդում է հագարացի Մահմուտ զօրավարի արշաւանքը: Հայերն ստիպուած հպատակութեան խոստում են տալիս չարասէր ու դժնի ոստիկանին: Սակայն Յուստինիանոսը, լսելով յիշեալ հպատակութեան լուրը, սաստիկ զայրացած, դարձեալ մեծ զօրք է ուղարկում Հայաստան: Նա Զորափորեցուն հինգ նշանաւոր եպիսկոպոսներով կալանատրում է եւ, միայն մեծ փրկագին ստանալով, ազատ արձակում նրանց եւ ապա վերադառնում Կոստանդնուպոլիս:

Յուստինիանոսի անգթութիւններից մէկ տարի յետոյ, արաբ ամիրապետը մեծ զօրքով Հայաստան է ուղարկում իր Աբդուլահ զօրավա-

րին: Սա կողոպտում է Այրարատեան գաւառի եկեղեցիների սպասներն ու անօթները, իսկ Սահակ Զորափորեցուն շղթայակապ ուղարկում Դամասկոս: Այս օրերին նոյն Աբդուլահ զօրավարի հրամանով նահատակւում է Հայ Եկեղեցու սրբերից Դաւիթ Դունեցին: Վերջինս ազգութեամբ պարսիկ է եղել եւ մօր կողմից՝ հայ, սակայն ընդունել է քրիստոնէութիւն:

Հայ Եկեղեցին իր սրբերի կարգին դասեց Սուրհանին՝ վերանուանելով նրան Դաւիթ Դունեցի՝ Դիւնում նահատակուելու պատճառով:

Նրա նահատակութեանն արժանի շարական է յօրինուել: Երեք տներից բաղկացած եւ Բկ ձայնեղանակով երգւող այս գոհարը կատարւում է նահատակ սրբի տօնին: Ահա՛ այդ շարականը, որը Շարակնոցում դրուած է յատուկ շարականների շարքում:

Շարական սրբոյ Դաւթի Դունեցւոյ

Բկ. Լցեալ աստուածային շնորհիւ երանելի առաք
ճգնաւոր տէ՛ր Դաւիթ, եւ անուն քաջութեան քո
ել յերկինս յուրախութիւն հրեշտակաց,
եւ ընդ աշխարհս ամենայն ցնծութիւն մարդկան:

Գ. Ետուր զմարմինդ հոգւոյ քում փրկանս
Եւ խաչիւ եւ արեամբ գնեցեր զարքայութիւնն.
Առեր իշխանութիւն բարեխօսութեան, աղաչեա՛ զԱստուած,
զի փրկեսցէ զմեզ ի հարաւային կործանմանէ:

Այս շարականի հեղինակն ամենայն հաւանականութեամբ Սահակ Զորափորեցին է:

Շուտով ամիրապետի հրամանով պատրաստւում է Հայաստանի վրայ յարձակուել Մահմուտ Ոգբա զօրավարը՝ նպատակ ունենալով բնաջնջել հայ ազգը: Զորափորեցին, Դամասկոսում լսելով այս աղէտալի լուրը, որոշում է հանդիպել Ոգբայի հետ: Նրան թոյլատրում են շղթայակապ տեսակցել նրա հետ, սակայն ճանապարհին նա հիւանդանում է թոքաբորբով ու վախճանւում: Սակայն մինչեւ վախճանուելը հայրենասէր հայրապետը մի խնդրագիր է գրում ոստիկանին, միաժամանակ պատուիրում, որ վերջինս իր ձեռքից վերցնի յիշեալ գրութիւնը:

Ոստիկանը, լսելով կաթողիկոսի մահուան լուրը, անձամբ գալիս եւ նրա ձեռքից վերցնում է խնդրագիրը: Ընթերցելով Զորափորեցու

կտակը՝ զայրոյթն ու անգթութիւնը փոխւում են կարեկցանքի, նա իսկոյն արաբական զօրքերի ուղեկցութեամբ հանգուցեալ հայրապետի աճիւնն ուղարկում է Հայաստան՝ խոստանալով կատարել նրա խնդրանքը:

Այս յուզիչ պատմութիւնը տարբեր պատմիչներ գրի են առել ու աւանդել մեզ որոշ տարբերակներով՝ մի հանգամանք, որը վկայում է այս զրոյցի բաւական տարածուած լինելու մասին:

Այստեղ ցանկանում ենք վկայակոչել այս աւանդութիւնը՝ ըստ Կիրակոս Գանձակեցու: Ահա՛ Զորափորեցու խնդրագրի պատճէնը:

«Ես եկի ընդ առաջ քո՝ աղաչել զերեսս քո վասն ազգին իմոյ, եւ ոչ ժամանեցի տեսութեան քո, զի որ ամենեցուն Շտեմարանապետն է կենաց, կողեաց զիս: Արդ, երդումն տամ քեզ զուխտադրութիւնն Աստուծոյ, որ սա Աբրահամ եւ առ Իսմայէլ հայրն ձեր, զի մի՛ ինչ չար արասցես ազգիս իմոյ եւ հարկեսցես ձեզ, եւ եթէ լուիցես աղաչանաց իմոց, եկեսցեն ի վերայ քո օրհնութիւնք իմ, իսկ եթէ ոչ լուիցես, անէծք ժամանեսցեն քեզ, եւ դարձուսցէ Աստուած զսիրտս զօրաց քոց՝ ոչ առնել զկամս քո. յայս երկուցս զմինն ընկա՛լ»:

...Եւ երթեալ վաղվաղակի՝ ըստ Դենին իւրեանց, ողջոյն ետ մեռելոյն իբրեւ կենդանւոյ: Եւ ասեն, եթէ մեռեալ զմարմինն պատասխանի ետ եւ ընկալաւ զողջոյնն իբրեւ զկենդանի: Եւ ասաց Մահմետ. «Ի գրոյ քումմէ ծանեաց զքեզ, ա՛յրդ Աստուծոյ, արարից եւ կատարեցից զամենայն հրամանս քո»: Եւ վաղվաղակի ելոյծ զթշնամութիւն եւ ոստիկանս առաքեաց հայոց՝ հարկ եդեալ ի վերայ նոցա, եւ ինքն դարձաւ յաշխարհ իւր»:

Ինչպէս տեսանք, Գանձակեցին պարզապէս ասում է, որ այս գեղեցիկ զրոյցը պատմուել է՝ «Եւ ասեն, եթէ մեռեալ մարմինն պատասխանի ետ...», եւ ինքը գրի է առել: Զորափորեցու անունով մեզ են հասել մի շարք երկասիրութիւններ, կանոնագրքի 15 կանոններ, Արմաւենեաց կամ Ողոգոմեան մի ճառ՝ գրուած Ծաղկազարդի տօնախմբութեան համար, ինչպէս նաեւ՝ փրկչական Խաչի ու Նաւակատեաց շարականներ ու կանոններ:

Զորափորեցուն վերագրուող Խաչի շարականները մեր Եկեղեցու աստուածպաշտութեան ընտրելագոյն երգերից են, որոնք լի են վսեմ ու հարուստ իմաստներով, որոնք, միահիւսուելով հոգեպարար ու հոգեյոյզ մեղեդիներով, մի առանձին ու բացառիկ գեղարուեստական արժէք ներկայացնող գոհարներ են:

Նրանց մէջ քրիստոնէական երկիւղածութիւնն ու բարեպաշտութիւնն արտացոլուած են զարմանալի պարզութեամբ ու գեղեցկութեամբ:

Խաչի ու Խաչեալի խորին խորհուրդը ներբողւում է աստուածաբանական ու դաւանաբանական նուրբ ու մատչելի ընդհանրացումներով:

Մեր Խաչի շարականներում փրկչական Խաչը խարիսխն ու վէմն է Եկեղեցու, նա սեղանն է սրբութեան եւ «զէնն յաղթութեան՝ ընդդէմ աներեւոյթ թշնամւոյն»: Խաչը կենաց եւ գիտութեան ծառն է, որ, փոխանակ մահացու պտղոյն, Քրիստոսին պտղաբերեց, որի համար սրբազան շարականագիրը ամէնուրեք կոչ է անում. «Եկա՛յք, հաւատացեա՛լք, երկրպագեսցուք աստուածային ս. Նշանիս»: «Յաղթական նոր օրհնութիւն երգեսցուք թագաւորին Քրիստոսի, քանզի թագաւորն Քրիստոս պսակեաց զսա սքանչելի փառօքն Իւրովք»:

Մեր Խաչի շարականներում կարելի է տեսնել բոլոր այն ստորոգելիները, որ տուել է նրան քրիստոնեայ ընդհանրական Եկեղեցին, այնպէս, ինչպէս դաւանում է Եկեղեցին խաչափայտը: Թող չափազանցութիւն չհամարուի, եթէ ասենք, որ քրիստոնէական եկեղեցիներում եւ ոչ մի այլ Եկեղեցի չունի Խաչի պաշտամունքին ու փառաբանութեանը նուիրուած այնքան բազում բարձրարուեստ երգեր, շարականներ ու կանոններ, որքան Հայաստանեայց Եկեղեցին: Արդեօք Խաչի հանդէպ մեր Եկեղեցու ու մեր ժողովրդի տածած բացառիկ սիրոյ, յարգանքի ու պաշտամունքի վկայութիւնները չե՞ն այս բազմահազար անձեռակերտ ու նրբագեղ խաչքարերն ու խաչարձանները, որոնք յայտնի են ամբողջ աշխարհում իբրեւ արուեստի անկրկնելի յուշարձաններ: Խաչքարերի կերտման արուեստի մենաշնորհը եղել եւ մնում է մեր ժողովրդինը, քանի որ աշխարհում ուրիշ ո՛չ մի քրիստոնեայ ժողովուրդ չի ունեցել այդ շնորհը:

Մեր խաչքարերի նման անկրկնելի ու անզուգական են նաեւ մեր Խաչի շարականները:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին տարուայ ընթացքում չորս անգամ է տօնախմբում Խաչի տօնը, ահա՛ այդ տօները:

Երեւման Խաչի տօն.

Վերացման Խաչի տօն կամ Խաչվերաց.

Վարագայ Խաչի տօն.

Գիւտ Խաչ կամ Խաչագիւտ.

Այս տօներից մեծագոյնը Խաչվերացն է, որը մեր Եկեղեցու հինգ տաղաւարներից մէկն է եւ, ըստ կարգի, վերջինը: Մեր Եկեղեցին Խաչի Վերացման տօնը կատարում է ութ օր. ըստ որում, այդ ութ օրերի ընթացքում, ինչպէս ցոյց է տալիս մեր տօնացոյցը, մեր Եկեղեցին մերթ կատարում է տօն Խաչի, մերթ տօն Եկեղեցւոյ: Այսպէս, Խաչի Վերացման կիրակիին նախորդող շաբաթ օրը տօնն է սրբոյ Եկեղեցւոյ՝ ի Նաւակատիս սրբոյ Խաչին: Կիրակի՝ տօն է Սրբոյ Խաչի Վերացման, երկուշաբթի՝ տօն է Խաչի. երեքշաբթի՝ տօն է Եկեղեցւոյ, չորեքշաբթի՝ տօն է Եկեղեցւոյ, հինգշաբթի՝ տօն է Եկեղեցւոյ, ուրբաթ՝ տօն է Խաչի, շաբաթ՝ տօն է Խաչի, սրանով եզրափակւում է Խաչվերացի ութօրեքի տօնակատարութիւնը: Այս օրերի համար յօրինուել են ութ կանոններ՝ տարբեր ձայնեղանակներով: Անկասկած, այդ կանոններն ամբողջացուել ու կանոնաւորուել են ոչ թէ 7–8–րդ դարերում, այլ՝ աւելի ուշ՝ 12–րդ դարում: Այդ մասին են վկայում յիշեալ կանոններում կրկնուող մի շարք բաղադրիչներ, այդ թւում նաեւ՝ օրհնութիւններ, հարցեր, ճաշու շարականներ եւ այլն:

Օրինակ՝ կանոն հինգերորդ աւուրն ԳՁ օրհնութիւնը՝ «Ուրա՛խ լեր, ս. Եկեղեցի», միաժամանակ Շողակաթի տօնի օրհնութիւնն է: Ջ. օրուայ կանոնի հարցը տապանակի հարցն է. «Այսօր ցնծան դասք», ԳՁ: Նոյն Շողակաթի կանոնի մանկունքը՝ «Էջ Միածինն ի Հօրէ», կրկնւում է Խաչի չորրորդ օրուայ կանոնի մէջ, դարձեալ իբրեւ մանկունք: Կրկնւում է նաեւ Շողակաթի՝ «Ուրա՛խ լեր այսօր» ԴՁ հարցը, այն դրուած է Խաչի չորրորդ օրուայ կանոնի մէջ իբրեւ օրուայ հարց:

Խաչի ութօրեքի կանոններն ունեն սքանչելի բաղադրիչներ: Դրանք բարձրարուեստ երգեր են եւ ունեն գեղարուեստական մեծ արժէք: Նրանցում մեր լեզուի գեղեցկութիւնը, բառապաշարի ճոխութիւնն ու պատկերների բազմազանութիւնը խիստ ակնառու է:

Խաչի Վերացման տօնը մեր Եկեղեցին կատարում է սեպտեմբերի 11–18–ն ընկած ժամանակահատուածում հանդիպող կիրակի օրը:

Առաջին կանոնը, որ կոչւում է «կանոն Նաւատակեաց սրբոյ Խաչին», մեր Եկեղեցին կատարում է շաբաթ օրը: Այն նոյնպէս սահմանուել է յոյն Եկեղեցու կողմից ի յիշատակ խաչափայտի՝ պարսկական գերութիւնից ազատագրման դէպքի, 627 թուականին, Հերակլ կայսեր կողմից: Վերջինս, վերադարձնելով փրկչական Խաչը Երուսա-

ղէմ, մեծ հանդէսով տեղադրեց այն մի բարձր տեղ՝ յուրախութիւն համայն քրիստոնէութեան, որով եւ սահմանուեց Խաչվերացի տօնը: Համաձայն հայկական հնաւանդ ու գեղեցիկ սովորութեան, Խաչվերացի տօնին, երեկոյեան կատարւում է մեծ թափօր եւ անդաստան, ս. Խաչը, մայրավանքում խաչափայտի մասունքն ամփոփող ճառագայթաձեւ խաչը զարդարւում է հոտաւէտ ծաղիկներով ու ռեհանով, եւ պտտեցնում են տաճարի շուրջը: Այս արարողութեան ընթացքում թափօրապետը վարդաջուր է սրսկում հաւատացեալների վրայ յատուկ այդ արարողութեան համար պատրաստուած արծաթեայ սրուակից:

Ասենք նաեւ, որ Խաչի տօնախմբութիւնը յոյն Եկեղեցին սահմանել է չորրորդ դարում, երբ Հեղինէ կայսերամօր ջանքերով Գողգոթայում յայտնաբերուեցին Քրիստոսի ս. Գերեզմանն ու փրկչական Խաչը: Գերեզմանի վրայ կառուցուեց ս. Յարութեան գերահռչակ տաճարը, ուր կայսեր հրամանով հաւաքուեցին շրջակայ վայրերի եպիսկոպոսները՝ կատարելու տաճարի Նաւակատեաց տօնախմբութիւնը: Այնուհետեւ, ըստ աւանդութեան, ամէն տարի այդ եկեղեցում ութ օր շարունակ տօն է կատարուել, ողորմութիւն են հաւաքել կարօտեալների համար ու համատարած մկրտութեան կարգ է կատարուել:

Ցունաց Յայսմաւուրքում այս տօնը դրուել է սեպտեմբերի 14–ին, իսկ մեր Յայսմաւուրքում՝ սեպտեմբերի 13–ին, քանի որ նախապէս այդ օրն է կատարուել Խաչվերացի տօնը: Այս բաժանումը տեղի է ունեցել 12–րդ դարում Ն. Շնորհալի հայրապետի կողմից:

Խաչի Վերացման տօնից 15 օր յետոյ, կիրակի օրը, մեր Եկեղեցին կատարում է Վարագայ ս. Խաչի տօնը, որի շաբաթ օրը Գեւորգ քաջամարտիկ զօրավարի տօնն է: Արդարեւ այս տօնը մեր խաչի տօնն է, որովհետեւ այս առիթով միայն մենք ենք տօնում:

Ըստ աւանդութեան՝ Հռիփսիմէ կոյսն իր կրծքի տակ պահած Խաչի մասունքը ծածկում է Վարագայ լեռան վրայ, երբ 301–ին նրանց երամը, փախչելով Դիոկղետիանոս կայսեր հետապնդումներից, գալիս է Հայաստան՝ Այրարատեան գաւառ, դէպի Վաղարշապատ, որտեղ քարոզում էր ս. Գրիգոր Լուսաւորիչը: Հռիփսիմէն, լսելով քրիստոնէութեան դէմ ծաւալուող հալածանքների մասին, չի կամենում, որ այդ մասունքն ընկնի հեթանոսների ձեռքը:

7–րդ դարում, 660–ական թուականներին, Թոդիկ անունով միայնակեաց մի ճգնաւոր, երկարատեւ որոնումներից յետոյ Վարագայ լեռան մի կողմի վրայ աստուածային տեսլեամբ գտնում է Հռիփսիմէի

պահած Խաչի մասունքը: Գեղեցիկ է նաեւ Թոդիկի տեսիլքի աւանդութիւնը: Ըստ որում, սուրբը տեսնում է Վարագայ լեռան գագաթին լուսաւոր 12 սիւներով մի տաճար, որի մէջտեղում մի լուսաստիւռ Խաչ: Շուտով այդ լուսեղէն տեսիլքը փոխադրւում է դէպի ներքեւ եւ գալիս ամփոփւում Վարագայ եկեղեցու ս. Սեղանի վրայ: Թոդիկն իր Յովէլ աշակերտի հետ երկրպագում է այդ լուսափայլ մասունքին:

Շուտով այնտեղ է շտապում Հայոց Ներսէս Գ. Տայեցի կաթողիկոսը՝ Թէոդորոս Ռշտունի զօրավարի, Վարդ պատրիկի ու հոգեւոր դասի ընկերակցութեամբ, նրանք եւս երկրպագում են աստուածային ս. Նշանին եւ ապա սահմանում Վարագայ ս. Խաչի ամենամեայ տօնակատարութիւնը: Արաբական արշաւանքներից յուսահատուած մեր ժողովուրդն այս միջադէպը համարեց իբրեւ աստուածային մի պարգեւ, այցելութիւն եւ մխիթարութիւն փոքու հոտին ազգիս հայոց:

Այս տօնի համար գրուել է յատուկ կանոն՝ «Նշանաւ ամենայաղթ Խաչիւդ Քո»: Հոգեզմայլ շարականն Ակ ձայնեղանակով է: Նրա տողերում յիշատակւում է Վարագայ լեռան անունը:

Գեղեցիկ մի աւանդութիւն եւս վկայում է, թէ Վարագայ ս. Խաչի յայտնուելուց յետոյ մեր երանաշնորհ հայրապետները սրբալոյս միւռոնի օրհնութեան սքանչելի արարողութիւնը, որ կատարւում է ամէն եօթ տարին մէկ, կատարում են Վարագայ Խաչի տօնին:

Հարց ԴԶ. «Որ զլոյս անճառելի Աստուածութեանդ Քո, Քրիստո՛ս, ի վերայ Խաչին ծանուցեր այսօր ի լեառն Վարագայ, օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց»:

> Ողորմ. ԳԶ. «Քեզ, Քրիստոսի կաթուղիկէ Եկեղեցւոյ շնորհողի.
> զյաղթական զպատուական զաստուածընկալ
> սուրբ Նշան, մատուցանեմք զօրհներգութիւն
> միշտ ի բարձունս:

Սա կամաւ Քո, Քրիստո՛ս, եւ թեւօք ամենազօր Սուրբ Հոգւոյն եւ դասուք հրեշտակաց թողուցեալ եկաւորի ի լեառն Վարագայ՝ բնակիլ ի նմա...»:

Խաչի միւս տօնը Խաչի Երեւման տօնն է, որը յոյները կատարում են մայիսի 7–ին, իսկ Հայաստանեայց Եկեղեցին՝ յինանց, Զատկի հինգերորդ կիրակի օրը: Խաչի Երեւման տօնը յիշատակութիւնն է Խաչի այն Նշանի, որ լուսեղէն ամպի կերպարանքով երեւաց Երուսաղէմում՝ Գողգոթայից մինչեւ Զիթենեաց լեռ, 351 թուականին, Կիւ-

ռեղ Երուսաղէմացի պատրիարքի օրօք: Ս. հայիապետը գրեց մի գեղեցիկ թուղթ Կոստանդ կայսերը, որն, Արիոսական աղանդով տարուած, նոր հալածանք էր պատրաստում Քրիստոսի Եկեղեցու դէմ:

Ըստ հին աւանդութեան՝ այս թղթի ոսկեդարեան շրջանում կատարուած թարգմանութիւնն ընթերցուել է մեր եկեղեցիներում, Երեւման Խաչի տօնին, Անդաստանի Աւետարանից առաջ:

Առանձին ուշադրութեան է արժանի Գիւտ Խաչի կանոնը: Խաչի այս տօնն ըստ էութեան առաջինն է Խաչի տօների մէջ, սակայն, ինչպէս յայտնի է, այն կատարւում է Խաչվերացի եօթներորդ կիրակի օրը:

ԱՁ «Հրաշակերտ եւ զօրեղ փայտ Խաչի Քո, Քրիստո՛ս,
Գաւազան զօրութեան ի յերկրի երեւեալ,
Եկայ՛ք, ժողովո՛ւրդք, երկրպագեսցուք:
Զոր հրէիցն ծածկեալ զանթաքչելի զգանձն,
Փափագմամբ թագուհւոյն փայտ կենաց յայտնեցաւ,
Եկայ՛ք, ժողովո՛ւրդք, երկրպագեսցուք:
Սա է զէն յաղթութեան հաւատացելոց,
Ախոյեան եւ կնիք յաղթող՝ ընդդէմ թշնամւոյն,
Եկայ՛ք...»:

Այս գեղեցիկ գոհարը բաղկացած է եօթ տներից: Բոլոր տներում շարականագիրը հակիրճ ու մատչելի կերպով պատմում է Խաչի յայտնուելու գեղեցիկ պատմութիւնը, միաժամանակ ցոյց տալիս Խաչի խորհուրդն ու նշանակութիւնը քրիստոնեայ Եկեղեցու եւ հաւատացեալների համար: Գեղեցիկ է նաեւ կանոնի հարցը՝ «Որ փափագելի տենչմամբ...»: ԲՁ ձայնեղանակի ինքնատիպ տարբերակով յօրինուած այս շարականը մի պահ քեզ տեղափոխում է չորրորդ դար, եւ դու քեզ գտնում ես Գողգոթայում հաւաքուած բազմութեան մէջ, որոնք եկել էին տեսնելու անճառելի երեւումը, որ երեւաց աստուածասէր Դշխոյին, որի համար «ցնծացաւ Երուսաղէմ, բերկրեցան հաւատացեալք...»: Միեւնոյն համաքրիստոնէական խանդավառութիւնն ու ուրախութիւնն են արտայայտում նաեւ կանոնի միւս բոլոր բաղադրիչներն անխտիր:

Այսպիսով, մեր Շարակնոցում Խաչի կանոնները խօսքի ու մեղեդու սքանչելի ներդաշնակութեամբ բացառիկ տեղ են գրաւում: Նրանք թէեւ չունեն ազգային շեշտիւ, ակնառու արտայայտութիւններ, սակայն դրանք մեր հոգեւոր քնարերգութեան ու ազգային ինքնուրոյն երգասացութեան գեղեցիկ գոհարներից են:

Զորափորեցու գրչին է պատկանում նաեւ «Էջ Միածինն ի Հօրէ» գեղեցիկ շարականը: Այս շարականը շուրջ 12 դար համարում է Ս. Էջմիածնի մայրավանքի հիմնը: Զորափորեցու բանաստեղծական վարդապետութեան մի սքանչելի արտափայլումը կարելի է համարել այս գողտրիկ գոհարը: Ընդամենը վեց տող է, սակայն այդ վեց տողերն ընդհանրուացուած կերպով մեզ են պատմում մեր մեծ Լուսաւորչի աստուածային անկրկնելի տեսիլքը, որի մասին այնքան գեղեցիկ կերպով պատմում է Ագաթանգեղոսը: Ահա՛ այդ գեղեցիկ գոհարը.

Էջ Միածինն ի Հօրէ, եւ լոյս փառաց ընդ Նմա.
Զայնք հնչեցին սանդարամետք անդնդոց:
Տեսեալ զլոյսն մեծ հայրապետին Գրիգորի,
Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:
Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

Զորափորեցու վերագրումների հարցում եւս մեր ցուցակների հեղինակները համամիտ են միմեանց:

Զորափորեցիով եզրափակւում է մեր 6–7–րդ դարերի մատենագրութիւնը:

Խունկ եւ օրհնութիւն նրա յաւիտենական յիշատակին:

Վիգէն Ղազարեան

ԳՈՅՆԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Միջնադարում գրուած «Խորանների մեկնութիւններում» առկայ գոյների տեսութիւնը համարում ենք գեղագիտական ներգործութեան հիմնական գործօններից: Այդ մեկնութիւններն արուեստի տեսութեան միջնադարեան եզակի փաստաթղթեր են, որոնց հեղինակները (Ստեփանոս Սիւնեցի, Ներսէս Շնորհալի, Գրիգոր Տաթեւացի եւ ուրիշներ) անդրադառնում են նաեւ գոյների խորհրդաբանութեանը: Իսկ արուեստի տեսութեան այնպիսի կապակցուած շարադրանք, ինչպիսին այդ մեկնութիւններն են, չկայ բիւզանդական մատենագրութեան մէջ[1]: Այն ամէնն, ինչ կայ աշխարհում («ամենայն ինչ, որ յաշխարհի է»), ըստ Ներսէս Շնորհալու «Խորանների մեկնութեան», բաժանուած է երկու մասի՝ «ի կարեւորն եւ ի վայելմունս», այսինքն՝ ինչ անհրաժեշտ է ապրելու համար, ինչպէս լոյսը, օդը, հողը, դրանցից հետեւող բարիքները, եւ ինչ բաւականութիւն է պատճառում եւ մեղմացնում զգացումները («վայելչութիւնք հեշտալիք են եւ փափկացուցիչք»), առանց որոնց կարելի է ապրել, բայց կլինի անմիտ, անբնական եւ անկենդան գոյութիւն: Մի շարք վայելչութիւնների թում (գինի, միրգ, համեմունք, խորտիկներ, անուշահոտութիւններ, ախորժալուր ձայներ) նշուած են եւ պայծառ գոյները («պայծառագունութիւնք»): Եւ «ոչ կարեւոր» թուացող այս գործօնները «մեծապէս օգուտ գործեն կատարելոցն»[2], այսինքն՝ պայծառ կամ «ազնիւ» գոյները զգայութիւնների վրայ ներգործող այլ գործօնների հետ (համ, բոյր, ձայն, հանգիստ) կատարեալներին (հաւատացեալներին) օգնում են բարձրանալու դէպի այն «հոգեւոր եւ իմանալի» վայելչութիւնները, որոնք նախապատրաստել է Աստուած մարդու համար, ինչպէս «տաճարի եւ խորանի զարդերով դաստիարակէր Աստուած զԻսրայէլ»: Այսինքն՝ գոյնի արուեստը (այստեղ՝ խորանների մանրանկարչութեան մէջ) ամենասերտ կերպով կապւում է նաեւ բնախօսական եւ հոգեբանական երեւոյթների հետ, ինչպէս հաւաստում են Ներսէս Շնորհալու, Գրիգոր Տաթեւացու, Վանական Վարդապետի «Խորանների մեկնութիւնները»: Լ. Գերիկէի եւ Կ. Շեօնէի «Գոյնի երեւոյթը. նրա կիրառման պատմութեան եւ տեսութեան շուրջը» աշխատութիւնը մեզ հնարաւորութիւն է տալիս հետեւելու մեր մեկնութիւններում գոյնի ուսմունքի պատմական տեղին եւ նշանակութեանը, որ դուրս է գալիս միջնադարում գոյնի, զուտ իբրեւ խորհրդանշանական համակարգի, ընդունուած տեսակէտի սահմաններից:

Գոյնը վայելչութեան միւս գործօններից (համ, բոյր, գոյն, հանգիստ, ձայն) երբեմն առաջադասւում է, ինչպէս ցոյց է տալիս Ստեփանոս Սիւնեցու մեկնութեան սկիզբը. «զառաւել հրաշից արժանի սոսկալի գերպանծութիւն բանից գեղեցկազարդեալ պիտանացուածս զառ ի չորից աւետարանչացն մեզ պիտառութիւն արտայայտելով վսեմական բայիւ, տասնեցունց կանոնացն խորանայարկ գունակ դեղոցն երփներփն երանգմունք, որոց հիզան զերկնային մարմնոյն մետալփսն բացատրելով պարտականապէս, այնպէս համազոյգ բանիւք մի առ մի շաղաշարեալ զընթերակայիցն հոլովսն արտակալեալ, որ վասն Քրիստոսի են վկայութեան բանք»[3]:

Գրեթէ բոլոր մեկնութիւններում խորանապատկերներն օժտուած են չորս գոյնով՝ կարմիր, կանաչ, սեւ եւ կապոյտ: Երբեմն նշւում են նաեւ լրացուցիչ երանգներ՝ ծիրանի, բեհեզ, վուշ, երկնագոյն (կամ երկրագոյն): Հիմա դիտարկենք չորս գոյների ընդհանուր խորհրդաբանութիւնը մեկնութիւններում՝ սկսած Ը դարից: Ըստ Ստեփանոս Սիւնեցու՝ առաջին խորանը նկարուած է չորս գոյնով, որոնք նշանակում են «զառաջին խորանին չորեքնիութեան խորհուրդը»: Չորս գլխաւոր գոյների եւ չորս նիւթերի (տարրերի՝ օդ, ջուր, հող, կրակ) յարաբերակցութեան մասին խօսում էին արդէն անտիկ փիլիսոփաները՝ Էմպեդոկլէսը եւ Դեմոկրիտը՝ չորս տարրերին համապատասխանեցնելով հետեւեալ չորս գոյները՝ սպիտակ, սեւ, կարմիր եւ դեղին[4]:

1 В. Н. Лазарев, История византийской живописи. М. "Искусство", 1986, с. 197, прим. 31

2 Այստեղ «կատարեալ» հասկացութիւնը յիշեցնում է ստոյիկեան փիլիսոփայութեան մէջ կիրառուող «իմաստուն» հասկացութեանը (տերմինի մասին տե՛ս Ա. Լոսեւի «Ստոյիցիզմ» յօդուածը. "Философская энциклопедия", Т. 5, М., 1970, с. 137):

3 «Առաւել զարմանքի արժանի [աստուածային] Բանի սոսկալի մեծութիւնը, իր ամբողջ գեղեցկազարդ օգուտով հանդերձ, բովանդակում է տասը կանոնների խորանաձեւ նկարակերտ գոյն գոյն ներկերի պէսպէս երանգները, որոնք որպէս երկնային մարմնի [բնութեան] մետաղը (նիւթ), բացատրում ենք ներդաշնակ խօսքերով՝ մէկ մէկ հիւսելով ըստ այն շարադրանքի, որը վկայում է Քրիստոսի մասին» (թարգմ.):

4 Տե՛ս L. Gericke, K. Schone, Das phanomen der Farbe. Zur Geschichte und Theorie ihrer Anwendung'. Henschelverlag'- Berlin, 1970, S. 12.

Հետաքրքիր է, որ Լեոնարդօ դա Վինչին եւս հիմնական գոյները (դեղին, կանաչ, կապոյտ, կարմիր) կապում է չորս տարրերի եւ բնական երեւոյթների հետ՝ սպիտակը՝ լոյսի, դեղինը՝ երկրի, կանաչը՝ ջրի, կապոյտը՝ օդի, կարմիրը՝ հրի, սեւը՝ խաւարի հետ[5]:

Պարզւում է, որ խորանների չորս գոյները, իբրեւ չորս տարրերը խորհրդանշող գոյներ, պատահական չեն ընտրուած կամ լոկ արձագանք չեն անտիկ փիլիսոփաների չորս գոյներ—չորս տարրեր համակարգի: Հաւանաբար գոյների այդ իւրօրինակ ընտրութիւնը գալիս է Փիլոն Եբրայեցու «Այնոքիկ որ Յելսն է խնդրոց եւ լուծմանց» գրքի «Ընդէ՞ր սրահին ի բեհեզի մանելոյ ի կապուտակի եւ ծիրանւոյ եւ ի կարմրոց մանելոյ» յօդուածից, որը վերաբերում է Մովսէսի խորանի տասը սրահներին: Ահա թէ ինչ է գրում Փիլոնը Մովսէսի խորանի նիւթի մասին. «Կազմին ասացեալդ եւ, ի միասին անկեալք, չորս են թուով, չորից տարերցդ նշանակ են՝ երկրի, ջրոյ, օդոյ, հրոյ... Քանզի զերկիր առակ է ի ձեռն բեհեզին. քանզի վուշ երկրաւոր է եւ յերկրէ. եւ ջուր ի ձեռն ծիրանւոյն, վասն զի ջուր է ծնունդ [կամ ծնող] նորա. եւ զօդ ի ձեռն կապուտակին. քանզի սեւաթոյր է օդ, ոչինչ ունի յինքեան լուսաձեւութիւն. վասն որոյ յայլմէ լուսոյ լուսաւորեալ լինի. եւ զհուր ի ձեռն կարմրոյն. քանզի գոյնն հրատեսիլ է»[6]: Ուրեմն, մեր մեկնիչների ընդունած հիմնական երանգներից Փիլոնի երկում չկայ կանաչը:

Չորս գոյնով է նկարուած նաեւ երկրորդ խորանը, որոնցից նշուած են սեւը, իբրեւ «իսկական գոյութիւն» [Քրիստոսի], իբրեւ աստուածաբանական խորհուրդ, ըստ Աստծուն առաջին տեսնողների, կարմիրը սեւի վրայ կամարի ձեւով, իբրեւ պատարագների զոհերի արեան խորհուրդ, փրկելու համար Աստծուց շեղուողներին: Եթէ ներքեւը սեւ է, վերեւը՝ կարմիր, դրանց միջեւ կապուտակն է, որը խորհրդանշում է հոգեւորը (աստուածայինը) մարմնաւոր կեանքում: Ոսկեգոյն միջին կամարը (առանձին երանգով նշուած է ոսկին) համարւում է քահանայական, իսկ պէտք է ենթադրել՝ նրա վրայ ձգուած գինեգոյն կարմիրը ցոյց է տալիս Մելքիսեդեկին, որը Քրիստոսին է խորհրդանշում: Իսկ ամենավերեւում տարածուած սեւ կամարը խորհրդանշում է Աստուծոյ գալուստը: Չորս գոյներով են նկարուած

5 Նոյն տեղում, էջ 18, 20:

6 «Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդք ի Հայս, որ են մեկնութիւն ծննդոց, եւ Ելից, ճառք ի Սամփսոն, ի Յովնան, եւ Յերիս մանկունս կամ ի հրեշտակս». Աշխատասիրութեամբ հ. Մկրտիչ աթոռակալ վարդապետի Մխիթարեան Աւգերեանց. Վենետիկ, 1826, էջ 525—526:

նաեւ երրորդ եւ չորրորդ խորանները: Երրորդ խորանի առթիւ գոյների անունները չեն տրւում: Չորրորդ խորանում կամարների վերեւում նշուած սեղանի վրայ մութը նօսրացել է, եւ բոցը՝ պայծառացել, իսկ կամարների ստորոտում խոյակներից դուրս եկող «եղջիւրները» կարմիր եւ կապոյտ գոյներով են, կանաչ են խորանի ստորին մասից դէպի վեր բուսած արմաւենիները: Հաւքերի համար նշուած է սոսկ կարմիրը՝ իբրեւ նրանց կտուցների եւ պոչերի (որոշ ձեռագրերում՝ ոտքերի) գոյն: Մնացած խորանների համար, պէտք է ենթադրել, որ եւս չորս գոյն է նախատեսուած: Ընդ որում, անվերջ կամ ստուերն է պակասում, եւ կարմիրը՝ պայծառանում, կամ սեւը՝ նուազում, եւ կարմիրը՝ թանձրանում կամ հարստանում:

Յաջորդ մեկնութիւնը՝ գրուած ԺԱ—ԺԲ դարերում (պահպանուած է մեզ յայտնի մէկ ձեռագրում՝ Մատենադարան, ձեռ. 2952, ԺԱ—ԺԲդդ.), եւս գոյների մասին ժուժկալ է արտայայտում: Առաջին խորանը չորս գոյնով է, կարմիր գինեգոյնը նշանակում է Մելքիսեդեկն ի դէմս Քրիստոսի, իսկ սեւ, կանաչ եւ կապոյտ գոյներով նկարուած կամարը մարդու մարմինն է խորհրդանշում՝ կազմուած արիւնից, «ի խոդ» (հաւանաբար՝ ոսկրածուծից), ոսկորներից եւ մարմնի ծածկոյթից (ըստ երեւոյթին՝ մաշկը), որոնք իրենց հերթին նշանակում են «հայրական, որդիական, հոգիական» խորհուրդը, որը վերստին միաւորուած է:

Այդ նոյն խորհուրդը կայ Նեմէսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» գրուածքում (ենթադրւում է, որ այն թարգմանել է Ստեփանոս Սիւնեցին)[7]: Վերը նշուեց, որ չորս գոյները հանդիսանում են նաեւ չորս տարրերի խորհրդանիշը: Ստացւում է՝ չորս գոյներն ունեն քառաստիճան խորհուրդ. ա) խորհրդանշում են չորս տարրերը, բ) խորհրդանշում են մարմնի չորս բաղադրիչ մասերը, որոնք, ըստ Եմեսացու, նաեւ չորս տարրերն են նշանակում, գ) մարդու մարմնի չորս տարրերը խորհրդանշում են Հայր, Որդի, Սուրբ Հոգի եւ նրանց «միաւորական» խորհուրդը: Ըստ երեւոյթին՝ երրորդ խորանում է, որ սեւը թանձրանում է, կարմիրը՝ նուազում: Երկրորդ խորանի առթիւ խօսւում է նաեւ կարմիրի մասին՝ հաւքերի կտուցներին եւ ոտքերին, նաեւ «խարխարստինք» (ակօսազարդ) կապոյտ սիւների մասին՝ հրն-

7 Հայ մատենագրութեան մէջ «Յաղագս բնութեան մարդոյ» գրուածքի հեղինակ է համարւում Բարսեղ Կեսարացին (տե՛ս Կ. Մուրադեան, Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրութեան մէջ, Երեւան, 1976, էջ 73, 180): Մատենագիտական տուեալները տե՛ս Մ. վրդ. Գրիգորեան, Ստեփանոս Սիւնեցի, Պեյրութ, Լիբանան, 1958, էջ 31—32:

գական մասերով զարդարուած: Երրորդ եւ չորրորդ խորանների մասին նշում է, որ արդէն սեւն է նուազում, եւ կարմիրը՝ հարստանում: Հինգերորդ եւ վեցերորդ խորաններում է՛լ աւելի է ուժեղանում գոյների պայծառութիւնը, որն արտայայտուած է նաեւ սիւների վարդագոյն երանգի մէջ: Վարդագոյնը կապուած է համաբարբառ աւետարանիչների հետ՝ նշանակելով փրկութեան աւետումը: Այդ խորանները հարուստ են խորհրդանիշներով՝ մարգարէների (աքաղաղներ), արմաւենիների, որոնք երկրից երկինք են բարձրանում կանաչ տերեւներով եւ պտուղներն իջեցնում դէպի երկիր: Եօթներորդ եւ ութերորդ խորաններում սեւը նորից է պակասում, եւ կարմիրը՝ պայծառանում, քանի որ խաչի մերձենալու հետ մթագնում է Հին օրէնքը (Հին Կտակարանը եւ Մովսիսեան օրէնքները): Խօսւում է նաեւ ոսկեգոյն կամարի՝ իբրեւ քահանայական խորհուրդի մասին: Տասներորդ խորանը ծաղկած խաչի հետ կապուած խորհուրդ ունի, ուստի կամարների սիւները «կարմրագոյնք, համակ պայծառ վարդագոյն» էին: Այնուհետեւ խօսք չկայ գոյների մասին:

Չորրորդ եւ վեցերորդ մեկնութիւնները (ԺԳ–ԺԴ դարեր) աւելի մօտ են միմեանց: Առաջին խորանը չորրորդ մեկնութեան մէջ պատուիրւում է նկարել երեք, վեցերորդ մեկնութեան մէջ՝ չորս գոյներով, թէպէտ վեցերորդում գոյների թիւը («կապուտակ, ծիրանի, կարմիր, բեհեզ, վուշ, երկրագոյն նկարեալ կամարն»[8]) անցնում է երեքից:

Սիւներն ունեն ծիրանի գոյն («զհաստատութիւն աթոռոյն արտաքոյ տարերցս»): Հետաքրքիրն այն է, որ երկու մեկնութեան մէջ էլ առաջին երեք խորանները չեն տարանջատուած, եւ առաջին խորանի ատրիբուտների մեկնութիւնից յետոյ անմիջապէս սկսւում է չորրորդ խորանի մեկնութիւնը:

Ուրեմն, երկու մեկնութեան մէջ էլ առաջին խորանի սիւները, ինչպէս տեսանք, ծիրանի են: Այնուհետեւ վեցերորդ մեկնութեան մէջ խօսւում է «արտաքին» սեւի մասին (Մելքիսեդեկի քահանայութիւնն՝ ի դէմս Քրիստոսի): Պատուիրուած է կամարները նկարել չորս գոյնով (սեւով եւ կարմիրով, կանաչով եւ կապուտակով), ինչպէս մարդու մարմինը կազմուած է «յարիւն եւ ի մաղաս եւ ի ծածկոյթ մարմնոյ», որոնք էլ իրենց հերթին խորհրդանշում են հայրական, որդիական,

8 Որոշ ձեռագրեր տալիս են «երկնագոյն», որ ճիշտ չէ, եթէ իրօք այդ խորհրդանիշի ակունքը Փիլոն Եբրայեցու գրուածքն է: Վերջինիս մօտ բեհեզ, վուշ, երկրագոյն հանդէս են գալիս միասին («...Քանզի զերկիր առակէ բեհեզին. քանզի վուշ երկրատոր է...») («Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդք ի Հայս..., էջ 525):

հոգիական եւ դարձեալ միաւորական խորհուրդը: Դա վերցուած է երկրորդ մեկնութիւնից: Հետաքրքիրն այն է, որ մարդու մարմինը կազմող այդ նիւթերից երկուսը Նեմէսիոս Եմեսացու կողմից նմանեցուած են չորս տարրերին. «Նմանեցուցանեն երկրի սեաւ մաղձ, եւ ջրոյ՝ զմաղաս, օդոյ՝ զարիւն, եւ հրոյ՝ զխարտեաշ մաղձ» (ՆՀԲ, Բ, էջ 198): Այդ հատուածը չկայ վեցերորդ մեկնութեան մէջ: Այնտեղ խօսւում է չորրորդ խորանի մասին, որ զարդարուած է չորս գոյնով՝ «ի ներքոյ ունելով զսեւադեղն, որ զսոսկական զարդն ցուցանէ զխորանին զնրբագոյնն, վասն առաջին տեսողացն», որի վրայ կարմիր «կամարն ձեւացեալ», իբրեւ պատարագի արեան զոհ, ինչպէս Սիւնեցու մօտ է եւ երկրորդ մեկնութեան մէջ: Այդ նոյնը, առանց խորանի համարը նշելու, ասւում է վեցերորդ մեկնութեան մէջ: Այնուհետեւ եօթերորդ մեկնութեան մէջ շարունակւում է խօսուել կարմիր գինեգոյնի խորհրդանիշի մասին (Մելքիսեդեկ քահանան ի դէմս Քրիստոսի), որի մասին աւելի վերեւում խօսուել է չորրորդ մեկնութեան կապակցութեամբ: Շարունակութիւնը նորից սկսում է նմանուել երկու մեկնութիւններում: Առաջին խորանի կամ կանոնի համար վերստին առաջարկւում է «Գ Գ գոյն, մի մի կամարն», որ միասնական Երրորդութեան գաղափարն է արտայայտում, եւ կամարների վրայ՝ «կարմիր սեղանն բոցախառն հրով եւ ի վերայ [նմին]՝ ամպն»: Այնուհետեւ նշւում են մի շարք խորհրդանիշներ, որոնց առթիւ թուարկուած գոյները ո՞ր խորանում են՝ մնում է անորոշ եւ նման՝ Ստեփանոս Սիւնեցու մեկնութեանը: Հինգերորդ խորանի առթիւ նշւում է, որ ստուերը պակասում է, եւ կարմիրը՝ պայծառանում, ծաղկում շուշան ծաղիկը:

Խորանների մի քանի մեկնութիւններ կապւում են Շնորհալու մեկնութեան հետ: Առաջին անգամ այստեղ է, որ պայծառ գոյները համարւում են գլխաւոր վայելչութիւններից մէկը: Հեղինակը, դիմելով Աւետարանների ցանկիչներին եւ հիմնադիրներին (այստեղ՝ խորանների աղիւսակները եւ բնագիրն ընդօրինակողներին), բացատրում է, որ յիշեալ գրուածքում խօսւում է հոգեւոր վայելչութիւնների եւ «անապական գեղեցկութիւնների» մասին, որոնք արտայայտւում են հեշտալի գոյներով, գոյնզգոյն ծաղիկներով եւ պէսպէս յօրինուածքներով: Հիմնական գոյները նոյնն են՝ կարմիր, կանաչ, սեւ եւ կապոյտ եւ, այս չորս գոյներից բացի, նաեւ՝ ծիրանի: Այս մեկնութեան մէջ առանձին խորանների գունաշարը քննելիս յստակ չի նշւում, թէ դրանք քանի գոյնից են բաղկացած: Սակայն նշւում են այն գոյները, որոնք յուզական եւ խորհրդանշական լիցք են կրում: Շնորհալին այդ հիմնական գոյներն օգտւում է յուզական առարկայական (օբիեկտիւ) բովան-

դակութեամբ, այն, ինչ Գեոթէն համարում է գոյների զգայա–բարոյական մշակում: Այսպէս, առաջին խորանում գոյնը համակ ծիրանի է եւ նուիրուած՝ ամենակալ Աստծուն՝ Սուրբ Երրորդութեանը՝ խորհրդանշելով «ամենակալ թագաւորութիւնը»՝ «անսպառ եւ անվախճան»: Ծիրանի ասելով՝ մեր մեկնիչները (ինչպէս հետագայում՝ Գեոթէն, Շոպենհաուերը գոյների մասին իրենց ուսմունքներում) նկատի ունեն կատարեալ կարմիրը, որն իր արժանիքների համար արքայական է համարւում եւ սպեկտրում աւելի շատ հակուած է դէպի կապոյտը, քան դէպի նարնջագոյնը[9]:

Երկրորդ եւ երրորդ խորանները նկարուած են կանաչով եւ սեւով՝ իբրեւ գլխաւոր գոյներ, եւ խորհրդանշում են միջին եւ վերջին քահանայապետութիւնները, ընդ որում, կանաչը նրանց անմահութիւնն է ցոյց տալիս, սեւը՝ Աստուծոյ անհասութիւնը նրանց համար: Այստեղ ոսկին նշուած է սիրամարգերի համար («ոսկեփետուրք եւ ոսկետտունք»), որոնք այս դասերի մաքուր եւ անաղարտ բնութիւնն են ակնարկում: Չորրորդ խորանը կապւում է երկրային դրախտի, հետեւապէս՝ չորս տարրերի հետ: Այստեղ իշխող գոյներն են սեւը եւ կապոյտը՝ իբրեւ սգոյ գոյներ, քանի որ Ադամը եւ նրա որդիները զրկւում են դրախտից (Գեոթէն եւս կապոյտը դիտում է որպէս սգոյ գոյն): Ըստ Գեոթէի՝ ինչպէս դեղինը միշտ լոյս է կրում, այնպէս էլ, կարելի է ասել, որ կապոյտը կրում է մութը, նաեւ՝ որ «կապոյտ ապակին առարկաները ցոյց է տալիս սգոյ լոյսով»[10]:

Հինգերորդ եւ վեցերորդ խորաններում աւելանում է կարմիրը, որ կապուած է Աբրահամի անուան հետ: Իր հերթին Աբրահամի անունը կապւում է Մելքիսեդեկի անուան հետ, որն արդէն Պօղոս առաքեալի կողմից համարւում է Քրիստոսի նախատիպար: «Եւ աստ սեանց գինեգոյն որակն նշանակէ զՄելքիսեդէկի քահանայութիւն ի դէմս Քրիստոսի»,– ասուած է մեկնութեան մէջ: Որոշ ձեռագրեր գինեգոյն բառի փոխարէն տալիս են գոյնգոյն կամ գոյն եւ գոյն: Մենք աւելի շատ հակուած ենք գինեգոյն բառին, քանի որ այն աւելի մօտ է կարմիրին եւ առանձնապէս ծիրանիին (պուրպուրին), մանաւանդ որ Սիւնեցու եւ այլ մեկնութիւններում Մելքիսեդեկի անունը կապւում է գինեգոյնի հետ: Այս խորանների ատրիբուտների հետ Շնորհալին յատուկ կանգ է առնում շուշան ծաղկի վրայ, որի համար յատկացնում է երեք գոյն («իսկ շուշանն երիս որակս ունի»)՝ սպիտակ, դեղին եւ

9 Gericke, Schone..., S. 36, 48.
10 Նոյն տեղում, էջ 35–36:

կարմիր: Սպիտակը նշում է նահապետների կեանքի մաքրութիւնը եւ պարզութիւնը, դեղինը՝ ժուժկալութիւնը եւ կարմրութիւնը՝ վաստակը:

Եօթերորդ եւ ութերորդ խորաններն արտայայտում են մովսիսեան խորանի պայծառութիւնը: Սակայն սիւները կապոյտով են ներկուած՝ «խառխառոտք» (այսինքն՝ սիւները կապոյտ են եւ խազերով կամ ակօսատր): Երկրորդ մեկնութեան մէջ (ԺԱ–ԺԲ դդ.) Մովսէսի խորանը երրորդն է, նոյնպէս կապոյտ սիւներով «խարխարստիւնք»: Չորրորդ (Վանական Վարդապետին մեր վերագրած) մեկնութեան մէջ կապոյտ սիւները պատկանում են չորրորդ խորանին եւ «հինգ հինգ մասամբ խազխազոտեալք»: Հինգերորդ մեկնութեան մէջ (հնագոյն ձեռագիրը 1419 թ.՝ գրուած Գրիգոր Խլաթեցու ձեռքով)՝ «խարխառոտք», վեցերորդ մեկնութիւնը տալիս է «խազխազեալք» բառը: Այս բոլոր բառերը համադրելով՝ յանգում ենք այն եզրակացութեան, որ սիւները նկարուած են ակօսատր խազերով ու գոյներով (նմանակելով անտիկ սիւների կաննելիւրներին): Տասնմէկերորդ մեկնութեան մէջ երկրորդ խորանի առթիւ նշուած է՝ «Սիւնքն կապոյտք խառխառ ոստիւք...»: Սա արդէն միանգամից փոխում է իմաստը: Ուրեմն, կապոյտ սիւները ոչ թէ նմանակում են քարի, այլ նկարուած են ոստերով կամ շիւղերով, որ եւս հնագոյն շրջաններից յատուկ է խորանապատկերներին: Այստեղ կամարների տակ (հաւանաբար՝ ստորին կամարը) սեւը թանձրանում է, եւ կարմիրը՝ նուազում: Մի մեծ խումբ ձեռագրեր կամարների տակ սեւի թանձրացման մասին խօսք չեն ասում:

Իններորդ խորանն աւելի «զարդարուն է երանգներով», քանի որ սեւն ու կապոյտը նուազում են, կարմիրը՝ պայծառանում, քանզի այդ ժամանակներում մարգարէները հռչակում են Աստուծոյ Որդու գալուստը: Տասներորդ խորանը, «որ կայ հանդէպ իններորդին», «առաւել զարդարուն եւ շնորհաշուք եւ պայծառ է», «վարդագոյն ներկուածով կարմրութեամբ», որտեղ գրեթէ չկան սեւն ու կապուտակը, «զի հինն էանց խաւարն մեղաց եւ անգիտութեան, սգոյ եւ տխրութեան, եւ ամենայն ինչ նոր եղեւ՝ արեամբն Քրիստոսի ներկեալ՝ երկինք եւ երկիր՝ ամենայն մասամբք իւրեանց եւ զարդիւք», որտեղ խաչը բարձրացւում է «ի գլուխն վերնոյ կամարին»:

Չորրորդ մեկնութիւնն ունի որոշ երանգներ, որոնք հարստացնում են ցարդ դիտարկուած գոյնի տեսութեան համակարգը: Եթէ առանձին խորանների բնութագրումը նման է Շնորհալու մեկնութեան մէջ եղած բնորոշումներին (դա վերաբերում է խորհրդաբանութեան ոլորտին), ապա չորս գոյների կիրառումը տարբեր խորաննե-

ռում յիշեցնում է Սիւնեցու մեկնութիւնը: Առաջին երկու խորանները չորս գոյներով են, թէեւ նշուած է վեց անուն՝ կապուտակ, ծիրանի, կարմիր, բեհեզ, վուշ, երկրագոյն: Երկրագոյնն այստեղ փոխարինում է սեւին, կանաչը բացակայում է, բեհեզ եւ վուշ կոչուող գոյները մեզ համար անորոշ են: Առաջին խորանում, բացի ընդհանուր գոյներից, առանձին նշում են ծիրանի սիւները՝ «զհաստատութիւն առաջին աթոռոյն արտաքոյ տարերց»: Շատ հարուստ է երկրորդ խորանի կամարների նկարագրութիւնը. ներքեւի կամարը սեւով է նշում (ըստ երեւոյթին՝ թոյլ սեւ). «Զսոսկական զարդն ցուցանին զխորանին նրբագոյնն, վասն առաջին տեսողացն...»: Պէտք է ենթատեքստից հասկանալ, որ սեւ գոյնն Աստծուն առաջին տեսնողների զգացած երկիւղի արտայայտութիւնն է: Նրանցից վեր կարմիր կամարն է՝ որպէս զոհերի խորհուրդ, իսկ «միջոցն՝ կապուտակ», պէտք է հասկանալ կարմիրի եւ սեւի միջեւ, ինչպէս Ստեփանոս Սիւնեցու մօտ է: Այնուհետեւ նշում է «ոսկեգոյն կամարն գինեգոյն»՝ իբրեւ Մելքիսեդեկի խորհուրդ ի դէմս Քրիստոսի: Այստեղ կայ բնագրի աղճատում, որն ուղղուած է եւ ճշտուած մէկ այլ ձեռագրում (ԺԷ դարի). «Իսկ ոսկեգոյն կամարն զքահանայական ունի խորհուրդ ի միջի կացեալ: Իսկ կարմիր գինեգոյն բերէ զխորհուրդ Մելքիսեդէկին ի դէմս Քրիստոսի»: Այս ուղղումն արուած է Սիւնեցու մեկնութեան հիման վրայ: Եւ փաստօրէն ոսկու քահանայական (այսինքն՝ հանդիսաւոր) խորհուրդն անմիջապէս կապւում է գինեգոյն կարմիրի կամ ծիրանիի (Մելքիսեդեկի խորհուրդ) հետ: Կամարների հիմնականում կապոյտ, ոսկի, կարմիր (գինեգոյն) գունայարաբերութիւնը, որ կայ Սիւնեցու եւ ուրիշների մեկնութիւների մէջ, ինչպէս նշում է Վան Բիեման Հեոլցէլի գոյնի ուսմունքի առթիւ 1930 թ., սրբազան խորալային տրամադրութիւն է բերում (լուսաւոր հանդէս է գալիս ոսկին, միջին տոն՝ շողշողուն կարմիրը, իբրեւ խաւար՝ խոր կապոյտը)[11]:

Ներսէս Շնորհալուց յետոյ միւս մեկնութիւնը, որտեղ որոշակի ու մանրազնին է արծարծում գոյների կարգը, Գրիգոր Տաթեւացունն է: «Վասն Ժ խորանացն եւ զանազան գունոցն» ենթագլխում նա նախ նշում է կիրառուող գոյները, որոնք համապատասխանում են չորս տարրերին, եւ ոսկին. «Կարմիր, կանաչ, սեւ, կապոյտ եւ ոսկին անապական՝ հինգերորդ էութեան երկնից»: Միւս մեկնութիւններում ոսկին հանդէս է գալիս տարբեր կապակցութիւններում (ոսկեզգեստ, ոսկեձոյլ, ոսկետտունք եւ այլն), բայց այստեղ է, որ այն հանդէս է գալիս իր ուղղակի իմաստով՝ իբրեւ հինգերորդ էութեան՝ երկնքի խորհուրդ, որը վերնիւթական է եւ վերտարերային: Ի տարբերութիւն երկրի՝ «երկինք է առաւել պարզ, զի ոչ է ի չորից տարերց, այլ՝ մի պարզագոյն տարր, այսինքն՝ հինգերորդ էութիւն»,— գրում է Յովհան Որոտնեցին[12]: Ըստ Եկեղեցու հայրերի (ինչպէս ցոյց են տալիս մի շարք գիտնականներ եւ բիւզանդագէտներ՝ Դուրժակ, Շեոնէ, Վեսսէլ, Աւերինցեւ եւ այլք), ոսկին պէտք է հասկանալ իբրեւ աստուածային լոյս կամ արփիափայլութիւն[13]: Գեոթէն լոյսին ամենամօտիկ գոյնը համարում է դեղինը: Իսկ ոսկու առթիւ խօսում է իբրեւ մի նոր ու վսեմ ըմբռնման մասին՝ որպէս աւելի ամուր դեղին: Այդ առումով նա աւելի հարուստ ընկալում է յայտնաբերում, քան պարզապէս ոսկու կապումն աստուածային լոյսի հետ[14]: Այնուհետեւ դժուարըմբռնելի է Տաթեւացու «դարձեալ Դ աստառէ ծաղկի» արտայայտութիւնը: Բայց եթէ առաջնորդուենք բնագրի տրամաբանութեամբ, ապա կհասնենք մի ըմբռնման, որ լրիւ նոր է մինչ այժմ հանդիպած մեկնութիւնների մէջ: Նախադասութիւնը բերենք լրիւ. «Դարձեալ Դ աստառէ ծաղկի եւ Բ շուք, եւ Բ բաց, մի ծիրանի եւ մի ոսկի, որ լինի Ժ ըստ Ժ խորանացն»: Տաթեւացին չորս խորհրդանշական գոյներն իրենց երանգներով ուզում է հասցնել խորանների սրբազան թուին, այսինքն՝ տասի: Աստառն բառն այստեղ հաւանաբար երանգի կամ գոյնի իմաստ ունի, քանի որ այն բացատրւում է շուք եւ բաց եզրերով: Նշանակում է՝ նախադասութիւնը կարելի է թարգմանել այսպէս. «Չորս գունամակերեսին աւելանում է երկու ստուերային եւ երկու լուսաւոր մակերես, նաեւ մի ծիրանի եւ մի ոսկի, որ ստացւում է տասը՝ ըստ խորանների թուի»: Ուրեմն, խօսքը վերաբերում է նոյն գոյնի մուգ եւ բաց երանգ-

11 Նոյն տեղում, էջ 93:

12 Տե՛ս Յ. Յ. Քեոսէեան, Յովհաննէս Մայրագոմեցին եւ հայ միջնադարեան խորհրդանշանի աստուածաբանական մի քանի հարցեր, «Էջմիածին», Յունուար, էջ 53—54:

13 Միջնադարում ոսկու արժէքի եւ իմաստի մասին հիմնական մեկնաբանութիւնները հաւաքուած են Կ. Վեսսէլի «Ոսկէ Ֆոն» յօդուածում, («Goldgrund») (տե՛ս «Reallexikon zur byzantinischen Kunst», B. II, 1971, Stuttgart, S. 880-894): Ըստ Վ. Բիչկովի՝ դեղինը Դիոնիսիոս Արիսպագացու մօտ ընկալուել է իբրեւ «ոսկեկերպ», իսկ ոսկին՝ իբրեւ «լուսակերպ» (В. В. Бычков, Византийская эстетика, М, 1977, с. 106): Միջնադարեան մատենագրութեան մէջ ոսկու իմաստների մասին հետաքրքիր ուսումնասիրութիւն է գրել Ս. Աւերինցեւը. С. С. Аверинцев, Золото в системе ранневизантийской культуры ("Византия, южные славяне и Древняя Русь, Западная Европа". Искусство и культура. Сб. статей в честь В. Н. Лазарева. М., 1973, с. 43-52):

14 Gericke, Schone..., S, 35.

ների հակադրութեանը, որ նորութիւն էր խորանների մեկնութիւններում եւ նոյնպէս հիմնուած՝ մանրանկարչութեան փորձառութեան վրայ, քանի որ ծաղկողները հիմնական վառ գոյները (կանաչ, կարմիր, կապոյտ), յատկապէս Կիլիկիայում եւ Գլաձորում, չէին թողնում առանց մուգ եւ բաց երանգների, ընդ որում, մուգից դէպի բաց գնում էին աստիճանաբար:

Առաջին խորանում, ինչպէս Շնորհալու մօտ, գերիշխող ծիրանի գոյնը թագաւորական է: Այն բառացի համընկնում է պուրպուր գոյնին Գեոթէի տուած բացատրութեանը նրա «Գոյների ուսմունքում», այսինքն՝ «կարելի է ծիրանին համարել արքայական բնոյթի»[15]: Թագաւորական է, նշում է Տաթեւացին, որովհետեւ «ցուցանէ զամենակալ թագաւորութիւն Աստուծոյ» եւ «բոլորովին, զի անվախճան է»: Երկրորդ եւ երրորդ խորանները կանաչ են՝ ցոյց տալով հրեշտակների անվախճան կեանքը: Եւ կանաչի հետ խօսւում է նաեւ սիրամարգի գլխի ոսկի փետուրի եւ պոչի մասին՝ իբրեւ առաւօտեան եւ երեկոյեան ճանաչման խորհրդանիշների, նաեւ անապական բնութեան մասին: Սեւ ոտքերը նշանակում են կրկնակի տրտմութիւն՝ մեղաւոր մարդկանց (Ադամի սերունդների) եւ «անկելոց», այսինքն՝ հրեշտակների դասի: Չորրորդ խորանի (Ադամի դրախտ) սիւները չորսն են՝ իբրեւ չորս տարրերը, գոյները՝ սեւ եւ կապոյտ, թէպէտ որոշակի չի ասւում, թէ դրանք կամարների՞, թէ սիւների գոյներն են: Սեւը ցոյց է տալիս Ադամի մաշկեայ հագուստը, կապոյտը՝ մարդու անկումից յետոյ դեռեւս աստուածային նշոյլ կրելու կարողութիւնը:

Հինգերորդ եւ վեցերորդ խորանների առթիւ կարմիր գոյնը դիտւում է իբրեւ Նոյի ու Աբրահամի մատուցած պատարագի զոհ, իբրեւ խորհրդանիշ «արեան Որդոյն Աստուծոյ», շուշանի համար երեք գոյն է տրուած, ինչպէս Շնորհալու մօտ: Եօթերորդ եւ ութերորդ խորանների առթիւ նշւում է կարմիրի նուազման եւ կապոյտի ու սեւի առաւելացման մասին, քանի որ դեռ «ստուերական էր օրէնքն, եւ արիւն անասնոցն՝ սակաւ ինչ սրբութիւն մարմնոյ»: Իններորդ խորանում նուազում են սեւն ու կապոյտը, եւ աւելանում է կարմիրը, քանի որ մօտենում է Քրիստոսի գալուստը (աքաղաղը մարգարէների խորհուրդն է, նոնենիները՝ նրանց խօսքը): Տասներորդ խորանը (Եկեղեցին իր պայծառութեամբ) համատարած կարմիր է, իսկ թռչունների կարմիր բերաններն ու ոտքերը ցոյց են տալիս Քրիստոսի մարդեղութիւնը: Այստեղ մուգ գոյնի ուժեղացման հետ՝ տրտմութեան եւ պայծառ գոյների հետ՝ ուրախութեան եւ յոյսի յոյզերի մեկնաբանումը յիշեցնում է Շնորհալու մեկնութիւնը:

Գրիգոր Տաթեւացին գոյների տեսութիւնը տարածում է նաեւ Աւետարանների մատեանների ցանկերի չորս տեսակ գրերի վրայ: Կարմիրով գրուած տասը գլխագիրների տակ պէտք է հասկանալ տասը կանոնները, որոնք խորաններում յաճախ գրւում են կարմրով: Իսկ կանաչ գիրը, թէպէտ գործածւում է, բայց այստեղ դժուար է որսալ նրա իմաստը: Կապոյտը, իբրեւ կիրակի եւ այլ օրերի տօների նշում, որոնք գտնւում են կիրակիների միջեւ, եւս գործածական է: Սեւը հանդէս է գալիս իբրեւ տնահամարների եւ համաձայնութեան տախտակների՝ «ճապաղ ցանկերի» կամ «ցրուացանկերի» գրի գոյն (աւետարանական բնագրերի ստորին լուսանցքում): Ծիրանին (յաճախ կարմիրն ու ծիրանին շփոթուած են) իրօք հանդէս է գալիս որպէս գլխաւոր (գլխատառ) եւ գլխի առաջին տող (փոխառաջ), ուստի նշանակում է՝ Աստուածաշունչ գրքի գլխի եւ ամէն ինչի սկիզբն է Աստուած: Ոսկի տառերը եւ տողերն աւետարանական բնագրում նշանակում են Տիրոջ «անսուտ եւ անապական» խօսքերը, որոնցով լուսատրւում են հաւատացեալների միտքն ու հոգին: Տաթեւացին գունաւոր գրերի խորհրդանշական համակարգը դնում է այս մեկնութեան մէջ, որովհետեւ այն աւելի խորն է մշակուած իր իսկ գրած Գեորգ Սկեւռացու Գրչութեան արուեստի մեկնութեան մէջ:

Որ գոյների տեսութիւնը խորանների մեկնութիւններում ունեցել է կարեւոր նշանակութիւն, երեւում է նաեւ Ստեփանոս Սիւնեցու մեկնութեան երկրորդ խմբագրութեան վերնագրից. «Տիեզերալուր եւ աշխարհալոյս վարդապետի եւ հոգնըլաց երգողի, տեառն Ներսէսի կաթողիկոսի Կլայեցւոյ արարեալ պատճառ Ժ խորանաց սրբոյ Աւետարանին եւ վասն երանկ ըռանկ գունոցն, ծաղկանց եւ հաւուցն եւ ծառոցն ի փառս Քրիստոսի՝ Աստուծոյ մերոյ»: Ուրեմն, խորհուրդ կրող ատրիբուտների շարքում առաջինը տրւում է գոյների անունը: Եւ այս վերնագիրը մեզ համար անյայտ աղբիւրներից դրել է Գրիգոր Խլաթեցին: Նրա իսկ գրած յիշատակարանը սկսւում է փառքով եւ չորս թուի մեկնութեամբ, որտեղ Աւետարանները համարում է «շաղ կապեալ սրբոց աւետարանչացն ըստ բազմերանգ գունոց ի մի ոստանանկելով հանճար»: Սուրբ Կիպրիանոսից ծագող «Վասն ականց» (Մատենադարան, ձեռ. 6649, ԺԵ դար) խորհրդապաշտական երկում ակն օժտուած է չորս յատկութեամբ. ա) գոյն, բ) պայծառութիւն, գ) պարզութիւն, դ) ներգործութիւն եւ ազդումն: Այդ բոլոր յատկանիշները, որ տրուած են թանկարժէք քարին, փաստօրէն խորանների մեկնութիւններում հանդէս են գալիս իբրեւ գոյնի յատկանիշներ: Իսկ

15 Նոյն տեղում,-էջ 45:

դա ստիպում է վերանայել ընդունուած այն տեսակէտը, թէ քրիստոնէական միջնադարում գոյնը բացառապէս կապուած է սիմուոլիկայի ու կանոնի հետ[16]: Մնհամեմատ քիչ ուշադրութիւն է դարձուել գոյնի գեղագիտական եւ բնախօսական հոգեբանական կողմերի վրայ[17], թէկուզ՝ սիմուոլիկայի մակարդակով, որ բացայայտօրէն ներկայացնում են մեր մեկնիչները: Կարմիրն իր երանգներով (ծիրանի, վարդագոյն) գիտակցուել է իբրեւ առաւելագոյն ներգործութիւն ունեցող արժէքով գոյն, որն այդ իմաստով անփոխարինելի է, եւ նրա ուժեղացման ու թուլացման եւ, ընդհակառակը, կապոյտի ու սեւի թուլացման եւ ուժեղացման հետ են կապւում բոլոր անցումները մեծագոյն ցնծութիւնից մինչեւ խոր սրբազան տրտմութիւն եւ նորից թեւակոխում դէպի ցնծագին գունաշխարհ:

Մենք քիչ առաջ խօսեցինք «Վասն ականց» խորհրդաւոր գրուածքի մասին՝ խորանների մեկնութիւններում գոյնի ուսմունքի կապակցութեամբ: Եւ ահա Թորոս Ռոսլինը իր մի յիշատակարանում մեզ համար բոլորովին անսպասելի խօսում է գոյներին ազնիւ քարերի կերպ տալու մասին՝ անկախ այն բանից, թէ քարերը մուգ գոյն ունեն, թէ՝ բաց[18]:

16 Նոյն տեղում, էջ 16—17: Տե՛ս նաեւ Կ. Վեսսելի «Farbensymbolic» յօդուածը («Reallexicon zur byzantinischen Kunst». B. II, 1971, Stuttgart, S. 524-533):

17 Այդ իմաստով բացառիկ փորձ պէտք է համարել Ն. Զոթանջեանի ուսումնասիրութիւնները. Н. Г. Котанджян. Цвет в раннесредневековой живописи Армении. Ереван, 1978; Н. Г. Котанджян. Цвет в начальных миниатюрах Эчмиадзинского Евангелия ("Древнерусское искусство". Рукописная книга. Сб. третий. М., 1963, с. 281-299): Կիլիկիայում գոյների պիգմենտների եւ խառնուրդների մասին հետաքրքիր ուսումնասիրութիւն է կատարուած քիմիական տեսակէտից՝ փորձանմուշների միջոցով: Տե՛ս P. E. Cabelli, M. V. Ozna, Th. F. Mathews. Analysis of Medieval Pigments from Cilician Armenia- ACS Advances in Chemistry Series, No. 205. Archeological Chemistry. 1984, p. 243-254:

18 S. Der Nersessian. Armenian Manuscripts in the Walters Art Gallery. Baltimore, Published by the Trustees, 1973, p. 87.

ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ ՅՈՎՀԱՆ ՕԶՆԵՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայ միջնադարեան գեղագիտութեան ուսումնասիրման համար կարեւոր եւ յանձնարարելի են մեկնաբանական, ճառագրական նիւթերում տարտղնուած մտքերի ի մի բերումն ու գնահատումը: Յատկապէս շահեկան ու հեռանկարային է խորհրդանշանի քննութիւնը, որը հնարաւորութիւն կտայ բացելու յայտնութեամբ պայմանաւորուած հոգեւոր մշակոյթի նորանոր ծալքերը: Այս տեսակէտից հարուստ նիւթ է պարունակում Ը դ. նշանաւոր հեղինակ Յովհան Օձնեցու մատենագրութիւնը: Այստեղ անդրադարձներ կան Ե՛ւ կերպարի, Ե՛ւ ճարտարապետութեան տեսական առանձնայատկութիւնների, Ե՛ւ գունային խորհրդանշանի մասին: Մասնաւորաբար կերպարի տեսութեան վերաբերեալ առատ նիւթ կայ «Ընդդէմ երեւութականաց» ճառում: Այստեղ հերքւում է երեւութականների (դոկետներ) այն պնդումը, թէ Բանը մարմնաւորուել է ոչ թէ իրապէս, այլ՝ առ աչօք, երեւութապէս, հետեւաբար եւ՝ նրա պատկերագրութիւնն անկարելի է: Մարմնացեալ Բանի՝ Քրիստոսի պատկերագրութիւնը տեսականօրէն արդարացւում կամ հիմնաւորւում է երեւութականներին յղուած հետեւեալ խօսքով. «Զի եթէ ոչ խորհրդոյ ակամբ հայել գիտասջիք յաւետարանական ձայնն՝ Բանն մարմին եղեւ*, ոչ իւիք հեռանալ կարիցէք յառաջասացեալ հայհոյութենէն» (50) [1]: Ուրեմն, Տիրոջ պատկերագրութեան հիմքում ընկած է Բանի, այն է՝ Աստուծոյ Որդու մարմնաւորման իրողութիւնը: Հեղինակը նոյնքան կարեւոր է համարում անդրադառնալ մարմնաւորման եղանակին: Առարկելով ընդդիմախօսների այն դատողութեանը, թէ Բանը մարմնաւորւում է ոչ թէ Կոյսից, այլ՝ Կոյսի մէջ՝ Օձնեցին հարցապնդում է. «Ըստ բնութեա՞ն զմարմնանալս տայք Բանին... եթէ՞ ըստ առ ինքն զառ ի մէնջն միաւորելոյ: Եթէ յիւրն ընկալաւ զայս գոյացութիւն, լուծեալ եղեւ յայնմանէ, յորում էրն, ի նանիր է եւ յոյս փրկութեան մերոյ... Զի՞նչ արասցես եւ զիրեշտա-

* Յոյն. Ա. 14

կապետին ձայն՝ Որ ի քէն* ծնանելոցդ է ասէ եւ ոչ եթէ՝ Որ ի քեզ» (49): Այսպիսով, հեղինակը ոչ միայն յստակօրէն զանազանում, այլեւ հակադրում է «ի Կուսէն», «որ ի քէն» եւ «ի Կուսին», «Որ ի քեզ» բանաձեւերը, որոնք դաւանաբանական իրենց խորքի մէջ յայտանշում են մարմնացման եղանակը: Երեւութականներն «ի Կուսին» բանաձեւով աշխատում են պնդել այն գաղափարը, թէ Բանը մարմնացաւ առերեւոյթ, առանց Կոյսից ստանալու մարդկային բնութիւն: Մինչդեռ «ի Կուսէն» բանաձեւը հաստատում է ճիշտ հակառակը. «Աստուած յաւիտենական, միակն եւ անմատոյցն, ինքնագոյնն եւ ինքնիշխանն յԵրրորդութենէն ծնունդն Հօր՝ խոնարհեցոյց զերկինս եւ էջ եւ, մարդացեալ մարդկապէս եւ զկերպարանս ծառայի զգեցեալ, ընդ մարդկան շրջեցաւ՝ անբաժ ի հայրական ծոցոյ»[2], այսինքն՝ Բանը մարմնանում է իրապէս՝ Կոյսից ստանալով մարդկային բնութիւն[3], առանց սակայն կորցնելու Իր աստուածային բնութիւնը: Պատկերագրութեան հետ կապուած Աստուծոյ Բանի մարմնացման գաղափարն առաւել յստակութեամբ ու հետեւողականութեամբ է արծարծւում պաւլիկեանների դէմ գրուած ճառում: Մերժելով Եկեղեցու դէմ ուղղուած պաւլիկեանների այն մեղադրանքը, ըստ որի խաչապաշտութիւնը ոչ այլ բան է, քան կռապաշտութիւն՝ Օձնեցին արձանագրում է. «Այլեւ կենդանագրեալ պատկերաւ մարդացելոյ Բանին Աստուծոյ պախարակել զմեզ անամօթին, յիմարեալին. խելագարեալքն յայսոյն անհաւատութենէ, զսրբոց մարգարէիցն զբանս ընդդէմ մեր բերելով, զոր առ ի յանդիմանութիւն հեթանոսական կռամոլութեանն է ասացեալ: Ոչ կարացեալ տեսանել խաւարեալքն մտօք, թէ զինչ նմանութիւն է աստուածապաշտութեանս մերոյ առ բազմաստուածութիւնն հեթանոսաց» (47): Հեղինակն այստեղ ակնարկում է այն սուրբգրային տեղիների** վկայակոչման իրողութիւնը, որի շնորհիւ ջատագովները տակաւին (Բ–Գ դդ.) մերժում էին Աստուածութեան պատկերագրման նուազագոյն հնարաւորութիւնն իսկ[4]: Սակայն ջատագովներից որդեգրած այդ մերժում–մեղադրանքը Օձնեցին բացառապէս ուղղուած է նկատում հեթանոսական բազմաստուածութեան կամ կռամոլութեան դէմ: Մինչդեռ «մեք զմիայնոյ Միածնի Որդւոյն Աստուծոյ պաշտեմք զպատկեր եւ զնշան յաղթութեան...» (47): Եւ այսուամենայնիւ, նոյնիսկ այս պարագային, պաշտամունքի առարկայ է ոչ թէ նիւթը, որի վրայ պատկերուած է Աստուածութիւնը, այլ՝ «Բանն Աստուած» կամ Խաչի նշանը, որ բովանդակում է պատկերը: Այս է պատճառը, որ «անխտրապէս յանդեղեւուն մտաց առեալ մեք կապեցաք զհոչակելին զայն նշան ընդ ամենայն նիւթս, որ եւ քերովբէիցն է սարսափելի եւ պատկառելի, զբուժիչն հոգեկանաց մերոց եւ մարմնականաց ախտից, զպակուցանօղ եւ զզարհուրեցուցիչ դիւաց» (47): Սա նշանակում է, որ նիւթն ինքնակայ արժէք չէ. այն արժէքաւորւում է Խաչի նշանով, որ նիւթի հետ կապւում է «յանդեղեւուն մտաց» զօրութեամբ, անսասան հաւատքով: Այսպէս է նաեւ Քրիստոսի՝ որպէս մարմնացեալ Բանի պատկերագրման պարագան: «Դարձեալ՝ կռապաշտիցն զմեռելոյ ոմանց զնմանութիւն յանշունչ նիւթս կերպագործեալ տպաւորելով,– ասում է դաւանաբան հեղինակը,– յաղագս որոյ միանգամայն եւ ի նախատպէն եւ ի պատկերէն զրկեալ լինէր յուսոյ պատկերագործն: Իսկ մեք զկենդանին եւ զկենդանացուցիչն Քրիստոս յամենայն նիւթս մարդակերպ նմանութեամբ նկարագրեմք» (52): Պախարակելով հեթանոսական կռամոլութիւնը՝ Օձնեցին զգուշացնում է՝ պատկերապաշտութիւնը չվերածել նիւթապաշտութեան: Ըստ հեղինակի՝ նիւթի բացարձակացումը կատարւում է այն ժամանակ, երբ պաշտամունքի առարկան անգոյ է. այս դէպքում անգոյ նախատիպի եւ նրա դրոշմը համարուող պատկերի միջեւ կապն ինքնին բացառւում է: Այսօրինակ պատկերի պաշտամունքը վերածւում է կռապաշտութեան կամ սոսկական նիւթապաշտութեան: Սակայն երբ նախատիպը կենդանի ու իրական է, պատկերի պաշտամունքը դադարում է կռապաշտութիւն լինելուց, որովհետեւ պատկերը կրում է նախատիպի բովանդակութեան դրոշմը: Այս է պատճառը, որ Աստուծոյ պատկերին տրուող յարգանքը կամ պաշտամունքը հնարաւոր ու կարելի է դառնում Աստուծոյ Իմաստութեան կամ Խօսքի մարմնացումից, մարդացումից յետոյ միայն: Ինչո՞ւ. որովհետեւ Նրա ոգեղէն էութիւնը մարմնացումից յետոյ ձեռք է բերում նաեւ նիւթեղէն կերպարանք: Մատնանշելով այս իրողութիւնը՝ Օձնեցին գրում է. «Մինչեւ գթացեալ Ստեղծողի պատկերին, եղեւ պատկեր ստեղծուածոյն եւ որ ի սկզբանէ արար զմարդն ըստ պատկերի Իւրում եւ ըստ նմանութեան, Ինքն եկն եւ ի վախճան ժամանակացս այսոցիկ զկերպարանս ծառայի էառ եւ ի նմանութիւն մարդկան գտաւ եղեալ...» (54): Ահա այս հիման վրայ է, որ «զմարմնացելոյ Բանին Աստուծոյ վարդապետեաց մեզ պաշտել զկենդանագրեալ մարդկային ձեւով զպատկեր եւ զպատուականն զայն յաղթութեան նշան: Որոց երկրպագեալ՝ ոչ յերկուանամ, նմին ինքեան բազմեցելոյն

---

* Դուկ. Ա 35

** Սաղ. ՃԼԴ 15–18, ՂԵ 5, Եր Ի 4, 23, ԽԶ 6–9, Ժ 3–9, ԾԱ 17–18

ի նոսա Քրիստոսի զերկրպագութիւնն մատուցանել՝ ոչ հայելով յերեւելին առաւել, քան թէ զանտեսանելին ի նմա գանձեալ ընդ միտ ածելով: Թէպէտ եւ ի զանազանից եւ յայլատեսակաց իցէ նիւթն, զմի եւ զնոյն յամենեսին տեսանեմ զօրութիւն» (55): Սրբազան պատկերը կրող նիւթի այսօրինակ ընկալումը որոշ չափով աղերսում է կերպարի բիւզանդական տեսութեանը, ըստ որի՝ «նիւթի ջատագովումը հիմնուած է մարդկային բնութիւնը ներանձնաւորած Բանն Աստուծոյ մարմնացման վրայ»: Պատկերապաշտների քրիստոսաբանական դիրքորոշումն անխզելիօրէն կապուած է այս ընկալման հետ[5]: Եւ սակայն Օձնեցու մեկնաբանութիւնը լիովին չի նոյնանում բիւզանդական պատկերապաշտութեանը: Այն շատ աւելի համերաշխւում է վաղհայրախօսական պատկերայարգական գեղագիտութեանը, որը յստակօրէն զանազանում էր կերպարն ու նախատիպը, «որովհետեւ,— ինչպէս նկատում է Գրիգոր Նիւսացին,— կերպարը կերպար չէր լինի, եթէ այն ամէն ինչով նոյնանար նախատիպին»: Այս հիման վրայ Նիւսացին իրարից զանազանում է պատկերի արտաքինը եւ նրա բովանդակութիւնը, որ նա անուանում է «մտային կերպար», «գաղափար»[6]: Այս է պատճառը, որ Օձնեցին կանխաւ արձանագրում է, թէ Քրիստոսի պատկերը երկրպագելիս պէտք է նայել ոչ այնքան Տիրոջ տեսանելի, որքան անտեսանելի պատկերին: Պաշտամունքի առարկայ Աստուծոյ Որդու պատկերը չպէտք է դիտել որպէս ինքնաբաւ իրողութիւն. պատկերը պէտք է դիտել սերտօրէն աղերսուած իր նախատիպին, եւ այս յարկ է կատարել մտքի ուժով՝ ուշադրութիւնը հայեցողաբար կենտրոնացնելով պատկերի ներքին բովանդակութեանը, այն է՝ Աստուծոյ Որդու սրբազան էութեան վրայ: Պատկերի այսօրինակ ընկալումը երեւան է հանում կերպարուեստի միջնադարեան գեղագիտութեան մի կարեւոր պահը. արտաքին կերպարը դէպի նախատիպ, այն է՝ դէպի «մտային կերպար», առաջնորդող միջոց է: Ներքին կերպարի վրայ ուշադրութեան այսօրինակ կենտրոնացումը երեւան է հանում միջնադարեան կերպարուեստի արդէն նկատուած գեղագիտական կարեւոր առանձնայատկութիւններից մէկի՝ տձեւ պատկերագրման աստուածաբանական ակունքները[7], որոնք գտնւում են վաղհայրախօսական մշակոյթի խորքերում: Տակաւին Կղեմէս Ալեքսանդրացին (Բ—Գ դդ.) գրում է, որ Տէրը «փայլում էր ոչ թէ մարմնական գեղեցկութեամբ, այլ՝ հոգու եւ մարմնի ճշմարիտ գեղեցկութեամբ. առաջինն արտայայտւում է բարի գործերում, իսկ երկրորդը՝ մարմնի անմահութեան մէջ»: Դեռ աւելին. մարմնանալիս Քրիստոս ստացաւ անշուք կերպարանք, որպէսզի Նրան ունկնդրողները չհրապուրուէին նիւթական գեղեցկութեան փայլով եւ անտեսէին տէրունական պատգամների հոգեւոր ճշմարտութիւնը[8]:

Կերպարուեստի գեղագիտութեան մէկ այլ մակարդակ է յայտանշում հետեւեալ պարբերութիւնը. «Իսկ մեք զայն միայն յիւրաքանչիւրոցն բացորոշեալ պատուեմք ի նիւթոյ, յորոց վերայ զնմանութիւն պատկերին Քրիստոսի բնակել ի նոսա եւ մեզ աներկբայելի սրտիւ մեծարել: Եւ ոչ միայն այս, այլեւ քահանայական ձեռնն եւ բանն զԵրրորդութեանն Սրբոյ ի նոսա կոչեալ բնակեցուցանէ զօրութիւնն, որով ձեռամբ եւ բանիւ պարգեւք եւ պատուհասք ի մարդիկ կարկառին, որովք եւ երկնայինն փակեալ եւ բացեալ լինին դրունք, որոց եւ տարերքս ամենայն տեղի տուեալ հնազանդի» (55): Ուրեմն, ըստ հեղինակի, պատուելի է լոկ այն նիւթը, ուր առկայ է Քրիստոսի եւ Խաչի նմանութիւնն ու անունը: Ինչո՞ւ, որովհետեւ մասնաւորաբար անունն է, որ շնորհունակ է դարձնում պատկերը: Սրանից յետոյ միայն այն դառնում է սրբազան կամ նուիրական: Պատահական չէ, որ տակաւին մովսիսական օրէնքն արգելում էր Աստուծոյ անուան անյարկի կիրարկումը[9], որովհետեւ անուան անտեղի արտաբերումը նուազեցնում է մեզ համար եւ մեր մէջ անուան սրբազան շնորհունակութիւնը կամ ներգործունակութիւնը: Միջնադարի շատ հեղինակների նման անուան վերերկրային կարեւորութիւնը գիտակցում է նաեւ Յովհան Օձնեցին: Վկայաբերուած տողերն այդ ընկալման անուղղակի արձագանքն են: Անուան ներկայութիւնը պատկերն օժտում է շնորհական բովանդակութեամբ, ինչը, բացառելով նիւթի նուազագոյն բացարձակացումն իսկ, պատկերը դարձնում է վերգեղարուեստական իրողութիւն: Աւելի ընդգծելով պատկերի վերգեղարուեստական, վերերկրաւորական բովանդակութիւնն ու կոչումը իբրեւ համաբնոյթ իրողութիւն՝ Օձնեցին խօսում է Ս. Երրորդութեան անունից քահանայի կատարած ծիսական գործողութեան միջոցով ծէսն իրագործող ձեռքի եւ ձայնի մէջ Ս. Երրորդութեան զօրութեան ներկայութեան մասին: Իր նախընթաց դատողութիւններն Օձնեցին հետեւեալ կերպ է ամբողջացնում. «Որպէս եւ ահաւասիկ մեք բանիւ առաքելոցն հաւատացեալքս Ամենասուրբ Երրորդութեանն, նկատեմք օծեալ իւղովն զփրկութեանն գործարանս. զեկեղեցիս, զսեղանս, զխաչս, զպատկերս, եւ հաւատամք ընդ նմին ի ներքս գալ աստուածային զօրութեանն»: Հետեւաբար՝ «Ոչ կարէին անշունչ նիւթք ի կենդանի մարդիկ օգնականութեան մատուցանել շնորհ, եթէ ոչ Աստուած ի նոսա էր բնա-

կեալ» (56): Այս միտքն է ընկած Մաշտոց ծիսամատեանի «Կանոն զնկար եկեղեցւոյ աւրհնելոյ», «Կանոն խաչ աւրհնելոյ» կանոնական կետերի հիմքում[10]: Այս կետերի ծիսական իրագործումն ուղեկցւում է պատկերի կամ խաչի օծումով, որ կատարւում է իւղով: Այսպիսով, խաչը, պատկերը եւ պաշտամունքի միւս առարկաները շնորհական ուժով եւ ներգործունակութեամբ են օժտւում օծումից յետոյ միայն: Ուրեմն, օծման արարողութիւնից յետոյ խաչ կամ պատկեր կրող նիւթը, որպէս արդէն վերնիւթական իրողութիւն, էապէս փոխում է իր բնոյթը եւ տարբերւում համաբնոյթ նիւթերից (մետաղ, քար, փայտ):

Նոյնքան շահեկան են Օձնեցու եկեղեցաբանական դատողութիւնները, որոնք լոյս են սփռում ճարտարապետական խորհրդանշանի առանձին կողմերի վրայ: Այսպէս, եկեղեցու հիմնարկեքին նուիրուած ճառում մեկնաբանելով Մաշտոց ծիսամատեանի «Եւ առեալ քարինս երկոտասան անտաշ» բառերը՝ հեղինակը գրում է. «Ըստ որում եւ Յեսու Նաւեան ի միջոյ Յորդանանու ի վկայութիւն անցից ժողովրդեանն ցամաքու ընդ Յորդանան: Նմանապէս եւ Տէր մեր զերկոտասան աշակերտսն ի հոսանուտ վայրէ կենցաղոյս առեալ ի վկայութիւն խորհրդական անցիցն հեթանոսաց ընդ ջուր մկրտութեան Աւազանին» (139): Հետեւելով Եղիշէի համաբնոյթ մեկնաբանութեանը՝ եկեղեցու տասներկու հիմնաքարերն Օձնեցին նախ նմանեցնում է Իսրայէլի տասներկու ցեղերի ներկայացուցիչներին եւ այն տասներկու վիմաքարերին, որոնք դրուեցին Յորդանան գետի այն հատուածում, որտեղից, Ուխտի տապանակի շնորհիւ, անցաւ հրէից ժողովուրդը[11]: Եկեղեցու տասներկու հիմնաքարերի երկրորդ նախատիպը տասներկու առաքելոց բոյլն է, որ Աստուծոյ կամքով, զատուելով հեթանոսական վայրիվերոյ կենցաղից, դրուեց մկրտութեան Աւազանի մէջ: Եկեղեցու տասներկու հիմնաքարերի խորհրդաբանական մեկնութիւնն առաջ տանելով առաւել խորութեամբ եւ համակողմանիութեամբ՝ հեղինակը գրում է. «Նկարագրեն սոքա զերկոտասան առաքեալսն, զորոց լուաց Տէրն զոտսն ի վերնատանն եւ ապա գինեաւ անապականաւ զմայլեցոյց ի յիշատակ ջրոյն եւ արեանն, զոր բղխեաց ի կողից Իւրոց: Իսկ յետ յարութեանն ասաց նոցա մկրտիլ ի հուր եւ ի Հոգին Սուրբ եւ մկրտել զհեթանոսս յանուն Սրբոյ Երրորդութեանն խորհրդական ջրով Աւազանին» (141): Իսկ քարերի զետեղումը եկեղեցու չորս անկիւններում խորհրդանշում է «զնոցին ընթացս ի չորս անկիւնս աշխարհի եւ պատշաճիլ հաստատութեամբ ի հիմն տաճարի Աստուծոյ, որ եմք մեք ի նոսա խարսխեալ, եւ նոքա՝ ի գլուխն Քրիս-

տոս» (141): Այսպիսով, եկեղեցու խորհրդական բովանդակութիւնը երկփեղկւում է. նախ վիմաքարերի զետեղուելը եկեղեցու չորս անկիւններում խորհրդանշում է Քրիստոսի Աւետարանի՝ աշխարհի չորս ծագերում առաքեալների կողմից իրականացուած քարոզութիւնը, երկրորդ՝ եկեղեցին ադամորդու խորհրդապատկերն է, որովհետեւ ադամորդին ինքը, ըստ Պօղոս առաքեալի հեղինակատր վկայութեան, Աստուծոյ տաճարն է[12], տաճար, որ հաստատուած է առաքեալների աւետարանական գործունէութեան վրայ: Ուրեմն, եկեղեցական շինութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ Աշխարհի եւ Մարդու խորհրդապատկերը, որի մէջ ծաւալւում է Աւետարանի լոյսը[13]: Աւելի ընդգծելով այս միտքը՝ հեղինակը յարում է. «Օծանի նմանապէս եւ տաճարն, որ եմք մեք լեալք եւ անուանեալք, վասն զի յորժամ եղեւ ընդ մեզ էմմանուէլ եւ հաւասարեաց արեան եւ մարմնոյ եւ օծ Ինքեամբ, որ եւ արտաքին անուանի մարդ զգալի մկրտութեանն մաքրութեամբ եւ օծմամբ: Դարձեալ՝ ներքին կողմն տաճարին՝ հրեայքն, եւ արտաքին՝ հեթանոսք՝ անխտրաբար տաճարացան Աստուծոյ» (149): Իսկ յետոյ, առաջ անցնելով, ասում է. «Եւ դարձեալ յետ օծանելոյ զարտաքոյսն կողմանս ի ներքս մտանելն եւ օծանել զհարաւակողմն նշանակիչ ի վերջէ հաւատալոյ ազգատոհմին Իսրայէղի, ըստ Պաւղոսի՝ «Մինչեւ լրումն հեթանոսաց մտցէ, եւ ապա ամենայն Իսրայէղ կեցցէ» (149–150)[14]: Ինչպէս տեսնում ենք, այս պարագային եւս դրսեւորւում է խորհրդանշանի բազմիմաստութիւնը: Խորհրդանշանի առաջին մակարդակը եկեղեցի=մարդ զուգահեռն է. ինչպէս մարդն է էմմանուէլ Փրկչի բնակարանը, այնպէս էլ՝ եկեղեցին: Երկրորդ՝ ինչպէս մարդն է իր մարմնով մկրտւում եւ պատենաւորւում Քրիստոսով, այնպէս էլ տաճարի արտաքնակողմն օծւում է իր չորս անկիւններով, որոնք իրենց հերթին խորհրդանշում են մարդու մարմինը կազմող չորս բաղադրատարրերը: Երրորդ՝ տաճարի ներսակողմը խորհրդանշում է հրեաներին, իսկ արտաքնակողմը՝ հեթանոսներին, որոնք աստուածային հաճութեամբ դարձան տաճար: Տաճարի արտաքնակողմի օծումից յետոյ օծում են նրա ներսի հարաւակողմը, որ ծիսական խորհրդանշումն է այն վախճանաբանական իրողութեան, թէ հեթանոսներին (տաճարի արտաքնակողմ) մկրտելուց եւ դարձի բերելուց յետոյ, վերջում հրէից ժողովուրդը (տաճարի ներսի հարաւակողմ) պէտք է հաւատքով դառնայ դէպի Քրիստոս: Տաճարի այսօրինակ նկարագրութիւնն ու աստուածաբանական արժեւորումը բաւականաչափ համերաշխւում է Հին Կտակարանում Սողոմոնի տաճարի նկարագրու-

թեանը: Այստեղ եւս իրարից յստակօրէն զատուած են «Սրբութիւն Սրբութեանցը», «Իսրայէլի գաւիթը» եւ «հեթանոսաց գաւիթը»[15], որոնք արժէքաբանական սանդղակի առանձին աստիճաններն են: Տաճարի առանձին մասերի վերաբերեալ հին հրէական այս ըմբռնումն է ընկած Օձնեցու մեկնաբանութեան հիմքում:

Օձնեցին խօսում է նաեւ տաճարի դռների խորհրդական նշանակութեան մասին. «Իսկ դրացն եւ սեմոցն օծումն,– ասում է հեղինակը,– սրբոյ Կուսին համաքատակի, յորում մուտ եւ ել առ մեզ Տէր Յիսուս՝ ըստ հոգետեսն Եզեկիէղի, քանզի նա իսկ նշանակի դուռն արեւելեան, ընդ որ մուտ եւ ել միայն Աստուածն Իսրայէղի, եւ զդուռն զկնի փակելն անխախտելի մնալն է կուսութեանն կնքոյ ի մայրն լինելն Էմմանուէղի» (149): Ինչպէս նախորդ դէպքում, այստեղ եւս խորհրդանշանի մեկնաբանութիւնը կատարւում է Հին եւ Նոր Կտակարանների շաղկապումով. տաճարի դռներն ու սեմերը Մարիամ Աստուածածնի խորհրդապատկերն են: Ինչո՞ւ, որովհետեւ ինչպէս Աստուածածնի միջոցով է մեր մէջ մուտք գործում Յիսուս Քրիստոս, այնպէս էլ տաճարի դռներով է ել ու մուտ անում քահանայապետը: Հեղինակը սա համարում է խորհրդապատկերը՝ Եզեկիէլի տեսիլքում նկարագրուած տաճարի արեւելեան դռան, որ ել ու մուտ անելու իրաւունք ունէր «միայն Աստուածն Իսրայէղի»[16]: Ճարտարապետական խորհրդանշանի ուսումնասիրման համար նոյնքան ուշագրաւ է հետեւեալ հատուածը. «Խորհրդածի եկեղեցի եւ Նոյեան տապանին. զի որպէս յերիս որոշմունս հրամայեցաւ կազմած տապանին ներքնատուն եւ միջնատուն եւ վերնաձեղուն, նոյնպէս եւ եկեղեցի երիս ունի յարկաց պատրաստութիւնս՝ զարտաքին գաւիթ եւ զտաճարն եւ զսրբութեան խորան: Մնդ բազմահոյլ կենդանիքն մտեալ ապրեցան ի ջրհեղեղին պատուհասից, եւ աստ բազմութիւնք հաւատացելոց ի շընչահեղձոյց մեղացն ծովէ, վերաբերող առաքինութեամբ առ երկինս թռուցեալ, ապրեցան ի սահանասոյզ հեղձմանէ» (157): Եկեղեցին համարելով խորհրդապատկերը Նոյի տապանի՝ այս պարագային եւս հեղինակը յստակօրէն սահմանազատում է նրա երեք մասերը: Այսպէս, տապանի ներքնատունը նա նոյնացնում է եկեղեցու արտաքին գաւթին, միջնատունը՝ եկեղեցուն, իսկ վերնաձեղունը՝ սրբութեան խորանին: Ինչպէս տեսնում ենք, այստեղ եւս ճարտարապետական մասերը ներկայացւում են վարից վեր, ըստ տարածքի հոգեւոր արժէքի: Հանգամանք, որ լաւագոյնս դրսեւորում է ճարտարապետական խորհրդանշանի աստուածաբանական բովանդակութիւնը[17]: Օձնեցու

եւ ոչ միայն նրա, գրչի շնորհիւ ճարտարապետական կառոյցը դառնում է սոսկ նիւթական իրողութիւն լինել. այն ներկայանում է իբրեւ աստուածաբանական աշխատութիւն, որի առանձին կարգոյթները խորհրդաբանօրէն նոյնանում են ճարտարապետական այս կամ այն մանրամասնի հետ[18]:

Մշակութային բոլոր կարգի իրողութիւնները միջնադարում ներթափանցուած, իմաստաւորուած էին աստուածաբանութեամբ, որ ոչ այլ բան էր, քան մասնաւոր փաստերով դրսեւորուող յայտնութեան կանոնակարգումը: Բացի կերպարի եւ ճարտարապետութեան աստուածաբանական մեկնաբանութիւնից, այդօրինակ մեկնաբանութեան էր ենթարկւում նաեւ գոյնը, որին կարեւոր դեր էր վերապահուած կրոնական գաղափարների հաղորդման մարզում: Շնորհիւ իր զուգորդական բնոյթի՝ գոյնը զօրաւոր կերպով խթանում էր ենթագիտակցութիւնը՝ նպաստելով վերտրամաբանական, կրօնական իրողութիւնների ընկալմանը[19]: Մի առիթով մենք արդէն անդրադարձել ենք Օձնեցու որդեգրած գունային մեկնաբանութեանը[20]: Նա եւս միջնադարի մի շարք հեղինակների նման այս կամ այն առիթով աստուածաբանական վերլուծման է ենթարկում կապոյտ, կարմիր, ճերմակ եւ ծիրանի գոյները: Մեկնաբանելով Ահարոնի քահանայական զգեստի խորհրդական նշանակութիւնը՝ Օձնեցին յատուկ մանրամասնութեամբ խօսում է ոչ միայն զգեստի առանձին հատուածների մասին, այլեւ՝ վերլուծում նրա գոյները. «Քանզի զպճղնատրն զգենլով Ահարովնի՝ զմարմնանալ Բանին նշանակէր՝ զչորեքնիութեայ բնութիւնս զարդարեալ շքեղաշուք արդարութեամբ: Կապուտական զերկնատրն եցոյց առաքինութիւն եւ կարմրովն մանուածոյ՝ զանապական արեանն կցորդութիւն, որով հաւասարեաց մեզ արեան եւ մարմնոյ: Եւ բեհեզովն սպիտակաւ զԱստուածութեանն ընդ բնութիւնս մեր խառնումն, եւ ծիրանեաւն՝ զծածկեալ խորհուրդ անճառելի տնօրէնութեան» (160–161): Այսպիսով, կապոյտը, որն, ըստ Դիոնիսիոս Արիսպագացու, ակնարկում է աստուածային անմատչելի խորհուրդները, համաձայն Օձնեցու՝ խորհրդանշում է երկնաւոր առաքինութիւնը: Կարմիրը խորհրդանշում է Փրկչի արիւնը, որով ադամորդին կցորդւում է մարդացած Փրկչի արեանն ու մարմնին, ուրեմն եւ՝ Նրա փառքին: Ճերմակը խորհրդանշում է Աստուածութեան մարմնացումն ու խառնումը մարդկային բնութեանը, ինչը համերաշխում է բիւզանդական աստուածաբանութեան մէջ արտայայտուած այն մտքին, թէ ճերմակ ժամաշապիկը խորհրդապատկերն է Քրիստոսի մարմնի: Պէտք է կարծել, որ

ճերմակի այսօրինակ մեկնաբանութիւնը հիմնուած է նրա գունային մեծ տարողունակութեան եւ լայն հնարաւորութիւնների փաստի վրայ: Ծիրանի գոյնը ներկայացնում է անմեկնելի տնօրինութեան վերբանական խորհուրդը:

Խորհրդանշանի մասին Օձնեցու աստուածաբանական դատողութիւնների ու մեկնաբանութիւնների վերլուծումը հնարաւորութիւն է տալիս պարզելու հայ վաղ միջնադարեան գեղագիտութեան տեսական առանձնայատկութիւններն ու օրինաչափութիւնները, որոնք երեւան են հանում եկեղեցական մշակոյթի աստուածաբանական նախահիմքերն ու աղերսները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Շարադրանքի ընթացքում նշուած այս եւ հետագայ էջահամարները հետեւեալ հրատարակութեանն են. «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Բ տպ. Վենետիկ, 1953:

2. Տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս». Հրատ. Կարապետ վարդապետ, Վաղարշապատ, 1896, էջ 9:

3. Այս միտքն առաւել շեշտելու համար Օձնեցին վկայակոչում է ս. Գրիգոր Լուսաւորչի Վարդապետութեան հետեւեալ արտայայտութիւնը. «Առաքեցաւ Աստուած յԱստուծոյ եւ առ հոգի եւ մարմին ի Կուսէ» (49): Այսօր մեզ հասած յայտնի Վարդապետութեան մեջ բացակայում է «հոգի» բառը («Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատ. Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Կանայեանի, Տփղիս, 1913, էջ 184): «Ընդդէմ երեւութականաց» ճառը ծանօթագրող Հ. Մ. Աւգերեանը նկատում է, որ այն եղել է Օձնեցու ձեռքի տակ գտնուող Վարդապետութեան նախնական բնագրում («Յովհաննու Իմաստասիրի եւ Կաթողիկոսի Հայոց Օձնեցւոյ Ճառ ընդդէմ երեւութականաց», Վենետիկ, 1807, էջ 6, տողատակ): Սակայն, ամէն պարագայի, «հոգի» բառի կիրարկումը բացորոշ է դարձնում հեղինակի հետապնդած գաղափարը:

4. Տե՛ս В. В. Бычков. Эстетика Поздней Античности: II-III вв, М., 1981, с. 167-168, Օձնեցի, էջ 53:

5 Տե՛ս В. М. Живов. "Мистагогия" Максима Исповедника и

развитие теории образа. "Художественный язык средневековья" (сбор. статей), М., 1982, с. 108.

6. Տե՛ս В. В. Бычков, Формирование основных принципов византийской эстетики- "Культура Византии, IV - первая половина VII в.", М., 1984, с. 525.

7. Տե՛ս Լեւոն Ազարեան, Վաղ միջնադարեան հայկական քանդակը, Երեւան, 1975, էջ 51:

8. Տե՛ս В. В. Бычков, Эстетика Поздней Античности, с. 242.

9. Տե՛ս Բ Օր. Ե 11:

10. Տե՛ս Մաշտոցի անւ. Մատենադարան. ձեռ. 1001, թերթ 32բ–3ա, 40բ–54բ:

11. Յ. Յ. Քեռսէեան, Խորհրդանշանը Եղիշէի մեկնաբանական եւ ճառագրական երկերում, «Էջմիածին», 1989, Ը, էջ 56:

12. Տե՛ս Ա Կորնթ. Գ 16, Զ 19:

13. «Եկեղեցի=Աշխարհ», «Եկեղեցի= Մարդ» խորհրդական զուգահեռի այսօրինակ մեկնաբանումը արեւելաքրիստոնէական դարաւոր փորձի աստուածաբանական դրսեւորումն է, որի արձագանքը ս. Գրիգոր Տաթեւացու հետեւեալ միտքն է. եկեղեցու «ձեւն խաչանման, յարեւելս զմբեթայարկ: Եւ մարդս խաչաձեւ է, եւ յարեւելս երկրպագեմք, ուստի ակն ունիմք գալըստեան Փրկչին, որպէս լուսանցն յարեւելից: Եւ զմբեթն զվերինն խորհիլ, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ». տե՛ս «Գիրք հարցմանց», Կ. Պոլիս, 1729, էջ 613–614:

14. Հռովմ. ԺԱ 26:

15. Տե՛ս «Բառարան Սուրբ Գրոց», Կ.Պոլիս, 1881, էջ 527–533:

16. Տե՛ս Եզեկ. ԽԷ 1:

17. Հմմտ. Յ. Յ. Քեռսէեան, Յովհան Մայրագոմեցին եւ խորհրդանշանի աստուածաբանութեան մի քանի հարցեր, «Էջմիածին», 1986, Ա, էջ 56:

18. Տե՛ս А. Адамян. Эстетические воззрения средневековой Армении, Ер. 1955, с. 183-186. Е. Ювалова. О некоторых интерпретациях ранней и высокой готики в современном западном искусствознании- "Современное" искусствознание запада. О классическом искусстве XII-XVII вв, Очерки, М., 1977, с. 30-54.

Նոր ժամանակներում թերեւս առաջինը կամ առաջիններից մեկը ճարտարապետութեան տեսական հիմքերի մասին խորհրդածում է Ֆրիդ-

ռիխ Շլեգելը (ԺԸ–ԺԹդդ.) տե՛ս Фридрих Шлегель. Эстетика, философия, критика, т. II, М., 1983, с. 260. В. В. Бычков. Формирование..., с. 525.

19. Յ. Յ. Քեոսէեան, Յովհան Մայրագոմեցին, էջ 58–59:

20. Տե՛ս В. В. Бычков. Византийская эстетика: теоретические проблемы, М., 1977, с. 104: Այս մասին խօսում է նաեւ Ստեփանոս Սիւնեցին (Է–Ը դ.), տե՛ս Վ. Ղազարեանի, Ս. Մանուկեանի «Էջմիածնի Աւետարան». պատկերաբանութեան հարցեր» զեկուցումը՝ կարդացուած Էջմիածնի Աւետարանի 1000–ամեակին նուիրուած՝ Մաշտոցի անւ. Մատենադարանի գիտական նստաշրջանում (25. I. 90թ.):